

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԳԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ՀԱՍՄԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

**ՀԱՅԱՏԱՌ ԹՈՒՐՔԵՐԵՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

ԵՐԵՎԱՆ – 2023

**Նվիրում եմ ուսուցիչներիս,
բուրբազհիւրության երախտաւորներ
հորեղբորս՝ Պառնիկ Ստեփանյանի և
Անսարոյի Ժելյոյակոյի (Ս. Պետրերբուրգ)
հիշատակին:**

Երախտագիւրությանը հեղինակ



Ի նոր դուստր և տեն՝ խոնարհեցի՛
զունինքն զքո՛ մտան զժողովուրդ զքո՛ և՛:



Սուգն Վառնիկ
Լ.Օ.

Սի նախանձիր ընդ չափըս ի մի ընդ այնտակ՝ որ գործ են զանօրեմախիս Օ է որն խոտ վաղջազակի ցանորեսն ոնց գայտրի խոտց վաղջազակի սնացենս Վառնիկն՝ և որս զքաղց բուժիքն բնակեան յերկրի՝ և հօգուտեցիս ի մեծ ունե իրս Վառնիկն ի անէ՛ և նա տացէ յեղ զհինգ բուժան սրտիքս յայնեան տառիկ ան զձա նապարհս զքո և յուսան ի նա և նա արտաց և հանցե ոնց զքո զարգարուխ զքո զիբառանս զքո որն զքո հօսարակ և

Հնազանդ լեր տն՝ և ծոռայեան նման և մի նախանձիր ընդ այնտակ որոց առակեալ կցեն ճանապարհք իւրեանց ընդ մտրոց որ գործ են զքո

Սուգն Վառնիկն
Լ.Օ.

Պրակամանս քեօթիւ քիշէ լերէ արդու չէրմն նա մուսուսուսուս իշէ յիշէ իշէ Օ էրս օթ կեպի չափոց զուրս յաճաղար և թաղէ օթ կեպի չափոց կեշէ ճէքէքէք Րապոյիկ տանուս եթ վէ էյիք էյիք և երան սարին օլ վէ սնընդանիկ թնակ օթ լաւանս կերէք Րապոյիկան սիւն վէ օ վերք սա նա կեպի ինչին մուսապարընը Րապոյիկն է սնի՛նակ այրեար էթ սէնին էօլլարընը վէ սնա ումուս էյիէ և օ թէքթիլ էտեր վէ եշ քեպիէք չէքարքր սենին սատըլ լարնու ըշք կեպի և սնին չէրս հօթընը էյիէ կեպի կեպիէք կեպի իթտհանթ էթ Րապոյիկ վէ սնա զուլլուգ էյիէ և վէ զքո կամանս սնիէրին էօլլարնա քի նամուսուսուս իշէ իշէ սակո՛ իլէ չեօճէթ կրու մուշ



Հակոբ Մեղապարտ
XVI դար



Հովհաննես Մյուսինյան
1810-1891



ՀՏԳ- 93/99 (560):941(479.25)
ԳՄԴ- 63.3 (5ԹՄ)+63.3 (2Հ)
Ս 887

**Գիրքը տպագրվում է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության
ինստիտուտի գիտադիրքի որոշմամբ**

Մասնագետ խմբագիրներ՝

Ա. Ժելտյակով (Ս.Պետերբուրգ)

Արմեն Տեր Ստեփանյան

Կարոլինա Սահակյան

**Ստեփանյան Հ.
Ս 887 ՀԱՅԱՏԱՌԻ ԹՈՒՐՔԵՐԵՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Գիրքը նվիրված է հայատառ թուրքերեն գրականության ուսումնասիրությանը՝ նրա ձեռագիր (14-19-րդ դ.) և տպագիր (1727-1968թթ.) շրջաններին:

Աղբյուրագիտական ուսումնասիրության առարկա են դարձել հայատառ թուրքերեն ինքնուրույն և թարգմանական գեղարվեստական գրականությունը, կրոնադավանաբանական, պատմական, փիլիսոփայական երկերը, միսիոներական, ուսումնական, գիտահանրամատչելի գրքերը, հայկական թատերախմբերի թուրքերեն ներկայացումների համար ստեղծված գրականությունը:

Քննության են ենթարկվել այս գրականության առաջացման պատմական, սոցիալ-քաղաքական միտաբանական նախադրյալները, նրա զարգացման և անկման պատճառները: Կարևորվում է այս գրականության մեծագույն առաքելությունը արևմտահայության թուրքախոս գավառների հայությանը դեպի ազգային ավանդույթներին, հարազատ ժողովրդի հավատքին վերադարձնելու, հայալեզու դարձնելու նպատքը: Անհերքելի է հայատառ թուրքերեն գրականության ներդրումը Օսմանյան կայսրության մշակութային կյանքում, թուրք գրական լեզվի և լուսավորական գրականության, դրամատուրգիայի ստեղծման գործում:

Ուսումնասիրվում է 250 տարիների ընթացքում աշխարհի շուրջ 50 քաղաքներում հրատարակված ավելի քան 2000 անուն տպագիր գրքերի, 120 անուն պարբերական մամուլի մշակութային, հասարակական և պատմական արժեքը:

Գրքի համար հիմք է ծառայել 2001թ. հրատարակված «Հայատառ թուրքերեն գրականությունը» աղբյուրագիտական հետազոտությունը:

Գիրքը նախատեսվում է հայատառ թուրքերեն գրականությամբ, նրա ձեռագրական և տպագրական շրջաններով, պարբերական մամուլով զբաղվողների, հետազոտողների համար:

ՀՏԳ- 93/99 (560):941(479.25)
ԳՄԴ- 63.3 (5ԹՄ)+63.3 (2Հ)

ISBN 978-5-8084-1582-9

© Ստեփանյան Հ., 2023

**ՀԱՅԵՐԵՆ ԱՅԲՈՒԲԵՆԻ ՏԱՌԱԳԱՐՉՈՒՄԸ ԹՈՒՐԲԵՐԵՆ՝
ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆԻ ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ՀԻՄԱՆ ՎՐԱ**

ա - a	լ - l	ո - o	փ - p
բ - p	խ - h	չ - ç	ք - k
գ - k	ծ -	պ - b	օ - o
դ - t	կ - g	ղ - c	ֆ - f
ե - y, e*	ն - n	ր - r	ւ - v
զ - z	ձ -	ս - s	իւ - ü
է - e	ղ - ğ	վ - v	էօ - ö
ը - ı	ճ - c	ւո - d	էո - ö
թ - t	յ - y, h**	ր - r	
ժ - j	ն - n	ց - ts	
ի - i	շ - ş	ու - u	

*Չայնավորից առաջ կարդացվում է y, իսկ բաղաձայնից առաջ՝ e.

** Բառասկզբում h, իսկ մնացած դեպքերում՝ y.

Բ Ո Վ Ա Ն Գ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1. Առաջաբան..... 7

2. Գլուխ Ա Հայատառ թուրքերեն գրականության ձևավորման քաղաքական-սոցիալ-տնտեսական և մշակութային նախադրյալները..... 22

3. Գլուխ Բ Հայատառ թուրքերեն ձեռագիր գիրքը (14-19րդ)..... 33

4. Գլուխ Գ Հայատառ թուրքերեն գրահրատարակչության սկզբնավորումը..... 47

5. Գլուխ Դ Արևմտահայության ազգային զարթոնքի արտահայտությունը հայատառ թուրքերեն գրքում 19-րդ դարի երկրորդ կեսին. Ինքնուրույն և թարգմանական գեղարվեստական գրականություն 70

6. Գլուխ Ե Պատմական ստեղծագործություններ 108

7. Գլուխ Չ Ուսումնական և գիտահանրամատչելի գրականություն 115

8. Գլուխ Է Գիտա-հանրամատչելի գրականություն 134

9. Գլուխ Ը Հայատառ թուրքերեն դրամատուրգիան և հայկական թատրոնը Թուրքիայում (19-րդ դարի կեսերից -20-րդ դարի սկիզբը) 141

10. Գլուխ Թ Հայատառ թուրքերեն գրահրատարակչության անկման ընդհանուր բնութագիրն ու պատճառները (20-րդ դար) 172

11. Գլուխ Ժ Հայատառ թուրքերեն հրատարակությունները 20-րդ դարում Թուրքիայի սահմաններից դուրս 177

12. Վերջաբան (ոտուերեն) 184

13. Հայկական թատերախմբերի թուրքերեն (հայատառ թուրքերենով գրված) ներկայացումների ցուցակ 187

14. Անվանացանկ..... 197



ԱՌԱՋԱԲԱՆ

Հայաստան թուրքերեն գրականությունը հայ մշակույթի անքակտելի մասն է կազմում: Այն արդյունք էր Օսմանյան կայսրության տիրապետության տակ գտնվող արևմտահայության սոցիալական, հասարակական-քաղաքական ծանր իրավիճակի:

Ավելի քան 500 տարի հայերն ապրել են թուրքական տիրապետության տակ: Սա սովորական հպատակություն չի եղել, այլ իր հայրենիքում ապրող մշակութային խոր անցյալ ունեցող մի ժողովրդի վրա կրոնական մոլեռանդության մոլուցքով տարված ռազմաֆեոդալական իշխանության տնական ու ահավոր ճնշում: Թուրք տիրապետողները ոչ միայն վերցրել են հայ ժողովրդի ստեղծած նյութական բարիքները, նրա ֆիզիկական աշխատանքի արդյունքը, այլև ամեն կերպ աշխատել են ոչնչացնել կամ յուրացնել նրա մտավոր ստեղծագործության արգասիքները, ձուլել ու մահմեդականացնել հպատակ ժողովուրդներին:

Հայաստան թուրքերեն գրականությունը ծնունդ է առել որպես ինքնապահպանման ու ուժացման դեմ պայքարի միջոց: Խորապես ազգային այս երևույթն իր զարգացման ու գոյության ավելի քան հինգ հարյուրամյակներում վերաճել է մշակույթի մի այնպիսի հզոր, բազմաժանր ու ինքնուրույն ճյուղի, որը ոչ միայն արդարացրել է իր նախնական առաքելությունը, այլև վերաճել ավելի լայն գործոնի՝ **ծառայել Օսմանյան կայսրության մեջ ապրող թուրքախոս այլ ազգերի և ս, իր մասն ունենալով այդ ժողովուրդների զարգացման, լուսավորության գործում:**

Այս գրականությունն իր էությանը նույնքան ինքնուրույն, բազմակողմանի ու լիարժեք է եղել, որքան հայալեզու մշակույթը, գրականությունը, որպեսզի ներկայացնի արևմտահայության կյանքի բոլոր կողմերը:

Հայ մշակույթի պատմության մեջ, ինչպես նաև Օսմանյան կայսրության ժողովուրդների մշակութային կյանքում հայաստան թուրքերենի ունեցած ավանդի ուսումնասիրությանն է նվիրված սույն աշխատությունը:

Շատ ժողովուրդներ և ազգեր կան, որոնք իրենց գրականությունը ստեղծել են միաժամանակ երկու լեզվով՝ սեփական ու օտար, և կամ էլ՝ օտար լեզուներով: Այսպես օրինակ, 9-13-րդ դարերում պարսիկ մատենագիրները հսկայական գրականություն են ստեղծել ինչպես պարսկերեն, այնպես էլ արաբերեն լեզուներով: Պարսկերեն լեզվով Հնդկաստանում ստեղծվել է մատենագրական հարուստ ժառանգություն: Արաբերենը որպես գիտության լեզու ծառայել է միջնադարյան Արևելքի շատ ժողովուրդների՝ ինչպես լատիներենն է ծառայել Եվրոպայի ժողովուրդներին: Տասնյակ ժողովուրդներ ստեղծագործել ու շարունակում են ստեղծագործել օտար լեզուներով՝ ֆրանսերեն, անգլերեն, իսպաներեն, պորտուգալերեն, ռուսերեն, իտալերեն և դրանցից յուրաքանչյուրն ունի իր ազգային դրոշմն ու նկարագիրը: Հարկ է նշել, որ ի թիվս հայերեն ու հայաստան թուրքերեն գրականության, գոյություն են ունեցել հայաստան դիչադերեն, արաբերեն, քրդերեն և այլ հայաստան գրականություններ, որոնք հիմնականում գուրկ լինելով սո-

ցիալ-քաղաքական հիմքերից, իրականում գործնական խոշոր դեր չեն կատարել:

Գալով հայատառ թուրքերեն գրականությանը, ապա նրան հատուկ է շեշտված հայ ազգային նկարագիրը: Հայ ժողովուրդը վերը հիշատակված լեզուներով ստեղծագործած որոշ ժողովուրդներից տարբերվում է նրանով, որ հայատառ թուրքերեն գրականությունը չի համարվում հայ ժողովրդի հիմնական, առավել ևս՝ հայ ժողովրդի մտավոր զարգացման գրական միակ արտահայտությունը: Հայատառ թուրքերենը ստեղծվել է հայերի կողմից որպես հաղորդակցության միջոց ոչ միայն հայերեն չիմացողների, այլ նաև մասամբ հայերենին տիրապետողների համար: Հայատառ թուրքերեն գրականության սկզբնավորումն ու զարգացումն ընթացել է բուն հայ գրականությանը զուգահեռ և երբեք պայմանավորված չի եղել հայ գրականության վերելքով կամ վայրէջքով: Այն թելադրված էր Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական, քաղաքական ծանր իրավիճակով:

Հայ գրականությունը շարունակելով դարերի խորքից եկող մշակութային ժառանգության ավանդույթները, նոր շրջանում զարգացում է ապրել իր երկու ինքնուրույն գրական լեզուների՝ արևելահայերենի ու արևմտահայերենի ճյուղավորմամբ, շարունակելով այն մինչև մեր օրերը:

Հայատառ թուրքերեն գրականությունը, բնականաբար, թե՛ քանակական և թե՛ որակական առումներով գիջում է բուն հայ գրականությանը և կազմում ինքնուրույն արտահայտչաձև գտած նրա մի անբաժանելի մասը:

Հասկանալու, առավել ևս գնահատելու համար հայատառ թուրքերեն գրականության կարևորությունը, անհրաժեշտ է ուսումնասիրել, թե ինչպիսի՞ պատմական նախապայմանների թելադրանք է այն եղել:

Հայ ժողովրդի արևմտահայ հատվածը դարեր շարունակ գոյատևելով Օսմանյան կայսրության տիրապետության տակ, անընդհատ գտնվել է բռնի ուժացման քաղաքականության դեմ հանդիման, որը եթե լիակատար հաջողությամբ չի պսակվել, բայց և անհետևանք չի անցել: Ջարդերից ու հետապնդումներից հիմնականում ազատվել են այն մարդիկ, որոնք փոխել են, երբեմն միայն առերես, իրենց ազգությունն ու կրոնը: Այս դեպքում անգամ ասվում էր, որ «հայն ինչքան էլ իսլամ ընդունի, մուսուլմանի աչքում մնալու է հարամ ոսկորով հայ¹»:

Հարյուրավոր հայկական գյուղեր, որոնք անցյալում ունեցել են իրենց վանքերն ու եկեղեցիները, աստիճանաբար ամայացել են և 19-րդ դարի կեսերին այդ վայրերում հայերի հետքն անգամ չի մնացել:

Օսմանյան կայսրության քրիստոնյա բոլոր ժողովուրդների, այդ թվում նաև հայերի համար մեծագույն արհավիրք էր «դևշիրմե»-ն: Այն քրիստոնյա բնակչության արու երեխաների պարտադիր մանկահավաք էր, որը հիմնականում նախատեսված էր ենիչերական զորախմբերի համար: Ենիչերական զնդերում մանկահավաքի զոհ դարձած տղաների իսլամացումը և մահմեդական դաստիարակությունը դարեր շարունակ փորձանք ու արհավիրք է եղել կայսրության քրիստոնյա հպատակների համար: Այս ողբերգական

1 Gülçiçek Günel Tekin. Beni Yıkamadan Gömün, Kürtler Ermeni Soykırımını Anlatıyor, İst.2013 , էջ 206:

երևույթին են անդրադարձել մատենագիրներից Գրիգոր Դարանաղցին, Միսեոն Լեհացին, Թադեոս Սեբաստացին և մյուսներն իրենց ժամանակագրություններում և ողբերում: Տխրագույն այս փաստը թուրք պատմագիրների, ինչպես օրինակ Իբրահիմ Փեչևիի նկարագրություններում հերոսական երանգներ է ստանում²: Հայկական աղբյուրներում, մասնավորապես Անանուն Սեբաստացու մոտ որպես «ղևջիրմե»-ի սկիզբ նշվում է 1519 թվականը, կապված սուլթան Սելիմ Առաջինի հրամանագրի հետ³:

Ժամանակակից որոշ թուրք պատմաբաններ հենվելով նույն

Ի. Փեչևիի և նրա աղբյուրների վրա, գրում են, որ «ղևջիրմե»-ի ժամանակ իշխանությունները մանկահավաքներն անցկացրել են միայն թուրքացած քրիստոնյաների շրջանում: Որպես ապացույց բերվում է այդ շրջանների քրիստոնյաների թրքախոս լինելու հանգամանքը: Բնականաբար թուրք պատմաբանները լռելյայն անցնում են այն փաստի կողքով, որ բազմաթիվ գավառներում հայերը և հույները լեզուն կտրելու, խարույկի վրա այրվելու, ամորձատելու սպառնալիքով ստիպված էին խոսել միայն թուրքերեն լեզվով⁴:

Քրիստոնյաները սովորական թաղում կատարելու համար անգամ ստիպված էին մուլայից արտոնագիր վերցնել: Անարգական այս արտոնագրերը՝ «զգվելի գարշահոտությունը մեջտեղից վերացնելու, այդ անարգ լեշը քաղաքից դուրս մի փոսի մեջ գցելու» համար տրվում էր ստիպողաբար⁵:

Որպեսզի Պոլսի պատրիարք Գրիգոր Կեսարացու⁶ աճյունը քաղաքից դուրս մի տեղ չգցեն, ստիպված են լինում վաճառել նրա ճոխ մատենադարանը և կաշառք տալ՝ նրան եկեղեցու բակում թաղելու թույլտվության համար⁷:

Մահմեդականություն ընդունվածներն ազատվում էին մի շարք հարկերից՝ որոշակի առավելություններ ստանալով մնացածների նկատմամբ: Բռնի մուսուլման դարձածներից շատ շատերը շարունակում էին գաղտնաբար մնալ քրիստոնյաներ: Ժամանակակից թուրք գիտնականները, որոնք զբաղվում են Թուրքիայի տարածքում գոյություն ունեցած ժողովուրդների պատմության, մշակույթի, ինչպես նաև այդ ժողովուրդների կողմից հիմնականում իրենց այբուբեններով, սակայն թուրքերեն լեզվով ստեղծված գրականության հարցերով, միշտ չէ որ գիտականորեն են ներկայացնում ուսումնասիրության առարկա

2 Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին. Հ. 1. Երևան, 1961, էջ 34 :

3 Տես՝ Մանր ժամանակագրություններ 13-17դդ., հ.1, կազմեց Վ.Ա. Հակոբյան, Երևան 1951, էջ169: Տես նաև՝ Չուլպյան Մ. «Ղևջիրմե»-ն Օսմանյան կայսրությունում ըստ թուրքական և հայկական աղբյուրների: Պատմա-բանասիրական հանդես. Երևան, 1959, N 2-3, էջ 328-333:

4 Չուլպյան Մ. Արևմտյան Հայաստանը 16-18դդ. Երևան, ԳԱ հրատ., 1980. էջ 19-85: Նման բազմապիսի փաստեր են բերվում Հալեպում հրատարակված «Տաթև» տարեգրքում. 1929 թ. էջ 5-34:

5 Դեսպան Մորզընբաուի յիշատակները, Կ.Պոլիս, 1919, էջ 242. Տես նաև՝ Գոռ Երանեան, Հայոց Յեղասպանութեան Մասին Քրդերի Բանատը Պատմութիւնները (Ըստ՝ Գիլչիչէք Թեքինի «Քրդերը Պատմում են Հայոց Յեղասպանութեան Մասին» գրքի) Հայկազեան Հայագիտական Հանդես, Պէյրոս, 2015, հ.1.է, էջ 843-47. Gülçiçek Günel Tekin. Beni Yıkamadan Gömün, Kürtler Ermeni Soykırımını Anlatıyor, (Ինձ չլուացած թաղեցէք. Քրդերը պատմում են Հայոց Յեղասպանութեան մասին), Պէլլէ Համալսարանի Հրատ., Իսթանպուլ, 2013, էջ 260.

6 Գրիգոր Բ Կեսարացի (պատրիարքության շրջանները՝ 1601–08, 1611–1621, 1623–26).

7 Բ.Կիլեսերեան, Կոլոտ Յովհաննէս պատրիարք, Վիեննա, 1904, էջ 79:

նյութը: Ներկայացնելով օրինակ «Քարամանլիդիկա» կոչվող **հունատառ թուրքերեն** գրականությունը, որոշ գիտնականներ (*Robert Anhegger, Melküre Mollova*) սկսում են նրանից, որ թրքախոս հույների գոյության երկու ուղի են նշում: Դրանցից առաջինը 1500 տարիների վաղեմություն ունեցող, դեռևս բյուզանդական շրջանից մնացած *քրիստոնյա թուրքերեն* են: Երկրորդը՝ Թուրքիայի տարածքում բնակվող հույներն են, որոնք *կամովին հունարենը լքել և թուրքերենն են սեփականություն դարձրել*: Սուրբան Մեհմեդ Երկրորդի կողմից Կոստանդնուպոլսի գրավումից հետո, երբ հիմնադրվեցին հունական և հայոց պատրիարքարանները, հրեական խախտությունը, բնակչության այս մասը սկսեց սովորել հունարեն, օգտագործելով հունատառ թուրքերենը: Մինչ այդ, նրանք եկեղեցական արարողություններն անգամ թուրքերենով են ցանկացել կատարել և հունատառ թուրքերեն կրոնական գրականությունն էլ այս նպատակին է ծառայել, թեև լավագույնս չի արտահայտել թուրքերենի հնչողությունը⁸:

Ի տարբերություն հայատառ հունարենի՝ **հայատառ քրդերեն** գրականությունը ստեղծվել է որոշակի նպատակադրվածությամբ: Քանի որ այլընտրանք համարյա չկար, ապա քրդերի համար ստեղծված գրականությունը հիմնականում եղել է հայատառ: Շնորհիվ հայ գրիչների, մեզ են հասել այս գրականության ձեռագիր և տպագիր մնուշներ⁹, տպագրվել հայկական տպարաններում, մասամբ հայ հեղինակներ ունեցել: Հայատառ քրդերեն ձեռագրերը աղոթքներ են, ժողովրդական բանահյուսության օրինակներ, ինչպես՝ առակներ, հանելուկներ, ասացվածքներ, երգեր, նաև բառարաններ: Դրանք, անտարակույս, որոշակի ազգագրական արժեք են ներկայացնում¹⁰:

Հայատառ քրդերեն տպագիր գրականության մի մասը կապվում է Օսմանյան կայսրության ժողովուրդների շրջանում ամերիկյան և եվրոպական տարբեր ուխտերի միսիոներների գործունեության հետ: Այս շրջանում թարգմանվել ու տպագրվել են տարբեր լեզուներով Աստվածաշունչ, Ավետարաններ, դավանաբանական գրքեր, այդ թվում՝

- 8 Robert Anhegger. Karamanlı Türkçesi. İst.,Tarih ve Toplum,1984, N 4, s.2: Հայատառ հունարեն աղոթքներ, տաղեր են պարունակվում Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի (այսուհետև տես՝ Մատենադարան) 631, 4618, 5954, 7117, 7316, 7716, 8728 ձեռագրերում: Դրանցից երկուսը՝ 7117 և 7316 ձեռագրերում «Սուրբ Աստուած» աղոթքն է՝ հայատառ հունարեն, հայատառ քրդերեն, հայատառ ասորերեն, հայատառ վրացերեն, հայատառ պարսկերեն, հայատառ արաբերեն, հայատառ ղվիչաղերեն: Հայատառ հունարենով մեզ են հասել նաև «Հայր մեր, Ողջոյն քեզ» աղոթքի մի քանի օրինակներ: Տես՝ Վիեննայի Մխիթարյան Մատենադարանի ԺԹՊ. ձ. 876: Այն ավելի քան կես էջ բառացանկ է «Հայեվար, յուներեն, տաճկերեն, լատիներեն. օրինակ՝ սեռ-եհնոս, ճինս, յունարեն՝ հեօս, տիսֆօրա, տաճկերեն ֆինս, ֆասըլ»:
- 9 Հայատառ քրդերեն են պարունակում Մատենադարանի 737, 771, 4618, 5066, 7117, 8049, 10036 ձեռագրերը: Մեզ հայտնի հայատառ քրդերեն տպագիր գրքերի թիվն անցնում է տասից: Հայատառ քրդերենով Կ.Պոլսում 1850, 1857, 1861, 1866, 1868, 1872, 1891, 1910, 1911 թվականներին լույս են տեսել Նոր կտակարան, Ավետարաններ: Դրանք միսիոներներն անվճար բաժանել են :
- 10 Ձեռ.10036-ն իրենից ներկայացնում է Տաղարան, որ գրի է առել 1869-81թթ. Ախալքալսկի Էշտիա գյուղում գրիչ, տաղերգու Սարգիս Քյուրդոզլյանը: Մասնագետների կարծիքով դա միջնադարյան հայտնի քուրդ փիլիսոփա բանաստեղծ Ֆառիե Տայրայի ստեղծագործություններն են: Կարծում ենք հետաքրքրություն են ներկայացնում 1680-1719 թթ. Բաղեշում գրի առնված ժողովածուի մեջ տեղ գտած քրդական «Տաղ Գ-նե խանմանայ» երգերը: Ի դարի հայ-քրդերեն գրուցաբառարան է տպագրվել հայկական Ճիզմեճյան տպարանում 1942թ. Հալեպում: Հոգևոր երգարան է հրատարակվել Ղազար Տեր Ղազարյանի թարգմանությամբ: 1949թ Բեյրութում տպագրվել է Հակոբ Մոմճյանի քրդերենի դասագիրք, քերականությամբ և բառարանով հանդերձ:

հայաստան քրդերեն: Հայաստան քրդերեն տպագիր գրականության մյուս մասն իրենից ներկայացնում է լուսավորական առաքելության արտահայտություն: Դրանք **Սկրտիչ վարդապետ Տիգրանյանի, Պետրոս Ամիրխանյանի** հեղինակած քրդերենի և հայերենի դասագրքեր են, այբբենարաններ, բառարաններ: Այն ուղղված էր քրդերին, եզդիներին գրաճանաչ դարձնելու նպատակին:

Գալով հայաստան թուրքերենի ուսումնասիրությանը նվիրված մի շարք թուրքագետների հոդվածներին, ակնհայտ է դեռևս Թուրքիայի հանրապետական շրջանից ի վեր («Թուրքական պատմական ընկերության» որդեգրած պատմության՝ «թուրքացման») պատմություն «ստեղծելու» նրանց ոճը: **Հայաստան թուրքերենի և հայաստան ղփչաղերենի** առաջացումը ներկայացվում է որպես 10-րդ դ. հետո Անիից և 13-րդ դ. Պարսկաստանից Արևմտյան Ուկրաինա-Լեհաստան, Դրիմ հաստատված հայերի, ինչպես նաև Օսմանյան կայսրությունում հայերի կողմից ստեղծված գրականություն: Հայաստան ղփչաղերենը քիչ ավելի վաղ շրջան է և շատ չի տարբերվում հայաստան թուրքերենից: Այն ուսումնասիրության հատուկ բնագավառ է և գրադեցրել է բազմաթիվ եվրոպացի (*Jean Deny, Tadeusz Kowalski, Omelyan Pritsak, Edward Tryjarski, E.Schütz, Andreas Tietze*) գիտնականների: Հայաստան ղփչաղերենի առաջացումը թուրք գիտնական Թալատ Թեքինը կապում է դեռևս 13-րդ դարում Դրիմի ղփչաղական- թուրքական պետության տարածքում թուրքերի և *քնչլոր* հայերի միջև համագործակցությամբ ու սերտ հարաբերություններով, հայերի մայրենի լեզվից *հրաժարված* և ամբողջովին ղփչաղերենը *սեփականացրած* լինելու հանգամանքով¹¹: Հոդվածագիրը նշում է, որ Ուկրաինայի, Լեհաստանի արխիվային ֆոնդերում¹², հատկապես Կամենեց-Պոդոլսկում և մյուս հայկական մշակութային կենտրոններում գրի առնված և տպագրված հայաստան ղփչաղերենով (հին թաթարերեն) մեծ թվով գրականություն է պահվում: Թուրք գիտնականների այս հոդվածները, որքան էլ որ արժեքները թուրքացնելու նպատակաուղղված բնույթ են կրում, այնուամենայնիվ ուշագրավ են իրենց ընդգրկված նյութի առումով:

Հայաստան թաթարերեն և հայաստան ղփչաղերեն գրականությունը հայ մշակույթի անբաժանելի մի մասն է կազմում և որոշակի պատմաբանասիրական արժեք ունի: Այն հայաստան թուրքերեն գրականության մի տարբերակն է և առաջացել է 13-14-րդ դարերում: Այս ձեռագրերը պատկառելի թիվ են կազմում և գտնվում են աշխարհի տարբեր գրադարաններում, մատենադարաններում ու մասնավոր ձեռագրատներում: Մեզ են հասել հիմնականում 16-րդ դարի ձեռագրեր, որոնք ստեղծվել են հիմնականում Արևմտյան Ուկրաինայի, Լեհաստանի հայկական գաղթավայրերում, որոնց մի մասը թուրքախոս էր և ունեն հույժ ազգային բնույթ, ծառայել են համայնքի ամենօրյա կենցաղային խնդիրներին: Դրանք քարոզգրքեր¹³, աստվածաշնչային պատմություններ են, դատաս-

11 Talat Tekin. Ermeni Alfabesiyle Türkçe. İst.,Tarih ve Toplum,1984, N 4, s. 6-9.

12 Հայաստան ղփչաղերեն հրատարակության օրինակ է Հոլանդիայի Լեյդեն քաղաքի համալսարանական գրադարանում պահվող, 1619 թվականին Լվովում Հովհաննես Քարմատանյանցի կողմից հրատարակված «Աղօթք Հասարակաց քրիստոնեից» գիրքը (1067+552էջ): Այս գաղութներում են հիմնականում հրատարակվել հայաստան թաթարերեն մի շարք գրքեր:

13 Հր.Աճառյանը վկայում է, որ Անտոն վրդ.Լեհահայոցը 1860-61թթ. գրել է 3 հատոր հայաստան թաթարերեն քարոզգիրք: Այն ապացույց է այն բանի, որ Արևելյան Եվրոպայի հայկական համայնքներում, հայկական եկեղեցիներում քարոզը հաճախ թուրքերեն է հնչել, ինչպես Արևմտյան

տանագրքեր (Մխիթար Գոշի Դատաստանագիրքն է՝ 10 գլուխների թարգմանությամբ, որով ղեկավարվել են տեղի հայկական համայնքները տվյալ երկրների թագավորների, կառավարությունների թույլտվությամբ), եկեղեցական, արարողակարգային ձեռագրեր, աղոթքներ, ժամագրքեր, սաղմոսագրքեր, վարք սրբոց, համայնքի կանոնադրություններ, տվյալ երկրի ղեկավարության հետ պաշտոնական հարաբերություններ արտահայտող փաստաթղթերի պատճեններ), եկեղեցական հաշվառման, ամուսնական դաշնագրերի ու ծնունդի մատյաններ, պարզևագրեր, անդորրագրեր, կահագրքեր, հաշվեմատյաններ, պատմութիւններ (Խիկարի և ուրիշ), տաղեր, բառգրքեր և այլն¹⁴:

Հայատառ դիչաղերեն ձեռագրերը պարունակում են բառարաններ, ժամագրքեր ու աղոթագրքեր, դատաստանագրքեր, բժշկարաններ: Առանձնակի արժեքավոր են դիչաղերենի քերականությունները, բառարանները¹⁵: Հայատառ դիչաղերենի մասին արժեքավոր աշխատության հեղինակ է ականավոր լվովցի արևելագետ, հայագետ Յու. Դաշկևիչը: Ի տարբերություն ուկրաինացի գիտնական Գարկովեցի, նա այս գրականությունը համարում է հայկական մշակույթի մի կարևոր մաս, որը մեծ ազդեցություն է ունեցել իր ժամանակին հայկական, նաև դիչաղական բանասիրության որոշ հուշարձանների գրառման, պատմության համար, դրանց պահպանման գործում¹⁶: Անընդունելի է համարվում այն կարծիքը, թե հայատառ դիչաղերենը դիչաղացած հայերի կողմից է ստեղծվել: Պատմական և մշակութային մեծ ներուժ ունեցող ժողովուրդը չէր կարող մոռանալ այն և իջնել գիր ու գրականություն չունեցող, քոչվորական ցեղի մակարդակին: Ընդհակառակը, նա դիչաղերենը դարձրել է շրջակա միջավայրի հետ շփման գործիք, ստեղծագործել և այդ լեզուն դարձրել որոշ ժամանակ իր պատմության արտացոլման հայելին: Դիչաղերենի օգտագործումը հայերի կողմից բացատրվում է այն հանգամանքով, որ Անիից գաղթած հայերի բարբառը չափազանց բարդ ու անհասկանալի էր պարսկահայերի համար: Մինչդեռ պարզունակ դիչաղերենը ծառայել է նրանց միջև որպես շփման հասկանալի հնարավորություն, նրանց համախմբման և համակեցության ընդունելի միջոց:

Հայաստանի թուրքախոս հայերի շրջանում:

14 Հայատառ թաթարերեն ձեռագրեր տես՝ Վիեննայի Կայսերական մատենադարանի ձեռ. 13(1580թ.) և ձեռ. 3(1638թ.): Տես նաև՝ Վիեննայի Մխիթարյան միաբանության ձեռ. 468 (1575թ.), 559 (1583թ.), 446(1608թ.), ձեռ. 525 (1618թ.), ձեռ. 447(1643թ.), 479(1660թ.), 480(1661թ.), 536(ԺԶ), ձեռ. 1300(ԺԸ), 1609(ԺԸ) և այլն:

Երևանի Մատենադարանում հայատառ թաթարերեն են 1731, 9789 ձեռագրերը:

Կամենեց-Պոդոլսկում և մյուս մշակութային հայկական կենտրոններում գրի առնված և տպագրված հայատառ դիչաղերենով (հին թաթարերեն) մեծ թվով գրականություն է պահվում Ուկրաինայի, Լեհաստանի արխիվային ֆոնդերում:

15 Ղազախստանի Ալաղեմիան հրատարակել է Երևանի ՍՍ Մատենադարանի երկու արժեքավոր ձեռագրեր, ներկայացնելով դրանք որպես ղազախական մշակույթի **առաջին եզակի գրավոր հուշարձաններ**: Այն է՝ Լուսիկ վարդապետի բառարանը և Ավետիքի հայ-դիչաղերեն գրուցարանը ուկրաինացի գիտնական Ա.Գարկովիցի խմբագրությամբ և ծանոթագրություններով: Гаркавец А.Н. Кыпчакское письменное наследие. Памятники духовной культуры. Алматы: KASEAN; БАУР, 3 том. 2007. — 912 с. Տես՝ ՍՄ, ձեռ. 3522, Քերականութիւն դիչաղ լեզուի, Լվով, 1634թ. 353 թերթ, և ձեռ. 3883, Բառք քերականականը, ԺՁ դ., 383 թերթ., Ձեռ.3521 «Թուրք առ Դիուկորոս», 1609թ. 220 թերթ և այլն:

16 Я.Р. Дашкевич. Армяно-кыпчакский язык XV-XVII вв. В освещении современников. *Вопросы языкознания*. М. 1981/5.

Հայաստան թուրքերեն գրականությունը ստեղծվել է հայ ժողովրդի ոչ թե հիմնական մասի համար, այլ այն հայերի, որոնք կորցնելով սեփական լեզուն, այնուհանդերձ պահպանել էին իրենց հավատքը, քրիստոնեական դավանանքը: Միայն 19-րդ դարի կեսերին, Թանգիմաթի տարիներին հայերը համեմատաբար լայն հնարավորություն ստացան բացելու ազգային, աշխարհիկ դպրոցներ: Մոտ կես միլիոն հայեր ապրելով Արևմտյան Հայաստանի, Օսմանյան կայսրության թուրքաշատ գավառներում, պահպանելով ազգային ավանդույթները՝ մնացել էին թրքախոս: Մինչ մի ամբողջ սերունդ պիտի դառնար հայախոս, դեռ երկար տասնամյակներ անհրաժեշտ էր թրքախոս այդ հայերին հաղորդակից դարձնել ազգային զարթոնքին ու մտավոր վերելքին նրանց համար հասկանալի լեզվով՝ հայաստան թուրքերենով կատարված հրատարակություններով: Այս հանգամանքով պետք է բացատրել հայաստան թուրքերեն ձեռագիր և հատկապես տպագիր գրականության առաջացումը, հարյուրավոր կրոնա-դավանաբանական, պատմական, ինքնուրույն և թարգմանական գեղարվեստական և այլ գրականության, իսկ ավելի ուշ՝ թերթերի ու հանդեսների առաջացումը:

19-րդ դարում հայաստան թուրքերեն գրականությունն այնպիսի բուռն վերելք ապրեց՝ քանակական և որակական այնպիսի բարձրակետի հասավ, որ այդ գրականությամբ հետաքրքրվեցին մաս օտարները, առաջին հերթին իհարկե թուրքերը, քանի որ լեզուն իրենցն էր, իսկ հայկական այբուբենն անհամեմատ դյուրին էր սովորելը, ինչպես իրենք էին վկայում, քան օսմաներենի արաբական բարդ գրաֆիկան:

Հռչակավոր հայագետ-լեզվաբան Հրաչյա Աճառյանն իր հայտնի «Հայոց լեզվի պատմություն» աշխատության մեջ գրում է, որ «Ի հարկե այս բոլորի վրա նույն կերպով և նույն ուժով չէ ազդած թուրքական տիրապետությունը, այլ կենտրոնական տեղերում ավելի զորեղ, իսկ կենտրոնից հեռու տեղերում և բուն Հայաստանում համեմատաբար ավելի տկար: Այս տեսակետից բոլոր հայերին կարող ենք բաժանել երեք աստիճանի:

1. Նրանք, որ թուրքական ազդեցության տակ բոլորովին կորցրել են հայերեն լեզուն և թրքախոս են դարձել:

2. Նրանք, որ թեև պահել են հայերենը, բայց ունին մեծ քանակությամբ թուրքական փոխառություններ:

3. Նրանք, որոնց մեջ այդ փոխառությանց թիվը չափազանց մեծ չէ»¹⁷:

Եվրոպական գրականության թարգմանությունները հայաստան թուրքերենով գրավեցին մաս Օսմանյան կայսրությունում ապրող այլ ժողովուրդների ուշադրությունը, որոնք լավ գիտեին թուրքերենը (հույներ, բուլղարներ, հրեաներ, ալբաններ և այլն): Այս հանգամանքը նպաստեց, որպեսզի թուրք հասարակայնությունը հայաստան թուրքերենի միջոցով հաղորդակից դառնա եվրոպական, նոր ժամանակների իրադարձություններին:

Հայաստան թուրքերեն տպագիր գիրքն ունեցել է ընդարձակ աշխարհագրություն: Այն տպագրվել է թե՛ Օսմանյան կայսրության տարբեր քաղաքներում և թե՛ նրա սահմաններից դուրս՝ ամենատարբեր պատճառներով: Ավելի քան 250 տարիների ընթացքում

17 Աճառյան Հ. Հայոց լեզվի պատմություն. Հ2, Երևան, 1951, էջ 255-295: Հրաչյա Աճառյանը մեջբերում է մանրամասն ցուցակն այն վիլայեթների ու բնակավայրերի, ուր հայեր էին ապրում:

հայատառ թուրքերեն տպագրված գրքերի թիվն անցնում է 2000 անունից: Հրատարակվել են դրանք աշխարհի մոտ 50 քաղաքների 200-ից ավելի տպարաններում: Յուրաքանչյուր տպարան, հրատարակչություն ունեցել է իր դեմքը, իր սոցիալ-քաղաքական ու կրոնական կողմնորոշումը, իր գրական, լուսավորական նպատակները, իր նախասիրած թեմատիկան, հետաքրքրությունների նախընտրած շրջանակը: Հայատառ թուրքերեն տպագիր գրականության երկուս ու կես դարյա պատմության ուսումնասիրությունը փաստում է հայերի բազմակողմանի կյանքի գոյությունն ինչպես Օսմանյան կայսրությունում, այնպես էլ Մերձավոր Արևելքում, Եվրոպայում, Ամերիկայում և այլուր: Միայն Պոլսում հայատառ թուրքերեն գրքեր հրատարակվել են շուրջ 85 հայկական տպարաններում: Հրատարակչական կենտրոններ են եղել նաև Մխիթարյան միաբանության Վեներտիկի սբ. Ղազար կղզու, Տրիեստի, Վիեննայի վանքերն իրենց տպարաններով: Երուսաղեմի սրբոց Հակոբյանց վանքի տպարանում հրատարակվել են արժեքավոր շատ գրքեր, ապա՝ Բեյրութում, Սիրիայում, Եգիպտոսում, Ֆրանսիայում, Ամերիկայում, Բուլղարիայում, Մալթա կղզում, Ռուսաստանում, Մոլդովայում և այլուր:

Հայատառ թուրքերեն գրականության ուսումնասիրությունը կարևոր է հիմնականում հետևյալ նկատառումներով.

ա. Մամուլին զուգահեռ այս գրականությունը հսկայական ազդեցություն է ունեցել իր ընթերցողների վրա՝ նպաստելով նրանց մտավոր զարգացմանն ու գեղարվեստական ճաշակի բարձրացմանը, հաղորդակից դարձնելով նրանց արևմտաեվրոպական առաջադեմ մտքի նվաճումներին:

բ. Հայատառ թուրքերեն գրականությունն անչափ բազմազան է եղել իր բովանդակությամբ և ժանրային առումով: Վերջիններս ընթերցողների ավելի լայն շրջանակ են ունեցել: Դուրս գալով հայ ազգային շրջանակներից, հայատառ թուրքերեն գրականությունը միաժամանակ դարձել էր թուրքերի և թուրքերենին տիրապետող այլ ազգերի սեփականությունը, դրանով իսկ տարածաշրջանային արևելագիտական մշակութային կարևոր նշանակություն ձեռք բերել:

գ. Այս գրականության մի ճյուղը ծառայել է հայերի շրջանում կաթոլիկության, ավետարանական միսիոներական տարբեր ուխտերի գործունեության տարածման նպատակին, իսկ մյուս ճյուղը՝ ակտիվորեն պայքարել վերջիններիս պրոպագանդայի դեմ:

դ. Հայատառ թուրքերեն գրականությունն ուշադրության է արժանի նաև իր լեզվական առանձնահատկությունների առումով (մասնավորապես գեղարվեստական գրականությունը): Այն պարունակում է հայերեն բառանյութ և ոճեր, հայկական ազգային ինքնագիտակցության կնիք՝ դարձնելով հայատառ թուրքերենը ուսումնասիրության հետաքրքիր աղբյուր հայագետ-լեզվաբանների, թուրքագետների համար: Հատկապես թարգմանական գեղարվեստական հայատառ թուրքերեն գրականությունը ստեղծվել է ժողովրդական, խոսակցական թուրքերենի հիման վրա: Սա յուրատեսակ համաձուլում է ժողովրդական «կոպիտ թուրքերենի» (kaba türkçesi) և գրական թուրքերենի՝ «հետուսմաներեն»-ի: Թուրքերեն լեզվի դեմոկրատիզացիայի այսպիսի աստիճանի էին ձգտում 19-րդ դարի և հետագայի բոլոր նշանավոր թուրք լուսավորիչները: Թարգմանությունների այս լեզուն մնում է լիովին հասկանալի մեր օրերում ևս: Այս փաստը վկայում է հայ

թարգմանիչների, բառարանագիրների և հեղինակների լեզվական հրաշալի զգացողության մասին և դրանով մեծ ավանդ է ներդրվել ժամանակակից գրական թուրքերենի ստեղծման, ձևավորման գործում¹⁸:

Երբ Օսմանյան կայսրությունում հաճախակի դարձան օտար ճանապարհորդների, զինվորականների, դիվանագետների և միսիոներների այցելությունները, նրանց ուշադրությունից չվրիպեց հայաստան թուրքերենի՝ կայսրության թուրքալեզու ժողովուրդներին ծառայելու, նրանց զարգացման և մշակույթում որոշակի ներդրում ունենալու հանգամանքը: Դճանապարհորդների մի մասը, որոնց մեջ որոշակի թիվ էին կազմում գերմանացի, ֆրանսիացի, իտալացի ազգագրագետները, ոչ միայն հետաքրքրվեցին, այլև գիտական ուսումնասիրության առարկա դարձրին այն:

Վերջապես, հայաստան թուրքերեն գրականության ուսումնասիրությունը հնարավորություն կընձեռնի վեր հանելու մինչ օրս բավարար չուսումնասիրված մի բնագավառ: Այն է՝ հայ ժողովրդի լուսավորչական դերը Օսմանյան կայսրության ժողովուրդների մշակութային կյանքում: Առանձնահատուկ ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ հայաստան թուրքերեն թարգմանական գրականության միջոցով Արևմուտքի առաջադեմ գաղափարները ներթափանցում էին ոչ միայն հայկական, այլև կայսրության բոլոր ժողովուրդների, մասնավորապես թուրքական շրջանակները՝ տարածելով հետամնաց, ռազմա-ֆեոդալական թուրքական բռնապետությունում լիբերալ-սահմանադրական, հեղափոխական գաղափարախոսության սերմերը: Հայաստան թուրքերեն գրականությունն անկասկած իր ազդեցությունն ունեցավ թուրք գրողների ու հասարակական գործիչների նոր սերնդի ձևավորման ու զարգացման վրա: Կարևորագույն հանգամանք է եղել հայկական թատերախմբերի, թուրք լուսավորիչների նրանց համագործակցելու փաստը: Վերջիններս հանդես էին գալիս հանուն Օսմանյան կայսրությունում սահմանադրական բարեփոխումների անցկացման և թուրք հասարակության մեջ աշխարհիկ, մշակութային կյանքի զարգացման:

Հայաստան թուրքերեն գրականությունն ընդգրկում է շուրջ վեց հարյուրամյակ՝ 14-րդ դարից գրեթե մինչև մեր օրերը: Այս գրականությունն ունեցել է յուրօրինակ զարգացում: Այն պայմանավորված է եղել մի կողմից՝ հայ ժողովրդի պատմական ճակատագրով, իսկ մյուս կողմից՝ բուն հայ կյանքում տեղի ունեցած քաղաքական ու սոցիալ-տնտեսական վայրուվերումներով:

Հայաստան թուրքերեն գրականությունն անցել է զարգացման երկու շրջան՝ ձեռագրական և տպագիր: Ձեռագրական շրջանն ընդգրկել է մոտ 600 տարի (14-19- դդ.): Տպագիր շրջանը գոյատևել է շուրջ 250 տարի: Այս շրջաններից յուրաքանչյուրն իր առանձնահատկություններն է ունեցել:

18 Թուրք գիտնականները երախտագիտությամբ են նշում այս հանգամանքը: Stü' Yaşar Şimşek, Ermeni Asıllı Türk Dileleri ve Bunların Çalışmalarına Genel Bir Bakış. *Araştırma Görevlisi, Kırıkkale Üniversitesi, Fen-Ede. Fak., Türk Dili ve Edebiyatı Bölümü*. YENİ TÜRKİYE 60/2014. Այս հոդվածում անդրադարձ կա պոլսահայ, ռուսաստանաբնակ և այլ հայ լեզվաբանների, բառարանագրերի ավանդին՝ Agop Dilaçar, Edvard Vladimirovič Sevortyan (*Unulqış*), Pars Tuğlacı, Kevork Pamukciyan with their works about language, linguistics, grammar, etymology and vocabulary, Lazar Zaharoviç Budagov (*Կազակի համալսարան*), Artin Hindoğlu, Sevan Nişanyan, Bedros Keresteciyan, Karekin Deveciyan, Anton Tingir, Krikor Sinapyan, Armenak Bedevyan, Bedros Zeki Garabedian, Cosimo Comidas de Carbognano.

ա. Հայատառ թուրքերեն ձեռագրական շրջանն ունեցել է հարուստ բովանդակություն և ընդգրկումների լայն շրջանակ: Այն ներառել է աշուղական գրականության հսկա մի հատված, ազգագրական բազմազան ու բազմաժանր գրականություն, Ավետարաններ, կրոնադավանաբանական, բարոյախոսական գործեր, քարոզներ, վարքագրական երկեր ու մարտիրոսությունների պատմություններ, ինչպես նաև քիմիային, բժշկությանը, թվաբանությանը, աստղագիտությանը, անասնաբուծությանը վերաբերող գիտական ձեռագրեր, գեղարվեստական, պատմական գործեր և այլն:

բ. Ի տարբերություն հայատառ թուրքերեն ձեռագրական շրջանի, հայատառ թուրքերեն տպագիր գրքի շրջանակները թեմատիկ առումով շատ ավելի ընդարձակ են: Գոյության առաջին հարյուրամյակում, քիչ բացառությամբ, հիմնականում ներկայացված են եղել կրոնա-դավանաբանական, բարոյախոսական երկեր: 1727-1840-ական թթ., ավելի քան մի ողջ հարյուրամյակ, հայատառ թուրքերեն գրականությունը հիմնականում ծառայել է կաթոլիկ միսիոներներին՝ հայերի շրջանում կաթոլիկության տարածման համար: 19-րդ դ. երկրորդ կեսից սկսվում է հայատառ թուրքերեն տպագիր գրականության զարգացման մի նոր շրջան: Այս ժամանակահատվածի համար բնորոշ է ձգտումը աշխարհիկ թեմաներին: 1850-1870-ական թթ., հայ քաղաքական կյանքի համար համեմատաբար բարենպաստ տարիներին, հայատառ թուրքերեն գրականությունը մեծապես նպաստել է հայ ժողովրդի թրքախոս հատվածի հոգևոր վերելքին, նրա ազգային-ազատագրական ոգու վերածննդին և ընդհանուր առմամբ Օսմանյան կայսրությունում հասարակական մտքի զարթոնքին: Այս շրջանի հրատարակություններում մոտ տաս ժանրային ձևեր ենք տարբերում: Այն է՝ գեղարվեստական գրականություն (ինքնուրույն և թարգմանական), պատմական, պատմա-դավանաբանական աշխատություններ, լուսավորական գրականություն, հրապարակախոսություն, փիլիսոփայական տրակտատներ, գիտական, գիտա-հանրամատչելի գրքեր, դասագրքեր, բառարաններ, օրենսգրքեր, իրավագիտական ակտեր, դավանաբանական հրատարակություններ, կենցաղային գրքեր, ամենատարբեր գովազդային գրականություն, հրատարակություններ երեսխաների համար և այլն:

Նույնիսկ արդուլիամիդյան բռնապետության դաժանագույն տարիներին, երբ խստագույնս արգելք էր դրված ազգային ինքնագիտակցության զարգացմանը նպաստող յուրաքանչյուր գրքի ու հոդվածի վրա, հայատառ թուրքերեն գրականությունը կարողացավ կատարել իր քաղաքացիական պարտքը՝ հայ ժողովրդի ազգային, մշակութային, հասարակական-քաղաքական համախմբման առաքելության առումով: Հայատառ թուրքերեն գրականության վայրէջքի շրջանը սկսվում է 19-20-րդ դարերի սահմանագծին:

Այս աշխատությունը հիմնականում կատարված է հայկական, հայատառ թուրքերեն և թուրքական աղբյուրների ուսումնասիրության հիման վրա: Այս առումով կարևոր են հայերեն և հայատառ թուրքերեն մամուլը, ձեռագիր և հատկապես տպագիր գրքերը՝ ներառյալ ժամանակագրություններ, փաստաթղթեր, օրենքներ, հասարակական, գրական ու թատերական գործիչների հուշեր: Հարստագույն բազմակողմանի աղբյուրներ են գտնվում Երևանի Մ.Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտում՝ Մատենադարանում, ուր պահպանվում են 14-19-րդ դդ. հարյուրավոր հայատառ թուրքերեն նյութեր

պարունակող ձեռագրեր, ժողովածուներ: Հայաստան թուրքերեն ձեռագրական ժառանգության մի նշանակալի մասն էլ պահվում են Երուսաղեմի, Կ.Պոլսի, Վենետիկի, Վիեննայի հայկական հոգևոր կենտրոնների և այլ հավաքածուներում: Դրանք ժամանակագրություններ են, կրոնական բնույթի բնագրեր, բժշկարաններ, աշուղական երգերի ժողովածուներ, գիտության տարբեր ճյուղերին վերաբերող ինքնուրույն և թարգմանական երկեր, որոնք ստեղծվել կամ ընդօրինակվել և նկարագրողվել են հայկական հոգևոր ու մշակութային տարբեր կենտրոններում: Հայ մատենագրության մեջ իր ուրույն տեղն ունեցող հայաստան թուրքերեն հարուստ գրականությունը մինչև օրս չի արժանացել անհրաժեշտ ուսումնասիրության:

Բազմաթիվ փաստաթղթեր, փաստեր, որոնք վերաբերվում, առչվում են հայաստան թուրքերեն գրականությանն ու նրա մշակներին, գտնվում են Երևանի Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի արխիվային ֆոնդերում, Փարիզի Նուպարյան մատենադարանում: Այս առումով մեծ հետաքրքրություն են ներկայացնում գրական, հասարակական հայտնի գործիչներ **Ա. Չոպանյանի**, **Թ. Ազատյանի**, **Հովհ. Թումանյանի**, **Ս.Գավթյանի** և այլոց արխիվները:

Հայաստան թուրքերենի ուսումնասիրության համար առանձնահատուկ արժեք են ներկայացնում հայերեն և մասնավորապես հայաստան թուրքերեն պարբերական մամուլի հավաքածուները, որոնք սկսվում են 19-րդ դարի կեսերից: Արևմտահայության կյանքի տարբեր կողմերի մասին բազմազան նյութեր են պարունակում «Կ.Պոլսի սուրբ Փրկչի ազգային հիվանդանոցի», «Կավոռչի» տարեգրքերը, **Թեոդիկի** «Ամենուն տարեցույցը»¹⁹: Վերջինս հրատարակվել է հայտնի բանասեր **Թեոդորոս Լապճինյանի** (Թեոդիկ) կողմից 1907-1929 թվականներին⁹: Հայ մշակույթի, գիտության համարյա բոլոր հայտնի գործիչների համագործակցությամբ, թարգմանական հողվածներով ու նկարագրող այս տարեգրքերը բարձրորակ ու բազմակողմանի հրատարակություններ, ինքնատիպ հանրագիտարաններ են, որոնց հարստագույն նյութերը մինչև օրս չեն կորցրել իրենց արժեքը գիտական շրջաններում ևս: Կ.Պոլսում հրատարակված մամուլից զատ օգտակար են եղել նաև Թիֆլիսում, Բեյրութում, Հալեպում, Փարիզում և Բոստոնում տպագրված պարբերականները:

Շուրջ 150 տարվա պատմություն ունեցող հայաստան թուրքերեն մամուլը հայ պարբերական մամուլի մի անքակտելի մասն է կազմում: Միայն 1850-1890-ական թթ. Կ.Պոլսում հրատարակվել են ավելի քան 100 անուն հայ պարբերականներ, որոնցից մոտ 54-ը՝ հայաստան թուրքերեն: Այս հարցին լավագույնս անդրադարձել է հայտնի բանասեր, արևմտահայ թատրոնի պատմաբան **Գառնիկ Ստեփանյանը**²⁰: «Մանգումէի Էֆթեար», «Թերճեմանը Էֆթեար», «Միւնատիյի Էրճիյաս», «Մէճմասյը Հավատիս», «Զօհալ» և այլ պարբերականներ լայն ժողովրդականություն են վայելել, հրատարակվել տա-

19 Թեոդիկի «Ամենուն տարեցույցը» 1907թ. սկսվել է հրատարակվել Կ. Պոլսում, 1924-29 թվականներինը՝ Փարիզում, 1926 թվականը՝ Վենետիկում: 1912թ. Ստամբուլում Սուրբ Փրկչի, Ազգային Հիանդանոցի Տարեցույցների 1900-1910թթ. տարեգրքերը ցանկերով հանդերձ, փոքրադիր տարբերակով հրատարակվել են պոլսահայ գիտնական Արսեն Եսարմանի կողմից:

20 Գ. Ստեփանյան, Հայաստան թուրքերենի հայ մամուլը. («Հայ պարբերական մամուլի պատմությունից» հ.1, Երևան, 1963): Տես նաև՝ Ժիրայր Դանիելեան, բանասիրութեան բաիղներուն մեջ, Երևան, 2011, էջ21-87, և նույն գրքի մի քանի այլ հետաքրքիր հողվածներ:

րիներ շարունակ մեծ տպաքանակով, ունեցել բաժանորդներ և բազմաթիվ թղթակիցներ տարբեր գավառներում, արտասահմանում, կարդացվել տարբեր ազգերի կողմից: Այդ թերթերից օրինակ «Մանգումէի Էֆքեար»-ը հրատարակվել է 1866-96, 1901-1909, 1912-1917 թվականներին (շուրջ 40 տարի): Ավելի քան 30 տարի հայատառ թուրքերեն հրատարակվելուց հետո, արտոնատեր-խմբագիր **Կարապետ Փանոսյանի** հիվանդության պատճառով օրաթերթը թողնելուց հետո՝ 1901-1917 թթ. հիմնականում հայերենի է վերափոխվել, շարունակելով տպագրել նաև հայատառ թուրքերեն հոդվածներ: Այն եղել է ազգային, քաղաքական, գրական և տնտեսական օրաթերթ: Բաժանորդագրությունը կատարվել է Կ.Պոլսում, գավառում և արտասահմանում: Նման հայատառ թուրքերեն պարբերականներն իրենցից անհատում աղբյուր են ներկայացնում Օսմանյան կայսրության կյանքի բոլոր կողմերի ուսումնասիրության համար՝ սոցիալ-տնտեսական, քաղաքական վիճակի, կայսրության տիրապետության տակ գտնվող ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների և այլն: Հայատառ թուրքերեն պարբերական մամուլը ներկայացրել է արևմտահայերի բազմադեմ կյանքի ամենօրյա հայելին: Թերթն անդրադարձել է Ստամբուլին հուզող գրեթե բոլոր հարցերին՝ մշակութային ու ազգային խնդիրներից մինչև քաղաքի սանիտարական վիճակի, կոմունալ հարմարությունների, արևելյան ընդհանուր հետամնացության արտահայտություններին, որոնք վարակիչ հիվանդությունների պատճառ կարող էին հանդիսանալ: Բննադատվել է մայրաքաղաքի երիտասարդության մեջ տարածված մի շարք ախտերը՝ խաղամոլությունը, կնամոլությունը, պճնամոլությունը, պորտաբույծ կյանքը: Երիտասարդների ապագայի հարցերով լրջորեն մտահոգ թերթը տպագրել է բազմաթիվ հոդվածներ կրթության, երիտասարդների ջանքերով կազմակերպած մշակութային միջոցառումների, թատերական ներկայացումների, ընթերցարանների մասին: Թերթի կարծիքով հանրօգուտ աշխատանքով զբաղված հայ երիտասարդները նպատակահարմար էր, որ զինվորական տուրք վճարելով ազատվեին ծառայությունից և լուսավորական աշխատանք կատարեին սեփական ժողովրդի շրջանում: Գավառին նվիրված հոդվածները ճանապարհորդի, թղթակցի տպավորությունների հետ միասին ընդարձակ տեղեկություններ են տվել այդ գավառների բնության, պատմական հուշարձանների, ազգագրական, ազգային, կրոնական ավանդույթների, սոցիալ տնտեսական վիճակի, գավառներում հայ և մյուս բնակիչների կրած հալածանքների մասին: Գավառական տարբեր կենտրոններից (Մուշ, Վան, Թոքատ, Պարտիզակ, Հաճըն և այլն) ստացված նամակների տպագրությունը օրաթերթերում բացահայտել է տիրող կամայականությունների, թալանի մասին, սարսափի մթնոլորտը, փաստել կատարյալ անիշխանությունը, օրինականության չգոյությունը:

Վերոհիշյալ պարբերականները հրատարակվում էին ժամանակի ֆրանսիական պարբերականների նմանությամբ: «Արտաքին կյանք», «Ներքին կյանք», «Ազգային», «Առևտրական», «Նորություններ», «Դպրոցական», «Կրոնական», «Գրքեր», «Թատրոն», «Լուրեր գավառից» «Հայտարարություններ» և այլ վերնագրերի ներքո տպագրվել են նյութեր, որոնք բազմաթիվ ընթերցողների համար տեղեկատվության միակ աղբյուր են հանդիսացել: Եվրոպական պարբերականներից թարգմանվել են բազմաթիվ օտար տերությունների պատմության, ազգագրության մասին հոդվածներ, պատմական

ղեմքերի, ժամանակակից իրավիճակի, մշակույթի, քաղաքական առանձին ղեմքերի, այդ երկրներում գիտության, բանակի, անգամ բյուջեի, քաղաքական ու տնտեսական կյանքի վերաբերյալ նյութեր:

Հայաստան թուրքերեն թերթերից շատերը ֆրանսիական պարբերականների օրինակով ունեցել են նաև թերթոնների բաժին, ուր շարունակաբար, օրը օրին տպագրել են հիմնականում ֆրանսիական հայտնի վեպեր, երբեմն էլ հայ ու նույնիսկ թուրք հեղինակների գործեր: Այս ամենի շնորհիվ հայաստան թուրքերեն պարբերականները բազմաթիվ բաժանորդներ են ունեցել ոչ միայն խոշոր քաղաքներում, այլև ողջ երկրով մեկ, և ոչ միայն հայերի շրջանում: Սովորական երևույթ էր, երբ այդ թերթերը, դրանցում տպագրված հետաքրքիր հոդվածները կարդացվել ու քննարկվել են թեյարաններում և սրճարաններում: Հայաստան թուրքերեն որոշ պարբերականների հեղինակությունն այնքան մեծ է եղել, որ մյուս ազգերի առաջադեմ մտավորականությունը, մասնավորապես թուրքերը ոչ միայն համագործակցել են դրանց, այլև սովորել են հայկական այբուբենը և կարդացել այդ թերթերը²¹:

Հայաստան թուրքերեն մամուլը միատարր չի եղել: Այն արտահայտել է հասարակության տարբեր խավերի գաղափարները, ներկայացրել քաղաքական, կրոնական տարբեր հոսանքներ: Թերթերի անունների կողքին կարելի է կարդալ այդ թերթերի բնույթը որոշող բառեր՝ քաղաքական, ազգային, լիբերալ, պաշտոնաթերթ, բանասիրական, գրական, քննադատական, գիտական, ուսումնական, առևտրային, տնտեսական, հասարակական, տեխնիկական, մանկական, մշակութային, երգիծական, պատկերազարդ և այլն, և այլն: Երբեմն պարբերականներն ունեցել են բնաբաններ: Այսպես օրինակ՝ «Նեվա կամ Սէտայի Էրմենեան» (Չայն կամ ձայն Հայկական. Կ.Պոլիս, 1910.) շաբաթաթերթի բնաբանն էր՝ «Հայ ազգային ձայնը թուրք շրջանակաց լսելի ընել տալու ծրագրով»: Խմբագիրն էր թուրքագետ-լեզվաբան, օսմաներեն բազմաթիվ դասագրքերի (հայաստան թուրքերեն և օսմաներեն) հեղինակ **Միհրան Աբիկյանը** (1855-1938):

Ի թիվս հայաստան թուրքերեն հրատարակվող մամուլի, հայերեն բազմաթիվ պարբերականներ ունեցել են հայաստան թուրքերեն ընդարձակ բաժիններ՝ իրենց թուրքախոս ընթերցողների համար: Պարբերականների մի մասը եղել են երկլեզու, եռալեզու... Նման պարբերականների թվին են պատկանում **Ն.Իփեկյանի** «Թռչնիկ», **Հ.Վարդանյանի** (Հովսեփ Փաշա) «Մամուլ», **Մ.Այվաթյանի** «Արարատ», **Հ.Սվաճյանի** «Մեղու», **Հ.Պարոնյանի** «Թատրոն» և այլն: Հայ (հայերեն և հայաստան թուրքերեն) պարբերական մամուլն անհատում աղբյուր է հանդիսանում Օսմանյան կայսրության ժողովուրդների կյանքի տարբեր շրջանների, մասնավորապես արևմտահայ իրականության բազմակողմանի ուսումնասիրության համար: Կարևոր է **Թեոդիկի**, Տիպ և Տառ-ը (Կ.Պոլիս, 1912): Այսուհանդերձ մինչ օրս մասնագետների կողմից այն չի արժանացել անհրաժեշտ ուսումնասիրության:

Հայաստան թուրքերեն գրականության ուսումնասիրությունը ենթադրում է նրան մաս կազմող բոլոր ճյուղերի համակողմանի աշխատասիրությունը: Տպագիր գրքերի և պար-

21 Թուրք ընթերցողները սովորելով հայկական տառերը, ազատորեն կարդում էին «Մանգումեի Էֆքետար»-ի տիպի մամուլը,-գրում է թուրք գիտնական Մեթին Անդը Թանգիմաթի շրջանի թուրք քատրոնին նվիրված իր սենագրության մեջ. (Metin And. Tanzimat ve Istibdat döneminde Türk Tiyatrosu 1839-1908. Ankara 1972. S.36. Այսուհետև տես՝ M. And. Tanzimat...)

քերական մամուլի մատենագիտական մեր կազմած ցուցակների առաջին տպագրությունը եղել է դեռևս 1985 և 1987 թվականներին Հայաստանի Գիտությունների Ակադեմիայի հրատարակչության կողմից: Տպագիր գրքերի մատենագիտության համար հիմք են ծառայել ոչ միայն հայ գրքերի տարբեր շրջանների մատենագիտությունները, ժամանակի մամուլը, այլև աշխարհի տարբեր քաղաքներում հայկական հրատարակչական տների, տպարանների, գրավաճառանոցների ցուցակները, քանգարանային, արխիվային նյութեր, հայկական հոգևոր կենտրոնների, Մխիթարյան միաբանության, հայ և օտար բողոքական հրատարակչությունները և այլն:

Հայատառ թուրքերեն մամուլի ու գրահրատարակչության գնահատման ժամանակ չափազանց կարևոր ենք համարել խորհրդային շրջանի հայտնի արևելագետներ, ս. Պետերբուրգի համալսարանի պրոֆեսորներ **Անատոլի Ժելտյակովի** և նույն՝ ս. Պետերբուրգի Արևելագիտության ինստիտուտի նախկին տնօրեն **Յուրի Պետրոսյանի** Օսմանյան կայսրությունում տպագրությանը և հրատարակախոսության ուսումնասիրության ու կայսրության հասարակական քաղաքական կյանքում դրանց ունեցած դերին, լուսավորական շարժման պատմությանը նվիրված աշխատությունները: Հայատառ թուրքերեն գրականության լեզվական առանձնահատկություններին է անդրադարձել մեծ լեզվաբան **Հրաչյա Աճառյանն** իր հայտնի «Համեմատական քերականության» մեջ:

Համեմատաբար ավելի ուսումնասիրված բնագավառ է աշուղների հայատառ թուրքերեն ստեղծագործությունները՝ ամբարված ձեռագիր ժողովածուներում և տպագիր երգարաններում: Դրանց անդրադարձել են գրականագետներ, ազգագրագետներ, հրատարակել մի որոշ մասը, դրանց առանձին հեղինակների մասին գրվել են մենագրություններ, հոդվածներ: Այդ ժառանգության մշակներից են եղել **Մ.Թաղիադյանը, Ղ.Ալիշանը, Մ.Էմինը, Ստ.Պալասանյանը, Հ.Գաթրճյանը, Գ.Զարպիհանալյանը, Մ.Աբեղյանը, Ա.Չոպանյանը, Ստ.Մալխասյանը, Լ.Մեսրոպը, Հ.Պերպերյանը, Գ.Թարվերդյանը, Գ.Լևոնյանը, Ս.Մնացականյանը, Հ.Սահակյանը, Շ.Գրիգորյանը, Ա.Շահսուվարյանը** և ուրիշներ: Օտար ուսումնասիրողներից հայատառ թուրքերեն աշուղական գրականությանը զբաղվել են գերմանացիներ **Էննո Լիտոմանը, Օտտո Շպիսը**, թուրք գիտնական **Ֆուադ Քյուլիբուլուն**, վերջին տասնամյակում՝ **Թուրգուք Քուրը, Սաբրի Քոզը** և ուրիշներ: Պոլսահայ բանասեր **Գևորգ Բամպուքճյանի** Կ.Պոլսի պատրիարքներ **Հովհաննես Կոլոտի, Հակոբ Նալյանի, Զաքարիա Կաղզվանցու, Ներսես Վարժապետյանի**, ինչպես նաև արևմտահայ անվանի մտավորական **Հովհաննես Տերոյենցի** գործունեություններին նվիրված ուսումնասիրություններում հետաքրքիր նյութեր ենք գտնում հայատառ թուրքերեն տպագիր գրականության սկզբնական շրջանի, նրա տարածման շարժառիթների մասին: Գևորգ Բամպուքճյանի պոլսահայ տպագրությանը նվիրված մատենագիտական աշխատանքներում միշտ ներկա է նաև հայատառ թուրքերեն տպագիր գիրքը: Հայատառ թուրքերեն ձեռագրերին և տպագիր գրքերին անդրադարձած, այն նաև թուրք գիտական շրջանակներին հասու դարձրած Կ.Պոլսի պատրիարքարանի նախկին ղիվանապետի ու գրադարանավարի ավանդը հայատառ թուրքերեն գրականության ուսումնասիրության ասպարեզում նշանակալի է: Կ.Պոլսի «Արաս» երկլեզու հրատարակչությունը հետմահու, 2002-2003թթ. թուրքերենով լույս է ընծայել Գևորգ Բամպուքճյանի գործերի քառահատորյակը:

Վերջին հիսնամյակում, հատկապես արտերկրում, առանձին հեղինակների և հայրենակցական միությունների կողմից հրատարակվել են Օսմանյան կայսրության հայաշատ գավառներին նվիրված մի շարք աշխատություններ: Պատմական, աշխարհագրական, սոցիալ-տնտեսական նկարագրություններից բացի այս գրքերի մի մասը հարուստ փաստական նյութ է պարունակում տվյալ գավառներում միսիոներական տարբեր խմբերի ներթափանցման ու գործունեության, կառավարության, կաթոլիկ ու բողոքական հայ համայնքների, հայ առաքելական եկեղեցու հետ նրանց փոխհարաբերությունների, մշակութային, ուսումնական, հրատարակչական կյանքի վերաբերյալ: Այս գրքերում կան հայերեն ու հայաստան թուրքերեն բազմաթիվ փաստաթղթեր, գրական հուշարձաններ, ազգագրական և լուսանկարչական հարուստ նյութ: Հայաստան թուրքերենի հետ առնչվող նյութեր են պարունակում հիմնականում թրքախոս գավառներին նվիրված հրատարակությունները: Այդպիսիներից են Արաբկիրին, Եվդոկիային, Այնթապին, Սեբաստիային, Ադանային, Խարբերդին, Կեսարիային, Ստանոզին, Երզնկային, Չեյթունին նվիրված գրքերը:

Հայաստան թուրքերեն գրականության մասին հանդիպում ենք թուրքական թատրոնի պատմաբանների աշխատություններում, հուշերում, հոդվածներում: Այն է՝ **Ահմեդ Ռեֆիկի, Բուրհան Արփադի, Բահա Դուրդերի, Վասֆի Ռզա Չոբուի, Ահմեդ Ֆեհիմ բեյի, Մուհսին Էրթոզուլի, Մեթին Անդի**, ինչպես նաև թուրք թատրոնի ուսումնասիրողների, իտալացի թատերագետ **Ադուֆո Թալասսոյի** գործերում:

Համիդյան գահակալության շրջանում, երբ արգելված էին հայերեն ներկայացումները, թատրոնի լեզուն երկար ժամանակ եղել է հայաստան թուրքերենը: Հայ թատերախմբերը, որոնք իրականացնում էին նաև թուրքերեն ներկայացումներ՝ առատորեն օգտագործում էին հայաստան թուրքերենը: Թուրքերեն ներկայացումների տեքստերը, դերերը՝ հայաստան թուրքերեն էին: Հայաստան թուրքերենով են սովորել իրենց դերերը նաև առաջին թուրք դերասանները, որոնք խաղացել են հայկական թատերախմբերում: Այս թատրոնների համար թուրք լուսավորիչների կողմից գրված կամ թարգմանած, փոխադրած, ադապտացված պիեսները եղել են հայաստան թուրքերենով: Այս մասին հիշատակում է նաև թուրք թատերագետ **Մեթին Անդը** և իր ուսումնասիրության մեջ բերում հայկական թատերախմբերի թուրքերենով խաղացված (հայաստան թուրքերենով գրված) 366 պիեսների մի ցանկ: Հայաստան թուրքերենով են եղել **Տիգրան Զուխանյանի** երեք օպերետների լիբրետոտոները: Դրանք մեծ հաջողությամբ օգտագործվել են հանրապետական շրջանի թուրք թատերախմբերի կողմից իրենց գործունեության սկզբնական շրջանում: Այս մասին ավելի ընդարձակ կարելի է կարդալ թատրոնին նվիրված գլխում:

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին, հատկապես առաջին համաշխարհային պատերազմի տարիներին նվազել էր հայաստան թուրքերեն կարդացողների թիվը՝ հետևաբար նաև տպագրվող գրքերի, մամուլի թիվը: Հայաստան թուրքերենն իր առաքելությունը հիմնականում կատարել էր:

20-րդ դարում եղեռնից մազապուրծ աշխարհասփյուռ հայ ժողովրդի թուրքախոս հայերի վերջին սերունդների համար հրատարակվել, թարգմանվել են հիմնականում քառոզյական բնույթի գրքույկներ:

Գլուխ Ա

Հայատառ թուրքերեն գրականության ձևավորման քաղաքական-սոցիալ-տնտեսական և մշակութային նախադրյալները

15-18-րդ դարերում Օսմանյան կայսրությունում արևմտահայությունը սոցիալական ու ֆիզիկական անասելի հետապնդումների և բռնի ուժացման է ենթարկվել: Արդյունքում եղել է հայերի արտահոսք դեպի Ղրիմ, Լեհաստան, Ռումինիա, Հունգարիա, Ֆրանսիա և այլ երկրներ:

Թուրքիայի, Պարսկաստանի հպատակության տակ գտնվող քրիստոնյա ժողովուրդների գլխին դամոկլյան սրի նման միշտ էլ կախված է եղել ֆիզիկական ոչնչացման վտանգը: **Մեհմեդ 3-րդ** սուլթանը (1595-1603) առանց մի լուրջ պատճառի հրամայեց ոչնչացնել 700 քրիստոնյա²²: Հայտնի է, որ սուլթան **Սելիմ Առաջինի** (1512-1520) հրամանով սպանվել են 40 000 շիիներ՝ հիմնականում քրդեր: Ձանալով իրականացնել իր «մեկ պետություն, մեկ ժողովուրդ, մեկ կրոն» գաղափարը նա պատրաստվել էր բնաջնջել նաև կայսրության քրիստոնյաներին: Կրոնական առաջնորդին՝ շեյխ-ուլ-իսլամին հաջողվում է փոխել այդ որոշումը, համոզելով սուլթանին, որ Օսմանյան կայսրության համար շատ ավելի օգտակար կլինեին նրանցից յուրաքանչյուրից շնչահարկ վերցնելը²³:

Որպեսզի մահմեդականը քրիստոնյա սպաներ՝ նրան ոչ մի պատճառ պետք չէր: Բռնի կրոնափոխության ենթարկված որոշ թուրքաշատ վայրերում այն առերես էր: Մահմեդականացած քրիստոնյաները երկու անուն ունեին, թուրքական և իրենց իսկականը: Տանն, ընտանիքներում իրենց լեզվով էին խոսում, իսկ դրսում՝ միայն թուրքերեն:

Մահմեդականներն անասհմանափակ իրավունքներ ու առավելություններ ունեին «անհավատների» նկատմամբ: Օսմանյան կայսրությունում ապրող հայերի համար ահավոր սպառնալիք էր բռնի մահմեդականացումը, մանկահավաքը: Հրաժարվելու դեպքում նրանք անասելի տանջանքների էին ենթարկվում²⁴:

Հայկական բնակչության վրա դրված էին շուրջ 100 տեսակ հարկեր, որոնք հավաքվում էին ամենադաժան ձևերով: Եթե որևէ մեկն ուներ տաս որդի, նրանց բոլորից էլ հարկ էր գանձվում՝ նույնիսկ եթե նրանցից որևէ մեկը գնար պանդխտության: Ամենուր ավագակներ էին, ամենուր թալան, կոտորած ու բռնություն էր, գրում է **Սիմեոն Լեհացին**²⁵:

Թուրքական ֆեոդալները հանդուրժում էին քրիստոնյաներին և հրեաներին լոկ այն բանի համար, որ նրանցից անհամեմատ մեծ օգուտ ունեին քան իրենց հավատակիցներից: Նրանք թույլ էին տալիս ապրել ճիշտ այնպես, ինչպես դա արվում էր ոչխարների

22 Գրիգոր Գարանաղյի. Ժամանակագրություն, Երուսաղեմ, 1915, էջ 10 (Այսուհետև տես Գ.Գարանաղյի. Ժամանակագրություն...):

23 Լեո. Հայոց պատմություն, Երևան, 1946, հ.3, էջ 175.

24 Գրիգոր Գարանաղյի. Ժամանակագրություն... էջ 15.

25 Սիմեոն Լեհացի. Ուղեգրություն, Վիեննա, 1936, էջ 153-154.

ու մեղուների համար՝ նրանց կաթի և մեղրի դիմաց, - գրում է 17-րդ դարի ֆրանսիացի հեղինակ **Միշել Լը Ֆեբրը**²⁶:

Բազմաթիվ ուսումնասիրողներ են անդրադարձել Օսմանյան կայսրության հպատակության տակ գտնվող ոչ թուրք ազգերի իրավագույր վիճակին, թուրքացման, իսլամացման, նրանց դեմ ուղղված տարբեր հալածանքներին: Այս առումով հրաշալի աղբյուր է հանդիսանում *հսկոքիկյան* ասորի, Խարբերդի ասորաց եկեղեցու քահանա Եղիա Խարբերդցու «Պատմություն Եղիա քահանայի» թողած հիշատակարանը ԺՁ դարի կեսից մինչև ԺԻ դարի կեսը Օսմանյան կայսրության քրիստոնյա հպատակների անտանելի վիճակի մասին²⁷: Բազմաթիվ աղբյուրներ կան քրիստոնեական եկեղեցիներն ավերելու, թալանելու, մզկիթների վերածելու կամ մի ժողովրդից վերցնելով մյուսին հանձնելու մասին: Երբեմն, երբ մզկիթների շինարարության համար քրիստոնյաներից գանձվող գումարները չեն բավարարել՝ հրաման է արձակվել քրիստոնեական եկեղեցիների ավերման մասին: Համայնքների առաջնորդները եթե հասցրել են, ապա լրացուցիչ գումարների շնորհիվ երբեմն կարողացել են փրկել այս կամ այն եկեղեցին ավերումից, կամ՝ շարունակել դրանց վերակառուցումները: Երբեմն եկեղեցիները քանդվել են միայն այն պարզ պատճառով, որ իբր թե մի վայրում երկու եկեղեցուց ավելին ունենալն արգելված է եղել:

Մի քիչ այլ է եղել հայերի վիճակը Կ.Պոլսում, ուր համեմատաբար ավելի ազատ են զգացել: Այստեղ նրանք անհամեմատ քիչ են ենթարկվել ֆիզիկական ոչնչացման և տեղահանությունների: Այս հանգամանքի շնորհիվ Կ.Պոլիսը դեպի իրեն է գրավել կրոնական ու մշակութային բազմաթիվ գործիչների ոչ միայն Արևմտյան, այլ նաև Արևելյան Հայաստանից:

Կ.Պոլիսը համախմբել է բազմաթիվ հանրահայտ հայերի, որոնք իրենց գործունեությամբ նշանակալի ավանդ են ունեցել Օսմանյան կայսրության գրականության, մշակույթի, գիտության, առևտրի և կյանքի այլ բնագավառների զարգացման մեջ:

1453 թվականի մայիսին սուլթան **Մեհմեդ Ֆաթիհ** (նվաճող) **2-րդը** գրավեց Կոստանդնուպոլիսը: Իր նոր մայրաքաղաքի վերաբնակեցման նպատակով սուլթանը բազմաթիվ հայերի տեղահանեց ու բերեց Կ.Պոլիս:

15-16րդ. պոլսահայ գաղութի կազմավորման շրջանն է համարվում:

Չմոռանանք, որ Կոստանդնուպոլսում դեռևս բյուզանդական տիրապետության շրջանում գոյություն է ունեցել հայկական փոքրաթիվ համայնք²⁸: Սուլթանի նպատակն էր ոչ հունական խավի՝ հայերի միջոցով մայրաքաղաքում բյուզանդական հոծ բնակչությանը հակակշիռ ստեղծել:

26 Michel Le Febvre. *Estat présent de la Turquie*. Paris 1675, p.217 (Տես՝ Հայ ժողովրդի պատմություն, հ. 4, էջ 233).

27 Իրականում սա դեպի Կ.Պոլիս նրա բողոքի ճանապարհորդության ընթացքում ողորմություն հավաքելու համար հայերեն կոնդակ , կամ նամակն է, որի ընդարձակ օրինակը չի պահպանվել: Հրաչյա Աճառյանը հրատարակել է հավելելով անվանացանկ և օտար բառերի ցանկ 1908-09թթ. «Արարատ» ամսագրի երեք համարներում՝ 54 էջ ծավալով (Ս.Էջմիածին, Մայր Աթոռի տպարան): Տես նաև՝ «Histoire Père Elie de Kharpout», trad. K.J.Basmadjian, 1911, «Revue de l’Orient Chrétien», 337-379, 55-67թ.

28 Հ.Սիրունի, Պոլիս և իր դերը, 4h. Բեյրութ, 1965-87թթ.

Կ. Պոլսի գրավումից հետո սուլթանական հատուկ հրովարտակով հունական համայնքի (rum milleti) պատրիարք էր նշանակել **Կենարիոսը**: Հունական համայնքը միավորում էր ոչ միայն հույներին, այլև ուղղափառ եկեղեցուն պատկանող բոլոր մյուս հպատակներին ևս՝ բուլղարներին, սերբերին, մոլդավներին, վալախներին և ընդհանրապես կայսրության ամբողջ քրիստոնյա բնակչությունը:

Մեհմեդ 2-րդը վտանգավոր և անհմաստ համարեց քրիստոնյա բնակչության նման մեծ ուժի, իշխանության կենտրոնացումը մեկ անձի՝ այն է հունական պատրիարքի ձեռքում:

Մայրաքաղաքի գրավումից մի քանի ամիս անց, աշնանը, Կ.Պոլիս հասան հայ վերաբնակների առաջին խմբերը: Սուլթան Մեհմեդ Ֆաթիհ 2-րդի և նրան հաջորդած տիրակալների օրոք Կ.Պոլիս վերաբնակեցրին հայեր՝ տեղահանված Անկարայից, Կաֆայից, Եվրոկիայից, Ակնից, Կիլիկիայից, Արաբկիրից, Բաբերդից, Տրապիզոնից և բոլոր այն տարածքներից, որ գրավվել էին թուրքերի կողմից:

Դեռևս Մեհմեդ 2-րդի օրոք հայերը օգտագործվել են սուլթանի ձեռնարկած շինարարական աշխատանքներում, ինչպես օրինակ Ռումելի Հիսարի ամրոցի կառուցման ընթացքում²⁹: Առանձնապես մեծ թվով հայեր բերվեցին Կ.Պոլիս Ջալալիների ապստամբության շրջանում 16-17 դդ. և նրանց թիվը հասավ ավելի քան 50 000-ի:

Կ.Պոլսի գրավումից հետո արևմտահայության կյանքում ամենամեծ իրողությունը սուլթան Մեհմեդ 2-րդի հրովարտակով 1461 թվականին Կ.Պոլսում հայկական պատրիարքական Աթոռի հաստատումն էր: 1478 թվականին Բուրսայից Պոլիս բերված Սուլթանի բարեկամ **Հովակիմ** եպիսկոպոսը դարձավ Թուրքիայի հայոց հոգևոր առջնորդը: Նրա հոգևոր, քաղաքական իշխանությունը տարածվում էր ոչ միայն հայ լուսավորչական հայերի, այլև վրացի, աղվան, ասորի, դպտի, հաբեշ միաբնակ ուղղափառների վրա: Այս և հունական համայնքի բաժանումը հիմնվում էր պարզապես դավանանքի տարբերության վրա, առանց հաշվի առնելու ազգային առանձնահատկությունները, քանզի Դուրանը ժողովուրդներին բաժանում է ոչ թե ցեղային, այլ ըստ կրոնական առանձնահատկությունների: Պոլսի գրավումից 40 տարի անց հաստատվեց նաև հրեական համայնքը, որի կրոնական առաջնորդը՝ խախամ բաշին, բոլոր տեսակետներից հավասարազոր իրավունքներ ուներ վերոհիշյալ հույն և հայ պատրիարքների հետ: Այս մասին են վկայում թուրք պատմաբաններ, ինչպես **Ահմեդ Ռեֆիկը**, **Ա.Ուրիչինին**³⁰:

Կրոնական այս երեք համայնքների համակարգն ավանդաբար մնաց հետագա դարերի ընթացքում՝ սուլթանների կողմից փորձելով ծառայեցնել իրենց նվաճողական նպատակներին և մյուս կողմից՝ օտար պետությունների ազդեցություններից հեռու, հլու հնազանդ պահելու համար:

Ուրիչ ի՞նչ նպատակ էր հետապնդում հայոց պատրիարքարանի հաստատումը Կ.Պոլսում: Ինչպես Արևմտյան, այնպես էլ Արևելյան Հայաստանն ուներ մեկ ընդհանուր հոգևոր հովիվ՝ Ամենայն Հայոց կաթողիկոսը, որի աթոռանիստը դարձել էր ս.Էջմիածի-

29 Այս մասին է վկայում հայկական ծագում ունեցող թուրք պատմաբան Չարքը: Տես՝ Rh.Y.G.Çark, Türk Devleti Hizmetinde Ermeniler, 1453-1953, İst., 1953, s.4.

30 Սիրունի Հ. (Ճոլոյան). Պոլիս և իր դերը. 1965, Բեյրութ, էջ 204. Տես նաև А. Убичини и П. де Куртейль, Современное состояние Османской империи, С.-Петербург, 1877, стр. 164.

նը, ուր 1441 թվականին Հայրապետական Աթոռը տեղափոխվել էր Կիլիկիայից: Քանի որ Էջմիածինը գտնվում էր Պարսկաստանի ազդեցության ներքո, ուստի Կ.Պոլսում հիմնելով Պատրիարքական Աթոռ, որը ենթարկվում էր սուլթանին՝ վերջինիս պիտի ենթարկեր նաև հայ ժողովրդի թուրքական տիրապետության տակ գտնվող հայությանը: Պատրիարքը ոչ միայն հոգևոր առաջնորդ էր, այլև հայերի ներկայացուցիչը կայսրությունում: Պատրիարքը պատասխանատու էր Բ.Դռան մոտ (Բարձր Դուռ, կառավարություն), պալատում, հայերի համար: Կ.Պոլսի հայ պատրիարքարանն ուներ որոշակի իրավունքներ և պարտականություններ սուլթանական պալատի նկատմամբ: 1764 թ. հունիսի 3-ին հայոց պատրիարք **Գրիգոր Պասաճյան**ին տրված «բերաթ»-ի (հրովարտակ) համաձայն, որն իր տեսակի մեջ ամենաընդարձակներից էր, ասվում էր. «Կ.Պոլսի պատրիարքն իրավունք ուներ որոշելու Անատոլիայի և Ռումելիի հայ ազգաբնակչության հոգևոր խնդիրները, ընտրելու կամ վտարելու առաջնորդներին, թեմերի ղեկավարներին: Պատրիարքին էր պատկանում ամուսնությունների, բաժանությունների և քաղաքացիական այլ գործերում որոշիչ դերը: Պատրիարքն էր կարգավորում եկեղեցապատկան հողերի, կտակների խնամակալության խնդիրները: Նա ուղարկում էր նվիրակներ՝ հավաքելու եկեղեցական տուրքերը, նվերները: Գավառներից ստացված բողոքները հանձնում էր սուլթանին կամ նրա գրասենյակին: Պատրիարքը պատժում կամ երբեմն հասնում էր նրան, որ պատժել էր տալիս «մոլորյալ հայերին», որոնք հերետիկոսության ուղին էին բռնել: Պատրիարքն էր իրավունք տալիս մայրաքաղաքում եկեղեցիներ, վանքեր կառուցելու համար, ինչպես նաև դպրոցների, նախապատրաստական դասարանների, տպարանների բացման, գրքերի հրատարակության համար»³¹:

Հայ պատրիարքները թեև օգտվում էին բազմաթիվ առավելություններից, սակայն հարկերից ու սուլթանին տրվող տուրքերից ազատված չէին:

Նշանավոր հայագետ **Ղուկաս Ինճիճյանը** փաստում է, որ սուլթանական գանձարանին տրվող նվերներն ու տուրքերը որոշված էին հրամանագրով³²:

Տուրքերից բացի պատրիարքը պարտավոր էր տարբեր առիթներով սուլթանին թանկարժեք նվերներ մատուցել³³: Քանի որ Կ.Պոլսի պատրիարքարանն արևմտահայության համար իրենից ներկայացնում էր ոչ միայն հոգևոր, այլև քաղաքական իշխանություն և տնօրինում էր նյութական մեծ կարողության, ուստի միշտ էլ սուր պայքար է մղվել պատրիարքական աթոռին տիրանալու համար: Պատահական չէ, որ երբեմն աշխարհական մեծահարուստ ամիրաները պատրիարք չէին ընտրում ու իրենք էին համարվում աթոռակալ և օգտվում էին պատրիարքին տրվող բոլոր իրավունքներից: Բնականաբար սուլթանական կառավարությունը շահագրգռված էր, որպեսզի հաճախակի փոխվեին պատրիարքները: Յուրաքանչյուր փոփոխման դեպքում կառավարությունը հոգուտ գանձարանի որոշակի գումար էր գանձում: 1600 թվականից մինչև **Հովհան-**

31 Հայ ժողովրդի պատմություն, հ. 5, Եր., 1974, էջ 302-303, ինչպես նաև Фадеева И.Л. Официальные доктрины в идеологии и политике Османской империи /Османизм -панисламитизм/ XIX-начало XXвв. М.,1985,с. 7-9.

32 Ինճիճեան Ղուկաս. Աշխարհագրութիւն չորսից մասանց աշխարհի, Վենետիկ, հ.5, էջ 117 (այսուհետև տես՝ Ինճիճեան Ղ., Աշխարհագրութիւն...):

33 Մ.Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր հ.10716, Թուրքիայի պատմություն, էջ25թ (այսուհետև տես՝ Մատենադարան, ՄՄ ձեռ. հ...):

նես Կոլոտի պատրիարք դառնալը (1715 թ.), 115 տարվա ընթացքում Պատրիարքական Աթոռ են բարձրացել 55 դեմքեր՝ գրեթե 60-70 անգամ, միջին հաշվով հազիվ 2-3 տարի պատրիարք մնալով: Ավելին, նույն անձը կարողացել է մի քանի անգամ զբաղեցնել պատրիարքական աթոռը: Այսպես օրինակ՝ **Կարապետ Կեսարացին՝ 5, Գավիթ Արևելցին՝ 4, Հովհաննես Խուլը՝ 3** և այլն³⁴:

Պատրիարքարանը որպեսզի սուլթանական գանձարանին մուծեր հարկերն ու նվերները, ստիպված էր իր հեթին տարբեր հարկեր հավաքել թուրքահպատակ հայերից: Այսպես օրինակ, յուրաքանչյուր հոգևոր առաջնորդ հոգուտ պատրիարքարանի վճարում էր 600 դուռուշ, Անկարայից՝ 200, նույնքան Թոքատից, Գիարբեքիից, Ուրֆայից, Սեբաստիայից, Տրապիզոնից, Գյումուշխանեից և այլն³⁵: Այնուամենայնիվ, չնայած բոլոր հետապնդումներին ու մեծ տուրքերին, պատրիարքարանը կարողացավ խոշոր դեր խաղալ արևմտահայերի քաղաքական ու մշակութային կյանքում, հաճախ հանդես գալով որպես հայերի միակ պաշտպանն ընդդեմ սուլթանական տերության կողմից հետևողականորեն շարունակվող կամայականությունների ու բռնությունների: Կ.Պոլսի հայ պատրիարքարանի գոյությունը վկայում էր ոչ միայն մայրաքաղաքում, այլև ողջ կայսրությունում հայ համայնքի ազդեցության մասին: Գրան մեծապես նպաստում էր հայ համայնքի տնտեսապես ակտիվացումը՝ հայերի գործունեությունը որպես առևտրականներ, արհեստավորներ, սեղանավորներ-բանկիրներ: Նրանցից ոմանք այնքան ճանաչված են եղել, որ նրանց անունով թաղեր, աղբյուրներ են անվանակոչվել, ինչպես հիշվում է 15-րդ դարի վերջում հայազգի հացագործ **Անդրեասի** անունով թաղը (Անդրեաս մահալլեսի) և այլն: Անվանի այս հայերը իրենց ներդրումն են ունեցել ողջ կայսրության տնտեսական, քաղաքական, մշակութային կյանքի վրա, որի մասին վկայություններ ենք գտնում նաև թուրքական արյուրներում:

Հայտնի է, որ 17-րդ դարից Թուրքիայի արտաքին և ներքին առևտուրը գտնվում էր հիմնականում հայերի և հույների ձեռքում: «Հայերը, -գրում է **Մուրադա Գ՝ Օհսընը**, -շատ հաճախ են իրենց նվիրում առևտրին: Հենց նրանք և ոչ թե մահմեդեկաններն են հանդիսանում հարուստ քարավանների կազմակերպիչները: Ամեն տարի հայերն ուղևորվում են Ասիայի տարբեր շրջաններ, որպեսզի տարածեն այնտեղ աշխարհի չորս կողմերի ապրանքները³⁶: Հայերն իրենց առևտուրն իրականացնում էին շափազանց ծանր պայմաններում, քանի որ «Թուրքիան լեցուն էր ավազակներով, որոնք մեծ խմբերով թափառելով ճանապարհներին՝ սպասում էին վաճառականներին: Երբ նրանք հանդիպում էին հարուստ վաճառականների, սպա թալանում էին նրանց ու շատ հաճախ՝ սպանում», - վկայում է **Ժ. Տավերնիեն**³⁷: Գեռես 18-րդ դարում հայ վաճառականների նավերը խարխախ էին գցում մի կողմից Եվրոպայի ափերին, իսկ մյուս կողմից՝ հասնում էին մինչև Հնդկաստան: **Ղուկաս Ինճիճյանը** գրում է, որ Եվրոպայում ձեռք բերված հիմնական ապրանքները՝ դրանք Ռուսաստանի մորթիներն ու մուշտակներն էին, որոնք տարեկան հսկայական շահ էին ապահովում: Գրանց փոխարեն վաճառականները տալիս էին ոչ միայն իրենց ապրանքը, այլև

34 Սիրունի, էջ 55.

35 Ինճիճեան Ղ., Աշխարհագրություն, հ.5, էջ . 117.

36 D' Ohsson M. Tableau Général de l'Empire Ottoman. Paris 1790, V.4, p.204.

37 Հայ ժողովրդի պատմություն, հ.4, էջ 291.

փոխում մարգարտի հետ: Անգլիայից ու Գերմանիայից գնում էին մահուդ, մետաղե իրեր, արհեստագործական առարկաներ: Ֆրանսիագիր հայազգի պատմաբան, դիվանագետ Մուրաջա ԴՕհսընի վկայությամբ համաշխարհային պատերազմից առաջ, Ֆրանսիայի հետ նրանց առևտուրը գերազանցում էր մյուս երկրների հետ առևտրին, որտեղից բերում էին մահուդ, ոսկի, արծաթ, ոսկեթել ու արծաթեթելեր՝ թանկարժեք հագուստեղեն կարելու համար, ժապավեններ ու նուրբ գործվածքներ, իրեր երկաթից և այլն...³⁸:

Օտար երկրների հետ առևտուրը լոկ տնտեսական բնույթ չէր կրում: Գործի բերու- մով վաճառականներին անհրաժեշտ օտար լեզուների իմացությունը, բնական խելքը և փորձը անկասկած էական դեր են խաղացել Օսմանյան կայսրությունում եվրոպական կացութաձևի ու եվրոպական մտածելակերպի, դիվանագիտության ներթափանցման գործում: Նրանք ժամանակի առաջադեմ գաղափարների կրողներն են հանդիսացել և մատչելի են դարձրել հարևան երկրների արդյունաբերության, գյուղատնտեսության, գիտության ու մշակույթի առաջընթացի ներթափանցումը կայսրություն: Այս ամենը չէր կարող իր ազդեցությունը չունենալ հետամնաց Օսմանյան կայսրության կյանքի վրա:

Եթե առևտուրը, դիվանագիտական ծառայությունը որոշ հայերի մենաշնորհն էր, ապա մնացած հայերի մեծ մասը արհեստներով էր զբաղվում: Սա պատահական հան- գամանք չի, քանի որ ինչպես նշում է բուլղար գիտնական **Ն.Թողորովը**, մինչև 18-րդ դարի վերջը «տիրապետող ժողովուրդը գտնվում էր արտադրող ուժերի ընդհանուր զարգաց- ման շրջանակներից դուրս և այս հանգամանքն իր դրոշմն է թողել Օսմանյան կայսրու- թյան ողջ սոցիալ-քաղաքական կյանքի վրա»³⁹:

Հայերը կարևոր տեղ էին զբաղեցնում արհեստների ու առևտրի մեջ: Նրանք մա- հուդագործներ էին, մետաքսագործներ, ոսկերիչներ, շղարշագործներ, դաջեգործներ, բրդագործներ, մանուֆակտուրայի մանր վաճառականներ, գուլպայագործներ, ժամա- գործներ, դերձակներ, մորթեգործներ, դարբիններ և այլն, - գրում է պոլսահայ բանա- սեր **Հարություն Մրմրյանը**⁴⁰: Յուրաքանչյուր արհեստ ներկայանում էր իր համախմբող արհեստանոցով՝ էսնաֆով: Միայն Կ.Պոլսում գործում էին 65 էսնաֆներ: Այս արհեստ- ներին պետք է ավելացնել նաև նրանց, ովքեր զբաղված էին շուկաներում, խաներում: Այն է՝ հացթուխները, զինեգործները, փորագրիչները, քաթանագործները, ջուլիակները, որոնք բուրդ, մետաքս ու գործվածք էին մշակում, գլխարկագործները, փականագործ- ները, ձևարարները: Հարկ է թվարկել նաև գրավաճառներին, գրագիրներին, վարսա- վիրներին, բաղնեպաններին, դեղագործներին, բժիշկներին, խոհարարներին, հնավա- ճառներին, կոշկակարներին, ներկարարներին, արդուկողներին, պանդկատերերին, ոսկեկարող դերձակներին, կլայեկողներին, բրուտներին և այլոց⁴¹: 19-րդ դարից հայ արհեստակցական միություններն ավելի ակտիվորեն լծվեցին ազգային ինքնավարու- թյան գործերին:

38 Ինճիճեան Ղ., Աշխարհագրութիւն, հ.5, էջ 5.

39 Тодоров Н. Балканский город XV-XIX веков. М., 1976, с. 410.

40 Մրմրեան Հ. Թուրքահայոց հին վաճառականութիւնը և վաճառականները. Կ.Պոլիս, 1910, էջ 17.

41 Պողոս Կաղզվանցի, Ժամանակագրություն, էջ 337-338 և էջ 554-555 (տես Հակոբյան Վ.Ա. «Մանր ժամանակագրություններ 13-18-րդ դդ. Եր. հ.2, 1956), ինչպես նաև Մատենադարան, ձեռ. հ. 10069, էջ 61ա: Տես նաև՝ Աբրահամյան Վ.Ա. , Արհեստները Հայաստանում, Եր, 1956, էջ 252:

Օսմանյան կայսրությունում, մասնավորապես Կ.Պոլսում մեծ հեղինակություն էին վայելում ամիրայական տոհմերը⁴², որոնք խոշոր դեր են խաղացել երկրի տնտեսական կյանքում: Դա **Տյուզյանների, Յուսուֆյանների, Տատյանների, Նորատունկյանների, Սերվերյանների, Դեզաիրյանների, Խորասանճյանների, Միրիճանյանների, Փիշմիշյանների, Արփիարյանների, Չոպանյանների, Չերազյանների, Պալյանների** և այլ ամիրայական տոհմերն էին⁴³: Երկար տարիներ ամիրաների ձեռքում էին կենտրոնացած կայսրության պալատական փողերանոցը, ոսկերչանոցը, ու վառողարանը, զինապալատը: Դեզաիրյան Սկրտիչ ամիրան երկար տարիներ զլխավորել է Կ.Պոլսի մաքսատունը, որի ղեկավարության տակ նավահանգստում աշխատել են 20 000 հայեր՝ հիմնականում գավառներից եկած: Դեզաիրյան ամիրայի շրջանից մեզ են հասել մեծ հետաքրքրություն ներկայացնող «Մաքսատան սակագների մասին» երկու արժեքավոր հայատառ թուրքերեն ձեռագրեր⁴⁴:

Նպատակ չունենալով ուսումնասիրել հայ ամիրայական տների դերը, այնուամենայնիվ հարկ է նշել, որ նրանք իրենցից ներկայացնում էին Օսմանյան կայսրությունում նոր սաղմնավորվող բուրժուազիան: Սոցիալ-քաղաքական գործունեության առումով այն արտահայտվել է ինչպես առաջադիմական, այնպես էլ որոշ բացասական տեսանկյունից:

Կ.Պոլիսը հայերի համար եղել է նաև այն քաղաքը, ուր ձգտում էին հազարավոր պանդուխտներ Արևմյան Հայաստանի գավառներից՝ հուսալով ապրուստի միջոցներ հայիայթել, խուսափել ջարդերից: 18-րդ դարում այս աղքատ, սովյալ պանդուխտների թիվը Կ.Պոլսում հասավ 100 հազարի: Նրանք գալիս էին մայրաքաղաքի հայ համայնքից տարբեր՝ իրենց սովորություններով ու ավանդույթներով, իրենց բարբառներով, բանահյուսությամբ: Արևմտահայ իրականությունում սկսել էին խորանալ դասակարգային հակասությունները: Ամիրայական իշխանությունը զլխավորում էր ազգային-հասարակական կյանքը, իսկ նրանց ղեկավարության տակ աշխատող պանդուխտները չէին կարող հավակնել անգամ ազգային գործերի մասնակցությանը: Օգտվելով որոշակի ազդեցությունից, ամիրաները մրցում էին միմյանց հետ ոչ միայն տնտեսական, այլև մշակութային գործունեության ասպարեզում⁴⁵: Վերոհիշյալ երևույթները նպաս-

42 Ամիրա (արաբական ամիր բառից) - միայն սուլթանական պալատում պաշտոնավարող (բանկիրներ, վաճառականներ, պալատական ոսկերիչներ ու ժամագործներ, ճարտարապետներ, նկարիչներ և այլն) հայերին տրվող շատ բարձր կոչում:

43 Ջարդարեան Վ. Հուշարձան. հ.1, Կ.Պոլիս, 1910: Նույն հեղինակի՝ Յիշատակարան, Կահիրե, 1939. ինչպես նաև՝ Ազատեան Թ. Ալև և ակնցիք, Կ.Պոլիս, 1943: Տես նաև՝ Մենեվիշեան Գ. Ազգաբանություն ազնվական զարմին Տյուզեանց, Վիեննա, «Հանդես ամսօրյա» 1890, էջ 209-216, 230-234. Pamukciyan K. Noradunkyan Ailesi. İst.,Tarih ve Toplum, 1988, N.49,s.40-42; Pamukciyan K. Kayserili Hassa Mimarý Ohannes Amira Serveryan İst.,Tarih ve Toplum, 1987, N.46, s.23-29; Մեր կազմած ամիրաների ցուցակը տես՝ Հ.Ստեփանյան, «Հայերի ներդրումն Օսմանյան կայսրությունում», Եր., 2011, էջ 233-239. Այսուհետև տես՝ «Հայերի ներդրումն...»

44 Սակացոյց Մաքսատանն Կ.Պոլսոյ, ՄՄ ձեռ.8015, 10 թերթ և ձեռ. 8016, 12 թերթ. Օշական Հ. Համայնապատկեր արևմտահայ գրականության, հ.1, Երուսաղեմ, 1945, էջ 174:

45 Ամիրաները բացում էին եվրոպական տիպի աշխարհիկ դպրոցներ՝ անվճար, ժամանակակից ծրագրերով ու փորձերի համար նախատեսված գիտական կաբինետ-լաբորատորիաներով: Այս դպրոցներում սովորում էին եվրոպական լեզուներ: Բացվում էին օրիորդաց վարժարաններ և մասնագիտական դպրոցներ: Մինչև 19-րդ դարի կեսերը 151 հայկական դպրոցներում սովորում էին

տեցին, որ արդեն 17-րդ դարի սկզբից Կ.Պոլիսը դառնա հայ մշակութային կենտրոններից մեկը: Պոլսահայերի մշակութային կյանքի զարգացումը հիմնականում պայմանավորված էր դպրոցների, գրահրատարակչության, գրականության, մանրանկարչության, և իհարկե ճարտարապետության զարգացմամբ:

Առաջին դպրոցները Ստամբուլում ստեղծվել էին 17-րդ դարում, սակայն երկար չէին գործել: Առաջին ամենօրյա դպրոցը, ուր 100 դպրոցականներ էին սովորում՝ հիմնվել է Կ.Պոլսի Հովհաննես Կոլոտ պատրիարքի կողմից 1719 թվականին հայկական Սկյուտար թաղում: Դպրոցում դասավանդում էր ինքը՝ պատրիարքը, մշակութային գործիչ, բանաստեղծ **Պաղտասար Գալիբը**, մատենագիր թարգմանիչ **Ղուկաս Խարբերդցին**, **Գասպար Գալի Սեբաստացին** և ուրիշներ: Այս դպրոցում են կրթվել բազմաթիվ հոգևոր ու մշակութային գործիչներ, այդ թվում նաև **Հակոբ Նալյան** պատրիարքը:

Հովհաննես Կոլոտը (1678-1741) համարվում է Կոստանդնուպոլսի գրական դպրոցի հիմնադիրը, որի շնորհիվ 18-19-րդ դարերում հայ գրականությունն անսահման հարստացավ: Հոգևոր դաստիարակությանը զուգահեռ աշակերտները բազմակողմանի կրթություն էին ստանում և փորձում իրենց ուժերը պոեզիայում, արձակում, զբաղվում էին երաժշտությամբ: Հայտնի մանկավարժ-պատրիարքը հիմնադրեց Կ.Պոլսում առաջին մատենադարանը⁴⁶: 1741 թվականին Հակոբ Նալյանը (1706-1764) համաձայն իր ուսուցչի՝ Հովհաննես Կոլոտի կտակի, նրա մահվանից հետո դարձավ Կ.Պոլսի հայ պատրիարք⁴⁷: Նույն տարին նա Սկյուտարից դպրոցը տեղափոխում է Գումգափու, որը հայտնի է դառնում որպես Մայր դպրատուն: 18-րդ դարի վերջին մեծ հեղինակություն էր վայելում Հակոբ Մժբնա հայրապետի դպրոցը, ուր իրենց կրթությունն են ստացել հայ մշակույթի մի շարք հայտնի գործիչներ: Նույն այդ շրջանում **Զաքարիա Կաղզվանցի** պատրիարքի (Կ.Պոլսի պատրիարք է եղել 1773-1781 թթ.) ջանքերի շնորհիվ մայրաքաղաքում բացվել են առաջին թաղային, ծխական վարժարանները:

Պոլսահայության հաջորդ մեծագույն ներդրումներից մեկը երկրի մշակութային կյանքում՝ դա հրատարակչական գործն է եղել:

Առաջին հայկական տպարանը Կ.Պոլսում հիմնվել է **Աբգար Թոխաթեցու (Եվրոկացի)**, մոտավորապես 1520-1572թթ.) կողմից 1567 թվականին: Հրատարակչական գործունեությունը սկսելով դեռևս 1565 թվականին Վենետիկում, նա 1567 թ. հրատարակում է «Փոքր քերականութիւն կամ այբբենարան», «Պարզատումար», «Ժամագիրք» և «Պատարագամատույց» (միասին, 1568թ.), «Մաշտոց» (1569թ.) և այլն: Հետագա-

2 000-ից ավել երեխաներ: Ունևոր ընտանիքների երեխաները սովորաբար կրթություն էին ստանում տանը կամ մասնավոր դպրոցներում, Եվրոպայում: Ամիրաները բացում էին հիվանդանոցներ, ուր աշխատում էին եվրոպական համալսարաններում մասնագիտություն ստացած հայ բժիշկները: Հասարակության հարուստ խավերը բարեգործական միություններ էին կազմում, հիմնում տպարաններ, ֆինանսավորում հրատարակություններ ու թատերական ներկայացումներ, բացում որբանոցներ, ծերանոցներ և այլն:

46 Այսօր՝ Գալաթայի (թաղամաս Ստամբուլում) Ազգային մատենադարանը:

47 Հակոբ Նալյանն առաջին անգամ Կ.Պոլսի պատրիարք է եղել 1741-1749 թվականներին: 1749-1752 թվականներին ընտրվել է Երուսաղեմի պատրիարք: Վերադառնալով Կ.Պոլիս, 1752թ. երկրորդ անգամ դարձել է պատրիարք և կառավարել մինչև իր մահը՝ 1764 թվականը: (տես՝ Գ.Բամպուրճեան, Յակոբ Նալեան Պատրիարք 1706-1764. կեանքը, գործերը և աշակերտները. Ստամբուլ, 1981.):

յում, ավելի քան մեկ հարյուրամյակ անց, **Երեմիա Չելեպի Քյոմուրճյանը** (1637-1695) 1677 թվականին հիմնում է տպարան, հրատարակում երկու գիրք: Ավելի ուշ՝ ընդհուպ մինչև 17-րդ դարի վերջը **Կ.Պոլսում** գրքեր չեն հրատարակվել: 1698 թ. հրատարակչական ասպարեզում հայտնվում են **Գրիգոր Մարզվանցին (Մերջանգաղե Գրիգոր դպիր Մարզվանցի, -1735)** և **Աստվածատուր Կոստանդնուպոլսեցին** (1670-1747): Առաջինը տիրապետել է տառեր ձուլելու, տպելու գործին: Երեմիա Չելեպի Քյոմուրճյանի կառավարներն օգտագործելով պատրաստել է նոր կաղապարներ, 1694-ին հիմնել տպարան, որն իր գոյության 40 տարիների ընթացքում հրատարակել է 11 գիրք: Աստվածատուր Դպիր Կոստանդնուպոլսեցին 1698-ին առանձնաձևով Գրիգոր Մարզվանցուց, հիմնադրել է իր տպարանը, որը կես դարյա ժամանակում հրատարակել է շուրջ 43 գրքեր: Հետագայում նրա գործը շարունակել է որդին՝ **Հովհաննեսը**, մինչև 1776 թվականը: 18-րդ դարի սկզբին **Մխիթար Մեքաստացին** (1676-1749) Վենետիկի Մխիթարյան կաթոլիկ միաբանության հիմնադիրը (1701 Կ.Պոլիս), հրատարակել է մի շարք գրքեր: 19-րդ դարի սկզբին **Կ.Պոլսի** հայ տպարանների թիվը հասնում է 25-ի:

Տպագրական գործի զարգացման մեջ մեծ ավանդ են ունեցել **Կ.Պոլս** պատրիարքներ **Հովհաննես Կոլոտ Բաղիշեցին**, **Հակոբ Նալյանը**, **Ջաքարիա Կաղզվանցի Փոքրուզյանը** (1719-1799), հայտնի գրող, մանկավարժ և հրատարակիչ **Պաղտասար Դպիրը** (1683-1768) և ուրիշներ⁴⁸:

Առանձնապես կարևոր է եղել **Արապյան** ընտանիքի 3 սերունդների շուրջ 130 ամյա գործունեության ավանդը: **Պողոս Արապյան Ապուշեխցին** (1742-1835) շարունակելով տպագրիչ հոր՝ **Հովհաննես Աստվածատրյանի** (-մոտ. 1810) գործը, մոտ 70 տարի զբաղվել է դրանով, եղել պալատական տպարանի ղեկավարը: Բացի հայկական նոր տառերից, թուրքական տպագրական մայր տառեր է ստեղծել: Վրաց **Հերակլ երկրորդ** թագավորի 1770թ. հրավերով Թիֆլիսում ձուլել է վրացական տառեր, հիմնել տպարան: Բարձր գնահատության է արժանացել սուլթան Մահմուդի կողմից, ստացել «Մամուլ» նշանը⁴⁹:

Չնայած այն հանգամանքին, որ 16-րդ դարի երկրորդ կեսին հանդես է գալիս տպագիր գիրքը, այնուամենայնիվ իր գոյությունն է շարունակում գրչության արվեստը, մանրանկարչությունը: Այն պայմանավորված էր 17-րդ դարում պոլսահայ գրականության բուռն զարգացմամբ: Թեև այդ շրջանում հիմնականում Ավետարաններ են ընդօրինակվել, այնուամենայնիվ դրանք որպես արվեստի գործեր մեծ արժեք են ներկայացնում:

16-17-րդ դարերում **Կ.Պոլսում** ստեղծագործում էին բազմաթիվ մանրանկարիչներ: Մանրանկարչության պոլսահայ դպրոցը տարբերվում էր իր գույների հյութեղությամբ, նկարի նրբագեղությամբ, իսկ ձեռագրերը գրավում էին հիմնականում նուրբ, գեղե-

48 Արապյան տպագրիչ գերդաստանի կողմից հրատարակվել մոտ 180 անուն գիրք և «Մուրհանդակ Բիզանդեան» պարբերականը 1849-50թթ.

Հրատարակիչների գործունեությանը կանոնադաշտնանք Ա գլխի 3-րդ մասում, որը նվիրված է հայատառ թուրքերեն տպագրության սկզբնավորմանը:

49 Տպագրության հարցին է նվիրված պոլսահայ բանասեր Թեոդիկի «Տիպ ու տառ» աշխատությունը (Կ.Պոլիս, 1912):

ցիկ բոլորագրով: Պոլսահայ մանրանկարչության կարևոր դեմքերից էր 17-րդ դարի առաջին կեսի բանաստեղծ, գրիչ և նկարիչ **Հակոբ Ակնեցին**: Հրաշալիորեն իմանալով Կիլիկյան ու Ղրիմի մանրանկարչական դպրոցները, միաժամանակ օգտագործելով եվրոպական արվեստի օրինակները, Ակնեցին ստեղծել է մանրանկարների մի ինքնատիպ շարք, որը հետագայում կրկնօրինակվել է ոչ միայն Կ.Պոլսում, այլև մյուս գաղութներում: 18-րդ դարում պոլսահայ մշակույթում մանրանկարչությունն իր տեղը զիջում է գեղանկարչությանը, որն իր ծաղկման շրջանն էր թևակոխել: Եթե մինչև 18-րդ դարը պալատական նկարիչների պաշտոնը պարսիկ վարպետների մենաշնորհն էր, ապա այդ հարյուրամյակից սկսած այն անցնում է հայագի **Մանասների** ընտանիքին: Նրանցից մեկը՝ **Ռաֆայել Մանասն** (1715-1780) իր ուսումը 1730-ական թթ. ստացել էր Իտալիայում: Պոլսահայ պատմաբան Մուրադչա Ռ.Օհսընը (Իգնատիոս Թոսունյան, 1740-1807) գրում է, որ «նա եղել է իր արվեստակից եղբայրներից ավելի տաղանդավոր, ուստի և համարվել է իր դարի Ռաֆայելը»⁵⁰: Չպետք է նրան շփոթել 1769թ. Հակոբ Մծբնա հայրապետի դպրատունն ավարտած նույանուն նկարչի հետ:

18-րդ դարի սկզբից հայերն ունեցել են իրենց պալատական ճարտարապետները⁵¹: Պոլսահայ ճարտարապետության մեջ նշանակալի տեղ է գրավում ամիրաներ Պալյանների, Սերվերյանների ընտանիքները, որոնց գործունեությանը նվիրված են մի շարք մենագրություններ⁵²:

Պոլսահայ մշակույթի զարթոնքն, անկասկած, մեծապես պայմանավորված է եղել գրականության զարգացմամբ: Այս ասպարեզում նշանակալի դեր են խաղացել **Գրիգոր Գարանաղյին** (1576-1643), Երեմիա Չելեպի Զյոմուրճյանը (1637-1695), Հովհաննես Կոլոտը (1678-1741), Հակոբ Նալյանը (1706-1764), Գևորգ Մխլայիմը (1681-1758), Պաղտասար Դպիրը (1683-1768) և ուրիշներ:

Այս գործիչների կողմից հիմնադրված պոլսահայ գրական դպրոցը հիմք հանդիսա-

50 D' Ohsson M. Tableau Général de l'Empire Ottoman. Paris 1790, V.2, p.243. Տես նաև՝ Ստեփանյան Գ.Խ. Նկարիչ Մանասները: Բանբեր Գ-Ա հասարակական գիտությունների, Եր. 1963, հ. 12, էջ 77-82: Սազրգեան Ա. Մանասներ-18-19-րդ դարերի հայ նկարիչների գերդաստանը, (Ընդարձակ տարեցույց Ս.Փ. ազգային հիվանդանոցի, Կ.Պոլիս, 1933թ. էջ 52-57: Ղազարյան Ս. Հայ կերպարվեստը 17-18րդ. Ե., 1974, էջ 137: Տե՛ր Ստեփանյան Արմեն. Պատկերահան Ռաֆայել Մանաս (Գրական թերթ, Ե.1983, նոյ.25): Տես՝ Sakisian A. Pages d'Art Arménien. Paris 1940, p.97-101. Tuğlacı Pars. Osmanlı Mimarlığında Batılılaşma Dönemi ve Balyan ailesi, İstanbul 1981. 18-րդ դարի երկրորդ կեսին Կ.Պոլիս այցելեց իտալացի ճանապարհորդ արքա Թոդերինին և հինգ տարի ապրեց այնտեղ (1781-1786): Վերադառնալով հայրենիք, Վենետիկում 1787թ իտալերենով լույս ընծայեց թուրքական գրականությանը նվիրված իր Delle' Abate Giambatista Toderini. "Letteratura Turchesca" աշխատությունը, որը երկու տարի անց Փարիզում հրատարակվեց ֆրանսերենով, որ գրում է Մանասների ընտանիքի մասին: Նա անձամբ ծանոթ էր Ռաֆայել Մանասի որդու հետ, եղել էր նրա արվեստանոցում. L'Abbe M.Toderini. La literature des turcs, Paris, 1789, p.60-61; Bülent Aksoy. Rahip Toderini ve Eseri Üstüne. "Tarih ve Toplum" 1987, N.454 s. 42-44. 1995 թվականին Փարիզում կայացած աճուրդում վաճառքի էր հանվել Արդուլ Համիդի բոններից մեկի բանկարժեք հավաքածուի մի մասը, որի կատալոգում ի թիվս արժեքավոր շատ գործերի, կային Մանաս ընտանիքի երկու ներկայացուցիչների փոքր չափսի երեք թե չորս աշխատանքները:

51 Քեռմուրճեան Ե. «Ստամբուլյայ պատմութիւն» Վիեննա, հ.1, էջ 213 և հ.2, էջ 493. Տես նաև Ալադյանեան Ա. Պատմութիւն հայ Կեսարիո, Կահիրե, 1937, էջ 15-35; Չամչեան Մ. Հայոց պատմութիւն, Վենետիկ, 1786, հ.3, էջ 807.

52 Tuğlacı Pars. Osmanlı Mimarlığında Batılılaşma Dönemi ve Balyan ailesi, İstanbul 1981. Պողոսեան Ե., Պալեան գերդաստանը, «Հանդես ամսօրյա»: Վիեննա, 1970-1973թթ.

ցավ 19-րդ դարի երկրորդ կեսին հայ լուսավորական շարժման համար: Համարյա բոլոր հեղինակները ուղղակի կապ են ունեցել հայատառ թուրքերեն գրականության և գրահրատարակչության հետ: Ուստի և հարկ է ներկայացնել նրանց հասարակական-քաղաքական գործունեությունն ու գրական ժառանգությունը կապված հայատառ թուրքերենով տպագրական գործի հետ:



Գլուխ Բ

Հայաստան թուրքերեն ձեռագիր գիրքը (14-19դդ)

Ճակատագրի բերումով հայկական ձեռագրերը ցրված են աշխարհով մեկ: Մատենադարանների, թանգարանների, գրադարանների և մասնավոր հավաքածուների մեզ հայտնի ձեռագրացուցակներում հայաստան թուրքերեն ձեռագրերը զգալի թիվ են կազմում: Մեզ հետաքրքրող ձեռագրերի գերակշռող մասը գտնվում է Երևանում՝ Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանում: Այն իրենից ներկայացնում է բանահյուսական, պատմագրական, գաղարվեստական, կրոնաբարոյախոսական, աստվածաբանական, եկեղեցական, բնական գիտություններին վերաբերող ձեռագրական հարուստ ժառանգություն և ընդգրկում է 600 ամյա մի ժամանակաշրջան: Այս ձեռագրերը գրի են առնվել կամ ընդօրինակվել Կ.Պոլսում, Տիգրանակերտում, Կտուց անապատում, Բայազետի բերդում, Ադրիանապոլսում, Եվրոկիայում, Կարինում, Սեբաստիայում, Վանում, Անկյուրայում, Ջեյթունում, Պրուսայում, Կյունուշխանեում, Պետերբուրգում, Էջմիածնում, Աստրախանում, Դրինում, Կալկաթայում և այլուր:

Բազմադարյան մշակույթ ունեցող հայ ժողովրդի մտքի, իմաստության, փորձի, ուրախության, սրամտության, վշտի ու տառապանքների, երազների ու ցանկությունների արտահայտությունները Օսմանյան կայսրության թրքախոս գավառներում հնչել են թուրքերեն և գրի են առնվել հայաստան թուրքերենով: Ուստի զարմանալի չէ, որ մեզ չեն հասել որոշ գավառների բանահյուսության և ոչ մի հայերեն նմուշ: Այս հանգամանքն այսօր այնքան հմտորեն օգտագործում են թուրք գիտնականները, ի թիվս այլ երևույթների՝ հայ բանահյուսության շատ նմուշներ ներկայացնելով որպես իրենց սեփականությունը: Թուրքերեն լեզվով լինելու ցավագին այս հանգամանքը, այնուամենայնիվ նպաստել է, որպեսզի ավելի արագ ու դյուրին տարածվեն այս ստեղծագործությունները Օսմանյան միապետության բազմազգ ժողովուրդների շրջանում, ազդեն ստեղծագործական մտքի վրա, նաև ազդվեն նրանցից:

Աշուղական գրականությանը, բանահյուսությանն են վերաբերում հայաստան թուրքերեն ձեռագրերի գերակշռող մասը:

Հայ աշուղական, գուսանական արվեստի արմատները դարերի խորքից են գալիս, երբ դեռ չէր էլ կազմավորվել թուրքական պետությունը: Վաղ և միջնադարյան հայ գուսանական, աշուղական գրականության ուսումնասիրությանն են նվիրվել գիտական բազմաթիվ հրատարակություններ, անթրոլոգիաներ, որոնք թույլ են տալիս հետևելու մեզ հետաքրքրող այս գրականության զարգացման ընթացքը, համադրելու և ճիշտ ըմբռնելու հայաստան թուրքերեն տաղերն իրենց տարբերակներով: Բանասեր **Գ.Լևոնյանը** հաշվում է ավելի քան 400 աշուղներ, որոնք 17-19 դարերում ստեղծագործել են միաժամանակ հայերեն և հայաստան թուրքերեն լեզուներով⁵³:

53 Մատենադարանում պահվող ավելի քան 180 ձեռագրեր պարունակում են հայաստան թուրքերեն

Գիտական գրականության մեջ ընդունված է եղել զանազանել աշուղների երկու տիպ: Առաջինները հանպատրաստից են հորինել ու կատարել իրենց երգերը որևէ գործիքի նվագակցությամբ և կոչվել են «մեյտան շուարասը»: Երկրորդները՝ որոնք նախապես գրավոր ունեցել կամ պատրաստել են իրենց տաղերը՝ «քալեմ շուարասը» են կոչվել⁵⁴: Այնուամենայնիվ դժվար է զանազանել այս աշուղներին, քանզի երկրորդները ևս շատ հաճախ հանպատրաստից էլ են կատարել:

Հաճախ, հոգևոր հայրերը գայթակղվելով աշխարհիկ, ժողովրդական թեմաներով գրված տաղերով, ոչ միայն մշակել են և վերափոխել դրանք հոգևոր տաղերի, այլև իրենք էլ են ստեղծել աշխարհիկ բովանդակության երգեր՝ կրոնական նուրբ քողի տակ, գրի առել ժողովրդի այդ գանձերը, որոնց մի մասն էլ ձեռագիր ժողովածուներում այսօր մեզ է հասել: Ավելին՝ ընդունելով ժողովրդական երգերի ավանդույթները, գրել են ժողովրդական, խոսակցական լեզվով, որը հիմնովին տարբերվում էր եկեղեցական լեզու դարձած հին հայերենից՝ գրաբարից: Թրքախոս գավառներում հոգևոր հայրերը երբեմն ստեղծագործել են նաև թուրքերեն և այդ տաղերը գրի են առնվել հայատառ թուրքերենով: Հաճախ էլ թուրքերեն հայտնի երգի նույն սիրված մեղեդու համար գրվել են հայերեն նոր բառեր՝ նպատակ ունենալով զարկ տալու հայերեն լեզվով երգերի տարածմանը: Ձեռագրերը, ուր ամբարված են բազմաթիվ հայատառ թուրքերեն չափածո ստեղծագործություններ, հնարավորություն են տալիս պատկերացում կազմելու թուրքական չափածո գրականության մասին ևս և հետևել դասական ու ժողովրդական գրականության զարգացմանը: Թուրքական դասական գրականությունը, ընդօրինակելով արաբա-պարսկական միստիկ բովանդակությամբ հագեցված ծեփծեփուն, վերամբարձ ոճը՝ ստեղծվել ու զարգացել է պալատներում, որպես կանոն հեռու, օտար մնալով ժողովրդին:

Պալատական գրականությունը չի արտահայտել իր ժամանակի բնորոշ գծերը, սոցիալական իրավիճակը: Ավանդական կառուցվածքային բանաձևերից դուրս չեկող ստեղծագործություններում չեք գտնի հեղինակի ժամանակակցին: Այս բանաստեղծներից միայն մի քանիսն են, որ վայելել են ժողովրդի սերը:

Աշխարհի բոլոր տիրակալները, թագավորներն ու սուլթաններն ունեցել են իրենց կողքին երգիչներ, որոնց հովանավորել են, սիրել, երբեմն էլ զգուշացել նրանց սուր խոսքերից: Այս երգիչներից ոմանք, ապրելով ճոխ պալատներում, շքեղության մեջ՝ ձգտել են դեպի ժողովուրդը, բնությունը և այնտեղ գտել իրենց հոգեկան հանգստությունը, ազատությունը՝ գերծ կաշկանդումներից: Նրանք դուրս են եկել սոսկ դասական ավանդույթներով ստեղծագործող պալատական երգչի սահմաններից, երգել են երկրային սեր, ժողովրդի հոգսերն ու ուրախությունները, երբեմն էլ ապստամբել են պալատի դեմ, սպառնացել, որի համար այնքան խստորեն պատժվել են:

Թուրքական իրականության մեջ, պալատական թուրք երգիչների կողքին ստեղծագործել են շատ սիրված ու գնահատված հայագրի երգիչներ: Դրանցից են **Աբդուլ Մեջիդ** սուլթանի երգիչ **Քեշիշօղլին**, Սուլթան Մեհմեդի երգիչ **Իվֆեթին** և շատ ուրիշներ:

տաղեր, բանահյուսության մտուշներ: Տես՝ Գ. Լևոնյան, Հայ աշուղները և նրանց արվեստը, Ե., 1944, էջ 34:
 54 Ալպոյաճեան Ա. Պատմություն հայ Կեսարիո, Կահիրե, 1937, էջ 1554. Ahmed Kabakh. Türk Edebiyat. Ankara, 1967, s. 139, 633.

Հայաստան թուրքերեն ձեռագիր տաղարաններում հանդիպում ենք անունների, որոնք թուրքական գրականության պատմության մեջ համարվում են դասական գրականության ներկայացուցիչներ: Նրանց մի քանիսի լեզուն, հայկական մտածողության առկայությունը, բովանդակությունը, տաղաչափական կառուցվածքը թույլ են տալիս ենթադրելու դրանց հեղինակների հայ լինելու հանգամանքը: Նույն այս հեղինակների անունները գտնում ենք համապատասխան շրջանի թուրք գրականության մասին աշխատություններում՝ ներկայացված որպես թուրք աշուղներ՝ համապատասխան կենսագրություններով: Այդպիսին են **Ահմեդ Քաբաքլուի, Վասֆի Մահիր Քոջաթուրքի**⁵⁵ աշխատությունները, որտեղ գտնում ենք մեզ հետաքրքրող աշուղների մասին ոչ միայն գրականագիտական տեղեկություններ, այլև, նրանց նկարները թուրքական հագուստներով: Հայկական ձեռագրերում ամբարված հայաստան թուրքերեն աշուղական տաղերի գիտական, քննական հրատարակությունները ոչ միայն ճշտումներ կմտցնեն նրանց հեղինակների ազգային պատկանելության հարցում, այլև որոշ վերագնահատումների կմղեն: Պետք է նկատի ունենալ այն հանգամանքը, որ աշուղների մեծ մասը կրել են պարսկական անուններ: Երկրորդ՝ նույն անունը կարող էին կրել մի քանի աշուղներ, և երրորդ՝ որ նույն աշուղը կարող էր ունենալ մի քանի անուններ: Այսպես օրինակ, 19-րդ դարի աշուղ **Չարուրին** մրցույթներում հաղթելով, ի թիվս այլ աշուղների, մասն հայտնի **Թիմճարիին**, ստացել է **Քեշիշօղի** մականունը, որը փոխել է Չարուրիի: Կ.Պոլսում մտերմանալով մի թուրք բեյի հետ՝ ներկայացվում է Սուլթան Մեհմեդ Բ-ին, որին հանպատրաստից ձոնում է մի տաղ: Առատ պարզևի հետ միասին սուլթանից ստանում է նոր մականուն՝ **Շավզի**⁵⁶:

Հայաստան թուրքերեն աշուղական գրականությունն ուսումնասիրել են օտարազգի հետազոտողներից գերմանացի նշանավոր արևելագետներ **Էննո Լիտտմանը**⁵⁷, **Օտտո Շպիսը**⁵⁸ և ուրիշներ: Թուրք հայտնի գիտնական Ֆուադ Քյոփրուլուն իր աշխատություններում անդրադարձել է երեք հայ աշուղների, որոնք գրել են հայաստան թուրքերեն: Դրանք են՝ **Մեսիհի Էրմենին, Սարգիս Չեքին (Նուռլյան), Միրզա խանը: Ֆ.Քյոփրուլուն** դրվատանքով է հիշատակում 18-րդ դարի մի այլ աշուղի, ոմն **Վարդանի**, որն անհամեմատ ավելի տաղանդավոր է եղել, քան վերը հիշատակվածները⁵⁹: **Իզգեթ Ուլվին, Ահմեդ Ռասիմը** թվում են Ստամբուլի բազմաթիվ հայ աշուղների, որոնք միաժամանակ թուրքերեն են ստեղծագործել: **Յուսուֆ Նաբիի** մի նամակից իմանում ենք 16-րդ դարի երկու հայ աշուղների մասին՝ **Վարդան և Մեջնուն**⁶⁰ :

55 Vasfi Mahir Kocatürk. Türk Edebiyat Tarihi. Ankara, 1970, s.426, 474,498,584.

56 Ալպոյաճեան Ա. Պատմություն հայ Կեսարիո, Կահիրե, 1937, էջ 1556.

Առիթ ենք ունեցել թուրքական հեռուստատեսության 4-րդ ծրագրով հետևելու «Թուրքերեն լեզու և գրականություն» հաղորդաշարին, որ ներկայացվում են մեզ հետաքրքրող հայազգի աշուղները, լատինատառ թուրքերենի վերածված տաղերի նմուշներով հանդերձ:

57 Enno Littman. Das Malerspiel, Sitzungsberichte der Heiderger Academie der Wissenschaften, Fil. Hist., Kl. 1910; idem. Ein Türkisches Stereitgedicht über die Ehe, "Bildärini Evil ile Bekjaryn dasitani". /dans "A volume of Oriental Studies presented to "Professor Edward G.Browne". pp. 269-284.

58 Spies Otto. Esmam und Zejdshan. "Ein türkischer Volksroman aus Kleinasien nach einem armenisch-türkischen Druch Antohropos, t. XX, 1925

59 Fuad Köprülü. Türk Edebiyatının Ermeni Edebiyat üzerindeki Tesiratu. Edebiyat Fakültesi Araştırmaları. Ankara, 1966, s. 239-269.

60 Ամիրյան Խ. Հայ մշակույթի պատմության նենգափոխման հարցի շուրջը, Երևան, «Սովետական

Ահա 18-19-րդ դարերում ստեղծագործած մի քանի անուններ՝ վերցված հայատառ թուրքերեն տաղարաններից. **Պահարի, Սետաէի, Մեվզունի, Ակեահի, Մերշուֆի, Չաեիֆի, Ճեհտի, Շուխի, Էօմր, Շազիրի, Թանգիրի, Ապիտի, Ֆաալը, Նեպատի, Հաշիմի, Գարունի, Մավզունի, Սենաթի, Կեվիերի, Սարիօշ օղլու, Մեճնունի, Տեիրի, Իրֆանի, Բավզիա, Նեվ-նի, Լիճճեյի, Նեֆիհի, Նիհատի, Վեհալի, Ճիւտայի, Նազիր⁶¹, Աբրահամ, Կարաջ օղլան, Գալլաք Մուրադ, Տօնի, Միսկին, Բուրջի, Պետրջի օղլի, Օլջի Նավասի, Մամադ, Գամբար օղլի, Քեշիշ, Ալավերդի, Մահմուդ, Հարություն Սալմաստեցի** և այլն⁶²: Հայատառ թուրքերեն տաղերը մեր օրերում ևս շարունակում են հետաքրքրել ուսումնասիրողներին⁶³:

Աշուղները (հիմնականում սազի ուղեկցությամբ) շրջել են Օսմանյան բազմազգ կայսրությունով, երգել, խաղացել, կատարել են և՛ իրենց և թե՛ ուրիշների ստեղծագործությունները: Եվ քանի որ թուրքերենը հասկանալի էր բոլոր ազգերի համար, բնական է, որ լինելով անգամ հայախոս գավառների ծնունդ՝ աշուղները կատարել են հիմնականում թուրքերեն⁶⁴:

Հայատառ թուրքերեն տաղարանների ամենագեղեցիկ նմուշները սիրո տաղեր են, հավաստող դարերից եկած ամենախոր փիլիսոփայությունն այն մասին, որ զգացմունքներից ամենագեղեցիկը վեր է հասարակական, սոցիալական, դասակարգային, ազգային ու կրոնական բոլոր պատկանելություններից ու նախապաշարումներից՝ թեև այն ընդլվզում է բազմադարյան սովորույթների ու ավանդույթների դեմ:

Տաղերում նկատել ենք կառուցվածքային հետևյալ տարբերակները.

- մեկ տողը հայերեն է, մյուսը՝ հայատառ թուրքերեն (երբեմն արաբախառը)

գրականություն» ամսագիր, 1972, հ. 3:

61 Մատենադարան, ձեռ. 6438

62 Մատենադարան, ձեռ. 9003

63 Երևանի Եղիշե Չարենցի անվան գրականության ու արվեստի թանգարանում պահվող պոլսահայ մտավորական Թորոս Ազատյանի արխիվում պահվում են մեծ թվով հայատառ թուրքերեն տաղեր. բաժին 6, հ. 78-80, 536 էջ: Մեր ժամանակակից պոլսահայ բանասեր ու մատենագիր Գեորգ Բամպուրճյանը հրատարակել է հայատառ թուրքերեն տաղերի լատինատառի վերածած անթրոլոգիա (Kevork Pamukciyan. Ermeni Harflı Türkçe Elyazma Eski Bir Cönk, İst., 1984; Fölklor ve Etnografya Araştırmaları, N 1.) Հայատառ թուրքերեն աշուղական գրականությամբ էր զբաղվում նաև մի այլ պոլսահայ գրագետ, որը Հայաստան հայրենադարձվելու տարիներին այս թեմայով աշխատություն էր պատրաստում: Նրա հոդվածները հաստատում են, որ հայազգի են եղել հայտնի Հիթաբին (18-րդ դ.), Սեկյահին, Մեսթուրին և Թյուրապին (19-րդ դար): Տես՝ Ամիրյան Խ.Պ. Սիրո թեման թուրքալեզու հայ աշուղների երգերում. («Արևելագիտության հարցեր» ԵՊՀ ժողովածուի 1-2 համարում, Եր. 1983, էջ 230.) Մեր կողմից «Արևելյան աղբյուրագիտություն» ԳԱ ժողովածուի մեջ (Ե, 1888, էջ 83-98) թարգմանվել, հրատարակվել է մինչ այդ անտիպ հրաշալի երկլեզվյա սիրո «Տաղ Գրիգորի ասացեալ», որը բնորոշ օրինակներից է հայատառ թուրքերեն աշուղական տաղերի: Տես՝ Մատենադարան, ձեռ. 2394 էջ 182ա-184ա:

64 Հայ աշուղների ստեղծագործության տարածման, նրանց ունեցած մեծ ժողովրդականության գործում նպաստավոր դեր են խաղացել կայսրության ժողովուրդների կյանքում ընդունված աշուղական մրցույթները: Այս մրցույթներն անցել են որպես տոնախմբություններ և կազմակերպվել են հիմնականում հանդիսավոր առիթների ժամանակ: Բնականաբար մրցույթների ոչ բոլոր մասնակիցներն են շնորհալի կամ տաղանդավոր եղել: Ոմանք կատարել են սեփական ստեղծագործությունները, ոմանք նախընտրել են կատարել ժողովրդական և կամ մյուս աշուղների երգերը: Երկու դեպքում էլ մրցողները դուրս են եկել ընդունված կանոնների շրջանակից: Ի դեմս նրանց մենք գործ ունենք ժողովրդական բանահյուսության հավաքողների ու մշակողների հետ, որոնք կատարելով այն՝ տարածել են ողջ կայսրությունով մեկ: Դա վերաբերում է ժողովրդական արվեստի բոլոր ժանրերին:

- տողերից մեկը մյուսի թարգմանությունն է կամ՝ միմյանց շարունակում են առանց թարգմանության: Հայերեն երկտողին, քառատողին հաջորդում է հայաստան թուրքերեն երկտողը կամ քառատողը՝ նույն սկզբունքով: Նույնիսկ հայերեն տաղերում, հայրեններում տեքստը երբեմն ընդմիջվում է հայաստան թուրքերեն բառերով, մտքերով, առանձին քառյակներով, որոնք բովանդակային շարունակություն են կազմում և կամ՝ նախորդի թարգմանությունն են պարզապես:

Մեծ թիվ են կազմում այն տաղերը, որոնց հեղինակները, ստեղծման ժամանակը՝ անհայտ են և որոնց հրատարակությունը մի քանի սովոր հատորներ կարող է կազմել: Դրանց մեծ մասը գեղարվեստական որոշակի արժեք են ներկայացնում: Մեզ են հասել **Հովհաննես Երզնկացու (16դ.)**, **Հովհաննես Թլկուրանցու (15դ.)**, **Թաղեսու Կողոմիացի Թոխաբեցու (16դ.)**, **Նահապետ Քուչակի (15-16դդ)**, **1512-1544 թթ հայոց կաթողիկոս Գրիգորիս Արթամարցու (16դ.)**, **Նաղաշ Հովնաթանի (1661-1721)**, Պաղտասար Դպրի (1683-1768) և ուրիշների հայաստան թուրքերեն տաղերը: Հայ աշուղական արվեստի ժողովրդականությունն ու ճանաչումը Օսմանյան կայսրության բազմազգ ժողովուրդների շրջանում, սկսած պարզ ժողովրդից մինչև պալատ՝ փաստ էր: Եղել են դեպքեր, երբ ժողովրդի կողմից շատ սիրված հայագրի աշուղին թաղել են թուրքական գերեզմանոցում, «պատճառաբանելով», որ մահվանից առաջ աշուղն իբր թե մահմեդականություն է ընդունել: Այսպես է պատահել 19-րդ դարի աշուղ **Թալեպիի (նույն ինքը Թյուրապի Կեսարացի**, նույն ինքը **Հաջի Կարապետ)** հետ⁶⁵:

Հայաստան թուրքերեն աշուղական գրականության ուսումնասիրության արդյունքում միայն հնարավոր կլինի պատկերացում կազմել վերջինիս զարգացման շրջանների, կրած և իր ունեցած ազդեցությունների շուրջ: Հայաստան թուրքերեն տաղարաններում տեղ են գտել քառյակներ, գազելներ, բեյթեր, որոնցից մի քանիսի հեղինակներն ամենայն հավանականությամբ հայեր չեն:

Հայաստան թուրքերենով մեզ են հասել բազմաթիվ աշխատանքային երգեր: Երգեր նվիրված հեթանոսական և քրիստոնեական տոներին (ծաղկազարդի, բարեկենդանի, վարդավառի, համբարձման տոների ժամանակ շուրջպարերի հետ կատարվող երգեր): Այս երգերի մի մասի վառ թատերակայությունը թույլ է տալիս ամենայն մանրամասնությամբ վերարտադրելու որոշ ծիսակատարություններ, տոներ: Այս առումով անչափ գունեղ են հարսանեկան երգերը, որոնք բազմաթիվ մասերից են կազմված: Յուրաքանչյուր արարողություն ուղեկցվել է համապատասխան երգերով: Ընտանեկան կյանքին վերաբերող երգերը բացի թատերական երանգներից, պարունակում են դարերի փորձն ու փիլիսոփայությունը: Դրանք մեղմ ու քնքույշ օրորոցայիններ են, տանտանաներ: Դրանք հատկապես գունեղ, երգիծական երգեր են, որոնց գլխավոր գործող անձիք հարսերն ու սկեսուրներն են:

Աշուղներն անբաժան ուղեկիցներն են եղել պատերազմների, ապստամբությունների⁶⁶:

65 Ալպոյաճեան Ա. Պատմութիւն հայ Կեսարիո, Կահիրե, 1937, էջ 1561.

66 Աշուղների երգերին տարբեր գավառներում տարբեր անվանումներ են տրվել: Օրինակ Ջեյթունում ավաչներ են անվանվել աշուղների մարտական, նաև հովվերգական երգերը: Կարծում ենք այս առումով որոշակի հետաքրքրություն են ներկայացնում հետևյալ ձեռագրերը. ա. Տաղեր. (Հ.Աճառեան, Յուզակ հայերէն ձեռագրաց Թարիզի. Վիեննա, 1910, ձեռ. 25 ա, 10 էջ հայաստան թուրքերեն. և բ. «Չիվիստան միսիլի ախրը զամանտայ» (Վանի հերոսամարտի մասին պատմական տաղ)-15 էջ հայերեն և հայաստան թուրքերեն՝ դեմ դիմաց:

Նրանք երբեմն ամենայն մանրամասնությամբ նկարագրել են դեպքերը, դեմքերը: Այս երգերն իրենցից ներկայացնում են սպառնական, խրոխտ ոճով գրված քայլերգեր: Շատ հաճախ, արշավանքների, մարտերի, ընդհարումների մասին պատմող երգերը թուրքերեն են հնչել նույնիսկ հայախոս գավառներում, որպեսզի թուրքերը հասկանան: Բազմաթիվ նման երգեր գրված են ընդդիմախոսությունների հիման վրա, ուր հետաքրքրությամբ երևան են գալիս պայքարող կողմերի նկարագրերը: Հակառակորդն այս երգերում տարբեր իրադրություններում տարբեր բնավորության գծերով է հանդես գալիս. վախկոտի դիմաց՝ գռռոզ, պռռտախոս ու ամբարտավան: Քաջի հետ հանդիպելիս նրանք քծնող են ու վախկոտ: Արագորեն են հյուսվել քաղաքական, երգիծական երգերը, որոնք արագ էլ մոռացության են մատնվել, քանզի նվիրված են եղել որոշակի դեպքերի, առանձին պատմական դեմքերի, իրադարձությունների: Այս երգերը հիմնականում որոշակի ուղղության, կառուցվածքային կանոնների չեն ենթարկվել: Ուղեկցվելով թամպուրայի⁶⁷ նվագակցությամբ, կատարվել են խնջույքների, ճամփորդությունների, ուխտագնացությունների ժամանակ:

Արժեքավոր են պատմական իրադարձություններին⁶⁸ վերաբերող երգերը հայերեն և հր:

Ժողովրդական բանահյուսության ամենահինքնաբուխ արտահայտությունները երգերն են, որ կատարվել են տարբեր առիթներով՝ նաև տխուր ու դժբախտ: Մեզ հասած հայատառ թուրքերեն պանդխտության երգերը կարոտի երգեր են՝ լեցուն ավելի շատ հոռետեսությամբ, քան թե բարի վերադարձի ու լավ վաստակի հույսով: Այս երգերը վերաբերում են ոչ միայն պանդուխտին, այլև նրան սպասող մորը, հորը, հարազատներին, հարսնացուին: Մորմորով լեցուն այս երգերի մի մասը բնականաբար վերածում է անեծքի՝ ուղղված իրենց դժբախտության պատճառը հանդիսացողներին.

Կեօզիւնիւն ըշըղը սեօյիւնսիւն	Աչքիդ լույսը մարի
Ճիյէրիւնէ աթեշ տիւշսիւն	Հոգիդ կրակ ընկնի
Օճաղըն պատարն	Օջախդ կործանվի
Էվին պաշընա երխըլսըն:	Տունդ գլխիդ փլվի:

67 Թամպուրի-հայկական եռալար, աղեղով գործիք, որը տարբեր էր արաբա-պարսկական ջնարից (տես՝ Ս.Լ.Խիցյան, Հայ ժողովրդի հինավուրց պարերը և թատերական ներկայացումները, Ե. 1958, հ.1 էջ 152-153): Տիգրան Փափագյանի «Պատմություն Բալու Հաւա գիւղի» (Բեյրութ- 1960) գրքում ներկայացվում է հայատառ թուրքերեն քաղաքական մի երգ՝ բարբարոս Շարիֆ Բեկի արտքի առիթով գրված, որ երգել են նաև թուրքերը (էջ 233): Գրքում կան հայատառ թուրքերեն աշխատանքային՝ կալի երգերի հրաշալի օրինակներ:

68 Բյուզանդիայի կործանումից հետո Կոստանդին կայսեր եղբոր աղջիկը՝ Սոֆիա Պալեոլոգը, որը կայսերական տան վերջին շառավիղներից էր, հաստատվում է Իտալիայում: Այստեղ, 1472թ. ամուսնանում է ռուսական Իվան 3-րդ ցարի հետ և տեղափոխվում Ռուսաստան: Այսպիսով կնոջ կողմից Իվան 3-րդը դառնում է բյուզանդական գահի օրինական ժառանգ: Այս պատմությունն արտացոլված է «Թագուհի մի ես տեսայ» սկզբնատողով ժողովրդական «Անգունիա» տաղում. Այս ժողովրդական երգի աղբյուրը Ագաթանգեղոսն է: Իսկ թե ինչ պատմական հիմքեր են եղել Բաղիչեցու և այս երգի համար՝ Տրդատի ժամանակվանից Հռոմում հաստատված հայերի, իսլավկրաց արշավանքի ժամանակ կատարելիք դերի առնչությամբ՝ կարոտ է ուսումնասիրության (էջ 275-276): Այս ամուսնությունը մեծ ոգևորություն է առաջացրել քրիստոնյա ժողովուրդների մոտ: Այս մասին ազատագրական լեգենդ են հյուսել բուլղարները՝ որի առիթն այս ամուսնությունն է: Տես՝ Легенда о дядо Ивана. История Болгарии. Т.1 Москва 1954 с.179-180. տես էջ 119.

Ժողովրդի դառնությունների, դժբախտ ու տխուր օրերի երգերից են եղերերգերը, ողբերը, որոնք հիմնականում կատարվել են հանպատրաստից և ունեցել են իրենց որոշակի, ընդունված բովանդակային ու կառուցվածքային ձևերը⁶⁹ :

Ժողովրդական բանահյուսության մյուս ժանրերին վերաբերող ստեղծագործությունները արդյունք են նաև ժողովրդի մեջ ընդունված՝ ձմեռվա երկար երեկոներին հավաքվելու, պատմություններ պատմելու, զբաղվելու, զվարճանալու սովորության: Մեծ թիվ են կազմում առածները, առակները, ասացվածքները⁷⁰, հեքիաթները⁷¹, վիճակախաղերը⁷², թվաբանական խոսելուկները, տաղ-հանելուկները և առած-հանելուկները⁷³, ոտանավորները⁷⁴, գուշակությունները⁷⁵, պատմությունները՝ ընդմիջված երգերով⁷⁶: Այս ստեղծագործություններում գերիշխում են չափածո ձևերը:

Ժողովրդի կենցաղի, սովորությունների մի այլ կողմի՝ սնոտիապաշտության արտահայտություններն են նաև հմայագրերը: Ընդունված են եղել վերջիններիս արաբատառ տեքստերը: Ուստի պատահական չէ, որ հայաստան թուրքերեն հմայագրերին անպայման կից են նրանց արաբերեն ու պարսկերեն տեքստերը⁷⁷:

Տրամաբանական պիտի համարել այն երևույթը, որ լոկ հայկական կամ ինքնուրույն ստեղծագործություններ կատարելով բանասացները, աշուղներն այդքան մեծ հարգանք, սեր ու ժողովրդականություն դժվար թե կարողանային վայելել Օսմանյան կայսրության նման բազմազգ մի երկրում: Նրանք մեծ դեր են խաղացել նաև պետության մյուս ժողովուրդների բանահյուսության տարածման, կատարման, մշակման, նոր տարբերակներ ստեղծելու գործում: Այդ են վկայում տարբեր ժանրերի ստեղծագործություններին կից (ոմանց) պարսկերեն, հայաստան պարսկերեն, թաթարերեն, հունարեն, եբրայերեն, լատիներեն, հունգարերեն (մաճառերեն), հայաստան քրդերեն, օսմաներեն, հայաստան արաբերեն, մոլդավերեն զուգահեռ տարրերթերցումները:

Հայաստան թուրքերենով մեզ են հասել ոչ միայն այլազգի և այլալեզու աշուղների ստեղծագործությունները, այլև նրանց ժողովուրդների բանահյուսության մի շարք նմուշներ: Արևելքում տարածված սիրավեպերի առկայությունը հայաստան թուրքերեն ձեռագրերում ասպացույց է այն բանի, որ դրանք մեծ սիրով պատմվել, երգվել են նաև հայկական շրջանակներում ու գրի են առնվել հայաստան թուրքերենով: Շահ Իսմայիլի, Ասիի և Քյարամի, Աշուղ Ղարիբի, Քյոռ Օղլու, Խան Չոբանի, Թահիր Միրզայի պատմություններն առատորեն ընդմիջված են երգերով⁷⁸:

69 Մատենադարան, ձեռ. 3300.

70 Թօփճեան Յ. Յուցակ ձեռագրաց Արմաշի վանքին, Վենետիկ, Ս.Ղազար, 1962., 1962., ձեռ. 158, էջ 2ա-163բ, «Աղուեսագիրք» (163 առակ): Տես՝ Մատենադարան, ձեռ. 5941, 1400, 2163, 8048.

71 Թօփճեան Յ. Յուցակ ձեռագրաց Արմաշի վանքին, ձեռ. 157. Մատենադարանի 17-րդ դարի «Տուտի նամե» ձեռագրում՝ մայմունի, խոջաստի և թութակի մասին պարսկական հեքիաթի հայաստան թուրքերեն տարբերակն է (ձեռ. 6657):

72 Անդ, ձեռ. 1675, 10264.

73 Անդ, ձեռ. 1786, 3442, 5373, 5616, 3227.

74 Անդ, ձեռ. 3830, 3998, 9117, 9404, 10097.

75 Անդ, ձեռ. 10262, 5941.

76 Անդ, 9074, 6657.

77 Անդ, ձեռ. 9906, 10284.

78 Մատենադարան, ձեռ. 2842, 7318, 9003. Հետագայում, նույն այս սիրավեպերն առատորեն տպագրվել են հայաստան թուրքերենով, ունեցել բազմաթիվ վերահրատարակություններ: Հայաստան թուրքերենով այս տպագրություններն այսօր դարձել են նաև թուրք հետազոտողների քննության

Հատկապես թուրքաշատ վայրերում հայերն ազատ չէին իրենց մայրենի լեզուն օգտագործելու: Հենց այսպիսի վայրերում են ստեղծվել հայատառ թուրքերեն չափածո հոգևոր ստեղծագործությունները, նպատակ հետապնդելով նաև պահպանելու մարդկանց մեջ հավատարմությունը սեփական ժողովրդի, հայ առաքելական եկեղեցու նկատմամբ, զարկ տալու հավատքին և կանխելու հավատուրացությունը, ուժացումը:

Հոգևոր, կրոնաբարոյախոսական բնույթի ամենավաղ հայատառ թուրքերեն մնուշները 16-17րդ պատկանող օրհնություններ և աղոթքներ են⁷⁹:

Բացի առօրյա եկեղեցական ծիսակատարություններին վերաբերող ձեռագրերից, հայատառ թուրքերենով պահպանվել են հոգևոր տաղեր⁸⁰, կրոնաբարոյախոսական պատմություններ⁸¹, եկեղեցիների պատմությանը վերաբերող ձեռագրեր⁸², վարք սրբոց⁸³, խրատներ, քարոզներ⁸⁴, հայսմավուրք⁸⁵, ախտարք⁸⁶, ճաշոց⁸⁷, եկեղեցական գրագրության օրինակներ⁸⁸, ամուսնական դաշնագրերի պատճեններ⁸⁹, անդորրագիրք և կահագիրք⁹⁰, ճառեր⁹¹, կրոնական տաղեր⁹² և այլն:

առարկան, տես Թուրգուք Քուրի (Turgut KUT) հոդվածներն այս մասին:

- 79 Մատենադարան ձեռ. 362,1644, 1679, 1856, 2274, 3506, 5613, 8469. Հետաքրքիր է նշել, որ 13-րդ դարի ձեռագրում 50 թաթարերեն բառերի ցուցակ է տրվում՝ բացատրություններով հանդերձ: Այս ցուցակ-բառարանը հանդիսանում է հայ պատմագրության մեջ թաթարերենի հնագույն գրառումը: Խոսքը վերաբերում է Կիրակոս Գանձակեցու (1201-1271) «Պատմությանը», ուր նկարագրվում են բազմաթիվ քաղաքների ու գյուղերի ավերումը թաթար-մոնղոլների կողմից, ինչպես նաև հայ-թաթարական փոխհարաբերությունները (տես՝ Կիրակոս Գանձակեցի, «Պատմություն Հայոց», Ե.1961, էջ 270-275, բառարան): Հայատառ թաթարերեն երկու ձեռագրեր՝ 2412 և 3546 պահվում են Կրակովում, Չարդորիսի (Czartorisk) իշխան Բուլավի անվան թանգարանի ձեռագրական ֆոնդում («Հանդես ամսօրեա», 1887, էջ 55-57): Առաջինը ժամագիրք է՝ սաղմոսներով ու աղոթքով: Երկրորդը՝ սաղմոս, մաղթանք, աղոթք, հիշատակարան: Հայատառ թաթարերեն ձեռագրեր կան Վիեննայի կայսերական մատենադարանում, Մխիթարյան միաբանության ձեռագրերի թվում (Տես Յ. Տաշեան, Յուցակ հայերեն ձեռագրաց կայսերական մատենադարանին ի Վիեննա, Վիեննա 1891 և Յ. Տաշեան, Յուցակ հայերեն ձեռագրաց Մխիթարեան մատենադարանին ի Վիեննա, Վիեննա 1895): Հայատառ թաթարերեն ձեռագրերը որպես կանոն հասկանալի են և հայատառ թուրքերեն լեզվից շատ չեն տարբերվում: Դրանք վարքեր են, ամուսնական դաշնագրերի պատճեններ և այլ:
- 80 Մատենադարան, ձեռ.5084,1823, 3443, 6744, 8277, 8469, 8504, 9138 և այլն. Տես նաև՝ Թորգոմ արքեպ. Գուշակեան. Յուցակ հայերեն ձեռագրաց Ա.Նշանի վանոց ի Սեբաստիա, Վիեննա, 1961. ձեռ. 228 (Յիսուս Որդի Ներսիսի Շնորհալոյ, հայերեն և հայատառ թուրքերեն կրոնական տաղեր, 1772թ.)
- 81 Տաշեան Յ. Յուցակ հայերեն ձեռագրաց Մխիթարեան մատենադարանին ի Վիեննա, Վիեննա, 1895, ձեռ. 447. տես նաև՝ Մատենադարան, ձեռ. 9705, 10136. տես նաև Վ. Ներսես Վ.Ակինեան. Յուցակ հայերեն ձեռագրացքահանայապետ Լեւոնեան հայ վարժարանի ի Հռոմ, ձեռագրեր 35(102), 61, 62, 46.
- 82 Մատենադարան, ձեռ. 2861, 6744, 8504.
- 83 Անդ, ձեռ. 5084, 7868, 9073, 9643, 10061.
- 84 Անդ, ձեռ. 1670, 6703, 9117, 10036. 2065 (Գրիգոր Տաթևացու քարոզգիրքը).
- 85 Մատենադարան, ձեռ. 8823, 9008, 9717.
- 86 Անդ, ձեռ. 2906, 6817, 7543.
- 87 Անդ, ձեռ. 4656.
- 88 Անդ, ձեռ.517, 1670, 1856, 2861, 3476, 5043.
- 89 Անդ, ձեռ.2614, 7265.
- 90 Տաշեան Յ. Յուցակ հայերեն ձեռագրաց Մխիթարեան մատենադարանին ի Վիեննա, ձեռ. 441.
- 91 Քէշիշեան, Յուցակ հայերեն ձեռագրաց Չմմառի վանքի մատենադարանին, ձեռ. 176(ԺԸ դ.). Դուկաս Փինէլոստա Յիսուսեան կարդինալի «Քիթապ, քի անտէ սեօյլէնիլեր կէլէճէք օմուրտէն օրբու» (Գիրք՝ յորում ճառի զհանդերձեալ կենաց):
- 92 Մատենադարան ձեռ. 2065. տես նաև՝ Թորգոմ արք. Գուշակեան. Յուցակ հայերեն ձեռագրաց

Հետաքրքրություն են ներկայացնում բժշկարանները. օրինակ՝ իտալերենից թարգմանված եռամսս մի բժշկարան, որը 18-րդ դարի ձեռագիր է⁹³ և կազմված է բնախոսության, ախտահանության, ախտորոշման բաժիններից: Բժշկարաններն ունեն առողջապահությանը, մարդակազմությանը, բույսերի բուժիչ հատկություններին, դեղերին նվիրված մասեր:

Հայ իրականությունում բնագիտության և բժշկության ամենաակնազարկ դեմքերից է եղել **Ամիրոդվաթ Ամասիացին** (1415-1496), որը հեղինակ է տասնյակից ավել գիտական մեծարժեք աշխատությունների: Անձնական մեծ փորձը, գիտական խորը իմացությունը և բազմալեզու աղբյուրները հիմք են ծառայել այս գործերի ստեղծման համար: Նրա «Օգուտ բժշկության» ծավալուն գործում ի մի է բերված բնագիտական հարստագույն նյութ: Նկարագրված են 1700 բույսերի, կենդանիների ու մետաղների բուժիչ հատկությունները, դեղերի պատրաստման ճշգրիտ չափսերն ու դեղատոմսեր:

Ամիրոդվաթ Ամասիացին, լինելով վերին աստիճանի զարգացած մարդ, որը տիրապետել է մի շարք լեզուների՝ հումանիստական բարձր գաղափարների է դավանել: Նա կոչ էր անում անվերջ ինքնակատարելության, աղքատ կամ հարուստ հիվանդների նկատմամբ հավասար վերաբերմունքի: Ֆաթիի սուլթան Մեհմեդի պալատական բժշկի «Անգիտաց անպետն» իրենից ներկայացնում է հնգալեզու բառարան՝ այդ թվում հայաստան թուրքերեն⁹⁴: Ամասիացու ստեղծած ավանդույթները հաջողությամբ շարունակվել են հայ այլ գիտնականների կողմից⁹⁵: Նրան փոխարինած սերնդի գիտնականների կողմից ստեղծվել են էմբրիոլոգիային, մարդակազմությանը, առողջապահությանը նվիրված հետաքրքիր գործեր, տեսական աշխատություններ: Մեծ թիվ են կազմում դեղատոմսերի հայաստան թուրքերեն ժողովածուները⁹⁶, բույսերի բուժիչ հատկություններին նվիրված ձեռագրերը⁹⁷:

Հետաքրքրություն է ներկայացնում «Պատմութիւն գիտոյ Ամերիկայի» ձեռագիրը⁹⁸: Այն 1753 թվականին **Հովհաննես Կեսարացին** (18-րդ դ.) Երուսաղեմում հայաստան թուրքերենից թարգմանել է հայերեն՝ Կ.Պոլստ պատրիարք Հակոբ Նալյանի պատվերով:

Գիտություններին վերաբերող ձեռագրերն, ի տարբերություն նմանատիպ հայերեն ձեռագրերի՝ անհամեմատ աղքատ են ոչ միայն քանակով (մոտ 40), այլև ընդգրկման շրջանակներով:

Հանքանյութերի և բույսերի բուժիչ հատկությունների ուսումնասիրությամբ է պայմանավորված եղել արքիմիայի զարգացումը Հայաստանում: Բազմաթիվ արհեստների,

Ս.Նշանի վանուց ի Սեբաստիա: Վիեննա 1961, ձեռ. 228 Յիսուս Որդի Ներսեսի Շնորհալու ոյ» (հայերեն և հայաստան թուրքերեն կրոնական տաղեր): Երկլեզվյան՝ հայերեն և հայաստան թուրքերեն տեքստերը հիմնականում թարգմանություններ են՝ կատարված լատիներենից, իտալերենից, արաբերենից:

93 Անդ, ձեռ. 9711.

94 Մատենադարան, ձեռ. 8048

95 Անդ, ձեռ. 1129, 5538, 8048, 8099, 9504, 10012.

96 Հակոբ Անապյանի «Մատենադարանի հայաստան թուրքերեն չորս բժշկարանների մասին» մի հոդվածը արաբերենից ու իտալերենից թարգմանված բժշկարաններին է նվիրված (Ստամբուլ, «Շողակաթ» հանդես, 1977, էջ 100-108). Տես նաև՝ Մատենադարանի 9711 ձեռագիրը (18-րդ դ.) , որը բաղկացած է թերապիային ու դիագնոստիկային նվիրված 3 մասերից:

97 Մատենադարան, ձեռ. 459, 4026, 8102, 9559, 9583, 9665, 9711, 9878, 10244, 10346, 10347.

98 Բամայուքեան Գ. , Յովհաննես Պատրիարք Կողոտ եւ իր աշակերտները, Ստամբուլ, 1984, էջ 162. և Ն.Եպս. Պողարեան, Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց. Երուսաղեմ, 1966. ձեռ. 14.

մետաղամշակման զարգացման ասպարեզում եղած հաջողություններն իրենց արտահայտություն են գտել ու արձանագրվել հայատառ թուրքերեն ձեռագրերում: Հայատառ թուրքերեն ձեռագրերում տեղ գտած թանաք պատրաստելու մասին արձանագրությունները⁹⁹, բույսերից, կենդանիներից, միջատներից բազմազույն բարձրորակ ներկեր պատրաստելու մասին նյութերը¹⁰⁰ մեծապես նպաստել են գորգագործական ավանդույթների լավագույնս շարունակելուն:

17-րդ դարից սկսած հանդիպում ենք քիմիային¹⁰¹, թվաբանությանը¹⁰², աստղաբաշխությանը¹⁰³, գյուղատնտեսությանը¹⁰⁴ նվիրված ձեռագրեր: Թուրքիայի, մասնավորապես Կ.Պոլսի սոցիալ-տնտեսական կյանքի ուսումնասիրման համար բացառիկ հետաքրքրություն են ներկայացնում Կ.Պոլսի մաքսատան ասկացույցները¹⁰⁵:

Պատմությանը վերաբերող հայատառ թուրքերեն ձեռագրերի թիվը մոտ 20 է: Դրանցից համարյա բոլորը հետագայում հրատարակվել են: Կարելի է հիշատակել Քյաթիպ Չելեպիի աշխատությունը¹⁰⁶, «Պատմութիւն Աղեքսանդր Մակեդոնացոյ»¹⁰⁷, «Պատմութիւն Նաղիր շահին»¹⁰⁸, «Պատմութիւն Լուծֆիկ թագաւորին»¹⁰⁹, «Պատմութիւն Օսմանեան թագաւորաց», «Գուշակութիւն Օսմանցոց թագաւորի վէզիր Բաղիպ փաշայի»¹¹⁰, «Պատմութիւն Փոնցիանոսի»¹¹¹: Այս «Պատմութիւն»-ների մեծ մասը փաստորեն հարևան երկրների պատմություններ են:

Պատմական որոշակի հատաքրքրություն է ներկայացնում չորս հայ հեղինակների կողմից Սուլթան Մեհմեդ երկրորդին (որը հայտնի է եղել իր համեմատաբար հայանպաստ քաղաքականությամբ) նվիրված հայատառ թուրքերեն չափածո 4 ներբողների հրատարակությունը Գ.Բամպուքճյանի կողմից¹¹²:

99 Ա Մատենադարան ձեռ. 459, 1387.

100 Անդ, ձեռ. 9677.

101 Անդ, ձեռ. 131, 6463, 10183.

102 Անդ, ձեռ. 524.

103 Անդ, ձեռ. 6420, 9713.

104 Արտորեից գիր. տես ձեռ. 159 (134 էջ գյուղատնտեսական ամեն տեսակ օգտակար խրատներ՝ նյութերի ցանկով 136-147 էջերում, նաև Թօփճեան Յ. Յուցակ Արմաշի վանքին, Վենետիկ, Ս.Ղազար, 1962.,

105 Անդ, ձեռ. 8015, 8016.

106 17-րդ դարի հայտնի պատմաբան Քյաթիպ Չելեպիի «Թուխֆեթ ուլ քիպար ֆի էսֆար ուլ քիխար» (Շնորհ մեծերին ծովային ճանապարհորդությունների մասին), որը Հովհաննես Կեսարացին 1760 թ. հայատառ թուրքերեն է թարգմանել «դյուրին» կարդալու համար (Երուսաղեմ, ձեռ. 2066, 144 էջ. Տես Գ.Բամպուքճեան, Յովհաննես Պատրիարք Կոլոտ եւ իր աշակերտները, Ստամբուլ, 1984, էջ 161).

107 Մատենադարան, ձեռ. 6891 (Հայատառ թուրքերեն թարգմանությունը կատարել է Երեմիա Չելեպի Քյումուքճյանը).

108 Անդ, ձեռ. 2722. Ամենայն հավանականությամբ 1797 թվականի այս ձեռագիրը պատկանում է 18-րդ դարի մաստենագիր Աբրահամ Կրետացու գրչին: Նա եղել է Էջմիածնի կաթողիկոս (1734-1737թթ), մասնակցել Նաղիր շահի թագադրության հանդեսին, գրել իր ժամանակի պատմությունը, որ մանրամասնորեն նկարագրված են եղել ի թիվս մնացած իրողությունների, նաև Նաղիր շահի թագավորության առաջին տարիների դեպքերը: Կարծում ենք այս ձեռագիրը մատենագրի Նաղիր շահի մասին պատմող հատվածի հայատառ թուրքերեն տարբերակն է:

109 Անդ, ձեռ. 10247.

110 Պողարեան Ն. Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, ձեռ. 14. Մատենադարան, ձեռ. 2864.

111 Խ.Ներսես Վ.Ալիևեան.Յուցակ հայերեն ձեռագրաց Հռոմի հայոց հիւրանոցի ի ս.Վլաս եւ քահանայապետ Լեւոնեան հայ վարժարանի ի Հռոմ. Վիեննա, 1961.ձեռ.35, 1798թ.

112 Kevork Pamukciyan. İkinci Sultan Mahmud' a Dair Ermeni Harflı Dört Manzum Methiye. Ankara

Հայատառ թուրքերեն ձեռագրերում պահպանվել են գործեր, որոնք շարունակում են հայ կրոնադավանաբանական գրականության ավանդույթները: Դրանց հեղինակները հիմնականում իմացել են լեզուներ, գիտակ են եղել ոչ միայն աստվածաբանական գրականության, պատմության, այլև փիլիսոփայությանը, անտիկ գրականությանը, տոմարագիտությանը, բնագիտությանը: Ուստի նրանց աշխատություններում կան բարոյախոսական հետաքրքիր մտածումներ, չափածո նկարագրություններ, ընթերցանության համար հետաքրքրաշարժ նյութեր:

Կաթոլիկություն ընդունած հայերը հեռանում էին իրենց ժողովրդից և ձուլվում: Յայտուն օրինակ է 16-րդ դարի վերջին Նիկոլ Թորոսովիչի կողմից լեհահայության բռնի կաթոլիկացումից հետո այդ հզոր և մեծ գաղութը շատ արագ քայքայվեց՝ մի մասը հեռացավ Լեհաստանից, իսկ մյուս մասը ձուլվեց: Այս երևույթի դեմ պայքարելու համար ստեղծվեց հակակաթոլիկական դավանաբանական գրականությունը հայերեն և հայատառ թուրքերեն լեզուներով: Նրա ուսումնասիրությունը շատ կարևոր է մեր ժողովրդի պատմության և մատենագրության ուսումնասիրության բնագավառում: Արևմտահայ իրականությունում կրոնադավանաբանական ստեղծագործություններն ունեցել են որոշակի քաղաքական նպատակներ և կարևոր տեղ են զբաղեցրել կաթոլիկության ներթափանցման դեմ մղվող պայքարում, ստեղծելով հակակաթոլիկական, պատմա-դավանաբանական գրականություն: Այսպիսի ձեռագրերի թվին են պատկանում Պաղտասար Դպրի «Պատմութիւն Գրիգոր Լուսաւորիչին»¹¹³, «Պատմութիւն Եղիայի Խարբերդացոյ»¹¹⁴, «Վարք եւ պատմութիւն ի Դաշտիկ ծաղկողի գրոց»¹¹⁵, Գրիգոր Դարանադցու (1576-1643) երկը¹¹⁶, «Գիրք պատմութեան ընդդէմ Փափապաշտից»¹¹⁷, ուղերձներ¹¹⁸ տաղեր Երուսաղեմի մասին¹¹⁹ և այլն¹²⁰:

1991. Belleten, cilt LIV4 s. 211. Գ.Բամպուքճյանի բանասիրական ժառանգության անտիպ մնացած աշխատություններից է՝ Աբրահամ Անկյուրացու «Գրավումն Կոստանդնուպոլսոյ» երկի ծանոթագրությունն ու թուրքերեն թարգմանությունը (25 էջ): Այս մասին տես՝ Աբրահամեան Կարօ. «Վաղահաս ու անփոխարինելի կորուստ մը՝ Գեորգ Բամպուքճեան» (1923-1996): Անթիլիաս, «Հասկ», 1995-1996թթ, էջ 659-670.

- 113 Պողարեան Ն. Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց. ձեռ. 14. Մատենադարան, ձեռ. 2864.
 114 Կ.Ներսէս Վ.Ալիևեան.Յուցակ հայերէն ձեռագրաց Հռոմի հայոց հիւրանոցի ի ս.Վլաս եւ քահանայապ. Լեւոնեան հայ վարժարանի ի Հռոմ. Վիեննա, 1961. ձեռ.35, 1798թ.
 115 Անդ, ձեռ. 8049.
 Kevork Pamukciyan. İkinci Sultan Mahmud’ a Dair Ermeni Harflı Dört Manzum Methiye. Ankara 1991. Belleten, cilt LIV4 s. 211. Գ.Բամպուքճյանի բանասիրական ժառանգության անտիպ մնացած աշխատություններից է՝ Աբրահամ Անկյուրացու «Գրավումն Կոստանդնուպոլսոյ» երկի ծանոթագրությունն ու թուրքերեն թարգմանությունը (25 էջ): Այս մասին տես՝ Աբրահամեան Կարօ. «Վաղահաս ու անփոխարինելի կորուստ մը՝ Գեորգ Բամպուքճեան» (1923-1996): Անթիլիաս, «Հասկ», 1995-1996թթ, էջ 659-670:
 116 Անդ, ձեռ. 9704, էջ 1ա-5ա.
 117 Անդ, ձեռ. 1911.
 118 Անդ, ձեռ. 4494
 119 Բաբգէն աթոռակից Կաթողիկոս Կիլիսեւրեան. Յուցակ ձեռագրաց Ղալաթիոյ ազգային մատենադարանին հայոց. Անթիլիաս, 1961. ձեռ. 265 և 229.
 120 Երևանի Ե.Չարենցի գրականության և արվեստի թանգարանի Թորոս Ազատյանի ֆոնդում է գտնվում Նարեկի հայատառ թուրքերեն թարգմանության ձեռագիրը, որ կատարել է Պետրոս Քյուլալյանը 1904 թվականին: Թարգմանությունը կատարել է «Մանգումէի Էֆքեար» թերթի վերջին, հայերեն շրջանի խմբագրապետ Քասիմի (Միսակ Գոչումյանի) աշխարհաբար թարգմանությունից: Այն 538 էջ է կազմում:

Երկլեզվյա ձեռագրերի մեջ հետաքրքրություն է ներկայացնում «Տաղ վասն Թումայի վարդապետի Կոստանդնուպոլիսի պատրիարքի, որ ետուն սպանանել» պատմական տաղը, որը գրվել է 1657թ.՝ աթոռակալների միջոցով Կ.Պոլսի պատրիարք **Թումա Հալեպցու** սպանության առիթով¹²¹: Տաղն անանուն է, գրված առաջին դեմքով՝ Թումայի անունից և նման բնույթի հայատառ թուրքերեն մեզ հայտնի միակ գործն է: Պատրիարքը արևմտահայության հոգևոր առաջնորդն էր և քաղաքական իշխանություն ուներ, ուստի պատրիարքի աթոռի համար միշտ էլ պայքար է մղվել: Թումա վարդապետի սպանությունն օրինակ է այս պայքարի:

Արևմտահայ պատմագրության մեջ կարևոր տեղ են զբաղեցնում այն ստեղծագործությունները, որոնք նվիրված են հայկական եկեղեցիների պատմությանը: Քաղաքներում, մանավանդ Կ.Պոլսում, հայերի կյանքը համախմբված էր հայկական եկեղեցիների շուրջը: Բազմաթիվ են եկեղեցիների ավերման, հրդեհման ու վերակառուցման մասին տեղեկությունները: Այս տեսակետից որոշակի հետաքրքրություն է ներկայացնում Գրիգոր Դարանաղցու (1576-1643) «Պատմութիւն յաղագս առնելոյն տաճկաց զսուրբ Նիկողայոս եկեղեցին ի ձեռացս հայոց եւ տալոյն զկնի միոյ տարւոյ զՍուրբ Հրեշտակապետ եկեղեցին փոխանակ նորին» (էջ 5բ-10բ) և «Պատմութիւն յայլմէ վասն նոյն սուրբ եկեղեցւոյն, Գրիգոր վարդապետ կոչեցեալն Պարօնտէր, որ երբեմն էր պատրիարգ սրբոյ Երուսաղէմի յամի տեառն 1631: Նա զամենայն անցան իւր եւ գոր ինչ ետես վասն Պալատու Սուրբ Հրեշտակապետ եկեղեցւոյն գրեաց այսպէս»: Առաջին գործում պատմվում է 1622թ. հրդեհվելուց հետո ս.Հրեշտակապետի եկեղեցու վերակառուցման մասին: Երկրորդ պատմությունը, որ վերագրվում է նույն Գրիգոր Դարանաղցուն, գրված է, թե ինչպես թուրքերը խաբեությամբ հայերից վերցրին ս.Նիկողայոս եկեղեցին ու դարձրին մզկիթ: Այնուհետև թուրքերը հույներից վերցրին մի եկեղեցի ու մզկիթի վերածվածի փոխարեն՝ տվեցին հայերին: Պոլսահայության 15-18 դարերի մատենագետ, գրականագետ Արմեն Տեր Ստեփանյանը մի շարք փաստարկներով մերժում է Գրիգոր վարդապետ կոչեցեալն Պարօնտէրի հեղինակ լինելը և կարծում, որ հեղինակը կարող է լինել Գրիգոր Դարանաղցին¹²²:

Հայտնի են դեպքեր, երբ սուլթանական պալատը կանխամտածված գժտություն է սերմանել կայսրության քրիստոնյա ժողովուրդների միջև: Դրա առիթները սովորաբար հանդիսացել են մի ժողովրդի եկեղեցու կամ վանքի տալը մյուս ժողովրդին: Այս քաղաքականության նպատակը մի կողմից՝ հնարավորին չափ շատ եկեղեցիներ վերցնելն էր քրիստոնյաների ձեռքից և մյուս կողմից՝ լարելով այս ժողովուրդներին միմյանց դեմ՝ թույլ չտալ, որ նրանք երբևէ միավորվեին սուլթանական պալատի դեմ:

Հայատառ թուրքերեն ձեռագրերից հիշատակենք նաև մ.թ.ա. 7-րդ դարում, ասորաբաբելական միջավայրում ստեղծված հազվագյուտ, հմայիչ գրական եզակի մի հուշարձանի՝ «Խիկարի գրույց»-ի հայատառ թուրքերեն տարբերակի առկայությունը: Հայա-

121 Մատենադարան, ձեռ.7717, էջ 128-129բ. Այն առաջին անգամ հրատարակվել է մեր կողմից. թվականին Գ.Ա. Արևելյան աղբյուրագիտություն ժողովածու, Երևան, 1988, էջ 83-98:

122 Մատենադարան, ձեռ.9703 էջ 16ա-16բ և 9704, էջ 5բ-10բ և էջ 1ա-5ա: Տե՛ս Տեր Ստեփանյան Արմեն. Կոստանդնուպոլսի հայ գրականությունը 15-18-րդ դդ: Երևան, 1985, (թեկնածուական դիսերտացիա) էջ 32:

տառ թուրքերեն տարբերակը ստեղծվել է թրքախոս հայերի միջավայրում՝ թարգմանվելով գրույցի հայերեն տարբերակից¹²³:

Երեմիա Չելեպի Քյոմուրճյանի գործերը կարևորագույն աղբյուր են Պոլսի քրիստոնյա, մահմեդական և հայ համայնքների պատմության ուսումնասիրության համար: Դրանք թուրքախոս հայերեն և հայաստան թուրքերեն են, արձակ և չափածո: «Պատմութիւն Տիմօօ» լիբիկական պոեմը Երեմիա Չելեպի Քյոմուրճյանի միակ սիրային պոեմն է¹²⁴: Սա քրիստոնյա Տիմօյի և հրեուհի Մրգատայի սիրո պատմությունն է: Պոեմի ողբերգական վախճանն իր ոճով նման է միջնադարյան ասպետական պոեմներին: Պոեմում շարադրանքը նմանեցված է ժողովրդական երգերին, դրանց կառուցվածքներին¹²⁵:

Հայաստան թուրքերենով մեզ է հասել նաև «Պատմութիւն Փարէզի եւ Վենայի» միջնադարյան ասպետական ամենահայտնի և ամենասիրված ստեղծագործությունը՝ ժամանակին թարգմանված աշխարհի տարբեր լեզուներով: Հայաստան թուրքերենի է թարգմանել Երեմիա Չելեպի Քյոմուրճյանը¹²⁶: Վերջինս հայերենից հայաստան թուրքերենի է թարգմանել «Սաղմոսք Դավթի մարգարեի»-ն (1692թ)¹²⁷, «Քիթաբ Հիքայեի Ջհանգիր Իսքենդեր գուլբարնեյն»¹²⁸, Ավետարանը¹²⁹: Հայաստան թուրքերենով Երեմիա Չելեպի Քյոմուրճյանը թողել է Քարոզգիրք¹³⁰, Համառոտ Հայսմավորք¹³¹, «Կտակ խաչելութեան Հիսուսի Քրիստոսի» (հայերեն և հայաստան թուրքերեն)¹³², «Պատմութիւն Հայոց»¹³³ և

- 123 «Պատմութիւն եւ խրատք Խիկարայ Իմաստնոյ, գիրք Ա. » (գիտական հրատարակությունը Ա.Մարտիրոսյանի), Երևան, 1969, էջ 303-325 «Ալիմ Խիկարն սոյլատիկի նասիհաթ» (գտնվում է Զմմառի վանքում, ձեռ. 413):
- 124 Մատենադարան, ձեռ. 1456. էջ 3ա-25ա: Տես նաև Սահակյան Համիկ, Երեմիա Չելեպի Քյոմուրճյանի անտիպ մի պոեմի մասին, Երևան, Բանբեր Մատենադարանի, 1962, հ.6, էջ 409-427:
- 125 Երեմիա Չելեպի Քյոմուրճյանը և Ղազար Սեբաստացին 16-17դդ. պոլսահայ գրականության մեջ սիրո թեմայով ստեղծագործած եզակի հեղինակներն են:
- 126 Մատենադարան, ձեռ. 1456. էջ 3ա-25ա:
- 127 Մատենադարան, ձեռ. 9700: Այն հետագայում հրատարակվել է հայաստան թուրքերեն. Ս. Ղազար, 1962., ձեռ. 94 Յովհաննէս Վ. Սեբաստացի «Քարոզգիրք» (1831թ.)
- 128 1692թ. ծագումով կեսարացի հայ հանրահայտ ճարտարապետ Սինանի պատվերով է պատրաստվել: Երկու ձեռագրերն է Մատենադարանում են՝ 1644 և 1645: 1645 կրկնօրինակը 1715թ. Հիշատակարանով մաքուր օրինակը Վիեննայում է՝ ձեռ. 988, 101ա էջ: 113. Երուսաղեմ, ձեռ. 988, էջ 6ա-178ա: Թարգմանության թվականն անհայտ է
- 129 Չամչեան Մ., Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1786, հ.3, էջ 723
- 130 Վիեննայի Մխիթարյան միաբանության մատենադարան, ձեռ. 408: Չեռագիրը մինչև օրս թվում է, թե գիտնականների ուշադրությունից վրիպել է: Մասամբ հայերեն է, մասամբ՝ հայաստան թուրքերեն: 1679թ. էջմիածնում կրկնօրինակվել է Երեմիա Չելեպի Քյոմուրճյանի «միաբան Գրիգորիս որդու կողմից»: Այն 116 էջ է կազմել: Անունը հիշատակվում է որպես՝ Բյուզանդացի Երեմիա:
- 131 Երուսաղեմ, ձեռ. 1076, 139էջ: Պատրաստվել է էջմիածնում 1685թ.:
- 132 Հայերեն և հայաստան թուրքերեն փոքրիկ գրքույկ, Վիեննա Մխիթ. ձեռ. 408. 94ա-115բ (21)էջ: Թվագրված է 1679թ.: Երուսաղեմ, ձեռ. 1076, 139էջ: Պատրաստվել է էջմիածնում 1685թ.:
- Հայերեն և հայաստան թուրքերեն փոքրիկ գրքույկ, Վիեննա Մխիթ. ձեռ. 408. 94ա-115բ (21)էջ: Թվագրված է 1679թ.:
- 133 Չամչեան Մ., Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1786, հ.3, էջ 723. Այն որպես դասագիրք է ծառայել: Այս երկի հեղինակի կողմից հայաստան թուրքերենի քննագիրը մեզ չի հասել: Անվանի գիտնական Արամ Տեր Աստուխանն իր «Երեմիա Չելեպին որպես Մունաջջիմ Բաշիի աղբյուրներից մեկը» հոդվածում (էջ 143-150) գրում է, որ Մունաջջիմ Բաշին «Ձամի աղ-դուվալ» (Տիեզերական պատմություն) գործի հայոց պատմության հատվածը հավանաբար շարադրված է ըստ Քյոմուրճյանի «Հայոց պատմության»:

Մովսես Խորենացու «Պատմութիւնը»՝ համառոտ¹³⁴: Վերջին երկու գործերն ամենայն հավանականությամբ թուրքական շրջանների պատվերով է կատարվել:

Քյոմուրճյանի «Ստամպուլայ պատմութիւնը» ինչպես նաև «Տարեգրական պատմութիւնը» իր ժամանակին մեծ ճանաչման են արժանացել: Սա անհատնում աղբյուր է քաղաքին հասած բնական աղետների (հատկապես հրդեհների), յուրաքանչյուր թաղի (մասնավորապես հայաբնակ), նրա հայության պատմության, եկեղեցիների, սովորույթների, կենցաղի, զբաղումների, առևտրի և այլնի մասին: Նրա նմանողությամբ նոր գործեր են ստեղծվել՝ **Ղուկաս Ինճիճյանի** չափածո «Ամարանոց Բիզանդեանը» (1794թ.), 1800թ. **Սարգիս Սարաֆ Հովհաննիսյանի** «Պատմութիւն Բուֆորի»: Այս հեղինակի Երուսաղեմի սրբոց Հակոբեանց վանքի մատենադարանում պահվող գործերը հիմնականում հրատարակվել են Երուսաղեմի պատրիարքարանի կողմից¹³⁵: Սովորաբար հայատառ թուրքերեն ձեռագրերում հանդիպում ենք հայերեն գրված մասերի: Դրանք երբեմն հայատառ թուրքերեն բնագրի թարգմանություններն են, երբեմն՝ ուղղակի հայատառ թուրքերենն ընդմիջվում է հայերենով: Հաճախ հայերեն հատվածներն արտահայտում են նախորդ՝ հայատառ թուրքերեն հատվածների համառոտ բովանդակությունը: Եթե ձեռագիրը երկլեզվյա է, հաճախ մեկ թերթի վրա տրվում են միանգամից երկու զուգահեռները, ինչպես հանդիպում ենք ավետարաններում¹³⁶, քարոզներում¹³⁷:

15-17դդ. պոլսահայ մատենագրությունը հիմնականում պայմանավորված է եղել առանձին հեղինակների գոյությամբ, իսկ 18-րդ դ. Հովհաննես Կոլոտ Պոլսո պատրիարքի շնորհիվ ստեղծվում է արդեն գրական դպրոց և պայմանավորված է եղել **Գրիգոր Դարանաղցու, Երեմիա Քյոմուրճյանի, Հովհաննես Կոլոտի, Հակոբ Նալյանի, Գևորգ Մլալայիմի և Պաղտասար Դպրի, Ղուկաս Խարբերդցու, Գևորգ Պալատեցու, Մելքիսեդեք Պոլսեցու** և մյուսների գործունեությամբ:

Ինչպես նշվեց, հայատառ թուրքերեն ձեռագիր գրականությունը մինչ օրս արժանի անհրաժեշտ ուշադրության չի արժանացել ուսումնասիրողների կողմից: Որպեսզի ընդհանուր պատկերացում կազմվի այս գրականության մասին, հարկ է ձեռնարկել այս ձեռագրերի գիտական, քննական ուսումնասիրության և հրատարակության կազմակերպումը: Հայատառ թուրքերեն ձեռագրերի հրատարակությունները, բնագրերի քննական ուսումնասիրությունները հետաքրքիր արժեքների ու բացահայտումների, այս հարուստ ու եզակի ժառանգության վերագնահատումների առիթ կտան:



134 Չամչեան Մ., Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1786, հ.3, էջ 723. Քյոմուրճյանին է պատկանում հավանաբար «Տետրակս այս, որ կոչի Սապէթայ» հայերեն և հայատառ թուրքերեն չափածո 34 էջ կազմող պարսավագիրը ոմն հրեա Սապէթի հասցեին (ս. Ղազար ձեռ. 1059):

135 Pamukciyan K. Eremya Çelebi Kömürçyan. "Tarih vr Tpolum", 1988, N 544-26-29s.

136 Մատենադարան, ձեռ.7044. տես նաև՝ Թօփճեան Յ. Յուցակ Արմաշի վանքին, Վենետիկ, Ս. Ղազար, 1962., ձեռ. 94, Յովհաննէս Վ. Մեքաստացի «Քարոզգիրք» (1831թ.).

137 Մատենադարան, ձեռ. 5047.

Գլուխ Գ

Հայաստան թուրքերեն գրահրատարակչության սկզբնավորումը

Նոր շրջանի պատմության սահմանագծին Օսմանյան կայսրությունը գտնվում էր սոցիալ-տնտեսական, քաղաքական խոր անկման վիճակում: Երկրի տնտեսությունը ճգնաժամային վիճակում էր գտնվում: Գավառներում, ինչպես նաև քաղաքներում բնակվողների համար կործանիչ հարկերը իսկական արհավիրք էին դարձել: Կայսրության հպատակ ժողովուրդների ազգային ազատագրական պայքարը, պատերազմները ավելի էին խորացրել Բարձր Դռան տնտեսական ծանր վիճակը: Այն չունեի անհրաժեշտ հուսալի բանակ ո՛չ պատերազմի դեպքում, և ո՛չ էլ ներքին վտանգը հեռացնելու համար: 18-րդ դարի 70-ական թվականներին ծագեց միջազգային խնդիր հանդիսացող «արևելյան հարցը»: Նրա առաջանալը կապված էր Օսմանյան կայսրության անկման, հպատակ ժողովուրդների ազգային ազատագրական շարժումների թափի ու եվրոպական պետությունների միջև հակասությունների ուժեղացման հետ՝ Մերձավոր Արևելքում գաղութարարության զարգացման խնդրի հետ պայմանավորված:

Թուրքիայի դրությունն այն աստիճան ճգնաժամային էր, որ նույնիսկ ֆեոդալական բյուրոկրատիայի վերնախավի ամենախոշոր ներկայացուցիչներն անգամ հասկացան, թե անհրաժեշտ է անհապաղ ելք փնտրել ստեղծված իրավիճակից: Սակայն ամենաանձան բարեփոխումներ անցկացնելու փորձերն իսկ հանդիպում էին կայսրության ֆեոդալական ու կղերական հետադիմական շրջանակների վճռական դիմադրությանը: Ուլեմները¹³⁸ շարունակում էին մեծ ուժ ներկայացնել: «Նիզամի ջեդիդ» բարեփոխումները, որի անցկացման էր ձեռնարկել դեռևս սուլթան **Սելիմ 3-րդը**, հիմնականում վերաբերում էին կայսրության զինվորական, ադմինիստրատիվ և մշակութային կյանքում փոփոխություններ կատարելուն: Բացվեցին առաջին աշխարհիկ, մասնագիտացված, զինվորական դպրոցները: Տասնամյակներ անց այս դպրոցների շրջանավարտների մի մասը կանգնելով թուրք առաջադեմ մտավորականության դիրքերում, սկսեց պայքարել հանուն երկրում եվրոպականացման, լուսավորական շարժման, բուրժուական վերափոխումների:

Օսմանյան կայսրության համար դժվարին ժամանակներում, հպատակ ժողովուրդների շրջանում պրոպագանդիստական մեծ աշխատանքի էին լծվել եվրոպական երկրների միախոնդերական կազմակերպությունները: Միախոնդերական տարբեր եկեղեցիների, միաբանությունների, ուխտերի ու կազմակերպությունների միջև երկպառակությունն իրենից ներկայացնում էր պայքար՝ հանուն գաղութների: Օսմանյան կայսրության տարածքում եվրոպական տերությունների ազդեցության պայքարի արտահայտություններից էր մասնավորապես կաթոլիկ եկեղեցու տարբեր ուխտերի գործունեությունը:

138 Ուլեմները (արաբերեն ուլեմա բառից, նշանակում է մուսուլմանական իրավունքի գիտակ մուսուլմանական բարձրաստիճան կղերականների խավ էր:

Կաթոլիկության տարածումը հայ ժողովրդի շրջանում՝ կործանարար հետևանքներ ունեցավ: Հայ կաթոլիկները հեռացան իրենց ժողովրդից, եկեղեցուց և շատ արագ ու դյուրին հակվեցին դեպի ուժացումը: Դրա վատ ապացույցներից է հանդիսանում Լեհաստանի հայ գաղութի ճակատագիրը¹³⁹: 16-րդ դարում այն բռնի կերպով ընդունել էր կաթոլիկություն և շատ շուտով այս հսկա ու հարստագույն հայկական գաղութն անկում ապրեց, ասիմիլացվեց:

Հայ գրականության հետ մեկտեղ հայատառ թուրքերեն գրականությունը ևս, մասնավորապես նրա կրոնադավանաբանական հրատարակությունները՝ պայքարի կոչվեցին ընդդեմ Հռոմի պառակտիչ քաղաքականության:

Առաջին հերթին Հռոմի դեմ մղվող պայքարում ոտքի ելան հայ եկեղեցական ու քաղաքական գործիչները: Այս պայքարը ղեկավարում էին Կ.Պոլսի հայ պատրիարքները: Դրանցից առաջիններից է եղել ականավոր եկեղեցական ու մշակութային գործիչ, 1715-1741 թվականներին Կ.Պոլսի հայ պատրիարք Հովհաննես Կոլոտ Բաղիչեցին (1678-1741): Վատիկանի վարած քաղաքականության դեմ Հովհաննես Կոլոտի հետևությունները հանգում էին հետևյալին: Այն է՝ հայերի բաժանումը մայր եկեղեցուց դատապարտելի է, արժանի պախարակման և համարվում է ուխտադրություն և ազգուրացություն: Ըստ պատրիարքի, հետապնդումները չպետք է կատարվեին որպես պատասխան գործողություններ: Այդ կհանգեցներ ուրացողների թվի մեծացման: Անհրաժեշտ էր չափավոր գործողություններ և համոզումներ:

Հովհաննես Կոլոտը ուշադրություն էր հրավիրում այն հանգամանքների վրա, որ գործում էին ի շահ կաթոլիկների: Այն է՝ հայ հոգևորականների զարգացման անբավարար մակարդակը և ընդհակառակը՝ կաթոլիկ միսիոներների ուսյալ ու կրթյալ լինելը: Վերջիններս այս հատկությունների շնորհիվ կարողանում էին հասնել իրենց նպատակին՝ նույնիսկ առանց հիվանդագին կերպով ակնհայտ վիրավորելու կրոնի հիմնական սկզբունքները: Այս երևույթին նպաստում էին կաթոլիկ դպրոցներում սովորող հայ երիտասարդների ավելի կրթյալ լինելը, եվրոպական երկրներից բերված անհրաժեշտ գրականությունը, Արևմուտքի կաթոլիկ երկրների դեսպանների կողմից թրքահպատակ հայերի տարբեր հարցում նրանց միջամտությունն ու հովանավորությունը¹⁴⁰:

139 1626 թվականից մինչև իր կյանքի վերջը, հայ ունիատական (եկեղեցիների միացման կողմնակից) եպիսկոպոս Նիկողայ Թորոսովիչը (1604-1681) Լվով քաղաքում բռնի կաթոլիկացման է ենթարկել լեհահայերի հարուստ գաղութը: Լեհաստանաբնակ հայազգի պատմաբան Սադոկ Բարոնչը (Պարոնյան, 1814-1892) լեհերեն գրված իր աշխատություններում լուսաբանել է մի շարք քաղաքների ու հայերով բնակեցված Լեհաստանի ու Ռուրաինայի մոտ 40 վայրերի պատմությունը: Նա կազմել է Լեհաստանի ականավոր հայերի կենսագրական բառարան: Տես՝ Վահե Երկանյան, Հայ մշակույթը 1800-1917թթ., երևան, 1985, էջ 90.

140 Հովհաննես Կոլոտի և հայ կաթոլիկների, ընդհանրապես նաև կաթոլիկների միջև փոխհարաբերությունների մասին, հետաքրքիր նյութեր են պարունակվում հայ պատմաբան, պետական գործիչ Հովհաննես Չելեպի Սեղբոսյանի (1727-1811) «Օսմանյան կայսրության տիրապետության տակ գտնվող հայ ժողովրդի կրոնի և բարոյական նկարագրի մասին. Պատմական հիշողությունների ժամանակագրական համառոտ ժողովածու» աշխատությունն իտալերեն լեզվով Seghpossian) Marghese Giovanni de «Compendio storico di memoire cronologighe, Venezia, 1786, tomo III, pp. 236-253».

Գրքի վրա հեղինակի անունը գրված է՝ Մարկեդե Ջիովաննի դի Սեղբոս: Տես նաև՝ Բամպուբենան Գ. Յովհաննես Պատրիարք Կոլոտ. էջ 276, ինչպես նաև ավստրիացի հայտնի արևելագետի գրքում՝ Hammer Joseph /1774-1856/ «Histoire de l' Empire Ottoman», Paris,

Հովհաննես Կոլտտի դիվանագիտական գործունեության արդյունքում հայ կաթոլիկները սկսեցին հաճախել հայ առաքելական եկեղեցի, նյութապես օգնում էին հայկական եկեղեցիների շինարարությանն ու դրանց վերակառուցման աշխատանքներին և այլն: Հանդուրժողականության և դիվանագիտական մի կարևոր քայլ էր երկու եկեղեցիների պատվիրակությունների ու նրանց առաջնորդների փոխադարձ այցելությունները: Այս հանգամանքը բավականին կասեցնում էր կաթոլիկ հայ համայնքի ուժացումը: **Հովհաննես Չելեպի Սեղբոսյանն** այս առթիվ Հովհաննես Կոլտտի գործելակերպը «շատ իմաստուն և խաղաղասեր է» կոչում: Խաղաղությունը ցավոք երկար չի տևում:

Հովհաննես Կոլտտը, որն աշակերտել էր Բաղեշի նշանավոր Ամրդուլու դպրոցի քառնապետ **Վարդան Բաղիշեցուն**, յուրացնելով նաև Գլաձորի ու Տաթևի միջնադարյան համալսարանների ժառանգությունը, շարունակեց իր նախորդների ավանդույթները: Նա միաժամանակ այն կապեց եվրոպական լուսավորական շարժման հետ: Բնականաբար, լինելով հայերի շրջանում կաթոլիկության տարածման հակառակորդ և մնալով հավատարիմ իր սկզբունքներին, Հովհաննես Կոլտտն այնուամենայնիվ կաթոլիկ աշխարհի նկատմամբ ծայրահեղական ընդդիմադրական չէր: Նրա կարծիքով կաթոլիկության դեմ մղված պայքարը շատ ավելի արդյունավետ կլիներ, եթե հայ կղերականությունը, քաղաքական, հասարակական և մշակութային գործիչները ծանոթ լինեին կաթոլիկների գաղափարախոսական ու աստվածաբանական գրականությանը: Բնականաբար, ընդունելով եվրոպական քաղաքակրթության մվաճումները, նա ձգտում էր դրան հաղորդակից դարձնել հայերին իր հիմնած թարգմանական դպրոցի միջոցով: Նրա նախաձեռնությամբ թարգմանվում են **Հոմերոսի, Արիստոտելի, Նյուտոնի** և փիլիսոփա այլ հեղինակների ու գիտնականների գործերը հունարենից, լատիներենից, իտալերենից, ֆրանսերենից և այլ լեզուներից: Ըստ Հովհաննես Կոլտտի, բազմակողմանի գիտելիքների տարածումը ժողովրդի շրջանում կարող էր հիմք ստեղծել նոր գիտության, գրականության զարգացման համար: Կաթոլիկության ներթափանցման դեմ պայքարի հաջողության համար անհրաժեշտ էր պատրաստել զարգացած աստվածաբանների և հասարակական գործիչների մի սերունդ, որն իրազեկ կլիներ հայ և կաթոլիկ դավանաբանական գրականությանը, եվրոպական մշակույթին: Նման կրթությամբ միայն հնարավոր կլիներ դիմադրել կաթոլիկ քարոզիչների պրոպագանդային: Այդ իսկ պատճառով այս շրջանի թարգմանական գրականությունն աչքի է ընկնում բովանդակային բազմազանությամբ: Հովհաննես Կոլտտը սկսեց հաջողությամբ իրականացնել իր առջև դրված նպատակը: Նրա հետաքրքրությունների և ուշադրության կենտրոնում էր պատմությունը, պատմադավանաբանական գրականությունը, բնագիտությունը, աշխարհագրությունը, փիլիսոփայությունը, գեղարվեստական գրականությունը¹⁴¹:

Մյուս կողմից անհրաժեշտ էր ազգային, պատմական հերոսների միջոցով հայրենասիրություն ներարկել ժողովրդին, ոգևորել նրանց: Այդ հերոսներն էին **Մամիկոնյանները, Արտաշեսը, Տիգրանն ու մյուսները: Փառաբանելով Գրիգոր Լուսավորչի, Ներսես Մեծի, Սահակ Պարթևի**, սրբերի շարքն անցած մյուս եկեղեցական գործիչների վարքը՝

1835-1836, tome XIV, pp. 118-119.

141 Տեորակ գունայնութենէ կենցաղոյս, ոտանաւ որեալի հոգելոյս Յակօբ աստուածաբան պատրիարքէ Կոստանդնուպոլսոյ. Կ.Պոլիս, 1805, 48 էջ: Հայերեն և հայաստան թուրքերեն:

անհրաժեշտ էր ամրապնդել ժողովրդի սերը դեպի մայր եկեղեցին: Հովհաննես Կոլոտի պնդմամբ հայոց կաթողիկոսը Էջմիածնից Հռոմի **Բենեդիկտոս 15-րդին** է ուղարկում «Նամակ», ուր պահանջում է, որ նրա ուղարկված քարոզիչները վերջ տան հայ համայնքում հերձվածողության սերմանմանը: Բենեդիկտոս 15-րդի առաջարկված միության գաղափարը հայոց կաթողիկոսն ու պատրիարքը անպատասխան են թողնում¹⁴²: Կաթողիկական քարոզչության ու ներթափանցման դեմ մղված պայքարում ամենահայտնի գործիչներից է եղել Գևորգ Մխլայիմը (1681-1758). Նա ծնվել է Կ.Պոլսում, վեց տարի սովորել (1706-1711թթ) Փարիզի թագավորական ճեմարանում¹⁴³:

Գևորգ Մխլայիմը **Ավետիք Եվդոկացու** անսպասելի մահից հետո Թուրքիա էր վերադարձել 1713 թվականին: Նա բացի հայերենից ու թուրքերենից, տիրապետել է ֆրանսերեն, լատիներեն, հին հունարեն լեզուներին, կատարել թարգմանություններ: Հայ կաթողիկներին նա վերաբերվում էր որպես մուրթյալ եղբայրների և ջանում էր նրանց վերադարձնել մայր եկեղեցու, ժողովրդի գիրկը: Հայատառ թուրքերենով, իր իսկ միջոցներով հրատարակված գործերը Մխլայիմն անվճար բաժանում էր, որպեսզի դրանց ընթերցողներն իսկությանն իրագեկ լինեին: Այս ստեղծագործություններից ամենահայտնին՝ «Ճառ վասն ծննդեան եւ չարչարանաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի» աշխատությունն է, որն ունեցել է ութ տպագրություն¹⁴⁴: 18-րդ դարի առաջին կեսին հայերի շրջանում կաթողիկոսության տարածման ամենաոխիտերիմ գաղափարական թշնամիներից Գևորգ Մխլայիմին զբաղեցնող հիմնական խնդիրներից մեկն է եղել Քրիստոսի միաբնակության հարցը որին մվիրել է դավանաբանական գործերի մի մասը:

Հովհաննես Կոլոտի ժառանգը, նրա գաղափարների ու գործունեության շարու-

142 Յիշատակի ոգեկոչում Վ. Յովհաննես Կոլոտ Բաղիշեցի բազմաշնորհ պատրիարքին հայոց Թուրքիոյ իր ծննդեան երեք հարիւրամեակին առիթով. Իսթանպուլ, 1978. էջ 24-46.

143 Հայ եկեղեցականի Փարիզում գտնվելու, կաթողիկական ճեմարանում սովորելու պատճառներին է մվիրված բանասեր, ձեռագրագետ Արմեն Տեր Ստեփանյանի հոդվածը («Էջմիածին» ամսագիր, 1984, հ.5, էջ 36-44.): Հոդվածի հեղինակը Գևորգ Մխլայիմի փարիզյան գործունեությունը պատահական չի համարում: Այն կապում է Կ.Պոլսի պատրիարք, մատենագիր Ավետիք Եվդոկացու առևանգման փաստի հետ: Ավետիք Եվդոկացին (1657-1711) Արևելքում կաթողիկոսության տարածման ամենամղվեզին ու անդրդվելի հակառակորդներից էր և ժամանակի շեյխուլիսլամի հետ մեկտեղ ուժեղ հալածանքներ է սկսել կաթողիկների դեմ: Պալատական մի հեղաշրջման հետևանքով, երբ սպանվում է աջակից շեյխուլիսլամը, Պատրիարքն առևանգվում է 1703թ. Ստամբուլում ֆրանսիական դեսպան մարկիզ դը Ֆերիոլի կողմից: Նա նախ տարվել է Տեմոս կղզին, ապա Լյուդովիկոս 14-ի հրամանով Բաստիլի բանտը նետվել 1706 թվականին: Կարճ ժամանակ անց Բաստիլի բանտում բանտարկվել է նաև Գևորգ Մխլայիմը: Ինչպես հոդվածագիրն է նկատում՝ հավանաբար Պոլսի պատրիարքի անհաջող փախուստը կազմակերպելու համար: Եվ հայերեն, և ֆրանսերեն լեզուներով ստեղծվել է այս խնդրին վերաբերող հարուստ գրականություն: Որոշ պատմաբաններ Բաստիլում բանտարկված Ավետիք Եվդոկացուն համարել են «Երկաթե դիմակով մարդ» (տես՝ Topin Marius. L'homme au masque de fer; Paris, E. Dentu-Didier et Cie, 1870 և այլն). Թեև այս կարծիքը հերքվել է, սակայն Եվդոկացու նկատմամբ հետաքրքրությունը չի պակասել: Ավելացնենք, որ անհնարին չենք համարում այս վարկածը, քանի որ ֆրանսիական իրականության մեջ «երկաթե դիմակով» մարդկանց թիվը չի սահմանափակվում մեկ տասնյակով: Մոտ տաս «երկաթե դիմակով» բանտարկյալների անուններով ցուցակ է գրված միայն Սեն-Մարգարեթ կղզու բանտի (Կանն քաղաքի դիմացի կղզին) պատի հուշատախտակի վրա:

144 Առաջին տպագրությունը եղել է 1730 թվականին Կ.Պոլսում: Երկրորդ և երրորդ տպագրությունների թվականները մեզ հայտնի չեն: Չորրորդ տպագրությունը՝ 1787թ., հինգերորդը՝ 1793, վեցերորդը՝ 1796, յոթերորդը՝ 1804, ութերորդը՝ 1818 թվականին:

նակողն է եղել իր ամենաշնորհալի աշակերտը՝ Հակոբ Նալյանը (1706-1764), որն իր ժամանակի մեծագույն եկեղեցական մատենագիր ու աստվածաբանն է եղել, հայտնի փիլիսոփա, բարոյախոս¹⁴⁵: Հ.Նալյանը երկու անգամ ընտրվել է Կ.Պոլսի պատրիարք՝ 1741-1749թթ և 1752թ.-մինչև իր մահը՝ 1764 թվականը և կարողացել է մեծ թափ հաղորդել արևմտահայ իրականությունում մշակույթի, կրոնական ու մանկավարժական շարժման զարգացմանը: Նա հանդես է եկել որպես հայտնի աստվածաբան-քարոզիչ, մանկավարժ և բազմաթիվ աշխատությունների հեղինակ, որոնցից 9-ը հրատարակվել են իր կենդանության օրոք, մնացածները՝ հետո, իսկ 15-16 աշխատանքներ անտիպ վիճակում գտնվում են Երևանի Մատենադարանի, Երուսաղեմի ու Կ.Պոլսի պատրիարքարանների, Նոր Ջուղայի ս.Փրկչի վանքի ձեռագրատներում¹⁴⁶: Հակոբ Նալյանի հայաստան թուրքերեն ամենահայտնի աշխատություններից է 616 էջերից բաղկացած «Գիրք կոչեցեալ Ձէն Հոգեւոր»ը: Առաջին անգամ տպագրվել է Կ.Պոլսում 1757 թվականին **Հովհաննես Աստվածատրյանի** տպարանում և ունեցել վեց տպագրություն¹⁴⁷: Գիրքը երեք մասերից է կազմված՝ ա. «Լուծումն առարկութեանց հրէից եւ համաձայնութիւն Աւետարանչաց» (188 էջ): Բ և Գ մասերը հայաստան թուրքերեն են: Բ մասը՝ «Տաճկավար Քրիստոնէական Վարդապետութիւն» (260 էջ): Առաջին և երկրորդ մասերում թուրքերեն գեղեցիկ ու բավականին երկարաշունչ ոտանավորներ կան: Երրորդ մասն է՝ «Հաւաքումն չքնադագոյն պատմութեանց եկեղեցականաց՝ թուրքի բառի» (96 էջ): Գրքի վերջում կա թուրքերեն խրթին բառերի հայերեն ու թուրքերեն բացատրությամբ մի բառարան, հիշատակարան:

Պատրիարք Հակոբ Նալյանը հայտնի է եղել որպես բանաստեղծ, որը ստեղծագործել է հայերեն և թուրքերեն լեզուներով: Թուրքերեն (հայաստան թուրքերեն) բանաստեղծությունների համար օգտագործել է «Նիհատի» մականունը: Նրա բանաստեղծությունները հիմնականում խրատական բնույթ են կրում և հեղինակի «ողբերի» նման ցրված են տարբեր ձեռագրերում: Բանասեր և հրապարակախոս **Աբրահամ Այվազյանի** (1846-1909) տվյալներով, Հ.Նալյանին են պատկանում «Կիլ վէ պիլպիլ» (Վարդ և տխակ), աշխարհի ստեղծման մասին և այլ լիրիկական բանաստեղծություններ: Ըստ բանասեր, հրապարակախոս և գրավաճառ **Պիմեն Չարդարյանի** (1880-1956), իր գրատան հ.136 ձեռագիրը պարունակում է նաև Հ.Նալյանի «Նիհատի» ծածկանվամբ 4 դիվաններ և մեկ «քալէնտէր»¹⁴⁸: Այս բանաստեղծություններից մի քանիսը վերագրվում են այլ հեղինակների և պատրիարք Նալյանի ոչ բոլոր ստեղծագործություններն են ի մի հավաքված:

Հակոբ Նալյան պատրիարքը, աստվածաբան-փիլիսոփան, ազգային ու հոգևոր գործիչը, բանաստեղծը ինչպես հայերեն, այնպես էլ հայաստան թուրքերեն լեզուներով իր ստեղծագործություններում քարոզել է սեր հայրենիքի նկատմամբ, ազնվություն, խոհեմություն՝ հավատքի նկատմամբ, մտավոր ու բարոյական կրթություն: Նա հեղինակ է բա-

145 Հակոբ Նալյանի կյանքի ու գործունեության ուսումնասիրությանն են նվիրվել բազմաթիվ աշխատություններ: Նրա ծննդյան 275-ամյակի առիթով լույս է ընծայվել Գ. Բամպուքճյանի գիտական մենագրությունը՝ «Յակոբ Նալեան պատրիարք, կեանքը, գործերը եւ աշակերտները», որը տպագրվել է 1981 թվականին Ստամբուլում և բաղկացած է 275 էջերից:

146 Անդ, էջ 33-45.

147 Անդ, էջ 129 և Գ. Բամպուքճեան, «Գիրք կոչեցեալ Ձէն Հոգեւոր»: Վեցերորդ տպագրությունը եղել է 1890թ.

148 Բամպուքճեան Գ, «Յակոբ Նալեան պատրիարք, կեանքը, գործերը եւ աշակերտները», էջ 48-49.

րոշախոսական ու աստվածաբանական աշխատությունների, ողբերի, մեկնությունների, ներբողների, տաղերի, քարոզների, նամականու, Նարեկի մեկնության, վարքագրությունների, փիլիսոփայական ասացվածքների, աղոթքների: Հակոբ Նալյանն արևմտահայ մատենագրության մեջ հայտնի է նաև նրանով, որ առաջինն է աշխարհաբար գրական լեզուն օգտագործել: Նրա «Գիրք կոչեցեալ գանձարան ծանուցմանց»-ը (1758թ. 848 էջ) հայ իրականության մեջ առաջին անգամ լինելով 18-րդ դարում գրվում է (64 րդ էջում) կանանց կրթված լինելու անհրաժեշտության մասին: Իզուր չէ, որ **Արշակ Ալպոյաճյանը** կարծում էր, թե Մայր դպրատանը կից իգական վարժարանը կարող է հիմնված լինել հենց Հակոբ Նալյանի կողմից¹⁴⁹: Հակոբ Նալյանի մեկենասությամբ ու նրա պատվերով է թարգմանվել **Նյուտոնի** (1642-1727) «Փիլիսոփայություն և բնաբանություն»ը 1744-1745թթ. **Հակոբ Գպիր ճամճիգատեի** կողմից և գտնվում է Երուսաղեմում, (ծեռ 55): Իր փոխանորդի՝ **Հարություն արք. Պալատեցիի** (+1752) հետ միասին ութ ամսում տքնելով գրի են առել **Սկոթոսի** «Աստուածաբանութիւնը», որի բանավոր թարգմանությունը կատարվել է Խարբերդցի **Ղուկաս վրդ. Գասպարյան-Աբրահամյանի** կողմից¹⁵⁰:

18-րդ դարի հայտնի մանկավարժ, տաղերգու, գիտնական, հրատարակիչ Պաղտասար Գպիրը (1683-1768) հանդիսացել է իր ուսուցչի՝ Հովհաննես Կոլոտի գաղափարների կրողը: Գպրատանը Պաղտասար Գպիրն աշակերտել է նաև Հակոբ Նալյանը: Հովհաննես Կոլոտի, Հակոբ Նալյանի, Ղուկաս Խարբերդցու, Գասպար դպիր Սեբաստացու և ուրիշների թվում, դասավանդել է Գումգաբու տեղափոխված Գպրատանը, եղել դրա ղեկավարը, իր աշակերտների համար կազմել, հեղինակել նամականիներ, բազմաթիվ դասագրքեր, հիմնականում՝ հայերեն լեզվի և քերականության:

Պաղտասար Գպիրը հեղինակն է 1742թ. լույս տեսած հայատառ թուրքերեն «Կրթութիւն քրիստոնէական» գրքի, որը տպագրվել է իր տպարանում: Մինչև 1843 թվականն այն ունեցել է հինգ տպագրություն¹⁵¹: Տիտղոսաթերթում նշված է, որ այս գիրքը պարունակում է քրիստոնէական հավատքին անհրաժեշտ գիտելիքներ և գրված է հայերեն չիմացող քրիստոնյա եղբայրների համար:

Պաղտասար Գպիրի հայատառ թուրքերեն երկրորդ հրատարակված գործը՝ Գրիգոր Լուսավորչի պատմությունն է և հայ ժողովրդի քրիստոնեության ընդունումը: Այն լույս է տեսել հեղինակի մահվանից հետո, 1820 թվականին և ունեցել է վեց տպագրություն: Վեց տպագրություն է ունեցել նույն այս երկի երուսաղեմյան հրատարակությունը, 1867-ից մինչև 1928 թվականը: Այս գիրքը երկար տարիներ ծառայել է որպես դասագիրք՝ ճեմարաններում ու դպրոցներում: Պաղտասար Գպիրը համարվել է իր ժամանակի մատենագրության «մենտորը», հայ իրականության մեջ մնացել որպես մշակութային կյանքի խոշոր դեմք և հրաշալի տաղերգու:

Հին և նոր ուխտի մասին հայ եկեղեցու տեսանկյունից գրված աշխատություններից հիշատակության է արժանի 1815-1823 թվականներին Կ.Պոլսի պատրիարք, հոգևորական գործիչ, մատենագիր **Գրիգորյան Պողոս արք. Աղբանուպոլսեցու** (1763--1853)

149 Ալպոյաճյան Արշակ. Պատմութիւն հայ դպրոցին, հ. Ա, Կահիրե, 1960, էջ 565.

150 Այս մասին տես՝ Գ. Բամպուքճեան, «Յակոբ Նալեան պատրիարք, կեանքը, գործերը եւ աշակերտները», էջ 49: Ձեռագիրը գտնվում է Վալաթայի ազգային մատենադարանում, ծեռ. 3.

151 Տես՝ մեր կազմած «Հայատառ թուրքերեն գրքերի մատենագիտությունը» Ե., 1985 թ.

«Ձանագանութին հինգ դարուց» եռահատոր աշխատությունը: Այն առաջին անգամ տպագրվել է Երուսաղեմում 1838 թվականին, սրբոց Հակոբյանց վանքի տպարանում: Այնուհետև ունեցել է ևս երկու տպագրություն՝ մինչև 1867 թվականը: Երկու տպագրություն է ունեցել (1844 և 1881թթ) գրքում եղած արաբերեն և պարսկերեն բառերի բառարանը՝ բացատրված հայերենով և թուրքերենով: Հետագայում, **Խրիմյան** կաթողիկոսի առաջարկով թարգմանվել է հայերեն: 1857թ. Չմյուռնիայի **Տեսեյան** տպարանում հրատարակվել է Նարեկ:

Հայ եկեղեցու պաշտպանության դիրքերից հրատարակված հայաստան թուրքերեն գրքերը հիմնականում ինքնուրույն գործեր են: Թարգմանական գրքերի թիվն անշահն է: Դա բացատրվում է նրանով, որ գրքերի հեղինակներն այն աշխտիճան ազատ էին տիրապետում թուրքերենին (հայաստան թուրքերենին), որ կարող էին իրենց մտքերն արտահայտել միանգամից հայաստան թուրքերենով: Գալով այս շրջանի գրականությանը, որ ստեղծվեց հայ եկեղեցուն հակառակ թևի կողմից՝ հիմնականում իրենից ներկայացնում էր կաթողիկական դավանանքի պրոպագանդա: Այն չէր նպաստում հայ ժողովրդի ազգային շահերին¹⁵²: Վատիկանի թելադրանքի արդյունք հանդիսացող այս հրատարակությունները ողբերգական հետևանքներ ունեցան հայ ժողովրդի համար, քանի որ պառակտում և խառնակություն էին սերմանում, քարոզում հայ առաքելականների ու հայ կաթողիկոսների միջև: Այն ժամանակաշրջանում, երբ հայ ժողովրդին հանուն իր ազգային անկախության պայքարի և սոցիալական խնդիրների լուծման՝ ամենից շատ էր անհրաժեշտ համախմբումն ու միասնությունը, կաթողիկ քարոզչությունը թշնամություն, անհանդուրժողականություն, ատելություն էր սերմանում հայ ժողովրդի մեջ: Ավելին, գժտություն՝ նույնիսկ հարազատների, եղբայրների, քույրերի, ծնողների ու զավակների միջև, եթե նրանցից մեկն այլ դավանքի էր հետևում: 18-րդ դարի կեսերին Կ.Պոլսում հայերի շրջանում ամենահայտնի կաթողիկ քարոզիչներից է եղել Հիսուսյան ուխտին պատկանող պաղրե **Մոնֆորդը**: Նրա 20-ի չափ գրքույկները հայաստան թուրքերենով հրատարակվել են 1890-ական թվականներին:

Առանց ծանոթանալու այս գրականությանը, դժվար կլինի ըմբռնել այն կատաղի պայքարի իմաստը, որ մղում էին հայ եկեղեցական, քաղաքական գործիչներն ու մտավորականությունը կաթողիկոսության դեմ:

Հայ կաթողիկոսների գրահրատարակչական գործունեությունը կապված է Վենետիկի ս.Ղազար կղզում **Մխիթար Սեբաստացու** (1676-1749) հիմնած Մխիթարյան միաբանության գործունեության հետ: Երիտասարդ հասակում (1693 թ.) կաթողիկ քարոզիչների հետ նրա հանդիպումը ճակատագրական է եղել: Նա ժամանակին ցանկացել է միաբանություն հիմնել Սևանում, զարկ տալ կրթական, մատենագրական աշխատանքին, սակայն հանդիպելով ժամանակի հետադեմ կղերականության դիմադրությանը, հարկադրված է եղել վերադառնալ հայրենի Սեբաստիա, այնտեղից էլ՝ Կ.Պոլիս: Հմայվելով կաթողիկ քարոզիչների կրթության բարձր մակարդակով, նա հայացքը հառելով դեպի կաթողիկ Եվրոպան, ձգտել է այս կերպ հայկական միջավայր բերել եվրոպական

152 Կաթողիկ միսիոներների ներթափանցումը հայկական միջավայր սկսվել է 16-րդ դարից, իսկ բողոքական միսիոներները հայտնվեցին 19-րդ դարի սկզբին:

մշակույթը: 1698 թվականին Կարինի Կարմիր կոչված ս. Աստվածածին վանքին կից նա դպրոց էր բացել, որի հիմքի վրա երագում էր ստեղծել միաբանություն և լուսավորություն տարածել հայ ժողովրդի մեջ: 1701 թվականին, Կ.Պոլսում, կաթոլիկ քարոզիչների օժանդակությամբ Սեբաստացին ստեղծեց է իր 10 անդամներ ունեցող միաբանությունը: Սակայն նրա ծրագրերը կոչված չէին իրականալու Օսմանյան կայսրությունում, քանզի դրա համար չկար անհրաժեշտ սոցիալ-մշակութային պարարտ հող ոչ՝ գավառներում, ոչ՝ էլ Ջմյուռնիայում, անգամ՝ Կ.Պոլսում: Բացի դրանից նրա ծրագրերը բախվում էին հայ եկեղեցականների կատաղի դիմադրությանը: Վերջիններս Մխիթար Սեբաստացու լուսավորական բարի ծրագրերի ետևում տեսնում էին սոսկ հայ եկեղեցու պառակտման վտանգ: Եկեղեցու պառակտումն ըստ հայ կղերականների, կվերաճեր ուժացման և հայ եկեղեցականների իրավունքների նկատմամբ ոտնձգության: Հետապնդվելով հայ եկեղեցու կողմից, միաբանությունը երկար թափառումներից հետո հայտնվեց Իտալիայում, ուր Վատիկանը ճանաչեց նրանց ու աքբահայր Մխիթար Սեբաստացուն¹⁵³: Ի պատասխան ճանաչման, նրանք ստիպված եղան ընդունել բենեդիկտյան ուխտի կանոնադրությունը: Վենետիկի դոժերը 1717թ. նրանց տվեցին ս.Ղազար կղզին, որտեղ և հիմնեցին իրենց միաբանությունը: Մխիթար Սեբաստացին սկսեց հետևողականորեն իրականացնել իր ծրագրերը, պատրաստել կղերականների, որոնք ի վիճակի կլինեին կյանքի կոչելու իր լուսավորական գաղափարները, կրոնական և մշակութային խնդիրները: Մինչ վերջնականապես Ս.Ղազար հաստատվելը, իրենց հրատարակությունները մի քանի տարի նրանք տպագրում էին Վենետիկի տարբեր, մասնավորապես Անտոնի Բորտոլիի տպարանում, ուր կային նաև հայկական մայր տառեր: Ս.Ղազարի տպարանի գոյությունից հետո ևս Բորտոլիի տպարանում շարունակվում էին երբեմն հրատարակվել մխիթարյանների գրքերը: Սկսեցին տպագրվել հայկական ձեռագրերի գիտական, քննական հրատարակություններ, հայ պատմիչների գործեր, համաշխարհային գրականության և փիլիսոփայության հուշարձանների թարգմանություններ: Որպես տուրք Վատիկանի աջակցության՝ հրատարակում էին կաթոլիկ գրականության հիմնական երկերը, երբեմն նաև հայերենի կամ հայատառ թուրքերենի թարգմանում կրոնական գրքեր:

Առաջին հայատառ թուրքերեն գիրքը լույս է տեսել 1727 թվականին, Վենետիկում: Դա Մխիթար Սեբաստացու աշխարհաբարի քերականությունն էր՝ «Դուռն քերականութեան աշխարհաբար լեզուին հայոց, շարադրեցեալ տաճկականաւ լեզուաւ» և նրան հետևող բառարանը: Սա պատահական հրատարակություն չի եղել: Սա մաս է կազմել Մխիթար Սեբաստացու երագանքների: Այն է՝ զարգացնել բոլորին հասկանալի և հեռանկար ունեցող աշխարհաբարը: Օգնել թրքախոս, սակայն հայերեն սովորել տենչացող հայերին, կապել նրանց մայր լեզվին, ու այդ միջոցով մասնակից դարձնել նրանց լուսավորական շարժմանը՝ հանուն ազգային ինքնագիտակցության:

Այսպիսով, Մխիթար Սեբաստացին նպատակ էր հետապնդում արևմտահայերին սովորեցնելու ոչ թե գրաբարը, այլ նոր հայերեն գրական լեզուն՝ աշխարհաբարը: Վերնագիրն անգամ մատնանշում է հեղինակի և նրան հավատարիմ աշակերտների որոշակի

153 Հակառակ, որ հակառակորդ դիրքերում էին, Հովհաննես Կոլտոր գաղտնի աջակցել է նրան փրկվելու հետապնդումներից և հասնել Իտալիա:

ծրագիրը՝ հայրենի մշակույթի համար ուղի հարթել: Մխիթարյան հրատարակությունները թեմատիկ առումով բավականին բազմազան են եղել: 1774 թ. տպագրվել է Մխիթարյան միաբանության անդամ, բանասեր թարգմանիչ **Աթանաս Մերասյանի** «Համառօտ քերականութիւն արարեալ իտալական, հայկական եւ տաճկական լեզուաւ» աշխատությունը, 1792 թ. միաբանության հայրերից բանասեր **Գաբրիել Ավետիքյանի** (1750-1827) «Քերականութիւն թօքսանեան լեզուի. հայերեն գրաբար եւ տաճկերեն բացատրութեամբ»-ը, «Քերականություն գաղղիերենի»-ն՝ Մխիթար Մեծի աշակերտների հեղինակությամբ (1816թ) և այլն: Դասագրքերի և տարբեր լեզուների քերականությունների հրատարակությունը միաբանության հրատարակությունների կարևոր կողմերից է միշտ եղել: Հայաստան թուրքերենով լույս է ընծայվել տաճկական առածները **Սիմոն ճուլարյանի** խմբագրությամբ (1882):

Մխիթարյանների հայաստան թուրքերեն հրատարակությունների որոշակի մասը հայտնի կաթոլիկ հեղինակների, տարբեր ուխտերի հիմնադիրների և առաջնորդների գործերի թարգմանություններն են: 1768 -ից սկսած լույս են տեսել և ապա մի քանի տպագրություններ ունեցել հայտնի ճիզվիտ, աստվածաբան և բանավիճող, Հռոմի կղեզիայի ռեկտոր՝ **Ռոբերտ Բեկարմինի** (1542-1621) «Համառօտ քրիստոնեական վարդապետութիւն» և «Նախապատրաստութիւն երանելի մահվան» գրքերը: Դրանցից առաջինը նախ իտալերենից հայերենի է թարգմանել **Բարսեղ Կեսարացին**, ապա՝ հայերենից հայաստան թուրքերեն է թարգմանել Աթանաս Մերասյանը: Կաթոլիկ ճիզվիտ քարոզիչ, ջատագովական տրակտատների հեղինակ **Պաոլո Սենիերիի** (1624-1694) մեկնությունները, «Ճշմարիտ ապաշխարողը» բազմաթիվ հրատարակություններ են ունեցել: Մեծ թվով տպագրություններ է ունեցել ռեդեմպտորիստների ուխտի հիմնադիր, եպիսկոպոս **Ալֆոնսո-Մարիա դը Լիգուորիի** «Խրատներ հավիտենականության մասին», «Երանելի սուրբ Լիգուորիի պատրաստությունը մահվան և վարքը» գործերը¹⁵⁴:

Բացի թարգմանական գործերից Վենետիկի Մխիթարյանների կողմից հրատարակվել են իրենց իսկ միաբանության հայրերի՝ **Սահակ Սոֆայանի, Իգնատիոս Փափագյանի, Մկրտիչ Ավգերյանի** աստվածաբանական, դավանաբանական երկերը:

1846 թ. ս. Լազարում հրատարակվել է կրոնական-քաղաքական գործիչ **Անտոն Հասունյանի** (1809-1884) հայ կաթոլիկներին ուղղված ուղերձը («Հովվի ուղերձն իր հոտին»): Հասունյանը սովորել էր Հռոմում, «Պրոպագանդա» (Propoganda fidae) դպրոցում: 1847 թվականից Հռոմի պապի միջնորդությամբ կաթոլիկ հայերի կաթողիկոս էր դարձել **Անտոն Պետրոս 9-րդ** անվամբ: Նրա վարած հայերի օտարացման ծայրահեղ քաղաքականությունը դիմադրության մեծ ալիք է բարձրացրել և առիթ դարձել շատ կաթոլիկ հայերի վերադարձին դեպի առաքելական դավանանք, մայր եկեղեցի: Հայ ժողովրդի նկատմամբ նրա վարած պառակտիչ գործունեության դեմ պայքարելու համար ստեղծվել է պայքարի ընդհանուր ճակատ, որին միացել են նաև բազմաթիվ հայտնի կաթոլիկ ազգային գործիչներ, պետական պաշտոնյաներ: Դա 1846 թվականին Կ.Պոլսում հայ մտավորականների կողմից ստեղծված «Համազգային» միությունն էր: Նրանք պայքա-

154 Ինչպես հայտնի է սակրոնականների մի միություն էր, որը կոչված էր կրոնական դաստիարակությամբ զբաղվել աղքատների ու գյուղացիների շրջապատում: Այս ուխտը փաստորեն ճիզվիտների ուխտի փոխարինողն է հանդիսացել:

րում էին ընդհանրապես կաթոլիկ քարոզիչների դեմ, որի պատճառով հետապնդության են ենթարկվել սուլթանական կառավարության կողմից: Պոլսից Հռոմ ետ կանչվելով, նա տպագրել է կրոնա-դավանաբանական, բանավիճային գրքույկներ, «հովվականներ», շրջաբերականներ՝ հիմնականում հայատառ թուրքերեն և դրանց ի պատասխան, նույն հայատառ թուրքերենով գրքույկներ են հրատարակվել հայ առաքելական եկեղեցու գործիչների կողմից: Հասունյանական պայքարը երկար տարիներ եղել է արևմտահայ կյանքի ծանր էջերից, անընդհատ պառակտչական, լարված մթնոլորտ ստեղծելով հայերի շրջանում: Այս տարիների հայատառ թուրքերեն գրականության մաս են կազմում այս պայքարի արտահայտությունները հանդիսացող բազմաթիվ փոքրածավալ հրատարակությունները, հիմնականում իտալերենից թարգմանված հայերեն և հայատառ թուրքերեն: Դրանք տպագրվել են և՛ Իտալիայում, և՛ Կ.Պոլսում: Հասունյանականների դեմ ուղղված հրատարակությունները որպես կանոն «Հասունեան խնդիր» ընդհանուր վերնագիրն են կրում և Հասունյանի ու Հռոմի կողմից պապական պատգամների, պարսավագրերի, ուղերձների պատասխաններն են՝ կազմված հայ առաքելական եկեղեցու կողմնակիցների, ինչպես նաև հայ մտավորականության և «Համազգեաց» միության կողմից: Այս գրությունները Հասունյանի կողմից ծավալված ազգակործան գործունեության քննարկումներն են, նրան դիմակազերծ անելու ճիգեր: Հասունյանական պայքարին Հռոմի պապական գրասենյակից մասնակցել են այդ տարիների բոլոր կրոնական դեմքերը: Անընդհատ հրատարակվել են կաթոլիկ հայերի կանոնադրություններ, պապական շրջաբերականներ, որոնք առնչություն ունեն հայ կաթոլիկ եկեղեցու հետ, «Հասուն պատրիարքին կաթողիկե հայոց տրուած Կայսերական Հրովարտակին հրատարակութեան առթիւ, համայն Հայ կաթողիկե ժողովուրդին ուղղեալ ազդարարութիւն 12 յուլիս 1879»-ի (1879, Կ.Պոլիս, 120 էջ): Տարբեր տարիների նման հրովարտակներ, Հռոմի տարբեր պապերի պաշտոնագրեր՝ ուղղված կաթոլիկ աշխարհին, ինչպես նաև կաթոլիկ հայերի մյուս կաթողիկոսների շրջաբերականներ հարուստ նյութ են պարունակում կաթոլիկ աշխարհի հայերի նկատմամբ ունեցած հավակնությունների շուրջ: Երկար տարիներ Հասունյանի գոյությունը, նրա չմարդդ եռանդը հայերին կաթոլիկ դարձնելու նրա չար գործունեությունը արտացոլվել է հայատառ թուրքերեն գրականության մեջ՝ թողնելով այդ ժամանակվա պատմությունն ուսումնասիրողների համար բավականաչափ նյութ: Հասունյանի ու նրա վարած քաղաքականության մասին ստեղծվել է վիթխարի գրականություն¹⁵⁵:

155 Anhegger Robert . "Osmanli Devleti'nde Hiristyanlar ve iç Tartismalar" ("Tarih ve Toplum", İst. 1987, kasim, s17-20. Ժամանակակից ավստրիացի (ծն. 1911թ.Վիեննայում) թուրքագետ, Ստամբուլի Գ-յոթի անվան ինստիտուտի տնօրեն (1961-1968), երկար տարիներ ի վեր Թուրքիայում ապրող բալկանիստ-թուրքագետի այս ուսումնասիրությունը նվիրված է Օսմանյան կայսրության քրիստոնյա ժողովուրդների կոնֆեսիոնալ խնդիրներին, այդ թվում՝ հույների և հայերի միջև տարբեր առիթներով անհամաձայնությունների ծագմանը, ընդհարումներին: Առանձնակի ուշադրությոթյամբ է դիտված հայ առաքելականների և հայ կաթոլիկների, հույն օրթոդոքսների ու հայ լուսավորչականների միջև գոյություն ունեցող պայքարը, Հռոմի կողմից այդ պայքարը բորբոքելու հարցը: Մյուս հիմնական հարցը, որին անդրադարձել է հեղինակը, դա հայ իրականությունում ամերիկյան միսիոներների գործունեությունն է: Ուսումնասիրված են նաև բուլղարների, հույների շրջանում միսիոներների ունեցած գործունեությունը: Օսմանյան կառավարող շրջանների և կաթոլիկների հարաբերությունների մասին տես՝ Charles A. Frazee.

1899թ. հուլիսի 24-ին **Լեոն 13-րդ** Հռոմի պապի կողմից Կ.Պոլսի կաթոլիկների պատ-
րիարք օժված **Էմմանուելյան Պողոսը** հայաստան թուրքերեն գրականության մեջ
հայտնի է առավելապես որպես աստվածաբանական երկու ծավալուն, լուրջ աշխատու-
թյունների հեղինակ, որ հրատարակվել են դեռևս 1880 թվականին:

Վենետիկի Մխիթարյանների հայաստան թուրքերեն հրատարակությունների բարձր
որակի արդյունք կարելի է համարել պատմական երկերի թարգմանություններն ու հրա-
տարակությունները: Դրանց թվում են՝ անգլիացի հայտնի հեղինակ **Օլիվյե Գոլսմիթի**
(Goldsmith Olivier, 1728-1774) «Հռոմի պատմությունը, Հռոմի հիմնադրումից մինչև
Արևմտյան հռոմեական կայսրության անկումը» 1830թ՝ **Հովհաննես Ասպետ Երեմյանի**
թարգմանությամբ:

1800 թ. լույս է տեսել 18-րդ դարի պատմիչ **Թամպուրի Հարությունի** (Զյուլյուկ Արու-
թին) «Թահմազ Դուլի խանի պատմությունը»¹⁵⁶:

Հայաստան թուրքերեն պատմական հրատարակություններից հետաքրքրություն է
ներկայացնում Վենետիկի Մխիթարյան հայերից հայտնի պատմաբան **Միքայել Չամչ-
յանի** (1738-1823) «Խրախճան պատմութեան հայոց» երկի թուրքախոս հայերի համար
հայաստան թուրքերենով շարադրվածի տպագրությունը 1812 թվականին՝ «Կիլվարի թե-
վարիխ» խորագրով: Ինչպես հայտնի է, այն իրենից ներկայացրել է Վենետիկում 1784-
1786թթ. տպագրված Մ. Չամչյանի եռահատոր «Հայոց պատմության» համառոտ՝ 500
էջից բաղկացած շարադրանքը: Հայ պատմագրության գլուխգործոցներից հանդիսա-
ցող այս երկի համառոտ հայաստան թուրքերենը, որ 3 տպագրություն է ունեցել՝ ուղղված
է եղել թուրքերեն կարդացող շրջանակներին: Այն պիտի օգներ հայ մնալու մայրենին
կորցրած թուրքախոս հայերին՝ հպարտ իրենց պատմությամբ ու հերոսներով: Ս.Լա-
զարում 1818թ. հրատարակվել է **Ներսես Շնորհալու** «Աղօթք Ներսեսի Կլայեցու ոյ»-ն
16 լեզուներով՝ 204 էջ¹⁵⁷: Վենետիկյան գեղարվեստական, փիլիսոփայական գրակա-
նության հայաստան թուրքերեն հրատարակությունները ևս պատահական ընտրության
արդյունք չեն հանդիսացել: Այն, տարբեր ուղղությունների, ինչպես նաև իրենց ժամա-
նակի հայտնի ստեղծագործություններից են եղել: Լույս են ընծայվել իտալացի հայտնի
լիրիկ և դրամատուրգ **Մետաստագիոյի** (1698-1782) «Սրբազան թատերգությունները»:
Հիմնականում աստվածաշնչական թեմաներով այս պիեսները հաճախ են բեմադրվել
եվրոպական բեմերում: Դրանց թեմաներով կոմպոզիտորները երաժշտություն են գրել:
Մետաստագիո է խաղացվել նաև ս. Լազարի դպրոցական բեմում, տոների ժամանակ՝

Catholics and sultans. The church and the Ottoman Empire 1453-1923. New York.1983; Michel Le Febre. Theatre de la Turquie. Paris.1684 s.350:

156 Սա 18-րդ դարի հայաստան թուրքերեն ձեռագրի հրատարակությունն է, որ գտնվում էր Վենետիկում:
Վենետիկյան տպագրությունից հետո այն միանգամից թարգմանվել է ֆրանսերեն: 1941թ.
Երևանում, Մուշեղ Խորխոռունու հայերեն թարգմանությամբ հրատարակվել է Մատենադարանի
գիտական նյութերի ժողովածուի առաջին գրքում: Մեկ տարի անց, 1942թ. Անկարայում Էսադ
Ուրասը (Esad Uras) հրատարակել է լատինատառ թուրքերենով՝ հիմքում ունենալով հայաստան
թուրքերեն հրատարակությունը: Տես՝ Բամպուրճեան Գ. Յակոբ Նալեան Պատրիարք, 1981, էջ 268:
157 Մի քանի լեզուների՝ այդ թվում հայերենի, թարգմանությունները հայերեն տառերով են:
Ազգային գրադարանում գտնվում է Կ.Պոլսի 1874 թվականի մի հրատարակություն, որը Շնորհալու
երկու երգերի տաճկերեն (հայաստան թուրքերեն) թարգմանություններն են: Այն կատարել է
Մահտեսի Գրիգոր վարժապետ Գերձակյանը և 26 էջ է կազմում:

թուրքերեն լեզվով: Մետաստագլոյի 5 ամենահայտնի գործերի հայատառ թուրքերեն թարգմանությունները լույս են տեսել Վենետիկում 1830, 1839, 1859 թվականներին: Թարգմանություններն ամենայն հավանականությամբ կատարվել են միաբանության հայրերի կողմից:

Փիլիսոփայական հայացքները քարոզվում էին քրիստոնեական գրականության տպագրության միջոցով: Այն արվում էր ինչպես առանձին հեղինակների գործերի տպագրությամբ, այնպես էլ ս.Գրքի թեմաներով փոխադրություն-ստեղծագործությունների, կրոնական պատմությունների, խրատների և նույնիսկ կրոնական, փիլիսոփայության քողի տակ արտահայտված կենցաղային խորհուրդների, փոքրիկ պատմությունների մատուցմամբ: Այսպիսի մոտեցումը կրոնական-փիլիսոփայական երկերի նկատմամբ արտահայտվել է միաժամանակ և հայ առաքելական եկեղեցու, և հայ կաթոլիկների հրատարակություններում:

1837 թվականին, ապա նաև՝ 1857 թ. թարգմանվել և հրատարակվել է 1-2-րդ դարերի փռուզիացի ստոիկ փիլիսոփա **Էպիկտետի** աֆորիզմները: Հրատարակիչների ուշադրությունը գրավել էր երևի թե այն հանգամանքը, որ ստոիկների կարծիքով մարդու կյանքն իրենց կամքից կախված չէ, այլ՝ ճակատագրից: Ճակատագիրն անհնար է ճանաչել և մարդկանց կամքից կախված չի: Վերջինիս նկատմամբ վախը կարելի է մեղմել և շրջանցել՝ հառնելով կյանքի բարեսեր հրաշագործությունների ու անմահության մասին մտքերի մեջ, ազատվել կրքերից, չվախենալ դժբախտություններից և մահից: Էպիկտետի շատ թևավոր խոսքեր, ինչպիսիք են՝ «համբերիր և զսպիր», «իշխիր քո կրքերը կամ նրանք կիշխեն քեզ» և այլ աֆորիզմներ, համահունչ են եղել քրիստոնեության այն սկզբունքներին և փիլիսոփայությանը, հաստատել այն քրիստոնեական պատվիրանները, որին իրենց գործունեության ողջ ընթացքում դավանել են մխիթարյան հայրերը:

Սկսած 1816 թվականից, ս.Ղազարի մխիթարյանների կողմից մի քանի տպագրությունների են արժանացել անգլիացի բանաստեղծ, «դամբանական» պոեզիայի հիմնադիր **Էդուարդ Յունգի** (1681-1765) դիդակտիկ երկերը, «Համարձակ մարդն անապատում» և «Բողոք, կամ գիշերային խոհեր կյանքի, մահվան և անմահության մասին» («Բողոք կամ Յունգի փիլիսոփայի գիշերները» վերնագրով) պոեմները: Այս հոռետեսական, մարդուն առօրյա հոգսերից հեռացնող ստեղծագործությունը ներծծված է խորը լիրիզմով և կրքոտ պաթոսով: Այն ուղղված է ոչ այնքան անձին, որքան զգացմունքներին: Այս վերջին հանգամանքն է, որ Յունգի պոեմները դասում է սենտիմենտալիզմի ստեղծագործություններից վեր¹⁵⁸: Յունգն ունեցել է շատ հետևորդներ՝ սկիզբ դնելով «դամբանական» պոեզիային: Նրա զգացմունքների ջատագովությունը, գեղարվեստական անհատականության ու հանճարի մասին հայացքների համակարգը հիմնաքարն են դարձել սենտիմենտալիզմի գրական և դրամատիկական թեորիայի: Յունգը մեծ ազդեցություն է գործել ռուս սենտիմենտալիզմի վրա: Նրա համարյա բոլոր ստեղծագործությունները թարգմանվել են ռուսերեն: Է. Յունգի «Գիշերներ»-ի հրատարակությունը կազմված է եղել երեք գրքերից, որոնք ներառել են 1-9, 10-17 և 18-24 գիշերները: Հայա-

158 Էդուարդ Յունգին մեծ հռչակ է բերել նրա 9 մասերից կազմված կրոնական-դիդակտիկ «Բողոք, կամ գիշերային խոհեր կյանքի, մահվան և անմահության մասին» պոեմը, որն իրենից ներկայացնում է խոհեր կյանքի դժվարությունների և ունայնության, մահվան անխուսափելիության մասին:

տառ թուրքերենով եղել է երեք տպագրություն: Պոեմները բնագրից չէ որ թարգմանվել են: Անգլերենից ֆրանսերեն թարգմանությունը կատարվել է ֆրանսիացի կանոնիկ **Լը Թուրքների** կողմից: Տխողոսաթերթում գրված է, որ ֆրանսերենից հայաստան թուրքերեն է թարգմանել Ստամբուլում Դանիմարկայի (Դանիայի) դեսպանության գլխավոր թարգման **Հովհաննես Երեմյանը**: Բնականաբար այս հրատարակություններն իրենց որոշակի ազդեցությունն են ունեցել ընթերցողների վրա: Նրանք մեծապես ազդել են նաև Մխիթարյանների ուսումնական հաստատություններում կրթություն ստացած երիտասարդների բազմաթիվ սերունդների վրա, որոնցից շատերը դարձան հայ մտավորականության, մշակույթի լավագույն ներկայացուցիչները:

1861թ. լույս է ընծայվել անգլիացի հանրահայտ պոետ լուսավորական կլասիցիզմի ներկայացուցիչ, Է. Յունգի ժամանակակից **Ալեքսանդր Պոպի** «Ճառ յաղագս մարդոյ» երկը: Ալեքսանդր Պոպը (1688-1744), լինելով անտիկ գրականության երկրպագու, իր պոեմում խիստ քննադատության է ենթարկել ժամանակի անգլիական գրականությունը: Պոեմը նախ անգլերենից իտալերենի է թարգմանել Գրեոֆիլո Չմինթոն և հետո միայն իտալերենից հայաստան թուրքերենի է թարգմանել Հովհաննես Երեմյանը: Կարծում ենք այս հրատարակությունները նպատակ են ունեցել ընթերցողներին ծանոթացնել փիլիսոփայական տարբեր հայացքների և գրականության տարբեր ուղղությունների, դրանց գաղափարախոսների ու հիմնադիրների երկերի հետ՝ առանց խորանալու գրականագիտական հարցերում: Ալեքսանդր Պոպի փիլիսոփայական ու էթիկական հայացքները, որ նշանակալի դեր են խաղացել 18-րդ դարի առաջին կեսի լուսավորական գաղափարախոսության հաստատման գործում՝ բնականաբար իրենց կնիքն են թողել հայաստան թուրքերենի ընթերցողների լուսավորական, առաջադիմական հայացքների ձևավորման վրա: Յավոք սրտի նման ստեղծագործություններ քիչ են հրատարակվել, չհաշված հետագա տարիներին տպագրված մի քանի գրքեր ևս: Սրանով էլ հիմնականում սահմանափակվում է հայաստան թուրքերեն փիլիսոփայական գրականության հրատարակումը:

Վենետիկի Մխիթարյանների բոլոր հրատարակություններն աչքի են ընկնում տպագրական մեծ կուլտուրայով: Դրանք սքանչելի թարգմանված են, ուշագրավ նկարագարումներով, փորագրանկարներով (գրավյուրա): Հայաստան թուրքերեն հրատարակությունների մեջ մեծ արժեք են ներկայացնում պատկառելի, մինչ օրս չգերազանցված բազմալեզու բառարանները, դասագրքերը, տարբեր լեզուների քերականությունները: Բոլոր այս գրքերը, ի թիվս մխիթարյանների հայաստան թուրքերեն մի քանի ուրիշ հրատարակությունների՝ ծառայել են լուսավորական շարժմանը, հայերի եվրոպականացմանը, որին ձգտում էր և իր կյանքն էր նվիրաբերել միաբանության հիմնադիր, աբբահայր Մխիթար Սեբաստացին: Նրա մահվանից հետո, ինչպես հայտնի է՝ միաբանությունը պառակտվեց: Սեբաստացու համախոհները, նրա ծրագրին հավատարիմ աշակերտները շարունակում էին համադրել կաթոլիկության քարոզը և հայ մշակույթի զարթոնքին նվիրված իրենց գործունեությունը: Գործունեության այս ձևին դեմ հանդիսացած միաբանության հայրերը՝ հավատարիմ Հռոմի պապին, գտնում էին, որ միաբանության հիմնական նպատակը հայերի շրջանում կաթոլիկության տարածումն է: Նրանց կարծիքով մխիթարյանների հրատարակությունները պետք է ունենային կրոնադավանաբանական

բովանդակություն: Նման մտածելակերպ ունեցողները, բաժանվելով միաբանության մայր հաստատությունից, 1773 թ. Տրիեստում հիմնեցին նոր կենտրոն, որպեսզի կենտրոնացնեն ուշադրությունը բացառապես դավանաբանական գրականության հրատարակության վրա (սկսած 1775 թվականից): Եվ քանի որ քաղաքական ներթափանցումն անհամեմատ ավելի դյուրին էր իրականացնել արդեն մայրենի լեզուն կորցրած թրքախոս հայերի շրջանում, ուստի սկսվեց թրքախոս հայերին հայ առաքելական եկեղեցուց հեռացնելու և նրան դեպի Հռոմի հպատակությանը մղելու հրատարակչական - քարոզչական գործունեությունը:

Կաթոլիկական քարոզչությունը շատ հեռահայաց նպատակներ էր հետապնդում: Այն է՝ կաթոլիկության ազդեցության ամրապնդումն Արևելքում: Այս երևույթի ուսումնասիրությունը բազմաթիվ ու բազմազգ գիտնականների ուշադրության առարկան է եղել դեռևս քարոզչության սկզբից, երբ այս նպատակով Արևելք ուղևորված ճանապարհորդներն իրենց մանրամասն հիշողություններն են հրատարակել: Նման ուսումնասիրություններից է 1909 թվականին Փարիզում հրատարակված **Պոլ Իմբերտի** գիրքը¹⁵⁹: Այն մվիրված է Թուրքիայում ապրող ժողովուրդների, նրանց կրոնական պատկանելությունների ու կաթոլիկության ազդեցության փաստերին: Ողջ Օսմանյան կայսրությունում 4 միլիոն, իսկ Ասիական Թուրքիայում՝ 700 հազար կաթոլիկ էր հաշվվում: Նրանց բացած դպրոցներում սովորում էին տասնյակ հազարավոր երեխաներ, իսկ հիվանդանոցներում բուժվում էր տարեկան 100 հազար մարդ: Գրքում բավականին անդրադարձ կա Վատիկանի կողմից մասնավորապես հայերի շրջանում կաթոլիկության քարոզչության մանրամասներին: Գրքի բազմաթիվ ցուցակներից պարզվում է, որ դպրոցներում, տարբեր ազգերի երեխաների մեջ ամենամեծ թիվը՝ հույներից հետո՝ հայերն էին կազմում: Այնուամենայնիվ հեղինակը խոստովանում է, որ հայերի շրջանում կաթոլիկական քարոզչությունը հարթ չի ընթացել և համարյա ամենուրեք դիմադրության են հանդիպել: Որպես օրինակ բերվում է Չեյթունում կաթոլիկների դեմ դիմադրական բուռն շարժումը: Դպրոցի, կրթության նկատմամբ հայ ժողովրդի գեներտիկ ձգտումն այնուամենայնիվ ճակատագրական հետևանքներ ունեցավ կաթոլիկ դպրոցներում կրթված, հիվանդանոցներում բուժված հայ ընտանիքներին դեպի կաթոլիկությունը մղելու խնդրում: Հեղինակը, ինչպես նաև ավետարանական միսիոներների Մերձավոր Արևելքում քարոզչության ուսումնասիրողները միաբերան պնդում են հայերի՝ գոնե դպրոցների միջոցով սեփական, առաքելական եկեղեցու գրկից հեռանալու համեմատաբար դյուրության մասին: Ընդհակառակը, **քարոզչության բոլոր տեսակները բացարձակ անհաջողություն ապրեցին հրեա բնակչության շրջանում:**

Գալով Տրիեստի Մխիթարյանների հայատառ թուրքերեն հրատարակչական գործունեությանը՝ այն առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում և արժանի է հատուկ ուսումնասիրության: Նկատենք, որ ընթերցողների միջին խավի վրա ազդեցությունն ավելի ուժեղացնելու համար, գործերի հեղինակներն իրենց գրքերում մտցնում էին որոշակի գեղարվեստական արժեք ներկայացնող առակներ, երբեմն փոքրիկ պատմություններ, հետաքրքիր, վիճելի եզրակացություններ: Այս հավելումներն արդյունք էին լեզուների, կրոնի պատմությանը գիտակ, երևույթների տրամաբանությունը քննարկելուն և իրենց

159 Paul Imbert. "La rénovation de l' Empire Ottoman"; Paris; 1909.

հոտին համոզելու ընդունակ կաթոլիկ կղերականության՝ ժողովուրդներին ամեն կերպ դեպի պապականությունը բերելու ձգտման: Երբեմն այս հրատարակություններում հանդիպում ենք գիտական նշանակություն ունեցող փաստաթղթերի հրատարակությունների, պատմական թվականների ճշտումների: Դրանց նպատակն էր ավելի մեծ համոզվածություն հաղորդել տպագրվող կրոնադավանաբանական երկերին: Տրիեստում, սկսած 1781 թվականից հրատարակվել են մոտ 40 հայաստան թուրքերեն գրքեր: Մեզ հայտնի առաջին գիրքը, որը վերահրատարակվել է նաև 1786 և 1797 թվականներին՝ **Տեվեճի օղլու Մահտեփի Սիմոնի որդի պարոն Կարապետ Գաղատացու** «Նոր այբբենարան հանդերձ մեկնութեամբ տաճկական բառից հայկական աշխարհաբառ լեզուաւ եւ կարճառօտ ախորժելի խօսակցութիւնք ինչ տաճկերէն եւ հայերէն» դասագիրքն է¹⁶⁰ :

Վենետիկյն գուգահեռ այստեղ տպագրվել են աղոթագրքեր, քարոզներ, սրբազան պատմություններ, քրիստոնեական կրոնի հիմնական սկզբունքների շարադրանքներ, ցուցումներ և խորհուրդներ քրիստոնյաների համար: Տրիեստում են հրատարակվել միջնադարյան գերմանացի հայտնի միստիկ **Թովմա Գեմբացու**¹⁶¹, հանրահայտ ճիզվիտ աստվածաբան **Ռոբերտ Բեյլարմինի** երկերը¹⁶²: 1783 թ. իտալերենից հայաստան թուրքերեն է թարգմանվել և հրատարակվել **Հովհան Պապի** (Ճիզվիտ Հովհան) «Դժոխք բացեալ, այսինքն խոհեր դժոխքի չարչարանքների մասին» գիրքը, որն ինչպես նշվում է տիտղոսաթերթում, իտալերենից հայաստան թուրքերեն էին թարգմանել Մխիթար Աբբա-յի աշակերտները:

Որպես կանոն, բացի թարգմանական երկերից, հրատարակվել են նաև Տրիեստի Մխիթարյան միաբանության հայրերի ինքնուրույն կրոնադավանաբանական, բարոյախոսական երկերը: Դրանց թվում են վարք սրբոցը, կաթոլիկ եկեղեցականների նահատակությունների մի շարք պատմություններ: Այդ հեղինակներից էր Հռոմի Ուրբանյան դպրոցում կրթություն ստացած **Ստեփան Ավգերյանը** (1776-1821): Հայաստան թուրքերենով նա հրատարակել է ս.Աստվածածնի և կաթոլիկ եկեղեցու հայրերի վարքագրությունները, այդ թվում **Կղեմես** հայրապետի վարքը, **Կոմիտաս վարդապետի** վարքը, մտածական աղոթքներ: Տրիեստում հրատարակված հայաստան թուրքերեն գեղարվես-

160 Այս գրքի միակ հայտնի օրինակը գտնվում է Երևանի Ազգային գրադարանում: Պահպանվել է միայն տիտղոսաթերթը և 11-րդ էջը: Դժբախտաբար անհնարին է այս տպագրությունը համեմատել Վենետիկում հրատարակված Մխիթար Սեբաստացու «Քերականության» հետ, համոզվելու համար թե ի՞նչ տեքստեր են ներառված և արդյո՞ք այն տրամաբանական շարունակությունն է հանդիսանում առաջինի, թե՛ նախադրում է տրիեստյան հետագա հրատարակություններին ծանոթանալու համար: Գրքի երրորդ տպագրությունն ավելի ծավալուն է՝ 71 էջի փոխարեն՝ 104 էջ:

161 Թովմա Գեմբացի (Թոմաս Խամբերեն, ծն. 1380-1471)- ավգուստինյան ուխտի միաբան, կրոնական տրակտատների հեղինակ: Հայաստան թուրքերեն հրատարակվել է նրա ամենահայտնի լատիներեն գրված գործը՝ «Խրատներ, Քրիստոսին նմանվելու մասին»: 3 տպագրություն (1805, 1839, 1897) ունեցած ստվարածավալ այս երկը հայաստան թուրքերեն է թարգմանել Պողոս Անկյուրացի Մարուշյանցը:

162 Ռոբերտ Բեյլարմինը (1542-1621) տոսկանցի կարդինալ, Հռոմի կուրիայի ռեկտոր, հրեական քերականության հեղինակ: Իր երկերով նա բուռն պայքար է ծավալել բողոքականների դեմ: Աբամաս Սերասյանը հայաստան թուրքերեն է թարգմանել Բեյլարմինի «Համառոտ քրիստոնեական վարդապետություն» (1768) և «Երանելի մահվան նախապատրաստություն» (1783) գրքերը, որոնք ունեցել են բազմաթիվ տպագրություններ:

տական գրքերի մասին մենք տեղեկություններ համարյա չունենք¹⁶³: Հարկ է նշել, որ Տրիեստյան կրոնադավանաբանական հրատարակությունները գրված են ժողովրդին հասկանալի լեզվով: Դրանցում առատորեն օգտագործված են հայաբանությունները: Տեքստերում մեջբերված են քրիստոնեության հետ դեռևս դարերի խորքերից եկող բառեր, դարձվածքներ: Այդ գրքերի վերնագրերն անգամ հաճախ պարունակել են ավելի հայերեն՝ քան թուրքերեն բառեր: Օրինակ.՝ «Մտածական աղօթք քիթապը» (Մտածական աղոթքների գիրք): Այստեղ միայն վերջին՝ գիրք բառն է թուրքերեն: Կամ՝ «Սուրբ Կղեմէս 9 կիւնիւք մտածական տուա կամ երանելի Կղեմէս հայրապետի վարքընըն իւզերինէ» (իննօրյա մտածական աղոթքներ կամ երանելի Կղեմէս հայրապետի վարքը) և այլն¹⁶⁴: Հետաքրքիր է հատկապես վերջին վերնագիրը, ուր հեղինակը չի մտածել անգամ թուրքերեն գրելու մասին: Նույնիսկ կապը հայերենով է դրվել: Հատկանշական է, որ հայատառ թուրքերեն հրատարակություններում հայերեն բառեր, դարձվածքներ օգտագործելու սովորությունը բնորոշ է եղել ոչ միայն Վենետիկի, Տրիեստի կամ Վիեննայի մխիթարյան հրատարակություններին, այլ նաև առաքելական հայ եկեղեցու հայատառ թուրքերեն հրատարակություններին: Պատճառներից մեկը՝ քրիստոնեական կրոնին բնորոշ բառերի, տերմինների և արտահայտություններին համագոր թուրքերենների ընտրությունը միշտ չէ որ հնարավոր է եղել: Նման բառերից են՝ սուրբ, քարոզ, խաչ, եկեղեցի, եպիսկոպոս, պատրիարք և այլն:

1811 թվականին Տրիեստի Մխիթարյան միաբանությունը տեղափոխվեց Վիեննա, ուր գործում է մինչև օրս: Այս ընթացքում արևմտահայության հասարակական-քաղաքական կյանքում որոշակի տեղաշարժեր տեղի ունեցան: Այն արդյունք էր նաև ֆրանսիական հեղափոխական, նոր գաղափարների ներթափանցման: Այս երևույթն իր կնիքը թողեց անգամ Վենետիկի մխիթարյանների դպրոցական թատրոնի խաղացանկի վրա¹⁶⁵:

Մեզ հայտնի են ավելի քան 100 հայատառ թուրքերեն գրքերի վիեննական հրատարակություններ: Նրանց թվում են մխիթարյանների հրատարակչական ցուցակում հայտնի Ռոբերտ Բելլարմինի, Հովհան պապի երկերը: Վիեննայում են լույս տեսել հանրահայտ **Երանելի Օգոստինոսի** «Սուրբ Օգոստինոսի երեք գրքերը» և «Վարքը»¹⁶⁶:

163 1809թ. տպագրված «Յովսեփ Գեղեցիկ» գրքի մասին տեղեկություններ գտնվում են միայն մատենագիտական աղբյուրներում: Հնարավոր է, որ այն Մետաստագիոյի երկի առանձին տպագրությունն է, որ հետագայում, 1831թ. չորս այլ դրամաների հետ միասին հրատարակվեց Վենետիկում, «Սրբազան թատերգութիւնք» խորագրով:

164 Ընդգծված բառերը գրված են հայերեն:

165 1790-ական թվականներին Վենետիկի ս.Վազար կղզում, Մխիթարյան միաբանության Մուրադ-Ռաֆայելյան դպրոցի աշակերտական բեմում աստվածաշնչական քեմաներին զուգահեռ սկսեցին բեմադրվել պիեսներ, որոնց նյութը հայ ժողովրդի պատմությունից էր վերցված: Պատմական ողբերգություններ, անգամ նախահայր Հայկի մղած պայքարն ընդդեմ Բելի՝ հեթանոսական բովանդակությամբ պիեսն ազգային հպարտության զգացումներ էին արթնացնում ու ատելություն առաջացնում օտար զավթիչների նկատմամբ: 1800-ական թվականներից հետո բեմադրվել են քարոյախոսական բնույթի գործեր, հասարակության տարբեր խավերի սոցիալական կյանքի մասին 30 կատակերգություններ, ուր ծաղրի առարկա էին մարդկային թուլություններն ու արատները: Այս կերպ մխիթարյանները փորձում էին հանդիսատեսներին տրամադրել այդ երևույթների դեմ: Այս մասին տես՝ Ստեփանյան Գ. Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության, Ե. 1962, Հ.1, էջ 93-115. Այսուհետև տես՝ Ուրվագիծ...

166 Օգոստինոսը (St. Augustin/ 354-430), որը եղել է Հյուսիսային Աֆրիկայում՝ Հիպոնայի

Ավելի ուշ, 1881թ. հրատարակվել է **Հուլիանոս Պիեմոնթեցի**(Պիեմոնթելի) քահանայի «Հիպպոնայի եպիսկոպոս, սուրբ Օգոստինոսի գիշերները» վարքագրական ստվարածավալ երկը: Իտալերենից այն հայաստան թուրքերեն էր թարգմանել **Անկյուրացի եպիսկոպոս Կարապետ Առաքելյանը**: Հրատարակվել ու վերահրատարակվել են Թովմա Գեմբացու տրակտատները, **Ալֆոնսո Մուճարեկիի, Պաոլո Սենիերիի, Մարի Միշել Անժի (Անժ-Մարի)** և այլոց վարքագրությունները, նահատակ կաթոլիկ հայրերի պատմությունները, աստվածաշնչական պատմություններ, ամենօրյա խորհուրդներ և ցուցումներ քրիստոնյաների համար, մտածական աղոթքներ, աղոթագրքեր, հոգևոր խորհուրդների գրքեր, կաթոլիկական տոների մասին գրքեր և այլն:

Վիեննա տեղափոխված մխիթարյան հայրերը շարունակելով իրենց հավատարիմ կեցվածքը Հռոմի պապի կարգադրությունների նկատմամբ, շարունակում էին հրատարակել բացառապես դավանաբանական գրականություն: Վիեննայի միաբանության անդամ, հայտնի հոգևոր-կրթական գործիչ, թարգմանիչ **Առաքելյան Կարապետի** կողմից հեղինակվել են հայաստան թուրքերեն մի շարք դասագրքեր, խորհուրդներ և աղոթքներ Դպրատան աշակերտուհիների համար: Կարապետ վրդ. Առաքելյանը բնագրից թարգմանել է Ալֆոնսո դը Լիգուորիի, Մարի Միշել Անժի գործերը: Նա հայերենից հայաստան թուրքերեն է թարգմանել **Հովհ.Զոհրապյան** վարդապետի «Հին ու Նոր Կտակարանների պատմությունը (1869, Կ.Պոլիս), «Մագաբադիեցու գիշերները» (1862), «Քրիստոսի կյանքն ու վարդապետությունը ըստ 4 ավետարանների» (1873), Ս.Կույսի և ս. Հովսեփի պաշտամունքին նվիրված աղոթքները (1884), Հուլիանոս Փիեմոնթեցիի «Օգոստինոսի գիշերները», և այլն: Թարգմանությունները հիմնականում կատարված են իտալերենից և լատիներենից: 1880թ. ստացել է Մխիթարյան միաբանության եպիսկոպոսի կոչում: Այնուամենայնիվ, մխիթարյան հայրերի թարգմանական, հրատարակական գործունեության ասպարեզում նկատելի էր նրանց հակվածությունը դեպի աշխարհիկ թեմաները:

Բացի թարգմանական երկերի հրատարակություններից ի հայտ են գալիս նաև կաթոլիկ հայրերի՝ կաթոլիկության ջատագովների դավանաբանական ինքնուրույն երկերը: Այդ հեղինակներից են հանդիսացել՝ բանասեր **Սերովբե վրդ. Տերվիչ Օղուն** (1846-1892), Ստեփան Ավգերյանը¹⁶⁷ և ուրիշներ:

եպիսկոպոս (395թ.), համարվում է կաթոլիկ հայրերից «մեծագույնը» և միջնադարի խոշորագույն հեղինակություն: Նա է ստեղծել քրիստոնեական աստվածաբանության սիստեմը: Մշակել է քրիստոնեական դավանաբանության համակարգ: Աստվածաբանության նրա սկզբունքներից մեկը եղել է՝ «աշխարհիկ իշխանության ենթարկումը եկեղեցուն» վարդապետությունը: 1243թ. աղքատ կրոնականները, իբր թե ընդունելով Ավգուստինի (Օգոստինոս) «կանոնադրությունը»... ստեղծեցին «ավգուստինյան» ուխտը, որը ժողովրդական ապստամբությունների ժամանակ պայքարում էր ապստամբների դեմ ի պաշտպանություն պապական կառավարիչների: «Հիպպոնայի եպիսկոպոս սուրբ Օգոստինոսի վարքը» հրատարակվել է 1816թ., Հովհաննես վրդ. Ուրուպճյանի իտալերենից հայաստան թուրքերեն թարգմանությամբ:

167 Վիեննայի Մխիթարյան միաբանության հայրերից բանասեր Ստեփան Ավգերյանը հայաստան թուրքերեն մի շարք վարքագրությունների հեղինակ է: 1798 թ. դեռևս Տրիեստում, ապա Կ. Պոլսում 1862թ. հրատարակվել է նրա «Աստծո սուրբ ծառա երանելի Զյոմուրճյանց Տեր Կոմիտաս քահանայի վարքը և նահատակությունը» երկը: Նահատակված կաթոլիկ քահանան եղբայրն էր հայտնի հասարակական գործիչ և պատմաբան Երեմիա Չելեյի Զյոմուրճյանի: Տեր Կոմիտասը քարոզում էր կաթոլիկ եկեղեցու և պապական գաղափարների անսխալականությունը: Թուրքական կառավարության հրամանով նա գլխատվեց որպես լրտես: Նրա նահատակությանը նպաստելու մեջ

Մխիթարյան միաբանության կողմից կաթոլիկական գրականության նմուշների հրատարակությունները գլխավորապես տուրք են Վատիկանի՝ մխիթարյանների նկատմամբ ցուցաբերած բարեհաճ քաղաքականության: Մյուս կողմից, կաթոլիկ եկեղեցու պատմության մասին գրքերն ու տրակտատները, երկերը հավատքի սկզբունքների, կաթոլիկական կրոնի տարբեր ճյուղավորումների ու ուխտերի, նրանց գաղափարախոսների մասին, և նույնիսկ խրատական ու բարոյախոսական գրքերը հաճախ պարունակել են պատմական արժեքավոր նյութեր ու փաստաթղթեր: Դրանք անկասկած ինչպես ընդհանուր ճանաչողական, այնպես էլ դաստիարակչական նշանակություն են ունեցել: Այս հանգամանքը հնարավոր չէ որ հաշվի չառնվեր մխիթարյան հայերի կողմից, որոնք զուգահեռ հայատառ թուրքերեն կրոնական գրականության, հրատարակել են գեղարվեստական, պատմական գրականություն, դասագրքեր: Բազմալեզու և բազմահատոր շքեղ բառարաններն ապացույց են այն կազմողների բառագիտական մեծ կուլտուրայի: Մինչև օրս մեծ արժեք են ներկայացնում **Հարություն Ավգեղյանի, Հակոբ Պոզաճյանի, Սուքիաս Սոմայլյանի, Ամբրոսիոս Քյուփեյլյանի, Սրապիոն Էմինյանի, Եփրեմ Չազրճյանի, Փրիլպոս Դամճյանի, Ազարյան** եղբայրների և մյուսների հրատարակած բազմալեզու բառարաններն ու զրուցարանները¹⁶⁸:

Բառագետ-բառարանագետների այս պայծառ համաստեղությունը անգնահատելի ավանդ է ունեցել հայագիտության և թուրքագիտության զարգացման գործում, 18-19-րդ դարերի լուսավորական շարժման և թարգմանական գրականության ասպարեզում: Մեզ հայտնի են հայատառ թուրքերենի թարգմանիչների հարյուրից ավելի անուններ, չնայած այն հանգամանքին, որ 1730-1831-ական թվականներին թարգմանված հրատարակությունների՝ մանավանդ կրոնա-բարոյախոսական և պատմա-դավանաբանական տպագրությունների վրա թարգմանիչ անունը որպես կանոն չի հիշատակվել:

Հիմնականում այսպիսին են եղել Տրիեստի և Վիեննայի հայատառ թուրքերեն հրատարակությունները: Այս կամ այն երկի թարգմանիչ պարզելը երբեմն մանրակրկիտ ուսումնասիրությունների արդյունք է եղել: Այդ հեղինակների հայերեն նույն նյութի հրատարակության, նրանց մասին տարբեր առիթներով հոդվածների ու աշխատությունների համադրման, տարբեր արխիվային նյութերի ուսումնասիրության արդյունքում է միայն

իրենց մասն ունեցան հայ եկեղեցին և անձամբ Կ.Պոլսի պատրիարք Հովհաննես Զմյուռնիացին: Վերջինս կաթոլիկության տարածման պառակտիչ քաղաքականության դեմ բուն պայքարի կողմնակիցներից էր: Այս երկը պիեսի են վերածել և այն խաղացվել է ս. Դևազարի դպրոցական թատրոնի բեմում: Հայ կաթոլիկ քահանայի նահատակության փաստը երկար ժամանակ շահարկվել է կաթոլիկ եկեղեցու կողմից՝ իրար դեմ թշնամաբար տրամադրելու առաքելական ու կաթոլիկ հայերին:

168 152 Բազմալեզու այս բառարաններն ընդգրկում են լատիներեն, իտալերեն, ֆրանսերեն, հայերեն, թուրքերեն, գերմաներեն, անգլերեն, հունարեն և այլ լեզուները: 1986 թ. “Tarih ve Toplum” N28 թուրքական պատմաբանասիրական հանդեսում Մխիթարյաններին նվիրված Գևորգ Փամբուկչյանը մի հոդված է տպագրել: Հոդվածի տպագրությունն ուղղված է եղել 1982թ. ոմն Շաքիրողլուի փետրվարի 16-ին “Hürriyet” թերթում հրատարակված հակահայկական մի հոդվածում Մխիթարյանների միաբանությունը «հայ անարխիստների» հետ կապելու ծիծաղելի փաստի դեմ: Հոդվածը հակիրճ ներկայացնում է Մխիթար Սեբաստացուն ու նրա հիմնադրած միաբանությունը, հայ տպագրության սկզբնավորումը Եվրոպայում և դրանում մխիթարյանների ավանդը, անդրադառնում նրանց հրատարակած բազմալեզվյա արժեքավոր մեծածավալ բառարաններին ու հեղինակներին, հայատառ թուրքերեն հրատարակություններին, գիտական շրջանակների համար այդ գրականության ուսումնասիրման անհրաժեշտությանը :

պարզվել այս կամ այն թարգմանչի անունը: Երբեմն էլ պարզվել է, որ տվյալ երկը ոչ թե միանգամից հայատառ թուրքերեն է թարգմանվել, այլ կատարվել է թարգմանությունը երկրորդ լեզվից կամ նույնիսկ ՚երրորդ: Որոշ գրքերի վրա նշվել է, թե որ լեզվից է կատարվել թարգմանությունը, բայց չի նշվել թարգմանիչը, երբեմն էլ նույնիսկ թարգմանության բնագրի լեզուն չի նշվել: Եթե խոսքը մասնավորեցնենք Վենետիկից անցատված մխիթարյանների հրատարակություններին, ապա մի բան պարզ է: Թարգմանիչները որպես կանոն եղել են միաբանության վարդապետները, մխիթարյան հայրեր: Կան նաև գրքեր, ուր բացակայում է հեղինակի անունը, սակայն նշվել է թարգմանիչը և որ լեզվից թարգմանված լինելը: Այս առթիվ հարկ է նշել մի այլ մանրամասն ևս: Տրիեստյան և Վիեննայի հայատառ թուրքերեն հրատարակությունների վրա չենք գտնում Մխիթարյան միաբանության անունը: Սրանով կարծես թե շեշտվում է Ս.Ղազարի հետ նրանց ունեցած գաղափարախոսական տարածայնությունը: Այս երևույթը, որ նկատվեց տրիեստյան գործունեության շրջանում, իր շարունակությունն ունեցավ, երբ միաբանությունը Տրիեստից 1811 թ. տեղափոխվեց և հաստատվեց Վիեննայում: Այնուամենայնիվ մեզ հասել են մի շարք թարգմանիչների անուններ՝ Հովհաննես Երեմյան, Աթանաս Մերասյան, որոնք հայտնի են եղել իրենց բանասիրական գործունեությամբ: Մյուս թարգմանիչները՝ Պետրոս Ավգերյան, Պետրոս Երեմյան, **Պետրոս Քեպեպճյան**, տիրացու **Եղիազար Անկյուրացի**, **Անտոն Մուրադյան** և մի քանի այլ անուններ հայտնի են բացառապես կրոնադավանաբանական գործերի թարգմանությամբ: Թովմա Գեմբացու թարգմանիչն է եղել **Մարուշյանց Պողոս Անկյուրացին**: Երանելի Օգոստինոսի «Գրքերի» թարգմանիչը՝ **Ուրուպճյան Հովհաննեսը**, իսկ «Օգոստինոսի գիշերների» թարգմանիչը՝ **Անկյուրացի Կարապետ Առաքելյանը**: Մեզ հայտնի չեն 1912 թվականից հետո մխիթարյանների կողմից հրատարակված հայատառ թուրքերեն գրքեր¹⁶⁹:

Ձմյուռնիայի կաթոլիկ հրատարակչության կողմից 1845, 1851 թվականներին, նաև՝ 1911թ. (Կ.Պոլսի «Բայբլ հաուզի» տպարանում) հրատարակվել է բելգիացի աստվածաբան, հայագետ, Լուվենի կաթոլիկ համալսարանի դասախոս **Ֆելիքս Ժան Բատիստ Նեվի** (Felix Jean-Batist Joseph Neve 1816-1893) աստվածաբանական երկերը: Թարգմանիչը հայտնի չէ: Նեվիը հայ եկեղեցական գրականությունից թարգմանություններ է կատարել, հրատարակել մի շարք գրքեր Փարիզում, Բրյուսելում, Լուվենում՝ նվիրված քրիստոնյա Հայաստանին ու նրա մատենագիտությանը, որոնցից կարևորներն են **Թովմա Մեծփեցու**, հայկական շարականների, հոգևոր գրականության և երաժշտական լիտուրգիայի (պատարագի) մասին գրքերը:

Կ.Պոլսի 1906 թվականի հրատարակությունների մեջ առանձնանում է **Մորմոնի** գիրքը: Որպես թարգմանիչ նշվում է **Ֆ. Ֆ. Հինթզի** անունը, իսկ թե հայերենից ո՞վ է հայատառ թուրքերեն թարգմանել՝ չգիտենք: «Գիրքը» բաղկացած է 699 էջից¹⁷⁰: Կրոնադավանաբանական գրքերի թվում գտնվում են հայատառ թուրքերեն տպագրություններ, որոնք

169 Վիեննայում հայատառ թուրքերեն գրքեր տպագրվել են մինչև 1935 թվականը, սակայն ոչ մխիթարյանների կողմից: Գրանք տպագրվել են ամերիկյան ավետարանականների կողմից ամերիկյան աստվածաշնչական ընկերության տպարանում

170 Մալթա կղզում հայատառ թուրքերենով տպագրվել են մոտ երկու տասնյակ գրքեր, հիմնականում գեղարվեստական պատմություններ, որոնց հիմքը բարոյախոսական է:

անգլերենից են թարգմանվել: Այսպիսի թարգմանություններ հրատարակվել են ավելի ուշ, ամերիկյան քարոզիչների աստվածաշնչական ընկերությունների կողմից Մալթա կղզում՝ 1828-1929 թթ¹⁷¹: Ավետարանական միսիոներական հրատարակությունների նպատակը նույնն էր, ինչ կաթոլիկ քարոզիչներինը: Այն է՝ գաղափարական ազդեցության ամրապնդումը Արևելքի քրիստոնյա աշխարհում: Այս անգամ արդեն ոչ թե Հռոմի, այլ Ամերիկայի բողոքական քարոզիչների կենտրոնից՝ Բոստոնից եկած որոշմամբ¹⁷²:

Ամերիկյան «Բորդը» Թուրքիա ուղարկեց քարոզիչներ, որոնք արևմտահայերի շրջանում իրենց գործունեությունը սկսեցին 18-րդ դարի 20-ական թվականների վերջերին¹⁷³: Հայտնի է ամերիկյան միսիոներ **Կ.Յունգի** /Cathbert G. Young/ խոսքերն այս առիթով.՝ «Հայաստանն այն բաց դուռն է, որով կարելի է մտնել Թուրքիա և քաղաքական նկատառումներից ելնելով քարոզիչները պիտի զուտ ամերիկացիներ մնան»¹⁷⁴. Անգլիական դիվանագիտությունը համաձայնվել էր, որպեսզի արևմտահայության շրջանում քարոզչական գործունեություն ծավալեն ամերիկյան ավետարանականները, իսկ՝ արևելյան Հայերի շրջանում գործեն հիմնականում գերմանացի քարոզիչները: Անգլիան ազդեցությունների ոլորտների էր բաժանում, ինքը մնալով վարագույրի ետևում: Դա նրան թույլ էր տալիս չփչացնելու իր հարաբերությունները Ռուսաստանի հետ, ցույց տալով, թե չի խանգարում հայերի վրա ռուսական ազդեցության տարածմանը:

Ամերիկյան միսիոներները Օսմանյան կայսրությունը բաժանել էին ազդեցության չորս շրջանների՝ ա. Եվրոպական Թուրքիա (Մակեդոնիա և Բուլղարիա), բ. Արևմտյան Թուրքիա (Փոքր Ասիայի արևմտյան մասը), գ. Կենտրոնական Թուրքիա (Տավրոսի լեռների հարավայրին մասը և Հյուսիսասյին Սիրիա), դ. Արևելյան Թուրքիա (Փոքր ասիայի արևելյան մասը): Հայկական շրջանում քարոզչական գործունեություն ծավալելու համար ուղարկվում էին հատուկ քարոզիչներ: Նրանք շրջում էին հայկական գավառներում, նպատակ ունենալով ավելի խորը ծանոթանալ հայերի հոգևոր կյանքին և կրոնական տրամադրություններին¹⁷⁵: Մի շարք գավառներում ամերիկացի միսիոներները բացեցին հիվանդանոցներ, դպրոցներ, որբանոցներ, ծերանոցներ, տպարաններ: Նրանք այս միջոցներով գայթակղում էին հայերին, տանում դեպի ավետարանչություն՝ պառակտելով հայերին, հեռացնելով նրանց իրենց ավանդական կրոնից, եկեղեցուց, նախնիների սովորույթներից: Ինչպես կաթոլիկ, այնպես էլ բողոքական քարոզիչները շռայլորեն օգ-

171 Մորմոնի հայատառ թուրքերեն թարգմանության (մի ամբողջական գրքի) փաստը 1996 թվականին՝ ապշեցրեց Շվեյցարիայում Մորմոնի ուսմունքը տարածող անգլիացի երիտասարդ համալսարանական քարոզիչներին, որոնք այս նպատակով շրջում էին եվրոպական երկրներում:

172 1701թ. Լոնդոնում հիմնվել է «Աստվածաշնչի տարածման միությունը»: Այնտեղ, Լոնդոնում 1795թ. հիմնադրվել է «Քարոզչական միություն», իսկ 1800թ.՝ «Անգլիկան եկեղեցու միսիոներական (քարոզչական) միություն»: Այս օրինակին հետևելով, 1810 թվականին, Ամերիկայում հիմնադրվել է բողոքական միություն, որը սովորաբար անվանվում է «Բորդ» /American Board of Commissioners for Foreign missions/. Այն միավորում էր Ամերիկայի կոնգրեգացիոն /congregational/, պրեսբիտերական (երիցական) /presbyterian/, ռեֆորմիստական /reformed/ եկեղեցիները:

173 Երուսաղեմի հայերի շրջանում «Բորտ»-ը իր գործունեությունը սկսել է 1821 թվականին: Տես՝ Առաքել Պատրիկ (1894-1984) «Պատմագիրք-հուշամատենան Սեբաստիոյ և գավառի հայութեան» Երկու հ. (հ.1՝ Բեյրութ, 1974 և հ.2՝ Նյու-Ջրքսի 1983): Տես նաև՝ Kirşehiroğlü E. Türkiye'de faaliyetleri. İstanbul, 1963. s29.

174 Առաքել Պատրիկ, նշված աշխ. էջ 550.

175 Ալպոյանեան Ա. «Պատմութիւն Եվրոպիոն հայոց», Կահիրե, 1952, էջ 843.

տագործում էին բարոյական ու նյութական կաշառքի բոլոր հնարավոր ուղիները, որոնք երբեմն շատ ավելի ազդեցիկ էին, քան կաթոլիկների գրավոր խոսքը: Բնականաբար աղքատ բնակչության համար անվճար բաժանվող յուղն ու ալյուրը շատ ավելի ռեալ գործոններ էին, քան կաթոլիկների բարոյախոսական գրքերը¹⁷⁶: Ամերիկյան քարոզիչները եռանդազին սկսեցին Աստվածաշնչի, աշխարհաբար և հայաստան թուրքերեն Ավետարանի տարածման գործը¹⁷⁷: Այս գրքերը մեծ հաջողություն ունեցան հայերի շրջանում հետևյալ պատճառներով՝

ա. հայկական եկեղեցում խորանից հնչում էր ժողովրդին անհասկանալի գրաբարով քարոզներ և այս հարցում բողոքականների գործունեությունը շոշափելի արդյունքներ ունեցավ:

բ. նրանց հրատարակած և Թուրքիայում տարածած Աստվածաշունչները գրված էին հասկանալի աշխարհաբարով, իսկ թուրքախոս հայերի և մնացած թուրքախոս ազգերի համար՝ հայաստան թուրքերենով, որ թարգմանվել էր հին հունարենից ու եբրայերենից¹⁷⁸:

գ. շատ գավառներում, հատկապես թուրքաշատ վայրերում, հայերեն գրքերը եզակի էին, ուստի և միախոսողների բաժանած գրքերը պարզապես այդ ծարավն էին նաև հագեցնում:

176 Արևմտյան Հայաստանի գավառներում ամերիկյան բողոքական քարոզիչներին տրամադրված գումարը տարեկան կազմում էր 300 հազարից 400 հազար անգլիական ոսկի: Տես՝ Երիցյան Ա. «Փորձ», Թիֆլիս, 1986, N2.

177 Ամերիկյան միսիոներներն իրենց գործունեության սկզբից մինչև 1900 թվականը Թուրքիա են բերել և տարածել 7 միլոն գիրք՝ 10 միլիոն արժողությամբ: (Տես՝ Kyrsehirođlu E. Túrkiyede faa-liyetleri. Istanbul, 1963. s. 33.): Միայն 1910 թվականին Թուրքիայում Ամերիկյան Աստվածաշնչի տարածման ընկերության կողմից տարածվել է 100 հազար Ս.Գիրք: Հազարավոր օրինակներ տարածվել են միսիոներական այլ ընկերությունների կողմից: Պատկերացում կազմելու համար այս ընկերությունների աշխատանքի ծավալների մասին, կարելի է նշել, որ ամերիկյան մայրաքաղաքում նույն թվականին տարածել են 2 մլն., իսկ Չինաստանում՝ 2,5 մլն գիրք: Եգիպտոսում 75 հազար, իսկ Բուլղարիայում՝ 16 հազար Աստվածաշունչ և այլն: Առաջին անգամ հայերեն գրաբար Աստվածաշունչը միսիոներների կողմից հրատարակվեց գավառիկ (Էլեկտրատիպ) եղանակով: Կույրերի համար տպագրված Ս.Գրքի մասերը ճոխացվեցին: ...1911թ.՝ 144160 օրինակ՝ 29 լեզուներով տարածվեց Թուրքիայում: Աստվածաշնչի տարածման ամերիկյան և բրիտանական ընկերությունների կողմից միասին միայն 1910 թվականին տարածել են 10 ու կես մլն գիրք: Հոգվածագիրը նշում է, որ 20-րդ դարի առաջին տասնամյակին ս.Գիրքն ամբողջապես կամ հատվածաբար թարգմանված էր 425 լեզուներով և գավառաբարբառներով (Այս մասին տես՝ Գարեգին եպսկ. Սրուանձտեսանց «Ս.Գիրք եւ զայն տարածողներ» Թեոդիկ. «Ամենուն տարեցոյցը», 1913թ. էջ160-164:)

178 Եզդիների համար հայկական տպարաններում 1850 թվականից ի վեր հրատարակվել են հայաստան քրդերեն աստվածաշնչեր, ավետարաններ, հոգևոր երգարաններ, այբբենարաններ, հայերենի և քրդերենի դասագրքեր, քերականներ, բառարաններ: Հայաստան քրդերենով տպագրվել են Մաթթեոսի, Մարկոսի, Դուկասի, Հովհանու ավետարանները: Հայաստան քրդերեն և հայերեն այբբենարանների հեղինակն է եղել Մկրտիչ Տիգրանյանը, իսկ բառարանները կազմել է Պետրոս Ամիրխանյանը: Գրքերը հիմնականում տպագրվել են Կ.Պոլսում, Պոյանճյանների տպարանում, իսկ ավելի ուշ՝ Հալեպում, Բեյրութում: Այլատու քրդերեն հրատարակությունների թվում են քուրդ բանաստեղծների ժողովածուներ, ժողովրդական սիրավեպեր, Հայաստան քրդերեն, արաբատու, պարսկագիր և այլ այբուբեններով (ձեռագիր և տպագրված) քրդերի, եզդիների՝ քուրմանջ ու զազաների բարբառներով գրականության մասին տես նաև՝ Mehmet Malmisanlı. Osmanlı Doneminde Yazılan Kürtçe Eserler Üzerine, “Tarih ve Toplum”, İstanbul, 1988, N54-.55 s.59-63, N 55 s. 58-63.

դ. Աստվածաշնչի և՛ աշխարհաբար, և՛ հայատառ թուրքերեն հրատարակությունները, որ բաժանում էին քարոզիչները՝ մեծ հաջողություն էին վայելում նաև այն պարզ պատճառով, որ տանը Սուրբ գրքի առկայությունը բարի նախանշան էր համարվում և բոլորը ձգտում էին ունենալ այն, որպես պահապան գործություն: Բողոքական միսիոներների հիմնական հենակետերը Թուրքիայում եղան Չմյուռնիան, Այնթապը, Մարաշը, ապա նաև՝ Կ.Պոլիսը¹⁷⁹: Ավետարանական քարոզիչների գործունեությունը ղեկավարվում էր ոչ միայն արտասահմանից: Նրանք մեծ աջակցություն էին ստանում իրենց երկիրը Թուրքիայում ներկայացնող դիվանագիտական ինստիտուտների՝ դեսպանատների, հյուպատոսությունների աշխատակիցների կողմից: Քանի որ մուսուլմանական պետության օրենքներն արգելում էին իսլամից հրաժարվելը ի շահ մի այլ կրոնի, իսկ քրիստոնեական միսիոներները քարոզում էին «աստծո խոսքը բացառապես կայսրության քրիստոնյա հպատակների շրջանում, ուստի կայսրության տիրակալները ոչ միայն դեմ չէին, այլև խրախուսում էին նրանց: Քրիստոնյա ժողովուրդների, նրանց միասնությունն ու ուժը պառակտող գործողությունները՝ նրանց կողմից հօգուտ սուլթանական երկրի շահերի էր ընկալվում: Միսիոներների պատճառով քրիստոնյա ազգերի մոտ սկսված դավանաբանական վեճերը միայն թուլացնում էին այդ ազգերին, շեղում նրանց ուշադրությունը թուրքական բռնակալության դեմ ազգային ազատագրական պայքարի դուրս գալուց, համախմբվելուց: Ամերիկյան միսիոներների գործունեության աշխուժացմանը նպաստեց 1830 թ. մայիսի 10-ին Ամերիկայի ու Թուրքիայի միջև կնքված պայմանագիրը: Այն լիակատար ազատություն էր ապահովում ամերիկյան միսիոներների կրոնական քարոզչության համար¹⁸⁰:

Մի քանի գավառներում ամերիկյան քարոզիչները տեղական հայ բնակչության կողմից մեծ դիմադրությունների են հանդիպել: Մի շարք գավառներում, օրինակ Ջեյթունում, Մարաշում, Հաճընում պատժվում էին բողոքականության հետևորդները, իսկ քարոզիչները ծեծի էին ենթարկվում: Այս վայրերում բողոքականությունն իր դիրքերը կարողացավ ամրապնդել այլ գավառներից մեկ-երկու տասնամյակ ուշ:

Այսպիսով, հայատառ թուրքերեն գրականության զարգացման առաջին հարյուրամյակը կապված է հիմնականում Արևելքում՝ հայերի շրջանում կաթոլիկության ներթափանցման հետ: Տպագիր հրատարակությունները թույլ էին տալիս միսիոներներին ավելի մեծ արդյունավետությամբ ու ավելի մեծ ծավալով իրականացնել իրենց գաղափարական առաքելությունը Արևմուտքի համար այնքան կարևոր տարածաշրջանում:

Հարկ է նշել, որ գուգահեռ գրահրատարակչական գործունեությանը, միսիոնարյանները մեծ ավանդ են ունեցել դպրոցական-մանկավարժական ասպարեզում: Միսիոնարյանները ճեմարաններ են հիմնադրել ս.Ղազարում (1732թ), Պադուայում (1833), Վենետիկում (1836), Փարիզում (1846), Չմյուռնիայում, Տրիեստում, Կ.Պոլսում (վեց դպրոց), Հունգարիայում, Սիրիայում, Ռուսաստանում, Բրազիլիայում, հայկական այլ գաղութներում: Մինչև առաջին համաշխարհային պատերազմը գործում էին 26 դպրոցներ, լիցեյներ,

179 Առաջին բողոքական հայ եկեղեցին Կ.Պոլսում օծվել է 1836 թ.
 180 Gordon L.M. American Relations with Turkey 1830-1930. Philadelphia. 1932, p.11, Տես նաև՝ Марунов Ю.В., Поцхверия Б.М. Турция в книге “Политика США на Ближнем и Среднем Востоке”. М., Наука, 1960, с. 76-77.

ճեմարաններ, որոնցից մի մասը գործում է նաև այսօր: Գիտության և լուսավորության մեջ շարունակում են իրենց նշանակալի ավանդյուն ունենալ մխիթարյանների բանասիրական, պատմական և հայագիտական հանդեսները: Այն է՝ ս.Ղազարում «Բազմավեպը» (հիմնադրված 1843 թ.), Վիեննայում «Հանդես ամսօրեայ»-ն (հիմնադրված 1887 թ.):

Գրահրատարակչական մեծ գործունեություն են ծավալել նաև օտար կաթոլիկ ու բողոքական մխիթներները, որոնց հիմնական նպատակն է հանդիսացել Արևելքում իրենց երկրների դիրքերի հաստատումն ու ամրապնդումը: Այս երևույթի դեմ բուռն պայքար են ծավալել հայ առաքելական եկեղեցին, կրոնական տարբեր դավանանքների պատկանող հայ մտավորականությունը: Բնականաբար հայկական միջավայրում այս պայքարը մղվել է նաև հայատառ թուրքերենով:

Կրոնական, քաղաքական ու դավանաբանական հայատառ թուրքերեն տպագիր գրականությունը, ձևավորվելով 18-րդ դարի առաջին կեսին, բուռն զարգացում ապրեց դարեվերջին և անկում ապրեց 19-րդ դարի առաջին կեսին: Ի թիվս կրոնական գրականության, այս հարյուրամյակում հրատարակվել են հայատառ թուրքերեն պատմական, պատմագրական երկեր, գեղարվեստական, փիլիսոփայական գործեր, բառարաններ:

Կրոնադավանաբանական գրքեր, քարոզներ հրատարակվել են նաև հետո, ընդհուպ մինչև մեր օրերը, սակայն նրանց թիվն աստիճանաբար նվազել է՝ թրքախոս հայերի թվի կրճատման պատճառով: Մի կողմից դա հայկական աշխարհիկ դպրոցներում հայերեն լեզվի ուժեղացման արդյունք էր, մյուս կողմից՝ եղեռնի: Հարյուր հազարավոր թուրքախոս հայեր մաս էին կազմում այդ անմեղ զոհերի:

20-րդ դարի արշալույսին Արևմտյան Հայաստանում և հայերով բնակեցված քաղաքներում հաշվվում էր շուրջ 1000 դպրոց: Քանի որ մինչ այդ, ավելի քան 500 տարիներ, գուցե և ավել, հայ ժողովրդի մի որոշակի մասը տիրապետում էր հիմնականում թուրքերենին, ուստի և նրա դաստիարակությունը տարվելու էր նաև հայատառ թուրքերեն նրան հասկանալի լեզվով:



Գլուխ Գ

Արևմտահայության ազգային զարթոնքի արտահայտությունը հայատառ թուրքերեն գրքում 19-րդ դարի երկրորդ կեսին Ինքնուրույն և թարգմանական գեղարվեստական գրականություն

Օսմանյան կայսրությունը գտնվում էր քաղաքական, տնտեսական ու ֆինանսական ճգնաժամի մեջ: Երկրի տարբեր վայրերում գլուխ էին բարձրացրել հպատակ ժողովուրդները: Այս ամենը կանխելու համար 1839թ. նոյեմբերի 3-ին, սուլթանական պալատի «Գլուխանե» կոչված պարտեզում հրապարակվեց կայսերական հրովարտակը՝ Հաթթը Շերիֆը (սրբազան գիր), որը հետագայում ընդհանուր անվամբ կոչվեց Թանգիմաթ: Այս հրովարտակով կառավարությունը հիմնականում Օսմանյան կայսրության հպատակ բոլոր ժողովուրդներին խոստանում էր կյանքի, պատվի և ունեցվածքի ապահովում, հարկերի արդարացի բաշխում ու գանձում, կապալային սիստեմի վերացում, զինվորական ծառայության ժամկետի կանոնավորում: Դատական գործերը, ժառանգական խնդիրները ևս պետք է օրինական լուծում գտնեին: Կաշառակերությունն ու չարաշահումները պետք է վերանային և այլն:

Հաթթը Շերիֆի նախապատրաստումն ու հռչակումը կապվում է Մուստաֆա Ռեշիդ Փաշայի (Mustafa Reşid Paşa, 1800-1858) անվան հետ, որը և հեղինակն էր բարենորոգումների այս ծրագրի: Եվրոպական կրթություն ստացած այս անձը դիվանագիտական պաշտոններ էր վարել Փրիզում, Լոնդոնում, ապա դարձել Թուրքիայի արտաքին գործերի նախարար: Այս ծրագրի հռչակմամբ Թուրքիան հավակնում էր ունենալ եվրոպական պետությունների վստահությունը՝ որպես իրավական պետություն: Այն հակված էր ապացուցելու, որ սեփական ուժերով կարգավորվելու էր երկիրը և թույլ չէր տրվի եվրոպական երկրներին միջամտելու Թուրքիայի ներքին գործերին:

Գլուխանեյի Հաթթը Շերիֆը կարծես ի մի էր բերում **Սեյիմ 3-րդի և Մեհմեդ 2-րդի** սկսած բարենորոգումների ծրագիրը և սկիզբ էր դրվում երկրի եվրոպականացման շարժմանը: Սկսե՞նք նրանից, որ Հաթթը Շերիֆն ընդամենը կայսերական հրովարտակ էր՝ ոչ օրենք: Հրովարտակի հիմնական դրույթների շուրջ պատրաստվելու էին օրենքներ: Բնականաբար, այս գործին անմիջապես ձեռնամուխ եղավ Ռեշիդ Փաշան: Պատրաստված օրենքները վավերացվելուց հետո միայն, Հաթթը Շերիֆից 11 տարի անց, 1850-51 թվականներին հրապարակվեցին փոքր տպաքանակով:

1840թ. հաստատվեց քրեական օրենքը: 1843թ. բոլոր մահմեդական հպատակների համար զինվորական ծառայություն սահմանվեց, իսկ 1855 թվականից՝ ոչ մահմեդական հպատակները ևս հավասար զինվորական ծառայություն պիտի կրեին: Սա երկկողմանի դժգոհություն առաջ բերեց: Քրիստոնյա-զինվորները բնականաբար իրենց զենքն ուղղելու էին քրիստոնյա աշխարհի, մասնավորապես ռուսների դեմ: Իսկ Ռուսաստանը միակ

օտար երկիրն էր, որ շահագրգռված էր կայսրության քրիստոնյա ազգերի ազատագրմամբ, ինչպես այդ եղավ Բալկաններում և նրա հետ էին կապում ազատության իրենց հույսերը: Մյուս կողմից՝ մահմեդականները վախենում էին կորցնել իրենց գերիշխող դերը կայսրությունում: Այս երկկողմանի դժգոհությունը հետաձգեց օրենքի իրագործումը: Ավելին, նախկին 30-40 դրուշ զինվորական հարկը, որով ազատվում էին բանակում ծառայելուց, աճեց տաս անգամ: Խարաջը դարձավ 300-400 դրուշ և քրիստոնյաները մեկուսացան զինվորական ծառայությունից:

Ըստ 1840թ. քրեական օրենսգրքի հարկերը հավաքվելու էին պետական պաշտոնյաների կողմից, սակայն առաջվա նման գյուղացին հարկ էր տալիս թե՛ պետությանը, թե՛ հարկահավաքին և թե՛ կապալառուին: Փաշաներից սկսած մինչև ամենավերջին պաշտոնյան՝ վիժեցրին բարենորոգումների իրագործումը, քանզի չէին կարող հաշտվել, որ իրավական տեսակետից կարող է հավասարություն լինել մահմեդականի և «անհավատի» միջև:

Եվրոպական տերությունները, մասնավորապես Անգլիան և Ֆրանսիան, Ավստրիան, զգուշանալով Թուրքիայի հպատակ քրիստոնեաների իրավունքի պաշտպանության ռուսական ձգտումներից, ստիպեցին 1856թ. փետրվարի 18-ին, սուլթան **Աբդուլ Մեջիդին** հրովարտակ ստորագրել հպատակ քրիստոնյաների վիճակի բարելավման մասին: Դրա խմբագրման գործում մեծ դեր էին խաղացել շահագրգռ երկրների դեսպանները: Այն հայտնի դարձավ «Հաթթը հյումայուն» անունով: Հետագայում այս հրովարտակը պաշտոնապես հաստատվեց Փարիզի հաշտության պայմանագրի 9-րդ հոդվածով: Այն հայտ է, որ «Հաթթը հյումայուն»-ի ստորագրմամբ շահագրգռված երկրներին ոչ մի կերպ չէր զբաղեցնում հպատակ ժողովուրդների վիճակի հոգածությունը: Նրանց նպատակն էր մեկուսացնել Ռուսաստանին և հաստատել իրենց երկրների ազդեցությունը Թուրքիայում: Այն մասնավորեցվում էր նաև կյանքի տարբեր բնագավառների առումով ևս: Իսկ Բարձրագույն Դուռը՝ փորձում էր հանդարտեցնել իր հպատակներին և պարտատերերին¹⁸¹: Յուրաքանչյուր նոր հրովարտակ կրկնում էր նախկինի միտքը, իսկ էությունը մնում էր կրկին՝ թղթի վրա, քանզի այդ բոլոր օրենքները թշնամաբար էին ընդունվում մոլեռանդ խավի՝ մուսուլմանական հոգևորականության և հետադեմ պաշտոնյա դասի կողմից: Այն մեծապես վախեցնում էր հիմնականում հպատակ ժողովուրդների համայնքի առաջնորդներին¹⁸², որոնք գերադասում էին հրովարտակների մասին իրագեղ չդարձնել իրենց հավատակիցներին, զգուշանալով թուրքերի զայրույթի ցույցերից, քանզի վիճակի փոփոխության մասին որոշումները հակասում էին Գուրանի սկզբունքներին: Շարիաթի դոգմաները չէին կարող հավասարություն դնել մահմեդեականների ու ոչ մահմեդականների միջև: Թանգիմաթի կոչ արած մերձեցումը կոչված չէր իրականանալու ու վերացնելու մահմեդական մոլեռանդությունը:

181 Ролэн-Жесмен М.Г., Армения, армяне и трактаты, М. 1897, стр. 24.; Новичев А.Д. Турция. Краткая история. М. 1965. Стр. 83.; Чихачев П. А., Письма о Турции, М. 1960, стр. 170.

182 1857 թվականին տպագրվել է կրոնական դավանաբանական ուսումնասիրության մի փորձ, հայ և հույն եկեղեցիների տարբերությունների ու անհամաձայնությունների մասին: Հայաստան թուրքերենի է թարգմանվել 1830 թվականի հունարեն բացատրագիր հիշատակագրից: Հեղինակն անհայտ է: Տպագրվել է Կ.Պոլսի հունական «Անաթոլու» տպարանում:

1847թ. ստեղծվեցին առևտրական դատարաններ, ուր ոչ մահմեդեկանը հավասար իրավունք ուներ վկայուններ տալու: Սա ևս հիմնականում ձևական բնույթ էր կրում¹⁸³: Այնուամենայնիվ, բարենորոգումների այս նախաձեռնությունը պատճառ դարձավ 19-րդ դարի 50-60-ական թվականներին արևմտահայերի կյանքում սոցիալական-տնտեսական նկատելի առաջընթացի: Հայերի ազգային հասարակական կյանքը գլխավորող ամիրայական դասն իր դիրքերը զիջեց ազգային բուրժուազիային: Հայ բնակչության բուրժուական խավերը սերտորեն կապված էին Եվրոպայի հետ: Սկսվեց մեծ աշխուժություն հասարակական, քաղաքական կյանքում: Պայքար էր գնում ամիրայական իշխանության դեմ: Վերջիններիս հայ համայնքի ղեկավարելու գործը 1850-ական թվականներին սկսեց թուլանալ: Արդեն 1858 թ. Կ.Պոլսի հայկական համայնքը ղեկավարող «Ազգային ժողովի» 20 անդամներից 7-ը միայն մնացել էին ամիրաները: Մյուս 14 անդամները պատկանում էին հայ համայնքի տարբեր խավերին: Այսպես օրինակ՝ 9 արհեստավորներ, 1 բժիշկ և չորս մանր առևտրականներ: Այսպիսին էր ամիրայական դասի նկատմամբ սկսված պայքարի երկար ալիքի արդյունքը: Գրաված դիրքերն ամրապնդելու համար 1853թ. հաստատված «Ուսումնական խորհրդի» անդամները 1857թ. գործի անցան ստեղծելու *Հայերի ազգային գործերը ղեկավարող կանոնադրությունը*: Այդ գործիչների թվում էին տնտեսագետ, կրթական գործիչ, հրապարակախոս **Նիկողոս Չորայանը** (1821-1859), հասարակական գործիչ **Նահապետ Ռուսինյանը** (1819-1876), հրապարակախոս, հայ լիբերալ բուրժուական հոսանքի հիմնադիր **Գրիգոր Օտյանը** (1834-87) և ուրիշներ: Հասարակական և մշակութային կյանքում նրանք պաշտպանում էին առևտրական բուրժուազիայի շահերը և ներկայացնում լիբերալ բուրժուական հոսանքը հայ հասարակական-քաղաքական կյանքում: Այս ընթացքում հայ շրջանակներում արդեն ծնունդ էր առել երիտասարդ հայրենասեր մտավորականների մի սերունդ, որը թերթերի, ամսագրերի ու հանդեսների էջերից հայերենով ու հայատառ թուրքերենով առաջ էր քաշում հայ ազգային ազատագրական շարժման գաղափարները, պայքարի ձեռնոց նետելով սուլթանական բռնակալությանը (**Հ. Սվաճյան, Մ. Մամուրյան, Գ. Զիլինկիրյան** և ուրիշներ):

1863 թ. հրապարակվեց (հայերեն և հայատառ թուրքերեն լեզուներով) «Ազգային Սահմանադրություն Հայոց»-ը (Նիզամնամեի Սիլլեթի Էրմենիան): Գավառներում ապրող հայությանը «Սահմանադրությունը» ոչինչ չէր տալիս և ոչնչից չէր պաշտպանում, ուստի և մեծ արձագանք չունեցավ: Ընդհակառակը՝ Կ.Պոլսում և այլ քաղաքներում ապրող և գործող հայերին, բուրժուական մտածողության կրողների և դեմոկրատական խավերի շրջանակներում այն խանդավառության մեծ ալիք բարձրացրեց: Բնականաբար հայ հասարակական կյանքում, քաղաքական ու մշակութային շրջանակներում «Սահմանադրության» առաջացրած արձագանքներն իրենց արտացոլումն ունեցան հայատառ թուրքերեն գրականության մեջ ևս:

Հայատառ թուրքերեն գրականության զարթոնքի շրջանը միանգամայն համընկնում է 1850-1870-ական թվականների սահմանադարական շարժման այս շրջանի հետ: Այսպիսի աշխուժությունը զարկ տվեց թատրոնի, գրականության, երաժշտության, գեղան-

183 Փաստերն ապացուցում են, որ դատավորների (նաև գավառական, փաստաբանների, իրավագետների) թվում եղել են նաև հայեր: Այս մասին տես մեր՝ «Հայերի ներդրումն...», էջ 317-332.

կարչության բուռն զարգացմանը հետագա մի քանի տասնամյակների ընթացքում, ընդհուպ մինչև 19-րդ դարի 90-ական թվականները: Այսպիսի վերելքի պատճառը դժվար չի ընկալել: Հասարակական մտքի առջև կանգնած հիմնական նպատակը ազգային ինքնագիտակցության բարձրացման խնդիրն է եղել: Այս շարժումը համակցված էր Օսմանյան կայսրությունում մտավոր ընդհանուր վերելքի հետ: Հայ ժողովրդի մայրենի լեզուն կորցրած մասը հնարավորություն չէր ունենալու մասնակից դառնալ հայերենով լույս ընծայված գրականությանը, չէր կարող կարդալ տասնյակ թերթերն ու հանդեսները, հետևել արևմտահայ նոր գրականության զարգացմանը: Նրանք զրկված էին **Ղևոնդ Ալիշան, Մկրտիչ Պեշիկթաշյան, Պետրոս Գուրյան, Գրիգոր Օտյան** և այլոց գործերը կարդալու հնարավորությունից: Ջրկված էին «Ջարթոնքի շրջանի սերունդ» ընդհանուր անվանմանն արժանացած գրողների ու հրատարակախոսների գործունեությանը հետևելուց: Անհրաժեշտ էր հենց այս խավերին մասնակից դարձնել սկսված շարժմանը: Այն հնարավոր էր իրականացնել միայն նրանց հասկանալի լեզվով՝ թուրքերենով, այն է՝ հայաստան թուրքերեն գրքերի ու պարբերականների շնորհիվ:

Բոլորովին պատահական չպետք է համարել հենց այս շրջանում «Ազապի» վեպի լույս աշխարհ գալը հայաստան թուրքերենով: Մինչ այդ արևմտահայերը չեն ունեցել «Ազապի»-ի նման գեղարվեստական արժեք ներկայացնող հայերեն լեզվով վեպ: Վեպն, ինչպես հայտնի է, նվիրված է արևմտահայ իրականության բարդագույն խնդիրներից մեկին՝ կաթոլիկ հայերի դեմ հայ առաքելականների մղած պայքարին: Վեպն ինքնին սիրո ողբերգական պատմություն է ներկայացնում, որի գլխավոր հերոսները գոհ են դառնում կրոնական ֆանատիզմին և դավաճանությանը¹⁸⁴: Գիրքը, ինչպես և նրան հաջորդող «Շատախոսը», հրատարակվել են անանուն, առանց հեղինակի անվան: Այդ գիրքն այսօր թուրք գրականագետները համարում են առաջին թուրքերեն վեպը:

1850-1860-ական թվականներին կապիտալիստական հարաբերությունների զարգացման և հայ ազգային բուրժուազիայի ձևավորման շրջանում, կրոնա-բարոյախոսական թեման հայաստան թուրքերեն գրականության մեջ սկսում է իր տեղը զիջել հայ ժողովրդի մտավոր զարգացմանը նպաստող թեմաներին:

Առաջադիմական այս շարժումը 80-ական թվականների սկզբից սկսում է թուլանալ՝ հետևանք հանդիսանալով սուլթան Աբդուլ Համիդի կառավարության շրջանի քաղաքական խստագույն բռնությունների, երբ հետապնդման էին ենթարկվում առաջադեմ բոլոր հասարակական շարժումները, անգամ մշակույթը: Հայկական դպրոցներում արգելված էր հայ ժողովրդի պատմության, պատմական աշխարհագրության դասավանդումը: Արգելված էին հայերեն քատերական ներկայացումները, ազգային երգարվեստը և այլն: Մինչդեռ հենց այս տասնամյակներին է նկատվել ֆրանսիական հեղինակների վեպերի թարգմանությունների նշանակալի աշխուժացումը: 19-րդ դարի 80-90-ական թվականներին հրատարակված գրքերի 90%-ը այս վեպերն են: Հայաստան թուրքերեն թարգմանվել և հրատարակվել են **Քսավիե դը Մոնթեպեռնի, Էժեն Սյուի, Ժյուլ Վեռնի, Բուակոպե դը Ֆորբունեի**, և այլ հեղինակների բազմահատոր ստեղծագործությունները:

184 Այս մասին տես հեղինակի՝ Հովսեփ Վարդան փաշայի մասին հատվածում:

Այս վեպերի երևան գալը չի կարելի տարերային համարել: Առավել ևս չի կարելի այն բացատրել կոմերցիոն շահադիտական նպատակներով: Այն լրջորեն պայմանավորված էր քաղաքական շեշտադրմամբ: Հատկանշական է այն փաստը, որ այդ տարիներին արևմտահայ իրականությունում սկսվել էր պայքար՝ բուրժուական-առաջադիմական և ֆեոդալական-թեոկրատական հոսանքների միջև: Առաջադիմական գաղափարների ներկայացուցիչները ձգտում էին թարգմանել հիմնականում ֆրանսիական հեղինակների վեպեր, որոնք ուղղված էին ֆեոդալական աբսոլյուտիզմի դեմ և դիմակազերծ էին անում կաթոլիկ եկեղեցու իրական բնույթը: Այսպիսին էր **Էժեն Սյուի** «Թափառական հրեան» վեպը, որ լույս տեսավ 1863 թվականին **Կարապետ Փանոսյանի** հայատառ թուրքերեն թարգմանությամբ:

Թարգմանական գրականության շուրջ ստեղծված իրավիճակի ընկալման համար հարկ է լուսաբանել հայկական կյանքում տարբեր հասարական-քաղաքական ուղղությունների միտումները: Երբեմն դրանք ևս նշանակություն են ունեցել այս կամ այն երկի թարգմանության ու տպագրության ընտրության խնդրում:

Պատահական չպետք է համարել հետևյալ հանգամանքը ևս: Արևմտահայ իրականության մեջ, հեղափոխական դեմոկրատ **Միքայել Նալբանդյանի** գաղափարների հետևորդների գաղտնի խմբակների տարածման շրջանում, Վենետիկի Մխիթարյան միաբանները թարգմանում և 1868 թ. հայատառ թուրքերենով հրատարակում են պաղղե (հայր) **Պրեշիանի** «Լիոնելլոյի արկածները» 515 էջանոց վեպը: Այս վեպում հերետիկոսներ են համարվում աստծո ճշմարիտ ուղուց հեռացած և առաջադեմ հոսանքներին՝ մասնավորապես հեղափոխական շարժմանը միացած մարդիկ: Բնորոշ է այն փաստը, որ հայկական եկեղեցին, ի դեմս առաքելական եկեղեցու դրույթներն այնքան վճռականորեն պաշտպանող իր գաղափարախոս-աստվածաբան **Տերոյենցի** (Հովհաննես Չամուռճյան, 1801-1888)՝ քաղաքական պայքարում նույնիսկ դաշինքի մեջ է մտել գաղափարական իր հակառակորդների՝ կաթոլիկների հետ և միավորվել մի ճակատում: Այդ ճակատն ուղղված է եղել նալբանդյանական գաղափարների ու դրանց համախոհների գործի դատապարտմանը: Տերոյենցը, որն իրավմամբ արժանեցել է «Հայոց անվեղար կաթողիկոսի» և «Շրջուն մատենադարան» հորջորջումներին՝ իր բազմակողմանի ստեղծագործական, հրատարակչական, աստվածաբանական, թարգմանական, հասարակական ողջ գործունեությունը հիմնականում նվիրել է հայ ավանդական եկեղեցու ջատագովությանը, հայ մարդու մեջ քրիստոնեական կայծի պահպանմանը: «Լիոնելլոյի» տպագրության նույն տարում և էթ՝ 1868թ., Տերոյենցն իր տպարանում հրատարակում է իր իսկ թարգմանած **Սերվանտեսի** «Դոն Զիշտոը»: Կարծում ենք այս ստեղծագործության գեղարվեստական մեծ արժեքը ամենաքիչն է դրդել թարգմանիչ-հրատարակչին՝ ասպարեզ հանել այս ստեղծագործությունը: Պետք է կարծել, որ Տերոյենցը դոկտրինային էր նկատում միապետական ռեժիմի դեմ Միքայել Նալբանդյանի ու նրա համախոհների գործունեությունը: Մամուլում գրքի մասին տպագրած հայտարարության մեջ պոլսահայ գրականության բացառիկ դեմքերից մեկը հանդիսացող Չամուռճյանը գրում է, թե վեպը համարում է «Բարոյախոսական-խրատական»: Հայատառ թուրքերենով տպագրված գրքի տիտղոսաթերթին նշված է,

որ գիրքն «ուղղված է երիտասարդական անխոհեմությունների դեմ»¹⁸⁵:

185 Հովհաննես Տերոյենց (Չամուռճյան, Պրուսացի Տեր Կարապետյան (1801-1888) հանդիսանում է արևմտահայ հասարակական-քաղաքական ամենահայտնի դեմքերից մեկը: Չմայած ակնհայտ պահպանողական, ռեակցիոն գործունեությանը, նա հանդիսացել է իր ժամանակի ամենակրթյալ մարդկանցից մեկը: Ծնվել է Պրուսայում, մուշտակավաճառի ընտանիքում: Հայրը քահանա է ձեռնադրվել և կոչվել Տեր Կարապետ: Հովհաննեսը տիրապետել է թուրքերենին: Սովորել իտալերեն՝ հաճախելով իտալական հյուպատոսարան: Այս սովորել հունարեն, լատիներեն, գերմաներեն, արաբերեն և պարսկերեն լեզուները: 13 լեզուներ է իմացել Տերոյենցը: Ուղեկցելով Պողոս Արք. Գարագոչյանին (1751-1825) Արմաշի վանք, որպես գրագիր՝ կատարելագործել է լատիներենը: Մերժել է արքեպիսկոպոսի առաջարկած եկեղեցական սքեմը: Այս ընթացքում հայաստան թուրքերենի է թարգմանել չորս Ավետարանները: Արմաշում ստանձնել է իտալերենի և թուրքերենի ուսուցչի պաշտոն: Ամուսնանալուց քիչ անց հաստատվում է Կ.Պոլսում: Տարբեր պաշտոններ է վարում՝ սպարապետ Խոսրով Մեհմեդ Փաշայի մոտ, ապա տեսուչ՝ Սլյուտարի ճեմարանում մինչև 1849թ.: Հիվանդության պատճառով սկսում է տանը ֆրանսերենի և հայերենի դասեր տալ, զբաղվել թարգմանական և ինքնուրույն գրական գործունեությամբ: Բնագրով կարդում էր հունա-հռոմեական դասական գրականությունը, փիլիսոփայական գործեր, ֆրանսիական, գերմանական, անգլիական մտածողների երկերը, մասնավորապես Հեգելին: Երիտասարդ տարիներին տարվել է առաջադեմ ֆրանսիական լուսավորիչներով: 1829թ. թարգմանել է հայերեն Ժան-ժակ Ռուսոյի «Հասարակաց դաշինքը», որը չի տպագրվել: Հետագայում, պաշտպանելով պահպանողական գաղափարներ՝ դարձել արևմտահայ հետադիմական շրջանակների գաղափարախոսը և առաջադեմ հոսանքների կատաղի հակառակորդը: Նրա հարձակումների թիրախը հիմնականում առաջադիմական «Մեղու» և «Ծաղիկ» պարբերականների շուրջ հավաքված դեմոկրատական ուժերն էին: Բնականաբար նա կատաղի պայքար մղեց Մ.Նալբանդյանի և հայ մտավորականության առաջադեմ մասի վրա ունեցած նախանդանակական հայացքների դեմ: Նրա կատարած թարգմանությունները միշտ էլ որոշակի նպատակ են հետապնդել: Այսպես օրինակ, նրա 1863 թ. տպագրած «Խորհուրդ գաղտնի ընկերության» երկը ուղղված էր հայ իրականությունում հեղափոխական, սոցիալիստական գաղափարների դեմ: Նրա «Դոն Բիշոտ»-ի համառոտ տարբերակի հայաստան թուրքերեն թարգմանության առաջաբանում գտնում ենք Նալբանդյանին ուղղված թունավոր մակդիրներ: Այնուամենայնիվ չպետք է մոռանալ, որ Տերոյենցին է պատկանում Մերվանտեսի «մուտքը» թուրքիս:

1846թ. Սկրտիչ Աղաթոնի (1821-1890) հետ սկսում է հրատարակել «Հայաստան» շաբաթաթերթը: Ստեղծանում է Պոլսի լազարիստների ուխտի ղեկավար Էօժեն Պօրեի հետ և սկսում թղթակցել Փարիզի Արևելյան լեզուների Վարժարանի դասախոս Էդուար Դյուլորիեյի հետ: Հրավիրվում է նրա կողմից հաստատվելու Փարիզում, որպեսզի հայերեն դասախոսի Փարիզի «Կոլեջ դը Ֆրանս»-ում: Մերժելով առաջարկը, նա շարունակում է նամակագրությունը հայտնի աստվածաբան-հայագետ Ֆելիքս Նելլի (1816-1893) հետ: 1845 և 1851թթ. հայաստան թուրքերենով, ամենայն հավանականությամբ Ֆրիդրիխ Գասպար Նոյմանի հետ Տերոյենցի համատեղ թարգմանությամբ Կ.Պոլսում և Չմյուռնիայում լույս է տեսել «Զրույցներ մեղքի և մարդկային հոգու փրկության մասին» երկը :

1855թ. սկսում է հրատարակել «Զօհալ» հայաստան թուրքերեն կրոնական հանդեսը, որ լույս է տեսնում իր հիմնադրած տպարանում:

1857թ. նույն տպարանում սկսվում է լույս տեսնել «Երեսակ» հանդեսը: Առաջին անգամ որպես հրատարակիչ օգտագործում է Տերոյենց մականունը՝ Տեր-Կարապետյան-Չամուռճյանի փոխարեն: Տերոյենցը դասախոսել է երկու տարի լազարիստների ուխտի Կոլեջում: Այս նպատակով պատրաստել է 43 պատմական դասախոսություն-ճառեր:

1865թ. ի պատասխան Վիեննայում Հովսեփ վրդ. Գաթրճյանի «Հիմնական տարբերություն Կաթողիկե եւ Էջմիածնական եկեղեցույ» աշխատության, Տերոյենցին է հանձնարարվում պատասխան գրել առաքելական եկեղեցու կողմից: Եռասիատոր պատասխան-աշխատությունը կրում է «Իրավախոհ» վերնագիրը:

1877թ. Սլյուտարում գտնվող նրա երկու տները հրո ճարակ են դառնում: Մեկ տարի անց՝ 1878 թ.՝ Տերոյենցը մահկանացուն է կնքում: Համաձայն Տերոյենցի կենսագիրներից Հարություն Մյմրյանի (1860-1926) Պատվելի Տերոյենցը (կապ չունի բողոքական պատվելի աստիճանի հետ: Այն տրվել է ի նշան մեծ հարգանքի) թողել է 150 հատոր ձեռագիր և տպագիր գործեր, թարգմանություններ: 32 հայերեն տպագիր երկեր, որոնց թվում այնպիսի պատկառելի գործեր, ինչպիսիք են Մ.Ջոյաի

Հակոբ Օշականը Տերոյենցին համարում է «Ջարթոնքի սերնդի» պահպանողական թևի միակ գագաթը, որը միայնակ ի գորու էր ներկայացնել 19-րդ դարի առաջին կեսի արևմտահայության ամբողջ մտայնությունը: Նրան անվանել են նաև «աշխարհիկ վանական», որն իր ողջ գործունեությունն ի սպաս է դրել հայ առաքելական եկեղեցու շահերի պաշտպանությանը: Լինելով չափազանց զարգացած մտավորական, նա տրամաբանորեն եղել է պահպանողական թևի ներկայացուցիչը հայ իրականությունում, հեռատեսորեն զգալով այն ողբերգությունը, որը սպասելի էր Օսմանյան կայսրության նման մահմեդական մի երկրում, ուր ամեն մի առաջադիմական քայլ կոչված էր ճակատագրական լինելու հայ ժողովրդի համար: Նրա կարծիքով միակ փրկարար քայլը հայապահպանության համար՝ ավանդական կրոնին նեցուկ մնալն էր: Բազմակողմանի զարգացած այս մտավորականը, որ տասից ավելի հին ու նոր լեզուների գիտակ էր, զսպեց իրեն եվրոպական առաջադեմ գաղափարախոսության ներթափանցումից առաջացրած գլխապտույտ երազներից: Նա գոհ դարձավ իր ժամանակի հակասական գաղափարներին և չկարողացավ ճեղքել առաջադիմության ընձեռնելիք հնարավորությունները: Նա արհեստականորեն կոպիտ պահպանողականության կողմնակից մնաց՝ փորձելով արևմտահայությանը հեռու պահել նոր գաղափարների գայթակղությունից, որի հետևանքները չարագուշակ էին թվում նրան: Տերոյենցի՝ հասարակական գործչի կերպարն անկում ապրեց զարթոնքի սերնդի առաջադեմ մտավորականության նկատմամբ իր անկաշառ, կատաղի ու անհողորդ կեցվածքի պատճառով: Սահմանադրականների հաղթանակն իր պարտությունն էր: Յավոք սրտի, նրա գրական, աստվածաբանական, փիլիսոփայական ու պատմագիտական պատկառելի ժառանգությունը մինչ օրս մասնավոր ուշադրության չի արժանացել: Նրա հետադիմական կեցվածքը առիթ է դարձել նրա դեմ խաչակրաց արշավանքի ու պարոնյանական հեզմանքի «Ազգային ջոջեր»-ում: Գալով հայատառ թուրքերեն գործերին, նշենք ըստ ժամանակագրական կարգի՝

1. Վանըլը պիր էրմենի իլէ բրօթսթանդ քարոզիչ (Վանցեցի հայր և բողոքական քարոզիչը), 546 էջ, 7 մասից, Կ.Պոլիս, 1844.
2. Յայտարար ուղղութեան եանի... Չմյուռնիա, 332 էջ, 1845.
3. Կենճ Բրիստոնեայ (Երիտասարդ բրիստոնյա), թարգմանություն. Կ.Պոլիս, 1864.
4. Սուրբ Յակոբ նամ իքի Առաքեալարըն նագլի (Երկու ս.Հակոբ առաքյալների պատմությունը) Երուսաղեմ, 1868.
5. Սերվանտեսի «Դոն Բիշոթը» Կ.Պոլիս, 1868, 506 էջ:

Հայատառ թուրքերեն ձեռագիր վիճակում թողել է՝ Ինճիլի Շերիֆ (Նոր կտակարան) 1819. և «Յայտարար ուղղութեան», հ.Բ. 1843.

Այնուամենայնիվ արևմտահայ մտավորականության այս «կաղնին», որի դավանան-

քառահատոր «Քաղաքավարութիւն»-ը (1843), «Բրիստոնեական վարդապետութիւն»-ը (1843), Պասկալի մասին աստվածաբանական և փիլիսոփայական քննությունը (1844), բազմաթիվ թարգմանություններ: Հովհաննես Տերոյենցի թողած հայերեն, նաև հայատառ թուրքերեն ժառանգությունը պետք է ուսումնասիրության առարկա դառնա նրա խմբագրած «Հայաստան», Չօհալ» և «Երեսակ» պարբերականների հետ միասին, քանզի վերջիններիս էջերում գտնվում են հայագիտական, բանասիրական, կրոնագիտական, թարգմանական հետաքրքիր ու պատկառելի նյութ:

քը եղել է հայ ժողովուրդն ու եկեղեցին կյանքի գնով պահպանելը՝ խորին հարգանքի ու ուսումնասիրության է արժանի սերունդների ու գիտնականների կողմից¹⁸⁶:

Առաջին հայացքից կարող է տարօրինակ թվալ այն հանգամանքը, որ Վենետիկի Մխիթարյանների միաբանությունը տարիներ շարունակ հայ ժողովրդի անցյալի փառավոր էջերը վեր հանելով ու հայրենասիրության ոգին վառ պահելու գործին հավատարիմ՝ 1868 թվականին, այսինքն ազգային ինքնագիտակցության զարթոնքի ամենաբուռն շրջանում, հանկարծ, տպագրում է հայաստան թուրքերենով թարգմանական մի վեպ «Լիոնելլոն», որն ուղղված է առաջադիմական հեղափոխական գաղափարախոսության դեմ: Տարիներ շարունակ հայ մշակույթի ու պատմության ուսումնասիրության, մշակման աշխատանքներին լծված մխիթարյանների այս քայլը բացատրելու համար պետք է նկատի ունենալ Վատիկանի կամակատար Անտոն Հասունյանի անձը: Հասունյանն ու իր կողմնակիցները լայն ճակատով գործունեություն էին ծավալել ոչ միայն առաքելական հայ եկեղեցու ու նրա հոտի, այլև հայ ժողովրդի միասնության համար պայքարող առաջադեմ ու կրթյալ հայ կաթոլիկության ներկայացուցիչների դեմ: Այդպիսի հայրենասեր կաթոլիկ գործիչներից էին **Հովսեփ Վարդանյանը, Ծերենցը, Սկրտիչ Պեշկաբաշյանը** և այլք: Պայքարի թիրախ էր դարձել նաև ամենամեծ հայագիտական կաթոլիկ կենտրոնը՝ Վենետիկի ս.Ղազարի Մխիթարյան միաբանությունը: Վերջիններիս հասցեին արված մեղադրանքները բերվում էին նրան, որ մխիթարյան հայրերը մի կողմ թողնելով կաթոլիկ գաղափարախոսության տարածման գործը՝ զբաղված էին հայ ժողովրդի հերոսական անցյալի վեր հանմամբ: Այս գործունեության հետևանքով իրական հնարավորություն էր ստեղծվում հայ ժողովրդի դավանական միավորման: Այս հանգամանքը խաթարում էր Հռոմի անսահման իշխանությունը հայ կաթոլիկների վրա: Հայ իրականության համար այս երանելի միացման գաղափարը նոր թափ ստացավ Միքայել Նալբանդյանի Թուրքիա կատարած երկու այցելությունների շրջանում: Հայ առաքելական եկեղեցու դիրքերից ընդդեմ Նալբանդյանի ելույթ ունեցավ Տերոյենցը: Հակառակ դրան և մյուսների այս ուղղությամբ կատարված ջանքերի՝ շարժումն ուժեղանում էր, իր մեջ ներառելով Հասունյանի դեմ պայքարի հզոր հակազդեցության ոգին:

Հայտնի է, որ 1867թ. Վատիկանը հատուկ որոշում հրապարակեց, որն արգելում էր ս.Ղազար կղզու Մխիթարյաններին զբաղվել հայ ժողովրդի պատմության և մշակույթի ուսումնասիրությամբ: Այս որոշումը պահանջում էր ուժեղացնել զուտ կրոնական քարոզչությունը: Վատիկանի այս որոշումը, հայտնի հրապարակախոս և գրող **Արփիար Արփիարյանի** վկայությամբ՝ մեծ մտահոգության առիթ էր հանդիսացել միաբանության հայրերի շրջանում, մասնավորապես ականավոր բանաստեղծ, բանասեր ու պատմաբան **Ղևոնդ Ալիշանի** (1820-1901) մոտ:

186 Տես՝ Տերոյենցի մահվան հարյուրամյակին նվիրված հոբելյանական հրատարակությունը՝ «Պրուսացի Յովհաննես Տերոյենց մեծ մտաւորականի յիշատակի ոգեկոչում մահուան հարիւրամեակին 1801- 1888 առիթով» Իսթանպուլ 1988: Տերոյենցի որդին՝ Ատոն Տերոյենցը (1846-1925), որը պաշտոնավարել է Հանրային պարտքերի վարչությունում՝ նույնպես գրական ժառանգություն է թողել: Նա թուրքերենի է թարգմանել Նարեկը և հեղինակն է «Հայ Բեռեազիրք» գիտական աշխատության:

Դեռևս 1852 թվականին, Վենետիկի բնակիչներից կանոնիկ **Ջուզեպպե Քերելլեթթի** անունով մի քահանա պարսավագիր էր հրապարակել Վենետիկի Մխիթարյանների դեմ: Փարիզի Նուպարյան մատենադարանում պահպանվել են այս խնդրին վերաբերող մի քանի հրատարակություններ, այդ թվում պարսավագրի հեղինակ **Ջուզեպպե Քերելլեթթի**ին ուղղված պատասխանը, իտալերենից թարգմանված: Այն տպագրել են Կ.Պոլսում 1852 թվականին **Հովհաննես Մյուհենտիսյանի** տպարանում և որը 40 էջ է կազմում: Հաջորդը՝ Վենետիկի միաբանության մասին ընդհանուր կարծիք է, վկայված **Պետրոս Բրանդոն Աբբահոր** կողմից (1852, Կ.Պոլիս): Վենետիկի Մխիթարյանների դեմ ուղղված «գարշելի, չարաբախտ, գրգռիչ» պարսավագրի դեմ իրենց գորակցության ձայնն են բարձրացրել Սպահանի թեմի առաջնորդական փոխանորդը և «բոլոր վանականները միասնաբար» (1853, թարգմանություն իտալերենից, Կ.Պոլիս, Մյուհենտիսյան տպարան): Հովսեփ Վարդանյանը, որ դավանանքով կաթոլիկ էր, իտալերենից հայատառ թուրքերենի է թարգմանել հայտնի «Սէմօրիան» («Յիշատակագիր») կամ՝ Վենետիկի Մխիթարյան միաբանների մասին ի հայտ եկած դժգոհությունների պատճառների վերաբերյալ բացատրագիրը՝ ուղղված Հռոմի պապական վարչությանը (1853թ., Կ.Պոլիս. նշված է, որ թարգմանիչն է ծովային ուժերի թարգմանչապետ Հովսեփ Վարդանյանը): Մխիթար Աբբայի գործն ազնվորեն շարունակող հայասեր այս միաբանների դեմ լարված ծուղակն ու քաշքշուկը տարիներ տևեց, բնականաբար իր ազդեցությունը թողնելով նրանց գործունեության ու գրահրատարակչական ծրագրերի վրա: Վատիկանի այդ խստագույն որոշումը համընկավ Միքայել Նալբանդյանի մահվան առաջին տարելիցի հետ (1867թ.), այսինքն հեղափոխական-դեմոկրատի գաղափարների Թուրքիայում ամենբուն տարածման ժամանակաշրջանի հետ: «Լիոնեյլո»-ի ոճի գրքի հրատարակությունն այդ շրջանում մխիթարյանների կողմից՝ լիովին բացատրվում է, ելնելով նրանց դեմ ուղղված վերոհիշյալ հավաքների փաստից: Ինչո՞ւ են հետաքրքիր այս փաստերը մեզ համար: «Լիոնեյլոյի արկածները» գրքի գլխավոր հերոսը երիտասարդ հասակում կապվում է գաղտնի կազմակերպությունների հետ, վարում ցոփ ու շվայտ կյանք, թափառում աշխարհով մեկ: Այս թափառումները, բնականաբար ուղեկցվում են արկածներով, բախտախնդրությամբ, սահմուկեցուցիչ հանցագործությունների նկարագրություններով, որ կատարում է Լիոնեյլոն գաղտնի կազմակերպությունների հրամանով: Նա սպանում է իր ամենահավատարիմ ու մտերիմ ընկերոջը, հետո՝ զոչում իր կատարած հանցանքների ու անիմաստ ապրած տարիների համար: Լիոնեյլոն իր կյանքն ավարտում է ինքնասպանությամբ: Մահվանից հետո մնում է նրա մանրամասն օրագիրը, որը և հիմք է ծառայում արկածային վեպի համար: Ի՞նչ գաղտնի կազմակերպությունների մասին է խոսքը, որոնք ապականում են երիտասարդներին և վնաս հասցնում բարոյականությանն ու ազատությանը: Այս հարցի պատասխանը բացահայտում է վեպի ճիզվիտ հեղինակի քաղաքական տենդենցները և Վատիկանի պատվերով գրված լինելու հանգամանքը: Պարզվում է, որ «հանցագործ միությունների» տակ հեղինակը նկատի ունի հեղափոխական և ազատախոհ գաղափարներ հետապնդող կազմակերպություններին: Վեպում արկածները կտրուկ ընդհատվում են առաջադիմական գաղափարների նկատմամբ փիլիսոփայական, տենդենցիոզ հարձակումներով: Լիոնեյլոն կծու տոնով է

խոսում 60-ական թվականների Բալկաններում, ինչպես նաև Իտալիայում՝ Գարիբալդիի և Մաձինիի գլխավորությամբ շարժման մասին՝ ներկայացնելով այն որպես սովորական, թալանչիական բարբարոսություն¹⁸⁷: Հեղինակի կարծիքով վերոհիշյալ գաղտնի կազմակերպությունների ստեղծման ու տարածման հիմնական պատճառը 18-րդ դարի ֆրանսիական լուսավորիչների գաղափարներն են: Բոլոր տեսակի չարագործությունների աղբյուրը պետք է փնտրել Վոլտերի, Դիդրոյի, Ռուսսոյի մարդկության մոլորությունների անդունդը զցող մտքերի մեջ: Պրեշիանն այդ հեղինակների և նրանց համախոհների, հետևորդների ստեղծագործություններն անվանում է «սատանայական գրքեր»¹⁸⁸: Վեպում ակնարկներ են արվում Պետերբուրգի, Մոսկվայի, Թիֆլիսի, Դրիմի, Օդեսայի, Կ.Պոլսի, Իզմիրի և այլ քաղաքներում գործող գաղտնի կազմակերպությունների, խմբերի գոյության մասին, որոնց կենտրոնները գտնվում էին Լեհաստանում, Ռուսաստանում, Գերմանիայում, Անգլիայում¹⁸⁹: «Լիոնելլոյի» հեղինակը քարոզում է Հռոմի նկատմամբ անսահման հնազանդություն: Պաղղե Պրեշիանը պատմում է մինչև 1861 թվականը տեղի ունեցած դեպքերի մասին: Հետևաբար զիբբը գրված է ամենավերջին պատմական իրադարձությունների հիման վրա և անմիջապես թարգմանվել է տարբեր լեզուներով: Նմանատիպ բովանդակություններ են ունեցել Տերոյենցի հայերենի թարգմանած «Ժակնեն Կլես» և «Խորհուրդ գաղտնի ընկերությանց» վեպերը: Իսկ այս վեպի հայաստան թուրքերեն թարգմանությունն ուղղված էր փաստորեն հայ իրականությունում հեղափոխական, դեմոկրատական գաղափարների տարածման դեմ: Իսկ նման գաղտնի կազմակերպությունները հայկական շրջանակներում կապված են եղել հիմնականում Միքայել Նալբանդյանի անվան հետ¹⁹⁰: Ոչ մի թարգմանական վեպ այդքան հայերեն բառեր չէր պարունակում, որքան այս վերջինը: Մեկ ապացույց ևս, որ այն նախատեսված էր զուտ հայկական շրջանակների ընթերցանության համար:

Հայաստան թուրքերեն թարգմանական գեղարվեստական գրականության մեջ իր ուրույն տեղն ունի միջնադարյան ասպետական «Պատմութիւն Փարեզի եւ Վէննայի» պոեմը: Միջնադարում բազմաթիվ ասպետական վեպեր են ստեղծվել, սակայն դրանցից եզակիներն են արժանացել նման ընդունելության: Բանասերները այդ բացատրում են կոմպոզիցիոն կուռ կառուցվածքով, հերոսների տիպականությամբ ու բանաստեղծակա- նությամբ, գրական և գեղարվեստական այլ արժանիքներով:

187 Տես՝ Պրեշիան Փատրե. Լիօնէլլօնուն սերկիւզէշի. Վենետիկ, Ս.Ղազար, 1868, էջ 436-461 և 462-483:

188 Պրեշիան Փատրե. Լիօնէլլօնուն սերկիւզէշի. Վենետիկ, Ս.Ղազար, 1868, էջ 80 և էջ 102: Նույն 1867թ. այս վեպի նմանողությամբ հայ իրականությունում հրատարակվում է Ա.Հիսարյանի (1827-1916) «Նեռն կամ կատարաշխարհի» վեպը՝ նման բովանդակությամբ՝ հայկական իրականությունից վերցված:

189 Անդ, էջ 391.

190 Ստեփանյան Գառնիկ. Մ.Նալբանդյանի «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատության արձագանքները 1862-1872թթ. տասնամյակում: Ե., ԳԱ «Տեղեկագիր» N 11, 1953, էջ 41-74: 1867թ. մարտի 7-ին, Միքայել Նալբանդյանի հիշատակին «Արևելյան թատրոնում» բեմադրվում է Ռ.Սետեֆճյանի «Վարդան Մամիկոնյան» հայերենասիրական պիեսը, Պետրոս Ադամյանի մասնակցությամբ: Երեկոյի վերջում, սիբիրյան ձյունածածկ դաշտում միայնակ գերեզմանի մոտ Ադամյանը կարդում է Նալբանդյանի «Ազատությունը»: Ռ. Սետեֆճյանը ռուսական ինքնակալության դեմ ճառ է արտասանում: Երեկոն երկրորդ օրը ևս կրկնվում է: Իրականում դահլիճում պոլսահայության զարկերակն էր գտնվում:

«Պատմութիւն Փարէզի եւ Վէննայի» պոեմն երևի մեծ տարածում է գտել նաև շնորհիվ 12-ից ավել ֆրանսերեն ու 22 իտալերեն հրատարակությունների: Պոեմը թարգմանվել է լատիներեն, իսպաներեն, շվեդերեն, ռուսերեն¹⁹¹, հայերեն¹⁹² և այլ լեզուներով: Պոեմն անանուն է և հեղինակի անունը մինչև օրս չի բացահայտվել: Ամենայն հավանակա- նությամբ, բերնեբերան պատմվելով սերնդե-սերունդ, հեղինակի անունը մոռացության է մատնվել: Պոեմը հետագայում գրի է առնվել, արտագրվել բազմաթիվ մարդկանց կող- մից, թարգմանվել աշխարհի լեզուներով: Յուրաքանչյուր թարգմանիչ կամ արտագրող, իր ազգային, կրոնական և քաղաքական հայացքների պատկանելությանը համապա- տասխան փոփոխություններ է մտցրել պոեմում: Մասնագետների կարծիքով «Պատմու- թիւն Փարէզի եւ Վէննայի» սիրային պոեմը ստեղծվել է 14-րդ դարի կեսերին: Հայտնի է, որ նա գրի է առնված եղել կատալոներեն, հետո միայն թարգմանվել պրովանսերեն, իսկ 1432 թ.՝ ֆրանսերեն: «Պատմութիւն Փարէզի եւ Վէննայի» առաջին տպագրությու- նը կատարվել է ֆրանսերեն լեզվով 1487 թվականին: Հայերեն այն թարգմանվել է 16-րդ դարի վերջին **Հովհաննես Տերզնցու և նրա որդու՝ Խաչատուրի** կողմից 1587 թվակա- նին Մարսելում¹⁹³: Թարգմանությունը կատարվել է ազատ շարադրմամբ, անգամ հայ- կական դրվագների ներմուծմամբ: Հայ իրականության մեջ այս պոեմի նկատմամբ հե- տաքրքրության մասին է խոսում այն փաստը, որ մեզ են հասել պոեմի ձեռագիր թարգ- մանության 8-10 տարբերակներ¹⁹⁴: Համաշխարհային ճանաչում ստացած գրական այս հուշարձանը թարգմանվել է նաև հայատառ թուրքերեն, իսկ լույս աշխարհ է եկել 1871 թվականին: Տպագրության տիտղոսաթերթից իմանում ենք, որ թարգմանիչն է Երեմիա Չելեպի Բյոմուրճյանը:

Մենք բոլոր հիմքերն ունենք պնդելու, որ այս հրատարակությունը նախատեսված է եղել ոչ միայն հայկական շրջանակներին նկատի ունենալով, այլ նաև՝ թուրքախոս ընթերցողներին: Այս մասին ակնարկում է նաև **Կարապետ Մելիք-Օհանջանյանը**: Նա նկատել է, որ գրքից բացակայում են Հայաստանին և հայերին վերաբերող մասերը: Փաստորեն բացակայում է գլխավոր հերոսի այցելությունը Կիլիկիա, Փոքր և Մեծ Հայք, Անիի ամրոց: Հպանցիկ կերպով հիշատակվում է այն մասին, որ գլխավոր հերոսը եղել է Գյուրջիստանում և Թավրիզում: Կ. Մելիք-Օհանջանյանն այս հանգամանքը բացատ- րում է Երեմիա Չելեպի Բյոմուրճյանի քաղաքական զգուշությամբ: Ըստ ամենայնի Չե- լեպին կրճատել է մի քանի գլուխներ, որպեսզի «չգրգռի թուրքերին»: Սակայն հայտնի է, որ Երեմիա Չելեպի Բյոմուրճյանը թարգմանությունը կատարել է բավականին վաղ, 17-

191 “История о Париже и Вене”, переводная повесть в стихах петровского времени. Приготовил к изд. Н.Н. Виноградов. Предисл. Акад. А. Соболевского.-СПБ, 1913.

192 Մատենադարան, ձեռ. 1456. Այս մասին տես մեր ուսումնասիրության առաջին գլխի ձեռագրական գրականությանը նվիրված մասում:

193 Հովհաննես Տերզնցի (16-րդ դ.) հայ հրատարակիչ, թարգմանիչ: Հրատարակչական գործով զբաղվել է որդու՝ Խաչատուրի հետ Հռոմում, Վենետիկում, Մարսելում: Թարգմանության ձեռագիրը գտնվում է Վիեննայի Մխիթարյանների մատանադարանում՝ ձեռ.88: Հայատառ թուրքերեն ձեռագրի տեղը հայտնի չէ:

194 Պոեմի որոշ հատվածներ հրատարակվել են Գարեգին Սրվանձտյանի կողմից «Մանանա»- ում: Պոեմի հայկական տարբերակների քննա-համեմատական բնագրի լույս ընծայումը համապատասխան ծանոթագրություններով կատարել է 1966 թվականին հայագետ Կարապետ Մելիք-Օհանջանյանը (1893-1970):

րոդ դարի կեսերին և դժվար թե նպատակ է ունեցել այն հրատարակելու: Ավելի հավանական է, որ կրճատումները կատարված լինեն հրատարակչի կողմից՝ քաղաքական նույն գգուշավորության նպատակներով: Վեջինս ոչ միայն կրճատել է հայ ժողովրդին վերաբերող մասերը, այլև քրիստոնյաներին և դավանաբանական բնույթ ունեցող հատվածները: Եթե գրքի տպագրությունը նախատեսված լիներ միայն հայ ընթերցողների համար, ապա բոլորովին կարիք չէր զգացվի նման նրբանկատ գգուշավորության: Մինչդեռ նկատի ունենալով թուրքերեն ընթերցողների և թուրքերի կողմից տպագրության պատվիրված լինելու հանգամանքը՝ կատարվել են համապատասխան կրճատումներ: Պոեմի հայաստան թուրքերեն հրատարակության առաջաբանի մի քանի տողերում պարզորոշ ասվում է Երեմիա Չելեպի Բյունյուրճյանի թարգմանության թուրքերի կողմից տպագրության պատվիրված լինելու մասին: Դրանից հետևում է, որ մուսուլման և ֆրանսիացի բարեկամները ծանոթանալով Չելեպիի թարգմանությանը, խորհուրդ են տվել անպայման տպագրելու պոեմը: Չարմանալիորեն այս տողերը վրիպել են Կ. Մելիք-Օհանջանյանի ուշադրությունից: Չանդրադառնալով անգամ այն հարցին, թե որքանով է Չելեպիի թարգմանությունը համապատասխանում հայերեն տարբերակին, որից կատարվել է թարգմանությունը: Պետք է նշել որ հայերեն տեքստն իր հերթին՝ չի համապատասխանում հայտնի բնագրերից և ոչ մեկին: Նշեցինք, որ յուրաքանչյուր թարգմանիչ կամ կրկնօրինակող իր հերթին, իր հայեցողությամբ հավելումներ ու կրճատումներ է կատարել: Մի մասն էլ ուղղակի իրենց լեզվով վերաշարադրել են բովանդակությունը: Այդպես է վարվել հայերեն թարգմանության հեղինակը, որը և հիմք է ծառայել Չելեպիի հայաստան թուրքերեն թարգմանության համար: Պարզորոշ է, որ Չելեպին իր հերթին ազատ է զգացել և մի շարք բանաստեղծական գեղումներ է ունեցել և դրանք ներդրել տեքստում: Արժանահիշատակ է այս առումով պոեմի վերջին քառյակը, որն իր ոճով հիշեցնում է հայ հին պատմագրերին: Չելեպին գրում է, որ ինքը «երիտասարդ հասակից ի վեր երազել է թարգմանել այս երկը, համարելով այն շատ օգտակար սիրահար երիտասարդների համար: Սակայն իր կյանքն անարդյունք է անցել»: Երեմիան իր անունն է մտցրել նաև Օրդուբադի և Իզաբելլայի ամուսնության հատվածում, ավստսելով որ ինքը, պատմելով այս ամենը, մենակ է մնացել անապատում: Փաստ է, որ թարգմանելով այս պոեմը Երեմիա Չելեպին այն դարձրել է թուրքալեզու մշակույթի սեփականությունը:

Երեմիա Չելեպին տիրապետել է մի քանի լեզուների (ֆրանսերեն, իտալերեն, լատիներեն, հունարեն, թուրքերեն և բնականաբար՝ գրաբար): Պատասխանատու պաշտոններ է վարել թուրքական պետական հիմնարկներում, դեսպանատներում: Շատ երկրներում է եղել: Եղել է նաև Արևելյան Հայաստանում, Էջմիածնում, Երևանում և այլուր: 1677թ. Կ.Պոլսում տպարան է հիմնել և մի շարք գրքեր է հրատարակել: Հայերենով գրված նրա աշխատություններից առավել արժեքավոր է «Ստամպոլա պատմութիւնը» (տպագրվել է Վ. Թորգոմյանի ծանոթագրություններով 1913թ.): Այն Հ.Անդրեասյանի կողմից թուրքերենի է թարգմանվել և ծանոթագրություններով հանդերձ տպագրվել 1952 թվականին, Ստամբուլում: Բնականաբար նրա բոլոր հետաքրքիր և արժեքավոր աշխատությունների կողքին մեզ ավելի հետաքրքրում են Չելեպիի թուրքերեն թարգմանությունները: Դրանցից ամենակարևորը Մովսես Խորենացու «Հայոց պատմութեան» հա-

մառոտ տարբերակի հայատառ թուրքերեն թարգմանությունն է: Ընթերցողներին ավելի լայն պատկերացում տալու համար Հայաստանի ու հայերի մասին՝ Մովսես Խորենացու գրքի վերջում ավելացրել է Բագրատունիների ու Ռուբինյանց թագավորության համաժողով պատմությունը:

Երեմիա Չելեպին հայատառ թուրքերեն է թարգմանել ոչ միայն «Պատմութիւն Փարեզի եւ Վէննայի» սիրային պոեմը, այլև Ալեքսանդր Մակեդոնացու պատմությունը¹⁹⁵: «Պատմութիւն Փարեզի եւ Վէննայի» ազդեցությամբ հայատառ թուրքերեն գրել է «Պատմութիւն Տիմոսի» պոեմը՝ միջնադարյան ասպետական սիրավեպերի ոճով՝ հայատառ թուրքերեն և հայերեն բազմաթիվ բանաստեղծական հատվածներով հանդերձ: Վերջապես հայատառ թուրքերեն է թարգմանել հատվածներ Աստվածաշնչից և Նոր Կտակարանն ամբողջությամբ, Սաղմոսագիրքը: Քյոմուրճյանը հաճախ ինքն է թուրքերենի թարգմանել իր գործերը:

Կասկած չի հարուցում այն փաստը, որ Երեմիա Չելեպի Քյոմուրճյանն իր ինքնուրույն գործերի մեծ մասը գրել է հայ և թրքախոս հայ շրջանակների համար: Գալով Մովսես Խորենացու երկի թարգմանությանը, ապա նա հակված է եղել «Պատմությունը» ներկայացնել նաև թուրք և թրքախոս ընթերցողներին:

Հարկ է նշել, որ պալատական շրջանակներին ուղղված Երեմիա Չելեպիի թարգմանությունները լեցուն են միայն այդ շրջանակներին հասկանալի արաբա-պարսկական ծեփծեփուն ոճով, օսմանիզմներով: Մինչդեռ հայկական շրջանակների համար նախատեսված գործերը պարզ, հասկանալի թուրքերենով են: Հետաքրքիր է, որ պալատական շրջանակների ու ժողովրդի համար նախատեսված հրատարակությունների լեզվական մասն տարբերակումը բնորոշ է եղել նաև 18-19-րդ դարի հայատառ թուրքերենով ստեղծագործած այլ հեղինակների: Ասվածի լավագույն ասպացույց է հանդիսանում ականավոր հայ հասարակական-քաղաքական գործիչ, գրող, հրապարակախոս, Բարձր Դռան բարձրաստիճան պաշտոնյա Հովսեփ Վարդանյանի (Վարդան Փաշա) գրական ժառանգությունը¹⁹⁶:

19-րդ դարի ֆրանսիական լուսավորիչների ստեղծագործությունների թարգմանությունն ու հրատարակումը հայերեն և հայատառ թուրքերեն՝ նշանակալի երևույթ էր արևմտահայ իրականության մեջ:

Վոլտերի երկերի թարգմանությունը որևէ լեզվով՝ նախ և առաջ հանդիսանում է այդ ժողովրդի հոգևոր զարգացման չափանիշը: Այս իմաստով Վոլտերի երկերի մուտքը Թուրքիա՝ նշանակալի երևույթ էր, անկախ այն փաստից, թե ովքեր են դրա հեղինակները՝ հայերը, թե՛ թուրքերը: Կ.Պոլսում և Ջմյունիայում իրականացվել են Վոլտերի «Միկրոմեգա», «Կանդիդ կամ օպտիմիզմ», «Չաղիկ կամ Ճակատագիր», «Չաիր» երկերի հայերեն և թուրքերեն թարգմանությունները: Այս առումով չպետք է մոռանալ

195 Տես այս գրքի ձեռագրական գրականությանը նվիրված գլուխը:

196 Հովսեփ Վարդանյանի ստեղծագործությանը կանոդադառնանք նրա «Ազգայի» վեպի և «Նապոլեոնի պատմությունը», «Արևելյան պատերազմների պատմությունը» պատմական աշխատությունների առիթով:

«թուրք մտավորական» շրջանակներին¹⁹⁷:

Թուրքական նոր գրականության հիմնադիրներից Շինասին «Փիլիսոփայական երկ-խոսություններ» անվան տակ օսմաներեն է թարգմանել հատվածներ Վոլտերից, Ռասինից, Լամարթինից, Մյուսսեյից, Հյուգոյից, Բուալոյից, Ժիրքերից, Ֆենելոնից, Ֆոնտենելից: Նամըք Քեմալը թարգմանել է Ռուսսոյի «Հասարակաց դաշինքը», Մոնտեսքիե: Ջիյա Փաշան թարգմանել է Մոլիերի «Տարտյուֆը», Ֆենելոնի «Տելեմաքը և Ռուսսոյի «Հասարակաց դաշինքը» օսմաներենից արաբերենի վերածել: Շամսեդդին Սամին թարգմանել է Հյուգոյի «Թշվառները», Ահմեդ Միդհատը՝ Էմիլ Ռիշբորգի «Անիծյալ աղջիկը» (1883թ.) և այլն:

Այս ստեղծագործությունները թուրքերեն (օսմաներեն) են թարգմանել նաև այն հայ մտավորական գործիչները, որնք պաշտոնավարել են կառավարական շրջանակներում: Այսպես օրինակ, «Նոյեան աղանի» շաբաթաթերթի խմբագիրներից Ապրո Սահակը (1823-1900), որ Թուրքիայի արտաքին գործերի նախարարությունում կարևոր պաշտոններ է վարել, թուրքերեն է թարգմանել «Մեծն Պետրոսի պատմությունը», Վոլտերի «Կառլոս ԺԲ-ի պատմությունը», Պ. Մեյի «Քաղաքական տնտեսությունը», Ռեֆաթ Փաշայի հետ միասին՝ Մաքիավելլիի «Իշխանը», քաղաքական նշանավոր անձանց մասին ուսումնասիրություններ: Գասպար Թույսուզը թարգմանել է Մոլիերի «Ակամա բժիշկը» (1849թ.), Դիարբեքիրի չակոբ Լյուքֆին՝ «Եզովպոսի առակները» (1873թ.) և այլն: Քսավի դը Մոնթեպեյն են թարգմանել Սուլեյման Վեհալին և Մանուկ Գյումուշյանը (1874թ.), Ժյուլ Վեռն՝ Հովհաննես Գուկասյանը և այլն: Ալ. Գյումայի «Կոմս Մոնթե Քրիստո» վեպը թարգմանել է թուրքական առաջին՝ “Diyojen” (1870-1873) և “Hayal” (1873-1877) երգիծաթերթերի հրատարակիչ, ազգությամբ կեսարացի հայտնի հույն լրագրող Թեդրո Քասապը (1835-1905) և տպագրել իր թերթի տպարանում 1871-1873 թթ.: Օսմաներեն “Hayal”-ն ունեցել է հենց սկզբից իր հայատառ թուրքերեն «Խէյալ» տարբերակը (1873-1874թթ.): Հայերի և թուրքերի կողմից օսմաներենով կատարված թարգմանությունները հիմնականում տպագրվել են Կ.Պոլսի մի շարք հայկական տպարաններում: Բնականաբար թուրքական պալատական շրջանների պատվերով կամ խորհրդով կատարված այս թարգմանությունները դուրս չեն եկել նախատեսված ընթերցողական նեղ շրջանակներից: Բոլոր օսմաներեն թարգմանությունները միասին շատ ավելի փոքր ընթերցողական շրջանակ են ունեցել քան այդ ստեղծագործություններից մեկի հայատառ թուրքերեն տպագրությունը: Եթե այս գործերի հայերեն հրատարակությունները նախատեսված էին հայ մտավորական լայն շրջանակների համար, ապա դրանց հայատառ թուրքերեն հրատարակությունները գավառի, կիսագրագետ թրքախոս հայերի համար չէ որ տպագրվել են: Կայսրության մեծ քաղաքների տարբեր ազգերի մտավորական ընտանիքներում ընդունված սովորություն է եղել կարդալ հայատառ թուրքերեն գրքեր, պարբերականներ: Այնպես որ առաջադեմ մտածողների երկերի հայատառ թուրքերեն հրատարակություններն ուղղված են եղել հենց այս բազմազգ մտավորական խավերին,

197 Թուրք լուսավորիչների կատարած թարգմանությունների, ինչպես նաև ֆրանսիական թերթոնային գրականության թուրք և հայ թարգմանիչների մասին տես A.Turgut KUT. Ermeni Harfi Türkçe Telif ve Tercüme romanlar. 1-Victor Hugo'nun Mağdurin Hikayesinin Basılmış nüshası.İst. hողվածը.. (մեր ունեցած առանձնատիպի վրա չկա հրատարակման թվականը):

որոնց համար հայատառ թուրքերեն ընթերցանությունը կենցաղում ընդունված սովորական երևույթ էր: Օսմաներեն թարգմանությունների բնագավառում հայ հեղինակների ու թարգմանիչների գործունեությունը և թուրքերի համագործակցության հետաքրքիր շրջանն արժանի է հատուկ ուսումնասիրության հայ և թուրք գիտնականների կողմից:

Այս խնդրում մեծ ավանդ ունի Հովսեփ Վարդանյանը (1815-1879), իր ժամանակի ականավոր և ամենգարգացած անձերից մեկը, որը կրթություն էր ստացել Վիեննայի Մխիթարյանների մոտ: Նա ստեղծագործել է հիմնականում հայատառ թուրքերեն: Լինելով պալատական բարձրաստիճան պաշտոնյա, արժանացել է «փաշայի» տիտղոսի և «Ուլայի» 2-րդ աստիճանի պատվանշանի, 1837 թվականից՝ գլխավոր թարգման Օսմանյան Արքունի նավարանի ու ծովային վարչության: Պատկանել է կաթոլիկական դավանանքի: 19-րդ դարի 50-ական թվականներին միացել է «Համազգեսց» միության շուրջ համախմբված ու կաթոլիկական պառակտիչ ֆանատիկ թևի դեմ բռուն պայքարի ելած հայ առաջադեմ մտավորականներին: Պայքարի հիմնական թիրախը՝ կաթոլիկ հայերի Վատիկանի կողմից «կաթոլիկոս» կարգված Անտոն Հասունյանի սանձազերծած գործողություններն էին: Արևմտահայ իրականությունում հայ ժողովրդի և եկեղեցու համար կենսազ ու մահու այս պայքարն իր սրությամբ գրավել է նաև ժամանակի թուրք պատմաբանների ու հասարակական գործիչների ուշադրությունը ևս: Այսպես օրինակ, Սադի Բոչաշն իր «Հայերը պատմության ընթացքում և թուրք հայկական հարաբերությունները» գրքի «Օսմանյան կայսրության միջհայկական տարածայնությունները» գլխում նկարագրելով այս պայքարը, հայերի կաթոլիկական համայնքին անվանում է «յարանջը փարմաք» (օտար մատ), այսինքն՝ օտար միջամտությամբ, օտարների ցուցումով գործող: Պայքարող կողմերը կոչվում են գրքում «հասունյանականներ» և «հակահասունյանականներ»¹⁹⁸: Հեղինակը շտապում է նշել, որ թուրքերը հիմնականում չեն միջամտել հայ համայնքի ներսում ծավալված սուր պայքարին: Այս պայքարի արտահայտությունն է հանդիսացել արևմտահայ իրականությունում առաջին ռեալիստական վեպի՝ «Ազապի» հայատառ թուրքերեն ստեղծագործության հրապարակում հայտնվելը: Պալատական բարձրաստիճան պաշտոնյա, հայատառ թուրքերեն պարբերականների արտոնատեր և խմբագիր, գրող, հասարակական գործիչ, դավանանքով կաթոլիկ Հովսեփ Վարդանյանի (Հովսեփ Վարդան փաշա) վեպը տպագրվել է 1851 թվականին, առանց հեղինակի անվան¹⁹⁹, խուսափելու համար իր դիրքին անհարիր աղմուկից, հետապնդումներից:

198 Sadi Koças. Tarih Boynunca Ermeniler ve Türk-Ermeni İlişkileri. Ankara, 1967, s. 117-119/. Այս մասին տես՝ Ch.A.Fraze, Catholics and Sultans. The Church and Ottoman Empire, 1453-1923. Cambridge Univ.Press, 1983. p.95; E.Ch. Suttner, Die Konfrontation des Ostkirchen mit westlicher Theologie. "Die Türken in Europa" p.98-106, Göttingen, 1979; G.Jaesche, Die christliche Mission in der Türkei, Saeculum, Jg.7, 1965, p.68-78.; Robert Anhegger. Osmanlı Devleti'nde Hıristiyanlar ve İç Tartışmalar. "Tarih ve Toplum" İst. 1987, N46-47.s. 53-56, 17-20.

199 Առանց հեղինակի է տպագրվել Հովսեփ Վարդանյանի գեղարվեստական մյուս գործը ևս՝ «Պոչալոզազ պիր ստեմ» («Շատախտը»), 1852 թվականին: Երկու գրքերն էլ տպագրվել են Մյուխենտիս օղու հայտնի տպարանում: Այս ստեղծագործությունների հեղինակի հայտնագործման, հայերեն թարգմանությունների ու հրատարակության (1953, 1979 և 1978թթ) համար պարտական ենք հայտնի բանասեր-թատերագետ Գառնիկ Ստեփանյանին: Գիրքը թարգմանվել է նաև ֆրանսերեն՝ Hovsèp Vartanian. L'histoire d'Akabi. Le premier roman turc (1851). Traduit et présenté par Haik Der Haroutiounian. Préface de Johann Strauss. Edition de la

Այս վեպը մեծ հետաքրքրություն է առաջացրել: Նրա հրատարակությանն են անդրադարձել և հանձնարարել ընթերցողներին անպայման կարդալ վեպը, ժամանակի համարյա բոլոր աչքի ընկնող պարբերականները, առանձին մտավորականներ: Միքայել Նալբանդյանը ավստասալով, որ չգիտի հեղինակի ով լինելը, զմայլանքով է խոսում վեպի մասին, «բնականության և հոգեբանական հարազատության առումով» գերադասելով «Վերք Հայաստանի»-ը, «Սոս և Վարթիթեր»-ից, համոզված, որ չի գիճում և բարձր է եվրոպական վեպերից: Նա ավստասում է, որ այդ հոյակապ և ազնիվ գործը հայերեն չի թարգմանվել և այն կարող է անել միայն հմուտ առաջնակարգ գրագետը:

«Ագապի» վեպը Անտոն Հասունյանի ջանքերով բանադրանքի ենթարկվեց կաթոլիկ եկեղեցու կողմից, արգելվեց և մոռացության մատնվեց մի ամբողջ սերնդի կողմից: Սա ողբերգական սիրո պատմություն է, որի հերոսները զոհ են դառնում հայ կաթոլիկ եկեղեցու պառակտիչ քաղաքականությանը և հետապնդումներին: Հասունյանի կոնդակը հակառակ արդյունք էր տվել և ինչպես վկայում է ֆրանսիացի արևելագետ-հայագետ Դ-յուլորիեն, Պոլսի հայ հասարակության կյանքը վառ գույներով պատկերած վեպն ընթերցողների հսկա բանակի ուշադրությունն է իր վրա հրավիրել²⁰⁰:

Հաջորդ տարի, 1852 թվականին լույս է տեսել Հովսեփ Վարդանյանի երկրորդ վեպը «Պոչպոդազ պիր առեմ» (Շատախոսը), կրկին՝ անանուն: «Ագապի»-ի շուրջ բարձրացրած աղմուկն էր մղել հեղինակին ավելի շրջահայաց լինելու: Երկրորդ վեպը կոչվում էր՝ «Շատախոսը կամ շատախոսության վնասի համառոտ նկարագրությունը»²⁰¹ երգիծական գործը: Գիրքը 2017թ. տպագրությունից 165 տարի անց լատինատառ թուրքերենի վերածված հրատարակվեց Ստամբուլի «Գոչ», համալսարանի մատենաշարով: Հովսեփ Վարդանյան այս երկրորդ գիրքը ևս առանց հեղինակի անվան է հրատարակել²⁰²: Իր ժամանակին գրքի հրատարակությունն ավետող ծանուցման մեջ²⁰³ բովանդակութեան մասին տեղեկություններ են տրվում:

Գիրքն ունի նախաբան ու առաջաբան, կազմված է 7 ծաղրանկարագարող հեքիաթ գլուխներից, ուր նկարագրվում է հերոսն իր զավեշտալից արարքներով: Հեղինակը նկատվում է նաև առաջին թուրք երգիծական երկի հեղինակը, որը մատնացույց է անում հասարակության տարբեր խավերի մեջ շատախոսության, բամբասանքի անընդունելի, ստոր, ծաղրի արժանի սովորություններն ու դրանց հետևանքները, արևմուտքի բարքերն ու սովորությունները կապկելու համար հրաժարվում են սեփական սովորություններից, հակադրելով գրքի ուսուցողական եւ խրատական նպատակները²⁰⁴: Ստամբուլի Պերա թաղամասն էր իր ապականված բարքերով դարձել հեղինակի ծաղրի առարկան:

Société des tudes Arméniennes. Paris 2018, 234p.

200 Հովսեփ Վարդանյան. Ագապի, Երևան, 1979, (առաջաբանի 4-րդ էջը):

201 Ստեփանյան Գ. Հովսեփ Վարդանյանի նորահայտ սատիրական ստեղծագործությունը «Շատախոսը».- Երևան, Բանբեր Երևանի արխիվների, 1978, N 3, էջ 57-81.

202 Գիրքը 2017թ. տպագրությունից 165 տարի անց լատինատառ թուրքերենի վերածված հրատարակվեց «Գոչ», համալսարանի մատենաշարով: 181 էջի կազմված բնագիրը լատինատառ տարբերակով հրատարակութեան է պատրաստել Մուրատ Ճանգարան: Նախաբանում վերջինս ներկայացրել է հեղինակին և նրա գործերը, ինչպես նաև գրել հայատառ թուրքերեն գրականության մասին: Տես՝ AGOS, Ստամբուլ, 08.11.2017 Վարդանյան մեզի կը...

203 «Արշալոյս Արարատեան» (1840-1887), Չմյուռնիա, 10.10.1852

204 Г.Дюлорие, Нынешние армяне. Тифлис 1856, ст. 71-73.

Այս թաղամասում ապրում էին հայ կաթոլիկները և նրանց կենցաղի նկարագրությունները, կուրորեն եվրպական կյանքին կապկելու ջանքերի սրամիտ նկարագրությունը հեղինակին կրկին դարձրել էին թիրախ՝ հասունյանական հարձակումների: Գառնիկ Ստեփանյանի կարծիքով գիրքը նկարագրողել է պալատական նկարիչ, հայ կաթոլիկ ընտանիքի ներկայացուցիչ Ռուբեն Մանասը²⁰⁵: Մեզ հետաքրքրողն այստեղ հեղինակի աշխարհայացքային դիրքորոշումն է: Հովսեփ Վարդանյանի հայատառ թուրքերեն ստեղծագործություններում առաջադիմական, ազատախոհ դիրքերից դիմակազերծ է արվում կրոնական ֆանատիզմը: Այդ իսկ պատճառով ինչպես «Ազապի» վեպը, այնպես էլ Հ.Վարդանյանի թարգմանած **Լը Սաժի** «Կաղ սատանայի» հրատարակությունը բանադարանքի է արժանում պապական գործակալ Անտոն Հասունյանի ջանքերի շնորհիվ և արգելվում եկեղեցում կարդացված հատուկ կոնդակների միջոցով: Ի՞նչն էր այդքան վախեցրել կաթոլիկ եկեղեցու սպասավորներին: Սիրային պատմությունների արտաքուստ թվացող ողջ եթերայնությունը, որը կազմում է հիմնական թեմատիկայի հենքը, «Կաղ սատանան» իրենից ներկայացնում է թունոտ սարկազմ՝ ուղղված իսպանական պալատի բարքերին և կղերա-ֆեոդալական (կաթոլիկական) հասարակությանը: Բնականաբար Լը Սաժի նկարագրած աշխարհը միայն Մադրիդին չէր հատուկ: Այսպիսի բարքեր ամենուրեք էին, այդ թվում նաև՝ Թուրքիայում: Եվ եթե կաղ սատանան բարձրացներ թուրքական մայրաքաղաքի պալատների տանիքները՝ ապա ի հայտ կգային փաշայական, պալատական, բազմազգ սեղանավորների աշխարհի նույնքան սահմնեկեցուցիչ պատկեր: Հատկանշական է, որ Ջնյունիայում նույն այս տասնամյակում հրատարակվել է «Ժիլ Պլաս դը Սանտիլյանի պատմությունը»:

Հովսեփ Վարդանյան հայրենասեր-մտավորական, խմբագրապետի գործունեության հսկայական մի հատվածը մնացել է նրա պարբերականների էջերում, սպասող գիտնականների ուսումնասիրություններին: Նա համարվել է Օսմանյան կայսրության ամենաառաջնակարգ խմբագիրը, իսկ նրա վաղաժամ կորուստը՝ ողջ Օսմանյան պարբերական մամուլի կորուստը:

Հայատառ թուրքերենով արևմտաեվրոպական գրականության թարգմանությունների թվում երևույթ պիտի համարել «Դոն Զիշոտի» թո՛ղ որ համառոտ տարբերակի հրատարակությունը (1868թ.): Նշելով հանդերձ վերջինիս երևան գալու գաղափարական նպատակները (Հովհաննես Տերոյենցի թարգմանության հանգամանքն էր այն նախանշում), այնուամենայնիվ դա կարևոր երևույթ էր ոչ միայն հայկական համայնքի, հայերենին չտիրապետող հայերի համար, այլև Օսմանյան կայսրության մյուս ժողովուրդների համար:

Քաղաքական բոլորովին այլ նպատակադրվածության արդյունք էին Էժեն Սյուի վեպերի թարգմանությունները և հրատարակումները: Խնդիրը նրանում չէր, որ հայ ընթերցողներին հափշտակելու էին Է.Սյուի վեպերի արկածային գերող այուժեները: Այս վեպերի լույս աշխարհ գալը պայմանավորված էր հայ իրականությունում բավականին առօրեական հանդիսացող դավանաբանական ոճի խնդիրներով: Հայերի մեծ մասի համար օտարածին կաթոլիկ քարոզչությունը, որը սկսել էր զարգանալ 19-րդ դարի 40-ական

205 Անդ, էջ 56.

թվականներից, իր բարձրակետին էր հասել 60-ական թվականներին՝ սուր բախումների առիթ հանդիսանալով հասունյանականների և հակահասունյանականների միջև: Այս առթիվ հիշենք նաև **Հակոբ Պարոնյանի** մղած երկարատև պայքարը կաթոլիկության դեմ, որն իր արտահայտությունն ունեցավ Հ. Պարոնյանի գրական ժառանգության մեջ, մասնավորապես նրա «Ազգային ջոջեր»-ում, («Հասունյանի դիմանկարը», «Հասունի երազը», «Երկու քույրերը», «Ալաֆրանկա» և այլն):

Հայ մի շարք առաջադեմ մտավորականներ, այդ թվում նաև կաթոլիկ դավանանքին պատկանող գործիչներ, ինչպիսիք էին Սյրտիչ Պեշիկթաշյանը, Ծերենցը, «Ազգայի»-ի հեղինակ Հովսեփ Վարդանյանը և ուրիշներ, բուռն պայքար էին մղում կաթոլիկ քարոզչության դեմ՝ ձգտելով վեր հանել նրա ողջ երկերեսանի, դավադիր էությունը, նրա քաղաքական նենգ նպատակները՝ արևմտյան պետությունների ներթափանցումը Մերձավոր Արևելք: Մտավորականների այս պայքարին նպաստող հրատարակություն կարող էր հանդիսանալ **Է. Սյուի** «Թափառական հրեա» երկհատոր վեպը:

Պատահականություն չպետք է համարել այն հանգամանքը, որ կաթոլիկական վտանգի դեմ պայքարող հայրենասեր հայ մտավորականությունը, ժամանակի ամենաառաջադեմ մտածողները համարյա միաժամանակ, 19-րդ դարի կեսերին ձեռնամուխ եղան այս գրքի թարգմանության և տպագրության գործին: Դա Միքայել Նալբանդյանն էր Մոսկվայում (1857թ.), Կարապետ Փանոսյանը (1863) Կ.Պոլսում²⁰⁶, **Ստեփան Ոսկանյանը** Փարիզում, **Կարապետ Ուրունյանը** (1868) և **Գևորգ Սիմբեշյանը**՝ Կ.Պոլսում (1889թ): Միայն այն հանգամանքը, որ նույն հսկա վեպը՝ Է.Սյուի «Թափառական հրեան» միանգամից հայաստան թուրքերեն են թարգմանել և հրատարակել երկու հայտնի ազգա-

206 Կարապետ Փանոսյան (1826-1905)-հրապարակախոս, խմբագիր, թարգմանիչ, հասարակական գործիչ, մանկավարժ: Ծնվել է Կեսարիայում, թրքախոս հայերի ընտանիքում, ինչպիսիք էին Կեսարիայի շատ հայեր: Նախնական կրթությունը ստացել է հայրենիքում, իսկ 1841թ. այն շարունակել է Կ.Պոլսում: 1849 թվականից զբաղվել է մանկավարժական գործունեությամբ: 1859թ. Կ.Պոլսում հիմնել է «Միւնաստիյի Էրճիյաս» (Արգեոսի մունետիկ՝ 1859-1862թթ) հայաստան թուրքերեն շաբաթաթերթը, որը հետագայում երկօրյա գիտական, արվեստագիտական և գրական թերթի է վերածվել: Այն Հակոբ Սվաճյանի «Մեղու»-ի հետ նալբանդյանական դիրքերից սկզբունքային պայքար է մղել պահպանողական գաղափարների դեմ: Այս պատճառով էլ թերթը կառավարության կողմից փակվել է 1863թ.: Փանոսյանը 1866թ. հիմնադրել է ամենաերկարակյաց հայաստան թուրքերեն թերթերից մեկը՝ «Մանգումէի Էֆքեար» (Մտածումների շար), որն ավելի քան 30 տարի տպագրվեց: 1896 թվականին հիվանդության պատճառով թերթը փոխանցվեց այլ խմբագրի և որոշ ընդհատումներով լույս տեսավ մինչև 1917 թվականը: Կարապետ Փանոսյանը եղել է հայաստան թուրքերեն ամենաբեղուն թարգմանիչներից մեկը:

Նրա թարգմանությունները կարելի է բաժանել երկու մասի: Առաջինը Է.Սյուի «Թափառական հրեա» սովորաբար վեպն է, որը նա իրականացրեց 1863-1866 թվականներին, երբ փակվել էր «Միւնաստիյի Էրճիյաս»-թերթը: Այս վեպը նա տպագրել է առանձին մասերով: Երբ հիմնադրեց նոր թերթ, ապա սկսեց օրեցօր, որպես թերթն «Մանգումէի Էֆքեար»-ում տպագրել մի շարք ֆրանսերենից թարգմանած վեպեր: Դա նույն Է.Սյուի «Մահացու յոթ մեղքեր» ծուլություն» (1868թ.), «Փարիզի գաղտնիքները» (6 հատոր, 1881-1883թթ), «Սիրո և կրքի գավակները» (2 հատոր, 1886թ.) վեպերն էին: Կարապետ Փանոսյանը հրատարակել է նաև Քսավի դը Մոնթեպեյնի վեպերից՝ «Չուլածո աղջիկները» (5 հատոր, 1880-1881թ) սկանդալային վեպը, «Անիերի ոճիրը կամ հրեշ կինը» (2 հատոր, 1885թ.): Թարգմանել է նաև Ժյուլ Վեռնի «Կապիտան Գրամոտի որդիները» և այլ վեպեր, որոնք որպես թերթումներ հրատարակվելուց հետո լույս են ընծայվել առանձին գրքերով՝ այնքան մեծ է եղել հետաքրքրությունն այդ հայաստան թուրքերենով հրատարակված վեպերի հանդեպ:

յին գործիչներ՝ Կարապետ Փանոսյանը և Գևորգ Միմբեշյանը²⁰⁷, մոտ 25 տարի տարբերությամբ՝ խոսում է արևմտահայ իրականության մեջ շարունակվող կաթոլիկական վտանգի գոյության, նրա դեմ հայ մտավորականների չդադարող պայքարի մասին: Հայ իրականության մեջ այս վեպը ժողովրդի պառակտման դեմ պայքարելու յուրատեսակ գործիք է հանդիսացել: Մոսկվայում, 1857 թվականին Լազարյան ճեմարանի կողմից «Թափառական հրեան» վեպի հայերեն թարգմանությունը արժեքավոր է նաև իր առաջաբանով և վեպի թարգմանչի՝ Միքայել Նալբանդյանի ներածականով: 92 էջ կազմող երկու ներածական խոսքերում Մ.Նալբանդյանը մանրամասնորեն ընթերցողին ծանոթացնում է կաթոլիկական «Հիսուսի միություն» ճիզվիտական ուխտի պատմությանը: Մ.Նալբանդյանի կարծիքով մնան երկարաշունչ բացատրական առաջաբանն ավելի կօգնեք վեպի ընկալմանը, այն մատչելի ու դյուրամարս դարձնելուն: Միքայել Նալբանդյանը նախընտրել է վեպը կարդալուց առաջ ընթերցողներին ծանոթացնել նկարագրվող կրոնական այդ կազմակերպության հիմնադրի և ճիզվիտների ուխտի ղեկավար Իզնատիոս Լոյոլայի կերպարին:

Նալբանդյանի առաջաբանում պատմվում է Տրեդիան տիեզերական ժողովի ունեցած դերի մասին, համաձայն ինչին օրինականացվել է ուխտի գոյությունն ու գործունեությունը: Այս գիտական բնույթ ունեցող հողվածներում Մ.Նալբանդյանը դեմակազերծ է արել ճիզվիտական ուխտերի Եվրոպայում, Արևելքի երկրներում ծավալած ռեակցիոն, պառակտիչ գործունեությունը: Պատմվում է, թե ինչպես ճիզվիտների քարոզած երկրներում ուխտի անդամները ոչ մի զագրելի ու սահմանակցուցիչ գործողության առջև կանգ չեն առնում՝ հանուն կաթոլիկության տարածման և պապական իշխանության ամրապնդման: Առաջաբանները ծանոթացնում են ընթերցողներին ճիզվիտականության հետ, ինչպես նաև այդ ուխտի կրոնավորների դավադիր, դաժան և կեղծ բարեպաշտական նկարագրին²⁰⁸:

Մ. Նալբանդյանի առաջնորդող հողված-ուսումնասիրությունը վկայում է, որ վեպը թարգմանվել ու հրատարակվել է ոչ որպես զվարճալի գիրք: Այն հետապնդել է շատ լուրջ և հեռահայաց նպատակներ: Նա վեր է հանել հայ իրականության մեջ առկա ծանր ու վտանգավոր մի երևույթ: Է.Սյու «Փարիզի գաղտնիքների» հայերեն հրատարակության թարգմանիչ Մ.Մրմրյանը գրում է, թե եվրոպական հայտնի վեպերի թարգմանությունները եռակի օգտակարություն ունեն մնան վիճակում գտնվող հայ ժողովրդի համար: Այն է՝ ընթերցասիրություն են զարգացնում, մարզում են միտքը և հոգին (եթե դրանք արդեն ապականված չեն), խորհելու առիթ են տալիս եվրոպական երկրների երկրպագուներին և նախապատրաստում ավելի բարդ խնդիրների հետ շփման, նպաստում լեզվի հարստացմանն ու զարգացմանը²⁰⁹: Թարգմանիչը երազում է, որ իր ազգում լինեին Էժեն

207 Գևորգ Միմբեշյանը (1870- 1951)-ուսուցիչ, թարգմանիչ: Ծնվել է Կ.Պոլսում: Ստացել է իրավաբանական կրթություն: Երկար տարիներ հայերեն և թուրքերեն է դասավանդել հայկական ու թուրքական դպրոցներում: Ֆրանսերենից հայերենի և հայատառ թուրքերենի է թարգմանել մի շարք վեպեր: Այդ թվում հայատառ թուրքերենով՝ Է.Սյուի «Թափառական հրեան» (6 հատոր, 1889թ.), Պոլ դը Կրեմոնի «Սեծ սիրտը» (4 հատոր, 1890թ.), Ռընե Սեգրուայի «Թյուրլտոն» (2 հատոր, 1891թ.) և այլն:

208 Է.Սյու. Թափառական հրեա, Մոսկվա, 1857, հ.1- էջ՝ 1-92.

209 Է.Սյու. Փարիզի գաղտնիքները. (Թարգմ. և առաջաբանը Մ.Մրմրյանի), Չմյուռնիա, 1868.

Մյուս նմանները, որոնք ցույց տալով հանդերձ ներքին բարոյական ախտերը՝ միաժամանակ ի գործու լինելին առողջացման ուղիներն էլ հուշելու: Քանի որ հայ կաթոլիկների խոսակցական հիմնական լեզուն եղել է թուրքերենը (հարուստ ընտանիքներում՝ ֆրանսերենը), առավել ևս հասկանալի է, որ օտարացման ուղին բռնած հայ ժողովրդի՝ դրսի ուժերի կողմից հարկադրաբար իրենց վզին փաթաթած մոլորությունը, խաբեությունը, հետապնդվող նպատակները անհրաժեշտ էր բացատրել նրանց հասկանալի լեզվով՝ թուրքերենով (հայաստան թուրքերենով): «Թափառական հրեա»-ի նկատմամբ եղած մեծ հետաքրքրության ապացույցը այդ վեպի, ինչպես նաև Է.Մյուսի մյուս վեպերի բազմաթիվ տպագրություններն են հայ իրականությունում հայաստան թուրքերեն, նաև՝ հայերեն լեզուներով:

19-րդ դարի 60-ական թվականներին ոչ մի եվրոպական հեղինակ այնպիսի մեծ ազդեցություն չի ունեցել համաշխարհային գրականության վրա և թարգմանվել բազմաթիվ լեզուներով, ինչպես **Վիկտոր Հյուգոն**, որպես բանաստեղծ, վիպասան և դրամատուրգ: Հայերն առաջիններից են եղել, որ ծանոթացրել են Թուրքիան Հյուգոյի ստեղծագործություններին: Դրանք 1860-ական թվականների սկզբից արդեն հայերեն ու հայաստան թուրքերենով թարգմանվել ու հրատարակվել են: Նրա պիեսներից մի քանիսն իրենց պատվավոր տեղն են ունեցել հայկական թատերախմբերի խաղացանկում: Նրանք բեմադրվել են և՛ հայերեն և՛ թուրքերեն: 19-րդ դարի 60-ական թթ. կեսերին հայկական դասական թարգմանությամբ Չմյուռնիայում լույս է ընծայվել «Թշվառները» 5 հատորով: Թարգմանիչը՝ **Գրիգոր Չիլինկիրյանն** անձնական նամակագրական կապ է ունեցել Հյուգոյի հետ և նրա թույլտվությամբ է թարգմանել վեպը: Նույն ժամանակահատվածում Չմյուռնիայում, **Մ.Նուպարյանի** թարգմանությամբ հայերեն հրատարակվել է «Փարիզի Աստվածամոր տաճարը», իսկ ավելի ուշ՝ «93-ը»: Բնականաբար մեզ ավելի պիտի հետաքրքրեն Հյուգոյի հայաստան թուրքերեն թարգմանությունները: 1863թ. նույն Գրիգոր Չիլինկիրյանի թարգմանությամբ լույս է տեսել «Թշվառներ»-ի համառոտ տարբերակը հայաստան թուրքերեն: Փաստորեն սա մի փոքրիկ գրքույկ է, ուր հակիրճ շարադրված է վեպի բովանդակությունը: Գրքերի ոչ ամբողջական բովանդակության թարգմանությունը, այլ թարգմանվող ստեղծագործության բովանդակության համառոտ շարադրանքը, ազատ փոխարարությունները կամ ժամանակի բարբերին համեմատ տեղայնացումները (ադապտացիաները)՝ այդ ժամանակվա Թուրքիայի համար եզակի երևույթներ չէին: Ավելին՝ թուրք մտավորականության ներկայացուցիչները այդ տարիներին փորձելով իրենց ժողովրդին ծանոթացնել արևմտաեվրոպական դասականների ստեղծագործություններին, **Մոլիերի** պիեսներին, Հյուգոյին, **Գոլդոնիին** որպես կանոն փոխադրությունների ու տեղայնացումների միջոցին են դիմել:

Այս դարաշրջանում Վիկտոր Հյուգոյի դրամաներն ավելի հայտնի էին Թուրքիայում, քան նրա վեպերն ու պոեզիան: Հայերեն են թարգմանվել ու բեմ բարձրացել Հյուգոյի համարյա բոլոր պիեսները («Էռնանի», «Մարիոն Գելորմ», «Արքան զվարճանում է», «Լուկրեցիա Բորջիա», «Անժելո», «Ռյուի-Բլազ» և այլն): Սրանցից հայաստան թուրքերեն է թարգմանվել և Հակոբ Վարդվյանի թատրոնում թուրքերեն լեզվով ներկայացվել՝ «Արքան զվարճանում է», «Լուկրեցիա Բորջիա», «Անժելո» դրամաները: Կ.Պոլսի

հայկական, հայատառ թուրքերեն, թուրքական, անգլիական, ֆրանսիական մամուլում լայնորեն մեկնաբանվել են այս ներկայացումները, որն ապացույց է, թե ինչպիսի մեծ հետաքրքրությամբ ու հաճույքով են հետևել բազմազգ հանդիսատեսներն այս ներկայացումներին: Ամենից ավելի խաղացվել են «Լուկրեցիա Բորջիա» և «Անժելո» դրամաները: Գալով «Էռնանի»-ին, ապա իր ակնհայտ ապստամբ բովանդակության ու բացահայտ հակամիապետական ուղղվածության պատճառով բեմ չի բարձրացել այդ տասնամյակում և թուրքական բեմում երևացել է միայն Օսմանյան սահմանադրության հաստատումից հետո, ինչպես և «Արքան գվարճանում է» պիեսը, որի մոտիվներով Վերդին գրեց իր «Ռիզովետտո» օպերան:

1879 թ. հայատառ թուրքերենով լույս է տեսնում **Պ.Պեֆոյի** «Ռոբինզոն Կրուզոն» («Ռոբինզոնի պատմությունը» վերնագրով): Թարգմանչուհու անունը **Հոփսիմե Թոփայան** էր: Մենք չենք կարող պնդել, թե ո՞ր լեզվից է կատարվել թարգմանությունը, մանավանդ որ ոչինչ գիտենք թարգմանչի մասին: Ուրիշ այլ աղբյուրներում այս անվանը չենք հանդիպում: Հայտնի է, որ, որպես կանոն հայատառ թուրքերենով հրատարակված գրքերը թարգմանված են բնագրերի լեզվից: Բազմաթիվ թարգմանություններ են կատարվել ֆրանսերենից, իտալերենից, անգլերենից, լատիներենից: Դասականների ստեղծագործությունների թարգմանությունների գերակշռող մասը, վեպերը, պիեսները՝ այնուամենայնիվ կատարված են ֆրանսերենից:

Զմյուռնիայում և Կ.Պոլսում գործում էր հայ թարգմանիչների մի դպրոց, որոնք հիմնականում ֆրանսերենից էին կատարում իրենց թարգմանությունները: Այդ թարգմանիչներից ոմանք այնքան պրոֆեսիոնալ էին, որ հազարավոր էջեր են թարգմանել²¹⁰: Իտալերենից և լատիներենից կատարված թարգմանությունները հիմնականում կրոնա-դավանաբանական բնույթի երկեր են եղել: Անգլերենից կատարված հայատառ թուրքերեն թարգմանությունները՝ որոնց հրատարակություններն իրագործվել են Մաթա կղզում և Զմյուռնիայում՝ կրկին եղել են միսիոներական, քարոզչական գործունեության հետ կապված ջանքերի հետևանք: Բնականաբար Կ.Պոլսում քիչ չեն եղել անգլերենին տիրապետող կրթված հայեր: Կ.Պոլսում մեծ գործունեություն էր ծավալել Ռոբերտ-կոլեջը, որի շրջանավարտներն ազատ տիրապետում էին անգլերենին: Այս դպրոցը հիմնադրել էր ամերիկյան հայտնի միսիոներ, դոկտոր **Սայրուս Համլինը** (Cyrus Hamlin): Այսուհանդերձ մենք հազվադեպ ենք հանդիպում անգլերենից կատարված թարգմանությունների՝ հատկապես դասականների գործեր: Թե ո՞ր լեզվից է կատարված «Ռոբինզոնի պատմության» թարգմանությունը՝ պարզ չի, սակայն ակնհայտ է, որ այն վեպի համառոտ շարադրանքը չէ (318 էջ): Երբ նշված չէ, թե որ լեզվից է կատարված թարգմանությունը, մենք հակված ենք կարծելու, որ հայատառ թուրքերեն որոշ հրատարակությունների թարգմանություններ կատարվել են ոչ թե բնագրի լեզվից, այլ հայերենից: Նույն «Ռոբինզոն Կրուզոն» 1836 թ. Վենետիկի միսիոնարյանների կողմից հրատարակվել է հրաշալի աշխարհաբարով՝ **Մինաս Բժշկյանի** թարգմանությամբ: Անկասկած, ավելի դյուրին կլիներ այն հայատառ թուրքերենի թարգմանել, քան բնագրից թարգմանություն կատարել:

210 1839 թվականին միայն Ստամբուլում հաշվվում էր ֆրանսիացիների կողմից հիմնված 40 տարբեր կաթոլիկական դպրոցներ, ուր սովորում էին 5871 աշակերտներ: Տես՝ А.Д. Желтяков, Ю.А. Петросян. История просвещения в Турции /конец XVIII- начало XX века/,.-М., 1965, с. 132.

րել: Մենք օրինակներ ունենք հայերենից կատարված հայաստան թուրքերեն թարգմանությունների: Այսպիսի օրինակի մասին խոսել ենք «Փարեզ եւ Վեհա» սիրավեպի առիթով: Երեմիա Չելեպի Քյումուրճյանն այն թարգմանել էր ոչ թե ֆրանսերենից կամ իտալերենից, այլ վաղուց կատարված հայերեն ձեռագրից: Նման օրինակ կարող է լինել 1866 թվականին Կ.Պոլսում հրատարակված «Եզովպոսի առակների» հայաստան թուրքերեն տպագրությունը: Մեզ հայտնի են Կ.Պոլսում ապրած և ստեղծագործած լոկ երկու թարգմանիչներ, որ հունարենից են թարգմանություններ կատարել: Դրանցից մեկը Հակոբ Պարոնյանն է, որը հունական անտիկ դասականներին է թարգմանել: Իհարկե, «Եզովպոսի առակները» կարող էր նաև թարգմանված լինել ֆրանսերենից: Սակայն, դեռևս 1818 թ. Մխիթարյանների կողմից աշխարհաբար հիանալի թարգմանության գոյությունը, մի քանի վերահրատարակությունները թույլ են տալիս կարծելու, որ տրամաբանորեն չի բացառվում «Առակների» հայերենից հայաստան թուրքերեն թարգմանված լինելու հանգամանքը:

19-րդ դարի 60-70-ական թվականներին ֆրանսիական գրականությունից կատարված թարգմանությունների թվում հիշատակության են արժանի **Լամարթինի** «Գրացիելյան» (1871թ.) **Շատոբրիանի** «Աթալան» և «Վերջին Աբենսերաժի արկածները» (1860թ)²¹¹: 1810 թվականին գրված արաբի և իսպանուհու սիրո պատմության հրատարակությունը Թուրքիայում վիճաբանությունների առիթ տվեց: Պատճառը՝ սիրո ազատության սահմանափակումների նկարագրումն էր՝ դավանանքի, ազգային պատկանելության, հարստության, ու հասարակության տարբեր խավերին պատկանելու հետևանքով: Երևույթներ, որ թուրքական հասարակարգում երկար տարիներ դեռ լուծում չէին ստանալու:

Շատոբրիանի «Վերջին Աբենսերաժի արկածները» (1860թ), որ երկու տպագրություն է ունեցել, հայաստան թուրքերեն է թարգմանել նույն Գրիգոր Չիլինկիրյանը²¹²:

Արևմտահայ հայտնի մտավորական **Խորեն Նար-Պեյը**, որը անձնական նամակագրական կապ է ունեցել Լամարթինի հետ²¹³, 1860 թվականին հրատարակել է վերջինիս

211 1875 թ. թուրքական լուսավորիչներից Ռեջիզադե Էբրեմը ֆրանսերենից օսմաներեն է թարգմանում Շատոբրիանի «Աթալան»: Հայերի մոտ այս թարգմանությունը ֆրանսերենից կատարել է գնյունահայ թարգմանական դպրոցի ամենահայտնի թարգմանիչներից մեկը՝ Գրիգոր Չիլինկիրյանը:

212 Չիլինկիրյան Գրիգոր (1839-1923)-հրապարակախոս, խմբագիր, բեմադրիչ: Ծնվել է Չմյունիայում, ուր և ստացել է կրթությունը, գործել մինչև իր կյանքի վերջին տարիները: Ինքնուրույն կատարելագործել է ֆրանսերենը, սովորել հունարեն, իտալերեն և ուրիշ լեզուներ: 19-րդ դարի 60-ական թվականներից սկսած թարգմանություններ է կատարել հունարենից և ֆրանսերենից: 1861-67 թթ, պոլսահայ հրապարակախոս, գրող Արմենակ Հայկունու (Ճիզնեճյան, 1835-1866) հետ միասին Չմյունիայում հրապարակել է «Ծաղիկ» առաջադիմական հանդեսը: Գասավանդել է տեղի Մեսրոպյան վարժարանում: 1860-ական թվականների վերջերից ամբողջովին նվիրվել է թարգմանական գործունեությանը: Նա թարգմանել է Հյուգոյի «Թշվառները» (հայերեն լեզվով լրիվ և հայաստան թուրքերեն՝ համառոտ): Նրա հայերեն թարգմանությունների ցանկում են՝ Լամարթինի «Ռաֆայելը» (1867 թ.), Է.Սյուլի «Էժեն Մաթիլդը» (4 հատոր, 1870 թ.), Ժորժ Սանդի «Մաղեմուազել Լա Բենթին» (1871 թ.), Ա.Պրեվոյի «Մանոն Լեսկո» (1872 թ.), Օլտավ Գեյտեի «Պարոն դը Գամոր» (1876 թ.) և այլ և այլն:

213 Լամարթինի մահվան կապակցությամբ Խորեն Նար-Պեյի ուղարկված ցավակցական նամակը տպագրվել է Փարիզի «La libérite»-ի մայիսի 4-ի համարում, ապա արտատպվել է Կ.Պոլսի ֆրանսերեն «La Turki» թերթում: Ուղարկվել է նաև 100 ֆրանկ՝ մեծ բանաստեղծի մահարձանի համար:

ստեղծագործությունների հայերեն թարգմանությունների «Գաշնակք Լամարթինեան» շքեղ ժողովածուն: «Գրացիելլան» թարգմանված էր և՛ գրաբար, և՛ աշխարհաբար:

Հայատառ թուրքերեն թարգմանական գեղարվեստական գրքերի թվում կան մի քանի «Ժենեվա», «Յենովեբա», «Գենովաբե», «Յենովեվա»-ներ: Գրանցից 1855թ. և 1886թ. տպագրված օրինակների վրա կա հեղինակի՝ գերմանացի հայտնի մանկագիր **Քրիստոֆեր Շմիդի** (1768-1854) անունը: Գիրքը անգլիական մարկիզուհու՝ Գենովաբեի պատմությունն է: Կրոնա-բարոյախոսական մի պատմություն, ինչպես նշվում է վերնագրի շարունակության մեջ: Ըստ **Թուրգուր Քուրի**՝ 1886 թվականի տպագրության մեջ, գրքի տիտղոսաթերթին հեղինակի տեղում գրված է **Պիտար** անունը: Այն եղել է պոլսահայ հայտնի մտավորական, գրող, թարգմանիչ **Միհրան Պիտար Արապաճյանի** ծածկանունը: Մնացածների վրա չկան հեղինակների կամ թարգմանիչների անունները: Կարծում ենք մոտավորապես 9 «Ենովաբեններից» մի քանիսն այնուամենայնիվ Քրիստոֆեր ֆոն Շմիդի գրչին պատկանող ստեղծագործությունն է²¹⁴: Մնացածի մեջ է գտնվում ամենայն հավանականությամբ բարոյախոսական մի վեպ, քանի որ տիտղոսաթերթին որպես վերնագրի շարունակություն, կարդում ենք՝ «Բարոյական գովելի նկարագրով մի կին, խորհրդատու իգական սեռին, Ենովալայի պատմությունը»: Այսպիսին են 1855թ., 1868 1890 1891 թվականների հրատարակված գրքերը: Կարծում ենք, որ դրանց թվում կարող է լինել գերմանական ռոմանտիզմի ներկայացուցիչ **Լյուդվիգ Չոն Տիկի** (1773-1853) համանուն դրաման, որը կարող էր ծառայել նաև թատրոնում այն ներկայացնելու գործին: Միայն 1876 թվականին հրատարակված «Գենովաբե» (կրկին առանց հեղինակի) գրքի մասին **Վահան Զարդարյան** գրատան գրացուցակում (Կ.Պոլիս, 1911) առաջին անգամ հիշվում է Մ.Պիտարի անունը որպես թարգմանչի: Կարծում ենք, որ անանուն այս հրատարակությունների թվում կլինի գուցե **Լամարթինի** սենտիմենտալ ռոմանտիկ «Ժենեվա»ը, որի լայն ընդունելության առիթով կասկածներ ունենք: Թանգիմաթին հաջորդած քաղաքական իրավիճակն ավելի **Հյուգոյի** առաջադեմ ռոմանտիզմի կարիքն էր զգում, քան՝ դեպի մենությունը տանող, զգացական, սրտաճնլիկ երկերի: Այսպիսի վեպի մեկ հրատարակությունը բավական էր հագուրդ տալու քաղաքական պայքարի շրջանակներից հեռու գտնվողներին:

Հայատառ թուրքերեն գրքերի մեջ նկատելի տեղ են գրավում արևելյան սիրավեպերը և նախևառաջ՝ «Հազար ու մեկ գիշերների» հրատարակությունը Կ.Պոլսում 1858 թվականին: Թե ո՞ր լեզվից է անմիջականորեն կատարված թարգմանությունը՝ պարզ չէ: Հավանական ենք համարում, որ այն թարգմանված լինի ոչ թե արաբերենից, այլ ֆրանսերենից, ինչպես վարվել են շատ ժողովուրդներ ֆրանսերենին ավելի հասու լինելու պատճառով: Նույնիսկ որոշ ռուսերեն թարգմանություններ կատարված են ոչ թե բնագրի արաբերեն լեզվից, այլ՝ ֆրանսերենից: Բնականաբար այս հեքիաթների ժողո-

1871 թ. «Գրացիելլա»-ի հայատառ թուրքերեն հրատարակության տիտղոսաթերթին չկա թարգմանչի անունը: Իսկ տպագրվել է՝ Կ.Պոլսի Սամուել Պարտիզպանյանի տպարանում:

214 «Գենովաբե» վերնագրով մի վեպ ֆրանսերենից հայերեն է թարգմանել Արիստակես Ալթուն (յան) Տյուրին (1804-1868): Նա եղել է Բարձր Դեան արտաքին գործերի նախարար Պողոս Բեյ Յուսուֆի խորհրդակալը: Այս երկը մնացել է առանց տպագրվելու, ձեռագիր վիճակում: 1849թ. Վենետիկում, ս.Ղազարում հրատարակվել է ևս մի «Գենովաբեի պատմությունը» հայերեն: Հեղինակը Մխիթարյան հայրերից էր՝ Վրթանես Պոտուրյանը:

վածուի ընթերցողական շրջանակը շատ ընդարձակ է եղել: Ավելի ուշ, 1891 թվականին «Հազար ու մեկ գիշերների» մի այլ հրատարակություն է ասպարեզ իջել: Չորս ստվար հատորներ (1245 էջ) տպագրվել են Կ.Պոլսում, **Կարապետ Պիպերյանի** տպարանում: Թարգմանությունը կատարել է ֆրանսերենից **Հովհաննես Թոլայանը**, ֆրանսերենի լավագույն թարգմանիչներից մեկը: Մեզ հայտնի չէ, թե այդ ժամանակ գոյություն ունեցե՞լ է գրքի օսմաներեն տարբերակը, թե ոչ:

Այս ժամանակաշրջանում արաբերենից կատարված մեզ հայտնի եզակի տպագրություններից է տնարարությանը, կենցաղին նվիրված մի գիրք: Հեղինակներն են **Բեխչետ Աբդուլլահ մոլլա և Բեխչետ Մուստաֆա** եղբայրները: 1869թ. Պիտար Արապաճյանն այն թարգմանել է արաբերենից: Այն վերահրատարակվել է 1889 թվականին: Երկու դեպքում էլ տպագրվել է գրքի առաջին հատորը:

Ինչպես հայաստան թուրքերեն ձեռագիր ժողովածուներում ու տաղարաններում գտնում ենք Արևելյի ժողովուրդների մոտ սիրված սիրային հայտնի պատմությունները, որոնք մաս մեծ հաջողությամբ ու տարբեր լեզուներով կատարվել են հայ բանասացների ու աշուղների կողմից, այնպես էլ հայաստան թուրքերեն տպագիր ողջ շրջանում առատորեն հրատարակվել են արևելյան նույն հայտնի սիրավեպերը: Տասնյակից ավել անգամներ հրատարակվել է Աշուղ Դարիբի հեքիաթը: Մոտ յոթ անգամ՝ Քյոռ Օղլու պատմությունը, նույնքան անգամներ էլ՝ «Լեյլա և Մեջնունը»: Բազմաթիվ անգամ հրատարակվել են «Արզու և Գամպեր», «Թահիր և Չոհրե», «Աշուղ Քերիմի և Ասլի Խանումի», «Մելիք Շահի և Գյուլի Խանումի», «Թայյար զադեի», «Շահ Իսմայիլի և Գյուլիզար Խանումի», «Ֆերիադի և Շիրինի», «Աշուղ Քուրբանիի» սիրավեպերը: Միայն մեկ տարվա ընթացքում հրատարակվել են մոտ 10 սիրավեպեր: Այդպիսին է եղել օրինակ 1870 թվականը: 1871 և 1873 թվականներին հրատարակվել են մեղդահների՝ հեքիաթասացների գրքերը: Դրանց բոլոր հրատարակությունները հիմնականում պատմության հետ միասին պարունակում են համապատասխան երգեր²¹⁵, որոնք շատ տարծված էին ժողովրդի մոտ: Չմոռանանք, որ Շահ Իսմայիլի և Շահ Թահմազի մասին պատմական մի պոեմ է թողել 16-րդ դարի բանաստեղծ **Գրիզոր Տաղասացը**: Թե որքանով է օգտագործված նրա պոեմը պատմական այս անձերի մասին հյուսված հեքիաթներում, հետագա ուսումնասիրությունների է կարոտ: Այս ստեղծագործություններից ոմանց վրա գրված է, որ թարգմանված է թուրքերենից: Սա մեզ իրավունք է վերապահում կարծելու, որ այնուամենայնիվ գործ ունենք թարգմանությունների հետ: Ամենայն հավանականությամբ սրանք ժողովրդական-բարբառային «կոպիտ թուրքերենից»՝ գրական թուրքերենի վերածված շարադրանքներ են: Փաստ է, որ շնորհիվ հայ թարգմանիչների, հրատարակիչների Արևելքում այնքան սիրված ու տարածված սիրավեպերն ու աշուղական այս ստեղծագործություններն իրենց հայաստան թուրքերեն բազմաթիվ տպագրությունների շնորհիվ դարձել են ամենալայն ընթերցող շրջանակների սեփականությունը: Դրանք մինչև հայաստան թուրքերենի գոյության վերջին տարիներին անգամ հրատարակվել են, քանի որ շատ մեծ է եղել հետաքրքրությունը նրանց նկատմամբ: Հետաքրքրական է, որ

215 Արևելյան սիրավեպերի հայերեն հրատարակություններում անգամ երգերը հիմնականում հայաստան թուրքերենով են եղել:

նույնիսկ **Աշուղ Ջիվանիի** կողմից «Աշուղ Ղարիբի» հայերեն թարգմանությունից հետո ևս շարունակվել է վերջինիս հայատառ թուրքերեն հրատարակությունները մինչև 20-րդ դարի առաջին կեսերը:

Նմանատիպ է «Նասրեդդին հոճայի պատմությունների» հայատառ թուրքերեն տպագրությունների հարցը: Սկսած 1843 թվականից այն հրատարակվել է շուրջ 15 անգամ:

Խոսելով այս պատմությունների, առակների, հեքիաթների հայատառ թուրքերեն հրատարակությունների մասին, հարկ է անդրադառնալ նաև «Աքլոր եղբայր» սիրված հեքիաթի տպագրությանը (1886 և 1912 թթ.): Հեքիաթը հրատարակվել է նաև հայերեն և շատ մեծ տարածում է ունեցել: Բոլոր երեխաներն իմացել են այս հեքիաթը ու անգիր մասեր հիշել: Հեքիաթի հայերեն գրքում բոլոր 85 առակներն ու ասացվածքները, որ գրված են չափածո՝ հայատառ թուրքերենով են: Թեև գրացուցակներում չկա դրա հեղինակի անունը, այնուամենայնիվ պարզեցինք, որ այն պատկանում է **Գրիգոր Սարկավազի** գրչին և հայտնի է եղել մի այլ վերնագրով ևս՝ «Փոքրիկ Մանուկի հեքիաթը»: Ավելի տրամաբանական է, որ հեքիաթը գրվել է նախ հայատառ թուրքերեն և հետո միայն վերածվել հայերենի, ուր համեմայն դեպս պահպանվել են թուրքերեն թևավոր խոսքերն ու բարոյախոսական առակները²¹⁶:

Հայատառ թուրքերեն տպագրվել են ժողովածուներ, ուր հարյուրավոր ջանգլույումի քառյակներ կան, վիճակախաղեր, գուշակություններ, հեքիաթասացների պատմություններ և այլն: Հայատառ թուրքերեն տպագրության այս մասը 1980-ական թվականներից դարձել է թուրք բանասերների հետևողական ուսումնասիրության առարկան²¹⁷: Հրաշյա Աճառյանի «Պոլսահայ անգիր բանահյուսություն» գործում նմուշների²¹⁸ մեծ մասը հայատառ թուրքերենով է:

Ուսումնասիրության առարկա են դարձել հիմնականում հայատառ և հունաստառ թուրքերեն գրականության այն մասը, որոնք այս կամ այն չափով անդրադարձ են նաև թուրք ստեղծագործական մտքի հրապարակ հանելուն: Բնականաբար այս ուսումնասիրողները մեծապես անդրադարձել են հայ գիտական ուսումնասիրություններին, մատենագիտություններին, որտեղ ակնարկ կա թուրքական որևէ գրքի, հեղինակի, երևույթի հետ կապված:

Հայ աշուղների թողած հայատառ թուրքերեն տաղերին և թուրքերենով ստեղծագործած հայազգի աշուղների մասին իր ուսումնասիրություններում թուրք գիտնական Ֆուադ Բյոլիբուլուն փորձում է «խիստ հակահարված տալ թուրքական մշակույթը հա-

216 Georg Jakob . Xoroz Kardes /Bruder Hahn/ Ein orientalisches Marchen-und Novellenbuch. Berlin, 1906. Տես նաև՝ A.Turgut Kut. Ermeni Harfleriyle Basılmış Türkçe Halk Kitapları. V Milletler arası türkoloji kongresi. İst. 19854 c.1, s.76.
 217 Այս մասին սկսել են գիտական զեկուցումներ կարդացվել թուրքական միջազգային գիտաժողովներում, գիտական հոդվածներ են շարունակվում տպագրվել-պատմաբանասիրական գիտական հանդեսներում: Տես՝ A.Turgut Kut. Ermeni Harfleriyle Basılmış Türkçe Destanları. Halk kılıtırı. İst. 1984/3, s.65-73; A.Turgut Kut. Ermeni Harfleriyle Basılmış Türkçe Halk Kitapları. V Milletler arası türkoloji kongresi. İst. 1985,c.1, s.69-79.
 218 ...Լույս է տեսել միայն 2009թ. ԵՊՀ հրատարակչության կողմից «Կիլիպենկյան» մատենաշարում: Ձեռագիրը խմբագրել ու հրատարակության է պատրաստել Հասմիկ Ստեփանյանը. Ե., 2009, 268 էջ:

յերին վերագրելու, հայերի կողմից սեփականացնելու փորձերին»²¹⁹: Այս տեսակետը հիշվում է մեզ ծանոթ թուրք ուսումնասիրողների հայաստան թուրքերեն դաստանների, ժողովրդական սիրավեպերի և նույնիսկ թարգմանական գեղարվեստական գրականության մասին գրված հոդվածներում: Սա տեսակետ է, որ զարգացվում է թուրք ուսումնասիրողների կողմից, որպեսզի մի օր այս գրականությունը փորձեն լիովին ներկայացնել որպես «թուրքական մշակույթի մաս»: Հանուն արդարության պետք է ասել, որ ժամանակակից թուրք ուսումնասիրողներից Թուրգութ Քուբը լայնորեն օգտագործել է և հայկական աղբյուրները, ծանոթացել է հայկական տպարանների ու գրավաճառանոցների ցուցակներին, ուսումնասիրել է Կ.Պոլսում գտնվող հայկական մատենադարաններն ու գրադարանները, և նույնիսկ մեզ համար մի քանի հետաքրքիր բացահայտումներ կատարել այս ասպարեզում: Դրանք հիմնականում վերաբերում են այն հրատարակություններին, որոնց հնարավորություն չենք ունեցել ծանոթանալու: Մինչդեռ թուրք բանասերն ունենալով այն իր տրամադրության տակ՝ հոդվածներից մեկում տպագրել է նույնիսկ մի քանի տիտղոսաթերթեր: Թուրգութ Քուբի մի հոդվածը, նվիրված հայաստան թուրքերեն «ժողովրդական» գրքերին, այն բաժանում է բանասացների գրքերի, Նասրեդդինի առակների, ժողովրդական սիրավեպերի և ավելացնում է որոշ դաստաններ: Հետաքրքրական են վերջում հայաստան թուրքերեն տիտղոսաթերթերի օրինակները²²⁰: Բազմաթիվ դաստաններ, հեքիաթներ, պատմություններ եթե նախկինում վերածվել են օսմաներենի ու տպագրվել²²¹, ապա մեր օրերում թուրք ուսումնասիրողների կողմից լատինատառ թուրքերենի են վերածվում, տարբեր գիտական ընկերությունների, հանդեսների կողմից հրատարակվում, նաև թարգմանվում օտար լեզուներով:

Հետաքրքրական է համենատեղ այս շրջանում լույս տեսած հունատառ թուրքերեն տպագրությունները՝ կատարված Կ.Պոլսում²²²:

219 Fuad Köprülü. Edebiyat Araştırmaları. Ankara, 1966, s. 239-269.

220 A.Turgut Kut. Ermeni Harfleriyle Basılmış Türkçe Halk Kitapları. V Milletler arası türkoloji kongresi. İst.1985 c.1, s.78-79. Նույն հեղինակի հունատառ հրատարակություններին նվիրված մի հոդվածում անդրադարձ է կատարվում հայաստան թուրքերեն գրքերին, նշելով, որ այն շատ ավելի հարուստ է եղել, քան հունատառը՝ «karamanlidika»-ն, հենվելով դեռևս 1985 թ. մեր հրատարակած մատենագիտության վրա, որն այսօր համարյա կրկնապատկվել է իր հրատարակությունների թվով: Տես՝ A.Turgut Kut. Evangelinos Misailidis Efendi. "Tarih ve Toplum", İst. 1987, aralık, N 48, s.22-26.

221 Վիչեն Թիլբիյանի (1820-1879) 1872թ. Թոգլյանց տպարանում տպագրված «Տիրպիհի աշք» (Սիրո դիտակ) հեքիաթների այս քառասուոր ժողովածուն նույն թվականին արաբատառ թուրքերենի է վերածվել (օսմաներեն) և տպագրվել մի քանի ամիս անց Օսմանյան գիտական ընկերության կողմից: Տես A.Turgut Kut. Ermeni Harfleriyle Basılmış Türkçe Halk Kitapları. 1985 s.76. Վիչեն Թիլբիյանի գրչին են պատկանում «Գուլունիա» և «Յոթ գեղեցկուհիներ», «Հովվուհիներ» հայաստան թուրքերեն վեպերը (1868 և 1881, 1876թթ), առևտրի մասին մի գրքույկ (1867թ.), փոքրիկ պատմություններ, թարգմանություններ:

222 Բեյրութահայ մեր հայրենակից Կարո Աբրահամյանը, որը հետաքրքրվում է և որոշ ուսումնասիրություններ է կատարում հայաստան թուրքերենի ասպարեզում, իր մի անտիպ հոդվածում ի մի է բերել հայաստան թուրքերենով տպագրված որոշ ժողովրդական ստեղծագործությունների, աշուղների պատմությունների մի ցանկ՝ Թուրգութ Քուբի օրինակով: Այս ցանկում նշված են նաև որոշ հունատառ թուրքերեն հրատարակություններ՝ տպագրված նույնպես Օսմանյան կայսրությունում, մասնավորապես Կ.Պոլսում: Մեր կարծիքով սրանք հայաստան թուրքերենների պարզ վերատպություններն են հունատառ թուրքերենով, որն ընդունված է «քարամանլիդիկա» անվանել: Այսպես օրինակ՝ կազմելով «Նասրեդդին հոճայի պատմությունների» հայաստան

Հայատառ թուրքերեն թարգմանական գրականության զարթոնքի շրջանը կազմում է մոտավորապես մեկ հիսնամյակ՝ 19-րդ դարի երկրորդ կեսը, մինչև 1890-ական թթ. վերջը: Այս հիսնամյակը հարկ է բաժանել երկու հիմնական շրջանների: Առաջինը՝ 1850-1870 թթ., որին բնորոշ է եղել թանգիմաթի ներշնչած բարեփոխումների հետ կապված սպասման, հույսերի մթնոլորտը: Այս շրջանում թուրք լիբերալ մտավորականությունը որոշակի աշխուժացում էր ապրում և իր ուշադրությունը կենտրոնացրել էր գրական-մշակութային կյանքի կազմավորման, զարգացման վրա: Նրանք հիմնում էին թերթեր, զարգացնում գրահրատարակչական գործը, զարկ տալիս թատրոն ստեղծելու գործին, միաժամանակ նկատելի ջանքեր գործադրում փոխելու համար կայսրության քաղաքական և ադմինիստրատիվ կառուցվածքը, թոթափելու ավանդական միջնադարյան, ֆեոդալական կապանքները: Առաջին հերթին մենք նկատի ունենք «Նոր օսմանների» ուժերով ստեղծված թուրքական առաջին սահմանադրությունը, որի կազմելու գործում մեծ ավանդ է ունեցել հայտնի քաղաքական գործիչ Գրիգոր Օտյանը: Սուլթան **Աբդուլ Համիդ** իր կառավարման առաջին շրջանում ստիված էր ընդունել այս սահմանադրությունը, քաջ գիտակցելով, որ այն առաջին հերթին ուղղված է իր ինքնակալության դեմ:

Սահմանադրական շարժման գաղափարախոսները մեծ նշանակություն էին տալիս շարիաթի սկզբունքների և սահմանադրական իշխանության համատեղելիության հնարավորությանը: «Նոր օսմանների» գաղափարախոսներն իրենց գործունեության ողջ ընթացքում ձգտել են լիբերալ ռեֆորմիզմը համաձայնեցնել իսլամի չափանիշների հետ: Սա եղել է նրանց ամենաբնորոշ առանձնահատկություններից մեկը:

Թուրք նոր գրականության հայրերից **Նամըք Քեմալը** բավականին պատկերավոր է արտահայտել այս գաղափարը, դիտելով այն որպես Արևելքի կրոնական սկզբունքների անհրաժեշտ միաձուլում՝ Արևմուտքի գիտական նվաճումների հետ²²³:

Սուլթան Աբդուլ Համիդը հասկանում էր, որ թուրք երիտասարդ գրողներ Նամըք Քեմալը, **Էբուզգիյա Թեֆիկը**, **Ահմեդ Միդհատը** և մյուսները ձգտում են բարձրացնել թուրք ժողովրդի ազգային հասարակական ինքնագիտակցության զգացումը: Սուլթանը հարմար պահի էր սպասում ազատախոհության ճնշման համար: Այդպիսի առիթ ներկայացավ, կապված թուրք-ռուսական պատերազմի պատճառով ստեղծված հատուկ իրավիճակի հետ: Սուլթանը խեղդեց Միդհատյան սահմանադրությունը դեռևս սաղմնային

թուրքերեն տպագրությունների ցանկը, որը 14 հրատարակություն է ներկայացնում, բերում է նույն հրատարակությունների, համարյա նույն էջաքանակով հունատառ հրատարակությունները: «Նասրեդդինի պատմությունները» 1861-1912թթ հրատարակվել են 5 անգամ, որը բավականին հետաքրքիր է: Հայատառ թուրքերեն 11 անգամ հրատարակված «Գիրք պատմութեան կայսերն Փոնցիանոսի եւ կնոջն եւ որդւոյն Գիակղետիանոսի եւ յեթրանց իմաստասիրաց» հայտնի պատմությունը «քարամանլիդիկա»-ով հրատարակվել է միայն 2 անգամ: Աշուղ Գարիբի երգախառն հեքիաթները հայատառ թուրքերենով ավելի քան 15, իսկ հունատառով 7 անգամ: «Աշուղ Քերիմի և Ալի խանումի պատմության» հունատառ թուրքերեն երկու տպագրություն է հայտնի, իսկ հայատառ թուրքերեն՝ 12 հրատարակություն:

223 Зарождение идеологии национально-освободительного движения /XIX- начало XX в. Очерки по истории общественной мысли народов Востока. Ю.А.Петросян. Турция, М. 1973, с. 21-22.

վիճակում, սուր հալածանքի ենթարկեց նրա հեղինակներին, աքսորեց թուրք նոր գրականության բոլոր երևելի դեմքերին:

Գրաքննությունը շատ ավելի խստացվեց: Մամուլի, տպագրության մասին օրենքն այնպես էլ քննարկման չարժանացավ, թեև պարունակում էր մի շարք սահմանափակումներ:

Օսմանյան խորհրդարանի ցրումը 1878 թվականի փետրվարին ընդհանրապես տպագրության մասին օրենքը հանեց քննարկումից: Սկսվեց հարձակում տպագրության վրա: 1881թ. ստեղծվեց Վերահսկողական տեսչություն²²⁴, որին ենթարկվում էին գրաքննիչները, տպարանների վերահսկիչները²²⁵: Սուլթան Աբդուլ Համիդի բռնակալության տարիներին մշակութային կյանքը, տպագրական աշխարհը փակուղում էին գտնվում: Եթե դեռևս 1870-ական թվականների սկզբին հնարավոր էր **Ալեքսանդր Դյումայի**²²⁶ **Էժեն Սյուի** վեպերի թարգմանություններն ու տպագրությունները, ապա 1980-ի վերջին՝ արգելվեց ոչ միայն նրանց գրքերի տպագրությունը, այլև այս հեղինակների անուններ տալը:

1888-1889 թվականներին գրաքննական խստությունները ծայրահեղության էին հասել: Այս խստություններին է նվիրված թուրք մտավորական, գրող **Օսման Նուրիի** «Աբդուլ Համիդն ու իր կառավարման դարաշրջանը» գրքում՝ մի ամբողջ գլուխ: Օսման Նուրիի գրքում նշվում է *Հայաստան* բառի արգելման մասին, առավել ևս՝ նրա պատմական անցյալի մասին²²⁷: Ասվածը չի վերաբերվում սուկ հայկական մշակույթին: Թուրքական գրականությունից հանվել էին *ազատություն, ապստամբություն, ռումբ, բռնակալություն* և նման բառեր: Բացառվում էր բնականաբար գրել կամ թարգմանել վեպեր, ուր հերոսները կամ նրանց շրջապատը կարող է նմանեցվելին, կամ որպես ակնարկ դիտվելին Աբդուլ Համիդին ու նրա «Յըլդըզ» պալատին: Հայտնի է, որ արգելված էր, որ գեղարվեստական ստեղծագործության հերոսը խոշոր քիթ ունենար, ինչպեսին էր նորին գերազանցություն սուլթանինը: Արգելված էր օրինակ, գրականության մեջ օգտագործել

224 Գրքերի պալատի վեց նիստերում քննարկվել է տպագրության մասին օրենքը, որը նախատեսում էր տպարանների, գրահրատարակչության, մամուլի իրավական վիճակի մասին դրույթներ: 1877 թ. մայիսի 14-ին օրենքի նախագիծը ընդունվել էր մեջլիսի կողմից և մայիսի 24-ին հավանության արժանացել: Այնուամենայնիվ Սուլթանը հրաժարվել էր այն հաստատել: Նախագիծը երկրորդ անգամ էր ուղարկվել մեջլիսի քննարկմանը (1877 թվականի դեկտեմբերի 13-ից մինչև 1878 թվականի փետրվարի 18-ը): Տես՝ *Ս. Ա. Դ. Желтяков. Печать в общественно-политической и культурной жизни Турции. М., 1972, р. 171-174. Տես նաև Cevdet Kudret. Abdülhamit Devrinde Sansür. İst. 1977* և նույն հեղինակի հետաքրքրաշարժ մի հոդվածը նույն թեմայով՝ *Eski Dergiler Arasında "Tarih ve Toplum" 1984 N 9 s.19-21*, ուր բազմաթիվ, արտաքուստ ծիծաղելի օրինակներ և փաստեր են բերվում համիդյան շրջանի գրաքննության պատմությունից:

225 Հետապնդումներին միացան տպագրության վերահսկման և ստեղծագործությունների ու թարգմանությունների գրաքննչական հաստատությունները: Այս մասին տես՝ *Ս. Ա. Դ. Желтяков. Печать в общественно-политической и культурной жизни Турции. М., 1972, с. 178.*

226 Ալեքսանդր Դյումայի «Կոմս Մոնթե Բրիստո» և «Լորդ Բեկինգհեմի յոթ համբույրները» վեպերը հայաստան թուրքերենով հրատարակվել են 1882 և 1888թթ., է. Սյուի վեպերը՝ 1886, 1889-90 թթ:

227 Օսման Նուրի. «Աբդուլ Համիդն ու իր կառավարման դարաշրջանը» հ. 2, (1292/1876 թ.՝ օսմաներեն լեզվով): Այս գրքի առաջին էջերում է գտնվում Աբդուլ Համիդ Բ-ի հազավգյուտ վարպետությամբ արված նկարը: Կարմիր Սուլթանի կարմիրով արված պրոֆիլն ամբողջովին կազմված է մերկ կանանց միահյուսված հրաշագեղ մարմիններից: Այն միայն ուշադիր նայելուց հետո է հայտնի դառնում:

«աստղ» (թուրքերեն՝ «յըղըզ») բառը, քանզի այդպես էր սուլթանի պալատի անունը: Ռուսական թուրքագիտության հայտնի դեմքերից **Վ.Ա.Գորդլևսկու** կարծիքով դժվար է նշմարել, թե ի՞նչ գաղափարախոսությամբ էր մամուլը դեկավարվում: Քմահաճ՝ իր հետապնդած ուղղությունների նկատմամբ, մամուլը լրջորեն մեկնաբանում է աննշան բաները և կատակով վերաբերվում լուրջ խնդիրներին: Կառավարության նկատմամբ վախը կարկամեցրել է սովորական լեզուն, - գրում է թուրքագետը²²⁸:

Ինչ վերաբերվում է 1870-1890-ական թվականներին արևմտաեվրոպական գրականությունից կատարված և հրատարակված Կ.Պոլսում հայատառ թուրքերեն թարգմանություններին, ապա դրանց հեղինակների թվում են **Քսավյե դը Մոթերենը, Բուակուպե Ֆորտունեն, Էմիլ Ռիչբուրգը, Ժյուլ Մարի, Ժյուլ Վեռնը, Ժորժ Պրադելը, Ժյուլ Բուլպերը, Ժորժ Օնեն, Պոլ Ֆեվալը, Պիեր Նիսուրը, Պոլ դը Կոեմոնը, Ռընե Մեգրուան, Քրիստոֆ Շմիդը, Հանրի Ֆրանսիսին, Բոնատը դը Թերրայը, Հեկտոր Մալոն, Ալբեր Տեյբին, Ժյուլ դը Կասսինը, Էմիլ Գաբորին:** Հեղինակների այս անվանացանկից դժվար չէ կռահել, որ թարգմանիչներն ի վիճակի չեն եղել իրենց ընտրությունն ազատորեն կատարել դասական հեղինակների առումով: Դասական հեղինակների անունների փաստորեն չենք հանդիպում՝ չնչին բացառություններով:

Համաշխարհային չափանիշով հեղինակներից, որը «չի մեղանչել» սուլթանական գրաքննության դեմ, և ում արկածային վեպերը մի շնչով կարդացվել են աշխարհի տարբեր ժողովուրդների կողմից՝ **Ժյուլ Վեռնն** է եղել: Նրա երկերը թարգմանվել ու հրատարակվել են ինչպես հայատառ թուրքերեն, այնպես էլ՝ հայերեն: Ժյուլ Վեռնի վեպերն անհամեմատ ավելի շատ հայերեն են թարգմանվել, քան՝ հայատառ թուրքերեն: Հայերեն թարգմանությունները կատարվել են հիմնականում Չմյունիայի թարգմանչական խմբի կողմից:

Այն, ինչ թարգմանվել և հրատարակվել է հայատառ թուրքերենով, նույնպես կարևոր է և հատուկ ուշադրության արժանի:

1877 թվականին Կ.Պոլսում հրատարակվել է Ժյուլ Վեռնի առաջին վեպը՝ «Կասպիտան Հաթերասի արկածները»: Հետագայում հրատարակվել են ևս 5-6 վեպեր, այդ թվում՝ «20 000 լյո ջրի տակ» (1892), «Խորհրդավոր կղզին», «80 օր աշխարհի շուրջը» (1893) և այլն: Այս արկածային ստեղծագործություններում բնականորեն միահյուսված էին արկածախնդրությունը, արտասովոր երևակայությունը, գիտական, ճշգրիտ դիտարկումները:

Մի քանի տասնյակի են հասնում ոչ այնքան հայտնի հեղինակների վեպերի հրատարակությունները, իսկ եթե այն վերածենք հատորների՝ ապա դրանց թիվը հարյուրից կանցնի: Ոչ այնքան հայտնի հեղինակների գրքերին առավելություն տալը կապված էր ֆրանսիական թերթնային գրականության բուռն զարգացման հետ: Այսինքն, թերթերի էջերում տպագրվում էին արկածային վեպեր, որոնք ավելի հետաքրքիր ու հայտնի էին դարձնում այդ թերթերը: Դասականների ստեղծագործությունները, օրինակ Հյուգոյի կամ **Քալգալի** վեպերը, հարուստ լինելով նկարագրական խոշոր հատվածներով, որոնք երբեմն կարող էին էջեր գրավել՝ չէին կարող տպագրվել թերթերում, հետաքրքրությամբ կարդացվել հատվածաբար, օրը օրին: Այդպիսի նպատակի համար առավելագույնս հարմար էին իս-

228 Гордлевский В. А. Избранные сочинения. Т.13.М. Наука, 1960.-1962. с32.

կական, հոգեբանական խորություններից զուրկ վեպեր, ուր սովորաբար, որպես կանոն, բացակայում էին հերոսների ներաշխարհի կամ նրան շրջապատող աշխարհի մանրամասն նկարագրությունները: Թերթոնային վեպերում դեպքերն արագորեն հաջորդում էին միմյանց՝ սյուժետային նորանոր հանգույցներ ու դրանց հանգուցալուծումները ներկայացնելով արկածների ու հանցագործությունների միջոցով: Գրական այս նոր ժանրը, որ Ֆրանսիայում սկսել էր զարգացում ապրել 19-րդ դարի 30-ական թվականներից սկսած՝ ստացել էր «ռոման-ֆելիետոն» անվանումը: Դրանց հեղինակները ձգտում էին խճճված սյուժեների, որն ապահովում էր ընթերցողների լայն շրջանակ: Սկսած 19-րդ դարի 50-60-ական թվականներից «ռոման-ֆելիետոն»-ը վերածվեց լոկ հաճելի կարդացվող վիպագրության: Այն հագուրդ էր տալիս միջին, քաղքենիական ընթերցող խավի ճաշակին և հիմնականում զուրկ էր քաղաքական, սոցիալական հենքից: Այսպիսին են եղել «ռոման-ֆելիետոն»-ի ժանրի արքաների՝ Քսավյե դը Մոթեբենի (1824-1902), Բուակոպե Ֆորտունեի (1821-1891), Պոլ Ֆեվալի (1817-1887), Բոնստն դը Թերրայի (1829-1879), Էմիլ Գաբորիոլի (1835-1873) և այլոց վեպերը: Նրանք ունեցել են հարյուրավոր տպագրություններ, թարգմանվել աշխարհի շատ լեզուներով՝ այդ թվում հայերեն և հայաստան թուրքերեն:

1888 թվականին գրաքննություն է հաստատվում նաև հայկական մամուլի վրա: Մինչ այդ հեղինակներն ու թարգմանիչները զգուշանալով տպագրել գրքեր, որոնց ճակատագիրը գրաքննության ձեռքում էր, նախընտրում էին օր օրի, հատվածաբար տպագրել իրենց ստեղծագործություններն ու եվրոպական լեզուներից կատարված թարգմանությունները՝ թերթերի էջերում:

Այդ ժամանակ թերթը գրաքննության չէին ենթարկվում²²⁹ և համեմատաբար գործունեության ազատ հնարավորություններ էր ընձեռնված: Վերը հիշատակված հեղինակներից շատերի գրքերը սկզբում հատվածաբար, որպես թերթոններ տպագրվել են հայաստան թուրքերեն թերթերում և հանդեսներում և հետո միայն՝ առանձին գրքերով: Առանձնապես շատ թերթոններ են տպագրվել «Մեճնուայը Ախպար», «Մանգումէի Էֆքիար», «Ճերիտէի Հավատիս», «Մեճնուայը հավատիս» օրաթերթերում²³⁰:

Հայաստան թուրքերեն մամուլի ոչ լրիվ հավաքածուների գոյությունը թույլ չի տալիս պնդելու այս կամ այն ստեղծագործության նախ որպես թերթոն տպագրված լինելու փաստը և հետո միայն վերջինիս առանձին հրատարակվելը:

Այնուամենայնիվ, պարբերաբար հայաստան թուրքերեն մամուլում տպագրված հայտարարություններից իմանում ենք, որ այս կամ այն թերթում տպագրվող թերթոնն ավարտվում է, կամ ավարտվել է և հրապարակ է իջնելու առանձին գրքով, հնարավորություն ընձեռնելով ունենալ գիրքն ամբողջությամբ ու ավելի հարմար տեսքով: Այսպես օրինակ, Էժեն Սյուի «Փարիզի գաղտնիքները» բազմահատոր վեպը Կարապետ Փանոս-

229 Արփիարեան Ա. Պատմութիւն 19-րդ դարի թրքահայոց գրականութեան: Կահիրե, 1944, էջ 76.

230 Հարկ է նշել, որ ֆրանսիական գրականության ուժեղ ազդեցության տակ գտնվող արևմտահայ գրականության վրա «ռոման-ֆելիետոն»-ները ևս իրենց նշանակալի ազդեցությունն են թողել: Հիշենք, որ արևմտահայ ռեալիստական գրականության առաջին նմուշը՝ Տիգրան Կամսարականի (1866-1941) «Վարժապետին աղջիկը» սկզբում որպես թերթոն հրատարակվել է Կ. Պոլսի «Արևելք» թերթում 1888 թվականին և հետո միայն տպագրվել առանձին գրքով: Երվանդ Օտյանի տասնյակ վեպեր ամիսներ, նույնիսկ տարիներ շարունակ նախ որպես թերթոններ տպագրվել են ժամանակի մամուլում և հետո միայն հրատարակվել են առանձին գրքերով:

յանի հայատառ թուրքերեն թարգմանությամբ նախ որպես թերթոն լույս է ընծայվել նույն Կարապետ Փանոսյանի խմբագրած «Մանգումէի Էֆքիար» թերթում: Ծիշտ նույնպես՝ թերթերում նախ որպես թերթոններ են տպագրվել Քսավյե դը Մոնթեպեյնի «Հնդիկների գաղտնիքը», և «Սիրո պատմությունը», Բուակոպե դը Ֆորտունեի «Կարված բերան» և տասնյակ այլ վեպեր: Այս անգամ դրանք տպագրվել են դրանց թարգմանչի՝ հայտնի հասարակական, մշակութային գործիչ Հովհաննես Թոլայանի խմբագրած «Մեծմասյը հավատիս» «Մեծնուայը Ախպար» օրաթերթերում²³¹: Թերթում տպագրվելուց հետո առանձին գրքերով հրատարակվել են Ալեքսանդր Դյումայի, Ժյուլ Վեռնի, Ժորժ Օնեի, Բուակոպե Ֆորտունեի և տասնյակ այլ հեղինակների գրքերը:

Այս փաստը հատկանշական է նրանով, որ թերթոնային թարգմանությունն ունեցել է իրեն հատուկ առանձնահատկությունները: Թարգմանիչները ստեղծագործությունը թարգմանում էին ոչ թե նախապես՝ ամբողջական վիճակով, այլ հատվածաբար՝ օրը օրին տպագրելու համար: Թարգմանությունները չէին խմբագրվում և գրաշարին էին տրվում հերթական հատվածի թարգմանությունից անմիջապես հետո՝ երբեմն չհասցնելով անգամ կարդալ մինչև տպագրվելը և անգամ դրանից հետո: Այս հանգամանքն իհարկե բացասաբար է ազդել թերթոնային թարգմանությունների որակի վրա: Ավելացնենք, որ հաճախ մասն ճակատագիր են ունեցել այս նույն վեպերը Ֆրանսիայում, երբ մաս առ մաս գրվել ու մի կերպ հասցվել են տպարան, որն ապացույց է այն բանի, երբ հրատարակիչներին շատ ավելի հետաքրքրել է սյուժետային կառուցվածքը, գործողությունների զարգացումը՝ քան վեպերի

գեղարվեստական արժեքը: Հաճախ նախնական մասն անփույթ վիճակներից են կատարվել հայատառ թուրքերեն թերթոնային հրատարակությունները: Այնուամենայնիվ սխալ կլիներ անտեսել այս բուլվարային, ժամանակի մամուլի էջերն ու ընթերցողների մեծ մասի ընթերցանության ու հետաքրքրության առարկան դարձած թերթոնային գրականության ունեցած նշանակությունը: Նույնիսկ այն հեղինակների բազմահատոր վեպերը, որոնց անունները չենք կարող գտնել որևէ ֆրանսիական կամ ռուսական հանրագիտարանում՝ իրենց ժամանակին մեծ հաճույքով կարդացվել են ոչ միայն Ֆրանսիայում բնագրով, այլև տարբեր լեզուներով թարգմանված:

Առավել ևս չի կարելի անտեսել այս ստեղծագործությունների կյանքի տարբեր ոլորտ-

231 Հովհաննես Թոլայան (1856-1936) պոլսահայ խմբագիր, թարգմանիչ: Կրթությունը ստացել է Վենետիկի Մխիթարյան միաբանությունում: Հետևել է բժշկության, մասնակցել Պետրոս Մաղաքյանի թատերախմբի ներկայացումներին 1872-1874 թվականներին: Նույն թվականներին աշխատել է «Մանգումէի Էֆքիար», ապա՝ Հովսեփ Վարդանյանի «Մեծմասյը հավատիս» թերթերում: 1884-1907թթ. հիմնել և պատասխանատու խմբագիր է եղել «Մեծնուայը Ախպար» օրաթերթի: Այս օրաթերթի էջերում լույս են տեսել նրա կատարած բազմաթիվ թարգմանած վեպերը՝ որպես թերթոններ: Դրանք բոլորը հետագայում առանձին գրքերով տպագրվել են: Այդ գրքերից են՝ Ադոլֆ Բլոյի «Մայրասպանը» (2 հատոր, 1885 թ.), Ժյուլ Բուլպերի «Անառակ կինը» (5 հատոր, 1887թ.), Բոնսոն դը Թերայի «Բորքամբոլի արկածները» (6 հատոր, 1892թ.), Բուակոպե դը Ֆորտունեի «Կարված բերանը» (2 հատոր, 1883թ.), Ժյուլ դը Կասթինի «Վրեժխնդիր կինը» (6 հատոր, 1883 թ.), Քսավյե դը Մոնթեպեյնի մոտ 10 վեպերը՝ «Հացթուխ կինը» (5 հատոր, 1886 թ.), «Փարիզի ողբերգությունները» (4 հատոր, 1887 թ.), «Փարիզի խաղատները» (2 հատոր, 1888 թ.), «Ինչէր է կատարվում Փարիզում» (3 հատոր, 1889 թ.), «Փարիզի շրջմուխները» (3 հատոր, 1890 թ.), «Երեք միլիոն ֆրանկ օժիտ» (3 հատոր, 1891 թ.), «Չուլածո աղջիկները» (5 հատոր, 1880 թ.), «Հագար ու մեկ գիշերները» (4 հատոր, 1891 թ.) և այլն:

ներում ունեցած դրական մեծ ազդեցությունները Թուրքիայի նման հետամնաց երկրում, ուր թրքախոս հայերը շփվել են արևմտյան գրականության հետ շնորհիվ այս հրատարակությունների: Ընթերցանության համար անհամեմատ դյուրամարս այս գրքերը ծանոթացնում էին տարբեր երկրների, տարբեր ժողովուրդների սովորությունների, պատմական տարբեր ժամանակների ու դեպքերի, աշխարհագրական տեղանունների և շատ ուրիշ նորություններ հրամցնում կարդացողին: Անժխտելի է, որ արկածախնդրային այս վեպերի բազմաթիվ հատորներում հանդիպում էին իսկական կյանքն արտահայտող պատկերներ, մարդկային իրական հարաբերությունների նկարագրություններ: Նույնիսկ հանցանքների ու մեղապարտների նկարագրությունները դիտողական ու բարոյախոսական հնարավորություններ էին ստեղծում և հասարակական, բարոյական, արդարության զգացումներ արթնացնելով՝ ընթերցողներին այս առումով որոշակի «ծառայություն» մատուցում: Այսպիսի ազդեցություն ընթերցողների վրա բացի դասական հեղինակների ստեղծագործություններից ունեցել են ժամանակին առատորեն հրամցված բուլվարային այս վեպերը: «Ռոման-ֆելիետոն»-ների աննախընթաց հաջողության մյուս գրավականներից կարելի է համարել այն փաստը, որ ընթերցողներին մեծապես գայթակղում էր այս վեպերի միջոցով տարբեր ժողովուրդների կյանքին, անցած ճանապարհին՝ պատմական տարբեր եղելություններին ծանոթանալու հնարավորությունը: Այս տեսակետից ամենատարածված հեղինակներից է եղել Քսավիե դը Մոնթեպենը, որից հայաստան թուրքերենով շատ թարգմանություններ են կատարվել: Մոնթեպենի և «ռոման-ֆելիետոն»-ի հեղինակների մեծ մասի գործերը ժամանակին առատորեն թարգմանվել են նաև ռուսերեն ու այն կարդացել են երկրի անմեծախոս անկյուններում անգամ:

Հայ թարգմանիչներն ու հրատարակիչները իզուր չէ որ այդքան անդրադարձել են Քսավիե դը Մոնթեպենին²³² Նրանից կատարված հայաստան թուրքերեն թարգմանությունների թիվը հասնում է 20-ի: Եթե նշենք, որ յուրաքանչյուր վեպ կազմված է եղել մի-

232 Քսավիե դը Մոնթեպենը (1824-1902) հանդիսացել է «Ֆիգարո» հանրահայտ ամսագրի հիմնադիրներից (1854թ): Մի քանի տասնամյակ նա ողողել է ֆրանսիական գրական ասպարեզն իր բազմաթիվ վեպերով, որոնք հրատարակվել են նախապես՝ հնարավոր բոլոր թերթերում: Շատ հաճախ (ինչպես նաև հայաստան թուրքերեն թարգմանություններից շատերի դեպքում) նրա վեպերն հենց մամուլի էջերից այլ լեզուների են թարգմանվել ու առանձին տպագրվել: Այն հեղինակին ապահովել է աննախընթաց ժողովրդականություն և առասպելական նյութական վարձատրություն: Նշենք, որ 19-րդ դարի վերջերին միայն ռուսերենով թարգմանվել ու հրատարակվել են Մոնթեպենի մոտ 60 անուն վեպերը: Սա անկասկած ապացույց է այս գրականության հաջողության մասին: Մոնթեպենի վեպերն իրենցից ներկայացնում են հոգեբանական զգացմունքների խորությունից գուրկ իրադարձությունների անվերջ շղթա: Անընդհատ հանցագործություններ, մեղավորների հետապնդում, հանցագործի և զոհի ձգձգված նկարագրություններ և այս ամենը՝ սիրային ինտրիգների պարտադիր ուղեկցությամբ: Նրա «Չուլածո աղջիկները» առիթ են տվել սկանդալների, հանգեցրել դատական հետապնդումների: Պատճառներից են հանդիսացել «որոշ նկարագրությունների անպարկեշտությունը», որն իհարկե ավելի շատ էր գրգռում ընթերցողական հետաքրքրությունը: Մոնթեպենի մի շարք վեպեր թարգմանվել են հայաստան թուրքերեն, սակայն՝ թատրոնի թուրքերեն ներկայացումների համար: Ուստի դրանց մի մասը մնացել է ձեռագիր, պիեսների վերածված: Հեղինակի ժամանակակիցներից Օգյուստ Վիլյե դը Լիլ-Ադանը (1838-1889), իր մի պատմվածքում հիշում է Մոնթեպենի և Պոնտեն դը Թերրայի անունները, որպես ամենաշատ վարձատրվող գրողներ, իսկ ծանոթագրություններում նշում, որ Հյուգոյի հոնարարները միջին մի թիվ էին կազմում վերոհիշյալ երկու հեղինակների հոնարարների միջև: Sten՝ Огюст Вилье де Лиля Адан. Две возможности. В сборнике “Жестокие рассказы”. М., 1967

ջին տաշվով 5-6 հատորներից, ապա դրանցից յուրաքանչյուրի մոտավոր ծավալը հասնում է 20 000 էջի:

Կրկենք, որ այսպիսի բուռն հաջողությունը վերագրել մեծ քանակով նկարագրված զգայացումն սարսափների՝ ճիշտ չէր լինի, եթե անգամ դրանք անչափ գրգռում ու սուր զգացումներ էին առաջացնում ընթերցողների մոտ: Բ. դը Մոնթեպենն իրոք գրական մեծ շնորհ է ունեցել: Նրա մի շարք վեպերը գեղարվեստական արժեք են ներկայացնում: Դրանք հիմնականում այն գործերն են, որ հեղինակը չհասներով Հյուգոյի և **Ջուլայի** հզորությանը, այնուամենայնիվ փորձել է դուրս գալ փարիզյան սալոններից ու պալատներից և իջնել Փարիզի հետնախորշերը, նկուղները, խաղատները, նկարագրել փարիզյան շրջմոլիկներին, անօթևան ու իրավագուրկ խավին, նկարագրել նրանց ու այլոց ողբերգությունները:

Այսօր համոզված կարող ենք ասել, որ արտաքուստ զուտ արկածային վեպ որպես տպագրված **Էժեն Ֆրանսուա Վիդոկի**՝ Փարիզի երբեմնի ոստիկանապետի 1890թ. «Փարիզի իսկական գաղտնիքը» երկհատոր գրքի տպագրությունն ինքնանապատակ չի եղել: Այս շրջանում կազմավորվում էր թուրքական գաղտնի ոստիկանությունը, ավելի ստույգ՝ աշխատանքներ էին տարվում այն եվրոպական համապատասխան հիմնարկությունների գործելակերպին, արտաքին և ներքին լրտեսական ցանցի տեխնիկական կազմակերպման նոր՝ ֆրանսիական և անգլիական ծառայություններին նմանեցնելու ուղղությամբ: Թուրք կառավարող շրջանները հասկանում էին, թե ինչպիսի մեծ հետաքրքրություն է ներկայացնում իրենց երկիրը: Կայսրության պալատներից, հարեմներից, նախարարություններից մինչև օտար դիվանագիտական ներկայացուցչությունները վխտում էին ամենատարբեր նպատակներ հետապնդող օտար լրտեսներով: Նույնիսկ սուլթանների, նրանց ժառանգների և վեզիրների շուտափույթ մահվան կասկածելի բազմաթիվ դեպքերը չբացահայտված, կամ գաղտնի էին մնում: 1891թ. **Մավրոյանի** փաշան հրատարակում է գաղտնի ոստիկանության կազմակերպման մասին 54 էջանոց մի գրքույկ, որը վերահրատարակվում է 1892թ.-ին: Հեղինակը Աբդուլ Համիդի անձնական բժիշկն էր եղել, տիրապետել մի շարք լեզուների, գրել գրքեր և քաղաքական անձ հանդիսացել: Պալատական բոլոր բժիշկների նման երբեմն կարևոր դեր է խաղացել պետության կյանքում: Հոդվածագիրի՝ **Թաներ Թիմուրի** կարծիքով նա հանդիսացել է անգլիական գաղտնի ոստիկանության գործակալը, ուստի զարմանալի չէ նման գրքի նրա հեղինակությունը: Եվրոպայում կրթություն ստացած կամ Ֆրանսիայի բարձրի այդ բնագավառներին քիչ թե շատ տեղյակ մարդկանց համար նախընտրելի էր նապոլեոնյան շրջանում գաղտնի ոստիկանության ցանց հիմնած Վիդոկի նման իր գործի խելացի, հնարամիտ ու կիրթ մասնագետը, քան դաժան ֆուշեները: Մավրոյանի փաշայի գրքում Վիդոկի անունը հիմնական հեղինակությունն է, որի նմանին է առաջարկվում ունենալ որպես գաղտնի ոստիկանության կազմակերպիչ: Այս առիթով հեղինակը Մուստաֆա Ռեշիդ Փաշային հրամցնում է փարիզյան գաղտնի ոստիկանության պատմություններից: Վիդոկի անունն այս առթիվ ծանոթ է եղել կառավարող շրջաններին: Թուրքիայում գաղտնի ոստիկանության վիդոկյան աշխատառճին նախընտրություն տալու խնդրում այս վեպի լույս ընծայումը անուղղակի ուղղություն կարող էր տալ և այս գրքի ընթերցող-

ների շրջանակը կարծում ենք համեմատաբար ավելի ընդարձակ է եղել, քան մնացած արկածային վեպերինը:

Թերթոնային գրականության մեջ, թարգմանված գրքերի քանակով Քսավիե դը Մոնթեյենի հետ մրցում է Պոլ Ֆեվալը (1817-1887), որի գրչին են պատկանում 200-ից ավել հատորներ: Գրել է տարբեր սյուժեներով, միշտ ձգտելով անսովոր, բացառիկ, սարսափազդու և ցնցող իրադարձությունների նկարագրությունների: Առատորեն օգտագործել է գրական հնարքներ, ամենախճճված, մտացածին իրադարձությունների ընթացքում հանկարծակի, արտառոց լուծումների հայտնագործմամբ: Չարմանալիորեն այս հեղինակի վեպերից միայն «Մերը Փարիզում» եռահատոր վեպն է առանձին գրքով հրատարակվել հայաստան թուրքերեն 1890 թվականին, Պիտար Արապաճյանի թարգմանությամբ: Կարծում ենք հայաստան թուրքերեն մամլո հավաքածուների մանրամասն ուսումնասիրություններն ի հայտ կբերեն թերթոնային վեպերի այս արքայի ուրիշ վեպեր ևս:

Հայաստան թուրքերենի թարգմանիչներին շատ ավելի հրապուրել են «ռոման-ֆելիետոն»-ի մի այլ մեծ հեղինակության՝ Պոնսոն դը Թերրայլի (1829-1879) վեպերը: Նրա վեպերը մասնագետների կարծիքով ավելի մակերեսային, էժանագին էֆեկտների վրա կառուցված գործեր են, քան թե Քսավիե դը Մոնթեյենի վեպերը: Թերրայլին հռչակ է բերել «Ռոքամբոլի» շարքը: Այն սկսել է տպագրվել 19-րդ դարի 50-ական թվականներից և այնպիսի աճող ժողովրդականություն է սկսել վայելել, որ թերթում օր օրին հրատարակող թերթերի արտոնատերերը ստիպված են եղել եռապատկել թերթի տպաքանակը: Մինչև օրս էլ Ֆրանսիայի քաղաքներում կարելի է հանդիպել «Ռոքամբոլ» անվամբ գարեջրատան կամ սրճարանի: «Ռոքամբոլի» վեց հատորները հայաստան թուրքերեն առանձին գրքով հրատարակվել են 1892-93 թվականներին՝ Հովհաննես Թուլայանի թարգմանությամբ: 1893 թվականին լույս է տեսել հաջորդ վեպը՝ «Գեղեցկուհի Անժել կամ Լեոնա» երկհատոր արկածային վեպը՝ Պիտար Արապաճյանի թարգմանությամբ: Կարծում ենք այս վեպերի ընտրության խնդրում դրանց հայտնի լինելուց բացի դեր է խաղացել վեպերում առկա խրատական բարոյախոսական գաղափարախոսությունը: Մոցիալական և քաղաքական հենքից զուրկ այս վեպերը չէին մեղանչում համիդյան գրաքննության չափանիշների դեմ, ուստի ազատ էր դրանց թարգմանությունը հայերեն, հայաստան թուրքերեն, թերթոնների ու գրքերի տպագրությունը: Ավելին, գրաքննիչներին կարող էր դուր գալ վեպում արհեստկրատիայի, տիրող խավի նկատմամբ ընդգծված համակրանքը: Գրքի հերոսների հիմնական մասը ազնվականության ներկայացուցիչներ էին, որոնց հետաքրքրությունները և կյանքը պահպանում էին ազնիվ և հավատարիմ ծառաները:

Արևմտաեվրոպական մյուս հեղինակը, որ գրավել է հայ թարգմանիչների ու գրահրատարակիչների ուշադրությունը՝ հանդիսացել է **Ժորժ Օնեն**: Ավելի գրավիչ է հանդիսացել Օնեի վեպերի ոչ միայն արկածային, այլև հասարակությանը հուզող հարցերի առկայությունը համարյա բոլոր գործերում: Նրա հայաստան թուրքերեն թարգմանիչներից **Անտոն Ալիքը** 42 վեպերից մեկի հայերեն տպագրության առաջաբանում գրում է, թե արկածախնդրություն - հանցագործություն փնտրող ընթերցողներն այն աստիճանի էին հասել, որ մի քանի էջ կարդալով ֆրանսերենից կատարված թարգմանական վեպերում՝

հիասթափված դեմ էին նետում գիրքը, չգտնելով որևէ սպանություն, սարսափ, հանցագործություն, թունավորում, սկանդալ: Անտոն Ալիքը շարունակում է, որ ընթերցողների որակն արդեն այն աստիճանի է բարձրացել, որ մարդկանց հոգևեցրել են նման վեպերը: Ուստի անհրաժեշտ է համարում ընթերցողների սեղանին դնել Ժորժ Օնեի վեպերի նման գեղարվեստական մեծ արժեք ներկայացնող գործեր: Օնեի վեպերի թարգմանությունը Անտոն Ալիքը համարում է ավելի բարդ, քան որևէ արկածային գործի թարգմանություն: Այս է պատճառը, որ թարգմանելիս ստիպված է եղել ճկունություն գործադրել, երբեմն դիմել դժվարամարս, բարդ և քիչ գործածական բառերի օգտագործմանը²³³: Բնականաբար հայատառ թուրքերենի հայտնի թարգմանիչներից մեկը հանդիսացող այս մտավորականը մասամբ իրավունք ուներ: Ժորժ Օնեի վեպերն ակնհայտորեն տարբերվում են Քսավի դը Մոնթբերենի հիմնականում մակերեսային վեպերից:

Հետևելով **Ժորժ Սանդի** ու մյուս դասական հեղինակների օրինակին, Ժ.Օնեն ձգտել է իր ստեղծագործություններում վեր հանել առօրյա, հասարակությանը հուզող հարցեր՝ նաև որոշ սոցիալական խնդիրներ: Նրա մանր բուրժուական մտահորիզոնը, քրիստոնեական գաղափարախոսության չափանիշներից վեր բարձրանալու անկարողությունը թույլ չեն տվել հեղինակին հանգելու խորը ընդհանրությունների: Գրական տաղանդը, վեպի կառուցվածքային և սյուժետային զարգացումների նկարագրության վարպետությունը, իր հերոսներին խորը հոգեբանությամբ ներկայացնելը մեծապես նպաստել է օնեական վեպերի տարածման մեծ հաջողությանը: Այդ վեպերից մի քանիսը մինչև 200 անգամ վերահրատարակվել են: Ադմկայի հաջողության արժանացած «Դոկտոր Ռամոն» վեպը, որը «Կենաց պայքար» շարքի գործերից է, թարգմանվել է հիմնականում ընթերցողներին անաստվածությունից ետ պահելու նպատակով: Վեպի հերոսը՝ դոկտոր Ռամոն լինելով բժիշկ, մարդկանց փրկությամբ զբաղված անձ՝ ի սկզբանե եղել է սրբապիղծ և գոռոզ անձ: Հանուն կյանքի մղված պայքարում նա փոխվել է, դարձել խղճուկ ու թույլ մի մարդ: Փրկության ելքը միակն է եղել: Ռամոն սկսել է անաստվածության ու խարխափման տարիներից հետո աղերսել աստծուն իր փրկության համար: Ահա այս եզրակացությունն է, որ գրավել է Ժ.Օնեի հայ թարգմանիչներին, որոնց թարգմանությունները լույս են տեսել առանձին տպագրությամբ, պիեսների վերածվել ու խաղացվել հայ բեմում²³⁴:

Բուականպե դը Ֆորտունեյի (1821-1891) ստեղծագործություններից 5-6 ստվարածավալ վեպեր են հայատառ թուրքերենով հրատարակվել: Այս վեպերը հայատառ թուրքերենով նույնքան դյուրությամբ են կարդացվում, ինչպես կարդացվում են այսօր թուրքերենի թարգմանված գործերը: Դրան նպաստում է նաև այն, որ յուրաքանչյուր իսկ էջում նոր, հետաքրքրությունը գրգռող դեպքեր են, իրադարձությունների անսպասելի լուծումներ: Հերոսների ողբերգական ճակատագրերը, ուժերի վերջին լարմամբ, սակայն չարի դեմ անուժ պայքարի զոհերը գրքի էջերին են գամում ընթերցողներին, ստիպելով հետևել իրադարձությունների զարգացմանը: Հեղինակի գաղափարախոսությունը դուրս չի գալիս չարի և բարու հակադրման ընդհանրական չափանիշների սահմաններից:

233 Ժորժ Օնե, Յանկոթեան հետեանքը, (առաջաբանում): Կ.Պոլիս 1888 .

234 Ժորժ Օնեից հայատառ թուրքերենով հրատարակվել են՝ «Դոկտոր Ռամոն» (1891), «Յանկոթեան հետեանքը»(1888), «Կոմսուիի Սառա» (ա.թ.) վեպերը:

Ինչպես նշվեց, 19-րդ դարի 50-70-ական թվականների արևմտահայ իրականությունում կատարված թարգմանություններն ունեցել են շատ որոշակի նպատակադրվածություն: Մեծ նշանակություն է ունեցել թարգմանվող գործի գեղարվեստական արժեքը, նրա գաղափարական ուղղվածությունը, ազդեցությունը: Աբդուլհամիդյան բռնակալության շրջանի գրաքննական արտառոց խստություններն ու սահմանափակումները կանգնեցրին գրական գործունեության այսպիսի ուղղությունը: Հայ թարգմանիչներն օգտագործում էին բոլոր հնարավորությունները, որպեսզի այդ տարիներին հրատարակվող վեպերը ոչ միայն իրենցից ընթերցանության հաճելի ու հետաքրքիր նյութ ներկայացնեն, այլ հասարակությանը օգտակար լինեն: Նկատենք, որ թարգմանիչների բանակի մեծ մասը ժամանակի ամենագարգացած անձերից են եղել: Նրանք լավ ծանոթ են եղել ֆրանսիական հարուստ գրականությանը և մշակույթին, եվրոպական գաղափարախոսությանը: Այս թարգմանիչները տիրապետել են մի քանի լեզուների: Եզակի երևույթ չի եղել, երբ նույն անձը նույնպիսի վարպետությամբ թարգմանություններ է կատարել իտալերենից, ֆրանսերենից և այլ լեզուներից: Համոզված կարելի է ասել, որ հայաստան թուրքերեն թարգմանական հսկա գրականությունը, որ մուտք է գործել թուրքական և թրքախոս հայերի շրջանակ՝ կոչված էր ծառայելու նրանց ընդհանուր մտավոր զարգացմանը: Թարգմանվող գործերը խմբագրերի կողմից պատահական ընտրության արդյունք չեն եղել, որ ամիսներ, տարիներ շարունակ տպագրվել են թերթերում: Ահա թե ինչ է գրում արևմտյան հեղինակների թարգմանական գործերի հրատարակիչներից մեկը: Նրա հավաստմամբ թարգմանություններն ընտրվում են ոչ տպաքանակի ապահովման և տվյալ պարբերականի ժողովրդականացման նկատառումներով: Ընտրության նպատակներն ավելի հեռահայաց են: Հրատարակիչները հիմնականում ձգտում են հատընտիր, հաճելի և օգտակար գրքերի շնորհիվ սեր և ճաշակ զարգացնել մտավոր ու հոգեկան զգացումների նկատմամբ, սովորեցնել ընթերցողներին այն վեր դասել առօրյա կենցաղից, զարգացնել ընթերցողների մտավոր հնարավորությունները և հոգեկան սնունդ ապահովել նրանց համար: Ըստ գրահրատարակիչների համոզմունքի՝ վնասակար գրքեր չկան: Իհարկե, որքան մարդ՝ նույնքան բնավորություններ կան: Եվ եթե հաջողվի ընթերցողական լայն շրջանակների մեջ սեր արթնացնել ընթերցանության նկատմամբ, ապա բարոյապես բավարարված կհամարվեն այս գործին նվիրված մտավորականները²³⁵:

Այս առթիվ ցանկանում ենք անդրադառնալ հարցի մի այլ կողմի՝ թարգմանությունների լեզվական առանձնահատկությունների վրա: Նշենք, որ ոչ բոլոր հայաստան թուրքերեն թարգմանությունների լեզուն նույնն է եղել: Կան գրքեր, որոնք այսօր ժամանակակից ընթերցողը մեծ դժվարությամբ կկարդա: Այդպիսի հրատարակությունների թիվը մեծ չէ: Դրանք գրված են պալատական շրջանակների համար, համապատասխան ծեփ-ծեքուն ոճով՝ արաբիզմների առատ օգտագործմամբ: Յուրաքանչյուր օրինակ կարող է հանդիսանալ Հովսեփ Վարդանյանի ստեղծագործության երկու կողմերը:

235 Արթուր Պերնեթ. Նապոլեոնի ընտանեկան գաղտնիքները. Հալեպ, ա.թ., առաջաբանում (հայերեն):

«Պատմություն Նապոլեոն Բոնապարտի» և «Պատմություն Արևելյան պատերազմների» աշխատությունների հեղինակը միանգամայն տարբեր, ժողովրդի ամենալայն խավերին հասկանալի լեզվով է շարադրել իր «Ագապի» հայտնի վեպը, հանրամատչելի գրքույկները, երգիծական «Շատախոսը» երկը և այլն: Բնականաբար պալատական, ծովային նախարարության այս բարձրաստիճան պաշտոնյան նկատի է ունեցել ընթերցողական իրարից շատ տարբեր երկու շրջանակներ: Բնականաբար ոչ պալատական շրջանակների համար գրված գործերը Հովսեփ Փաշան գրել է ժողովրդական պարզ, բոլորին հասկանալի խոսակցական թուրքերենով: Այնուամենայնիվ այս լեզվով ներկայացնել Ալեքսանդր Դյումայի կամ Ժյուլ Վեռնի վեպերի թուրքերեն թարգմանությունները՝ անհնարին էր: Ժողովրդական թուրքերենի բառացանկը բավականին սահմանակ էր և օտար լեզուներից թարգմանելու ընթացքում հազարավոր բառեր չունեին համագոր նշանակություն կամ իսպառ բացակայում էին թուրքերենում: Թարգմանիչները նման դեպքերում կամա թե ակամա ստիպված էին դիմելու ծեքծեքուն օսմաներենին, այսինքն արաբիզմներով հագեցված թուրքերենին՝ ձգտելով հանդերձ չխախտել թուրքական շարահյուսական ու ձևաբանական օրինաչափությունները, ընտրել հնարավորին չափ ժողովրդին հասկանալի բառեր, դարձվածքներ: Ցավոք սրտի միշտ չէ, որ նման ձգտումները հաջողությամբ են պսակվել և արդարացրել իրենց: Բազմաթիվ հատորներ թարգմանած Կարապետ Փանոսյանի գրածները Հակոբ Պարոնյանի կարծիքով առանց համապատասխան բառարանների՝ անհնարին էր հասկանալ: Այսպես օրինակ, Երեմիա Չելեպի Քյոմորճյանի կողմից «Փարեզի եւ Վէնայի» սիրավեպը թարգմանելիս, նկատի է առնվել այն հանգամանքը, որ գիրքը կարդացվելու է ոչ միայն միջին ընթերցողական խավի կողմից, այլև հայ, թուրք և մյուս ազգերի մտավորականների կողմից ևս: Այսպիսով հասկանալի է դառնում թարգմանչի ձգտումները՝ երկը ներկայացնել հնարավորին չափ հասկանալի *գրական* թուրքերենով:

Հայատառ թուրքերեն թարգմանական գրականության այս բուն տասնամյակները հայտնի են դեպի ֆրանսիական գրականությունն ունեցած շեշտակի հակվածությամբ: Բացի հարստագույն և առաջադեմ այս գրականությանը տուրք տալու օբյեկտիվ պատճառներից, չպետք է անտեսել այս ֆրանսիամոլության սուբյեկտիվ պատճառները, որոնք ակամա պարարտ հող են ստեղծել քաղաքականության, գրականության, մասնավորապես թարգմանական գրականության զարգացման համար: Խոսքը վերաբերում է Օսմանյան կայսրության տիրակալների, պալատական կարևոր դեմքեր հանդիսացող աստիճանավորների, բարձրաշխարհիկ խավի, մտավորականության շրջանում 1872 թվականից ի վեր Ստամբուլում հիմնված «Ֆրանսիական Մեծ Արևելք» մատնական օթյակի (լոժայի) «Պրոդոս» մասնաճյուղի բուն գործունեությամբ: Սուլթան Մուրադ 5-րդի մասն լինելու մասին մի հողվածում ասվում է, որ Աբդուլ Համիդ Բ-ի գահակալությանը (1876 թ) նախորդած 20 տարիների ընթացքում միայն Ստամբուլում 50-ից ավելի մատնական կազմակերպություններ են հիմնվել, որոնց մի մասը բնականաբար կարճ կյանք է ունեցել, իսկ մնացածը՝ երկար տարիներ անխափան գործել են: Հողվածագիրը Թուրքիայի երևելի մասն անձանց պատկառելի մի ցուցակ է ներկայացնում: Թուրք տիրակալների, վեզիրների, փոխարքաների ու բարձրաստիճան պաշտոնյանե-

րի, փաշաների անունների կողքին գտնում ենք թուրք մտավորականների, մասնավորապես հայտնի լուսավորիչ Նամըք Քեմալի, հայտնի բանաստեղծ Մեհմեդ Էմինի և ուրիշների անունները: Հայերից այդ ցուցակում են թատրոնի երախտավոր Հակոբ Վարդովյանի (Գյուլլի Հակոբը), սուլթանական բժշկական հաստատության տնօրեն Անդրանիկ փաշա Կրճիկյանի անունները²³⁶: Հայտնի մասուններից է եղել մի այլ Կրճիկյան՝ Հակոբ Կրճիկյանը (1806-1865)²³⁷:

Բնականաբար Թուրքիայում և մասնավորապես Ստամբուլում այսպիսի մեծ տարածում գտած ֆրանսիական մասունական հուժկու կազմակերպությունն իր տասնյակ հարակից կազմակերպություններով չէր կարող հատուկ բարենպաստ վերաբերմունք չզարգացնել և ուղղել դեպի Ֆրանսիան, ֆրանսերենը և ամեն ֆրանսիականը: Թուրքական կառավարող շրջանների վերին շերտերում ծայր առաջ մասունական շարժումը դեպի իրեն է ներգրավել շատ մարդկանց, վերաճել թուրք իրականությունում հայտնի մի կորիզի, որն ունեցել է իր տպագիր՝ «Envar-ı Şarkiye» (Արևելքի ճառագայթ) պարբերականը: Հետաքրքիր է, որ այս պաշտոնաթերթը Կարինում լույս է տեսել 1866-1877 թվականներին օսմաներեն (1 և 4 էջերը) և հայաստան թուրքերեն լեզուներով (2 և 3 էջերը)՝ նույն բովանդակությամբ:



236 Suha Umut. V Murad'ın Masonluğu. “Tarih ve Toplum”. 1987 ocak, İst. s.36-39; K.S.Sel, Türk Masonluk Tarihine Ait Üç Etüd. İst 1972, s.39.

237 Թանգիմաթյան բարեփոխումների ջատագով Ռեշիդ փաշայի շուրջ համախմբված հայերից է եղել Հակոբ Կրճիկյանը, ով պետք է դառնար իր շրջանի խոշոր գործիչներից մեկը: 1835 թ. Ռեշիդ փաշայի հետ մեկնում է Փարիզ՝ որպես փաշայի երրորդ թարգման և նրա զավակների ուսուցիչ: Փարիզում Կրճիկյանը հաճախել է Սորբոնի դասերին: Ռեշիդ փաշայի միջնորդությամբ Փարիզի դեսպանատանը դարձել է Բ թարգման՝ փաշային գորավիզ հանդիսանալով նոր դիվանագիտական աշխատանքների մեջ:

Կրճիկյանը նաև մեծ դեր է խաղացել հայոց սահմանադրական շարժման ժամանակ: 1845 թ. Ռեշիդ փաշան Կրճիկյանին նշանակում է հայոց ազգային գործերի ղեկավար՝ լոգոֆեր, որպեսզի վերջինս կարողանա, ինչպես որ հարկ է համարում, տնօրինել ազգային գործերը: Լոգոֆերը տիրապետում էր արքունի արարողակարգի մանրամասնություններին և յուրատեսակ կամուրջ էր հանդիսանում պալատի և համայնքի միջև: Պատրիարքից բացի՝ կնիք ուներ նաև լոգոֆերը, ով իրավունք ուներ կնքել քաղաքացիական հարցերին առնչվող փաստաթղթերը: Հայկական միլիթում այս գործառույթը մինչ 1847 թ. կատարում էին ամիրաները:

1854 թ. Ռեշիդ փաշայի որդին՝ Մեհմեդ-Ջեմալ փաշան, նշանակվում է Փարիզում դեսպան, իսկ Կրճիկյանը՝ նրա տեղապահ: Տես՝ **Artinyan V.**, *Osmanlı Devleti'nde Ermeni Anayasasının Doğuşu*, 1839-1863. İst.: Aras, 2004.

Գլուխ Ե

Պատմական ստեղծագործություններ

Բազմադարյան հայ մատենագրությունն ընդգրկում է պատմության, աստվածաբանության, չափածո գրականության և այլ ասպարեզների վերաբերող բազմաթիվ բնագրեր՝ ընդօրինակված տասնյակ, երբեմն՝ հարյուրավոր ձեռագրերում:

Հայատառ թուրքերեն նմանատիպ ձեռագրերը մեծ թիվ չեն կազմում: Քսանից՝ ոչ ավել: Դրանց մի մասը հետագայում արժանացել է տպագրության, իսկ մնացածները հասել են միայն ձեռագիր վիճակում:

Հայատառ թուրքերեն ձեռագրերի մասին խոսելիս անդրադարձել ենք 18-րդ դարի պոլսահայ պատմաբան **Թամպուրի Արուֆինի կամ Քյուչուկ Արուֆինի** «Պատմութիւն Թահմազ Դուլի Խանի» երկին: Հեղինակն իմացել է թուրքերեն, պարսկերեն և նվազել է թամպուր, որից և մականունը՝ Թամպուրի Արուֆին: Պարսկաստան է ճանապարհորդել թուրքական դեսպան **Աբդուլ Չեքի Խանի** հետ: Աշխատանքը գրել է հայատառ թուրքերեն: 1800թ. առաջին անգամ ձեռագիրը հրատարակվել է Վենետիկում²³⁸:

Հաջորդ պատմական երկը, որ տպագրվել է հայատառ թուրքերենով՝ դա ականավոր հայ պատմաբան, լեզվաբան, աստվածաբան և մանկավարժ, Ս.Ղազարի Մխիթարյան միբանության հայրերից **Միքայել Չամչյանի** «Խրախճան պատմութեան հայոց» երկի թուրքախոս հայերի համար հայատառ թուրքերենով շարադրածի տպագրությունն է 1812 թվականին՝ «Կիլիզարի թեվարիխ» խորագրով, կրկին ս.Ղազար կղզում²³⁹: Եռասորդ «Հայոց պատմության» համառոտ՝ 500 էջից բաղկացած շարադրանքի համար Մ.Չամչյանն օգտագործել է նաև Երեմիա Չելեպի Քյոմուրճյանի «Տարեգրական պատմութիւնը»²⁴⁰:

Հովհաննես վրդ. Աղավնի (Հովհաննես Արք. Հաննա, 1693-1733 թթ.) անձի և անվան շուրջ կան մի շարք տարակարծություններ: **Սուքիաս Սոմայանի** հայ գրականության պատմությանը նվիրված իտալերեն աշխատությունում (Վենետիկ, 1829, էջ 165) Հով-

238 16-րդ դարի բանաստեղծ Հովհաննես Վարագեցին որպես ականատես գրել է Վասպուրականում Թ(Դ)ահմազ Դուլի Խանի վայրագությունների մասին:

239 Այս և մյուս հրատարակված պատմական աշխատությունների մասին տես նաև ուսումնասիրության ձեռագրերին նվիրված գլխում: 1827թ. «Պատմութիւն Հայոցը» թարգմանվել է անգլերեն:

240 Երեմիա Չելեպի Քյոմուրճյանը (1637-1695) պոլսահայ մատենագիտության ամենահայտնի դեմքերից է եղել: Տիրապետել է մի շարք լեզուների, եղել բազմակողմանի զարգացած հասարակական, մշակութային գործիչ: Անվանի արաբագետ-հայագետ, Հռոմի Տիբերիոս Ակադեմիայի թղթակից անդամ, կյանքի վերջին տարիներին Հայաստանի Ազգային Ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտի աղբյուրագիտության բաժնի ղեկավար, Արամ Տեր-Ղևոնդյանն ապացուցել է, որ Քյոմուրճյանի «Պատմություն» օգտագործվել է նաև արաբ ականավոր պատմաբան Մյունեջջիմ Բաշիի կողմից, նրա «Չամի աղ-դուվալ» («Տիեզերական պատմություն») գրքի հայերի մասին հատվածում, որը գրվել է 1681 թվականին, այսինքն՝ Քյոմուրճյանի «Պատմություն»-ից հետո: Այս մասին տես՝ Բանբեր ՀՀ ԳԱ, 1960, N 7-8, էջ 143-150).

հաննես Կոլոտ պատրիարքի աշակերտներից ութերորդը՝ «Աղավնի» հորջորջմամբ, Սեբաստիայում նահատակվել է կաթոլիկություն ընդունած լինելու պատճառով: Հովհաննես Կոլոտ Պատրիարքին նվիրված Գ.Բամպուրճյանի աշխատության մեջ այս կարծիքին հակակշռող փաստեր են բերվում: Ամենայն հավանականությամբ խոսքը տարբեր անձերի է վերաբերվում:

Երուսաղեմցի Հաննա եպիսկոպոսը մեզ հետաքրքրում է իր թողած մատենագրական ժառանգությամբ, մասնավորապես իր «Երուսաղեմի պատմությամբ»: 1727 թ. ավարտված այս գործը (377 էջ) հայերեն լեզվով առաջին անգամ հրատարակվել է 1734 թվականին Կ.Պոլսում, Աստվածատուր Գպրի տպարանում և այնուհետև ունեցել 4 տպագրություն: Գրքի ամբողջական հայերեն վերնագիրն է՝ «Գիրք Պատմութեան Սրբոյ եւ մեծի Քաղաքիս Աստուծոյ Երուսաղեմիս, եւ սրբոց Տնօրինականաց Տեղեաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»: 1814 թվականին, **Մատթեոս Գպրի** տպարանում հրատարակվել է այս երկի հայաստան թուրքերեն թարգմանությունը, «Ազիզ վե Ազիմ Երուսաղեմ»-ը (372 էջ), որի թարգմանիչն է եղել անվանի կրթական ու մշակութային գործիչ **Թազվոր վարժապետ Ասլանյանը** (1746-1836): Պատմական այս երկը կարևոր է ոչ միայն Երուսաղեմի կամ Երուսաղեմահայոց պատմության համար, այլև մասամբ պոլսահայոց պատմության համար, - գրում է Գ.Բամպուրճյանը²⁴¹:

Պատմությանը վերաբերող աշխատությունների մասին խոսելիս հարկ է առանձնակի ուշադրություն հրավիրել Հովսեփ Վարդանյանի «Նապոլեոն Բոնապարտի պատմությունը» ուսումնասիրության վրա: Հովսեփ Վարդան Փաշան (1815-1878) ժամանակի պոլսահայ զարգացած մտավորականներից է եղել և հայաստան թուրքերենի ամենաարգասավոր հեղինակներից: Կաթոլիկ դավանանքով բարձրաստիճան պալատական այս պաշտոնյան 1852 թվականին Կ.Պոլսում հիմնադրել է «Մեճմաայը Հավատիս» (Ծաղկաբաղ լուրերի) պարբերականը, որը գոյություն է ունեցել մինչև 1877 թվականը²⁴²: Հեղինակն է «Ազալի», «Շատախոսը» երկերի: Հովսեփ Վարդանյանը 1856 թվականին թարգմանել և հրատարակել է Փարիզի 1856թ. մարտի 30-ի կոնգրեսի 24 փաստաթղթերը և Կոնգրեսի մասին 283 էջերից բաղկացած աշխատությունը, էլեկտրական հեռագրի մասին գրքույկը: 1863 թվականին, «Ազգային Սահմանադրութիւն Հայոց, հաստատեալ 1863 եւ վերաքննեալ»-ի տպագրությանն անմիջապես, նույն շրջանում արձագանքել է «Սահմանադրութիւն»-ից մեծ ծավալ ունեցող իր քննական ««Սահմանադրական ճշմարտութիւններ եւ անոնց պարտադրութիւնները» գործը (87 էջ, 1863թ.):

Հովսեփ Վարդանյանը նաև գեղարվեստական գործերի թարգմանությամբ է զբաղվել: Նրա թարգմանությամբ լույս են տեսել Լը Սաժի «Կաղ սատանան», Էժեն Սյուի «Փարիզի գաղտնիքները», հատընտիր պատմությունների մի ժողովածու: Հովսեփ Վարդանյանը լինելով կաթոլիկ, կրթությունը ստացել է Սխիթարյան միաբանների մոտ, եղել է վառողապետ Տատյան ամիրայական տան խնամակալը: Մովորել է Վիեննայում, տիրապետել անգլերենին, ֆրանսերենին, գերմաներենին, արաբերենին, պարսկերենին, ինչպես նաև հայերենին ու թուրքերենին: Վստահորեն առաջ է շարժվել պետական ծա-

241 Գ. Բամպուրճեան, Յովհաննես Պատրիարք Կոլոտ, Ստանպուլ, 1984, էջ 153-159.

242 «Մեճմաայը Հավատիս»-ը սկսել է հրատարակվել որպես ամսաթերթ, ապա՝ որպես շաբաթաթերթ և հետո դարձել ամենահայտնի հայաստան թուրքերեն օրաթերթերից մեկը:

ռայության աստիճաններով, ստացել է փաշայի աստիճան, պարգևատրվել է շքանշաններով և մեդալներով: Եղել է հայ կաթոլիկ և միաժամանակ՝ թուրքական փաշա: Թուրքական օրենքներն արգելում էին քրիստոնյաներին պետական բարձրագույն պաշտոններ զբաղեցնել: Այնուամենայնիվ նա ի թիվս մի շարք նշանավոր հայերի, իր ծառայությամբ սուլթանական պալատի բարեհաճությունն է վայելել: Նա կարողացել է շրջանցել իր կաթոլիկ լինելու հանգամանքը, և մի խումբ նշանավոր հայ կաթոլիկ մտավորականների հետ միասին մաս կազմել «Համազգյաց» միության, որի հիմնական նպատակն է եղել պայքարել հայ ժողովրդին պառակտող կաթոլիկական քարոզիչների ու արևմտահայ իրականությունում կաթոլիկության ներթափանցման դեմ: Թեև պալատական պաշտոնյաի իր դիրքը և կաթոլիկ լինելու հանգամանքը պարտադրում էին նրան զգուշություն ցուցաբերել ազգային խնդիրներում, այնուամենայնիվ նա բուռն պայքար է մղել պապականության և մասնավորապես հասունյանական հակահայկական, քայքայիչ գործունեության դեմ: Նրա միակ զգույշ քայլը եղել է իր վեպերի անանուն տպագրելու հանգամանքը, որն ինչպես հայտնի դարձավ՝ գուրկ չէր հեռատեսությունից: Գալով Նապոլեոն Բոնապարտի մասին պատմությանը, այս դեպքում՝ Հովսեփ Վարդանյանը չի խուսափում իր հեղինակության իրավունքը ներկայացնելուց: Տիտղոսաբերթին գրված է ոչ միայն անունը, այլև բոլոր աստիճաններն ու կոչումները²⁴³: Նշված է նաև այն մասին, որ ուսումնասիրության հեղինակն օգտվել է բազմաթիվ ֆրանսերերեն ու անգլերեն գրքերից: «Նապոլեոնի պատմությունը» սկսվում է նրա ծննդյան օրվանից, Կորսիկայի նկարագրությամբ և հասնում մինչև 1812 թվականը՝ այսինքն Բոնապարտի Ռուսաստան կատարած արշավանքի նախօրեն: Ուսումնասիրությունը բաղկացած է 8 գրքերից, որոնք կազմում են երկու շքեղ հատոր²⁴⁴: 1500 խոշոր էջերից կազմված այս գիրքը՝ Կայսեր կյանքի, գործունեության ու ռազմական գործողություններին նվիրված ամենամեծ ուսումնասիրություններից է: «Պատմության» շարադրանքն անակնկալ կերպով ընդհատվում է²⁴⁵ :

Այս ծավալուն ուսումնասիրությունը, որը հարուստ փաստական նյութ է պարունակում, հեղինակի քրտնաջան աշխատանքի և նյութական բավականին ծախսերի արդյունք է հանդիսացել: Գիրքն աչքի է ընկնում շարադրանքի վերամբարձ ոճով, մեծ թվով օսմաներեն դժվարամարս բառերի ու դարձվածքների օգտագործմամբ: Հեղինակն առաջաբանում խոստանում է աշխատության վերջում կցել օսմաներեն անհասկանալի բառերի բացատրական բառարան: Շարադրանքի ծեփծեքուն ոճն ապացույցն է այն հանգամանքի, որ գիրքը նախատեսված է եղել «Ազապի»ի ընթերցողներից շատ

243 Գիրքը հրատարակվել է Կ.Պոլսում 1855-1856թթ:

244 Գեպքերի նկարագրությունների ժամանակային շրջանակները հետևյալն են

Ա. հատոր	մաս 1՝	1769-1798թթ	Բ.հատոր	մաս 1՝	1802-1805թթ
	մաս 2՝	1798- 1799թթ		մաս 2՝	1805-1807թթ
	մաս 3՝	1799-1800թթ		մաս 3՝	1807-1809թթ
	մաս 4՝	1800-1802թթ		մաս 4՝	1809-1812թթ:

245 Գառնիկ Ստեփանյանը «Ազապի» վեպի թարգմանության հրատարակության առաջաբանում որպես պատճառ նապոլեոնյան «Պատմության» ընդհատման՝ հնարավոր արգելք է համարում Ղրիմի պատերազմը: Գիտնականի կարծիքով գիրքը պետք է որ կազմված լիներ երեք հատորներից և 12 մասերից (գրքերից): Այս մասին տես՝ «Ազապի», Եր., 1979, էջ 4:

տարբեր մի խավի համար: Այն է՝ թուրքական բարձրաշխարհիկ խավի, մտավորական շրջանակների համար: Բացառված չի, որ պատմական այս երկի գաղափարը տրվել և նույնիսկ պատվիրված է եղել պալատական շրջանակների, կամ հեղինակին ի պաշտոնե ծանոթ դիվանագիտական շրջանակների կողմից: Փաստեր կան, որ օսմանյան կայսրության վերնախավը կարդացել է այս ստեղծագործությունը: Համենայն դեպս կրկին նշենք, որ «Նապոլեոնի պատմությունը» գրված է եղել հենց այս պալատական շրջանակների համար և ոչ թե թարգմանական վեպեր կարդացող թրքախոս հայ շրջանակների կամ կայսրության թրքախոս մյուս ազգերի համար: Նույնիսկ պալատական տիրող խավի և դիվանագիտական շրջանակներում մի քանի տասնյակից ավելի մեծ թիվ չպետք է կազմեին «վերամբարձ օսմաներենի» գիտակները: Մինչդեռ նման թանկարժեք հրատարակության նյութական ծախսերը հոգալու համար անհրաժեշտ էր լինելու նկատի ունենալ առնվազն 1000-ի հասնող ընթերցող:

Հարց կարող է առաջանալ, թե այդ դեպքում ինչու՞ գիրքը գրված չի եղել օսմաներենով, մանավանդ, որ հեղինակը բավական հմուտ է եղել թուրքերենին և տիրապետել արաբերենին: Օսմաներենը եղել է լոկ պալատական շրջանակին հասու: Իսկ հայատառ թուրքերենը, նույնիսկ վերաբարձ օսմանիզմով հագեցած գիրքը կարող էր ծառայել ոչ միայն կրթյալ հայերին, նաև զարգացած թուրքերին, բուլղարներին, ալբաններին և մյուս ժողովուրդների մտավորականներին, որոնց անպայման կհետաքրքրեր այս հրատարակությունը: Հովսեփ Վարդանյանն այն հեղինակներից էր, որի ստեղծագործությունները, թարգմանությունները և թերթը՝ «Սէճմաայը Հավատիս»-ը կարողում էին թուրքերը, Օսմանյան կայսրության հպատակ ժողովուրդները՝ սովորելով հայերեն տառերը ²⁴⁶:

Հովսեփ Վարդանյանի գրչին է պատկանում պատմագիտական մի այլ կարևոր աշխատություն ևս: Սա երկհատոր «Արևելյան պատերազմների պատմություն» ուսումնասիրությունն է ²⁴⁷: Այն Գրիմի պատերազմի պատմության մի հատվածն է ներկայացնում: 650 էջերում նկարագրվում են 1877 թվականի հունիսի 15-ից դեկտեմբերի 30-ը Անատոլիական և Ռումելիի ճակատիների կռիվները: Գիրքը գրված է ճիշտ «Նապոլեոն Բոնապարտի պատմության» ոճով: Ցավոք սրտի շարադրանքն անավարտ է մնացել հեղինակի վաղահաս մահվան պատճառով՝ 1879 թվականի մարտի 28-ին:

1858 թ. Կ.Պոլսում լույս է ընծայվել Օսմանյան սուլթանների համառոտ ժամանակագրությունը «Թարիխ-ի Միլիթեսար Փատիշահուն Ալիշանը Ալի Օսման» վերնագրով ²⁴⁸:

Հայերեն և հայատառ թուրքերեն ձեռագրերը պարունակում են Օսմանյան կայսրության տարբեր շրջանների, տարբեր սուլթանների պատմության համառոտ և ընդարձակ շարադրանքներ: Դրանք իրենցից մեծ հետաքրքրություն են ներկայացնում և կարոտ են քննական հրատարակության հայերեն և թուրքերեն լեզուներով:

Հայատառ թուրքերեն պատմական չորս չափածո ձոն է հրատարակել պոլսահայ հայտնի բանասեր Գ.Բամպուրճյանը: Դրանք նվիրված են Սուլթան Մահմուդ Բ-ին,

246 Metin And. Tanzimat...s. 36

247 Տպագրվել է Կ.Պոլսում 1878-1879 թվականներին:

248 20 էջից բաղկացած այս գիրքը մեզ ծանոթ է միայն գրացուցակներից:

որը հայտնի է եղել իր քրիստոնյանպաստ քաղաքականությամբ²⁴⁹: Պատմական արժեք ներկայացնող այս հրատարակությունը գիտական լուրջ ներածականով է ներկայացվել թուրքական գիտական ամսագրում, իսկ տեքստը՝ վերածված է լատինատառ թուրքերենի:

1859 թվականին Կ.Պոլսում հրատարակվել է ֆրանսերենից թարգմանված **Նասիֆ Մալուֆի** «31 սուլթանների համառոտ պատմությունը» աշխատանքը: Թարգմանիչն է **Պասկալ Թոթապյանը**՝ ֆրանսերենի և օսմաներենի ուսուցիչ: Սա կայսրության առաջին սուլթան **Օսմանից** (1256թ.) սկսած՝ 31 սուլթանների մասին է, յուրաքանչյուրի մասին առանձին, առանձին²⁵⁰:

Հետաքրքրություն է ներկայացնում 1862թ. Էջմիածնում տպագրված «Ֆիհրի'սֆի քիթապ. Պատմություն Հայկից մինչև 1780. **Ղուկասի Էրզրումցու** կաթողիկոսութեանը» գիրքը:

Գառնիկ Ստեփանյանի վկայությամբ 1864 թ. Կ.Պոլսում հրատարակվել է «Պատմություն Հայոց» գիրքը, որն ամենայն հավանականությամբ Միքայել Չամչյանի մի քանի վերահրատարակություններից մեկն է՝ նախատեսված դպրոցական ուսուցման համար թուրքերեն լեզվով: Համաձայն նույն աղբյուրի, 1872 թ. Կ.Պոլսում տպագրված «Հիշատակ կամ ընթերցումներ. Կարևոր և համառոտ հայկական պատմություններ» գիրքը ևս հայկական դպրոցների համար նախատեսված հրատարակություններից է մեկն է եղել: Հայատառ թուրքերենով պատմական արժեք ներկայացնող մի անչափ հետաքրքիր «նամակ» է պահպանվում Հայաստանի Ազգային Ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտում: Խոսքը վերաբերում է Փարիզում Թուրքիայի դեսպան **Ֆազլ Մուստաֆա Փաշայի** նամակին՝ ուղղված սուլթան Աբդուլ Ազիզին: Նամակը Օսմանյան կայսրությունում սահմանադրական կարգեր հաստատելու անհրաժեշտության մասին է: Տպագրվել է Կ.Պոլսում, հայատառ թուրքերենի է վերածվել օսմաներենից և 18 էջից է բաղկացած: Տիտղոսաթերթին մատենագիտությանն անհրաժեշտ այլ տեղեկություններ չենք գտնում²⁵¹:

Որոշ հրատարակությունների մասին մեր աղբյուրները սահմանափակվում են տարբեր գրավաճառանոցների հրատարակած ցուցակներով: Այդպիսի սուղ տեղեկություն ունենք բուլղար հեղափոխական Չաքարիա Ստոյանովի մասին «Թեմսալը վաթանբերվերի» (Հայրենասիրության օրինակ) գրքի մասին: Հրատարակվել է Կ.Պոլսի «Ճեքիտի Շարգիյե» տպարանում, 1909 թվականին և 70 էջից է բաղկացած: Թարգմանիչն է **Հակոբ Վարժապետյանը**:

1879թ. Կ.Պոլսում «Ռոբերտ» կոլեջի օսմաներենի ուսուցիչ **Գալուստ Թիրաքյանի** կողմից արաբերենից թարգմանվել, հայատառ թուրքերեն և օսմաներենով՝ էջ առ էջ, հրատարակվել է **Մյունեջջիմ Բաշիի** «Համառոտ Հայոց պատմությունը» (64 էջ):

249 Kevork Pamukciyan. İkinci Sultan Mahmud'a dair Ermeni Harflı Türkçe Dört Manzum Methiye. Belleten, çilt LIV, s.211, Ankara, 1991, s.1053-1073.

250 Գիրքը գտնվում է Փարիզի Նուպարյան մատենադարանում:

251 Բարիգոտ իբամէք իչին պուլունան տէվլէթլու Ֆազլ Մուստաֆա Փաշա թարաֆընտան թագոիմ օլունան հագրէթի շահանէյէ արիգանըն թերճիմէսի: ՀՀ ԱԱ Արևելագիտության ինստիտուտի գրադարան:

Ամենայն հավանականությամբ սա հեղինակի «Տիեզերական պատմության» Հայաստանին և հայերին վերաբերող հատվածն է: Հայատառ թուրքերենով հրատարակվել է նաև հայաբնակ տարբեր գավառների սոցիալ-քաղաքական իրավիճակի մասին հրապարակախոսական գրականություն: Նրանցում տեղի ունեցող տեղաշարժերի և կարևոր իրադարձությունների մասին պատմող գրքերն իրենցից ներկայացնում են այս կամ այն վայրի մասին յուրատեսակ պատմական ակնարկ, որոնց հետաքրքրությունն անժխտելի է:

1870-ին լույս է ընծայվել ոմն Մ.Է-ի «Բարձրագոյն տերութեան այժմու եւ ապագային զօրութիւնը» (Կ. Պոլիս, 16 էջ): 1872թ. Կ. Պոլսում լույս է տեսել «Պոլսի գրավումը և Մահմուդ փաշայի դէպքը» 40 էջից բաղկացած գիրքը, որի թարգմանիչն ու տպագրիչն է ոմն Գ.Ս.: Հեղինակի անունն անհայտ է:

1897 թ. Կ. Պոլսում հրատարակվել է **Ավետիս Իրֆանի** «Օսմանյան պետության և հունաց պատերազմի պատկերագրող պատմությունը» (30 էջ), որին ծանոթ չենք:

1885 թվականին Պլովդիվում հրատարակվել է **Տաճատ Լուսֆիյանի** «Արևելյան Ռումելիան և հայերը» գրքույկը:

Բուն Օսմանյան կայսրության պատմությանը վերաբերող գրքերի թիվը հայատառ թուրքերենով շատ չէ: Դրա փոխարեն հայատառ թուրքերեն պարբերական մամուլը բավականին հարուստ է այս թեմայով լրագրողական-պատմական համառոտ և ընդարձակ հրատարակություններով:

Հայ գիտնականները տիրապետելով տարբեր լեզուների, հրաշալի իմանալով գիտական անհրաժեշտ՝ արևելյան ու եվրոպական աղբյուրները՝ հայերենով ու եվրոպական լեզուներով ստեղծել են, նաև՝ թարգմանել պատմագրական գործեր, որոնք իրենցից մեծ ավանդ են ներկայացնում թուրքագիտության ասպարեզում²⁵²:

Գ. Բամպուքճյանը 1991 թ. «Շողակաթ» պատմա-բանասիրական մատենաշարի 3-րդ համարում տպագրել է նաև նույն Երեմիա Չելեպի Քյոմուրճյանի «Պատմութիւն Հրակիզման Կոստանդնուպոլսոյ» աղբյուրագիտական արժեքավոր գործը (184 էջ):

Թուրքագիտության ասպարեզում, ինչպես նաև հայազգի գիտնականների թողած այլալեզու ժառանգության մեջ իրենց նշանակալի տեղն են զբաղեցնում հայր և որ-

252 Ահա մի քանի օրինակ.՝ 17-րդ դարի պոլսահայ հայտնի պատմաբան Երեմիա Չելեպի Քյոմուրճյանը, որը Կ Պոլսում իտալացի դիվանագետ Լյուդովիկո Ֆերդինանդո Մարսիլի (1658-1730) խնդրանքով 1791թ. կազմել է Հայաստանի քարտեզը (տես՝ Գաբիելլա Ուլոիտոյան, Երեմիա Չելեպի Քեոմուրճյանի նորահայտ քարտեզը, ՀՀ ԱԱ «Պատմաբանասիրական հանդես», 1997, N 2 (146, էջ 185-188) հայատառ թուրքերեն է թարգմանել «Աղեքսանդրի պատմութիւնը», միջնադարյան ասպետական «Պատմութիւն Փարեզու եւ Վենայի» սիրավեպը, հեղինակն է «Ստամպուլայ պատմութիւն»-ը չափածո տեղագրական եռահատոր աշխատության: Վ.Թորգոմյանի հմտալից ծանոթագրությամբ այն հրատարակվել է Վիեննայում 1913, 1932 և 1938 թվականներին: Վերջինիս Հրանտ Տեր Անդրեասյանի կողմից ծանոթագրված և վերանայված թուրքերեն 2-րդ տպագրությունը 1988 թվականին մանրամասն նոթագրումներով խմբագրվել ու կրկին հրատարակվել է Ստամբուլում բանասեր Գ.Բամպուքճյանի կողմից:

Երեմիա Չելեպի Քյոմուրճյանը հեղինակն է « Համառոտ պատմութիւն ԹՃ (չորս հարյուր) տարւոյ Օսմանցոց թագաւ որացն» չափածո երկի, որն Օսմանյան կայսրության պատմության մասին առաջին հայերեն գործն է: Սա Երևանի մատենադարանի 1876 ձեռագիրն է, որի գիտական հրատարակությունը պարտական ենք թուրքագետ-աղբյուրագետ Ժողեֆ Ավետիսյանին (Երեմիա Քեոմիւրճեանի «Համառոտ պատմութիւն ԹՃ տարւոյ Օսմանցոց թագաւ որացն». Երևան, 1982թ.):

դի Դ՝Օհսոնների, Գաբրիել Այվազովսկու պատմագրական ֆրանսերեն և գրաբար աշխատությունները, որոնց հեղինակների մասին հարկ ենք համարում առանձնակի նշել²⁵³:



253 **Մուրաջա Դ՝ Օհսընը** (Իզնատիոս Թոսունյան) (1740-1807) պոլսահայ ֆրանսիագիր պատմաբան, դիվանագետ: Եղել է շվեդական դեսպանը ԿՊոլսում: Բազմաթիվ արևելյան և եվրոպական աղբյուրների հիման վրա գրել է «Ընդհանուր պատկեր Օսմանյան կայսրության» եռահատոր մեծարժեք ուսումնասիրությունը, որը լույս է տեսել Փարիզում (1787, 1790, 1820թթ): Վերջին երրորդ հատորը հետմահու հրատարակվել է որդու՝ Կոստանդինի ջանքերով: Աշխատանքը պարունակում եզակի արժեք ներկայացնող 137 փորագրանկարներ (լիտոգրաֆիա): 1804թ. Փարիզում լույս է ընծայվել «Տիեզերական պատմություն» ըստ մահմեդական աղբյուրների Ա մասը՝ «Պատմական պատկեր Արևելքի» վերնագրով:

Կոստանդին Դ՝ Օհսընը (1779-1851). ֆրանսիագիր պատմաբան, դիվանագետ: Ծնվել է Կ.Պոլսում, դավանանքով կաթոլիկ Մուրաջա Դ՝ Օհսընի ընտանիքում: Գիվանագիտական առաքելությամբ աշխատել է Բեռլինում, Մադրիդում, Փարիզում, Հազգայում: 1834թ. նշանակվել Շվեդիայի դեսպան Բեռլինում: Հեղինակ է մոնղոլների մասին բառահատոր ծավալուն աշխատության, որը կոչվում է «Պատմություն մոնղոլների Չինգիզ խանից Թիմուր բեյ կամ Թամերլան»: Տպագրվել է Լահեյում և Ամստերդամում՝ 1834-1835թթ և համարվում է մոնղոլների մասին ստեղծված ամենահավաստի ու ամենաընդարձակ գիտական ուսումնասիրությունը: Կոստանդին Դ՝ Օհսընը Փարիզում հրատարակել է հոր՝ «Օսմանյան պատմության» 3-րդ մասը և «Պատմական պատկեր Արևելքի» առաջին մասը: Ֆրանսերեն այս շքեղ և ծավալով հսկա աշխատություններին մանրամասնորեն ծանոթացել ենք Ժնևի հայ հայտնի ընտանիքներից մեկի՝ Մանուկ Կարապետյանի դստեր Արաքսի Կարապետյանի անձնական գրադարանում:

Գաբրիել Այվազովսկի (1812-1880) Բանասեր, պատմաբան: Ծնվել է Թեոդոսիայում: Ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկու եղբայրն է: Կրթությունը ստացել է Վենետիկի ս.Ղազար վանքում, ուր և շարունակել է՝ որպես արևելյան ու եվրոպական լեզուների ուսուցիչ: 1841թ. Վենետիկում հրատարակել է «Պատմություն օսմանեան պետութեան» եռահատոր գրաբար աշխատությունը: Գրաբարով հրատարակել է անանուն հեղինակի «Պատմություն Օսմանեան պետութեան վեգիրների» բնագիրը: Նրա ֆրանսերենով գրված աշխատություններն ունեցել են ընթերցողական լայն շրջանակ: 1855 թվականին գծովել է Սլսիթարյանների հետ և հրաժարվել կաթոլիկությունից: Թեոդոսիա վերադարձի տարիներին, որպես տեսուչ աշխատել է Խալիբյան վարժարանում, որի տպարանում հրատարակել է 1863 և 1864 թվականներին Գալֆայան Ամբրոսիոսի հայատառ թուրքերենով «Առձեռն բառագիրք ի տաճիկ լեզուէ ի հայ» (245էջ), «Ջրուցատրոսիս ի տաճիկ լեզուէ ի հայ» (191էջ) գրքերը: Գաբրիել Այվազովսկին պատմաբան, բառարանագիր Գալֆայան Ամբրոսիոսի (1826-1906) և բանասեր, մանկավարժ Սարգիս Թեոդորյանի (1788-1877) հետ միասին հրաժարվել են կաթոլիկությունից ու Փարիզում 1856 թ. հիմնել Հայկազյան վարժարանը: (Մանրամասն կենսագրությունները տես՝ Գառնիկ Ստեփանյան, Կենսագրական բառարան, Հ.Ա. Ե., 1973.)

Գլուխ Զ

Ուսումնական և գիտահանրամատչելի գրականություն

Կ.Պոլսի գրավումից հետո արևմտահայության կյանքում կատարված ամենակարևոր իրադարձությունը հանդիսացել էր Կ.Պոլսում հայկական պատրիարքական Աթոռի հաստատումը Մեհմեդ Ֆաթիհի սուլթանական հատուկ հրովարտակով 1461 թվականին: Այս փաստն ունեցել է ինչպես կրոնական, նույնքան և քաղաքական խոշոր նշանակություն: Հայ որոշ պատրիարքներ հնարավորություն են ունեցել հայրենասիրական գործունեություն ծավալել, որն աննախընթաց կարևորություն է ունեցել ու մեծ դեր խաղացել արևմտահայության ճակատագրում, նրա քաղաքական ու մշակութային կյանքում: Դրա շնորհիվ հայերը դարեր շարունակ ոչ միայն կարողացել են իրենց գոյությունը պաշտպանել, այլև մասնակցել երկրի կառավարման գործին: Չնայած քաղաքական հալածանքներին՝ նրանք նշանակալի դեր խաղացին երկրի սոցիալ-տնտեսական կյանքի զարգացման գործում: Միաժամանակ մեծ եղավ արևմտահայության ավանդյուն ինչպես ազգային, այնպես և օսմանյան մշակույթի զարգացման մեջ: Այն աննախընթաց զարգացում ապրեց ճարտարապետության, մանրանկարչության, գեղանկարչության ասպարեզներում: Թեև առաջին տպագիր հայ գիրքը լույս է տեսել 1512 թվականին՝ Վենետիկում՝ **Հակոբ Մեղապարտի**²⁵⁴ ջանքերի շնորհիվ, ապա 1567 թվականին արդեն հայ տպագիր գիրքը լույս աշխարհ է եկել Կ.Պոլսում:

Կ.Պոլսի պատրիարք **Հովհաննես Կոլոտ Բաղիշեցու** շնորհիվ հայկական գրահրատարակչությունը Կ.Պոլսում բուռն զարթոնք է ապրել: Այստեղ 18-րդ դարի վերջին տպագիր գրքերի թիվն արդեն անցել էր 300-ից: Գոյություն ունեին 10-ից ավելի հայկական տպարաններ, ուր աստվածաբանական գրքերի հետ միասին տպագրվում էին նաև բնագիտության, փիլիսոփայության, պատմությանը վերաբերող գրքեր, դասագրքեր, երգարաններ և այլն²⁵⁵:

254 1486 թվականին Մայնցում, դեռևս Գ-ուտենբերգի կողմից հիմնադրված տպարանում հրատարակվել է Բերնարդ ֆոն Բրայդենբախի «Ճանապարհորդություն դեպի ավետյաց եկիր» գիտական նկարագրող ուսումնասիրությունը («Peregrinatio in Terram Sanctam») : Այս գործն արդյունք էր Մայնցի տաճարի դեկան և գանձապահ Բերնարդ ֆոն Բրայդենբախի 1483-1484 թվականներին Երուսաղեմ կատարած ճանապարհորդության: Գրքում շարադրված են հայերի մասին եզակի հետաքրքրություն ներկայացնող նյութեր: Այստեղ տպագրված է փայտի վրա փորագրված մի աղյուսակ: Այն ներկայացնում է հայկական այբուբենը և տառերի անվանումները: Աղյուսակն արված է եղել պալատական նկարիչ Ռոյվիխի կողմից, որն ուղեկցել է Բերնարդ ֆոն Բրայդենբախին իր ճանապարհորդության ընթացքում: Այսպիսով առաջին տպագիր հայկական այբուբենը 515 տարեկան է: (Այս մասին տես՝ «Հայրենիքի ծայն» թերթի 1986 թ, հունվարի 22-ի համարում. Երևան):

255 1565 թվականին Աբգար Եվդոկացին (Թոխաթեցի) (° -1572) Վենետիկում Պիոս 4 -րդ Պապի և Վենետիկի Հիերոնիմ դոմի թույլտվությամբ իրավունք է ստացել հայերեն գրքեր տպագրել և 3 գիրք է հրատարակել: Հռոմի պապը փորձել է դավանաբանական բնույթի փոփոխություններ

17-18-րդ դարերը արևմտահայ իրականությունում հայտնի են նաև հայկական դպրոցների զարգացմամբ: Առաջին հայկական դպրոցները Կ.Պոլսում կազմակերպվել են դեռևս 17-րդ դարում, իսկ առաջին ամենօրյա դպրոց-ճեմարանը հիմնվել է Հովհաննես Կոլոտ պատրիարքի օրոք 1715 թվականին պատրիարք ընտրվելուց հետո: Նա իր 30 աշակերտներին բացի աստվածաբանությունից դասավանդում էր նաև իմաստասիրություն, որը համարվում էր «արտաքին գիտություն»:

1741 թվականին, երբ պատրիարք ընտրվեց Հակոբ Նալյանը, նա Սկյուտարից Գում-գավու թաղ փոխադրեց այս դպրատունը: Այստեղ դասավանդել են Կ.Պոլսի պատրիարքները, հայտնի հայ մտավորականներ, գիտնականներ: Մայր դպրատունը նաև գրական օջախ է հանդիսացել: 1734թ. այստեղ հրատարակվել է Հովհաննես Կոլոտ պատրիարքի յոթ աշակերտների 49 բանաստեղծություններն ընդգրկող մի ժողովածու: Կարևոր հանգամանք էր ուսման անվճար լինելը: Աստիճանաբար հիմնվում են ծխական դպրոցներ: Դպրոցների համար սկսվում են կառուցվել առանձին շենքեր: 17-18-րդ դարերում հայկական կրոնական դպրոցների, ճեմարանների հետ զուգահեռ սկսում են ստեղծվել առաջին աշխարհիկ դպրոցները, որոնք 1790 թվականից հետո անվանվում էին վարժարաններ՝

սկզբնականից մինչև բարձրագույն²⁵⁶:

Եթե մինչ աշխարհիկ դպրոցների երևան գալը Կ.Պոլսում հայերը սովորում էին 30 եկեղեցիներին կից դպրոցներում, ապա 1859 թվականին, պաշտոնական տվյալների համաձայն այնտեղ արդեն գոյություն ունեին 42 դպրոցներ, ուր սովորում էին 4376 տղաներ և 1155 աղջիկներ: Նրանց դասավանդում էին 192 ուսուցիչներ²⁵⁷: Հարկ է նշել, որ Օսմանյան կայսրության գավառներում (վիլայեթներում) հայկական դպրոցների թիվը 1834 թվականին հասել էր 114-ի²⁵⁸:

Այս դպրոցներին զուգահեռ, Մխիթարյան միաբանության հայրերն իրենց հերթին դպրոցներ էին հիմնադրում ոչ միայն Եվրոպայում²⁵⁹, այլև Թուրքիայում, Ռուսաստանում, Սերձավոր Արևելքի հայկական գաղթավայրերում, Հնդկաստանում, Բրազիլիայում: Հայկական դպրոցների գոյությունը պայմանավորված էր ժողովրդի նյութական գոհողություններով, համայնքների, միությունների, հայտնի բարերարների շնորհիվ,

կատարելով նրա տպագրած գրքերում՝ օգտագործել տպագրիչին ու նրա գործը կաթողիկոսյան տարածման համար: Արգար Եվդոկացին հարկադրված փոխադրել է իր տպարանը Կ.Պոլսի, ուր և երեք տարի զբաղվել գրահրատարակչությամբ և 6 գիրք տպագրել: 1677-1678 թվականներին երկու գիրք է տպել Երեմիա Չելեպի Էյոնուրճյանը:

256 Աշխարհիկ դպրոցներ հայ իրականությունում գոյություն են ունեցել դեռևս 5-րդ դարում: 1789թ. Սելիմ 3-րդի օրոք թրքահպատակ հայերին թույլատրվեց պաշտոնապես ունենալ աշխարհիկ դպրոցներ:

257 Ընդարձակ տարեցոյց Սուրբ Փրկիչ Ազգ. Հիանդանոցի 1901թ. էջ 248-249: Կ.Պոլսի:

258 Ալպոյաճեան Արշակ, Պատմութիւն հայ Կեսարիոյ: Ի.Ա. Կահիրե, 1937, էջ 1096.

259 Վենետիկի սուրբ Ղազար կղզու հայտնի դպրոցը, որը նրանց հովանավորների անուններն է կրում՝ Մուրադ-Ռաֆայելյան, հիմնադրվել է 1732 թվականին: Մխիթարյանները դպրոցներ են հիմնադրել Պաղոսայում (1833թ.), Վենետիկում (1836թ.), Փարիզում (1846թ.): Դպրոցներ են հիմնվել Կենտրոնական Եվրոպայի հայկական գաղթավայրերում՝ Լեհաստանում (16-րդ դարի երկրորդ կեսին), Հունգարիայում, Ռումինիայում և այլուր: Մեզ հայտնի է այդ դպրոցների համար՝ 1887 թվականին տպագրված, ս.Ղազարում լույս տեսած «Այբբենարան Նոր Գրանսիլիուանիոյ տղայոց համար» դասագիրքը:

որոնց անուններով էլ հաճախ կոչվել են այդ հաստատությունները: Այս դպրոցների նորմալ աշխատանքի համար անհրաժեշտ են եղել դասագրքեր: Հայերեն լեզվով դասագրքերի կողքին, ստեղծվել են հայաստան թուրքերենով տարբեր առարկաներին վերաբերող դպրոցական ձեռնարկներ՝ թրքախոս երեխաների կրթությունն ապահովելու համար, նրանց հայ քրիստոնեական դավանանքին մերձեցնելու և հայ մշակույթը ճանաչել տալու նպատակով:

Հայաստան թուրքերեն առաջին տպագիր գիրքը՝ «Գուռն քերականութեան աշխարհաբառ լեզուին Հայոց, շարադրեցեալ տաճկականա լեզուա» դասագիրքն է՝ Մխիթարյան միաբանության հիմնադիր Մխիթար Մեբաստացու հեղինակած գործը, որը տպագրվել է 1727թ. Վենետիկում, **Անտոնիո Բորտոլի** տպարանում²⁶⁰: Մխիթար Մեբաստացու «Քերականութիւնը» սկիզբ դրեց հայերեն աշխարհաբարի ուսուցմանը, ձգտելով այն մաքրել օտար բառերից ու խեղաթյուրումներից²⁶¹: Հետագայում, 1774 թվականին հրատարակվել է հայերենի քերականություն երեք լեզուներով՝ իտալերեն, հայերեն, թուրքերեն (հայաստան թուրքերեն): Հեղինակը Վենետիկի մխիթարյան հայրերից **Աբանաս Մերասյանն** է, Ռոբերտ Բելլարմինի «Համառօտ քրիստոնեական վարդապետութեան» հայերեն և հայաստան թուրքերեն հրատարակությունների թարգմանիչը:

Աբանաս Մերասյանի «Համառօտ քերականութիւն արարեալ իտալական, հայկական եւ տաճկական լեզուա» դասագիրքը տպագրվել է Վենետիկի **Դեմետրիոս Թեոդորուի (Թեոդոսյանցի)** տպարանում :

Հրատարակվել են այբբենարաններ՝ թուրքերեն-հայերեն բառարաններով հանդերձ: Բացի հայերեն լեզվի դասագրքերից, քերականություններից, Մխիթարյան հայրերը հեղինակել են, հայաստան թուրքերենով հրատարակել այլ լեզուների քերականություններ: Այսպես օրինակ, **Գաբրիել Ավետիքյանը** (1750-1827) գրել է «Քերականութիւն թօսքանեան լեզուի»-ն՝ հայերեն գրաբար և տաճկերեն բացատրությամբ: 488 էջեր կազմող այս քերականությունը տպագրվել է 1792 թվականին Վենետիկում, Անտոնիո Բորտոլիի տպարանում: Թուրքերեն (հայաստան թուրքերեն) -հայերեն չափածո բառարան է իրե-

260 Անտոնիո Բորտոլիի տպարանի անունը կապված է Վենետիկում հայկական գրահրատարակչության գործի հետ՝ 1696 թվականից մինչև 18-րդ դարի վերջը, մասնավորապես մինչև Ս.Ղազար կղզում Մխիթարյան միաբանության տպարանի հաստատումը 1788 թվականին: Մինչ այդ Մխիթարյան միաբանության հրատարակությունները տպագրվել են նաև Վենետիկի մի այլ տպարանում՝ Դեմետրիոս Թեոդորուի (Թեոդոսյանցի) տպարանում:

1623 թվականից մինչև 1890 թվականները 50 հայերեն գրքեր են հրատարակվել Հռոմում, Ուրբանյան տպարանում, որը հիմնադրվել էր դեռևս Ուրբան 8-րդ Պապի կողմից: Դրանք հիմնականում կրոնա-դավանաբանական հրատարակություններ են, լեզվաբանական, փիլիսոփայական երկեր և բառարաններ:

261 Մինչև Մխիթար Մեբաստացու «Քերականութիւնը» Իտալիայում հրատարակվել են հայերենի ուսուցման դասագրքեր: Տպագրվել են Այբբենարաններ՝ օտարազգիների համար: 1624 թ. Միլանում տպագրվել է Ֆրանչեսկո Ռիվոլիի (Francisco Rivolo) հայերեն լեզվի քերականությունը լատիներեն բացատրությամբ:

1645թ. կաթոլիկ քարոզիչ Կղեմեն Գալանոսը հրատարակել է իր հայերենի քերականությունը, որը որպես հայերեն լեզվի դասագիրք է ծառայել Հռոմի և Լեյբերգի Ուրբանյան ճեմարանների ուսանողների համար: Հայերեն լեզվի նկատմամբ նման հետաքրքրությունը բացատրվում է հայկական առևտրական կապերի զարգացմամբ, ինչպես նաև հայերի շրջանում կաթոլիկ եկեղեցու կողմից քարոզչական գործունեության ծավալման շահագրգռությամբ:

նից ներկայացնում 18-րդ դարի երկրորդ կեսի պոլսահայ կրթական գործիչ **Թորոսյան Պողոս Տիրիկեցու (Տիրիկեցի)** 1793թ. Նոր-Նախիջևանում տպագրված «Տետրակ համառոտ բառարանի»-ն: Հեղինակը Հակոբ Նալյան և Ջաքարիա Կաղզվանցի պատրիարքների, Պաղտասար Գալիի հետ միասին դասավանդել է Սկյուտարի Գալրատանը: Իր աշակերտների համար նախատեսված բառարանը, որի չափածո լինելու հանգամանքը պիտի դյուրացներ երկու լեզուների ուսուցումը՝ օգտակար է հանդիսացել թրքախոս մյուս գավառներում ևս օգտագործելու համար:

Մխիթար Սեբաստացու աշակերտների ջանքերով կազմվել է ֆրանսերենի (248 էջ) համառոտ քերականություն՝ հայատառ թուրքերեն թարգմանությամբ և տպագրվել է 1816 թվականին Վիեննայի Մխիթարյան տպարանում: 1843-1844 թթ. Վիեննայում հրատարակվել է միաբանության անդամ, հետագա տարիներին նաև՝ Վիեննայի արևելյան սկադեմիայի թուրքերենի դասախոս **Ղևոնդ Հովնանյանի** եռահատոր ֆրանսերենի քերականությունը ²⁶² :

Հայ իրականությունում մեծ դեր է հատկացվել բառարանագիտությանը: Նույն ավանդույթները շարունակվել են հայատառ թուրքերենի ընդգրկմամբ: Մեր կարծիքով հայատառ թուրքերենի օգտագործմամբ հրատարակվել են ավելի քան 50 բառարաններ և 10-ից ավել խոսակցական բառարաններ: Դրանցից մեծ մասը մինչև օրս էլ իր տեսակի մեջ եզակի է: Վենետիկյան, Վիեննայի և Տրիեստյան հրատարակություններն այս առումով համարվում են լավագույններն ու եզակիները: Ելնելով իրենց բովանդակությունից, նրանք իրականում շարունակել են Մխիթար Աբբայի շնորհակալ գործը, որի հիմնական նպատակն էր հայ ժողովրդի մոտ լուսավորության, կրթության տարածումը և դրանով իսկ իր ժողովրդին ծառայություն մատուցելը: Ինչպես դասագրքերում, այնպես էլ մխիթարյանների հրատարակած բառարաններում հայատառ թուրքերենը միշտ էլ օգտագործվել է հայերենին զուգահեռ: Նկատի էր առնվում այն հանգամանքը, որ մխիթարյանների աշակերտների թվում միշտ էլ նշանակալի թիվ են կազմել թրքախոս գավառներից եկածները: Բառարանների բազմալեզվյա լինելու հանգամանքն ավելի ընդարձակում էր ինտելեկտուալ, մտավոր կրթության հնարավորությունները: Այսպիսի մոտեցումը վկայում էր հայ դպրոցների և հայ լուսավորիչների հետաքրքրությունների լայն շրջանակի մասին: Բառարանների ու դասագրքերի այս հրաշալի, նույնիսկ՝ ճոխ հրատարակություններն իրավմամբ կարող են համարվել ֆունդամենտալ գործեր, քանզի մինչև օրս չեն կորցրել իրենց գիտական, կիրառական արժեքը և իրենցից պատմական ու լեզվաբանական մեծ հետաքրքրություն են ներկայացնում: Այս հրատարակությունները վկայում են նաև հայ գրահրատարակչության բարձր մակարդակի մասին: Այս առթիվ հարկ է նշել մի քանի բառարաններ՝

1. **Մանուել Չախջախյան** (1770-1835), «Բառարան յիտալական լեզուէ ի հայ եւ ի տաճիկ բարբառ»։ Վենետիկ, Ս.Ղազար, 1804, 896 էջ: Ունեցել է երկրորդ տպագրություն 1822 թվականին:

2. **Հարություն Ավգերյան** (1774-1854), «Բառգիրք գաղղիերէն: Գաղղիերէն-հայե-

262 Ղևոնդ Հովնանյանը (1817-1897) Վիեննայի մխիթարյանների տպարանի տնօրենն է եղել: Տիրապետել է հունարենին, անգլերենին, իտալերենին, ֆրանսերենին, գերմաներենին: Բազմաթիվ աշխատությունների, մասնավորապես բանասիրական ուսումնասիրությունների հեղինակ է:

րեն-տաճկերեն ընդարձակ բառգիրք» Երկու հատոր, Վենետիկ, 1811, 739 էջ²⁶³:

3. Հակոբ Պոզաճյան, «Համառոտ բառարան ի հայէ ի տաճիկ ի պէտս դպրոցաց» Երկու հատոր (530 և 1023 էջ): Վիեննա, Մխիթարյան տպ., 1838. Երկրորդ տպագրությունը՝ 1858թ.

4. **Փիլիպոս Ճամճյան** (1818-1853), «Նոր բառարան իտալերեն, գաղղիերեն, հայերեն եւ տաճկերեն լեզուաց»: Վիեննա, 1846թ. 1120 էջ և

5. Նույն հեղինակի «Գիրք խօսակցութեան գաղղիերեն, անգղիերեն, հայերեն, տաճկերեն, գերմաներեն, իտալերեն»: Վիեննա, 1848, մոտ 770 էջ:

Հայտնի են բանասեր, հայագետներ **Սուքիաս Սոմայանի** (1776-1846) եռահատոր եռալեզու (Վենետիկ, 1843թ. մոտ 940 էջ) և **Սրապիոն Էմինյանի** (1823-1854) քառալեզու բառարանները (1853թ, Վիեննա, 1359 էջ: Երկրորդ տպագրությունը՝ 1871թ):

1883 թ. Վիեննայում հրատարակվել է մի այլ եռալեզու՝ «Տաճկերեն-հայերեն-գաղղիերեն» բառագիրք՝ օսմանյան բարբառի համառոտ քերականությամբ հանդերձ: 956 էջանոց այս աշխատության հեղինակը **Ամբրոսիոս Քյուփեյանն** է:

Բառարանների, գրուցարանների (խոսակցական բառարանների), քերականությունների և այբբենարանների հրատարակությունները շարունակվել են հետագա տարիներին նաև Թուրքիայում, Փարիզում, Թեոդոսիայում, Երուսաղեմում, Բոստոնում, Բեյրութում, Սոֆիայում, Կահիրեյում, Այնթապում և այլուր²⁶⁴:

Այս հրատարակությունների թվում ամենահայտնի տպագրությունները կատարվել են Թուրքիայում: Պոլսահայ նշանավոր լուսավորական գործիչներ՝ խմբագիր, ուսուցիչ Միհրան Աբիկյանը (1855-1938), դրանց կազմողներից ամենահայտնին է և ամենաբեղունը:

Մյուս հայտնի հեղինակը **Պետրոս Չեքի Կարապետյանն** է (1873-1937), հայտնի օսմանիստ, լեզվաիզոգրաֆ, թուրքերենի ուսուցիչ: Նրա 1912 թվականին Կ.Պոլսում տպագրված «Մեծ բառարան օսմաներեն հայերեն»-ը պարունակում է 50 հազար բառ և արտահայտություններ: Միհրան Աբիկյանի և Պետրոս Չեքի Կարապետյանի հրատարակած բազմաթիվ դասագրքերը և բառարանները (հայաստան թուրքերենով և օսմաներենով) մեծ ավանդ են ունեցել թուրքերեն լեզվի զարգացման, նրա բառապաշարի հարստացման գործում: Պետրոս Չեքի կարապետյան

1897 թ. հրատարակվել է **Ահմետ Մուխթարի** «Ուսուլը թետրիսը լիսանը» («Հայերեն ուսանելու համար»), որի Ա-Ե մասերը հայաստան թուրքերենով են: Տպագրվել է Կ.Պոլսում **Ճիվեկեյանների** հայտնի տպարանում և 128 էջ է պարունակել: Միաժամանակ տպագրել է հայաստան թուրքերեն -հայերեն առձեռն 176 էջից բաղկացած բառարան: Ցավոք սրտի, ավելի շատ տվյալներ չունենք այս գրքերի մասին: Հեղինակը՝ Ահմետ Մուխթարը (1852-1907) եղել է Կ.Պոլսի Արքայական դպրոցի հայերենի ուսուցիչը: Կա-

263 Բանասեր, լեզվաբան, թարգմանիչ Հարություն Ավգերյանը Մխիթարյան միաբանության հայրերից էր: Նա է 1816թ. հյուրընկալել սուրբ Ղազարում Ջորջ Բայրոնին, եղել նրա հայերեն լեզվի ուսուցիչը: Միասին կազմել են անգլերեն-հայերեն քերականություն: Տիրապետել է 10-ից ավել հին ու նոր լեզուների: Հեղինակ է մի շարք բառարանների, պատմա-բանասիրական ուսումնասիրությունների, կատարել է թարգմանություններ:

264 Այս հրատարակությունների մասին մատենագիտական մանրամասները տես մեր կազմած հայաստան թուրքերեն գրքերի մատենագիտության մեջ:

րող ենք ենթադրել միայն, որ թուրքական նոր ձևավորվող տեխնիկական ուսումնական հաստատությունների համար քաղաքատնտեսության ու տնտեսագիտության վերաբերյալ գրքերը գերմաներենից հայատառ թուրքերենի թարգմանած Ահմեդ Մուխթարն այս դեպքերում նկատի է ունեցել նույն այդ ուսանողներին: Իր հայատառ թուրքերենի ձեռնարկով հնարավորություն է ընձեռնել օգտվել նույն այդ լեզվով գոյություն ունեցող գրքերից, ձեռնարկներից: Չարմանալի չպետք է համարել, որ այդ ժամանակ հայտնի օսմանիստներ Պետրոս Չեքի Կարապետյանի (17 աշխատությունների հեղինակ) ու Միհրան Աբիկյանի բազմաթիվ գրքերի ու դասագրքերի կողքին, ազգությամբ թուրք մասնագետի կողմից ևս հեղինակվել է հայատառ թուրքերենի դասագիրք: Ամենայն հավանականությամբ, բացի Արքայական դպրոցում դասավանդելուց, ինչ որ ժամանակ նաև տվյալ ուսումնական հաստատության դասախոսներից մեկը հանդիսացած Մուխթարը նախընտրել է թուրք ուսանողներին հայատառ թուրքերենը հրամցնելու՝ իր կարծիքով լավագույն տարբերակը: Սա բացատրվում է նաև այն հանգամանքով, որ մի շարք հաստատություններ բացառում էին հայագրի դասախոսների ու ուսանողների մասնակցությունը տվյալ կրթական օջախում: Այն հիմնականում վերաբերվել է ռազմական ու հարակից մասնագիտությունների ուսուցմանը:

Հայատառ թուրքերենով հրատարակված դասագրքերն ընդգրկել են դպրոցներում դասավանդվող ամենատարբեր առարկաները: Հայատառ թուրքերեն տպագիր գրականության սկզբնական շրջանում կարելի էր տարբերել ուսումնական գրականության երկու հիմնական ճյուղավորումներ՝ Կ.Պոլսի և Մխիթարյանների: Ինչպես փորձեցինք ցույց տալ, Մխիթարյաններն իրենց գիտական գործունեությանը զուգահեռ մեծ կարևորություն են տվել կրթության և լուսավորության խնդիրներին:

Մխիթարյանների ճեմարաններում հայագիտական առարկաներին զուգահեռ դասավանդվել է կաթոլիկ եկեղեցու և նրա գաղափարախոսների պատմությունը: Այս նպատակով Ս.Ղազարի, Վիեննայի միաբաններն իրենց տպարաններում հրատարակել են կրոնա-դավանաբանական գործերի մի ամբողջ շարք: Թարգմանել ու տպագրել են հին և ժամանակակից շրջանների կաթոլիկ քարոզիչների երկերը: Հրատարակվել են սրբերի վարքագրություններ, աղոթագրքեր, քարոզներ, խրատներ, ցուցումներ և այլն: Դպրոցական ձեռնարկներ ծառայած այս հրատարակություններին զուգահեռ նրանք տպագրել են նաև աշխարհագրությանը, թվաբանությանը, պատմությանը, լեզուներին և ուսումնական ասպարեզում անհրաժեշտ այլ առարկաներին վերաբերող գրքեր:

Գալով Կ.Պոլսում հրատարակված հայատառ թուրքերեն ուսումնական գրականությանը, իր սկզբնական շրջանում այն պայմանավորված է եղել Հովհաննես Կոլոտ պատրիարքի՝ պատրիարքարանին կից ստեղծած Դպրատան գործունեությամբ, ուր դասավանդել են նաև պատրիարքները, սկզբում հենց ինքը՝ Հովհաննես Կոլոտ Բաղիշեցին: Դպրատան հիմնադրի ապրած տարիներին հրատարակվել են ավելի քան 80 անուն գրքեր, որն ապացույց է Հովհաննես Կոլոտ պատրիարքի լուսավորական ու կրթական լայն գործունեության, կաթոլիկության ներթափանցման դեմ նրա մղած պայքարի: Էությամբ լինելով չափազանց լուրջ դիվանագետ և ոչ ծայրահեղական քայլերի դիմող գործիչ, Հովհաննես Կոլոտը կաթոլիկության քարոզչության դեմ պայքարի հեռատես քայլ էր

համարում կաթոլիկ գաղափարախոսների երկերի թարգմանությունն ու տպագրությունը հայերեն և հայաստան թուրքերեն: Պետք է խոստովանել, որ այս հրատարակությունների գերակշռող մասը այնուամենայնիվ կատարվել է հայերեն լեզվով:

Հովհաննես Կոլոտն իր աշակերտների, ինչպես նաև արևմտահայ իրականության մեջ առաքելական դավանանքի հիմքերն ամրապնդելու համար, մտահորիզոնի զարգացման, ընդհանուր մակարդակը բարձրացնելու համար գտնում էր, որ բավարար չէ իմանալ միայն հայ եկեղեցու պատմությունն ու ծանոթ լինել նրա գաղափարախոսությանը, կարդալ միայն հայ եկեղեցու հայրերի գործերը: Պատրիարքի կարծիքով ժողովրդին լուսավորելու համար անհրաժեշտ էր, որ նա ծանոթանար նաև արևմտյան աստվածաբանների գաղափարախոսությանն ու փիլիսոփայությանը: Միայն բազմակողմանի զարգացված լինելը կարող էր ամրապնդել հայկական եկեղեցու դիրքերը: Տարբեր եկեղեցիների ու ուխտերի քարոզչության դեմ անհրաժեշտ էր պայքարել նրանց իսկ զենքով՝ նրանց իսկ ստեղծագործությունների թարգմանությամբ ու հրատարակությամբ: Այս առումով Հովհաննես Կոլոտնի և Մխիթար Սեբաստացու հայացքները համընկնում էին: Երկուսն էլ հայ ժողովրդի փրկությունը տեսնում էին նրան լուսավորելու և փոխադարձ հանդուրժողականության մեջ: Իզուր չէ, որ Հովհաննես Կոլոտնի գաղտնի ջանքերի շնորհիվ Մխիթար Սեբաստացին կարողացավ խույս տալ Օսմանյան կայսրության կառավարության ձեռնարկած հետապնդումներից և հաստատվել Իտալիայում ²⁶⁵:

Հովհաննես Կոլոտնի կողմից պատվիրված թարգմանական գործերի մեծ մասը կատարված են հիմնականում պոլսահայ թարգմանիչ **Ղուկաս վրդ. Խարբերդցու** ²⁶⁶ կողմից: Լատիներենից և իտալերենից թարգմանվել են հետևյալ հեղինակների գործերը՝ **Չակոմո Վորեջիո, Հովհան Սանդեմինո, Հերոնիմ Լաուրետտո Չեքվարիեսիո, Ալեքսանդր Կալամատտո, Սկոթոս, Թովմա Ակվինացի, Պողոս Սենիերի, Թեոդորոս Չեննարիո դը Վելիո, Հելիկոս Թեոդոնացի, Աբանաս Ալեքսանդրիացի, Ալոպիդա, Գուլիելմոս և Լեոնարդո Պեպինիներ, Կուռնելիոս Կուռնելիա, Մարիանոս Մոռոնիե, Յակով Մարկանտիոս, Անտոնիոս Կովտին, Կյուրեղ Ալեքսանդրիացի** և այլն: Արժանահիշատակ փաստ է, որ թարգմանական աշխատանքներում ներգրավված են եղել ոչ միայն Դպրատան ուսուցիչները, այլև աշակերտները: Այս հանգամանքը ծառայելու էր կրթյալ եկեղեցականներ պատրաստելու դժվարին գործին: Հովհաննես Կոլոտն Պատրիարքի սկսած գործը հաջողությամբ շարունակվեց հետագա տարիներին նրա աշակերտների՝ հայ եկեղեցու, մշակույթի, գիտության ու հասարակական գործիչների կողմից:

Հայ իրականության մեջ կաթոլիկության ներթափանցման դեմ պայքարի հաջող գրա-

265 Մխիթար Սեբաստացին Վենետիկում հաստատվելուց հետո էլ չի կարողացել խզել իր կապերը պոլսահայ իրականության հետ: Մասամբ նրա և նրան ուղղված բազմաթիվ նամակների շնորհիվ է, որ հնարավոր է դարձել ուսումնասիրելու այդ դարաշրջանի արևմտահայ իրականության, հայ եկեղեցու հետ կապված բազմաթիվ դեպքեր, իրադարձությունների մանրամասներ: Հովհաննես Կոլոտն և Հակոբ Նալյան պատրիարքներին նվիրված պոլսահայ բանասեր Գևորգ Բամպուքճյանի հրատարակած ուսումնասիրություններում տեղ գտած աղբյուրների որոշակի մասը այս կապերն արտացոլող նյութերն են հանդիսանում:

266 Աբրահամյան կամ Գասպարյան Ղուկաս վարդապետ Խարբերդցի (-1723): Կրթություն է ստացել Հռոմի Հավատքի տարածման վարժարանում, ուր տիրապետել է լատիներենին, իտալերենին և այլ լեզուների:

վական կարող էր հանդիսանալ ոչ միայն աստվածաբանության հիմնարար ուսումնասիրությունը, այլև օտար լեզուների իմացությունը, հռետորական արվեստին տիրապետելը, պատմության, ազգագրության ծանոթ լինելը և այլ գիտություններից գաղափար ունենալը: Այս ամենը լավ հիմքերի վրա էր դրված Մայր դպրատանը և այս ուսուցման սկզբունքները ոչ միայն մեծ ընդունելության ու հավանության էին արժանանում, այլև հետևորդներ ունենում Կ.Պոլսում աշխարհիկ դպրոցների կազմակերպման ժամանակ:

Հովհաննես Կոլտին պատրիարքական Աթոռի վրա հաջորդեց և նրա գաղափարների շարունակողը դարձավ Հակոբ Նալյանը: Կոլտի գաղափարների ու գործի ժառանգորդներից էր Պաղտասար Դպիրը²⁶⁷: Նրանց ստեղծագործությունների մի մասը նախատեսված էր նաև դպրոցական ուսուցման որոշակի շրջանի համար: Քանի որ կաթոլիկական քարոզչական գրականությունը, մասնավորապես Տրիեստի և Վիեննայի մխիթարյանների կողմից հրատարակվում էր հայատառ թուրքերենով, ապա նույն այս ընթերցողական շրջանակներին հակառակն անհրաժեշտ էր ապացուցել իրենց իմացած լեզվով՝ նույն հայատառ թուրքերենով: Այսպիսի տրամաբանությամբ առաջնորդվելով և այս նպատակը հետապնդելով են իրենց պատմական-կրոնադավանաբանական աշխատությունները հայատառ թուրքերենով շարադրել Հակոբ Նալյանը, Պաղտասար Դպիրը, հայ իրականությունում կաթոլիկական ներթափանցման մյուս ոխերիմ հակառակորդներ Գևորգ Մխլալիմը, Սրմաքեշ Կեսարյան-Կարճիկը, Պողոս Ադրիանուպոլսեցին և ուրիշներ: Նրանց գործերը բազմաթիվ հրատարակություններ են ունեցել Կ.Պոլսում, Երուսաղեմում: Բոլոր այս երկերը տարիներ շարունակ ծառայել են նաև որպես դասագրքեր՝ հայ հոգևոր ճեմարաններում ու աշխարհիկ դպրոցներում: Նյութը դյուրամարս դարձնելու համար անգամ չափածո ձևեր են ընտրել որոշ դասագրքերի ու բառագրքերի համար, ինչպես՝ Պաղտասար Դպիրի և Թորոսյան Պողոս Տյուրիկեցու հեղինակած բառարանների դեպքում:

Բնականաբար մեծ թիվ են կազմել կրոնի դասագրքերը: Ուսումնական նպատակների են ծառայել 1800 թվականից ի վեր Կ.Պոլսում բազմաթիվ անգամ լույս տեսած «Սաղմոս Դաթի մարգարեի» մոտ 400 էջեր պարունակող հրատարակությունները: Սովորաբար դրանք տպագրվել են երկլեզվյա՝ հայերեն և հայատառ թուրքերեն:

Դասագրքերի հրատարակությունների բազմաթիվ հեղինակներ դպրոցների ուսուցիչներ են եղել: Լույս են տեսել աշխարհագրությանը նվիրված հարցերի ու պատասխանների միջոցով կազմված հետաքրքրաշարժ դասագրքեր: Դրանք հիմնականում ֆիզիկական աշխարհագրությանը վերաբերող գունավոր քարտեզներ են՝ Ասիայի, Աֆրիկայի, Եվրոպայի, Ամերիկայի մասին հարց ու պատասխաններով: Դպրոցականների համար համառոտ աշխարհագրության ուսումնական ձեռնարկներ են ստեղծվել տարիքային տարբեր խմբերի համար, ինչպես նաև՝ տարրական աշխարհագրության նկարագրող ձեռնարկներ երեխաների համար: Բազմաթիվ և ամենամյա տպագրություններ են ունեցել թարգմանությունների համար ձեռնարկները, զվարճալի այբբենարանները, կիրակնօրյա դպրոցների դասագրքերը, ընդունելության քննությունների ծրագրերն ու

267 Հակոբ Նալյանի և Պաղտասար Դպիրի, նրանց ստեղծագործությունների մասին տես ուսումնասիրության առաջին գլխում:

հարցաթերթիկները և այլն: Աշակերտների ընդհանուր զարգացման համար եվրոպականի նմանողությամբ հրատարակվել են տարբեր լեզվով նամականիներ: Հայերեն, հայաստան թուրքերեն, օսմաներեն նամականիները նախատեսված են եղել կյանքի տարբեր իրավիճակների համար հարուստ ընտրություն ապահովող նամակներով, որոնք երբեմն 280 էջ են ներկայացրել: Հրատարակվել են ընթերցանության դասագրքեր: Դավերաբերվել է ոչ միայն հայկական պատմության ու գրականության ծաղկաքաղերին, այլև արևելյան՝ մասնավորապես թուրքական (օսմանյան)²⁶⁸ և եվրոպական, քանզի դրանք մաս են կազմել հայկական վարժարանների դպրոցական ծրագրերի: Կազմվել են այս նպատակին ծառայող հատընտիր պատմությունների ժողովածուներ²⁶⁹, շարադրությունների ձեռնարկներ տարբեր դասարանների աշակերտների համար: Էթիկական կրթությանն օժանդակելու համար հրատարակվել են քաղաքավարության և բանակցությունների կանոններ: Բազմաթիվ անգամ հրատարակվել են և ամեն տարի նորոգվել կիրակնօրյա դպրոցների համար նախատեսված դասագրքերը: Դրանք հիմնականում նույն վերնագիրն են ունեցել, օրինակ՝ «Կիրակնօրյա դպրոցի դասեր 1870 թվականի համար»: Տպագրվել են որպես կանոն՝ մեկ տարի առաջ, հաջորդ տարվա համար: Նույն կիրակնօրյա դպրոցների համար հրատարակվել են նաև հատուկ կիրակնօրյա դպրոցների ուսուցիչներին օգնող ձեռնարկներ, դասագրքեր: Օգտագործելով հանդերձ նախկին հրատարակությունները, բնականաբար հրատարակվել են կրոնի նոր դասագրքեր, քրիստոնեական հրահանգներ դպրոցականների համար: Դպրոցական կյանքը հաջողությամբ իր արտահայտությունն է գտել ժամանակի մամուլում: Կարապետ Փանոսյանն իր Ազապյան աղջկանց երկրորդական վարժարանում (1869-1875) ազատական ոգով տարվող կրթությունը, որ հեղաշրջող նշանակություն է ունեցել իր ժամանակին, դարձրել էր իր խմբագրած պարբերականների ամենօրյա քննարկման նյութերից մեկը:

Օսմանյան կայսրությունում դպրոցական գործի զարգացումը 19-րդ դարի կեսերից սերտորեն կապվում է նաև քրիստոնյա ժողովուրդների շրջանում միսիոներական ուխտերի գործունեության հետ: Հայ իրականությունում միսիոներական ուխտերի գործունեության մասին հարուստ նյութեր են պարունակում ժամանակի հայերեն և հայաստան թուրքերեն մամուլը, հայաբնակ տարբեր գավառների պատմությանն ու կյանքին, այդ վայրերում հայերի ճակատագրին նվիրված գրքերը, հայրենակցական միությունների հրատարակությունները: Վերջիններս հրատարակվել են Մեծ եղեռնին հաջորդած տասնամյակներում՝ աշխարհի տարբեր վայրերում հայերնակցական կազմակերպություն-

268 1900 թ. հրատարակվել է օսմանյան դասական գրականության խոշոր մասնագետ Ստեփան Կուրտիկյանի «Օսմանյան տաղաչափությունը» գիրքը: Ուսանավորները օսմաներեն են, իսկ հնչողությունը՝ հայաստան թուրքերեն, հայերեն բացատրությամբ: Արաբերեն և պարսկերեն մասերի հեղինակակից է Միրաբուն Նիքիաթը: Ստեփան Կուրտիկյանի օսմանյան գրականության ուսումնասիրմանը նվիրված դասագրքերն ու հետազոտությունները որոշակի տեղ են գրավում հայաստան թուրքերեն գրահրատարակչության մեջ, և ժամանակին մեծ հեղինակություն են ունեցել ու արժևորվել:

269 Մուալիմ Նաճի. Ծաղկունք օսմանեան մատենագիտութեան ի պէտս երկրորդական վարժարանաց: Թարգմանությունն իրականացրել է Պետրոս Չեքի Կարապետյանը (հայաստան թուրքերեն և արաբատան բառագիտությամբ): Պետրոս Չեքի Կարապետյանը հայաստան թուրքերեն է քարգմանել ու հատվածներ հրատարակել Ֆենելոնի «Տելեմաք»-ից 1894 թվականին, որը ևս ծառայել է վերոհիշյալ նպատակներին:

ների հիմնադրմանը հաջորդած շրջանում: Գրքերի հեղինակները հաճախ ամբողջական գլուխներ են նվիրում իրենց զավառներում, քաղաքներում կաթոլիկական և ավետարանական միսիոներների ներթափանցմանն ու հաստատմանը, նրանց գործունեությանն ու հայ բնակչության հետ ունեցած նրանց փոխհարաբերություններին:

Արևմտահայ իրականությունում բուռն գործունեություն են ծավալել տարբեր ուխտերի քարոզիչներ՝ ճիզվիտներ, կապուցիներ, դոմինիկյաններ, ֆրանցիսկյաններ, լազարիստներ, կարմելիտներ, ունիթորականներ և ավետարանական տարբեր կազմակերպություններ: Այս հարցերը ուսումնասիրության հատուկ նյութ են դարձել և լայնորեն լուսաբանվել Ս.Պետերբուրգի համալսարանից և Արևելագիտության ինստիտուտից սովետական շրջանի երկու ականավոր արևելագետ թուրքագետների՝ **Անատոլի Ժելտյակովի և Յուրի Պետրոսյանի** աշխատություններում:

Ճիզվիտները Օսմանյան կայսրություն են ներթափանցել ֆրանսիական հովանավորությամբ 1538 թվականին: Այս ուխտի գործունեությունն ուղղված էր կայսրությունում և նրա քրիստոնյա հպատակների շրջանում ֆրանսիական ազդեցության տարածմանը²⁷⁰:

Դեռևս **Լուի 13-ի** ժամանակ, Ֆրանսիայի վաճառականությունը զարգացնելու նպատակով, թագավորական հատուկ հրամանով քաջալերվում էր հայ վաճառականների գործունեությունը, թույլատրվում հայերի բնակությունը Ֆրանսիայում: 1630 թվականի հունիսի 26-ի հրամանով դյուրություններ տալով հայ վաճառականներին և ազատելով նրանց մաքսերից, կարդինալ Ռիշելիեն 1633 թվականին Փարիզում վերահրատարակել սովեց **Ֆրանչեսկո Ռիվոլիի** հայերեն-լատիներեն բառարանը, որի առաջին տպագրությունը եղել էր 1621թ. Միլանում: Եվ ահա՝ 1669 թ. Կ.Պոլսի Պերա թաղամասում Լյուդովիկոս 14-րդի հրամանով Ֆրանսիայի նախարարապետ **Ժան Բատիստ Կոլբերի** կողմից հիմնադրվեց «երիտասարդ լեզվաբանների կամ հայերի դպրոցը»՝ «Ecole des jeunes des langues ou Armeniens»²⁷¹: Դպրոցի տնօրինությունը հանձնված էր կապուցիյան ուխտի կրոնավորներին, իսկ հովանավորվում էր այն Կ.Պոլսի Ֆրանսիայի դեսպանի կողմից: Այս դպրոցի նպատակն էր թարգմանիչների պատրաստումը: Ֆրանսիացի աշակերտները սովորում էին թուրքերեն, արաբերեն և պարսկերեն լեզուներ, իսկ Արևելքի բնակիչ ուսանողները՝ ֆրանսերեն, հունարեն, իտալերեն, իսպաներեն, լատիներեն: Այս դպրոցում բացի լեզվական առարկաներից դասավանդվում էր պատմություն, աշխարհագրություն, բնագիտություն, բժշկություն, հանրահաշիվ, գծագրություն, երկրաչափություն: Այդ առարկաներին զուգահեռ սովորողները ծանոթանում էին իրավաբանության հիմունքներին, առևտրական հարաբերությունների օրենքներին, քանի որ թարգմանիչները ներկա

270 1583 թվականին Հռոմի պապը Կ.Պոլսում ֆրանսիական դեսպանի միջամտությամբ Պերա հարուստ թաղամասում հիմնում է ճիզվիտական «Սեն Բենուա» կոլեջը, որը գործում է մինչև օրս: Այս մասին տես՝ Ալպոյաճեան Արշակ. Պատմութիւն Եվրոկիոյ Հայոց. Կահիրե, 1952, էջ 850: 1625 թվականին Կ.Պոլսում ֆրանսիական ներկայացուցչության խորհրդական Ռիշելլե Ժոզեֆ դը Գրամբլեի ջանքերով կազմակերպվեց կապուցիյան ուխտի «Սեն-Լուի» կոլեջը: Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին կաթոլիկական տարբեր ուխտերին պատկանող դպրոցներում սովորում էին ավելի քան 100 հազար երեխաներ: Տես՝ Ա.Ճ. Желтяков, Ю.А. Петросян. История просвещения в Турции /конец XVIII- начало XX века/,.-М., 1965, р. 131-132.

271 Ալպոյաճեան Արշակ. Պատմութիւն հայ դպրոցին. Կահիրե, 1947, էջ 565:

էին գտնվում և մասնակցում դատավարություններին, անգամ կատարում փաստաբանի պարտականություններ: Կրթությունն այս դպրոցում՝ անվճար էր:

1700-1720 թվականներին նույնպիսի դպրոց է բացվում Փարիզում՝ «Գրան կոլեջին» կից²⁷²: Կոլեջ էին ընդունում հիմնականում հայերեին, որպեսզի քարգմանիչներ պատրաստեն և կամ նրանց օգտագործեն որպես միսիոներական քարոզիչներ²⁷³: Ոչ առանց այս դպրոցի օրինակին հետևելով՝ նման դպրոց հետագայում, 1855 թվականին բացվեց Փարիզում թուրքական կառավարության ջանքերով և անվանվեց «Օսմանյան դպրոց» (Mekteb-i Osmani), ուր սովորում էին 10 թուրքեր: 1864 թ. Կ.Պոլսում բացվեց առաջին լեզվական թեքմամբ դպրոցը՝ (Lisan Mekteb-i), ուր պատրաստում էին պետական քարգմանիչներ ֆրանսերեն, հունարեն և բուլղարերեն լեզուների գիտությամբ²⁷⁴:

Ֆրանսիական կառավարությունը ծայրահեղ ջանքեր էր գործադրում Թուրքիայում իր տնտեսական առավելությունների ապահովման համար: Միսիոներներից շատերը մինչ այստեղ հաստատվելը՝ ճանապարհորդում էին Արևելքում, ծանոթանում Օսմանյան կայսրության ժողովուրդների կյանքին, կենցաղին, սովորություններին²⁷⁵:

Ի տարբերություն հրեաների, քրիստոնեական ժողովուրդները մեծ պատրաստականություն էին ցուցաբերում նրանց հետևելու գործում: Միայն հրեաները բացահայտ թշնամաբար էին տրամադրված միսիոներների նկատմամբ և հրեական շրջանում միսիոներներական գործունեությունը անմնացորդ տապալում ապրեց:

1830 թվականի մայիսի 10-ին Կ.Պոլսում ստորագրվեց առաջին թուրք-ամերիկյան պայմանագիրը, որը կարևոր հանգրվան հանդիսացավ Օսմանյան կայսրությունում ամերիկյան զավթողական քաղաքականության աշխուժացման գործում²⁷⁶: Ինչպես արդեն նշվել է, ամերիկյան բողոքական «Բորտ» ներկայացուցչությունը (Board of Commisioners for Foreign) ներկայացնում էր կոնգրեգացիոնալ (միաբանական, Congregational), ռեֆորմատորական (Reformed) և պրեսբիտերական (երիցական, Presbyterian) եկեղեցիները:

Ամերիկյան միսիոներների գործունեությունը Օսմանյան կայսրությունում սկսվել է դեռևս 1820 թվականին, և արդեն մեկ տարի անց Չմյուռնիայում հիմնադրվում է կոլեջ²⁷⁷: Առաջին բողոքական եկեղեցին Ստամբուլում բացվել է 1836 թվականին: 1846 թվականին Ստամբուլում հայ մտավորական շրջանակների կողմից ստեղծվեց «Համագապին» միությունը: Նրա կազմում էին գտնվում արևմտահայ առաջադեմ հայտնի գործիչներ:

272 Նույն տեղում:

273 17-րդ դարի սկզբում Հռոմը և Ֆրանսիան կաթոլիկական միսիոներների պատրաստման ժամանակ մեծ ուշադրություն էին դարձնում հայերին: Հռոմի Ուրբանյան ճեմարանում սովորում էին հայեր, որոնց ուղարկում էին Լեհաստանի, Նախիջևանի, Թուրքիայի կաթոլիկական դպրոցներում աշխատելու: Այս մասին տես՝ Ալպոյաճեան Արշակ. Պատմութիւն հայ դպրոցին. Կահիրե, 1947, էջ 583-600:

274 А.Д. Желтяков, Ю.А. Петросян. История просвещения в Турции /конец XVIII- начало XX века/,.-М., 1965, с.29.

275 Ամերիկյան երկու միսիոներներ Օսմանյան կայսրության հայաբնակ զավթներով ճանապարհորդելուց հետո 1830 թ. հրատարակեցին իրենց տպավորությունները. Missionary Researches in Armenia. By Eli Smith and H. G.O. Dwight, London, 1834 . Նույնպիսի ոճով է գրված նաև անգլիական զինվորական սպայի տպագրած հուշերը On Horsebeck Trough Asia Minor. By Captain Fred Burnaby, London, 1877.)

276 Gordon L.I. American relations with Turkey. 1830-1930. Philadelphia, 1932, p.11.

277 Ալպոյաճեան Արշակ. Պատմութիւն հայ դպրոցին. Կահիրե, 1947, էջ 892:

Միութունն ուներ խիստ արտահայտված հակակաթոլիկական և հակամիսիոներական ուղղվածություն: Չնայած դրան, միութունն իր շարքերն էր ներգրավել կաթոլիկ հայ մտավորականների, հասարական գործիչների, որոնց համար համընդհանուր ազգային շահերը գերադասելի էին կրոնական դավանանքից:

«Համազգային» միության նպատակը պայքարն էր՝ ուղղված միսիոներների պառակտիչ քաղաքականության դեմ: Որոշ գավառներում, իչպես հայ, այնպես էլ օտար միսիոներներին մեծ դժվարությամբ էր հաջողվում հիմնավորվել: Միսիոներական պառակտիչ գործունեության դեմ ոտքի կանգնեց հայ մտավորականությունը, եկեղեցին, ժողովուրդը: Կ.Պոլսի **Մատթեոս պատրիարքը** հայ համայնքի անդամների հարկադրմամբ բանադրանքի ենթարկեց կաթոլիկ և բողոքական միսիոներներին և նրանց հարող հայերին: Նրանք մեղադրվեցին հայկական եկեղեցու և դպրոցի դեմ ոտնձգություն կատարելու համար: Բազմաթիվ գավառներում ժողովուրդը ոչ միայն չէր աջակցում, այլև ամեն կերպ խոչընդոտում էր քարոզիչների գործունեությանը, նրանց հիմնավորմանը: Երբեմն գործը հասնում էր ակնհայտ ընդհարումների:

Ջարմանալի չպետք է համարել այն երևույթը, որ թուրքական կառավարությունն ամեն կերպ աջակցում էր «Բորտ»-ի ներկայացուցչությանը և խրախուսում բողոքական քարոզիչներին: Պառակտում սերմանելով, թուրքական կառավարությունը դրանով իսկ գրկում էր հայ ժողովրդին միասնական ուժերով ազգային ազատագրական պայքարի դուրս գալու հնարավորությունից: Միսիոներների դեմ ուղղված պայքարը շեղում էր հայ ժողովրդի ուշադրությունը դեպի կրոնական խնդիրները: Միաժամանակ Բարձր Դուռը չէր ցանկանում հարաբերությունները սրել միսիոներներին հովանավորող պետությունների հետ, քանի որ ստիպված էր հաշվի նստել նրանց հետ: Կաթոլիկական և բողոքական միսիոներներին Բարձր Դուռն կողմից պաշտոնապես թույլատրված էր գործել հայերի շրջանում: Օգտվելով դրանից **Պիոս 9-րդ** Պապն անմիջապես կաթոլիկական թեմեր հաստատեց Անկարայում, Արդվինում, Բուրսայում և մյուս քաղաքներում²⁷⁸:

Միսիոներների նյութական ահռելի հնարավորությունները, հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական վատթարացող պայմանները, հետզհետե ավելացնում էին կաթոլիկությանը հարող հայերի թիվը: Միսիոներները մեծ եռանդով կրթական գործունեության անցան: Ինչպես նշում է «Պատմութիւն Արաբկիրի հայոց» գրքի հեղինակ **Անդրանիկ Փոլադյանը**, միսիոներների մոտ քարոզչական և կրթական գործունեությունը զուգահեռաբար էր ընթանում²⁷⁹ :

Միսիոներները հիմնադրում էին միջնակարգ և բարձրագույն դպրոցներ, գիշերօթիկներ, որբանոցներ, ծերանոցներ, հիվանդանոցներ, տպարաններ, մշակութային միություններ: Այս ամենը մեծապես խթանում էր լուսավորական շարժումը: Տարբեր գավառներում միսիոներական գործունեությունը տարբեր մակարդակի վրա էր գտնվում: Ուսումնական հաստատությունների թվում համընդհանուր ճանաչում էին գտել Կ.Պոլսում ամերիկյան միսիոներ **Սայրուս Համլինի** կողմից 1863 թվականին հիմնադրված «Ռոբերտ կոլեջը», Այնթապի Կենտրոնական Կոլեջը (1876թ), Խարբերդում բացված «Եփ-

278 Փոլադեան Ա., Պատմութիւն Արաբկիրի հայոց, Նյու-Յորք, 1969, էջ 515.

279 Անդ, էջ 515.

րատ կոլեջը» (1879թ), Չմյուռնիայի կոլեջը (1879), Թարսուսի կոլեջը (1887թ.), Մարզվանի «Անատոլիա» կոլեջը (1887) և այլն:

1896 թվականին Թուրքիայում գործում էին 176 ամերիկյան միսիոներներ: Գրանցից 56-ը ձեռնադրված հովիվներ էին, 68-ը ամուրի քարոզիչ-ուսուցիչներ: Նրանք ունեին տեղական 869 գործակալներ: Կար 19 հիմնական կայաններ²⁸⁰:

1862թ. բժիշկ **Ազարիա Սմիթի** կողմից հիմնադրված Այնթապի կիրակնօրյա դպրոցում դասավանդում էին 60 ուսուցիչներ: Աշակերտների թիվը 1268 էր: Աշակերտների տարիքը 16-ից մինչև 80 էր: Աղջիկների դպրոցը, որը հիմնադրվել էր 1852թ. օրիորդ **Շնայդերի** կողմից՝ 1859 թվականին արդեն վերածվել էր իգական բարձրագույն դպրոցի:

Այնթապի Ազգային Ներսեսյան Վարժարանի կամ այլ դպրոցի սրահներում բեմադրվում էին հայաստան թուրքերեն թարգմանված թատերախաղեր, ինչպես օրինակ՝ «Ալաֆրանկան», «Կիլիմեան», «Եսթեր Սուլթանը», «Հնդկացիների գաղտնիքը» (Ք.դը Մոնթեպեն): 1872 թ. ազգային հայկական զինանշաններով ու պատմական դեմքերի նկարներով զարդարված Ներսեսյան Վարժարանի 500 հոգիանոց դահլիճում հաջողությամբ բեմադրվում է **Հովհաննես Քյուրքճյանօֆի** (1824-1883) «Գինովության վնասները» հայաստան թուրքերենով գրված պիեսը, որին ներկա են գտնվել նաև թուրք պաշտոնյաներ: Ռուբինյան երիտասարդական միությունում 1872-73 թթ. շարունակվել են նույն պիեսի ներկայացումները: Այս միությանը Այնթապի հայությունը պարտական է ազգային ու կրթական կյանքի օրինակելի կազմակերպմամբ: Այնթապում թուրքերեն ներկայացումներ են բեմադրվել Կազինոյում, իսկ «Ժենեվը» 1925թվականին՝ «Անդրանիկ» թատերախմբի կողմից²⁸¹:

1860թ. ամերիկոտի Մայրա Պրակտերը կազմակերպել էր ամերիկյան բարձրագույն ուսումնական հաստատություն աղջիկների համար: Հետագայում Այնթապի այս բարձրագույն դպրոցի հաջորդողը դարձավ Հալեպում հիմնադրված ամերիկյան բարձրագույն դպրոցն աղջիկների համար²⁸²:

Պետք է խոստովանել, որ թրքախոս զավառներում հայկական դպրոցներ հաստատելու հետ միասին, միսիոներական դպրոցները նկատելի ավանդ են ունեցել հայերեն լեզվի տարածման և թրքախոս հայերին մայր լեզվին ճանաչել տալու գործում: Սի շատ կարևոր հանգամանք ևս: Այն է՝ սովորողներին չէր պարտադրվում բողոքական դառնալ: Ուստի և ավետարանականների այս դպրոցներում սովորում էին նաև առաքելական կրոն դավանող ընտանիքների երեխաները:

Բազմաթիվ շնորհալի շրջանավարտ հայեր ուղարկվում էին ամերիկյան և անգլիական համալսարաններ՝ բարձրագույն ուսում ստանալու համար: Հայ երիտասարդներից շատերն են կրթվել Էյլի, Մասաչուսեթսի, Էնդիովերի համալսարաններում, ամերիկյան աստվածաբանական կոլեջներում, Անգլիայի Սեյլի-Օք կոլեջում: Տարբեր միսիաների

280 1899 թ. հուլիսի 24-ին Լեոն 13-րդ պապը Էմմանուելյան Պողոսին օծել է որպես Կ. Պոլսի կաթոլիկների պատրիարք: Էմմանուելյանը հեղինակ է հայաստան թուրքերեն համառոտ աստվածաբանության և եկեղեցական արարողակարգին նվիրված աշխատությունների, որ հրատարակվել են Կ. Պոլսում դեռևս 1880թ.:

281 Այս մասին տես՝ Գ. Պողարեան, Այնթապականք, էջ 101:

282 Սարաֆեան-Գետրգ. Պատմութիւն Այնթապի հայոց, հ.Ա, Լոս-Անջելես, 1953, էջ 493-504:

քարոզիչներն իրենք էլ այդ համալսարանների ու աստվածաբանական հաստատությունների շրջանավարտներ էին: Նրանք ավարտելուց հետո քարոզչական գործունեության համար ուղարկվել էին Մերձավոր Արևելք, Թուրքիա: Այդ քարոզիչները Սիչիզանի, Կոռնելի համալսարանների նախկին ուսանողներ էին, Միլանի, Լեյպցիգի, Ստրասբուրգի, Սորբոնի նախկին շրջանավարտներ:

Ամերիկյան միսիոներական դպրոցներում ուսումնառության շրջանը հիմնականում 10 տարի էր: Մեծ նշանակություն էր տրվում լեզուների և պատմության իմացությանը: Ուսումնական ծրագրում անգլերենի, ֆրանսերենի, թուրքերենի ուսուցմանը զուգահեռ դասավանդվում էր նաև գրաբար:

Պատմական առարկաներից անցնում էին՝ մատենագիտության պատմություն, արվեստի պատմություն, հայ ժողովրդի պատմություն, համեմատական պատմություն, անգլերեն լեզվով անցնում էին հին լեզուների պատմություն: Դասավանդվող պատմությունների շարքում էին՝ Հունաստանի, Հռոմի, միջին դարերի պատմությունները, նոր շրջանի պատմությունը: Թուրքերեն լեզվով դասավանդվում էր Թուրքիայի պատմությունը: Դասավանդվող առարկաների ուսուցումը հիմնականում անգլերեն լեզվով էր կատարվում: Աշխարհագրությունը, աստղագիտությունը, բուսաբանությունը, քիմիան, կենսաբանությունը, մարդակազմությունը, կենդանաբանությունը, իրավագիտությունը (6 տարի) անցնում էին որպես կանոն՝ անգլերենով²⁸³:

Կրոնական առարկաները դասավանդվում էին հայերեն և անգլերեն լեզուներով: Ութ տարի անցնում էին թվաբանություն: Միայն առաջին դասարանում՝ հայերեն լեզվով, այնուհետև ուսուցումը շարունակվում էր անգլերենով: Դպրոցական ծրագրով եռանկյունաչափություն, հաշվապահություն, տոմարագիտություն անցնում էին հայերեն լեզվով: Ծրագրում կար քաղաքատնտեսություն, տիեզերագիտություն: Վայելչագրություն, գծագրություն, երաժշտություն, երգեցողություն, ֆիզկուլտուրա առարկաներին հատուկ ուշադրություն էր հատկացվում: Այդ պատճառով այս առարկաներն անցնում էին 10 տարի: Այս դպրոցների հիմնական առավելությունը հանդիսանում էր նրանում, որ ի տարբերություն ազգային դպրոցների, օտար լեզուների ուսուցումը շատ լավ մակարդակի վրա էր դրված: Որոշ բողոքական միսիոներների հիմնադրած դպրոցները ժամանակի ընթացքում աստիճանափոխ կորցնում էին իրենց նախնական ամերիկյան քարոզչական բնույթը և դառնում լուսավորության իսկական օջախներ²⁸⁴:

Անգլերենով և հայերենով դասագրքերի կողքին կարևոր տեղ էր հատկացվում նաև հայատառ թուրքերեն դասագրքերին: Դրանք կարող էին լինել և՛ ինքնուրույն, և՛ թարգմանական ձեռնարկներ: Թարգմանական դասագրքերի թվում կարելի է հիշատակել Մալթա կղզում «Ամերիկյան մարդասիրական ընկերության» տպարանի, Չմյուռնիայի, Այնթապի, Կ.Պոլսի բողոքական միսիոներների տպարանների հրատարակությունները: Դրանք բոլորն էլ հիմնականում բարոյախոսական բնույթ կրող գործեր էին, խրատական պոեմներ ունեցող պատմություններ, որոնք նախատեսված էին արտադասարանական ընթերցանության համար: Այդ գրքերի թվում էին ամերիկյան հայտնի միսիոներ

283 Երևի թե այս հանգամանքն է պատճառ դարձել, որ այս առարկաների վերաբերյալ միսիոներների կողմից հայատառ թուրքերեն դասագրքեր չեն հրատարակվել:

284 Առաքել Պատրիկ, Սեբաստիայի հայոց պատմությունը. Բեյրութ, 1974, հ. Ա, էջ 539, 545:

Վիլյամ Գուդելի գործերը²⁸⁵, որին «Բորտ»-ը հատուկ առաքելությամբ 1823 թվականին ուղարկել էր Բեյրութ և Թուրքիա, միմիայն հայերի շրջանում քարոզչական գործունեություն ծավալելու համար:

Բողոքական միսիոներական հրատարակությունները մեծ թիվ են կազմում հայաստան թուրքերեն գրականության վերջին հիսնամյակում՝ սկսած 19-րդ դարի վերջին տասնամյակներից մինչև 20-րդ դարի կեսերը: Դրանք ներկայացնում են բողոքական եկեղեցու տարբեր ուղղությունները, այդ ուղղությունների գաղափարախոսների ու ներկայացուցիչների երկերը հայաստան թուրքերենով: Հիշատակության են արժանի անգլիացի աստվածաբան, նեոկոնֆորմիստ **Սպերջուն Չարլզ Հադդոնի** (1834-1892), ամերիկացի ավետարանական **Թորրի Ռուբեն Արչերի** (1856-1928), խուլուհամբերի ամերիկյան դպրոցի ուսուցիչ **Կալոդեթ Թոմաս Հոպկինսի** (1787 - 18..), պատենտավորված դեղանյութերի անգլիացի վաճառական, ֆիլանտրոպ **Հոլլուեյ Թոմասի** (1800-1883), իռլանդացի պատմաբան **Մազնիլ Չոն Սվիֆթի** (1849-1926), անգլիացի աստվածաբան-մեթոդիստ **Վեսլի Չոնի** (1703-1791), ամերիկյան աստվածաբան **Չոնաթան Էդվարդսի** (1703-1758), ամերիկացի ավետարանական «նոր չափի» աստվածաբան և Կոլեջի պրեզիդենտ **Ֆիննի Չարլզ Գրանդիստի** (1793-1875), նիդեռլանդցի բանաստեղծ քարոզիչ **Քոխարսի**, ֆրանցիսկյան կրոնավոր-պատմաբան հայր **Սաբբատինոյի**²⁸⁶ գրքերը: Ավետարանականների հրատարակած գրքերի թվում են հայտնի հասարակական գործիչ, բժիշկ **Հենրի Վան Լիննեփի**, Կ.Պոլսում հայաստան թուրքերենով հրատարակվող կրոնական «Աւետաբեր»²⁸⁷ շաբաթաթերթի արտոնատեր և խմբագիր **Չոն Գրինի** երկերը, Այնթապի Կոլեջի առաջին նախագահ դոկտոր **Թրոպրիջի**, նրան հաջորդող նախագահ **Մերիլ Չոն Իգաբելի**, այդ նույն կոլեջի ուսուցիչներ դոկտոր **Չեսսի Մարտինի**, **Իլայես Ռիկսի**, հիվանդապահուհի **Վալիս Քեթթոնի**, ազգությամբ հույն հայտնի քարոզիչ, հայաստան թուրքերեն «Հագիգաթ» հոգևոր ամսագրի (Այնթապ, 1914-1915) խմբագիր, **Խարալամպոս Պոստանչոլուի** գրքերը²⁸⁸:

Թեոդիկի հայտնի «Ամէնուն տարեցոյց»-ից իմանում ենք **Հ.Էմմանուել Կառչիա Քառտուա** (1861-1924) Գալիցիայում ծնված և ֆրանսիական վանքում կրթություն ստացած կրոնավորի մասին: Երեք տարով ուղարկվել է գործելու Մարաշի կաթոլիկ վանքը: Սովորել է թուրքերեն և հայաստան թուրքերենի է քարգմանել և տպագրել մի շարք կրոնական երկեր: Մասնակցել է Չեյթունի 1895թ. և 1909թ. կոնվենտին և փրկել հազարավոր հայերի կյանք: 1920թ. բացել է Ադանայի որբանոցը: Կիլիկիայի հայաթափումից հետո անցել է Իսթենդերուն և ցմահ ապրել այնտեղ իր որբերի հետ ²⁸⁹:

285 Վ.Գուդելի Աստվածաշնչի վերաբերյալ քարոզները (268 էջ) հրատարակվել են 1864 և 1903 թթ:
 286 Պաղոն Սաբբատինոն հիշվում է որպես Այնթապի հայասեր քարոզիչ , որը բազմաթիվ հայերի կյանք է փրկել 1895 և 1909 թվականների ջարդերի ժամանակ: Մահացել է Հալեպում 1934 թ.
 287 «Աւետաբեր» Կ.Պոլիս 1872-1911. Օրգան հայ բողոքականների: Հայաստան թուրքերենով հրատարակվել է Ամերիկյան բողոքական միսիոներների կողմից: Արտոնատեր խմբագրապետն է եղել Չ.Գրինը:
 288 Խարալամպոս Պոստանչոլուն որպես հայ հեղափոխական մահվան է դատապարտվել և կախաղան քարճրացվել 1915թ. Մարաշում: Հայաստան թուրքերեն մոտ երկու տասնյակ մեծ և փոքր քարոզչական գրքեր է հրատարակել:
 289 Թեոդիկ. «Ամէնուն Տարեցոյցը» 1926, էջ 735.

Հայատառ թուրքերեն դասագրքերը հիմնականում տպագրվել են բողոքական քարոզիչների հաստատված վայրերում, «Աստվածաշնչի տարածման ընկերության» Կ.Պոլսի, Բեյրութի, Հալեպի, Այնթապի, Չմյուռնիայի, Վիեննայի, Ամերիկայի տպարաններում:

Մինչև 1900 թվականը ամերիկյան միսիոներների կողմից տարածվել է 7 մլն. գիրք՝ 10 մլն դոլարի արժողությամբ²⁹⁰:

19-րդ դարի կեսերին և 20-րդ դարում բողոքական քարոզչական հայատառ թուրքերեն գրականության հեղինակների մեջ սկսում են գերակշռել հայ հեղինակները: Դրանք բոլորը ժամանակին ամերիկյան համալսարաններում ուսանելու ուղարկված հայ երիտասարդներն էին, որոնք վերադառնալով հայերի շրջանակում իրենց գործունեությամբ հատուցում էին ամերիկյան «պարտքը»: Որպես ապացույց բերենք Այնթապի հայտնի «Կոլեջի» ուսուցչական կազմը: Դ-ա պրոֆ. **Չենոբ Պեզճյանն** է (1862 -), որդին **Ալեքսան Պեզճյանի**: Փարիզում երեք տարի հետևել է իրավագիտության: Դ-ասավանդել է ֆրանսերեն, պատմական առարկաներ և քաղաքատնտեսություն: Գրել է «Գոլեճի» պատմություն և այլ գրքույկներ: Անվանվել է «ազգապետ»: Պրոֆ. **Չեսսի Մաթոսյանը** 4 տարի սովորել է Մասսաչուսեթսի պետական մանկավարժական հաստատությունում և 4 տարի՝ Էյլում: Դ-ասավանդել է անգլերեն, մանկավարժություն, հոգեբանություն: Չոհվել է Մեծ Եղեռնի ժամանակ:

Մանասե Փափագյանը (1865-1943) սովորել է 1886-1889 թվականներին Էյլի և Էնդհովերի աստվածաբանության ֆակուլտետներում: Հովիվ է ձեռնադրվել Մասսաչուսեթսի ժողովական եկեղեցում: 1892-1907 թթ. հանդիսացել է Այնթապի Կոլեջի զարթոնքի ղեկավարներից, իսկ 1907թ.-ից հովվություն արել Նյու Յորքում, Ֆրեզնոյում, Օկլենդում, Պասադենայում: Մեկ տարի հայանպաստ ճառերով շրջել ԱՄՆ-ում՝ Իսթ Բիլֆի հաշվին:

Պրոֆ. **Հովհաննես Գրիգորյանը** (1855-1942) եղել է հայ բողոքական հայտնի քարոզիչ, հրապարակագիր: Որդին է հայ ավետարանականների շրջանում հեղինակություն ունեցած հայտնի վերապատվելի **Գարս Գրիգորի**: Կրթություն է ստացել նախ Էմհերսթ կոլեջում, ապա նաև Էյլի համասարանում և տարբեր ամերիկյան բարձրագույն կրթական հաստատություններում: Էյլի համալսարանում ստացել է «Պսակավոր աստվածաբանության» տիտղոս: Վերադառնալով Այնթապ, «Կենտրոնական Թուրքիո Գոլեճում» դասավանդել է հոգեբանություն և փիլիսոփայություն: 1898թ. կրկին վերադարձել է Էյլ՝ հոգեբանության հետևելու համար: 1902թ. աշխատանքի է նշանակվել «Աւետաբերի» խմբագրությունում: Նա հիմնադրիր-արտոնատերն է հանդիսացել Կ.Պոլսում հայատառ թուրքերեն կրոնական, բարոյական, գիտական և քաղաքական «Բահնիմա» (Առաջնորդ) շաբաթաթերթի, որը հետո վերածվել է կիսամյա հանդեսի: Միայն Կ.Պոլսում ունեցել է 3 հազար վճարյալ կանոնավոր բաժանորդներ: 1919 թ. տեղափոխվել է Ամերիկայի միացյալ նահանգներ, ուր պարբերականը շարունակվել է հրատարակվել Նյու-Յորքում՝ 1924-1934 թվականներին: Լինելով թունդ ավետարանական, այնուամենայնիվ միշտ ջատագով է եղել Հայ առաքելական եկեղեցու հետ մերձավոր հարաբերություններ

290 Kırsehiroğlu E. Turkiyede Misyoner Faaliyetleri. İst. 1964.

ունենալու և նրանց հետ հասարակական կյանքում գործակցելու խնդրում: Հեղինակ է մոտ երկու տասնյակ հայաստան թուրքերեն բարոյախոսական գրքույկների: Նրա հիմնական գրական, հրապարակախոսական ժառանգությունը գտնվում է «Աւետաբեր»-ի և «Բահնիւմա»-ի տասնյակ տարիների էջերում:

Պրոֆ. Սարգիս Լևոնյանը (1851-1909) Գոլեճի մաթեմատիկայի, բուսաբանության և կենդանաբանության դասախոսներից է հանդիսացել: ԱՄՆ-ի Էյլի համալսարանի բակալավր: Ուսանել է Շվեյցարիայի Բազել քաղաքի կենսաբանական ֆակուլտետում: Հեղինակել է մի շարք հայաստան թուրքերեն գրքեր, հոդվածներ՝ «Աւետաբեր»-ի էջերում: Սպանվել է ընկերների հետ Օսմանիեյում, 1909 թ. ապրիլի 15-ին, Ադանայի չարաշուք դեպքերի ժամանակ: Եղել է պերճախոս հռետոր, մեծ դաստիարակ:

Հակոբ Պլպուլյանը (1859-1912) եղել է Այնթապի հովիվը: Ավարտել է «Ֆիլիպս» ակադեմիան, եղել Մասաչուսեթսի շրջանավարտ, Էնդհովերի աստվածաբանության բակալավր: 1883-ին գաղթել է Ամերիկա: 1906-1911 թվականներին որպես քարոզիչ շրջել է Այնթապի գյուղերով: Հեղինակ է քարոզների ժողովածուի (272էջ), որը հրատարակվել է 1913թ. Կ.Պոլսում²⁹¹:

Հովհաննես Սմմիկյանը, որ Այնթապի կոլեջի շրջանավարտներից է եղել՝ տնօրենի պաշտոններ է վարել Ադանայի, Տարսուհի, Մերսինի վարժարաններում: 1911 թվականին Ադանայում հրատարակել է «Ատանա» հայաստան թուրքերեն եռօրյա շաբաթաթերթը:

Այս ցանկը կարելի է անվերջ շարունակել: Այնթապի «Գոլեճն» ունեցել է իր տպարանը, որը հիմնադրվել էր 1880 թվականին և անգործության էր մատնվել համիդյան բռնակալության շրջանում: Սահմանադրության հռչակումից հետո սկսել էր գործել ամերիկացիների հիմնած «Գոլեճ»-ի շենքում: Արտոնատերը հայերենի դասախոս **Նշան Պալեոյանն** է (1872-1923) եղել: Այստեղ 1909-1913 թվականներին հայաստան թուրքերենով հրատարակվել է «Եւնի Եօմր» (Նոր կյանք) 16 էջանոց հոգևոր ամսագիրը, «Բահնիւմա-Ռահվիրա» (Ուղեցույց ջահակիր) երկօրյա կրոնական թերթիկը 1919 թվականին՝ հայաստան թուրքերեն և օսմաներեն լեզուներով: Տպագրվել են մոտ 12 անուն գրքեր: Տեղեկագրերը տպագրվել են հայերեն, հայաստան թուրքերեն, օսմաներեն և անգլերեն լեզուներով: Տպարանը, որ բերվել էր Ամերիկայից 1876 թ., գործել է մինչև 1925 թ. տեղահանությունը, ապա տեղափոխվել է Հալեպ և իր գոյության 10 տարիների ընթացքում **Տիգրան Խրոբյանի** կողմից լույս ընծայել «Նոր Աւետաբեր» հայերեն և հայաստան թուրքերեն շաբաթաթերթը, տպագրել մի շարք հայաստան թուրքերեն գրքեր: 1935թ. փակվել է և հատկացվել օտարներին²⁹²:

Այնթապում 1911 թվականից գործել է մի այլ տպարան ևս՝ «Առևտրական տպարան»:
Այն ստեղծվել էր Վարդանյան կրթարանի նախկին սաների կողմից 1909թ. հիմնադրված «Ավետիս Խանգեղյան և ընկ.» առևտրական գործակցական ընկերությանը կից: Բացի հայերեն, հայաստան թուրքերեն, ֆրանսերեն և քիչ քանակով օսմաներեն գրքեր տպագրելուց, կատարվել են ոսկեգօծ, շքեղ հրավիրատոմսերի, քարտերի, հայտագրերի և տարբեր այլ պատվերներ:

291 Այնթապի «Գոլեճի» ուսուցչական կազմի հեղինակած և թարգմանած բոլոր գրքերը հրատարակվել են բացառապես հայաստան թուրքերենով:

292 Պողարեան Գ. Այնթապականք, Բեյրութ, 1974, էջ 19-73.

Ամերիկյան ավետարանականների ուսումնական գործունեությունը, դասագրքերի և ընդհանրապես գրահրատարակչական ավանդույթները առաջին համաշխարհային պատերազմից հետո տեղափոխվել են Մերձավոր Արևելքի հարևան երկրները, ուր և հայատառ թուրքերեն հրատարակությունները հիմնական մասն են կազմել նրանց աշխատանքի:

Հայատառ թուրքերեն «Մանգումէի Էֆքեար», «Ճերիտէի Շարգիյէ», «Մէճմաայր Հավատիս», «Աւետաբեր», «Ծիածան», «Քիւչիւք Միւմին» և այլ պարբերականներում լայնորեն լուսաբանվել են Թուրքիայի հայոց կրթական խնդիրները, մանկավարժությանը, կազմակերպչական, դաստիարակության հոգեբանության հետ առնչվող հարցեր: Որոշ պարբերականներ «Ուսումնական կյանք» հատուկ բաժինների ներքո ամենօրյա լուրերով և տարբեր հոդվածներով ընթերցողներին ծանոթարցնում էին ոչ միայն մեծ քաղաքների, այլև գավառական դպրոցների ուսումնական տարվա հաջողությունների և գոյություն ունեցող տարբեր խնդիրների հետ²⁹³: Բացի օրաթերթերից, նմանատիպ բաժիններ են ունեցել նաև հայատառ թուրքերեն այլ շաբաթաթերթեր, հանդեսներ, տարեցույցներ: Երեխաների համար հրատարակվել են հատուկ հայատառ թուրքերեն հանդեսներ, որն ապացույց է այն բանի, թե ընդհանրապես դաստիարակության, դպրոցական կրթության խնդիրները շահագրգռել են բոլորին և գտնվել արևմտահայ իրականության բոլոր խավերի ուշադրության կենտրոնում: Այս հարցն արտացոլված է եղել նաև 1863 թվականի «Ազգային Սահմանադրություն Հայոց»-ում: Այն հանգամանքը, որ կայսրության ոչ մահմեդական բնակչությունը չնայած քաղաքական անընդհատ հալածանքներին, մեծ հաջողությունների է հասել կրթական ասպարեզում քան թե թուրքերը՝ նկատել են դեռ ժամանակակիցները: Այս հանգամանքը զբաղեցրել է նաև Թուրքիայի լուսավորության հարցերն ուսումնասիրող խորհրդային շրջանի գիտնականներին²⁹⁴:

«Հայաստանի Կոչնակ» շաբաթաթերթի տվյալներով առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին Օսմանյան կայսրության տարածքում գործում էին 2 հազար հայկական դպրոցներ ²⁹⁵:

Որպեսզի հայկական դպրոցները թրջացվեին, 1913 թվականին երիտթուրքերի կառա-

293 Հայկական թերթերը (հայերեն և հայատառ թուրքերեն լեզուներով հրատարակվող) իրենց թղթակիցներն ունեին Արևմտյան Հայաստանի բոլոր գավառներում: Որոշ խմբագիրներ և թղթակիցներ ոչ միայն հանդիսանում էին այս կամ այն դպրոցի հովանավորները, այլև դասավանդում էին այդ դպրոցներում: Այդ իսկ պատճառով երբեմն տվյալ պարբերականը դառնում էր այդ ուսումնական հաստատության մանկավարժական գաղափարների և փորձի տարածման քարոզիչը: Մասնովի էջերում պարբերաբար լուսաբանվում էին դպրոցական տարբեր իրադարձություններ: Այս առթիվ բնորոշ կարող է հանդիսանալ պոլսահայ «Մանգումէի Էֆքիար» հայատառ թուրքերեն երկարակյաց պարբերականի, նրա խմբագիր, հայտնի հասարակական ու մշակութային գործիչ, թարգմանիչ Կարապետ Փանոսյանի ու նրա հովանավորած Ազգային աղջկանց վարժարանի օրինակը, որը տարիներ շարունակ զբաղեցրել է թերթի էջերը:

294 А.Д. Желтяков, Ю.А. Петросян. История просвещения в Турции /конец XVIII-начало XX века/, М., 1965.

295 «Հայաստանի Կոչնակ»-ը հրատարակվել է 1900-1968թվականներին, սկզբում Բոստոնում, ապա՝ 1909 թվականից Նյու-Յորքում: Եղել է քաղաքական, տնտեսական, գրական, գեղարվեստական շաբաթաթերթ և 1960 թվականից դարձել է ամսաթերթ: Տես՝ N 25, 31-րդ հատոր, 1931 թ. հունիսի 20, էջ 810, Նյու- Յորք: Այս մասին տես նաև Даниелян Р. Просвещение в Турции 1923-1960гг. Ереван, 1971, с. 20.

վարող շրջանները չեղյալ հայտարարեցին նախկինում հաստատված ծրագրերը և հայկական դպրոցները մտցրեցին Լուսավորության նախարարության հսկողության ներքո: 1915 թվականին երիտթուրքերի կառավարությունը արգելեց բացել որևէ օտար դպրոց, առանց հատուկ թույլտվության:

1918-1923 թվականների ազգային բուրժուական հեղափոխության հաղթանակից հետո Թուրքիայում վերականգնվեցին կայսրության ժամանակ վերացված օտար դպրոցների գործունեությունները: Այնուամենայնիվ օտար միսիոներների ու նրանց կազմակերպած դպրոցներին տրված նախկին արտոնություններն ու կանոնները՝ չվերականգնվեցին²⁹⁶:

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտին արդեն անկում էր ապրում նույնիսկ Մերձավոր Արևելքում գործող միսիոներական գրահրատարակչական գործը: Թուրքական լուսավորության նախարարության կողմից միսիոներների գործունեության նկատմամբ նման անբարյացկամ վերաբերմունքը հիմնականում պայմանավորված էր 1915 թվականի Մեծ եղեռնի շրջանում շատ ու շատ միսիոներների իսկապես մարդկային ազնիվ գործունեությամբ: Միսիոներներն օգնեցին փրկվելու հազարավոր հայերի, մասնավորապես երեխաների, որբերի:

Դարասկզբին կառավարությունը խստացնում է հայկական դպրոցների և դասագրքերի նկատմամբ գրաքննությունը: Հայկական դպրոցների ուսումնական գրականությունն իրենից ներկայացնում էր հիմնականում միսիոներական հրատարակություններ: Այդ տպագրության կենտրոնները 20-ական թվականներից տեղափոխվում են Բեյրութ, Հալեպ, Դամասկոս:



296 А.Д. Желтяков, Ю.А. Петросян. История просвещения в Турции /конец XVIII- начало XX века/,.-М., 1965, с. 147.

Գլուխ Է

Գիտա-հանրամատչելի գրականություն

Հայաստան թուրքերեն տպագիր գրականությունն արտահայտել է Օսմանյան կայսրության կյանքի ամենատարբեր կողմերը: Ուսումնական գրականության մի որոշ մասը կարելի է ներկայացնել նաև որպես գիտական գրականություն²⁹⁷: Այսպես օրինակ, միկրոկենսաբանությանը նվիրված աշխատություններն իսկապես կարելի է դիտել որպես գիտական ուսումնասիրության հրատարակություններ²⁹⁸: Օսմանյան կայսրությունում գիտության այս նոր զարգացող բնագավառի արտահայտությունը հանդիսացող տպագրված հետազոտություններից մեկի հեղինակը **Նազարեթ Տաղավարյանն** է: Նա կենսաբանությանը, բժշկությանը, ֆիզիկային, աստղագիտությանը, քիմիային նվիրված 15 աշխատությունների հեղինակ է: Աշխատակցել է բազմաթիվ գիտական հրատարակությունների հետ: Կ.Պոլսում 1885 թ. Նազարեթ Տաղավարյանը հիմնադրել է «Գիտական շարժում» ամսագիրը: Մանրեաբանությանը նվիրված պատկերազարդ ուսումնասիրությունը (168 էջ) հայաստան թուրքերեն հրատարակել է Ն.Տաղավար անունով 1898 թվականին Կ.Պոլսում: Այն թարգմանություն է հայերենից: Թարգմանիչն է **Հովհաննես Ոսկյանը**:

Օսմանյան կայսրությունում բուրժուական հարաբերությունների ձևավորումը ընթերցողներին, այդ թվում իհարկե արևմտահայությանը նոր պահանջներ էր առաջադրում: Հրատարակվում է գերմանացի **Օտտո Հյուրպների** «Քաղաքատնտեսությունը»՝ 1869 թվականին: Թարգմանությունը գերմաներենից պարզ թուրքերենի, ինչպես նշվում է տիտղոսաթերթում, կատարել է **Մեհմեդ Միդհասը**: Տպագրվել է այս գիրքը Կ.Պոլսի **Պ.Հյուզի** տպարանում: Մեր կարծիքով այս գիրքը որպես դասագիրք է ծառայել թուրքական ուսումնական հաստատության համար և այսպիսի առարկայի թարգմանությունն օսմաներեն, առավել ևս դրա ընկալումն օսմաներենով անհնարին կլիներ: Լավագույն տարբերակ է ընտրվել այն մատչելի դարձնելու համար. լեզուն՝ պարզ թուրքերեն, իսկ շարադրանքն արդեն շատերին ծանոթ հայաստան թուրքերենով:

Ավելի ուշ, 1908 թ. հրատարակվել է տնտեսագիտության ձեռնարկ, ամենայն հավանականությամբ նույն Մեհմեդ Միդհասի թարգմանությամբ, որը նույն նպատակին էր ծառայելու: 1870 թ. հրատարակվել է **Չերվաքի Ռաֆայելի** «Տեղեկագիրք առևտրի վե-

297 Այս գրականությունն իսկապես Թուրքիայի գիտական կյանքի կարևոր մասն է ներկայացնում:

298 Նազարեթ Տաղավարյանը (Տաղավար, 1868-1915) մասնագիտական կրթությունը ստացել է Ֆրանսիայում: Սկզբում նա մասնագիտացել է գյուղատնտեսության, ապա՝ բժշկության և միկրոկենսաբանության ուղղությամբ՝ Փարիզի Պատերազմի ինստիտուտում: Այդ աշխարհահռչակ հաստատությունում Տաղավարյանին շնորհվել է բժշկության դոկտորի կոչում: Գիտական աշխատություններ է գրել բժշկության, կենսաբանության (15 աշխատություն), դարվինիզմի շուրջ՝ հենվելով ժամանակի ամենավերջին գիտական հայտնագործությունների վրա: «Գիտական շարժում» ամսագրում նա հողվածաշարեր է նվիրել Պատերազմի, Միլն Էդվարդային: 1902թ. Փարիզում ֆրանսիական կառավարության կողմից նրան շնորհվել է «Officier d'Academie» կոչումը, իսկ 1910 թ.՝ ստացել «Mérite agricole» պատվանշանը:

րաբերյալ» 220 էջ կազմող գիրքը, որի հույժ կարևոր լինելու հանգամանքը որպես տեղեկատու ձեռնարկ իր ժամանակակիցների համար՝ կասկած չի հարուցում:

Մկրտիչ Ճեզգիրյան ամիրան է սկսել Օսմանյան կայսրությունում շերամապահության գործը և գրադվել մետաքսագործությամբ: Նա մարտնչել է Թուրքիայում շերամապահության ու մետաքսագործության բնագավառների զարգացման համար: Մի քանի գավառներում ֆաբրիկաներ է բացել և որպես առաջադեմ մարդ, ցանկացել այս ամենը դնել գիտական հիմքերի վրա: Նա 1874 թվականից սկսած շերամապահության վերաբերյալ համարյա ամեն տարի ուղեցույց գրքյուկներ է հրատարակել հայատառ թուրքերենով: Բնականաբար գավառներում պարզ թուրքերենով բացատրությունները ավելի շահեկան էին, քանզի այդ ֆաբրիկաներում միայն հայեր չէ, որ աշխատում էին: 1858թ. Կ.Պոլսում հրատարակվել է բամբակի մշակության մասին «ուսումնագիրք», որը ապացույց է ինչպես շերամապահության, այնպես էլ գյուղատնտեսության այս ճյուղի զարգացման նկատմամբ հայերի ունեցած շահագրգռվածության մասին: Այս գրքերը մեծ պահանջարկ են վայելել: Տնտեսական նոր տիպի հարաբերությունների ապացույց կարելի է համարել թռչնաբուծության, մասնավորապես հավաքածության մասին գրքերը (մոտ 160 էջանոց հրատարակություններ), կենդանիների մասին հատորները: Այդ բոլորը համարյա նույն շրջանում՝ 1870-թվականներից սկսած: Բնականաբար Թուրքիայի նման երկրի տնտեսության համար կարևոր բնագավառ էր հանքերի ուսումնասիրության խնդիրները: Հայատառ թուրքերենով հրատարակվում են հանքանյութերին, գյուղատնտեսությանը, անասնապահությանը, անասնաբուժությանը վերաբերող գրքեր²⁹⁹, որոնք չի կարելի համարել նեղ, միայն հայ ազգի շահերին ծառայող տպագրություններ:

Հայտնի է, որ Թուրքիայում ի թիվս մշակույթի շատ բնագավառների, հայերի հետ է կապվում տարբեր բնագավառների այս կամ այն ճյուղի ստեղծումն ու զարգացումը: Բնորոշ է մի հանգամանք, որ այդ մարդիկ չեն սահմանափակվել զուտ պրակտիկ գործունեությամբ և փորձել են տարբեր գրքերի, հրատարակությունների միջոցով այն դարձնել բոլորի սեփականությունը, հետաքրքրել կայսրության տարբեր ժողովուրդներին: Այս նպատակների համար լավագույնս է ծառայել հայատառ թուրքերենով գրականությունը: 1866 թվականին լույս է տեսել **Տեր Թորոսյան Սարգսի** հեղինակած «Լուսանկարչական հանդես»³⁰⁰, իսկ դեռևս 1857 և 1858 թվականներին Հովսեփ Վարդան Փա-

299 Մանուկ վրդ Քաջունու կազմած «Պարտիզպանություն, անուանք գլխաւ որ բանջարեղենաց. հայերեն, տաճկերեն, ֆրանսերեն եւ իտալերեն պատկերագարդ» հրատարակությունը, որը 306 էջերից է բաղկացած՝ 1899թ. հրատարակվել է Ս.Ղազարում: Կ.Պոլսի հայտնի ծաղկեմշակատնկաբույծ Հակոբ Խոլավերդյանը (1883-1925) , հայատառ թուրքերեն «Բէսիմի զըրապ դազէթասը (Կ.Պոլիս, 1906) գյուղատնտեսական պատկերագարդ թերթի թղթակից, ծաղկեմշակման բազմաթիվ հայատառ թուրքերեն հոդվածների հեղինակ: Միջազգային ցուցահանդեսների մասնակցած, Մուխթար փաշայի պարտեզներն ու ցերմոցները դրախտի վերածած մասնագետը կրթություն էր ստացել Բելգիայի Վան-Հուր հաստատությունում:

Այս բնագավառում հայտնի դեմքերից է եղել Նշան Գալֆայանը (1865-): Ֆրանսիայում կրթություն ստացած, Ճապոնիայի շերամաբուծական ընկ. պատվավոր անդամ, Իզմիրի, Պրուսայի, ապա Կ.Պոլսի Վարժարանների տնօրեն, Երկրագործական նախարարության գիտության բաժնի օգնական տնօրեն, որի հոդվածները տպագրվել են ֆրանսիայում, Տոկիոյում: Հայկազուն Պեկեյանի հետ միասին հրատարակել է «Բէսիմի զըրապ դազէթասը» հայատառ թուրքերեն գյուղատնտեսական պատկերագարդ թերթը Կ.Պոլսում 1906 թվականին:

300 Օսմանյան շրջանի լուսանկարչությանը նվիրված Էնգին Չիզգենի գրքի հրատարակության առթիվ

շան (Վարդանյան) ֆրանսերենից թարգմանել և հրատարակել է էլեկտրական հեռագրի գործածության վերաբերյալ գրքույկ: Այս և մյուս հրատարակությունները նպատակ էին հետապնդում նախ և առաջ հայ ժողովրդին ծանոթացնել Արևմուտքի գիտության և տեխնիկայի նորամուծություններին, հաջողություններին: Հրատարակելով հայատառ թուրքերեն, այս ամենի օգտակարության շրջանակը միանգամից բազմապատկվում էր՝ ի շահ կայսրության թրքախոս մյուս ազգերի, որոնց հայատառ թուրքերեն գրականությունից օգտվելն օրինաչափ երևույթ էր դարձել:

Կ.Պոլսում գործունեություն էին ծավալել հայրուրավոր հայ բժիշկներ, իրավաբաններ, որոնք կրթություն էին ստացել եվրոպական երկրներում՝ Ֆրանսիայում, Շվեյցարիայում, Գերմանիայում և այլուր: Հայատառ թուրքերենով հրատարակվել են բժշկության տարբեր բնագավառներին նվիրված բազմաթիվ գրքեր՝ ինքնուրույն ուսումնասիրություններ և թարգմանական հետազոտություններ, ուղեցույցներ, տեղեկագրեր: Դրանց բազմազանությունը ցույց է տալիս նաև բժշկության զարգացման ուրվագիծը Թուրքիայում: Հրատարակվել է մանկահաս տղաների ու աղջիկների հիգիենային վերաբերող գրքերի մի ամբողջ շարք»³⁰¹: Բնականաբար այն նախատեսված էր հայ դպրոցականների համար, լրացնում էր նրանց կենցաղը ժամանակակից առողջապահությամբ, զանազան դեպքերի համար խորհուրդներ ապահովում: Բժշկական գրքերի մի շարք ներկայացնում էր հիվանդությունների ու դրանց ախտորոշման, բուժման տարրական տեղեկատուներ, մայրերի համար ձեռնարկներ, անատոմիային, ատամնաբուժությանը, առողջապահությանն ու ընդհանուր հիգիենային նվիրված հրատարակություններ: Այս գրքերի նույնիսկ վերնագրերը հետաքրքրություն ու հույս են առաջացրել: Այսպես օրինակ, **Ուրֆայան Օգսենի** տպագրած գրքի (1914) վերնագիրն է եղել՝ «Թոքախտը բուժելի է»: Եվ կամ՝ 1890թ. տպագրված գիրքը կոչվում է՝ «Դուկտոր Կոխի առաքելությունը, թոքախտի դարմանումը, նախնական կամ սկզբնական վկայություններ»: Գերմաներենից թարգմանել է ոմն **Չինկեր**, որից և հայատառ թուրքերենի է թարգմանել գրքույկը **Բարսեղ-Քեյիյանը**: «Պատվաստ կամ ծաղկախտ հիվանդության առաջին դարմանը» ևս հայ բժիշկների կողմից է հրատարակվել Կ.Պոլսում 1869-ին: Կասկած չեն հարուցում բժշկական տերմինների և դեղերի անվանումների բառարանների անհրաժեշտությունը, որոնք կարող էին ծառայել միաժամանակ տարբեր ազգերի ընտանիքներին և իհարկե առաջին հերթին՝ բժիշկներին, բժշկական հիմնարկներին: Այս առումով չափազանց արժեքավոր է 1822թ. **Միքայել Ռեստե Տեր-Պետրոսյանի** «Բժշկութիւն. Բառարան զանազան ախտից, դեղորէից, բուսաց, հանքաց, հեղանիւթ ոգեաց, օդային, ցամաքային եւ ջրային կենդանեաց ոմանց եւս ոստք անուանց նշանակեալ ի լատին, յիտալական ի գաղղիական, յանգլիական, ի հունական, արաբացոյ, ի պարսկական, ի տաճկական եւ հայ բառբառ, հանդերձ բացատրութեամբ նոցին բոլոր» երկհատոր (542էջ) ծավալուն աշխատությունը, որը կարծես թե շարունակությունն է հայ բժշկապետների դեռևս միջնադարում ստեղծած հզոր ավանդույթների: Հրատարակվել է

հրատարակվել է Բամպուքճյանի հոդվածը, ուր արտատպված են Թուրքիայում այս ասպարեզի հայազգի հիմնադիրներից մի քանիսի կատարած հազվագյուտ լուսանկարները: Տես՝ «Tarih ve Toplum» 1987, Ist., aralık, s. 27-29.

301 Այս առումով հետաքրքրություն են ներկայացնում Արմենակ Հայկունու երտասարդների առողջապահությանը նվիրված մի քանի գրքույկները, տպագրված 1900-ական թվականներին:

բառարանագիտության լավագույն ավանդույթներով հայտնի ս.Ղազարի Մխիթարյանների կողմից և վերահրատարակվել 1825թ.-ին: Վիեննայում հրատարակված 1858թ. «Բնական պատմությունը» 570 էջանոց ծավալուն բառարան է կենդանիների, տունկերի, հանքանյութերի անունների՝ հրատարակված հինգ լեզուներով: Կ.Պոլսում բժշկարանների հրատարակությունները պարբերական բնույթ են կրել: Համոզված ենք, որ կարևոր հանգամանք է հանդիսացել «Օսմանյան Բժշկական Միության» ղեկավար կազմի տարիներ շարունակ հայ նախագահներ ունենալը:

Ալկոհոլի հարուցած վնասների մասին բժշկական գրքերի մի ամբողջ շարք է տպագրվել:

Հայաստան թուրքերենով հրատարակվել են նաև այլազգի բժիշկների ժամանակին կարևորություն ներկայացնող աշխատությունները, որոնցից է օրինակ՝ 1893թ. **Նիկոլաոս Ղ. Վազալոպոլոսի** «Դարմանումի գիտությունը» գիրքը: Նույն 1893 թ. հրատարակվել է **Գիմիտրի Չոլաքիտիսի** «Հունարեն-հայաստան թուրքերեն» խոսակցական բառարանը:

Հայաստան թուրքերենով հրատարակված գիտա-հանրամատչելի գրքերի միայն ցանկն արդեն բավարար ապացույց է Օսմանյան կայսրության, հատկապես հայերի շրջանում առաջադիմական զարգացումների փաստի, որն արդյունք էր եվրոպական առաջընթացի ներթափանցման, բուրժուական հարաբերությունների հաստատման: Նոր սոցիալ-տնտեսական հարաբերություններն առաջադրում էին երկրում գիտության, տեխնիկայի, տնտեսության նկատմամբ նոր մոտեցումներ դաստիարակել:

Հայաստան թուրքերեն մի շարք հրատարակություններ ինքնին հայերի, թուրքերի ու մյուս ժողովուրդների կյանքի, կենցաղի մասին պատկերացում տվող գրքեր են: Ընթերցողների լայն շրջանակ են ունեցել ու մեծ հաջողություն վայելել հայ խոհարարների գրքերը, ուր հավաքված են եղել, ոչ միայն հայկական, բյուզանդական, արևելյան խոհանոցի բաղադրատոմսեր, այլև եվրոպական խոհանոցն է ներկայացված եղել: Այս գրքերն անընդհատ վերահրատարակվել են, միշտ նորանոր հավելումներ ներկայացնելով: Մեծ ժողովրդականություն են վայելել երգարանները, երագահանները, գուշակության գրքերը: Անհրաժեշտ ու պարբերական հրատարակություններից են եղել օրացույցները, տարեցույցները, որոնք նաև տարբեր լեզուներից թարգմանություններ են եղել: Իտալերենից թարգմանված «Կազամիյա»-ները, Սալմամները, Մեվսիմնամները, Ռուզմամները ու նման օրացույցներն առատորեն տպագրվել են Կ.Պոլսում, հետո՝ նաև Հալեպում: Նունիսկ հայերեն հայտնի պոլսահայ հրատարակություններում, ինչպիսիք են Թեոդիկի, Կավոռչի, Ս.Փրկչի Ազգային հիվանդանոցի տարեցույցները, հայաստան թուրքերեն փոքրիկ նյութեր են հրատարակվել: Նրանցում թևավոր խոսքերի, անեկդոտների ու խրատների հայաստան թուրքերեն էջեր են տպագրվել: Այսպիսի գրականությունը ծառայել է ոչ միայն հայերին, այլև մատչելի է եղել տարբեր ժողովուրդների ամենատարբեր խավերին: Հետաքրքրություն է ներկայացնում 1859 թ. Փարզում հրատարակված ֆրանսերեն-հայերեն երկհատոր ուղեցույց գրուցարանը՝ ճանապարհորդ ուսանողների համար, որի հեղինակն է եղել գրող **Խորեն վրդ. Գալֆայան Նար Պեյը**, (1831-1892), որն այդ տարիներին պաշտոնավարել է Փարիզի Մխիթարյանների Մուրադյան վարժարանի

նում: Նրա տաճկերենից հայերեն ընդարձակ բառարանը հրատարակվել է Կ.Պոլսում 1892 թ. 670 էջով: Այս հրատարակությունը փաստում է հայ երիտասարդների եվրոպական երկրներում ուսումնառության մեկնելու ծայր առած սովորությունը: Արևմտահայ իրականությունում լավագույն, առաջադեմ կրթություն ստանալու ձգտումները դառնում էին կենսական խնդիր ոչ միայն անվանի ու հարուստ ընտանիքների շրջանում: Բազմաթիվ օժտված հայ երիտասարդներ եվրոպական երկրներ ուսումնառության էին մեկնում հայրենասեր հովանավոր-բարերարների մեկենասության շնորհիվ:

Հայատառ թուրքերեն հրատարակությունների մեջ կարևոր տեղ են գրավում օսմանյան պետության օրենքների ներկայանալի, բազմահատոր տպագրությունները: Դրանք ֆիրմանների հավաքածուներ, քրեական, քաղաքացիական, դատական օրենսգրքեր, իրավաբանական տեղեկատու գրականություն, ժառանգության, կտակի, նվիրատվության, հողային ունեցվածքի (վակուֆների) մասին առանձին օրենքներ են, և նույնիսկ՝ «Կանոնագիր հրամանագիր շենքերու հիմերուն շինութեան մասին»: Այն հիմնականում օսմաներենից կատարված մասնագիտական թարգմանություններ են: 1876թ. հրատարակվել են քրեական օրենսգրքի 119 հոդվածներ և նրանց բացատրությունները հայատառ թուրքերեն ու օսմաներեն:

1881-1882թթ. տպագրված երկհատոր «Տիւսթուր» օրենսգրքերի թարգմանիչն ու հրատարակիչը եղել է Կարապետ Փանոսյանը: Այն տպագրվել է իր խմբագրած «Մանգու-մէի էֆքեար» թերթի տպարանում:

Օրենսդրական հիմնական ժողովածուների՝ «Մեջելե»-ների հայատառ թուրքերեն բազմահատորյակի հրատարակության կազմողն ու թարգմանիչն է եղել **Նիկողայոս Թոթոկյանը**, որի տպագրած օրենքները հազարից ավելի էջեր են պարունակում (հիմնական հրատարակությունները՝ 1891 թվականին են եղել)³⁰²: Իրենց բնույթով այս գրականությանն են հարում «Դատարանների ընդհանուր սկզբունքը» (1872, Կ.Պոլիս), ինչպես նաև մի շարք տպագրություններ ունեցած «Ազգային Սահմանադրութիւն Հայոց, հաստատեալ 1863թ.», «Բարձրագոյն կարգադրութիւն յաղագս կառավարութեան գործոց լուսատրչական Հայոց եկեղեցու ի Ռուսաստան»-ը, որը հայտնի է «Պոլոժենիա» անվամբ և տպագրված է եղել Ս.Պետերբուրգում հայատառ թուրքերենով 1836 թվականին: Նույնը 1883 թվականին Կ.Պոլսում տպագրվել է հայերեն և հայատառ թուրքերեն: 1863թ. Հովսեփի Վարդանյանի կողմից հրատարակվել է «Սահմանադրական ճշմարտութիւններ եւ անոնց պարտադրութիւնները» 87 էջանոց քննական ուսումնասիրությունը: Այս շարքում պետք է ընդգրկել նաև 1917թ. Երուսաղեմում հայերեն և հայատառ թուրքերենով տպագրված «Կանոնագիր Հայոց Կաթողիկոսութեան եւ Պատրիարքութեան»-ը, «Կանոնագիր հայ կաթողիկոսութեան» (հայերեն և հայատառ թուրքերեն, 1872), «Կանոնագիր նշանախոսութեանց եւ հարսանեաց»՝ կրկին երկրեզվյա, 1929թ. Հալեպում տպագրված գրքույկը: Հետաքրքրություն է

302 Թուրք իրավագիտության պատմության մեջ կարևոր տեղ է գրավում Սարգիս Քարաքոչ (Քարաքոչյան) Էֆենդին (1865-1944): Նա հանրապետական շրջանի ամենահեղինակավոր իրավագետներից էր և բազմաթիվ օրենքների, կողեքսների կազմող, խմբագրող, իրավաբանության ասպարեզում գիտական աշխատությունների հեղինակ և նշանավոր փաստաբան: Նրա մասին տես Գ.Բամպուրճյանի հոդվածը -«Tarih ve Toplum»1987, ocak, s. 20-22.

ներկայացնում «Նոր կանոնագիրք անօտրաչափութեան եւ կշիռներու» (1870, ԿՊոլիս)³⁰³, որը կարևոր քայլ էր կենցաղում և գիտության բնագավառում եվրոպական չափերի հետ միանմանության հաստատման գործում:

Հիմնականում հայերեն և հայաստան թուրքերեն լեզվով են տպագրել այս կամ այն հայկական եկեղեցական միության, մշակութային կամ գիտական կենտրոնի ու որևէ հասարակական կազմակերպության կանոնագրերը: Այսպիսի օրինակ է 1857թ. Այնթափի հայոց եկեղեցու օրինագրքի հրատարակությունը և կամ 1894 թվականին՝ «Խորենյան ընկերության» սահմանադրությունը: «Մաժակունյան ընկերության դաշնագրությունը» (ա.թ.), «Ծրագիր-կանոնագիր առետրական միութեան» (1867 Կ.Պոլիս), 1822թ Լիոն քաղաքում հիմնադրված «Լևոնյան Եղբայրության» մասին (ա.թ. «Լիօնեան Եղբայրութեան մեզպարտուն նէթիճէսի» ամենայն հավանականությամբ տպագրվել է 1840-ական թվականներին): Հետաքրքրություն են ներկայացնում «Կանոնք բարեգործական ընկերութեան ի նպաստ գաւառաց Կաթողիկոսայ Հայոց» (հայերեն և հայաստան թուրքերեն, 1875թ. Կ.Պոլիս), « Կանոնագիր Բաղտանուէր ընկերութեան» (հիմնադիրներն են եղել Կարապետ Փանոսյանը, **Միհրան Տառյանը**, **Կարապետ Սարաֆյանը** և ուրիշներ, 1873թ. Կ.Պոլիս, հայերեն և հայաստան թուրքերեն), «Կանոնագիր աղքատախնամ ընկերութեան» (1823թ. Կ.Պոլիս) և այլն: Հայերեն և հայաստան թուրքերեն են հրատարակվել արքունի հրովարտակները³⁰⁴.

Հայաստան թուրքերեն լեզվով ստեղծվել է բովանդակային առումով բազմազան և ծավալուն ուսումնական գրականություն: Այն կյանքի էր կոչվել շնորհիվ արևմտահայ իրականությունում սկիզբ առած լուսավորական շարժման: Այս շարժման հիմնական արտահայտություններից էր 18-րդ դարում Կ.Պոլսի հայ պատրիարքական Աթոռին կից վարժարանների և Օսմանյան կայսրությունում աշխարհիկ դպրոցների հիմնադրումը: Ուսումնական գրականությունը խթանող երևույթներից է հանդիսացել Վենետիկի, Վիեննայի, Տրիեստի Մխիթարյան կաթոլիկ միաբանության դպրոցական ցանցը՝ ստեղծված բացի սեփական կենտրոններից, նաև Թուրքիայում, եվրոպական մի շարք երկրներում: 19-20-րդ դարերում հայաստան թուրքերենով ստեղծված ուսումնական գրականության մի մեծ մասի ստեղծումը սերտորեն կապված է եղել արևմտահայ իրականությունում միախոնրակական տարբեր ուխտերի գործունեության, մասնավորապես ամերիկյան ավետարանականների կրթական գործունեության հետ: Նրանց այդ ջանքերի շնորհիվ հրապարակ եկան տարբեր լեզուների դասագրքեր, քերականներ, բառարաններ, ընթերցարաններ: Ամերիկյան միախոնրակական դպրոցներում, ուր հայ աշակերտները նշանակալի փվ են կազմել, միայն պատմության ուսումնասիրության համար դպրոցական ծրագրում 11 պատմական տարբեր առարկաներ են եղել: Դրանց մի մասի դասագրքերը նույնպես

303 Մեր կարծիքով այն կազմել է չափագետ Հակոբ Պոյաճյանը, որը 1909 թ. նշանակվել էր Օսմանյան համալսարանի տնօրեն:

304 «Թարգմանութիւն Արքունի հրահանգին, որ զինվորական տրոց բաշխման եւ հաւաքմանը համար արքունի հրահանգ, դրկուած կուսակալներուն». հայերեն և հայաստան թուրքերեն 6 հոդվածներ, Կ.Պոլիս (1870) 6 էջ: Հրատարակվել է հաջորդ տարի ևս:

հայատառ թուրքերեն եղել: Հրատարակվել են բնական գիտություններին վերաբերող ուսումնական ձեռնարկներ: Բնականաբար հրատարակվել են նաև քարոզչական բնույթի երկեր, որոնց հայ և օտար քարոզիչ, ուսուցիչ հեղինակները երբեմն իրենք են շարադրել դրանք հայատառ թուրքերենով: Մինչ հայկական իրականություն մուտք գործելը նրանք նախապես ծանոթացել են հայ ժողովրդի սովորություններին, հոգեբանությանը, ավանդույթների հետ, ինչպես նաև հայերեն ու թուրքերեն լեզուներին, քանզի այդ անձանց որոշակի մասը պատրաստվել ու ուղարկվել է պաշտոնավարելու՝ միմիայն հայկական շրջանակները նկատի ունենալով:

Հայատառ թուրքերենն օգտագործվել է մոնումենտալ բազմալեզու բառարանների և բազմալեզվյա խոսակցական բառարանների՝ գրուցարանների ստեղծման համար: Վերոհիշյալները նամակահիների, թուրքերեն լեզվի բազմաթիվ դասագրքերի հետ միասին, ինչպես նաև թուրք գիտնականներն են խոստովանում, մեծ ավանդ են ներդրել նոր, գրական թուրքերեն լեզվի ստեղծման ու զարգացման գործում, ունեցել գործնական մեծ կիրառություն: Կյանքի ու կենցաղի ամենատարբեր կողմերին նվիրված հայատառ թուրքերեն գիտա-հանրամատչելի գրքերը ապացույց են հայատառ թուրքերեն գրականության ունեցած կենսական ու գործնական մեծ նշանակության: Հայատառ թուրքերեն գրականությունը հնարավոր է դարձրել ընթերցողների ամենալայն շրջանակների շփումը ինքնուրույն և մասնավորապես թարգմանական գրականության հետ: Այն հաղորդակցման միջոց է հանդիսացել Օսմանյան կայսրության ժողովուրդների սոցիալ-քաղաքական ու մշակութային կյանքի, իրագեկ դարձնելով արտասահմանի գիտության, տեխնիկայի բնագավառներում առաջընթացին ու հաջողությանների³⁰⁵:

Հայատառ թուրքերեն գրականությունն իր ավանդն ունի նաև Օսմանյան կայսրությունում գիտական մտքի տարածման ու նոր գրականության, մանկավարժության, լուսավորական ասպարեզի զարգացման գործում: Այս առթիվ առանձնահատուկ կերպով հարկ է նշել գրահրատարակիչների, տպարանատերերի մեծ ծառայությունը: Եվրոպական ու արևելյան լեզուների գիտակ թարգմանիչները զգալի ժամանակի զարկերակը, լավագույնս կարողացել են տարբեր ազգերի թուրքալեզու ընթերցողներին ծանոթացնել և գիտակցել տալ նոր ժամանակի պահանջները:



305 Ռազմական, զինվորական ու տեխնիկական բնագավառների շուրջ հայատառ թուրքերեն գրականության համարյա բացակայությունը արդյունք է այն բանի, որ ռազմա-տեխնիկական ուսումնարաններում հայեր գործնականորեն չէին ընդունում: Ուսուցչա-դասախոսական կազմում կային հայեր, որոնք կրթություն էին ստացել եվրոպական համալսարաններում: Ռազմատեխնիկական դպրոցներում հայ մասնագետների ծառայություններից օգտվում էին, որպեսզի կադրեր պատրաստեն Օսմանյան բանակում: Այս ոլորտում ծառայող հայերը հիմնականում զինվորական բժիշկներ են եղել: Սեփական, թուրք զինվորական բժիշկների սերնդի աճից հետո՝ հայ բժիշկների ծառայությունները խստագույնս մերժվեցին: Ազգային փոքրամասնությունների նման իրավիճակն այս բնագավառներում, բնականորեն բացառում էր հայատառ թուրքերեն գրականության ստեղծումն այս շրջանակներում:

Գլուխ Ը

Հայաստանի թուրքերեն դրամատուրգիան և հայկական թատրոնը Թուրքիայում (19-րդ դարի կեսերից -20-րդ դարի սկիզբը)

Հայաստանի թուրքերեն գրականության մի խոշոր հատված իրենից ներկայացնում է թարգմանություններ՝ կատարված թատրոնի համար: Այդպիսի ստեղծագործությունների թիվը հասնում է մոտ 500-ի ³⁰⁶: Իհարկե, դրանց մեծ մասը չի հրատարակվել, սակայն այդ պիեսները ներկայացվել են ավելի քան հարյուրավոր անգամներ: Այնուամենայնիվ, հրատարակված չլինելով հանդերձ, այս գրականությունը նշանակալի դեր է խաղացել Օսմանյան կայսրության ժողովուրդների հոգևոր զարգացման գործում: Այդ բեմադրություններից շատերն ավելի կարևոր են եղել, քան հրատարակված որոշ ստեղծագործություններ: Չպետք է անտեսել այն հանգամանքը, որ կայսրությունում անգրագետների ու օսմաներեն կարդալ չիմացողների թիվը հսկայական է եղել, իսկ զարգացած ու թուրքերենին տիրապետողների թիվը՝ սահմանափակ: Դրանք բոլորը միասին դիտել և հասկացել են բեմում հնչող թուրքերենը: Այս առթիվ արժե հիշատակել թուրք նոր գրականության հիմնադիրներից **Նամըք Քեմալի** մի արտահայտությունը, թե՛ «Թատրոնը զվարճություն է, սակայն զվարճություններից ամենաօգտակարը» ³⁰⁷:

Սկզբում, 19-րդ դարի առաջին տասնամյակներին ներկայացումների գաղափարախոսությունը դուրս չէր գալիս քրիստոնեական հավատքի, չարին չհակաճառելու, կյանքի անհաջողությունների նկատմամբ հանդուրժողականության ցուցաբերման բարոյախոսությունից: 1870-ական թվականներին, սոցիալական հարաբերությունների սրումը հանգեցրեց նրան, որ թատերական կոնֆլիկտները բեմում այլ ըմբռնում ու իմաստավորում ստացան: Հայաստանի թուրքերեն ներկայացումների աշխարհագրական շրջանակը շատ ընդարձակ է: Այս պիեսները խաղացվել են Վենետիկի ս.Ղազար կղզում, Մխիթարյան միաբանության Մուրադ-Ռաֆաելյան դպրոցի բեմում ³⁰⁸ ծնողների համար կազմակերպվող տարեկան հանդիպումների ժամանակ, Ջնյունիայում, Կ.Պոլսում, Տրապիզոնում, Էրզրումում, Արևմտյան Հայաստանի այլ քաղաքներում ու գավառներում, լեհահայ գաղթավայրի քաղաքներում (հայ դպրոցների բեմերում), Քիչինևում, Հնչեսթում ³⁰⁹, Թիֆլիսում, Բաքվում (վերջին երկու քաղաքներում՝ հայաստան աղբյուրներում) և շատ ու շատ այլ քաղաքներում:

306 Միայն ըստ Մեթին Անդի ցուցակի, հայկական թատերախմբերի կողմից թուրքերեն լեզվով խաղացվել են 366 պիեսներ: Steu`Metin And. Tanzimat...s. 454-462.

307 Türk Dili. 1966, çilt XV, s. 178, 699. /Celal Mukaddemesi, 1885.

308 Մխիթարյանների դպրոցական թատրոնի մասին տես՝ Գ.Ստեփանյան, Ռուվազիժ... հ.Ա, Երևան, 1962, էջ 93-115:

309 Մոլդավիայի ժամանակին հայաբնակ այս վայրում է գտնվում օսմանյան և ռուսական դիվանագիտության ամենահայտնի դեմքերից Մանուկ Միրզայանի (1769-1817) ապարանքը, որն այսօր թանգարանի է վերածվել և երկրի լավագույն տեսարժան վայրերից է:

Առաջին հայացքից կարող է տարօրինակ թվալ, որ 1830-ական թվականներին Մխիթարյանները թարգմանել են և անգամ տպագրել հայատառ թուրքերենով պիեսներ: Ոչ մի արտառոց բան չկա դրանում: Ծեմարանականները հիմնականում կաթոլիկ ընտանիքների զավակներ են եղել և հիմնականում՝ թրքախոս: Մյուս կողմից, հայտնի է, որ Մխիթարյանների դպրոցներում (լինի այն Վենետիկում, Կ.Պոլսում, թե մի այլ տեղ) թատերական ներկայացումները սովորաբար տրվում էին դպրոցական ավարտական շրջանի տոնախմբությունների ժամանակ: Այդ ներկայացումներին հրավիրվում էին ծնողները, Վենետիկ ժամանած առևտրականներն ու գործարար անձիք՝ որոնք ևս տիրապետում էին թուրքերենին: Ահա թե ինչու, դեռևս 1831 թվականին Մխիթարյանները հայատառ թուրքերենով հրատարակեցին իտալացի հայտնի լիրիկ, դրամատուրգ Պիետրո Մետաստազիոյի դրամատիկական երկերի մի սովոր հատորը՝ «Մետաստազիո բանաստեղծի մի քանի հոգևոր դրամաները» վերնագրով³¹⁰: Այն՝ ժամանակի մեծագույն երաժշտական դրամայի ներկայացուցիչ «Սրբազան գործողություններն» էին՝ «Աբելի մահը», «Իսահակը՝ Հիսուսին օրինակ», «Հովսեփ Գեղեցիկ», «Հիսուսի չարչարանքները» պիեսներն էին, որոնք ժամանակին առատորեն բեմադրվում էին եվրոպական բեմերում, կաստրատ երգիչների ամենահայտնի շրջանում: Աստվածաշնչական այս բոլոր պատմությունները ներկայացվում էին կաթոլիկական մեկնաբանությամբ: Այս գրքի վերահրատարակություններն ապացույց են այն բանի, որ այն հետաքրքիր նյութ է հանդիսացել ինչպես ընթերցանության, այնպես էլ առանց երաժշտության բեմում ներկայացնելու համար: Գրքի թարգմանիչն էր **Հովհաննես Երեմյանը**: Կովկասում այս երկերն արդեն հայերեն էին թարգմանվել ու հրատարակվել Ներսիսյան դպրոցի ուսուցիչ և տեսուչ **Հակոբ Կարենյանի** կողմից:

Թուրք թատրոնի պատմաբան **Մեթին Անդն** իր մի հոդվածում անդրադառնում է Մետաստազիոյի մխիթարյանական հրատարակությանը: Նա նշում է, որ Մետաստազիոն լինելով ընտրյալների ցուցակում՝ միշտ խաղացվել է ու անվերջ հրատարակվել: Դեռևս 1828 թ Ստամբուլում **Գրիգոր Փեշտիմալճյանի** կազմակերպությամբ դպրոցում ներկայացրել են **Մետաստազիոյի** «Օլիմպիական»-ը, 1836թ.-ին մի այլ դպրոցում՝ **Գուրոնիի** «Լա Լոքանթիեռան»:

Հայտնի է, որ մխիթարյանների կողմից թարգմանվել, փոխադրվել ու տեղայնացվել են ուրիշ շատ պիեսներ, որոնք խաղացվել են նրանց դպրոցական թատրոնի բեմում: Առանց մանրամասնությունների մեջ խորանալու, նշենք մի կարևոր փաստ: Մխիթարյաններն առաջինն էին, որ իրականացրին նկարագարդ տեքստերի, կոմիքսների թարգմանությունները ֆրանսերենից և իտալերենից: Դպրոցական թատրոնում ներկայացնելու համար նրանք թուրքերեն են թարգմանել անգամ կրոնական չափանիշներին ոչ այնքան հարիիր Մոլիերի գործերը: Դրանց թվում է եղել «Ակամա բժիշկը»: 1813թ. այն հայատառ թուրքերեն է թարգմանել **Ա. Անթիմոսյանը**: Մխիթարյանների դպրոցական թատրոնների համար նախատեսված թարգմանություններն ու հրատարակությունները ներկայացվում էին նաև Կ.Պոլսի մխիթարյանների դասարաններում: Այդ շրջանում

310 Այն վերահրատարակվել է 1839,1859 թվականներին:

թուրքերեն ներկայացումներ են կազմակերպվել նաև հայ ամիրայական տներում³¹¹, նրանց մի քանի հայտնի սալոններում:

Մեծ է եղել դերասանապետ **Սրապիոն Հեքիմյանի** ծառայությունը հայաստան թուրքերեն պիեսների բեմադրման, նրանց գաղափարական նոր բովանդակությամբ հագեցնելու և ընդհակառակը՝ կրոնական կաշկանդումներից ձերբազատելու գործում: Հայտնի է, որ 19-րդ դարի 50-ական թվականների կեսերին ծնունդ առան Կ.Պոլսի թաղային թատրոնները: Դրանց նախաձեռնողները հիմնականում Մխիթարյան վարժարանների շրջանավարտներն էին: Ազգային մտավոր վերելքի շրջանում, առաջադեմ գաղափարների ազդեցության տակ նրանք իրենց գրական-մշակութային գործունեությամբ մերժեցին մխիթարյանների գաղափարական ավանդույթները: Կրոնա-խրատական ու բարոյախոսական թեմային նրանք հակադրեցին եվրոպական և ինքնուրույն պիեսները, ուր արտացոլվում էին ազգային ազատագրական պայքարի և սոցիալական վերափոխումների անհրաժեշտության շուրջ ժամանակակից խնդիրներ: Այս խանդավառության արդյունքում հիմք դրվեց Կ.Պոլսի Օրթաքոյ թաղի թատերախմբին՝ **Մկրտիչ Պեշկեպաշյանի** ղեկավարությամբ, Խասքոյում՝ **Գ.Չափրաստյանի և Մ. Մնակյանի**, իսկ Պերա թաղամասում՝ **Ս.Հեքիմյանի** ղեկավարությամբ: Պերա հարուստ թաղամասում թատերական ներկայացումները տեղի էին ունենում **Նաում եղբայրներին** պատկանող թատրոնի շենքում: Քանի որ թուրքական կառավարության կողմից արգելված էին հայկական ներկայացումները քաղաքի կենտրոնում, Պերայում, ուստի Սրապիոն Հեքիմյանի խումբը 1856 թվականից ստիպված էր թուրքերեն ներկայացումներ տալ: Սկզբում ներկայացումները թուրքերեն էին, հետո՝ իտալերեն, ֆրանսերեն: Հայերեն գրված պիեսներն անգամ թարգմանվում, վերածվում էին հայաստան թուրքերենի կամ իտալերենի: Հետագայում, թույլտվություն ստանալով նա կարողացավ նաև հայերեն լեզվով ներկայացումներ կազմակերպել: Այս շրջանում Ս.Հեքիմյանը մի շարք կատակերգություններ ու մեղոդրամներ է թարգմանել ֆրանսերենից և իտալերենից՝ հայաստան թուրքերենի և 1857 թվականին ներկայացրել Նաումի թատրոնում թուրքերեն լեզվով: Պոլսահայ «Մասիս» թերթի վկայությամբ այս թատերախումբը մի ամբողջ տարի պարբերական ներկայացումներ է տվել: Նկատի ունենալով կատակերգության ուժը, ջանացել է այդ միջոցով ազդել հասարակության վրա, զբաղեցնել նրան, լուսավորել, օգնել դուրս մղելու հասարակության մեջ եղած վատ սովորությունները: Եվ այդ ամենն՝ օտար ժողովուրդների սովորությունների ցուցադրությամբ: Հողվածագիրը շարունակում է, որ Սրապիոն Հեքիմյանը թարգմանելով այս գործերը, ջանում էր աստիճանաբար դաստիարակել իր հանդիսատեսներին, որպեսզի մի սքանչելի օր կարողանա այս ներկայացումների բովանդակությունն ու լեզուն դարձնել իր ազգայինը³¹²:

Անկասկած, Ս.Հեքիմյանի կողմից թուրքերենով բեմադրվել են առնվազը 5-6 պիեսներ և հայ մամուլի կողմից դրանց չանդրադառնալը երևի թե թուրքերեն լեզվով բեմադրված լինելու պատճառով է, ինչպես նաև հայերեն ներկայացումների սպասումով: Վերջինս իրականություն դարձավ 1860 թվականին: Հայաստան թուրքերեն երկու կատակերգու-

311 Metin And. Gedikpaşa Tiyatrosundan Önceki Türkçe Oyunlar. Türk Dili. 1966, N 178, s. 681 .

312 «Մասիս», 1858, Կ.Պոլիս, հոկտեմբեր և «Մասիս», 1959, մարտի 5.

թյունների անուններ մեզ են հասել շնորհիվ մի ծրագրի³¹³: Դա **Մուլիերի** «Պարոն դը Բուր-տոնյակն է» և «Համեստության վարձատրումը»:

Թուրք պատմաբան և թատերագետ **Ռեֆիկ Ահմեդը** թուրքական առաջին ներկայացումները համարում է 1857 թվականին Սրապիոն Հեքիմյանի թատերախմբի կողմից Նաում եղբայրների թատրոնում **Գուլդոնիի** «Փայտե սուր» և «Դոն Գրեգորիո» ներկայացումները: Այս նշանակալից ներկայացմանը մասնակցել է սուլթան Աբդուլ Մեջիդը³¹⁴:

1861 թ. դեկտեմբերի 14-ին հիմնադրվեց «Արևելյան թատրոնը»: Բացի մի քանի թուրքերեն կատակերգություններից և «Փունչինելլո»-ից, հիմնական ներկայացումները տրվում էին հայերեն լեզվով: Երկու թատերաշրջան անց խումբը քայքայվեց և դերասանները Սրապիոն Հեքիմյանի գլխավորությամբ մեկնեցին հյուրախաղերի Չմյունխա, ուր փայլուն թատերաշրջան անցկացրեցին: Հայերեն լեզվով բեմադրվել են սուկ ողբերգությունները, իսկ մելոդրամները՝ հայերեն և թուրքերեն: Կատակերգությունները ներկայացվել են երեք լեզվով՝ հայերեն, թուրքերեն և հունարեն: Այստեղ շատ ավելի թուրքերեն ներկայացումներ են խաղացվել, քան՝ Պոլսում: Թուրքերեն ներկայացումների թվում են եղել հայտնի «Փունչինելլո»-ն, Գուլդոնիի «Դոն Գրեգորիոն»³¹⁵, Մուլիերի «Ակամա բժիշկը» և «Ժորժ Դանդեն», մելոդրամներից՝ «Դոն Մեզար դը Բազանը» և այլն: Փաստորեն թատերախմբի 1864 թվականի խաղացանկում եղել են 10-15 թարգմանական կատակերգություններ ու մելոդրամներ հայատառ թուրքերենով:

Կան փաստեր, որ այս ստեղծագործությունների թարգմանությունները կատարվել են Սրապիոն Հեքիմյանի, **Մարտիրոս Մնակյանի**, **Աբրահամ Նարինյանի** և մյուսների կողմից: Այս պիեսները հետագայում ևս բազմիցս խաղացվել են տարբեր թատերախմբերի կողմից, իսկ մի քանիսը տպագրվել են:

Թուրքերեն պիեսների թիվն անհամեմատ անել է **Հակոբ Վարդույանի (Գյուլի Հակոբի)** «Օսմանյան թատրոնի» գործունեության տարիներին: Սա առաջին թատերախումբն է եղել Թուրքիայում, որ թուրքերեն պարբերական ներկայացումներ է տվել: Եթե Ս.Հեքիմյանի և մյուսների թատերախմբերում թուրքերեն ներկայացումները տրվում էին դեպքից դեպք, ապա պետական մենաշնորհի ստացած և կառավարական հովանավորություն վայելող «Օսմանյան թատրոնի» մեծ թատերախումբը շաբաթական 3-4 թուրքերեն ներկայացում պետք է տար: Համաձայն **Գառնիկ Ստեփանյանի**, **Մեթին Անդի**, **Ահմեդ Ֆեհիմի**, **Սելիմ Նուզեթ Գերչեկի**, և մյուս թատերագետների բերած փաստերի, Վարդույանի թատրոնում 10 տարվա ընթացքում խաղացվել է ավելի քան 200 պիես թուրքերեն լեզվով: Դրանց թվում շատ կան 1-2 գործողությամբ ողնիլներ, ֆարսեր, որոնք խաղացվել են սովորաբար մելոդրամներից հետո՝ հանդիսատեսներին զվարճացնելու համար³¹⁶:

313 Ե-Չարենցի անվ. գրականության և արվեստի թանգարան, Ս.Գավթյանի ֆոնդ, 1856-1857թթ.

314 Refik Ahmed. Türk Tiyatrosu Tarihi. İst., 19344 s. 17.

315 «Դոն Գրեգորիո»-ի փոխադրությունը կոչվում էր «Հոջայի անհանգստությունը» (Hocanın Telâsi).

316 Թուրքական թատրոնի մասին իր ուսումնասիրության մեջ (Thalasso Adolphe. La revue Théâtrale; numero special sur le Théâtre turc. Paris.1904. N 6) Արուֆ Տալասսոն ճշմարտացիորեն նկատում է, որ՝ եթե եվրոպական թատրոններում մեկ պիեսը բեմադրվում էր ավելի քան 100 անգամ, ապա այստեղ (խոսքը պոլսահայ թատրոնների մասին է-Հ.Ս.) հանդիսատեսն նույն պիեսը դիտելու էր գնում 3-5 անգամ, ոչ ավելի: Հետևաբար, Գյուլի Հակոբի թատերախմբի համար (Հակոբ Վարդույանի) անհրաժեշտ էր ունենալ անհամեմատ ավելի մեծ խաղացանկ, քան՝ ֆրանսիական

Մեթին Անդն իր «Թուրքական թատրոնը 1839-1923թթ» աշխատության մեջ ներկայացնում է մանրամասն ցուցակը գրաքննության կողմից պաշտոնապես արգելված գրքերի ու ներկայացումների³¹⁷: Որքան էլ որ տարօրինակ է, այս ցանկում գտնում ենք **Տիգրան Չուխաճյանի** «Լեպլեպիճի Հոր Հոր աղա», «Բյոսե Քեհյա», «Արիֆ» օպերետները: Արևմտաեվրոպական գրականությունից հանդիպում ենք Վ.Հյուգոյի «Անժելո Մոլիբերի», **Ալ.Գյումայի** «Կոմս Մոնթե Քրիստո», **Ռոբայի** «Երկու հիսնապետեր» և մի շարք այլ հեղինակների երկեր: Այդ ցուցակում են հայտնվել «Կատրին Հովարդ», «Ժան Մարի», «Մի կնոջ տանջանքները», Ժիրոֆլե-Ժիրոֆլյան» և այլն: Ամենազարմանալից այն է, որ արգելվածներ են համարվել «Թահիր և Չուհրա», «Լեյլի և Մեջնուն» և մյուս սիրավեպերը: Մեթին Անդի վկայությամբ ընդարձակ այդ ցուցակի կազմողների արգելքը մեկնաբանվել է հետևյալով՝ «այդ ստեղծագործությունները հարիր չեն իսլամին ու նրա ավանդույթներին և քաղաքական տեսակետից վնասակար են հասարակական գիտակցությանը» և այլն: Նույնիսկ մի քանի արտոնված պիեսներ, ինչպիսին էր օրինակ Վ.Հյուգոյի «Ռյուի Պլաս»-ը, մանրակրկիտ կրճատումների է ենթարկվել և հնարավոր վտանգ ներկայացնող հատվածները հանվել են: «Մեղքեր» չունեցող մի քանի պիեսներ են մնացել, որ կարելի էր բեմադրել մինչև 1890 թվականի վերջերը: Հետագայում դրանք անգամ արգելվել են, որոնց մեջ այնպիսի անմեղ պիեսներ, ինչպիսին է Քսավիե դը Մոնթեսյենի «Մոմե արձան շինողները»: Համիդյան շրջանի գրաքննական խստություններին են մվիրված բազմաթիվ հոդվածներ, որոնք լույս են ընծայվել դեռևս 1898-1899 թվականներից, մասնավորապես Ստամբուլում հրատարակվող ֆրանսերեն «Agens Ottomane-L'Orient» թերթի էջերում³¹⁸: Հայկական թատերախմբերի աշխատանքային լեզուն այս շրջանում եղել է հայաստան թուրքերենը:

ամենամեծ թատրոնի համար: Այսպես, 1874-1875 թվականների թատերաշրջանում խաղացվել են 80 կատակերգություններ, 10 ողբերգություններ, 44 դրամաներ, 28 ինքնուրույն և տեղայնացված պիեսներ (հայ և թուրք հեղինակների), 10 օպերետ և ողևիլ:

Հակոբ Վարդուկյանի բատրոնի (1868-1882) գոյության առաջին տասնամյակում՝ 1869-1879թթ. խաղացվել են 200 պիեսներ և տրվել մոտ 1000 ներկայացումներ հայերեն և թուրքերեն լեզուներով:

317 Metin And. Tanzimat...s. 246.

318 N.Nicolaides. "Agens Ottomane-L'Orient" 7.9.1898; N.Nicolaides."Agens Ottomane-L'Orient" 11.1.1899; N.Nicolaides. "L'Orient" 9.2.1901. Այս խնդրի շուրջ թուրքական գիտական ամսագրերում վերջին տարիներին հրատարակված հոդվածներից իմանում ենք այն բնագավառները, որոնց նկատմամբ գրաքննությունը հատուկ ցուցումներ է ունեցել: Դրանք վերաբերվել են և՛ կայսրության ներքին կյանքին, և՛ արտաքին հարաբերություններին: Ընդ որում, խոսքը վերաբերում է նաև եվրոպական երկրներում կառավարությունների և այդ երկրներում գործող կուսակցությունների փոխհարաբերություններին, քաղաքական տարբեր իրադարձություններին, տնտեսական տարբեր խնդիրներին, այս կամ այն իրադարձության մասին թերթերում չլուսաբանելուն և այլն: Գրաքննությունը բացի հիմնական կողմնորոշումներից, ամենօրյա ցուցումներ է տարածել այս կամ այն դեպքի չլուսաբանման մասին: Դրանք վերաբերել են թե՛ կենցաղային խնդիրներին, լինի դա ինչ որ կնոջ կողմից տրված կեղծ ցուցումների հետևանքով անմեղ մի մարդու նկատմամբ իրագործված անարդար մահապատիժ, թե՛ գնացքների վթարի մասին հաղորդագրությունները դադարեցնելու կամ՝ թուրքական նեղուցներով գերմանական առևտրական նավի դեպի Սև ծով անցնելու թուրքական կառավարության կողմից տրված թույլտվության փաստի մասին չարձագանքելու, արտասահմանյան երկրների ղեկավարների մասին կատակների կամ ծաղրանկարների հրապարակումն արգելելու վերաբերյալ: Նույնիսկ հատուկ ցուցումներ են եղել թերթերի շարվածքների, տողադարձերի, ազատ տարածություններ, տողեր չթողնելու մասին և այլն: Այս մասին տես՝ Orhan Koloğlu. II Abdülhamit Sansürü. "Tarih ve Toplum".1987.ocak, 14-18ss; Alpay Kabacalı. "Milli Şef" Döneminin Örtülü Sansürü. "Tarih ve Toplum".1987.ocak, 19-21ss.

Կ. Պոլսում այդ տարիներին հրատարակվում էին 40 անունից ավել հայատառ թուրքերեն պարբերականներ, որոնք թուրք առաջադեմ մտավորականության շրջանում որոշակի թվով բաժանորդներ ու ընթերցողներ են ունեցել: Նրանցից շատերը համագործակցել ու թղթակցել են այդ պարբերականներին: Հայատառ թուրքերենը մեծ մասսայականություն էր վայելում կայսրության թրքախոս բոլոր ժողովուրդների, այդ թվում նաև թուրքերի շրջանում և գործնական մեծ նշանակություն ուներ, ուստի հայատառ թուրքերենի օգտագործումը թատրոնում՝ որևէ բարդություն և հակազդեցություն չէր առաջացնում, անկախ հեղինակի կամ թարգմանչի որ ազգությանը պատկանելուց: Հարկ է խոստովանել, որ Հակոբ Վարդովյանի թատրոնում թուրքերեն ներկայացված ոչ բոլոր պիեսներն են առնչվում հայատառ թուրքերեն գրականության, մասնավորապես թարգմանությունների հետ: Դրանք թուրք հեղինակների ինքնուրույն գործերն են կամ նրանց կողմից կատարված թարգմանությունները, փոխադրությունները, տեղայնացումները:

Ինչպես³¹⁹ է կայացել թուրք հեղինակների ու հայ թատրոնի համագործակցությունը: Ի սկզբանե հայ թատրոնները գործել են սեփական ուժերով: Սակայն այլ է եղել «Օսմանյան թատրոնի» դեպքում: Մեկ թատերաշրջանի ընթացքում բեմադրվել են մոտ 170 տարբեր ներկայացումներ: Բնականաբար այդպիսի ընդարձակ խաղացանկի համար անհրաժեշտ էր ունենալ դրամատուրգների, սցենարիստների, թարգմանիչների մի ամբողջ բանակ: Ահա այս նպատակով Հ.Վարդովյանը թատրոն է ներգրավել ոչ միայն հայ, այլև թուրք երիտասարդ մտավորականությանը: Հ.Վարդովյանի «Օսմանյան թատրոնի» հետ համագործակցության շրջանը թուրք երիտասարդների մի կարևոր հատվածի համար ճակատագրական նշանակություն է ունեցել: Հետագայում նրանք լրջորեն տարվել են գրականությամբ, հատկապես թատերական դրամատուրգիայով: Դրան մեծապես նպաստել է այն հանգամանքը, որ Հ.Վարդովյանը ծախսերի առջև երբեք կանգ չի առել, եթե այն վերաբերվել է թատրոնին:

Հայկական թատերախմբերի հետ համագործակցած թուրք մտավորականների ցանկն իրենից ներկայացնում է թուրք նոր գրականության դասականների, լուսավորիչների համարյա լրիվ ցուցակը: Այն է՝ **Նամըք Քեմալ, Ահմեդ Միդհատ, Շամսեդդին Սամի, Էբուզգիյա Թեֆիկ, Ռաջափզադե Էբրեմ, Ալի Հայդար, Հասան Բեդրեթթին, Աբդուլհակ Համիդ** և շատերը: Բացի նյութական կողմից³¹⁹, թատրոնը թուրք լուսավորիչներին գրավել է նրանով, որ հենց թատրոնի միջոցով է հնարավոր եղել արտահայտել իրենց ամենամեծ երազանքները և թուրք առաջադեմ մտավորականության տրամադրությունները:

Ընդհանրապես ուլքե³⁰ր են եղել 19-րդ դարի թուրք լուսավորիչները: Թուրք և թուրաքացած ընտանիքների երիտասարդներ, հարուստ խավի ժառանգներ, որոնք տարբեր նպատակներով (հիմնականում սովորելու կամ դիվանագիտական ներկայացուցչություններում աշխատելու) մեկնել էին Եվրոպա, ապրել այնտեղ որոշ ժամանակ, գիտեին լեզուներ, անհագորեն կլանում էին տեսածը, սովորածը, զգացածը: Թուրքիայի նման հետամնաց, արևելյան հեքիաթային կոլորիտից միանգամայն հակառակ բևեռ ընկնողների նման բազմաթիվ դժվարամարս երեւույթներին հանդիման: Նրանցից ոմանց Եվ-

319 Օրինակ, Էբուզգիյա Թեֆիկը յուրաքանչյուր ներկայացումից ստացել է 30 ոսկի, իսկ Նամըք Քեմալն իր «Հայրենիք կամ Միլիտար» պիեսի համար մեկ շաբաթվա ընթացքում վաստակել է 250 ոսկի, որն այդ ժամանակների համար զգալի գումար է եղել: Ste Metin And. Tanzimat...s. 273.

րոպայում անցկացրած տարիները համընկան մի քանի աշխարհացունց դեպքերի հետ: Դրանցից ամենակարևորն իհարկե ֆրանսիական հեղափոխությունն էր, որին ակամա ականատես եղավ, մասնակցեց թուրք լուսավորիչներից Նամըք Քեմալը: Նույն եվրոպական երկրներում, մասնավորապես Փարիզում մեծ էր Արևելքի նկատմամբ բազմակողմանի հետաքրքրությունն ու շահագրգռվածությունը: Հրատարակվում էին Թուրքիայի մասին գրքեր, իսկ պարբերականներում քննարկվում էին Կայսրության ներքին ու արտաքին քաղաքականության հարցերը: Բարձրաշխարհիկ խավերում երբեմն այս հետաքրքրությունը ծայրահեղությունների էր հասնում և նույնիսկ նորածնության մեջ անգամ գտնում իր արտահայտությունը: Փարիզյան նորածնության մեջ երկար ժամանակ իշխել են փետուրներով գլխավորողները, չալմայատիպ գլխարկները, հարեմի նմանությամբ մետաքսե հագուստները, տղամարդկանց շրջանում՝ երկար, շքեղ խալաթները և այլն: Եվրոպայում ապրած տարիներին այս ամենին վկա թուրք երիտասարդների համար ամենակարևորը եղել է 1848-ի ֆրանսիական հեղափոխության ազատության, արդարության, հավասարության, եղբայրության գաղափարներին ծանոթանալը: Նամըք Քեմալն իր «Քաղաքակրթություն» հոդվածում գրում է, որ մարդու իրավունքն ու նպատակը ոչ միայն սոսկ ապրելն է, այլ ազատ ապրելը:

Ազատության, հավասարության բացակայությունն արգելակում էր նաև տնտեսական առաջընթացին: Նույնիսկ եվրոպական կրթություն ստացած թուրք լուսավորիչներն ընդհանրապես մի կարևոր տարբերություն ունեին եվրոպական լուսավորական գործիչների համեմատությամբ: Ֆրանսիական լուսավորիչների գործունեության հիմքում ընկած էր պայքարը հանուն բանականության հաղթանակի, ընդդեմ միջնադարյան սխալաստիկայի, կղերական դոգմաների, որոնք արգելակում էին գիտության զարգացումը, բանականության առաջընթացը: Եվրոպայում այդ ռեակցիայի կենտրոնը կաթոլիկական եկեղեցին էր, գիտության ռահվիրաններին այրող, մարդկության պատմությանն ամոթ բերող ինկվիզիտորական շարժումը: **Վոլտերը, Գիլոթնը, Ռուսոն** ու մյուս լուսավորիչներն այդ միջնադարյան ամբողջ դեմ էին ուղղում իրենց նիզակները: Թուրքական կրոնական ռեակցիան նվազ չարիք չէր բերում մարդկությանը, բայց այլ էին պայմանները Եվրոպայում, այլ՝ մոլեռանդ մուսուլմանական Արևելքում, որտեղ Դուրանը խոր ազդեցություն ուներ հետամնաց, անգրագետ բնակչության վրա: Թուրքիայում լուսավորիչները կրոնը դիտում էին որպես թուրքական ազգի միասնության կարևոր օղակ: Նրանց գրգռում էին լոկ կրոնի սպասավորները ու կրոնական նախապաշարումները: Այս ամենով հանդերձ՝ լուսավորական շարժումը Թուրքիայում իր հիմքում հակաֆեոդալական էր և լուսավորական գաղափարները նրանց համար երկրի հետագա ճակատագրի, նրա պատմական զարգացման հնարավորությունների իրականացման ձգտումներն էին: Իրենց նպատակին հասնելու հիմնական ուղիներից եվրոպական գաղափարների ներթափանցումն էր գրականության, թատրոնի միջոցով:

Արևմտահայ հասարակական կյանքում գոյություն ունեցող վեճերի, հակասությունների հանգուցակետը դավանական, գերազանցապես հայ լուսավորչականների ու հայ կաթոլիկների միջև բորբոքվող պայքարն էր: Թատրոնի հանդես գալուց հետո պայքարի մի մասը տեղափոխվում է բեմ: Ապաստանացում քարոզող հասունյանական շարժ-

ման դեմ պայքարի մի նոր ճակատ էր թատրոնը: Սուր, դաշույն, թույն՝ սրանք էին ֆրանսիական և իտալական մելոդրամների գործողությունների առանցքը, իսկ հիմքում ընկած էր համամարդկային բարոյախոսությունը չարի ու բարու պայքարի մասին:

Թուրք թատրոնի պատմաբան Ռեֆիկ Ահմեդը իրավացիորեն նկատում է, որ Վարդոյանի թատրոնն արժանի է ուշադրության որպես թուրքական գրականության ձևավորման կենտրոն³²⁰: «Օսմանյան թատրոնի» խաղացանկում հաշվվում է մոտ 60 պիեսներ, որոնց ներկայացման աշխատանքներում այս կամ այն չափով ներգրավված են եղել թուրք հեղինակները: Նախ և առաջ դրանք թուրք գրողների մոտ 20 ինքնուրույն ստեղծագործություններն են եղել, որոնք գրվել են հատուկ Վարդոյանի թատրոնի համար, նրա պատվերով: Միաժամանակ դրանք հանդիսանում են թուրք նոր գրականության դասականների ամենահայտնի ստեղծագործությունները: Բնականաբար բոլոր այս պիեսները հայատառ թուրքերենի վերածվելուց հետո են միայն տրվել ռեժիսորին, դերասան-դերասանուհիներին: Այսուհանդերձ կարևոր նախապայման է հանդիսացել այն հանգամանքը, որ թուրք հեղինակների երկերը խաղացանկում ընդգրկվելու հնարավորություն են ունեցել միայն որոշակի որակի համապատասխանելու դեպքում³²¹: Թուրքական լուսավորիչների անունների առաջին տողում գտնվող լուսավորչի՝ Շինասիի (1826-1871) 1860թ. հակակղերական բովանդակությամբ գրված «Պոետի ամուսնությունը» բեմ է բարձրացել լոկ 1908 թվականին Սալոնիկում, այն էլ՝ սիրողական խմբի կողմից³²², մինչև մյուս թուրք հեղինակների հայրենասիրական գործերը, այդ թվում նաև Նամըք Քեմալի «Հայրենիք կամ Սիլիստրա» դրաման բեմադրվել են բազմաթիվ անգամներ: Վերջինիս պրեմիերային ներկա են եղել «Նոր օսմանների» միության անդամները և ներկայացումն ընդունվել է օվացիաներով:

Թատերական գերիազեցված կյանքը մեծ լարում և ինքնանվիրում էր պահանջում թատերախմբից, դրամատուրգներից: Նրանք հնարավորություն ունեին ստուգելու հասա-

320 Refik Ahmed. Türk Tiyatrosu Tarihi. İst., 1934 s. 23.

321 **Նամըք Քեմալ**-«Խեղճ երեխաներ», «Հայրենիք կամ Սիլիստրա», «Աբիֆ բեյ»: Ահմեդ Միդհատ - «Եվրոպական հին քաղաքակրթությունը», «Չերքեզները», «Հեյ վախ», «Չեյբեկները», «Գնչուհիները», «Գլխաբացը»:

Շամսեդդին Սամի - «Բեսա», «Ցուլը», «Սեյիդը»: Ռեջաիզադե Էբրեմ-«Հանդիպում», Աբրի Բեյը - «Գյուլնիսար» պիեսը: Հասան Վահիդ - «Անատոլիական գյուղացիները»: Ահմեդ Նեջիփ-«Ճենովական պատերազմ», «Ստեղծագործություն և հաջողություն», «Գող որդու խոստովանանքը»:

Ալի Հայդար -«Արգաս», «Փերվիզի արկածները», «Բամբակե աղջիկ»:

Հասան Բեդրեթթին -«Նմանակում»՝ գրված Մանասթըրլիի հետ միասին:

Մեհմեդ Ռիֆաթ -«Գալիլա», կատարել է 20 համատեղ փոխադրություններ:

Աբդուլհակ Համիդ -«Հինդուսի աղջիկը»: Ալի Բեյ -«Շատախոս սափրիչը», «Հյուրերին դուրս ուղեկցողը», ինչպես նաև մեծ թվով քարգմանություններ, տեղայնացումներ:

Մուսաֆա էֆ. Հ.Վարդոյանի հետ միասին գրել է «Լեյլա և Մեջնունը». (տես՝ Metin And. Tanzimat...s. 272; Refik Ahmed. Türk Tiyatrosu Tarihi. s. 23.):

Էմին Նիհատը - 1873թ. «1001 գիշերների» և «Գեկամերոն»-ի մնամողությամբ գրել է 12 մասից պատմվածքների գիրք:

322 Շինասիի առաջին քարգմանությունները թուրքացված փոխադրություններ են հանդիսացել, իսկ նրա բազմաթիվ գործերը՝ գրվել են կարդացած գրքերի ազդեցության տակ: Թարգմանել է Լաֆոնտեն, Ռասին, Լամարթին, Ֆենելոն: Տես՝ Refik Ahmed. Türk Tiyatrosu Tarihi. s. 29. Հայտնի է, որ Տիգրան Չուխաճյանը երաժշտություն է գրել Շինասիի 3 պիեսների համար:

րակության՝ իրենց մտքերի ու ծրագրերի նկատմամբ ունեցած վերաբերմունքը: Գահլիճի տրամադրությամբ ու մասնույի արձագանքներով կարող էին կողմնորոշվել, թե որքանով են իրենց եզրակացությունները համապատասխանում ժամանակի պահանջներին: Այս փորձությունը նպաստում էր, որպեսզի դուրս նետվեին բոլոր անպետք մտքերն ու անհաջող եզրահանգումները և ավելի հարթեցվեին գրական կարողություններն ու վարպետությունը: Հ.Վարդովյանը շատ ու շատ հետաքրքիր սյուժեներ է հուշել բազմաթիվ թուրք գրողների, հետաքրքիր գաղափարներ տվել, օգնել աշխատելու պիեսների բեմական կառուցվածքի վրա: Պիեսների վրա աշխատելու շրջանում այս սերտ համագործակցությունն իր շարունակությունն էր ունենում փորձերի ժամանակ: Վարդովյանի պատվերով շատ թուրք գրողներ թատրոնի համար փոխադրություններ, տեղայնացումներ և թարգմանություններ էին կատարում ³²³:

323 Բերենք թարգմանությունների համարյա լրիվ ցուցակը, որ կատարել են թուրք լուսավորիչ հեղինակները՝

Ահմեդ Միդհաս -թուրքական ամենաբեղուն գրիչներից մեկը, որ 25 հատորներ է թողել: Դրանք հիմնականում փոխադրություններ են, ինչպես օրինակ Դյումա որդու «Քամելիազարդ Տիկինը»: Նրա օպերետի վերածված «Չեյքեկները» բեմադրվել է 1882թ-ին:

Մեհմեդ Ռիֆաթ -«Գալիլա», կատարել է 20 համատեղ փոխադրություններ, այդ թվում Ահմեդ Միդհասի հետ՝ Սեդեհի «Միշել Ժան» և Էմիլ դը Ջինադինի «Կլեոպատրան»:

Շամսեդդին Սամի (1850-1904)-Հյուգոյի «Թշվառները» և Դ.Գեֆոյի «Ռոբինզոն»-ը:

Ռեջաիզադե Մահմուդ Էբրեմ (1847-1914) -Շատորբիանի «Աթալան» 1875թ, Սիլվիո Պելլկոյի «Բանտարկյալները», Ալխույժ Անժելիկը 1874թ:

Հասան Վահիդ - «Անատոլիական գյուղացիները»:

Ահմեդ Վեֆիկ Փաշան (1823-1891) -հայտնի բառարանագիր, թարգմանել է Ֆենելոնի «Տելեմաքը», Վոլտերի «Միկրոմեգան», Լը Սամի «Ժիլ Պլասը», Ե.Լեհմանի «Լիոնի աշտարակը», Հյուգոյի «Էռնանին», Շիլլերի «Ավագակները», Մոլիերից 34 կատակերգություններ: Այս ստեղծագործությունները միայն 1937 թվականին լատինատառի են վերածվել և 4 հատորով հրատարակվել:

Յուսուֆ Քյամիլ Փաշան (1808-1876) ևս անդրադարձել է Ֆենելոնի «Տելեմաքը»-ի թարգմանությանը:

Շաքիր Բեդրեթթին փաշան-Լըբոքի «Ժիրոֆլե-Ժիրոֆյան»: Հասան Բեդրեթթին փաշան՝ և Ռեֆաթ բեյը Շիլլերի Սեր և խարդավամը՝ 1875թ., Դյումայի «Անտուանը» 1875թ., Շեքսպիրի «Օթելլոն»: Մուալլիմ Նաջի (1850-1893) -Էմիլ Չոլայի «Թերեզա Ռաբենը»:

Ահմեդ Նեջիփ-«Ճենովական պատերազմ», «Ստեղծագործություն և հաջողություն», «Գող որդու խոստովանանքը»:

Ալի Հայդար -«Արգաս», «Փերվիզի արկածները», «Բամբակ աղջիկ»: Հասան Բեդրեթթին - «Նմանակում»՝ Մանասթրոլիի հետ միասին:

Ահմեդ Ռաշիդը (1870-1945) հունարենից թարգմանել է «Հերակլեսը», «Օլիմպիական թույն»: 1870-ական թվականներին թարգմանել է Ռասին, Վիրգիլիոս, Հոմերոս:

Աբդուլհակ Համիդ (1852-1937)-«Անառակը»-փոխադրությունը՝ Հյուգոյի Ֆանթինի ազդեցությամբ, իսկ Կոռնելի «Միդ»-ի հիման վրա գրել է «Նեսթերները»:

Համդի Բեյը -Էժեն Լաբիշի և Մարկ Սիշելի «Երկու վախկոտները» 1886թ.:

Մուստաֆա Ռեշիդ-ժյու Սանդոյի «Հարդագողի ճանապարհի (Երևակայությունը)՝ Երագանքը» 1887թ.:

Ալի Բեյ -«Շատախոս սավրիչը», «Հյուրերին դուրս ուղեկցողը», ինչպես նաև մեծ թվով թարգմանություններ,կատարել է տեղայնացումներ, ինչպես օրինակ՝ Մոլիերի «Սկապենի արկածները»: «Ժորժ Գանդեն» դարձել է «Թոսուն աղան»: Հ.Վարդովյանի հետ միասին գրել է «Թայյար գաղեն»: 1872 և 1874 թվականներին այն 32 էջով հրատարակվել է Ճեզվեճյանների տպարանում: (Մեր մատենագիտության մեջ հեղինակը նշված չէ):

Աբդուլհամիդ Ջիաթթին (Ջիյա Փաշան) Ռուսոյի «Էմիլը», Մոլիերի «Տարսյուֆը», որոնք լույս են տեսել հիմնականում նրա «Նամե Ի Ամալ» գրքույկում: Պատմական գործերից, ինչպիսիք են՝ Շերոլ ԼաՎալիեի «Անդալուզիայի պատմությունը», «Վիարդո»-ի թարգմանությունները, հրատարակվել

Թուրք հեղինակների որոշ գործեր էլ հեղինակի նշված լինելու պարագայում անգամ անհնար է ճանաչել աղավաղված բովանդակության կամ փոփոխված վերնագրերի պատճառով: Վերոհիշյալ թարգմանությունների մի մասն է միայն, որ կատարվել է թատրոնի համար: Թատրոնի համար պատվերները տարերայնորեն չեն կատարվել: Գոյություն են ունեցել փոքրիկ խորհուրդներ՝ կից հրատարակչություններին, թատրոններին, որոնք նախապես որոշել են թե ի՞նչ երկեր են թարգմանվելու: Եվրոպական մի շարք վեպեր հատուկ թարգմանվում էին պեսների վերածվելու նպատակով: Չմոռանանք ասել, որ թուրք գրողներին մեծապես օգնում էր այն հանգամանքը, որ երբեմն պատվիրված երկն արդեն թարգմանված և տպագրված էր լինում հայերի կողմից հայատառ թուրքերենով: Մնում էր միայն կրճատումներ կատարել և վերածել պիեսների, որն ամենևին էլ դյուրին գործ չէր:

Մեթին Անդր հիշում է թատրոնի հետ կապված հույն հայտնի լրագրող **Թեոդոր Քասապի** հետևյալ թարգմանությունները թատրոնի համար՝ Գյումա Ռոդի «Դրամի խնդիր» 1874թ., Հյուգոյի «Էռնանին» 1874թ., **Ռասինի** «Ֆեդրան» 1878թ., **Շեքսպիրի** «Վենետիկի վաճառականը» 1884թ., «Մի քաղաքի երաժիշտները»: Թուրք գրողների մի խումբ (Նամըք Քեմալ, Ահմեդ Միդհատ, Շամսեդդին Սամի, Էբուզգիյա Թեֆիկ, Ահմեդ Վեֆիկ և ուրիշներ), որոնք թատերական դրամատուրգիայի ասպարեզում հաջողության էին հասել և հեղինակություն վաստակել, իրենց արդեն ամրապնդված դիրքերից սկսեցին որոշումներ կայացնել, հայկական թատերախմբերի թուրքերեն ներկայացումների հետ կապված հարցեր լուծել: Այն է՝ խաղացանկի (հայերեն ու թուրքերեն) ընտրություն, թարգմանության որակի հարցեր, գրական նոր ուժերի ներգրավման խնդիրներ, թատերախմբերի քաղաքական համակրությունների վերահսկում:

Սուլթան Աբդուլ Ազիզին տապալելու, նրա հաջորդին՝ Մուրադին սուլթան դարձնելու և երկիրը սահմանադրական միապետություն հռչակելու կոչերը, որ արդյունք էին նաև թուրք լուսավորիչների, առաջադեմ մտավորականների և բնականաբար՝ հայկական թատերախմբերի հետ նրանց համագործակցության, չէին կարող անարձագանք մնալ պալատի կողմից:

1873 թվականի ապրիլին, Նամըք Քեմալի «Հայրենիք կամ Սիլիստրա» պիեսի բուռն հաջողությամբ անցած մի գիշեր ձերբակալվում և աքսորվում է Նամըք Քեմալը: Շուտով նույն ճակատագրին են արժանանում թատրոնին կապված մյուս թուրք գրողներից Ահմեդ Միդհատը, Էբուզգիյա Թեֆիկը՝ աքսորվելով Հռոդոս: Բայքայվում է գրական օջախը, իսկ Վարդույանի խաղացանկից դուրս են գալիս նրանց ստեղծագործությունները: Սուլթան Աբդուլ Ազիզի մահվանից հետո Սուլթան Մուրադի գահակալության կարճ ժամանակաշրջանում աքսորավայրերից վերադառնում են ազատամիտ գրողները և կրկին շրջապատում Վարդույանին:

են մահվանից հետո,

Սամի Փաշազադե Սեզային (1859-1936)- Մոպասանի նմանողությամբ գրել է իր «Փոքրիկ պատմությունները», «Լուկրեցիա Բորջան» 1875թ.:

Ահմեդ Ազիզը-Բ-դը Մոնթեպյենի «Մուլեն Ռուժ»-ը (1891թ.):

Մեհմեդ Մուրադը 1883թ. թարգմանել է հայատառ թուրքերենի Գրիբոյեդովի «Խելքից պատուհասը», որը պետք է բեմադրվեր Վարդույանի թատրոնում:

Ռուշեն Էշրեֆ Յունադըն (1823-1959)-Անդերսենի «հեքիաթները», Վիրգիլիուսի «Հովվական քանաստեղծությունները», Էմիլ Լյուդվիգի «Նապոլեոն օտարածինը»:

Թուրքական նոր գրականության գործիչներին ամենից ավելի մտահոգող և նրանց օրակարգային խնդիրներից էր ժամանակի պահանջները բավարարող գրական նոր թուրքերենի ձևավորման հարցը: Չնայած իրենց գործադրած ճիգերին՝ արաբիզմներով, ծեծծեքուն ոճերով հագեցված թուրքերեն նրանց ներկայացումները միշտ չէ որ հասկանալի էին հանդսատեսներին: Այս հանգամանքը հաճախ մամուլի հեղինակները էր շարժում:

Թուրք գրողներից կազմված հանձնախումբը ամեն կերպ ձգտում էր, որ Հ.Վարդովյանի թատերախումբը լավագույնս նպաստի թուրքական ազգային դրամատուրգիայի զարգացմանը: Թատրոնի հետ կապված բոլոր տեսակի հարցերը դառնում էին մամուլի քննարկման առարկա՝ լինի այն հայկական, թուրքական, ֆրանսիական, անգլիական, հունական և այլն: Մամուլի էջերում վեր էին բարձրացվում թատրոնի դերի ու նշանակության, հասարակական բարքերի ու հարաբերությունների վրա թատրոնի ունենալիք դրական ու բացասական ազդեցությունների, բեմական արվեստի զարգացման, կայուն թատերախմբեր պահելու, դերասանական նոր սերունդ պատրաստելու, բեմական ուրույն խաղառճ, լեզու, դրամատուրգիայի խնդիրների հետ կապված մասնագիտական և հասարակական լուրջ հետաքրքրություն ներկայացնող հարցեր: Դա՛ն նաև բեմի ու հանդիսասարահի, հեղինակի ու դերասանի փոխհարափարությունների հետ կապված հարցադրումներ էին:

Ժամանակի մամուլը հավաստիացնում էր ազգային օպերայի զարգացման անհրաժեշտությունը և հորդորում միջոցներ չխնայել դրա համար:

Հայերը որպես կանոն հաճախել են օպերային բոլոր խմբերի (հիմնականում հյուրախաղերի եկած իտալական և եվրոպական թատերախմբերի) ներկայացումները: Հայկական ընտանիքներում ընդունված էր իրենց զավակներին երաժշտական կրթության տալ իտալացիների մոտ: Չմյուռնիայում «Վասպուրական» թատրոնին կից ստեղծել էին օպերային խումբ, որը թարգմանաբար ներկայացնում էր իտալական խմբի ծրագրերի ժողովրդականություն վայելող հատվածները: Մամուլն առաջարկում էր խոստումնալից երիտասարդներ ուղարկել Եվրոպա՝ երաժշտական կրթություն ստանալու համար: Գալով Չմյուռնիայի «Վասպուրական» թատրոնի 1863-64 թվականի խաղաշրջանին, ապա 5 ամիսների ընթացքում 45 պիես է բեմադրվել, որոնց մի մասը՝ թուրքերեն: Ազգային ողբերգություններից հետո ամենից շատ ծափահարվել են թուրքերեն կատակերգությունները:

Պոլսահայ մամուլում առատորեն հրատարակվող հոդվածների առաջադրած պահանջկոտության և շահագրգռվածության մթնոլորտը մեծապես նպաստում էր նաև Վարդովյանի թատերախմբի մասնագիտական վարպետության աճին, որն ավելի բարձր էր, քան Օսմանյան սահմանադրության տարիներին:

Թուրքական թատրոնի պատմաբանների կողմից այս շրջանն ուսումնասիրվում է որպես թուրքական ազգային թատրոնի սկզբնավորման ժամանակաշրջան: Այն փաստը, որ դերասան-դերասանուհիները, ռեժիսորը հայեր էին՝ թուրք հեղինակները բացատրում են որպես կրոնական ֆանատիզմի արդյունք: 1858թ. սուլթանական պալատում թուրքերեն (հայաստան թուրքերեն պիեսների հիման վրա) բեմադրվել են «Դոն Գրեգորիոն», «Դոն Սեզար դը Բազան» և նա մի քանի պիեսներ, ինչպես վկայում են հայ և թուրք թատերագետները:

Հայտնի է, որ թուրք կինը այնպես էլ բեմ չբարձրացավ ընդհուպ մինչև հանրապետական կարգերի հաստատումը, 1923 թվականը: Ի վերջո, հայերեն ներկայացումների համար Վարդոյանին տրված թույլտվությունը կարծես փոխհատուցում էր թուրքական թատրոնի սկզբնավորման ու զարգացման գործում նրա ունեցած մեծ ավանդի համար³²⁴: Ծառայություն, որը միշտ էլ մեծապես գնահատվում է թուրք բանասերների և թուրքական թատրոնի պատմաբանների կողմից: Իրենց հիշողություններում հայերի դերին են անդրադարձել **Մուսսին Էրթողուլը, Նազիմ Հիքմեթը, Վասֆի Ռզա Չոբուն**: Թուրք դերասան և բեմադրիչ Վասֆի Ռզա Չոբուն նշում է, որ եվրոպական տիպի թուրքական թատրոնի հիմնադիրը եղել է Հակոբ Վարդոյանը: Իր հուշերում Վասֆի Ռզա Չոբուն հիացական էջեր է նվիրել **Մ.Մնակյանին, Քնար Սվաճյանին, Ռուբենին, Աղավնի և պրիմադորնա Էլիզ Պիննեմեճյաններին**³²⁵: Նրանց ներկայացումները տարբեր թուրքախոս ժողովուրդների՝ թուրքերի, հայերի, հույների, հրեաների, բուլղարների և այլոց հոգեկան մերձեցման գործոն են հանդիսացել:

Թուրք թատերագետներ Ռեֆիկ Ահմեդը, Մեթին Անդը և ուրիշներ արդարացիորեն նշում են, որ եթե չլիներ Հակոբ Վարդոյանի թատրոնը, նրա կողմից նյութական առատ վարձատրությամբ թուրք հեղինակներին տրվող պատվերները, ապա դժվար թե ստեղծվեր թուրքական դրամատուրգիան: Եվ եթե չլիներ Գյուլյու Հակոբը, ամենայն հավանականությամբ չէին լինի Նամըք Քեմալի, Ահմեդ Միդհատի, Ալի Բեյի կամ Շամսեդդին Սամիի նման դրամատուրգները³²⁶:

Լուսավորական շարժում, լուսավորիչներ, անգրագիտության վերացում, եվրոպական քաղաքակրթության ներթափանցում, ազատախոհական գաղափարներ, նոր գրական լեզվի ու գրականության զարգացում և այլն: Հանուն այս գաղափարների են գործել վերոհիշյալ թուրք մտավորականները, որոնք գրել, թարգմանել, փոխարդրել են եվրոպական դասականներին և ոչ միայն դասականներին, սակայն՝ օսմաներենով, պալատական բարձր խավին հատուկ ծեփծեքուն ոճով: Օսմաներեն լինելու փաստն ինքնին նվազագույնի է հասցրել այն մեծ աշխատանքի արդյունքը, որը կոչված էր լուսավորելու թուրք ժողովրդին, սնելու նոր գաղափարներով, նոր գրականությամբ, նոր ժանրերով, վերացնելու անգրագիտությունը: Այս գործերից թատրոնի համար պատվիրվածները միայն հնարավոր է եղել շտկել, ներկայացնել բեմում, նախապես այն հայատառ թուրքերենով ունենալով սեղանին: Մնացած դեպքերում նրանք գրել են այնպես, ինչպես սովոր են եղել ու կարողացել՝ կարողանալով հաղթահարել խոսակցական պարզ լեզվով ստեղծագործելու արգելքը: Իրենց ժամանակին՝ նրանք համարյա չեն ծառայել ժողովրդին: Այս գործերը տասնյակ տարիներ անց, հանրապետական շրջանում միայն թարգմանվել են ժամանակակից թուրքերենի և լատինատառ հրա-

324 Հակոբ Վարդոյանի փառքն այնքան մեծ է եղել, որ ամեն կերպ փորձեր են կատարվել նրան թուրքացնելու համար, ինչպես ժամանակին վերաբերվել են պալատական մի քանի սիրված հայ աշուղների կենսագրության հետ: Ansiklopedik Sözlük Ist 1967, N11, s.813-814-ում գրված է, որ 1884թ-ից Աբդուլ Համիդի պալատական թատրոնի ռեժիսորն է եղել, իբր մահմեդականություն ընդունել և Յակուբ Էֆենդի անվամբ մահացել: Գառնիկ Ստեփանյանն իր «Պատմության» մեջ հեքքում է այս փասը, նույնիսկ Վարդոյանի կողմից առերես իսլամի ընդունելը հավաստի չհամարելով:

325 Vasfi Rıza Zobu. O Günden Bu Güne. Ankara, 1977, s. 27-29.

326 Metin And. Tanzimat...c. 2. s. 449;

պարակ եկել՝ առաջին անգամ ծառայելով իրենց ժողովրդի լայն խավերին, դարձել թուրք ժողովրդի իսկական սեփականությունը:

Դեպի թուրք և թրքախոս հայ իրականություն ներհոսող այդ վիթխարի գրականությունը կոչված էր ծառայելու մարդկանց ընդհանուր ու մտավոր զարգացմանը: Այս հանգամանքը դուրս է բերել հայաստան թուրքերեն գրականությունը հայկական շրջանակներից, ստացել արևելագիտական նշանակություն: Թուրքերեն դյուրամարս լեզվով գրականություն հրամցելը ժողովրդին՝ միշտ էլ կարևորագույն մաս է կազմել թուրք լուսավորիչների երազանքների, նպատակների: Բնականաբար, թարգմանել Վոլտեր, Հյուգո, Շատոբրիան զուտ խոսակցական լեզվով՝ անհնար էր: Ուստի հասկանալի է հայ թարգմանիչների գործադրած ջանքերը՝ բարձրանալու դեպի գրական թուրքերեն, եվրոպական փոխառյալ բառապաշարի շնորհիվ ստեղծել բոլորին հասկանալի միջինը, որի հանրագումարում հայաստան թուրքերեն բոլոր հրատարակությունները, աննշան բացառություններով՝ ինչպես իրենց ժամանակին, այսօր էլ հասու են թուրքերեն իմացող բոլոր ազգերին ու ժողովուրդներին :

Ահա թուրք մշակույթի մի ասպարեզ ևս, որի մեջ դժվար է թերագնահատել հայ գրահրատարակիչների ու թարգմանիչների մեծ ծառայությունը: Թուրք բանասեր Թուրգութ Բուքն անդրադարձել է նաև հայաստան թուրքերեն թարգմանական վեպերին և նշում է այս ասպարեզում առավելագույնս բեղուն, բազմահատորյակների թարգմանիչներին, որոնցից են **Անտոն Ալիքը՝** 8 գործ, **Տիգրան Ադամյանը՝** 7, **Միհրան Պիտար Արապաճյանը՝** 7, **Կարապետ Փանոսյանը՝** 8, **Հովհաննես Թուլայանը՝** 13 գրական երկերի թարգմանություններ: Նա անդրադառնում է նաև ժողովրդական թուրքերենով (միշտ՝ հայաստան թուրքերեն հրատարակված) հայ հեղինակների վեպերին, որոնք կարդացել են թուրքերեն իմացող ժողովուրդների լայն շրջանակները: Թուրգութ Բուքն այս առթիվ նշում է Հովսեփ Վարդանյանի «Ագապին» և «Շատախոսը», հիշատակելով «Ագապիի» Գառնիկ Ստեփանյանի կողմից 1953 թվականին Երևանում հայերեն թարգմանության հրատարակությունը: Յուրաքանչյուր նշում են **Հովհաննես Բալլըքճյանի** «Գառնիկի, Կուլունյաի և Տիգրանի ասավոր մահը» (1863թ.), **Հովսեփ Մարուշի** «Թշվառ մի կինը» (1868թ.), **Վիլեն Թիլքիյանի** «Կուլունյա, կամ անտեսանելի աղջիկը» (1868թ.) վեպերը: Հոդվածագիրն անդրադառնում է Հովսեփ Վարդանյանի անձին, վեպի հիմնական նյութին՝ հայ առաքելականների ու կաթոլիկների միջև եղած պայքարին, անգամ այս վեպերի հրատարակության փորագրանկարներին: Թուրք գիտնականը 68 ամուն հայաստան թուրքերեն թարգմանություն է թվարկում, երբեմն նշելով, եթե այն թարգմանվել է նաև օսմաներեն, հայ թարգմանիչների կողմից ևս ³²⁷:

Ցանկանում ենք ներկայացնել լոկ 2-3 հայ թարգմանիչների մեզ հայտնի թարգմանությունների ցուցակն, առանց անդրադառնալու նրանց ինքնուրույն և հրապարակախոսական գործունեությանը, առանց թատրոնի համար կատարած նրանց գործերի:

327 Turgut Kut. Ermeni Harfleriyile Türkçe Telif ve Tercüme Romanlar. Victor Hugo'nun Mağdurin Hikayesinin Basılmış Nushası. İst1985.s195-214.

Պիտար Արապաճյանը թարգմանել է՝

1. Ժյուլ դը Կասսին, «Դանիելի գաղտնիքը». (1872թ.)- 500էջ.
2. Հատընտիր քանաստեղծություններ (1879 թ.) - 160 էջ.
3. Ալ.Դյումա, «Լորդ Բեկինգհեմի 7 համբույրները» (1888 թ.)- 360 էջ.
4. Հեկտոր Մալո, «Առանց ընտանիքի» (1890 թ.)- 400 էջ.
5. **Պոլ Ֆեկալ**, «Սերը փարիզում» (1890թ.)- 1119էջ.
6. **Հանրի Ֆրանսիսի**, « Ոճրագործության հետքով» (1891 թ.)-288 էջ.
7. Ժյուլ Վեռն, «20 000 լյո ջրի տակ» (1892 թ.)- 750էջ.
8. «Հազար ու մեկ գիշերներ» (1891թ.)- 1245էջ.
9. Ժյուլ Վեռն, « Խորհրդավոր կղզին» (1893 թ.)- 438 էջ.
10. Բրատել Ժորժ, «Ամերիկացին Փարիզում» և «Մառլո փողոցի սպանությունը» (1893 թ.)- 340 էջ.
- 11.«Ամերիկայի հայտնագործումը» (1893թ.)- 470էջ.
- 12.Բոնսոն դը Թերրայլ, «Գեղեցկուհի Անժելը» (1893թ.) 1200 էջ.
13. Ժյուլ Վեռն,«80 օր աշխարհի շուրջ» (1893 թ.)- 288էջ.
14. Ք. դը Մոնթեպեն, «13 համարի կառքը» (1894 թ.)-1300էջ.
15. **Էմիլ Գաբորիո**, «113-րդ գործը » (1895թ.)- 752էջ.
16. **Ա.դը Սագի**. «Հազար ու մեկ օր» (ա.թ.).
17. «Սուրբ Ալեքսիանոսի վարքը».

Մեզ հայտնի թարգմանությունների ծավալը 10000 էջից ավելի է:

Հովհաննես Թուլայանի՝ խմբագրի և թարգմանչի կատարած թարգմանությունների ընդհանուր ծավալը շատ ավելին է, քան Թանգիմաթի և հետագա մի քանի տասնամյակների թուրք մտավորականության կատարած բոլոր թարգմանությունները միասին.

1. Ք. դը Մոնթեպեն, «Փարիզի խաղատները» (1876 թ.) 840 էջ.
2. Ք. դը Մոնթեպեն, «Գնչուհին» (1879 թ.) 560 էջ.
3. Ք. դը Մոնթեպեն, «Չուլածո աղջիկներ» (1880-81թթ.) 3100 էջ.
4. Ադուլֆ Բլո, (1880 թ.) «Ոճրի արձագանքը» 380 էջ.
5. Ք. դը Մոնթեպեն, «Դավաճան մայրը» (1880-81թթ.) 750 էջ.
6. Ք. դը Մոնթեպեն, «3 մլն օժիտ» (1881 թ.) 616, 385 էջ.
7. Ք. դը Մոնթեպեն, «Հացագործ կինը» (1882 թ.) 1240 էջ.
8. Ք. դը Մոնթեպեն, «Սիրո խոստովանություն» (1882-1883 թթ.) 2250 էջ.
9. Ք. դը Մոնթեպեն, «Հնդիկների գաղտնիքը» (1882թ.) 575 էջ.
10. Ք. դը Մոնթեպեն, Բուագուպե դը Ֆորթունե «Կարված բերան» (1883-84թթ.) 970 էջ.
11. **Ժ.Կասսին**, «Մի կնոջ վրեժը» (1883-84թթ.) 680 էջ.
14. Ադուլֆ Բլո, «Մայրասպանը» (1885թ.) 1050 էջ.
12. **Էմիլ Ռիշբուրգ**, «Քողով կինը» (1885թ.) 664 էջ.
13. **Ժյուլ Բուլաբեր**, «Անառակ կինը» (1887թ.) 194 էջ.

14. Բ. դր Մոնթեպեյն, «Փարիզի ողբերգությունները» (1887թ.) 1454 էջ.
15. Բ. դր Մոնթեպեյն, «Խաղամուլի կինը» (1887թ.) 560 էջ.
16. Բ. դր Մոնթեպեյն, «Կարմիր կտակագիր» (1888 թ.) 500 էջ.
17. Բ. դր Մոնթեպեյն, «Փարիզում ինչեր են տեղի ունենում» (1889 թ.) 1344 էջ.
18. **ժյու-Մարի**, «Թակարդ» (1888 թ.) 300 էջ.
19. Բ. դր Մոնթեպեյն, «Փարիզի շրջնուլիկները» (1890թ.) 1000 էջ.
20. Բ. դր Մոնթեպեյն, «Հազար ու մեկ գիշերներ» (1891թ.) 1245 էջ.
21. Բ.դր Թերրայյ, «Ռոքամբոլ» (1892-93թթ.) 2400 էջ.

Այսպիսով, Հովհաննես Թուլայանի թարգմանությունները կազմում են շուրջ **22 000 էջ**: Բ.դր Մոնթեպեյնի «Գիշերվա սուլթանը» վեպի թարգմանության ձեռագիրը, որը չի հրատարակվել և 3 մասից է բաղկացած, ու 3045 էջ է պարունակում՝ պահվում է Հայաստանի Ազգային գրադարանում:

Ալիք Անտոնի կատարած թարգմանությունների մոտավոր ցանկը հետևյալն է՝

1. **Էմ. Գոնզալս**, «Սատանայի գործիքը» (1880թ.) 832 էջ.
2. Բ.դր Մոնթեպեյն, «Սիմոն և Մարի» (1885թ.) 700 էջ.
3. Բ.դր Մոնթեպեյն, «Կարմիր կախարդը » (1885թ.) 420 էջ.
4. **Բրասել ժորժ**, «Դեղին մարգարիտը, (1887թ.) 460 էջ.
5. **ժորժ Օնե**, «Նպատակի հետևանքը» (1888թ.) 277 էջ.
6. **Բլո Ադոլֆ**, «Ոճրագործության հետևանքները» (1888թ.) 400 էջ.
7. **Բուազուպե դը Ֆորթունե**, «Կատվի աչքը» 1888թ.) 414 էջ
8. Բ.դր Մոնթեպեյնի, «Խենթերի բժիշկը» (1888թ.) 240 էջ.
9. **Նիկոու Պիեռ** Օտարի կամ խենթի գաղտնիքը (1889թ.) 800 էջ.
10. **Բրեստոն միսս**, «Ստի հետևանքները» (1891թ.) 240 էջ.

Մոտավորապես **5600 էջ** է կազմում:

Հայաստան թուրքերենով թարգմանվել և բեմականացվել են արևմտաեվրոպական բեմերում և թատերախմբերում հայտնի համարյա բոլոր մելոդրամները, ինչպես օրինակ **Լ. Կոմոլեստիի** «Բույր Թերեզան»: **Կրիստաֆուլու և Դեվիդյակի** «Յեզար Բորջիա», **Ֆ.Գյումանուար և Ա.դ'Էնների** «Դոն Սեզար դը Բագան», **Վ.Գյուկանժի** «Խաղամուլի կյանքի 30 տարիները», **Է.Մորսի, Սիրոդիսի և Մ.Գելակուրի** «Լիոնի սուրհանդակը», **Բերնարդեն դը Սեն Պիերի** «Պողոս և Վիրգինիա», **Շ.Գենուայեի և Ա.դ'Էնների** «Ալպյաց Հովվուհին»: Վարդովյանի բեմադրությունների թվում են հայտնի գրողների մի ամբողջ շարք ստեղծագործություններ՝ **Գյոթեի** «Երիտասարդ Վերթերի տանջանքները», **Կարլո Գոցիի** «Օտար աղջիկը», **Բիչեր Ստոուի** «Բեռի Թոմասի տնակը», և այլն: Մենք չենք անդրադառնա «Դոն Գրեգորիոյի» և Փունչինելլոյի» տիպի կատակերգություններին, որոնց թիվը մի քանի տասնյակից անցնում է: Կարող ենք շարունակել հայաստան թուրքերեն մելոդրամների մեր թվարկումը և նշել՝ «Օգնիր աղքատին», «Աղքատի կտակը», «Երկու հիմար ընկերներ», «Երկու մուրացկաններ», Երկու կույրեր», «Թակարդ ամուսնու համար», «Լյուսի Դիոյե», «Տիկին Սեն Տրոպե» և այլն, որոնց հեղինակները թեև

հայտնի, սակայն անվանի գրողներ չեն եղել: Որոշակի թիվ են կազմել հայերի կողմից հայատառ թուրքերեն թարգմանված իտալական մեյդրամները և կատակերգությունները: Դրանցից մի մասը Վարդույանը ժառանգել էր «Արևելյան թատրոնից», սակայն գերակշռող մասի թարգմանությունները կատարվել են Հակոբ Վարդույանի պատվերով: Առանձնակի տեղ են գրավում Է.Սյուրի, Ալ.Դյումայի, Ֆ.Դյումանուար և Ա.դ'Էնների, Վ.Դյուկանտի և այլոց կատակերգություններն ու մեյդրամները: Է.Սյուրից թարգմանվել է «Թափառական հրեա» և «Փարիզի գաղտնիքները», «Լոնդոնի աշտարակը», «Մաթիլդը» և այլ պիեսներ: Ա.Դյումայից՝ պիեսի է վերածվել «Կոմս Մոնթե Բրիստոյի» հայատառ թուրքերեն թարգմանությունը, «Դերասան Զինը», «Կատրին Հովարդը»: Դյումա որդուց՝ «Քամելիազարդ տիկինը»: **Շիլլերից** «Ավագակները» և «Սեր և խարդավանքը», իսկ Հյուգոյից «Անժելո Մալիբիերի», «Մարի Թյոտոր» գործերը, ինչպես նաև պիեսի են վերածվել «Թշվառներն» ու «Արքան զվարճանում է», **Ռոբայի** «Երկու հիսնապետերը»: Վարդույանի թատրոնի խաղացանկում որոշ պիեսների անուններ այնպես են աղավաղվել, որ անհնարին է վերականգնել բնօրինակը և հեղինակը: Ծանոթ լինելով որոշ պիեսների բովանդակությանը կամ նրանց մասին գրախոսականներից ելնելով միայն կարելի է պարզել ի սկզբանե դրանց հայտնի հեղինակների հանրահայտ ստեղծագործությունների լինելն իրենց հիմքում: Սակայն տեղայնացումը և վերնագրի փոփոխությունը դժարացնում է նույնիսկ ենթադրություններ անել: Վարդույանի թատերախմբի հայատառ թուրքերեն խաղացանկը լրիվ չէր լինի, եթե չհիշատակեինք որոշ օպերետներ: Դրանցից են **Օֆենբախի** «Գեղեցկուհի Հեղինեն» և «Օրփեոսը դժոխքում», Լը Քոքի «Ժիրոֆլե Ժիրոֆլյան», «Մադամ Անգոյի աղջիկը», «Ֆրու Ֆրու» և ուրիշ երաժշտական բեմարդություններ, որոնք Վարդույանի թատրոնից հետո բեմադրվել են նաև Տիգրան Չուխաճյանի, Ս.Պենկլյանի և այլ թատերախմբերում:

Տարբեր հրատարակչությունների կողմից տպագրվել և վերահրատարակվել են թատրոնի համար կատարված թարգմանություն-պիեսները: Դրանցից ոմանք, օպերային և օպերետային լիբրետոններ՝ լույս են տեսել «Թատերական պատմություններ», «Արուսյակ» և այլ մատենաշարերով³²⁸: Պահպանված բազմաթիվ ազդագրերի մի մասը երկելզվյա են, եռալեզու, գեղեցիկ նկարազարդումներով, երբեմն համառոտ բովանդակության նկարագրություններով: Բեմադրվել են նաև հայատառ թուրքերեն պարբերականներում հրատարակված թերթոնները, մասնավորապես «Ճերիտի Հավադիս»-ում տպագրված մի շարք եվրոպական հեղինակների գործեր:

Ինչպես հայտնի է, **Տիգրան Չուխաճյանի** (1836-1898) երեք օպերետների լիբրետոնները գրված են հայատառ թուրքերենով³²⁹: Առանձին գրքով հրատարակվել է **Թագվոր**

328 Հայատառ թուրքերեն օպերաների մասին տես ("Tarih ve Toplum", İst. 1985, kasım, s 21-27. Mahmut Şakiroğlu. "M.Cevdet İnançalp"; Հնդվածը նվիրված է նաև Վենետիկի միսիոնարյանների «Ակադեմիայի» գործունեությանը, նրանց բառարանագիտությանը, հայ-թուրք գրական հարաբերություններին և հայերի տարբեր բնագավառներում ունեցած ծառայություններին: Տես նաև՝ A.Tietze "Nuovi dati sui primordi dell'opera in Turchia" II veltro XXIII-2/4 /1979/ s.363-368.

329 1895թ. Կ.Պոլսի "Malûmat" ամսագրի հատուկ պատվերով գրված և հունիսի 24-ին առաջին անգամ լույս տեսած Սուլթան Աբդուլ Համիդին նվիրված Տիգրան Չուխաճյանի կայսերական հայտնի "Marş-ı Âli" («Մեծ քայլերգ»-ի) բառերը գրված են օսմաներեն և լատինատառ թուրքերեն: Այն հետագայում արտատպվել է թուրքական գիտական ամսագրում, որն իր յուրաքանչյուր համարում

Նալյանի և **Տ. Չուխանյանի** «Լեպլեպիճի Հօր Հօր»- երեք գործողությամբ օպերետի լիբրետտոն **Կ. Պոլսում** 1924 թվականին: Առանց հեղինակի անվան հրատարակվել է **Կ. Պոլսում** «Մասնատիրի» չորս գործողությամբ օպերայի լիբրետտոն, որը **Նաումի** թատրոնում է բեմադրվել: Այս թատրոնում օպերաների բեմադրությունից առաջ վաճառվում էին օրվա ներկայացող օպերաների երկլեզվյա ծրագրերը՝ հայերեն և հայաստան թուրքերեն բովանդակությունները:

Ընդհանրացնելով մեր խոսքն ասենք, որ հայաստան թուրքերենի օգտագործմամբ շուրջ հինգ հարյուր պիեսներ են բեմադրվել հայկական թատերախմբերի թուրքերեն ներկայացումների համար: Հետագայում դրանք ժառանգել են մյուս թատերախմբերը՝ հազարավոր հանդիսականների ներկայացնելով արդեն սիրված ու մեծ ընդունելություն գտած ամենատարբեր ժանրերի պիեսների բեմադրությունները: Դժվարանում ենք ասել, թե որոնք են հրատարակվել, սակայն դա այնքան էլ էական չի եղել: Այս թարգմանությունները ձեռքից ձեռք և թատերախմբից թատերախումբ են անցել հիմնականում հայաստան թուրքերեն ձեռագրերի տեսքով, որն ամենևին էլ չի նսեմացնում նրանց կատարած մեծագույն ծառայությունը մշակութային և հասարակական կյանքում, ինչպես նաև նրանց հայ և թուրք թարգմանիչների ունեցած ավանդը:

Հետաքրքիր մի հանգամանք, որ բնորոշ է եղել թուրք լուսավորիչներից բոլորի մտածելակերպին: Նրանք գտնում էին, որ ժողովրդի լուսավորության, զարգացման որոշակի մակարդակի ստեղծման գործում մեծ դեր կարող է խաղալ թատրոնը: Բացի նրանից որ եվրոպական երկրների փորձը այն հաստատում էր, բացատրությունը շատ պարզ էր: Մինչ համատարած անգրագիտության վերացումը, միայն թատրոնի միջոցով է, որ հնարավոր էր շփումը եվրոպական գաղափարախոսությանը, կյանքին, կենցաղին, պատմությանն ու գրականությանը:

Թատրոնն այն կարևոր արտահայտություններից էր, որ հանդես եկավ Թանգիմաթի շրջանում: Եվ եթե արմատական փոփոխություններ չեղան երկրի սոցիալական, տնտեսական, քաղաքական կյանքում, ապա մշակութային կյանքում տեղի ունեցած բարեփոխումները չնկատել՝ հնարավոր չէ: Եթե հայ գրական շրջանակների համար այն զարթոնք էր նշանակում, դարերի խորքից եկած ավանդույթների զարգացում, ապա թուրք մտավորականների համար այն նաև պայքար էր միջնադարյան արևելյան թուրքական գրական ավանդույթների դեմ: Այս պայքարի հաջող ելքը որոշակի էր, քանզի այն ուղղված էր դեպի փորձառու եվրոպական գրականությունն իր նոր գաղափարներով ու ժանրային արտահայտումներով: Թուրք նոր գրականության մշակների գործերը՝ մասալներ, թեգերերներ, սեյահաթնամներ, թյուրքյուներ, մեսնեվիներ չէին: Թուրք լուսավորիչները սկսել էին ստեղծագործել դրամայի, վեպի, վիպակի, պատմվածքի, նովելի ժանրում: Նրանց ստեղծագործական կյանքում աննախընթաց դեր էր ունեցել թատրոնի հետ նրանց համագործակցությունը:

վերահրատարակել է թուրքական լավագույն քայլերգերը՝ «Մեկ քայլերգ» շարքում: Այս շարքում է վերահրատարակվել նաև 1909 թվականին լույս տեսած Ահարոն Մարյանի Սուլթան Մեհմեդ V-ի հիշատակին նվիրված «Կայսերական քայլերգը»: Այս մասին տես՝ “Tarih ve Toplum”, Ist..1987, N46 և 1988, N 49. Զայլերգերը գտնվում են Cem Behar-ի հավաքածուի կազմում:

Թուրքիայում թատերական կյանքի և դրամատուրգիայի զարգացման ասպարեզում երկրորդ հիմնական շրջանը պայմանավորված է **Մոլիերի** երկերի դասական թարգմանությունների հետ: Դրանց գերակշռող մասը՝ 34 պիեսների թարգմանությունները հիմնականում կապված են **Թովմաս Ֆասուլաճյանի** թատերախմբի հետ սերտորեն համագործակցած **Ահմեդ Վեֆիկ Փաշայի** անվան հետ³³⁰ Այս համագործակցությունը չափազանց արդյունավետ է եղել:

Հայ և թուրք մտավորականների, թատերախմբերի, դերասանների, լուսավորիչների բարեկամության ու համագործակցության, հանուն երկրի եվրոպականացման համար մղվող պայքարի համատեղ ջանքերի արդյունքում՝ զարթոնքի շրջանի լուսաբանման համար մեծ հետաքրքրություն է ներկայացնում դեպքերի ժամանակակից, թուրք առաջին պրոֆեսիոնալ դերասան **Ահմեդ Ֆեհիմի** հուշերը: Այս հուշերում առանձնակի տեղ է հատկացվել հայկական թատերախումբ-Վեֆիկ փաշա հարաբերություններին: Պարզվում է, որ Ահմեդ Վեֆիկ փաշան ոչ միայն թատրոնի վարձակալության համար վճար չի պահանջել, այլև նյութապես օգնել է թատերախմբին, մասնակցել փորձերին և դերաբաշխմանը, ֆրանսիական հանդեսներից, ալբոմներից ընտրել թատերական հագուստներ, դեկորացիաներ, դիմակներ ու թատրոնին անհրաժեշտ տարբեր իրեր: Փաստորեն հովանավորի, գեղարվեստական ղեկավարի պարտականություններ է կատարել, անգամ՝ պարզևստրել դերասաններին: Փաշայի տիտղոսակիր, ամենաբարձր խավին պատկանող այս ազնվական թուրք մտավորականն ապրել է թատրոնով, իր գրական գործունեության մեծ մասը կապել թատրոնի հետ: Մասնագիտական բարձր մակարդակ ունեցող համագործակցությունը թուրք լուսավորիչ հեղինակ, թարգմանիչ, բառարանագիր և թատրոնի մեկենաս Ահմեդ Վեֆիկ փաշայի հետ նշանավորվել է հեռու Բուրսայում (ուր փաշան պաշտոնավարում էր) Ֆասուլաճյանի թատերախմբի իսկական մոլիերյան թատերաշրջաններով՝ ստամբուլյան գրաքննական խստություններից հեռացած: Սակայն ոչ բոլորի բարյացկամությունն էր հարուցում փաշայի կողմից Ֆասուլաճյանի հայկական թատերախմբի գործունեության աջակցումը: Մութանական պալատ ուղարկված գրպարտագրերի արդյունքում պաշտոնանկ է արվում, ուր նահանգապետ էր և ետ կանչվում Ստամբուլ: Թատերախումբը մեկնում է հյուրախաղերի Բուլղարիա՝ շարունակելով մոլիերյան բեմադրությունները³³¹:

330 Խորհրդային շրջանի ռուս թուրքագիտությանը հայտնի է եղել Ահմեդ Վեֆիկ փաշայի մոլիերյան միայն 16 թարգմանությունների մասին: Այս բոլոր թարգմանությունները բնականաբար հայատառ թուրքերենի են վերածվել թատրոնի համար: Այս մասին տես՝ Ahmet Fehim Beyin hatıraları. İst. 1977, s.18.

331 Ժամանակի կարգերին ինքնաքննդատական հումորի տեսակետից մոտենալու, այս մասին խոսելու, ծաղրելու լավագույն նախապայմաններից էր Մոլիերի ստեղծագործությունների թարգմանություններն ու փոխադրությունները, դրանց բեմականացումը: Ի դեպ, անհրաժեշտ է նշել, որ մոլիերյան թարգմանություններն ավելի վաղ են սկսել կատարվել, քան լուսավորական շարժումն է սկիզբ առել Օսմանյան կայսրությունում: Այս մասին հիշատակությունները հիմնականում կապված են «Կարագոյոզ» ժողովրդական թատրոնի հետ: Արևելքում տարածում գտած տիկնիկների ու ստվերների այս թատրոնի ծրագրում լայն տեղ են գրավել մոլիերյան փոխադրությունները: Բովանդակությունները տեղայնացվել են՝ պահպանելով Մոլիերի հերոսների շունչը, հումորը: Թուրքական թատրոնի պատմության հայտնի էջերից են հայագգի Արսենի կազմակերպած «Կարագոյոզ»-ի և «Օրթա օյուն»-ի համար մոլիերյան դրամատուրգիայի նկատելի չափով տեղայնացված օգտագործումը:

Հայատառ թուրքերեն թարգմանված պիեսների թիվն աճել է **Մարտիրոս Մնակյանի**³³² «Օսմանյան դրամատիկ» թատերախմբի գործունեության շրջանում: Այն Վարդովյանի թատերախմբի անկումից հետո գոյություն է ունեցել մոտ 25 տարի՝ ընդհուպ առաջին համաշխարհային պատերազմի տարիները: Մնակյանի թատերախումբը մեծապես տարբերվել է Հակոբ Վարդովյանի թատրոնից: Հիմնական տարբերությունն այն էր, որ Մնակյանին արգելված էր հայերեն ներկայացումներ բեմադրելը: «Օսմանյան դրամատիկ»-ը բացառապես թուրքերեն ներկայացումներ է տվել: Հայերեն ներկայացումների հնարավորություն է ընձեռնվել միայն 1908-1914 թվականներին, Օսմանյան սահմանադրության վերականգնումից հետո: Միաժամանակ նա շարունակել է թուրքերեն ներկայացումները և իր խաղացանկի հարստացման նպատակով հայատառ թուրքերեն թարգմանել մոտ 40 մեղոդրամներ («Խեղճ երիտասարդը», «Անծանոթը», «Գարբնոցապետը», «Օժիտը», «Լիոնի սուրհանդակը», «Կույր գեներալը», «Գեղեցկուհի Ամելիա», «Անմեղ աղջիկը», «Գուշակուհին», «Քողով կինը», «Հացագործ կինը», «Սպիտակ փողկապներ» և այլն):

Դժվար չի պատկերացնել մի երկրի մշակույթի վիճակը, որի եվրոպական կրթություն ստացած մտավորականներն ու մշակութային գործիչները կամ աքսորում էին գտնվում, կամ էլ՝ լրտեսների խստագույն հսկողության տակ էին:

Մարտիրոս Մնակյանի թատերախմբի խաղացանկում մենք ոչ միայն չենք գտնում Նամըք Բեմալի, Շամսեդդին Սամիի, Ահմեդ Միդհատի և մյուս հայտնի հեղինակների դրամաները, այլև ոչ մի եվրոպական դասականի գործ չենք հանդիպում: Արգելված են եղել ոչ միայն Հյուգոյի, Վոլտերի, այլ նաև այնպիսի հեղինակների գործերը, ինչպիսիք են Էժեն Սյուն, Ալ.Գյուման: Մ.Մնակյանը ստիպված է եղել բավարարվել արկածախնդրական, բուլվարային վեպերի փոխադրությունների բեմականացմամբ:

Չմոռանանք կարևոր մի հանգամանք ևս: Հրատարակված հայատառ թուրքերեն թարգմանական գրականությունը թերի կներկայանար, եթե հաշվի չառնենք, որ ժամանակի հայատառ թուրքերեն համարյա բոլոր պարբերականներն իրենց վրա ավելի մեծ ուշադրություն հրավիրելու և ավելի մասսայական լինելու համար իրենց էջերում հրատարակել են ֆրանսիական հեղինակների բազմաթիվ երկեր, որոնք եթե առանձին գրքերով լույս չեն տեսել, հիմնականում մնացել են այդ պարբերականների էջերում, մոռա-

332 Մարտիրոս Մնակյան (1837-1920). Պոլսահայ դերասան, բեմադրիչ, թարգմանիչ: Թատերական ասպարեզ է իջել 19-րդ դարի 50-ական թվականներին: 1861 թվականից խաղացել է առաջին հայ պրոֆեսիոնալ՝ «Արևելյան թատրոնում»: Հետագայում խաղացել է Պետրոս Մաղաքյանի, Հակոբ Վարդովյանի թատերախմբերում (մինչև 1878թ.): Մասնավորապես ֆրանսիական մեղոդրամներում կերպարանավորել է մի շարք պատասխանատու դերեր, ուր անփոխարինելի ինտերպրետատոր է դիտվել: 1878 թվականից մասնակցել է օպերետային ներկայացումների: 1880թ. մեկնել Թիֆլիս և հայկական թատրոնում խաղացել երկու թատերաշրջան՝ արժանանալով նույնպիսի հաջողության, որքան նույն խաղաշրջանում միասին հանդես եկող մեծ ողբերգակ Պետրոս Ադամյանը: Մնակյանը հանդես է եկել դասական մի շարք դերերում, այդ թվում Շեյլրի Շեքսպիրի «Վենետիկի վաճառականում»: Վերադառնալով Կ.Պոլիս, մասնակցել է Ս.Պենկլյանի օպերետային խմբի ներկայացումներին, միաժամանակ կատարել ռեժիսորի պարտականությունները: Ստեղծել է Հոր Հոր աղայի չգերազանցված կերպարը Ա.Չուխաճյանի համանուն օպերետում: Մնակյանը 1885թ. Հակոբ Վարդովյանի ցրված թատերախմբից ստեղծել է «Օսմանյան դրամատիկ թատերախումբը», որը գլխավորել է 30 տարի՝ (1885-1912թթ.):

ցության գիրկն անցել, մոռացնել տալով նաև դրանց թարգմանիչների և հրատարակիչների կարևոր ներդրումը ժամանակի լուսավորական շարժման մեջ: Այսպես օրինակ, Տիրան Քելեկյանն իր հայատառ թուրքերեն «Ճիհան»³³³ շաբաթաթերթում գրականության հանդեպ հետաքրքրությունը զարգացնելու նպատակով ֆրանսերենից մի շարք գործեր է թարգմանել, որոնք որպես թերթոն են տեղ գտել շաբաթաթերթի էջերում: Այդ թերթոններից են՝ Օկտավ Ֆեոյեի «Փարիզից մի աղջկա պատմությունը» (Բարիսլի Պիր Գըզըն Հիքեայեի): 1885թ. այն հատվածաբար, առանձին տպագրվել է և «Ճիհան»ի 1-22 համարների հետ ցրվել է ընթերցողներին: Նույնպիսի ճանապարհով է ընթերցողներին տարածվել Տիրան Քելեկյանի թարգմանած և շաբաթաթերթի 23-32 համարներում տպագրված Պիեռ Չագոնի «Բիսեթի գաղտնիքը» (Բիսեթի էսրարը) ֆրանսերեն վեպը: Մյուս թարգմանություններն են՝ Պոլ Արենի (1843-1896) «Բիթալիկիւն Ֆասուլեալարը» (հ.1-6), Կոնստան Գերուլի «Թամալ փողոցի ոճիրը» (հ.9-22, 28-32), Աբրահամ Դրեյֆուզի «Սևագետտ պարոնը» կատակերգությունը (հ.7-8): Եվ այս երկերը՝ միայն «Ճիհան»ում³³⁴, միայն հանդեսի արտոնատեր-խմբագիր **Տիրան Քելեկյանի** թարգմանությամբ: Իսկ որքան թարգմանություններ են մնացել հայատառ թուրքերեն պարբերականների էջերում՝ տասնամյակներ շարունակ...

Այդ գործերը Գրաքննական խստություններն այնպիսի աստիճանի էին հասել, որ ամենաամենեղ նախադասությունը կարող էր ողբալի հետևանքներ ունենալ³³⁵:

Հարյուրավոր լրտեսների միջոցով վերահսկվում էին թատրոնի շուրջ հավաքված, թուրք ժողովրդի մտավոր և հոգեկան մակարդակը բարձրացնելու սկզբունքներով առաջնորդվող առաջադեմ թուրք հեղինակները, մտավորականության ներկայացուցիչները: Լրտեսներին հատկացվում էին հատուկ օթյակներ, իսկ մնացածը թատրոն էին խցկվում գաղտնի՝ որսալով յուրաքանչյուր կասկածելի թվացող բառ, հայացք, շարժում, դարձվածք, բառախաղ: Միայն Զ.դը Մոնթեպեյեից բեմադրվել են մոտ 10 պիեսներ, որոնց թարգմանությունները Մնակյանն ինքն էր կատարել: Դրանցից մի քանիսն են միայն առանձին գրքերով հրատարակվել 1880-ական թվականներին: Այդ թվում են «Մոմ վաճառողը», «Հացագործ կինը», «Սիմոն և Մարի», «Փարիզի ճահիճները», «Երգչուհին» և այլն: Իհարկե, Հ.Վարդուկյանի թատրոնից Մնակյանը ժառանգել էր մի քանի տասնյակ հայատառ թուրքերեն մեղոդրամներ, սակայն դրանցից մի քանիսն արգելվել էին գրաքն-

333 Ծաբաթական հանդես գրական, գիտական, առևտրական, ճանապարհորդական, կենսագրական, արդյունաբերական և այլն: Կ.Պոլիս, 1884-1885. Տես՝ Յ.Ստեփանեան, Հայատառ Թուրքերեն Գրքերի և Հայատառ Թուրքերեն Պարբերական Մամուլի Մատենագիտություն. Ստամբուլ, 2005թ. էջ 586, հ. 54.

334 Ժիրայր Գանիբեյեան, Բանասիրութեան բաիդներուն մէջ. Եր., 2011, էջ 290-291:

335 Գառնիկ Ստեփանյանի աշխատության մեջ մի կոմիկական հետաքրքիր դեպքի նկարագրություն կա, որն իրականում ողբերգական վիճակի արձանագրում է: Մեկ անգամ, սուլթան Աբդուլ Համիդին համոզում են պալատականների և անձամբ նորին պայծառափայլության համար պալատում ներկայացնել հյուրախաղերով Ստամբուլում գտնվող իտալական մի թատերախմբի «Ֆասուստ» ներկայացումը: Սուլթանը համաձայնվում է: Անտեսանելի օթյակում նստած՝ նա դիտում է ներկայացումը: Առաջին գործողության կեսին հրամայում է փոխել և մի այլ օպերա ներկայացնել: Դերասանները նույնիսկ առանց հագուստներն ու դեկորները փոխելու անցնում են «Կարմենին»: Սա ևս ձանձրացնում է Սուլթանին ու ներկայացումը կրկին փոխում են՝ այս անգամ «Տրուբադուրի»: Սրանից էլ հաճույք չստանալով՝ Սուլթանը հեռանում է: (Գ.Ստեփանյան, Ուրվագիծ...հ.Բ, էջ 402):

նության կողմից որպես «չափազանց վտանգավոր»: Բնականաբար միայն թուրքերեն ներկայացումներ տվող թատրոնի համար այդքանը բավարար չէր և Մնակյանն ինքն էր ստիպված եղել բազմաթիվ հայաստան թուրքերեն թարգմանություններ կատարել: Մոտ 40 արկածային մեղոդրամներ է թարգմանել Մնակյանը: Երևանի Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում պահվում են այդ շրջանի թատերական ազդագրերը: Մի շարք թարգմանությունների մասին տեղեկանում ենք Գ.Ստեփանյանի, Մեթին Անդի և մյուսների ուսումնասիրություններից: Թվենք դրանցից մի մասը՝ «Վրեժխնդիր մայրը»³³⁶, «Սև ջրաղացի ոճիրը»: «Որսը»(Ա. Դ'Էններ), «Խեղճ երիտասարդի պատմությունը», Գալիլա»(Օ.Ֆեռյե), «Անձնագոհ կապիտանը», «Մեղավորուհին», «Գեղեցկուհի Ամելիան», «Երկու որբեր», «Կարմիր քսակը», «Կարմիր կամրջի ոճիրը», «Կույր գեներալը», «Օրիորդ Իռմա», «Փարիզի աղքատը», «Փարիզի հնավաճառը», «Ռոքամբոլ», «Դեղին ձեռնոցը», «Դժբախտ մայրը», «Սյուզան Իմբեր», «Մոմե արձան շինողները», և այլն³³⁷: Այս ցուցակը կարող ենք շարունակել, սակայն մեր նպատակն այլ է: Մենք ցանկանում ենք ցույց տալ, թե ի՞նչ դեր է ունեցել Մարտիրոս Մնակյանը հայաստան թուրքերեն թարգմանական գրականության զարգացման գործում: Ժամանակի մամուլում հանդիպում ենք վկայություններ այն մասին, որ վերը թվարկված պիեսների հիմնական մասի թարգմանությունները կատարել է Մարտիրոս Մնակյանը: Մեզ են հասել այդ փաստը հաստատող որոշ ազդագրեր: Համաձայն Մնակյանի կյանքի ու գործունեությանը նվիրված աշխատությունների, ֆրանսերենից նրա կատարած մեղոդրամների թարգմանությունների թիվը մոտ 50 է³³⁸ չհաշված ոչ մեծ ողևիներն ու կատակերգությունները:

Մնակյանի կատարած թարգմանությունները հարյուրավոր անգամներ բեմ են բարձրացել ոչ միայն նրա «Օսմանյան դրամատիկի» 30 ամյա գոյության տարիներին, այլև հետագայում առատորեն օգտագործվել են թուրքական նոր կազմավորվող թատերախմբերի կողմից, որոնց դերասան-դերասանուհիները, դեռևս նախկին թատերական ավանդույթների համաձայն տիրապետել են հայաստան թուրքերենին՝ որպես թատրոնի լեզու:

336 Կարծում ենք խոսքը Քսավի դը Մոնթեպենի «Գավաճան մայրը» վերնագրով քառահատոր հայաստան թուրքերեն վեպի մասին է, որ լույս է տեսել Մ.Մնակյանի թարգմանությամբ 1880թ.:

337 Գ.Ստեփանյան, Ուրվագիծ... հ.Բ, էջ 5-154.

338 Արևմտահայ թատրոնի պատմությանը նվիրված ուսումնասիրություններում հիշատակվում են այդ թատերախմբերի թվական կազմը: Այսպես օրինակ՝ 1884թ. Մեթին Անդր գրում է, որ Թովմաս Ֆատուլաճյանը Բուրսայից վերադառնալով, Ստամբուլում 130 հոգուց բաղկացած խումբ կազմեց: Կամ՝ թուրք առաջադեմ գրող Ահմեդ Միդհատի հեղինակած «Էռզնեկեր» (Ազնվականներ) պիեսի պատճառով Աբդուլ Համիդի հրամանով ավերվեց Կետիկ-փաշայի (Թաղամաս Ստամբուլում -Հ.Ս.) թատրոնը: Այս առթիվ եղած բացատրությունն այժմ շատ ծիծաղելի է թվում: Մուլթան Համիդի լրտեսները հայտնել էին, որ այդ պիեսն իր խիզախ հերոսներով նպատակ ունի Օսմանյան կայսրության մեջ ապրող ժողովուրդներին գժտեցնել: Արտաքուստ զավեշտալի կամ միամիտ թվացող այս պատճառաբանության տակ անշուշտ թաքնված է եղել քաղաքական մի նենգ դավադրություն: Ահմեդ Ֆեհիմն այս առիթով գրում է, որ ոչ միայն քարոքանդ արվեց թատրոնի դարբնոցը, այլ նաև 400 մարդկանց կյանք ավերվեց (Ahmed Fehim Bey..s. 31-33): Այս առթիվ մի այլ թուրք թատերագետ, Մուստաֆա Նիհատ Օզոնն առանց հիմնավոր փաստարկներ բերելու, գրում է, որ թատրոնը մեկ գիշերվա ընթացքում քարոքանդ արվեց «ինչ որ մի ներկայացման պատճառով»: Այս մասին տես՝ Mustafa Nihad Özön, Türk Tiyatrosuna Toplu Bir Bakış. Türk Dili. 1966, N 178, s. 660.

Օսմանյան կայսրությունում լուսավորական շարժման զարգացման գործում նկատելի դեր են խաղացել հայկական թատերախմբերի երկրով մեկ կատարած հյուրախաղերը: Այս հյուրախաղերը համընկել են «գուլումի» տարիներին, երբ Կ.Պոլսում ոչ միայն արգելված էին հայերեն ներկայացումները, այլև թուրք հեղինակների գործերը և քարգամանական պիեսների մեծ մասը: Մնակյանի թատերախումբը, ինչպես նաև ավելի փոքր թատերախմբեր հյուրախաղերով շրջել են կայսրության շատ քաղաքներում ու գավառներում³³⁹: Հայկական թատերախմբերն այցելել են Անկարա, Բուրսա, Չմյուռնիա, Տրապիզոն, Օրդու, Մամսուն, Չանակկալե, Բայրամջի, Բահչե-սդա, Կավալա, Սելանիկ, Էդիրնե, Չորլու, Գիբեսուն, Ունյե, Քրքք քիլիսե, Գյոքքոյ, Բաքրիքոյ, Բաղլարբաշի, Միդիլի, Ռոդոստո և այլուր: Մայրաքաղաքային թատերախմբերի հյուրախաղերին վերաբերող չափազանց հետաքրքիր նյութեր են պարունակվում ականատեսի, առաջին թուրք դերասան մասնակիցներից մեկի՝ Ահմեդ Ֆեհիմի հումորով առատ հուշերում: Հյուրախաղերը որպես կանոն անցնում էին մեջ հաջողությամբ, թատրոնի նկատմամբ անսպառ հետաքրքրություն արթնացնելով: Նշենք, որ այդ վայրերում շատերն առաջին անգամ էին կյանքում շփվում թատրոն կոչված երևույթի հետ: Առաջին անգամ էին տեսնում դերասանների, շփվում դրամատուրգիայի, այդ թվում նաև դասականների ստեղծագործությունների, հայ և թուրք հեղինակների գործերի հետ: Ներկայացվում էին ժողովրդի մեջ հայտնի արևելյան սիրավեպերը, մելոդրամներ, վոդևիլներ, ֆարսեր:

Այնուամենայնիվ պետք է խոստովանել, որ դյուրին չեն եղել այս հյուրախաղերը գավառներում, երբ մարդիկ գաղափար չունեին թատրոնի, բեմի, դերասանի մասին: Եղել են շատ խոչընդոտներ: Չեն եղել թատրոնի շենքեր: Ահմեդ Ֆեհիմի հյուրախաղերին նվիրված հուշերի բաժինն առատ է անկրթության ու մահմեդական կրոնավորների ֆանատիկ ծայրահեղ խավարամոլության նկարագրություններով, որոնց ավելանում էր պետական պաշտոնյաների ու տեղական ոստիկանության սահմանափակվածությունն ու կաշառակերությունը, գրաքննիչների ծիծաղելիության աստիճանի բթությունը³⁴⁰: Հյուրախաղերի գավառում ունեցած լուսավորական նշանակությունը մի անգամ ևս ընդգծում է հայատառ թուրքերենի աշխարհագրական շրջանակների ու նշանակության ընդարձակ լինելը:

Հարկ է նշել ևս երկու հանգամանք, որոնք կապացուցեն Մ.Մնակյանի համիդյան բռնակալության տարիներին թատրոնի պահպանման ուղղությամբ գործադրած հսկայական ջանքերը՝ ընդհուպ մինչև Օսմանյան սահմանադրության վերականգնման տարիները: Ավելացնենք նաև ընդհանուր առմամբ, թուրքական մշակութային զարգացման ասպարեզում Մնակյանի մեծ ծառայությունը: Առաջինը՝ դա օսմանյան հասարակությանը, մասնավորապես թուրք հարեմի կանանց թատրոնի միջոցով եվրոպական կենցաղին ու սովորույթներին ծանոթացնելն էր:

339 Ahmed Fehim Bey..s. 188. Հյուրախաղերի ընթացքում թատերախմբերն աջակցություն էին գտնում հիմնականում հայ, հույն, հրեա հարուստների կողմից: Շատ քիչ փաստեր կան թուրքերի կողմից աջակցության առիթների վերաբերյալ: Մեթին Անդը Ահմեդ Ֆեհիմին նվիրված իր հոդվածում նշում է, որ Տրապիզոնում եղած հյուրախաղերի ժամանակ հայկական թատերախումբը գտնվել է տեղի վալիի՝ գրող Ալի բեյի հովանավորության ներքո: (Metin And. Ahmed Fehim Bey, Tarih Mecmuasi, 1971, N 7, s. 20).

340 Baha Durder. Manakyan, Türk Dili. 1966, N 172, s. 238-240.

Հայտնի է, որ թուրք կանայք պարբերաբար Մնակյանի թատրոնի հաղիսատեսն են եղել: «Պապա Մնակ»-ի ներկայացումներում կինը հանդես էր գալիս ոչ որպես հարեմի ստրկուհու վիճակում, որը գուրկ էր սեփական անձի ինքնագիտակցությունից: Բեմում նրանք տեսնում էին ֆրանսիական սալոնների կանանց, նույնիսկ ցածր խավերի պատկանող կանանց, որոնք գոյության պայքարում զոհ դառնալով հանդերձ, այնուամենայնիվ ապստամբում էին և պայքարում հանուն իրենց իրավունքների: Թուրք կինը, համաձայն Ղուրանի, կոչված էր ծառայելու տղամարդուն, և իրավասու չէր բնության կողմից տրված օրենքներից օգտվելու: Թուրքական հարեմներում փակված կանայք թատրոնում ակնառես էին լինում այնպիսի տեսարանների, երբ տղամարդը ծնկաչոք սեր էր աղերսում կնոջից, իսկ վերջինս մերժում էր, ստիպելով տղամարդուն տանջվել: Միայն այս հանգամանքը բավական էր, որպեսզի հարեմական կյանքով սահմանափակված կինը հասկանար, որ իր բանտարկյալ ու ստրկական վիճակը, որ իրեն գնել-վաճառելու-նվիրելու փաստն ի վերուստ կարգադրված երևույթներ չեն և ոչ էլ մարգարեական պատգամներ: Հայաստան թուրքերեն թարգմանական գրականության մեջ, մասնավորապես թուրքերեն ներկայացումներում արժարժվում էին ամուսնության հետ կապված ամենաբազմազան խնդիրներ: Կնոջն իբրև սուկ լսող, առանց իրավունքների, լոկ որպես «անկողնու ընկեր» դիտելուց և կինն առանց սիրո ներկայացնելուց բացի, թարգմանիչներն ու բեմադրիչները ջանում էին ներկայացնել կնոջ անհատականությունը, հոգեկան աշխարհը, հուզումները, տիրող բարքերի դեմ ծառանալու ընդունակությունը, դրանց ինքնուրույն դիմադրելու կանացի ձգտումը: Հանուն հարստության, շահի ու հարկադիր ամուսնությունների հակադրվում էր կանանց ազատագրման գաղափարը: Այս ամենին ավելանում էր սովորելու, զարգանալու, և դրանով իսկ որոշ չափով կյանքի հարվածներից դիմագրավելու կոչերը՝ որպես կարևոր պայման կյանքում կույր գործիք չլինելու համար: Այստեղից բխում էր, որ պետք է սովորեն բոլորը՝ կին, տղամարդ, հարուստ, աղքատ: Եվ եթե Օսմանյան սահմանադրության վերականգնման տարիներին թուրք կինն աստիճանաբար հասարակական ասպարեզ մտավ և Թուրքիայում ծայր առավ կանացի էմանսիպացիայի խնդիրներին ուղղված շարժումը՝ այն միանգամայն կարելի է վերագրել մասամբ Մարտիրոս Մնակյանի թատրոնի՝ հատուկ կանանց համար տրվող ցերեկային ներկայացումների դաստիարակչական մեծ ազդեցությանը: Ներկայացումները նպաստում էին թուրքական կնոջ սոցիալական ու մշակութային մտահորիզոնի ընդարձակմանը: Թատրոնն այդ կանանց համար դառնում էր եվրոպական քաղաքակրթության հետ շփվելու լավագույն հնարավորությունը: Այն մղում էր հարեմի և հանդիսատես մյուս կանանց կարդալու ֆրանսերենից առատորեն թարգմանվող վեպերը: Հայաստան թուրքերեն սիրային, արկածային վեպերը տարածված էին ողջ Ստամբուլի հարեմներով ու ամեն մի կնոջ բարձի տակ կարելի էր այն գտնել: Իրենք, թրքուհիները, հաճախ են շնորհակալության զգացումով խոստովանել այս մասին: Թուրք թատերագետները, անդրադառնալով Մնակյանի գործունեությանը, երախտագիտությամբ են հիշատակում այս փաստը: Ի հաստատումն, նրանք բերում են ներկայացումներից վերադարձող կանանց խոսքերը, որոնք խորհուրդ էին տալիս ամենքին լինել Մնակյանի թատրոնում, սովորելու

համար կանանց հետ վերաբերվելու ձևը³⁴¹:

Մ.Մնակյանի երկրորդ կարևոր ծառայությունը՝ դա թուրք դերասաններ պատրաստելու գործն էր: Եվրոպական բեմի նվաճումներին ծանոթ ականավոր բեմադրիչի կողմից տարիների ընթացքում, նրա կողքին, թատերախմբում միասին աշխատելով՝ կրթվեցին թուրք թատրոնի առաջին դերասաններն ու ռեժիսորները:

Հակոբ Վարդովյանի թատրոնում մի քանի սկսնակ թուրք դերասաններ կատարել են հիմնականում երկրորդական դերեր: Օսմանյան 1876 թվականի սահմանադրության վերականգնման նախօրեին թուրքական թատրոնը հաշվում էր արդեն մի քանի տասնյակ թուրք դերասանները, որոնցից սուս 2-3-ը հնարավորություն էին ունեցել լինել Փարիզում, սովորել եվրոպական ռեժիսորների մոտ: Մնացած բոլոր թուրք դերասանները դրանք Մարտիրոս Մնակյանի աշակերտներն են³⁴²: Նրանք բոլորն իրենց դերերը սովորել են հայերեն տառերը սովորելով, քանի որ պիեսները, դերերը՝ հայատառ թուրքերենով են գրված եղել: Նրանք ևս երախտագիտությամբ են հիշում իրենց ուսուցչին³⁴³:

Ինչպես Հակոբ Վարդովյանը, այնպես էլ Մարտիրոս Մնակյանը ևս մեծ թվով պատվերներ տալով թուրք հեղինակներին՝ մեծապես նպաստել է թուրքական դրամատուրգիայի զարգացմանը³⁴⁴: Թուրքական թատրոնի առաջադեմ գործիչներն ի արժանվույնս են գնահատել թուրք թատրոնի նկատմամբ ունեցած Մ. Մնակյանի ծառայությունները, թուրք թատրոնի խաղացանկն ընդլայնելու ու հարստացնելու նրա մեծ ավանդը: Նրա մահվան առիթով թուրք հայտնի բեմադրիչ **Մուհսին Էրթոքուլը** գրել է. «Որչափ մեծ անշնորհակալություն կլիներ մռանալ Մնակյանին ու նրա թատերախմբի անդամներին: Իմ էության կրակե հրաբուխը, որն այսօր վառ է պահում իմ հոգու բոցը՝ դա նրա ներկայացումներն են»: Նույնիսկ շատ տարիներ անց, 1956 թվականին մի քանի թուրք մտավորականներ Մնակյանի գերազանաքարին հուշարձան կանգնեցրին ու հայերեն և թուրքերեն լեզուներով գրեցին հետևյալը՝ «Դերասանապետ Մարտիրոս Մնակյան, որ թուրք բեմին վերծնունդի և բարձրացման գլխավոր աստար հանդիսացավ 1836-1920»³⁴⁵:

Մեկ օրինակը բավական է ցույց տալու համար այս ասպարեզում Մնակյանի ծառայության նկատմամբ թուրք գրողների ունեցած երախտագիտական զգացումը: Դեպքը պատմել է ականավոր հայ գրող և հրապարակախոս **Արշակ Չոպանյանը**: Թուրք գրող **Թահսին Նահիդը** հիշելով Մնակյանին, խորին երախտագիտությամբ է անդրադարձել, որ «Եթե չլիներ Մնակյանը, ապա ո՞վ կբեմադրեր իմ գործերը»: Թ.Նահիդը հիշել է, թե ինչպես իր պրեմիերայի օրը համբուրել է այդ մարդու ձեռքը, որն այդպիսի բարձր աստիճանի է հասցրել թուրք թատրոնը»³⁴⁶: Մ. Մնակյանի նկատմամբ թուրք թատրոնի հետ

341 Baha Durder. Manakyan, Türk Dili. 1966, N 172, s. 238-240.

342 Մնակյանի աշակերտներից է եղել Ահմեդ Ֆեհիմ Բեյը (1856-1930)- առաջին թուրք դերասանը, բեմադրիչն ու թատերախմբի ղեկավարը: Ավելի քան կես հարյուրամյակ նա գործել է հայկական թատերախմբում, հայ դերասան-դերասանուհիների հետ միասին: Նա խոսում, գրում, կարդում էր հայերեն: Իր դերերը սովորում էր հայատառ թուրքերենով: Այդ մասին է վկայում նաև նրա որդին՝ նկարիչ Մյունի Ֆեհիմը, հոր հուշերի հրատարակության առիթով:

343 Ahmet Fehim Beyin hatıraları. İst. 1977, s.3.

344 Baha Durder. Manakyan, Türk Dili. 1966, N 172, s.238-240.

345 Գ.Ստեփանյան, Ուրվագիծ, Ե., 1975, հ.Գ. էջ 96:

346 Գ.Ստեփանյան, Ուրվագիծ, Ե., 1975, հ.Գ. էջ 87:

Մի այլ թուրք գրող՝ Ահմեդ Նուրին ի պատասխան իր երկու ստեղծագործությունների («Հարճը»

կապված մարդկանց երախտագիտության զգացումներից է հանդիսանում մեծ դերասանի նկատմամբ խորն ակնածանքը, արտահայտված թուրք ստեղծագործող մտավորականության կողմից 1912 թվականին, Մնակյանի հորեյլանի օրերին: Այս հորեյլանը փաստորեն վերածվել է համաժողովրդական շքերթի: «Վարիետե» թատրոնում բանախոսներից մեկն իր շնորհավորական խոսքում ասել է՝ «Եթե ֆրանսիացիներն ունեն **Մունե-Սյուլլի**³⁴⁷, ապա թուրքերն ունեն՝ Մնակյան ³⁴⁸»:

Մենք մինչ այժմ խոսեցինք ֆրանսերենից կատարված թարգմանությունների մասին, սակայն Մնակյանը հայաստան թուրքերեն է թարգմանել նաև հայերենից: Թուրք բանասերների մոտ հիշատակություն ենք գտնում այն մասին, որ Մնակյանը ցանկացել է բեմադրել **Գրիբոյեդովի** «Խելքից պատուհասը»³⁴⁹: Հայտնի է, որ 1880թ. Թիֆլիսում Մնակյանը մեծ հաջողությամբ խաղացել է Ֆամուսովի դերը: Ամենայն հավանականությամբ նա ամեն կերպ ձգտել է իրականացնել այդ պիեսի բեմականացումը նաև թուրքերեն: 1883թ. թուրք պատմաբան, երիտթուրքական շարժման ակտիվ մասնակից Մեհմեդ Մուրադը, ծնունդով Դ-աղստանից, ռուսերենից թուրքերեն է թարգմանել է **Գրիբոյեդովի** «Խելքից պատուհասը»: Հաջողվե՞լ է Մնակյանին այն բեմադրել՝ չգիտենք: Համիդյան բռնակալության տարիներին նման պիեսի բեմադրության հնարավորությունը հավատ չի ներշնչում: Հետագայում՝ երիտթուրքերի 1908թ. հեղափոխությանը հաջորդած տարիներին այս երկի բեմ բարձրանալու մասին որևէ տեղեկություն թուրք թատրոնի պատմաբանների մոտ չենք հանդիպում: Ամենայն հավանականությամբ այս պիեսը թուրքերենից հայաստան թուրքերենի վերածված պիեսի լինելը, եթե այն նախատեսված էր Մնակյանի կամ մի այլ թատերախմբի կողմից բեմադրվելու համար ³⁵⁰:

1912 թվականին Օսմանյան թատրոնի ղեկավար դարձավ **Բեհիմ-է-Ֆենդին**:

Հայաստան թուրքերեն պիեսներ ստեղծվել են նաև Արշակ Պենկլյանի օպերետային խմբի համար, որը Կ.Պոլսում գործել է 1910-1923 թվականներին: Այս թատերախումբը, Հակոբ Վարդովյանի թատրոնի նման, իր ներկայացումները տվել է հայերեն և թուրքերեն լեզուներով: Թուրք թատերագետ **Բուրհան Արփադը** գրում է, որ «թուրքական երաժշտական թատրոնի» հիմնադիրներն են եղել **Սերովլե Պենկլյանը** (1835-1900) և **Տիգրան Չուխաճյանը** (1840-1898): Ս.Պենկլյանն իր վոկալ-դերասանական վարպետության շնորհիվ և կոմպոզիտոր Տիգրան Չուխաճյանը առաջինն էին, որ հնարավոր դարձրին 19-րդ դարի վերջին քառորդին կազմակերպել ժամանակավոր թատերախմբեր և Օսմանյան կայսրության հսկա տարածքում հաղորդակից դարձնել ժողովուրդներին «երաժշտական թատրոն» երևույթին³⁵¹: Արշակ Պենկլյանը Վարդովյանի կամ Մնակ-

և «Հարսն ու կեսուրը») առթիվ տպագրված գրախոսականի, երախտագիտությամբ հիշում է, որ հայ մամուլը պատիվ ունի ներկայանալու որպես թատերական քննադատության հիմնադիր, և որ հայերին է պատկանում երկրում թատրոնի ստեղծման պատիվը: (Այս մասին տես «Ազատամարտ» թերթ, Կ.Պոլիս, 1910, 11/24 սեպտեմբերի, N 384):

347 Մունե Սյուլլին (Mounet Sully. 1841-1916) ֆրանսիական ազգային թատրոնի հիմնադիրը:

348 Գ.Ստեփանյան, Ուրվագիծ, Եր., 1975, հ.Գ. էջ 86.

349 Гордлевский Вл. Очерки по новой османской литературе. М., 1961, т. 2, р. 393, 463, ինչպես նաև Գ.Ստեփանյան, Ուրվագիծ, Եր., 1975, հ.Բ. էջ 377.

350 Baha Dürder. Manakyan, Türk Dili. 1966, N 172, s.172-176

351 Burhan Arpad. Müzikli Türk Tiyatrosu. Türk Dili. 1966, N 178, s.685

յանի չափ զարգացած չի եղել: Այնուամենայնիվ **Վահրամ Փափագյանն** իր հուշերում վկայում է որ նա օպերետային ժանրի փայլուն ներկայացուցիչ էր³⁵²:

1908թ. Օսմանյան սահմանադրության վերականգումից հետո համեմատաբար ազատ ժամանակաշրջանում և ետպատերազմյան տարիներին Օպերետային թատերախումբն իր խաղացանկում մեծ տեղ է հատկացրել արևմտաեվրոպական օպերետներին, որոնք բեմ էին բարձրացել դեռևս 19-րդ դարի 70-ական թվականներին: Դրանք էին **Օֆենբախ, Լը Քոքի, Կալմանի** օպերետները: Ամենամեծ հաջողությունն այդ տարիներին բաժին է ընկել Տ.Չուխաճյանի «Լեբլեբիճի Հոր-Հոր աղա»-ին և «Արիֆի խարդախության»-ը: Դրանց ժողովրդականությունն այնքան մեծ է եղել, որ Չուխաճյանին տրվել է «թուրքական Օֆենբախ» անունը³⁵³: Սերովբե Պենկյանն իր 10-ամյա գործունեության շրջանում հաճախ է պատվիրել արևմտաեվրոպական օպերետների, ողևիլների և երաժշտական կատակերգությունների թարգմանություններ: Նա լիբրետոտոներ է պատվիրել թուրք հեղինակներին և երաժիշտներին, որոնք այդ շրջանում արդեն որոշակի թիվ էին կազմում: Այս թարգմանությունների մեջ հանդիպում են նաև ադապտացիաներ, տեղայնացումներ՝ համապատասխանեցված Արևելքի կյանքին: Այսպիսի փոխադրությունների թվում է եղել «Հոջա Նարեդդինը»: Դժվար է գլխի ընկնել, որ այդ վերնագրի տակ թաքնված է Գուլոնիի «Դոն Գրեգորիոն», որը 19-րդ դարի կեսերին բեմադրվել էր հայերեն, թուրքերեն լեզուներով: Մեզ հայտնի չի փոխադրության հեղինակը, սակայն տեղայնացումն այնպիսի վարպետությամբ է արվել, որ մյուս բեմադրություններից ավելի հաճախ է ներկայացվել: Այս կարգի ադապտացված օպերետների և կատակերգությունների թվում կարելի է հիշել «Գլխավոր խոհարար Թոսուն աղա», «Պապա Հիմմեթ» ներկայացումները, որոնց հիմքում, իհարկե, եվրոպական պիեսներ են եղել: Այսուհանդերձ դժվար է գտնել իսկական աղբյուրը³⁵⁴: Նույնը կարելի է ասել «Մեմիշ Չելեբի», «Ո՞վ է մեզանից ավելի խելոքը» և այլ փոքիլների մասին³⁵⁵: Եվրոպական վերնագրերը պահպանել են «Կլարետտա»-ն, «Մադնազել Նիտուշ»-ը: Առաջինը Մնակյանի խաղացանկից էր մնացել, իսկ երկրորդը թարգմանվել էր ավելի ուշ:

352 Փափագյան Վահրամ. Սրտիս պարտքը, Եր., 1959, էջ 148.

353 Steu' Hrant Papazian. Dicran Tchouhagian. Vie et oevres. Ist. 1977. P. 12.

354 Ադապտացիաների և տեղայնացումների նկատմամբ թուրք բեմադրիչների հակումն այսօր էլ շարունակվում է: Այն իր արտահայտությունն է գտել նաև այսօրվա թուրքական կինոարվեստում: Բազմաթիվ ֆիլմեր ներկայացնում են եվրոպական ու ամերիկյան ֆիլմերի մանրամասն կրկնօրինակումը՝ միայն հերաների անունների և դեկորների փոփոխությամբ: Այս դեպքերում արդեն բուն աղբյուրը գտնելը բոլորովին դժվարություն չի ներկայացնում:

355 «Հափշտակիր եւ փախիր» 1 արարից թատերգությունը (1902), «Իքի գեվճե պիր գեվճե» (Երկու այր, մեկ այլ՝ ամուլ) 3 գործողությամբ դրաման (1909): 1925թ. Կ.Պոլսի «Արև» տպարանում լույս են տեսել Տիրան Փափագյանի «Երանոս Աղբար կամ թալիխարար վաժապետը» 1 արարից զավեշտը և «Արշին Մալ Այան» 4 գործողությամբ օպերետը, «Անգիտութեամբ ամուսնութիւն մը եւ հարստութիւն» (Կ. Պոլիս, 1887, 34 էջ): Վառնայի «Հայելի» թերթի տպարանում մի քանի պիեսներ են հրատարակվել, այդ թվում՝ «Մարդու խորամանկությունը հաղթեց կնոջը»(1895), Տիրան Փափագյանի «Անոթխածության վարձատրությունը» 1 արարից զավեշտը (1898), նույնի «Նախանձոտ ամուսինը» (1895, 1898), նույնի «Վելիկ Աղբոր հարսանիքը», «Թալիխարար վաժապետը», «Ակնցին» (1998թ. առանձնատպի «Հայելի» թերթի N 48-ի): 1908թ. Կահիրեյում լույս է տեսել Վրթանես Բյուշուբյանի (դերասան և տպագրիչ) Թովալ շեյթան գրչանունով «Մուրթան Մահմուդ Բ, կամ Գազազ Արթին Ամիրային թունվորելու մի փորձ» 5 արարից բաղկացած «դրամ-գոմեթի-թատերգութիւն»ը:

Մենք մանրամասնորեն ենք կանգ առնում հայաստան թուրքերեն թարգմանությունների վրա, որովհետև այս թարգմանությունների շնորհիվ են ավելի քան 50 տարիներ թուրքիայի բնակչության ամենատարբեր, թրքախոս և թուրքերենին տիրապետող խավերը հաղորդակցվել թատերական մշակույթի հետ: Ինչպես ասվել է, հայաստան թուրքերեն բոլոր պիեսները օգտագործվել են Սրապիոն Հեքիմյանի «Արևելյան թատրոնի», Հակոբ Վարդոյանի, Մարտիրոս Մնակյանի, Թովմաս Ֆատուլաճյանի, Սերովբե Պենկլյանի թատերախմբերի ոչ միայն հայ դերասան-դերասանուհիների կողմից, այլև թուրք դերասանների կողմից, որոնց միջոցով նրանք շփվել բեմի հետ և բեմական գործունեություն ծավալել: Բոլոր այս դերասաններն իրենց դերերը սովորել են հայաստան թուրքերենով: Հայկական այբուբենը հանդիսացել է ընդհուպ մինչև առաջին համաշխարհային պատերազմի տարիները **Թուրքիայում գործող բոլոր թատերախմբերի աշխատանքը պայմանավորող անփոխարինելի, անբակասելի գործիքը, իսկ հայաստան թուրքերենը՝ թատրոնի աշխատանքային լեզուն:**

Առաջին համաշխարհային պատերազմից հետո թուրքական բեմահարթակները «ազատվեցին» շատ հայ դերասաններից: Այս պայմաններում թուրքական թատրոնների ղեկավարները ջղաձգորեն փորձել են վերածնել թատրոնի խաղացանկը: Արդեն հայաստան թուրքերենի թարգմանված պիեսները ադապտացվել են, փոփոխվել են հերոսների անունները, սյուժետային դեպքերի վայրերը, այն աստիճանի է ձևափոխել կենցաղը, միջավայրը, որպեսզի ներշնչվի հանդիսատեսին, թե թուրքական պիես է ներկայացվածը: Հայերի նկատմամբ թշնամական վերաբերմունքն այն աստիճանի էր հասել, որ թուրք թատրոնին մեծ ծառայություններ մատուցած Մարտիրոս Մնակյանին ազատում են Ստամբուլի քաղաքային թատրոնի դրամատիկական բաժնի ու բեմադրիչի պաշտոնից և թռչակի ուղարկում: Աներեր էին մնացել միայն թատերախմբի արիմադրոնա **Էլիզ Պինենեմեճյանի (Էլիզ Գովանի)** դիրքերը: Ազգայնական շովինիզմի արդյունք հանդիսացավ նաև թատրոնի լեզուն փոխելը: Քանի որ թուրքիայի պետական լեզուն թուրքերենն էր, ուստի տառերն էլ օսմաներենը պիտի լինեին: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայաստան թուրքերենը որպես թատրոնի գործնական լեզու՝ պաշտոնապես արգելվեց:

Երիտթուրքերի կառավարությունը «Թուրքական թատրոնը հայերի խնամակալությունից ազատելու» սկզբունքային խիստ ուղի ընտրեց: Թատերախմբերում մնացել էին մի քանի հայ դերասան-դերասանուհիներ, հիմնականում հետևելու համար դերուսուցմանը, դերաբաշխմանը: Թատրոնի լեզուն դարձել էր օսմաներենը:

Թուրք կինը դեռ չէր գրավել բեմը, ուստի այդ տեղն ազատ էր և հայ դերասանուհիներին հնարավորություն ընձեռնվեց շարունակելու զբաղեցնել այն՝ ժամանակավորապես: Նույնիսկ հատուկ դասընթացներ կազմակերպվեցին հայ դերասանուհիների համար, որպեսզի օսմաներեն սովորեին, տիրապետեին օսմաներենի ճիշտ հնչողությանը: Ռեֆիկ Ահմեդն այս առիթով գրում է, որ «հայ դերասանուհիներն անցնելով թուրքերեն գրել-կարդալու դասընթացները, քննություն էին հանձնում և վկայագրեր ստանում»³⁵⁶:

356 Ստեփանյան Գ. Թուրքական աղբյուրները թուրքական թատրոնի զարգացման գործում հայերի դերի մասին: Եր., ՀՀ ԳԱ Հրատ., 1983, էջ 30:

Հայերի ու թուրքերի հարաբերությունների միջև այնպիսի վիճակ էր առաջացել, որ թուրքերի կողմից հայերեն տառերն օգտագործելու մասին խոսք անգամ լինել չէր կարող: 1918 թվականին կազմակերպված «Կ.Պոլսի հայ դրամատիկ» թատրոնն ուներ ընդգծված ազգային նկարագիր և ներկայացումները տրվում էին միայն հայերեն լեզվով: Թատերախումբը փորձում էր մի քիչ ընդարձակել իր գործունեությունը և օպերետների կողքին իր խաղացանկ է մտցնում դրամաներ, այդ թվում՝ «Քամելիազարդ տիկինը», «Էսթեր», «Հուդիթ», «Կարմիր քսակ» և այլ գործեր: Սրանք հիմնականում հայատառ թուրքերեն պիեսներ էին, որ գալիս էին դեռևս Մարտիրոս Մնակյանի փառքի ժամանակներից:

Հանրապետության հաստատումից հետո, երբ **Մուստաֆա Քեմալի** անմիջական կարգադրությամբ ստեղծվեց թուրքական ազգային թատրոն, այդժամ թուրք կինը ևս համարձակվեց ոտք դնել բեմ: Հայ դերասան-դերասանուհիներն իրենց գործընկերուհիներին էին փոխանցում դերասանական իրենց փորձը, որ ամբարել էին նախորդ 50 տարիների ընթացքում: Այնուամենայնիվ ֆրանսերենից, անգլերենից հայատառ թուրքերենի քարգմանված պիեսները չէին մոռացվել: Նրանք դեռ երկար տասնամյակներ օգտագործվել են հայկական թատերախմբերի կողմից հայ գաղթավայրերում կազմակերպված թատերախմբերի գործունեության ու առանձին ներկայացումների ժամանակ: Դա եղել է Եգիպտոսում, Սիրիայում, Լիբանանում, Ֆրանսիայում, անգամ հեռավոր Ամերիկայում, երբ ներկայացումներ էին կազմակերպվում թրքախոս հայ գաղթականների համար: Այդ ներկայացումները հաճախել են նաև թուրքերեն իմացող այլազգի հանդիսականներ:

Օսմանյան կայսրությունում թատրոնի ծագումն ու զարգացումը կապվում է ազգային փոքրամասնությունների՝ հույների, հրեաների, հայերի հետ: Նրանք են կառուցել թատրոնի շենքերը, կազմակերպել թատերական ներկայացումներ, հյուրախաղերի հրավիրել դրամատիկական և օպերային արտասահմանյան խմբեր: Թուրք ուսումնասիրողների վկայությամբ սակայն, թուրքական թատրոնի և դրամատուրգիայի ձևավորումն ու զարգացումը կապված է եղել միմիայն հայ թատրոնների գործունեության հետ: Միայն հայկական թատրոններն են, ի տարբերություն մնացածների, իրենց խաղացանկում ունեցել թուրքերեն լեզվով ներկայացումներ: Թուրքական թատրոնի սկզբնավորումը, նրա պատմությունն ու թուրքական դրամատուրգիայի ձևավորումը ավելի քան 50 տարիներ՝ եղել են Սրապիոն Հեքիմյանի «Արևելյան թատրոնի», Հակոբ Վարդոյանի «Օսմանյան թատրոնի», Մարտիրոս Մնակյանի «Օսմանյան դրամատիկի», Թովմաս Ֆատուլաճյանի, Սերովբե Պենկյանի պրոֆեսիոնալ թատերախմբերի թուրքերեն ներկայացումները հայկական թատրոնում:

1877-1878 թվականների ռուս-թուրքական պատերազմից հետո մինչև 1908 թվականն ընդհուպ, հայերեն ներկայացումներն արգելված են եղել: Մեր հաշվումներով հայկական թատերախմբերի կողմից թուրքերեն ներկայացումների թիվը հասնում է 500-ի: Սրանք իրենցից ներկայացնում են դասական դրամատուրգիայի նմուշներ, եվրոպական լեզու-

ներից կատարված թարգմանություններ, փոխադրություններ, արևելյան տիպի տեղայնացումներ, հայ և թուրք հեղինակների ինքնուրույն ստեղծագործություններ, ինչպես նաև համատեղ գրված պիեսներ:

Ինչպես համոզվեցինք, թատրոնում աշխատանքային լեզուն հանդիսացել է հայաստան թուրքերենը, անկախ հեղինակի կամ թարգմանչի ազգային պատկանելությունից: Թատրոնի այս առանձնահատուկ կողմը մինչև 1912 թվականը թուրքական միջավայրում առանձնակի բարդությունների և հակազդեցությունների չի հանդիպել: Այս շրջանի **թուրքական կյանքում հայապատ թուրքերենը բոլորին հասու և հասկանալի հաղորդակցության միջոց է եղել:**

Հայկական թատերախմբերի թուրքերեն ներկայացումներն ինչ որ չափով պայմանավորված են եղել թուրք հեղինակների հետ համագործակցությամբ: Այս անունների թվարկման ժամանակ գտնում ենք թուրք նոր, դասական գրականության բոլոր դեմքերին՝ **Նամըք Քեմալ, Ահմեդ Միդհատ, Շամսեդդին Սամի, Էրուզղիյա Թեֆիկ, Աքըֆ Քեյ, Մեհմեդ Ռիֆաթ, Ռեջափզադե Մահմուդ Էրբեմ, Հասան Վահիդ, Ահմեդ Վեֆիկ Փաշա, Յուսուֆ Քյամիլ Փաշա, Շաքիր Բեդրեթթին փաշա, Հասան Բեդրեթթին փաշա, Ռեֆաթ բեյ, Մուալլիմ Նաջի, Ահմեդ Նեջիբ, Ալի Հայդար, Հասան Բեդրեթթին, Մանասթըրլ Մահմուդ, Ահմեդ Ռաշիդ, Աբդուլհակ Համիդ, Համդի Բեյ, Մուստաֆա Ռեշիդ, Ալի Բեյ, Մուստաֆա էֆ., Աբդուլհամիդ Չիթթին (Չիյա Փաշան) Սամի Փաշազադե Սեզայի, Ահմեդ Ազիզ, Մեհմեդ Մուրադ:** Նրանցից շատերն իրենց հետագայում նվիրեցին գրականությանը, շնորհիվ այն հանգամանքի, որ իրենց ժամանակին Հակոբ Վարդովյանի, Մարտիրոս Մնակյանի, Թովմաս Ֆասուլաճյանի և հայ թատրոնի մյուս դերասանապետների կողմից ներքաշվել էին գրականության, մասնավորապես դրամատուրգիայի ասպարեզ, թատրոնի հմայող միջավայր՝ որպես հեղինակներ և թարգմանիչներ: Բացի նյութական վարձատրություն ունենալու կարևոր խթանի, թատրոնը դեպի իրեն է ձգել է նրանով, որ հնարավոր է դարձրել թատրոնի, բեմի միջոցով քարոզել թուրք առաջադեմ մտավորականությանը հուզող բազմաթիվ նվիրական գաղափարներ: Այն է՝ լուսավորական շարժման, ազգային ինքնագիտակցության զարգացման, կանանց ազատագրման, թուրք նոր լեզվի ու գրականության ձևավորման և այլ գաղափարներ ու ծրագրեր:

Թուրքական թատրոնի ու գրականության պատմության համար առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում 30-ի հասնող ինքնուրույն երկերն ու մոտ 60 անուն թարգմանությունները, որոնք կատարարվել են թուրք նոր գրականության դասականների կողմից հայ թատերախմբերի հետ համագործակցության արդյունքում: Ուստի թուրքական նոր գրականության, մասնավորապես դրամատուրգիայի իրական ուսումնասիրությունը հնարավոր է միմիայն թատրոնի գործունեության հետ նրա համատեղ ուսումնասիրմամբ: Այն թույլ կտա խուսափել նույնի շուրջ միակողմանի, անտրամաբանական եզրակացություններ և արժևորումներ կատարելուց:

Հայաստան թուրքերեն պիեսների մեջ մեծ թիվ են կազմել իրենց ժամանակին եվրոպական բեմահարթակներում հայտնի և ժողովրդականություն վայելած գրական հայտնի ստեղծագործությունները: Նույն շարքում են որոշակի գեղարվեստական և գաղափարական արժեք ունեցող գործեր, բազմաթիվ դասական պիեսներ, որոնք վերցվել են

Թուրքիա հյուրախաղերով հանդես եկած ֆրանսիական- իտալական թատերախմբերի և օպերային խմբերի խաղացանկից: Այս խաղացանկի անքակտելի մասն են կազմել մե- լոդրամները, ֆարսերը, երաժշտական ներկայացումները, օպերետները՝ նաև հագուրդ տալու համար հանդիսականների լայն շրջանակների ճաշակին: Թարգմանությունները, պիեսի վերածելը, փոխադրությունները, տեղայնացումները կատարվել են ինչպես պրո- ֆեսիոնալ թարգմանիչների, այնպես էլ ռեժիսորների, դերասանների, թատրոնի գործիչ- ների կողմից:

Մամուլի էջերում բարձրացվել են հասարակական և մշակութային հնչեղություն ունե- ցող լուրջ խնդիրներ՝ կապված թատրոնի և դրամատուրգիական հարցերի հետ: Թատե- րագիտական բնույթի հրապարակումներից բացի, ժամանակի մամուլում պարբերաբար լայնորեն քննարկման առարկա են դարձել թատրոններում բեմադրված յուրաքանչյուր պիես, յուրաքանչյուր ներկայացում: Չմոռանանք, որ բազմաթիվ պարբերականներ տարիներ շարունակ տպագրել են հայ, թուրք, օտար հեղինակների թերթոնները, որոնք երեկոները կարդացվել են սրճարաններում, բեմադրվել, թերթոնի ավարտվելուց հետո էլ՝ երբեմն առանձին գրքով հրատարակվել: Բնականաբար շատ գործեր այդպես էլ մնացել են մամուլ էջերում: Թատրոնի պատմության համար այս հոդվածներն ու քննարկումնե- րը մեծագույն հետաքրքրություն են ներկայացնում, քանզի դրանց օգնությամբ կարելի է վերականգնել, հասկանալ և գնահատել հանդիսականների տարբեր խավերի վերաբեր- մունքն ու գնահատականը նրանց նկատմամբ: Այս հոդվածները թույլ են տալիս ողջ խո- րությամբ ըմբռնելու ժողովրդի սկզբունքային մոտեցումը հասարակական քաղաքական տարբեր խնդիրների, լուսավորական, մշակութային շարժման նկատմամբ:

Թուրք թատրոնի հայտնի պատմաբան Մեթին Անդն իր արժեքավոր ուսումնասիրու- քյան համար առատորեն օգտվել է ժամանակի թուրքական, ֆրանսիական, անգլիա- կան, հունական մամուլից, ինչպիսիք են եղել Ստամբուլում հրատարակվող «Բասիրեթ», «Թերջուման-ը Հաքիբաթ», «Ռուզնամե-ի Ջերիդե-ի Հավադիս», «Վաքըթ», «Թարիք», «Հայալ», «Դիոմեն», «Հադիկա», «Շարք» «Իբրեթ», «Թավիրի Էֆբեար», «Թերաք- քը», «Օամանը», «Լա թուրքի», «Թերջումանը Ահվալ», «Լևանդ Հերալդ», «Ժուրնալ դը Կոստանտինոպոլ» պարբերականները, որոնք հաճախ են թատրոնի հետ կապված հար- ցերում բանավիճել հայերեն և հայատառ թուրքերեն պարբերականների հետ³⁵⁷: Շատ հարցերում նրանց տեսակետները չեն համընկել և առիթ տվել թերթերի էջերում երբեմն սուր պայքար վարելուն: Բնականաբար վերոհիշյալներից ավելի ժողովրդականություն են վայելել հայատառ թուրքերեն թերթերն ու հանդեսները, նաև՝ բոլորին հասկանալի լինելու պատճառով: Այս բոլոր պարբերականները հիմնականում անդրադարձել են թա- տերական կյանքին, իսկ հայկական մամուլում այն ամենօրյա հրապարակման նյութ է հանդիսացել, ուր տպագրվել են թերթերի «Թատերական կյանք» խորագրերի ներքո՝ ապացույց այն բանի, որ թատրոնը վաղուց մաս էր կազմել ժողովրդի կենցաղի, մտել ըն- տանիքներից ու պալատներից ներս: Այն գուգակցվել է թատերական գործերի հրատա- րակություններով և մարդկանց մղել կարդալու նույն այդ հեղինակի մնացած գործերը

357 Մեթին Անդը բարեխղճորեն օգտագործել է նաև հայ և հայատառ թուրքերեն պարբերական մամուլը, հայ թատերագիտական գրականությունը և մասնավորապես Գառնիկ Ստեփանյանի արևմտահայ թատրոնին նվիրված եռահատոր մենագրությունը:

ևս: Այս հանգամանքը մի քիչ ավելի է նպաստել, որ հայաստան թուրքերեն գեղարվեստական գրականությունը ավելի մեծ ժողովրդականության վայելի: Իսկ այն հանգամանքը, որ թատրոնի հետ կապված մոտ հարյուրավոր մեծ ու փոքր հայաստան թուրքերեն ստեղծագործություններից միայն մի փոքր մասն է տպագրվել, իսկ մնացածը ձեռագիր վիճակում են մնացել ու ձեռքից ձեռք, թատրոնից-թատրոն փոխանցվել, որը ամենևին էլ չի նսեմացնում նրանց կատարած հասարակական, մշակութային, լուսավորական դերի անառարկելի մեծ ավանդը:



Գլուխ Թ

Հայատառ թուրքերեն գրահրատարակչության անկման ընդհանուր բնութագիրն ու պատճառները (20-րդ դար)

20-րդ դարի հայատառ թուրքերեն գրականությունը մեծապես տարբերվում է Թուրքիայում 19-րդ դարում գոյություն ունեցած գրականությունից: Այս շրջանը կարևորվում է նրանով, որ գաղափարական տեսակետից և բովանդակային առումով ևս կտրականապես այլ է, քան նախորդ հարյուրամյակի հայատառ թուրքերեն գրականությունը: Այս տարբերությունն ավելի ակնհայտ է դառնում մանավանդ թարգմանական գեղարվեստական գրականության ուսումնասիրման արդյունքում:

Առաջին առանձնահատկությունը, որ ուշադրություն է գրավում՝ եվրոպական վեպի իսպառ բացակայությունն է: Պատճառները՝ հիմնականում երկուսն են: Նախ և առաջ, թրքախոս հայերի նոր սերունդը շնորհիվ նախորդ տասնամյակներում հայկական տարբեր դպրոցների գոյության, այնքան էր տիրապետում մայրենի լեզվին, որ հայատառ թուրքերեն գրականության սուր անհրաժեշտությունն այլևս չկար: Արդյունքում կրճատվեց հայատառ թուրքերեն մամուլի թվաքանակը: Այսպես օրինակ, մեծ մասսայականություն վայելող «Մանգումեի Էֆքեար» օրաթերթը դարասկզբին արդեն հայալեզու էր դարձել: Հայատառ թուրքերենով հրատարակվող մի քանի պարբերականներ կասեցրել էին հայատառ թուրքերեն թերթոնային վեպերի հրատարակության սովորույթը: Մինչև 1908 թվականը քաղաքական նկատառումներով, իսկ այնուհետև՝ թուրքերեն ընթերցողների թվաքանակի նվազման պատճառով «Ճերիտեի Շարգիյե»-ն (Կ.Պոլիս, 1885-1913 և 1919-1921թթ) և մի քանի այլ հայատառ թուրքերենով հրատարակվող պարբերականներ սկսեցին իրենց էջերում հայերեն վեպ-թերթոններ հրատարակել:

Երկրորդ առանձնահատկությունը՝ բնորոշ այս տարիներին, աշխարհիկ բովանդակության տեղի տալն է կրոնա-բարոյախոսական թեմատիկային, մմանվելով հայատառ թուրքերեն տպագիր գրականության սկզբնավորման շրջանին, 18-րդ դարի վերջին և 19-րդ դարի սկզբին: Տարբերությունը կայանում էր լոկ նրանում, որ եթե ձևավորման առաջին շրջանում տիրող գաղափարախոսություն էր կաթոլիկական քարոզչությունը՝ Տրիեստի, Վիեննայի, մասամբ նաև Վենետիկի Մխիթարյան հայրերի միաբանություն-կենտրոններով, ապա 20-րդ դարի առաջին քառորդում կաթոլիկական դավանաբանական գրականությունը փոխարինվել էր հիմնականում ամերիկյան միսիոներների կողմից տպագրված հայատառ թուրքերեն կրոնական հրատարակություններով: «Աստվածաշնչի տարածման» ամերիկյան ավետարանականների միությունը բուռն գործունեություն էր ծավալել Թուրքիայում, մասնավորապես քրիստոնյա ժողովուրդներից հայերի շրջանում, դեռևս 19-րդ դարի կեսերից և առատորեն Աստվածաշունչ,

Ավետարաններ էր տպագրում ոչ միայն հայաստան թուրքերեն, այլև հայաստան քրդերեն՝ նկատի ունենալով կայսրության եզրի բնակչությանը³⁵⁸:

Աստվածաշնչերի, Ավետարանների հրատարակությանը զուգահեռ նկատելի թիվ են կազմել անգլերենից թարգմանված աստվածաբանական գործերի տպագրությունները: Լույս են տեսել **Կավլինի** (1509-1564) «Համառոտ քրիստոնեական վարդապետությունը» (1924թ.), **Թոմաս Հոլլուեյի** «Սուրբ Գիրքն աստծո՞ բառն է» (1912թ.) գրքույկը, **Ջոն ՄագՆիլի** «Հավատով լեցուն կյանք»-ը (1907թ.), գերմաներենից թարգմանված **Շտայբերգերի** «Աստծո գառան ճանապարհը» (1914թ.): Որոշ գրքեր անանուն են տպագրվել, մյուսների վրա նշված են ամերիկյան ավետարանական-քարոզիչների անունները, որոնցից ամենաբեղուն էր եղել **Ջոն Կ.Մեք Գրեգորը**: Վերջինիս 4-5 գրքերը դարասկզբին թարգմանվել են հայաստան թուրքերեն և տպագրվել: Լույս են տեսել գրքեր, որոնց հեղինակների մասին այսօր մեզ ոչինչ հայտնի չէ: Այդ հեղինակներից են՝ **Գ.Գրին, Հովարդ Թեյլոր, Քինգլի Ֆլորենս, Քոլլեր Ս., Թիթզոմ Թիմոթի, Ջոն Մարթին, Սթոլ Սիլվեյնս** և ուրիշներ: Այս հրատարակությունների թարգմանիչներն են եղել՝ **Սրբուհի Չաքարյանը, Ներսես Կյուզելիմյանը, Մ.Փափագյանը, Պ.Թահմիզյանը, Ս.Հարությունյանը** և ուրիշներ: Հաճախ չի նշվել ոչ թարգմանիչը և ոչ էլ ո՞ր լեզվից թարգմանված լինելը: Երբեմն այս հեղինակների ու նրանց գործունեության մասին տեղեկություններ ենք գտնում ժամանակի հայերեն ու հայաստան թուրքերեն պարբերականներում, սփյուռքահայ հրատարակություններում, որոնք տպագրվել են հայրենակցական միությունների ու առանձին հեղինակների կողմից և նվիրված են Արևմտյան Հայաստանի տարբեր զավառներին ու առանձին բնակավայրերին³⁵⁹:

Պարբերականորեն հրատարակվել է հայաստան թուրքերենով Ստամբուլի Բայրլ-Հաուզ բողոքական եկեղեցու «Էմմանուել» թերթիկը (բրոշյուրը) :

Տպագրվող գրքերի, մասնավորապես թարգմանությունների մեջ սկսում են իշխող

358 Դարասկզբին հայաստան քրդերենով Կ.Պոլսում, Պոյաճյանների տպարանում տպագրվել են Աստվածաշունչ, Մատթեոսի, Մարկոսի, Լուկասի, Հովհաննեսի Ավետարանները (1911թ.): 1857, 1861, 1872, 1891 և այլ տարիներին Կ.Պոլսի Սյուհենտիսյանի, Պոյաճյանի տպարաններում տպագրվել են քրդերեն մի շարք դասագրքեր, բառարաններ, քրիստոնեական կրոնին վերաբերող գրքեր: Քրդերեն այբբենարանի և մի շարք դասագրքերի հեղինակ էր Սկրտիչ Տիգրանյանը՝ «Առաջնորդ Քրդստանի և Բալուխ»: Օսմանյան կայսրությունում հայաստան քրդերեն տպագիր հրատարակությունների մասին տես Կ.Պոլսում հրատարակվող «Tarih ve Toplum» գիտահանրամատչելի ամսագրում, ուր պարբերաբար հոդվածաշարեր են նվիրվում կայսրության տարբեր ժողովուրդների թուրքերեն լեզվով, սակայն տարբեր այբուբեններով ստեղծված գրականությանը՝ այդ թվում նաև հայաստան թուրքերեն գրականությանը («Tarih ve Toplum», 1988, N 54, s 59-63 և 1988, N 55, s 58-63. հայաստան քրդերենի մասին և հայաստան թուրքերենի շուրջ. Կ.Պամուկցյան. “Ermeni Harflı Türkçe Yazma Sözlükler, Tarih ve Toplum, 1986, ocak, N 25, s. 52-54; Կ.Պամուկցյան. “Ermeni Alfabesiyle Türkçe“, “Tarih ve Toplum”, 1984, haziran, N 4, s. 4.; Prof. Talat Tekin. “Ermeni Alfabesiyle Türkçe”; “Tarih ve Toplum”, 1984, haziran, N 4, s. 6-9).

359 Թեոդիկի «Ամենուն տարեցույցի» 1926թ. տարեգրքում (էջ 735) տեղեկանում ենք ֆրանցիսկյան ուխտի կրոնավոր Էմմանուել Կառչիա Բառտուայի մասին: Կաթոլիկ այս քահանան 3 տարի ծառայել է Մարաշի կաթոլիկ եկեղեցում, որբանոց բացել, օգնել շատ հայերի 1895թ. Ջեյթունի կոիվների ժամանակ: Մեզ ամենից ավելի հետաքրքրում է նրա գործունեության այն մասը, որն առնչվում է մեզ հետաքրքրող նյութի՝ հայաստան թուրքերեն գրականության հետ: Հայտնի է, որ նա սովորել է հայերեն, թուրքերեն և ինքն է թարգմանել ու հրատարակել հայաստան թուրքերեն գրքեր: Առայժմ մեզ հայտնի չեն այդ գրքերից և ոչ մեկը:

դառնալ անգլերենից կատարված թարգմանությունները՝ նախկինում ֆրանսերենից կատարված թարգմանությունների փոխարեն: Որոշակի թիվ են կազմում աստվածաշնչական թեմաների գեղարվեստական մշակումները:

Եթե 19-րդ դարի կեսերին ֆրանսիական թերթոնային գրականության ուժեղ ազդեցությամբ Կ.Պոլսում և Ջմյուռնիայում թարգմանիչների մի ամբողջ համաստեղություն ասպարեզ իջավ, ապա 20-րդ դարի առաջին կեսին հանդես են գալիս տասից ավելի անգլերենի թարգմանիչներ: Հայատառ թուրքերեն գրքերի վրա հիշատակված թարգմանիչներից են **Մ.Պահարյանը, Օ.Պոյաճյանը, Վ.Թահմիզյանը, Մ.Փափագյանն** ու ուրիշներ: 1901-1914թթ. նրանք հիմնականում թարգմանել են բարոյախոսական գրքույկներ, աստվածաշնչական թեմաներով պատմություններ:

Բացի թարգմանական գրականությունից, մինչև 20-րդ դարի կեսերը հրատարակվել են նաև հայ հեղինակների ինքնուրույն գործեր, որոնք կրոնա-բարոյախոսական բնույթի երկեր են և որոնց հեղինակները հարել են ավետարանչականներին կամ կաթոլիկությանը: Հրատարակվել են առաքելական հայ եկեղեցու դիրքերից գրված գրքեր, որոնք ուղղված են եղել վերը հիշատակված միսիոներական հրատարակությունների և այդ եկեղեցիների հոգեորս գործունեության դեմ: Սակայն հրատարակությունների առյուծի բաժինն այնուամենայնիվ բողոքականությանը հարած հայ հեղինակների գործերն են եղել: Հրատարակվել են հայատառ և հունատառ թուրքերենով քրիստոնեական վարդապետություն, հայերեն և հայատառ թուրքերեն հոգևոր երգեր և այլն:

1908թ. Սահմանադրության վերականգնման համեմատաբար ազատ շրջանում, հայ առաջադեմ գործիչները սկսում են հրատարակել հայրենասիրական ստեղծագործություններ հայատառ թուրքերենով: Դրանց մի մասը թարգմանություններ են հայերենից կամ այլ լեզուներից: Այսպես, հնչակյան կուսակցության գործիչներից, հրապարակախոս **Հմայակ Արամյանը** (1878-1919) Կ.Պոլսում 1909 թվականին հրատարակում է «Բռնակալի մահը» հայերեն, ապա՝ 1910 թվականին՝ նույնի հայատառ թուրքերենը: 1910 թվականին լույս են տեսել հետաքրքրություն ներկայացնող մի շարք գրքեր՝ **Բարունակ Փափագյանի** «Բռնակալության ժամանակաշրջանի հուշերը», **Կ.Չալյանի** «Աղանալի դեպքերը և պատասխանատուները», **Ե.Պեհսնիկյանի** գիրքը (204էջ) նվիրված 1909թ. Կիլիկիայում նահատակված միսիոներներին ու քարոզիչներին՝ նրանց կենսագրականներով հանդերձ: 1912-14 թվականներին լույս է ընծայվել **Հակոբ Վարժապետյանի** «Հայկական տարեգիրքը»: Մարզվանում նույն թվականին լույս են տեսել «Հայրենիքի և ազատության երգեր», իսկ Կ.Պոլսում՝ հայատառ թուրքերենով ստեղծագործող բանաստեղծների մի ամբողջ խմբի ստեղծագործություններից կազմված ժողովածու: 1910 թվականին լույս է տեսել հայտնի **Ուղի Հաբեթի (Հաբեթ Մարյան)** բանաստեղծությունների ժողովածուն: **Կարապետ Քեշիշյանի** կազմած «Շարք սալնամեսի» (Արևելյան տարեգիրք, 1914թ.) գրքում արձակ և չափածո ստեղծագործություններ են պարունակվում:

Այս շրջանում որոշակի թիվ են կազմում հայատառ թուրքերենով գրված չափածո ստեղծագործությունները³⁶⁰: 1911-1914թթ. հայատառ թուրքերենով իր բազմաթիվ

360 Պոլսահայ մատենագիր Գևորգ Բամպուրճյանը լատինատառի է վերածել հայտնի մտավորական,

բանաստեղծություններն է տպագրել Սեբաստիայի «Անդրանիկ», «Հողդար» շաբաթաթերթերում տեղի կուսակալ, թուրք նոր գրականության պայծառ դեմքերից **Մեհմեդ Էմինը**: Նույնիսկ գրախոսականներ են տպագրվել՝ «Բանաստեղծ կուսակալին»՝ Մեհմեդ Էմին Պեյ»: Այս բարեկամությունը հայասեր բանաստեղծին այնուամենայնիվ հնարավորություն չի տվել կանխելու իր գավառում հայերի ջարդը³⁶¹: Վերահրատարակվում են մի շարք գեղարվեստական արժեք ներկայացնող գրքեր, այդ թվում՝ միջնադարում սիրված պատմություններից «Պատմութիւն Փոնցիանոս կայսերին» բարոյախոսական հենք ունեցող պատմությունը: Հեքիաթն առաջին անգամ հրատարակվել է 1803 թվականին: Այն թարգմանված է եղել լատիներից բանաստեղծ **Հակոբ Եվրոկացու** (1573-1680) կողմից Լեհաստանում, ապա՝ հայերենից հայաստան թուրքերեն է թարգմանվել և ունեցել բազմաթիվ տպագրություններ մինչև 1925 թվականը:

Չհաստատված մի աղբյուրի համաձայն այս հեքիաթի հայաստան թուրքերեն 4-րդ տպագրությունը կատարվել է Մադրասում, դեռևս 1790 թվականին, **Հարություն քահանա Շիրազեցու** տպարանում:

Առաջին համաշխարհային պատերազմն ավելի սրեց երիտթուրքերի ազգայնական քաղաքականության ուղղվածությունը: Հայերի կոտորածները տարբեր գավառներում և վերջապես 1915 թվականը՝ Թուրքիայի ողջ տարածքով մեկ ամայեցրին հետագա մի քանի տարիների գրական, հրապարակախոսական, մշակութային ասպարեզը: Համարյա 6 տարի (1916-1922թթ) Թուրքիայում ոչ մի հայաստան թուրքերեն գիրք չի տպագրել:

XX դարի 20-ական թվականներից սկսել են վերահրատարակել նախկին տարիներին առատորեն լույս տեսած արևելյան սիրավեպերը՝ երգերով հանդերձ, հոջա Նասրեդդինի պատմությունները, դասագրքեր, բառարաններ, խոհարարական գրքեր, ինչպես նաև Աստվածշունչ, աղոթքներ, քարոզներ, կրոնաբարոյախոսական շատ հրատարակություններ:

Ամենահետաքրքիր հրատարակություններից է 1924թ. լույս տեսած փոքրածավալ եռալեզու զինվորական եզակի բացատրական բառարանը (հայերեն, ֆրանսերեն, հայաստան թուրքերեն՝ 64 էջ): Կազմել է Հակոբ Ճոլոյանը, Պոլսին նվիրված հայտնի ուսումնասիրության հեղինակ **Հակոբ Սիրունին** (1890-1973): Ջինվորական ասպարեզն այն եզակի բնագավառներից է եղել, ուր հայերը մուտք չեն ունեցել, ուստի և դրան վերաբերող հրատարակություններ չեն եղել:

Հայաստան թուրքերեն գրականությունը վայելչք է ապրել թրքախոս հայերի ավագ սերնդի անհետացման, և ընդհանրապես՝ հարյուր հազարավոր թրքախոս հայերի մարտիրոսացման պատճառով: Հայաստան թուրքերեն գրահրատարակչությունը Թուրքիայում մեծ արագությամբ անկում ապրեց: Մագապուրժ փրկված հայերը, որոնց համար

«Ճիհան»(Աշխարհ)հայաստանթուրքերենգրական,գիտական,առևտրական,ճանապարհորդական,կենսագրական,արդյունաբերական շաբաթական հանդեսի (1884-1885) տնօրեն խմբագիր Տիրան Քելեկյանի 150 հայաստան թուրքերեն բանաստեղծությունները (տես՝ Կարո Աբրահամեան. Վաղահաս ու անփոխարինելի կորուստ մը՝ Գ-երոգ Բամպուքճեան, «Հասկ» տարեգիրք, Անթիլիաս, 1995-1996, էջ 664):

361 Առաքել Ն. Պատրիկ, Պատմագիրք Յուշամատեան Սեբաստիոյ եւ գաւառի հայութեան» Հ.Ա. 1974, Բեյրութ, էջ 396.

թուրքերենը մնում էր հաղորդակցության միջոց, դեռ երկար տարիներ ստիպված էին օգտագործել այս գրականությունը, կարդալ հայատառ թուրքերեն պարբերականներ, ինչպիսին էր «Բահնիման», կրոնական-քարոյախոսական հրատարակություններ և այլն:

Չոհ էին գնացել ոչ միայն հայատառ թուրքերեն ընթերցողները, այլև այն ստեղծող մտավորականները, հասարակական գործիչները:



Գլուխ Ժ

Հայաստան թուրքերեն հրատարակությունները 20-րդ դարում Թուրքիայի սահմաններից դուրս

Արևելքի երկրներում եվրոպական և ամերիկյան միսիոներական գործունեությունը բավականին մանրակրկիտ է լուսաբանված սովետական շրջանի պատմագրության մեջ ևս: Ապացուցված է, որ քողարկելով միսիոներական գործունեության հիմնական նպատակը՝ կապիտալիստական երկրների կողմից էքսպանսիայի գործիք հանդիսանալու մասին, բուրժուական պատմագրության կողմից մեծ ջանքեր են գործադրվել ներկայացնելու այն՝ (Միսիոներական շարժումն Արևելքում) որպես զուտ կրոնական և մշակութային երևույթ: Ամերիկյան միսիոներները ներկայացվում են բացառապես «աստծո խոսքը» քարոզողների դերում, որոնք գործել են որպես լուսավորական գործիչներ, բարեգործական միությունների, բուժական և ուսումնական հաստատությունների հիմնադիրներ: Չի խոսվում այն մասին, թե հաճախ, ինչպես էին նրանք կապիտալիստական երկրների ու խոշոր ֆիրմաների քաղաքական գործակալների դեր ստանձնում: Ամերիկյան միսիոներները Մերձավոր Արևելքում առաջին համաշխարհային պատերազմից հետո աշխուժացրին և ընդարձակեցին իրենց գործունեության շրջանակները: Հայկական գաղթավայրերում նրանք մասնավորապես զարկ տվին հայաստան թուրքերեն գրահրատարակչության ավանդույթները շարունակելու գործին: Հայերի ողբերգությունը կարծես նոր շունչ էր հաղորդել նրանց գործունեությանը: Մարդկային հոգիների փրկության ու նրանց դրախտ անցնելու մասին քարոզները նոր որակ էին ստացել: Իրական օգնություն ցուցաբերելու փոխարեն նրանք ջարդերից մազապուրծ ազատված հայերին կերակրում էին կեղծ բարեգործական քարոզներով ու հրատարակություններով ներշնչում, թե Աստված սիրելիներին է փորձության ենթարկում: Եվ շարունակում էին, թե չարիքի կազմակերպողները շատ ավելի խորը կարեկցանքի են արժանի, քան նրանց զոհերը, քանի որ նրանց դժոխքն է սպասում, իսկ զոհերին՝ դրախտը: Ծիշտ այսպես էին նրանք քարոզում՝ շրջելով Օսմանյան կայսրության նախկին վիլայեթներով և մերձավորարևելյան երկրներով, ուր հայկական գաղթավայրերն օր օրի ավելանում էին Թուրքիայից փախած հայերի հաշվին: Քարոզիչներն ու նրանց հրատարակությունները համոզում էին հայերին զերծ մնալ ինքնապաշտպանությունից ու վրեժխնդրությունից: Այսպիսի բազմաթիվ հրատարակություններ, որոնց մի մասը գեղարվեստական ստեղծագործության շղարշ ունեին՝ տպագրվել են առատորեն Հալեպում, Դամասկոսում, Բեյրութում, Կահիրեում, Ալեքսանդրեթում, Մարսելում, Լոնդոնում, Փարիզում, և Ամերիկայի մի շարք քաղաքներում և այլուր:

XX դարի հրատարակությունները նախընտրում ենք ըստ երկրների ներկայացնել:

Հայաստան թուրքերեն գրքեր ամենից շատ, շուրջ 150 անուն, հրատարակվել են Մի-

րիայում՝ Հալեպում և Գամասկոսում: Այդ ժամանակվա 30 գոյություն ունեցող տպարաններից 17-ում հրատարակվել են հայատառ թուրքերեն գրքեր³⁶²: Սիրիայի հայկական գաղութն ամենամեծերից էր և սիրիական ժողովուրդը՝ հյուրընկալ ու ազնիվ: Թուրքիայի տարբեր գավառներից հայ փախստականները Սիրիա էին հասցրել ու հիմնադրել իրենց տպարանները: Այսպես օրինակ, «Մուրիական մամուլ» (1922-1926) տպարանը փոխադրվել էր Ադանայից 1922 թվականին: Հալեպի «Գոլեճ» տպարանը (1922-1945) ժառանգորդն էր Այնթապի Կիլիկյան Կոլեջի, որ բացել էին ամերիկյան միսիոներները: Մի շարք հայկական տպարաններ բացվեցին՝ կապված հայկական նոր պարբերականների հրատարակության առթիվ: Այսպիսի սկիզբ են ունեցել «Արևելք» (1946 թ), «Եփրատ» (1942-1949), «Նաիրի» (հանդեսի, 1945-1955) տպարանները: Ինչպես մյուս երկրների, այնպես էլ Սիրիայի հայկական համայնքը ներկայացված էր մի շարք քաղաքական կուսակցություններով, մշակութային, բարեգործական, մարմնամարզական և այլ միություններով: Դրան պետք է ավելացնել հայկական տարբեր եկեղեցիների գոյությունը, որոնք ղեկավարում էին համայնքի իրենց հոտը:

Երբեմն հայկական թերթերն ու տպարանները փակվել են՝ կուսակցական շահերի բախման արդյունքում: Համարյա ամեն մի հայկական տպարան ունեցել է իր քաղաքական ուղղվածությունը, հարելով որևէ կուսակցության, միության և եթե ոչ լրիվ, գոնե մասամբ հանդիսացել է վերջինիս քաղաքական գաղափարների արտահայտիչը:

«Գոլեջ» տպարանում լույս են տեսել անգլերենից թարգմանված բողոքականների կրոնա-բարոյախոսական տիպի գրքերը, կրոնական պատմություններ, նույնիսկ գիտական, բժշկական գրքույկներ: Երբեմն այս հրատարակություններից առաջացած հասույթը տրամադրվել է տարբեր բարեգործական նպատակների համար³⁶³: «Մարանաթա» (1922-1963թթ) տպարանում 1925 թվականից սկսել է հրատարակվել հայերեն և հայատառ թուրքերեն նույնանուն կրոնական ամսաթերթը: Այստեղ տպագրվել ու անվճար բաժանվել են կրոնական թերթիկներ և քարոզներ: Լինելով Հալեպի բողոքական հայերի տպագիր օրգանը, հաճախ են տպագրվել կրոնական գրքույքներ, որոնք իրենցից հնազանդության կոչեր են ներկայացրել: Տպագրությունները կատարվել են հայերեն և հայատառ թուրքերեն:

«Մուրիական մամուլը» հանդիսացել է հայ հնչակյան քաղաքական կուսակցության տպագիր օրգանը: Այստեղ էլ տպագրվել է նրանց «Հնչակ» թերթը և կուսակցության երիտասարդական մասնաճյուղի ամսագիրը:

«Տեր Սահակյան» տպարանը երբեմն տպագրել է գեղարվեստական գործեր, ինչպես օրինակ **Իմանյան Մեննուշի** «Այնթապի երգերը» (1931) և **Հ.Մերթախանյանցի** «Այնթապի պատերազմի եղերգը» (1948), «Քյոռ օղլու պատմությունը» (1933): Հալեպի հայ ուսուցիչների միության «Սևան» տպարանում (1944-1946) հրատարակվել է **Տեր Պետրոսյան**

362 1973թ. Հալեպում հրատարակվել է Գ.Պարիկյանի և Օ.Վարժապետյանի «Սիրիայի հայկական տպարանների պատմությունից» կարևոր ուսումնասիրությունը: Այստեղ ներկայացված են տպարաններ, պարբերականներ և Սիրիայում տպագրված գրքեր: Հայերը հրատարակչական գործունեություն են ծավալել 40 արաբական և հայկական տպարաններում: Տես նշված աշխատության էջ 10-ը:

363 1931 թ. տպագրված «Եզովպոսի առակների» գրքից առաջացած հասույթը տրամադրվել է խուլուհամր երեխաների դպրոցին:

Լուսինի «Ասք Հայաստանի մասին» դեպքում ներգաղթի շրջանում՝ 1946 թվականին: Նույնիսկ եթե այս տպարաններում մեկ հայաստան թուրքերեն գիրք է հրատարակվել, այն հետաքրքիր է իր տեղեկատվական տեսակետից: Հետաքրքիր է, որ հայ ուսուցիչներն անգամ իրենց տպարանն են ունեցել՝ ուսումնական կյանքի հետ կապված իրենց հրատարակություններն իրականացնելու համար:

Ինչպես նախկինում Թուրքիայում, այնպես էլ Սիրիայում հրատարակվել են որոշակի թվով կրոնական բնույթի գրքեր, որոնց հեղինակները եղել են ամերիկյան քարոզիչներ: Այս տպագրություններն իրենցից ներկայացնում են թարգմանություններ, կատարված հիմնականում անգլերենից: Այս հրատարակությունները պատկանում են ավետարանական եկեղեցու տարբեր ուղղություններին, նրանց դավանաբանական հիմքերին ու սկզբունքներին: Հրատարակված գործերի հեղինակների թվում են **Թորրի Ռուբեն Արչերը, Ֆիննի Չարլզ Գրանդիսոնը, Վեսլի Ջոնը, Սպերջոն Չարլզ Հադդոնը**: Մյուս հեղինակների մասին մենք տեղեկություններ չգտանք ոչ մի կրոնական, միսիոներներին վերաբերող հանրագիտարանային հրատարակություններում: Թվենք այդ հեղինակներից մի քանիսին՝ **Բրաուն Արչիբալդ, Օ. Սմիթ, Թ. Մուտի, Իգաբել Մերիկ, Կ.Բրուկս, Ռ.Ռաբորտս, Ջոնաթան Էդվարդս** և այլն: Բացառված չի, որ այս վերջինները մաս են կազմել Սիրիայի հայերի շրջանում քարոզչության ուղարկված ավետարանականների: Թարգմանությունները կատարվել են **Լ.Մաքսուտյանի, Թ.Աճեմյանի, բողոքական քահանա Ա. Եղոյանի, Ս. Քեշիշյանի, Գ. Ճիզմեճյանի** կողմից: Հայաստան թուրքերեն հրատարակությունների թվում են կաթոլիկության ու բողոքականությանը հարած մի շարք հեղինակների՝ **Աբրահամ Սեֆերյանի, Մինաս Պոզոբլյանի, Ս.Չորպաջյանի, Ռեբեկա Գրիգորյանի, կաթոլիկ քարոզիչ Վահան Թահմիզյանի, Գևորգ Գասարճյանի** ինքնուրույն գործերը:

Այս գրքերի կողքին և դրանց քարոզչական բնույթին հակադրվելու միտումով Հալեպում հայաստան թուրքերեն գրքեր են հրատարակվել՝ հայ առաքելական եկեղեցու դիրքերի պաշտպանությամբ, ուղղված միսիոներների ազգը պառակտող, հոգեորսական քաղաքականության դեմ: Այս առումով հետաքրքրություն է ներկայացնում հայ եկեղեցու կողմից հրատարակված ամուսնությունների և կնունքների կարգի մասին գրքույկը (1929թ.): Այսպիսի հրատարակությունները նապատակ են հետապնդել կապված մնալ առաքելական եկեղեցու օրենքների ու ավանդույթների հետ: Այս տպագրությունները երկլեզու են եղել՝ հայերեն և հայաստան թուրքերեն:

1930-1950 թվականներին Հալեպում լույս են տեսել 1915 թվականի ազգային մեծ ողբերգության մասին մի շարք գրքեր: Հայրենիքի կորստի, նյութական և հոգեկան հարստությունների ոչնչացման, մշակութային արժեքների, հուշարձանների ավերմանն են նվիրվել մի շարք հրատարակություններ: Այս գրքերը կորցրած երկրի, պատմական ու մշակութային անցյալի նկատմամբ հայրենակարոտության խոր զգացումներով են լեցուն: Այդպիսի գրքերից են՝ **Իմանյան Մեննուշի (Իմանըմ Մեննուշ, Մանուշակ Տեյիրմենճյան)** «Այնթապի պարպումը», «Երկրորդ գաղթ», «Այնթապի երգեր», և «Հյուղակների դեպքում», **Սարգիս Սերդարյանի** մույն թեմային նվիրված չափածո ստեղծագործություններն ամփոփող գրքույկները (1919-1935 թվականներին), երգարաններ, Հակոբ

Պտղունու 1915-1929թթ հայկական դժբախտությունների մասին չափածո գործը և այլ փոքր ծավալի ստեղծագործությունները (1929), **Սարգիս Մինասյանի** հրապարակախոսական բնույթի չափածո գործերը (1939), **Խաչիկ Գասպարյանի** «Աբու Լալա Մահարու» մնանությանը գրված «Հայ գաղթականը» (1946) և այլն:

Ընդհանրապես այս տարիների հրատարակությունների մեջ որոշակի թիվ են կազմել իրենց «աշուղներ» հորջորջած բանաստեղծների ստեղծագործությունները: Դրանց թվին է պատկանել Մարսելում հրատարակված **Աշուղ Ղազարի (Թագվոր Խաչիկյան)** «Հայու ողբերգութիւն» բանաստեղծությունների ժողովածուն (1930):

Միրիայի հայկական գաղութը չի տվել ոչ մի արժեքավոր պատմական կամ գեղարվեստական երկ հայատառ թուրքերենով: Տպագրվել են հայտնի արևելյան սիրավեպերի հերթական վերահրատարակություններ, հին և նոր հեքիաթներ, պատմություններ և այլն, որոնք միայն այս գրականության գոյության փաստի արձանագրումներն են և ոչ՝ գրական երևույթներ: Թեև Թուրքիայից փախած հայերը շարունակում էին մնալ թուրքերենի (հայերենի հետ միասին) կրողներ, սակայն արաբական աշխարհում թուրքերենը աստիճանաբար կորցնում էր իր գործածական նշանակությունը: Թրքախոս հայերին կուսակցական, հասարակական, մշակութային կյանքին մասնակից դարձնելու համար հայատառ թուրքերեն և հայերեն մամուլը շարունակում էր այնուամենայնիվ հայատառ թուրքերենով հրատարակել փաստական հարուստ նյութ:

Հալեպից հետո հայատառ թուրքերեն հրատարակություններ ունեցած նշանակությամբ երկրորդ կենտրոնը եղել է Բեյրութը: Հայատառ թուրքերեն հրատարակությունները 12 հայկական տպարաններում են կատարվել, ինչպես նաև ամերիկյան ավետարանականներին պատկանող տպարանում: 1913-1946 թվականներն ընկած ժամանակահատվածում Բեյրութում լույս է տեսել մոտ 40 հայատառ թուրքերեն գիրք: Արժեքավոր են «Սպաներէն- հայերէն եւ հայատառ թուրքերէն գրուցատրութիւն»ը (ամանուն, 1928) և Կ.Կիլիկեցու կազմած «Ձրուցատրութիւն հայերէն եւ հայատառ թուրքերէն»ը (1930): Բեյրութում «Լուսֆիկ, Ֆլորենցա և Իսկենդերի» համառոտ պատմության հետ միասին հրատարակվել է «Ալեքսանդրի պատմությունը»: Հայտնի է միայն, որ 32 էջանոց գիրքը տպագրվել է **Կարապետ Տոնիկյանի** տպարանում: Վերահրատարակվել է Փոնցիանոս կայսեր և յոթ իմաստասերների մասին սիրված պատմությունը (1828), Ալեքսիանոսի պատմությունը (1826, 1828), արևելյան համարյա բոլոր սիրավեպերը: Բեյրութի հայ համայնքը չի շարունակել հայատառ թուրքերեն գրահրատարակչության ավանդույթները, թեև համայնքը կազմված է եղել Թուրքիայից փախած հայերից: Գրական ու մշակութային գործիչներն արդեն նկատելի թիվ չեն կազմել: Անթիլիասում, Մ.Մագսուտյանի տպարանում հրատարակվել է գրաբար հայամավորից կատարված ծավալուն «Սրբերի կյանքը» խորագրով (1937թ. 412 էջ) մի թարգմանություն: Հրատարակվել են կրոնական և եկեղեցական ծեսերին վերաբերող գրքեր, երազահաններ, գուշակությունների գրքեր, որոնք որոշակի գեղարվեստական արժեք չեն ներկայացնում: Բեյրութի ամերիկյան տպարանում շարունակվել են տարին մեկ տպագրվել Աստվածաշունչ, ավետարաններ, քարոզչական գրքեր: Կրոնական բովանդակության սովորական դարձած հրատարակություններին զուգահեռ ի հայտ է գալիս բովանդակային նոր արտահայտություն,

որն արդյունք էր Բեյրութի հայ գաղութի կյանքի և պատմական իրավիճակի փոփոխության: 1946 թվականին լույս է տեսնում **Աշուղ Նադիրի** «Ներգաղթի մասին դեստանը և խնդրանք Ստալինին» գիրքը: Ազգությամբ հայ հեղինակն իր բավադրում գովերգում է դեպի Սովետական Հայաստան կազմակերպված սփյուռքահայերի ներգաղթը: Քաղաքական ուղղվածություն ունեցող հայաստան թուրքերեն մի քանի փոքր ծավալի նմանատիպ գրքույկներ հրատարակվել են նաև հայկական մյուս գաղութներում ևս: Բեյրութում են հրատարակվել նաև մի շարք երգարաններ, խոհարարական գրքեր:

Երուսաղեմի Սրբոց Հակոբեանց վանքի տպարանում շարունակվել են տպագրվել Պաղտասար Դպրի «Պատմություն Գրիգոր Լուսավորչի» երկի հերթական վերահրատարակությունները: 1928 թվականի հրատարակությունն այդ գրքի 6-րդ տպագրությունն է: Հովհաննես Տերոյենց Չամուռճյանի «Երկու սուրբ Հակոբ առաքյալների պատմությունը» (1912), «Ազնես կամ սրնգահար աղջիկը» (3-րդ տպ. 1912): Սարգիս Սերդարյանի «Դժբախտության մասին» դեստանը (1927) և Պաղտասար Դպրի երկի վերահրատարակությունը (1928) մեզ հայտնի վերջին հայաստան թուրքերեն գրքերից են, որ հրատարակվել են Երուսաղեմում: Երուսաղեմի ֆրանցիսկյան կրոնավորների տպարանում հրատարակվել է **Ալֆոնս Մուճարեղիի** «Բարեպաշտությունը մայիսին» դավանաբանական երկը (1939թ. 248 էջ), ապա նույն այդ տպարանում լույս է տեսել «Աստծո 10 պատվիրանները և քրիստոնեական վարդապետություն» գիրքը հայաստան թուրքերեն, որը 320 էջ է՝ այդ տարիների հայաստան թուրքերեն գրքերին ոչ հատուկ մեծ ծավալով (1950): Ալֆոնս Մուճարեղիի մի գիրքը հրատարակվել է հայաստան թուրքերենով դեռևս 1826 թվականին, Վիեննայի Մխիթարյանների կողմից: Երուսաղեմի ֆրանցիսկյանների հետաքրքիր և ծավալուն հրատարակություններից է եղել «Կաթոլիկական կրոնի ուսուցիչների օրինակը-ոճը և Պիոս 10-րդը» ուսումնասիրությունը (1912, 719 էջ): Միջերկրականի ավազանի մյուս հայ գաղութներում հայաստան թուրքերեն հրատարակությունները միջանկյալ, երբեմն էլ պատահական երևույթ են կրել:

1900-1946 թվականների Կահիրեի 4 հայկական տպարաններում հրատարակվել է միայն 10 գիրք: Դրանց թվում է 1863թ. հաստատված «Ազգային Սահմանադրություն Հայոցը» (1901), «Սահմանադրական կանոնադրություն հայ ավետարանական եկեղեցու օրինագիրք, Եգիպտական կառավարությունն վավերացված և խտիվական բարձրագույն հրամանագրով հաստատված» 107 հոդվածներ (1906): «Արևելյան հարցը» (1902), «Արևելյան հարցը և նրա լուծման հետևանքն ամբողջ մարդկության համար» (1902), կրոնական բնույթի գրքեր, և **Թ.Մ.Տեր Աբրահամյանի** կազմած «Բառագրքույկ տաճկերեն-ֆրանսերեն»ը 1907 թվականին, **Արմենակ Պետկյանի** (1884-1957) «Պատկերազարդ բազմալեզուեան բառարան բոյսերու անուանց՝ լատիներեն, արաբերեն, հայերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իտալերեն, թուրքերեն լեզուներով», որը 1711 նկարներ է պարունակում (1099 էջ, 1936 թ.), հայտնի թարգմանիչ և երաժիշտ **Մերկեր Մելիքի** «Քնարերգական հավաքածուն»-երգերի ժողովածուն (ա.թ.): 1917 թ. Ալեքսանդրիայում փոքրիկ մի գրքույկ է հրատարակվել «Պատմութիւն թուրք եւ գերման անկանոն եւ անել առաջխաղացումներու» վերնագրով, **Արշակ Պոհճայանի** հեղինակությամբ:

Այս գիրքը մեզ հայտնի է միայն մատենագիտական աղբյուրներից: Նույն **Արամ Ստե-**

Վանյանի տպարանում 1917-ին լույս է տեսել մի այլ բանաստեղծի՝ **Կարապետ Մարյան-Մորուքի** հայատառ թուրքերեն բանաստեղծությունները:

Վիեննայում կենտրոնացած «Աստվածաշնչի տարածման ամերիկյան միության» մասնաճյուղի կողմից տպագրվել են Աստվածաշնչեր, «Սողոմոնի առակները» (1935), իսկ Վենետիկի Մխիթարյանները շարունակել են արժեքավոր բառարաններ հրատարակելու իրենց ազնիվ գործունեությունը: 1912թ. երկրորդ անգամ վերահրատարակվել է **Ս.Գանթարյանի** «Բառարան գաղղիերեն-հայերեն-տաճկերեն» 1236 էջից կազմված բառարանը, որը հայատառ թուրքերենի օգտագործմամբ ս.Լազարի Մխիթարյանների կողմից հրատարակված մեզ ծանոթ վերջին տպագրությունն է:

1904 թ. Սոֆիայում լույս է տեսել **Աս.Մկրտիչյանի** «Բառարան պուլկարերեն-հայերեն-տաճկերեն»-ը:

Աթենքում լույս են ընծայվում **Հայկ Գնդունու (Համբարձում Թովմյան)** «Առձեռն բառարան յունարեն-հայերեն-թրքերեն» և «Չրուցարան յունարեն-հայերեն-թրքերեն լեզուներու» գործնական նշանակություն ունեցող տպագրությունները 1923 թվականին: 1929-ին Սելանիկում հրատարակվել է Ախթերի գրչանվամբ **Ներսես քին. Նշանյանի** «Սազեր-գութին-աշուղական ինքներգութիւններ»-ը, տպագրված «Հորիզոն» տպարանում:

XX դարի 20-ական թվականներից հայատառ թուրքերեն գրքեր են հրատարակվել Ամերիկայի միացյալ Նահանգների մի շարք քաղաքներում, այդ թվում Ֆրեզոյում, Ֆիլադելֆիայում, Լոս-Անջելեսում, Նյու-Յորքում: Այստեղ էին տեղափոխվել ավետարանականների կողմից ամերիկյան համալսարաններում կրթություն ստացած բողոքական գործիչների ընտանիքները: Նրանք շարունակել են հրատարակել հայատառ թուրքերեն գրքեր, 7 պարբերականներ՝ Գետոյտում, Նյու-Յորքում (4 ամուն), Պասադենայում:

Բազմաթիվ հրատարակություններ, որ տեղ են գտել մեր կազմած հայատառ թուրքերեն տպագիր գրքերի մատենագիտության հավելվածում՝ առանց թվականի, առանց վայրի կամ առանց հեղինակի հիշատակության, իրենց մեջ պարունակում են նաև դասագրքեր, բառարաններ, որոնց մի մասն ամենայն հավանականությամբ XX դարի առաջին կեսերին են տպագրվել³⁶⁴:

364 Մենք նկատի ունենք Եաղուպյանի «Բառարան թուրք-հայերեն»ը, Թ.Թերզյանի «Հայերեն-ֆրանսերեն-հունարեն-թուրքերեն» բառարանը, Տեր-Մելքոնյանի «Հայերեն թուրքերեն քերականութիւն թուրքերու համար» և նույն հեղինակի «Բանալի Հայերեն թուրքերեն քերականութեան»(1913), «Մանրամասնություններ աստղաբաշխության մասին», Հրանտ Ասատուրի «Արդարության առանձնաշնորհները» հայերեն և հայատառ թուրքերեն: Գրիգոր Չոհրապի «Կյանքն ինչպես որ է» և այլ գրքեր:

Հրատարակված գրքերից արժեքավոր են Բոստոնում լույս տեսած Ա.Երանի պատկերազարդ հայատառ թուրքերեն-անգլերեն գրուցագիրքը (1914, 1930), Ատուր Եաղուպյանի «Հայատառ թուրքերեն-հայերեն բառարանը»(Նյու-Յորք, 1919)և «Անգլերեն-հայերեն-թուրքերեն, հայերեն-թուրքերեն-անգլերեն, թուրքերեն-հայերեն-անգլերեն բառարանը» Լոս Անջելեսում (1920թ.): Հիշատակության են արժանի Ա.Պաղտիկյանի «Որբերի աղաղակը»(1924), Նյու-Յորքում Վարդերեսյան եղբարքի տպարանում լույս տեսած «Փարոս» երգարանը, « Ժողովրդական երգեր հայերեն և արևելեան», որի 8-15 էջերում հայատառ թուրքերեն երգեր են (1928):

Բուենոս Այրեսում փոքրիկ մի գրքույկ է հրատարակվել 1930 թվականին «Ջրույց ամերիկացիների կյանքի և հոգեբանության մասին»: Ցավոք սրտի գիրքն ամանուն է:

Բուենոս Այրեսում 1968 թվականին է տպագրվել մեզ հայտնի վերջին հայատառ թուրքերեն «Դեստանների գիրքը» Տիգրանի Քիրեճյանի հեղինակությամբ:

XX դարում հայաստան թուրքերեն գրքերի տպագրության աշխարհագրական սահմաններն աննախընթաց ընդարձակել են: Սակայն թե՛ քանական առումով և թե՛ որակական չափանիշներով այդ գրականությունն աննախընթաց վայրէջք է ապրել: Այն հիմնականում վերաբերում է առաջին համաշխարհային պատերազմից հետո ընկած ժամանաշրջանին, երբ հայաստան թուրքերեն թարգմանական գրականության հրատարակությամբ աշխուժորեն սկսում են զբաղվել ամերիկյան միսիոներները: Մարդկային հոգիների փրկության գաղափարը և դրախտ տեղափոխվելու նրանց տարածած քարոզները նոր որակ են ստանում: Շոշափելի օգնության կարոտ մարդկանց ներշնչում էին հնագանդություն և քարոզում էին «դաշույնի դիմաց դաշույն չբարձրացնել»: Այսպիսի քարոզության նպատակաուղղվածության մասին են վկայում բազմաթիվ հրատարակություններ, որոնք միսիոներներն իրագործել են Մերձավոր Արևելքի, Եվրոպայի և Ամերիկայի բազմաթիվ քաղաքներում: Ամերիկյան քարոզչության հիմնական նպատակն էր հայերին դուրս հանել երկրից, թույլ չտալ միավորվել ու դիմադրել, որպես «աստծո կամք» նկատել տալ կատարված հրեշավոր ողբերգությունը: Այս ամենը՝ բարեսիրական քարոզների ու օգնությունների քողի տակ: Այսօր համոզված կարելի է ասել, որ ամերիկյան կառավարության դարասկզբի հեռատես շահամոլական, թուրքասիրական քաղաքականությունն իր արդյունքները լիովին տվել է՝ այն ամերիկյան ազդեցությունն ամենագերիշխողն է ժամանակակից Թուրքիայում:

Հայաստան թուրքերենի ավանդույթները վերականգնելու ժամանակ առ ժամանակ կատարվող բոլոր փորձերը մատնված էին պարտության: Տնտեսությունը, սոցիալական պայմանները, կենցաղը, հոգեբանությունը մանավանդ Ամերիկայում և Եվրոպայի երկրներում ոչ միայն չէին նպաստում հայաստան թուրքերենի ավանդույթների վերականգնմանը, շարունակելուն, զարգացնելուն, այլև մեծապես խոչընդոտում էին դրան: Պատմական և սոցիալական նոր պայմաններն իրենց պահանջներն էին առաջադրում և նորագույն ժամանակաշրջանում հայաստան թուրքերենը ժամանակավրեպ, անախրոնիզմ էր դարձել:



ЗАКЛЮЧЕНИЕ

Арменописьменная литература на турецком языке представляет собой своеобразную и важную ветвь армянской культуры, самобытное проявление которой было обусловлено специфическими социально-историческими условиями существования армянского народа в Османской Турции. В процессе своего формирования и развития арменописьменная литература на турецком языке прошла два этапа: рукописный и печатный. Рукописный период, зафиксированный с XIV века, не был прерван вследствие появления печатной литературы в начале XVIII века и продолжил свое существование еще целый век. От рукописного периода до нас дошло свыше 300 рукописей и фрагментов многожанровой литературы, изучение которой дает, несомненно, ценный материал по истории, культуре, фольклору и общественной мысли армянского народа.

Предметом наших исследований является преимущественно печатный период литературы, охватывающий время с 1727 года по наши дни. В основу исследования положена изданная нами в 1985 г. библиография печатных книг на арменописьменно-турецком языке и в 1987 г. библиография арменописьменной периодической печати на турецком языке.

Зарождение и существование арменописьменной литературы на турецком языке было вызвано социально-историческими условиями, сложившимися в Западной Армении, входившей в состав Османской империи. Эта литература была средством общения в среде туркоязычных армян /как владевших родным армянским языком, так и утратившим его/. Книжные публикации наряду с весьма рачительным количеством периодических изданий на арменописьменно-турецком языке /около 105 наименований газет и журналов/, были призваны воспрепятствовать процессу ассимиляции туркоязычных армян посредством приобщения их к традициям и ценностям армянской культурной жизни, к достижениям европейской научной и общественной мысли, к процессу вестернизации в Османской империи, тем самым способствовать пробуждению национального самосознания западных армян.

Арменописьменная литература на турецком языке широко использовалась также миссионерами разных католических и протестантских орденов. Помимо проповеди христианской веры, эта литература, в конечном счете, имела целью распространение политического влияния того или иного европейского государства, а впоследствии и Америки среди христианских народов Османской империи, прежде всего - армян.

Арменописьменная литература на турецком языке по своему характеру была многогранной: художественная /как оригинальная, так и переводная/, историческая, историко-религиозная, просветительская, публицистическая, философская,

научная и научно-популярная, учебная, детская, вероисповедная, а также правовая /своды законов и кодексы/. В процессе своего развития эта литература претерпела изменения, и уже в XIX веке преобладающим в ней стало светское содержание. Новое качество придали этой литературе переводы произведений французских просветителей /Вольтера, Руссо, Ламартина, Расина, Шатобриана/, а также произведений таких гигантов литературы, как Гюго, Сервантес, Дюма и другие.

Политическая обстановка, сложившаяся после Танзимата, выдвинула необходимость и создала возможность появления прогрессивного романтизма в противовес реакционному романтизму и сентиментализму, отдалявшим читателя от подлинной жизни, от активной политической борьбы и уводящим к одиночеству, к уходу в себя, как предлагали произведения Э.Юнга, А.Попа, Метастазиио и других.

Жестокая цензура в годы «зулюма» загнала в тупик культурную жизнь и общественную мысль в Османской империи. Это обстоятельство неминуемо отразилось также как на арменописьменной литературе на турецком языке, так и на аналогичной периодике.

Закрывались армянские театры, запрещались армянские представления, из школьных программ были исключены история и география армянского народа. Однако и в такой ситуации арменописьменная литература на турецком языке не прекратила своего существования, а лишь видоизменила формы своего воздействия. С 70-х годов XIX века началось издание романов десятков писателей беллетристов, но уже иного общественного и художественного масштаба. Произведения, публиковавшиеся с того времени, были лишены социально-политической, а также художественной значимости, однако при этом неоспоримым оставалось их познавательное значение для читающей публики в условиях Османской действительности. По свидетельству ряда турецких исследователей, арменописьменная литература и периодика на турецком языке были известны и доступны не только армянам и туркам, но и другим туркоязычным народам Османской империи - болгарам, грекам, албанцам.

Арменописьменная литература, в частности переводная беллетристика, наряду с представлениями армянских театральных трупп на турецком языке /в основе представлений лежали арменописьменные пьесы на турецком языке/, в большой мере содействовала развитию просветительского движения в Османской империи, процессу вестернизации, определенным сдвигом в области науки, техники, культуры, оказала влияние на эмансипацию женщин в Турции.

В основе арменописьменной литературы на турецком языке лежит синтез разговорного и литературного турецкого языка. Эта литература сыграла неоспоримую роль в деле становления и развития современного турецкого языка. Значительно предвосхитив развитие турецкой литературы, арменописьменная литература на турецком языке, переводы произведений европейских авторов, через арменописьменно-турецкую литературу, проникшие в Турцию, в немалой степени

способствовали формированию собственно турецкой печати, а затем и новой турецкой литературы.

В XX веке наблюдается спад арменописьменной литературы на турецком языке. Главной причиной ее гибели послужила резня армян в Османской империи, которого не избегли также армяне - носители турецкого языка. Спасшиеся деятели армянской культуры и литературы были рассеяны по всему миру. Уцелевшие армянские типографии перебрались в разные страны Востока и Запада. В сложившейся обстановке определенный интерес к активизации арменописьменных изданий на турецком языке проявили американские миссионеры, «душеспасительные» проповеди которых, несомненно, принесли вред армянским общинам диаспоры. Издания американских миссионеров появились преимущественно в странах Ближнего Востока, в разных городах США.

Попытки восстановить былую мощь арменописьменной литературы на турецком языке, ее традиций, не увенчались успехом. В социально-исторических условиях новейшего времени арменописьменная литература на турецком языке стала анахронизмом.



**ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՏԵՐԱԽՄԲԵՐԻ ԹՈՒՐԲԵՐԵՆ (ՀԱՅԱՏԱՌ-
ԹՈՒՐԲԵՐԵՆՈՎ ԳՐՎԱԾ) ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ***

1. Afrika Avcılarının Horası. GA/OT
2. Afrika Bedevileri. GA/OT
3. Ahmak Köpek Açlığından Hisse Umar Baklavadan. GA/OT
4. Ahz-I Sâr yahut Avrupa'nın Eski Medeniyeti.(Ahmet Mithat). GA/OT
5. Akif Bey (Namık Kemal). GA/OT
6. Aksı gün. GA/OT
7. Aleksinaç(Fethi)y Osmanlı Kahramanları (Nâzim Paşa). GA/OT
8. Alicenap Amiral y Portsmouth Vaka'sı y Amiral Bing(Paul Foucher). MM/OT
9. Alp Dağlarının Çoban Kızı (Ch.Desnoyers-A.Dennery). GA/OT
10. Altın İfritleri. MM/OT
11. Amerika Korsanları. GA/OT/MM
12. Anadolu Köylüleri (Hasan Vahid). GA/OT/MM
13. Angelo Malipieri (V.Hugo). MM/ GA/OT
14. Arabacı y Evlât Uğruna Herşey Feda (Bouchardy).MM/OT
15. Arap Çalgısı. GA/OT
16. Arif'in Hilesi (b.Dikran Çuhacıyan-A.Alboretto). GA/OT
17. Ariyet. GA/OT
18. Armand Lefourtier. MM/OT
19. Arzu ile Kamber. GA/OT
20. Aşkım Bir Yar İsterim Sadik. GA/OT
21. Aşk-ı Mulrib. MM/OTİ
22. Aşk-ı Tabib (Molière, ç.A.Vefik Paşa). GA/OT
23. Atar-Güll (E.Sue-A.Bourgeois-Masson). GA/OT
24. Av Kuşları (A. Dennery). MM/OT
25. Ayna. GA/OT
26. Ayyar Hamza (Molière, Ali Bey). Biçare 27. Aziz Ağa. GA/OT
28. Baba Himmet(E. Cormon-E.Grangé). GA/OT
29. Balmumcu (X.de Montépin). MM/OT
30. Bekâr Filizof. GA/OT
31. Belle Hélène (Offenbach). GA/OT/F
32. Bernard y Bohemya Haydutları. GA/OT
33. Besa y Ahde Vefa (şamseddin Sami). GA/OT/F
34. Biçare (Nuri Bey). Bir
35. Biçare kız. MM/OT
36. Biçare Mionne. MM/OT

* Metin And. Türk Tiyatrosu 1839-1908. Ankara 1972. 454-462ss.

37. Biçare Zevce. MM/OT
38. Bigünâh Kızcağız. GA/OT/MM
39. Bir Evlâdın Tesiriyle Bir Karındaşın Nedameti. MM/OT
40. Bir Fakir Delikanlının Hikâyesi (Octav Feuillet-ç.Ahmet Fahri).MM/OT
41. Bir Floransalı. GA/OT
42. Bir Hannenin Namusu. MM/OT
43. Bir Kadeh Çay. MM/OT
44. Bir Kadının On Senelik Hayatı. (Scribe-Terrier). MM/OT
45. Bir Kadının Parası. MM/OT
46. Bir Peder Ne Kadar Sefil OlsaYine Pederdir y Hokkabaz (A.Dennery-J.Brésil) GA/OT/
MM
47. Bir Saat Mahpus. GA/OT
48. Bir Sefil Familya y Kaldırımcı. MM/OT
49. Bir Türk Kahramanı y Türkistan'da Çernayet (Vizental). GA/OT
50. Bir Validenin Hatası. MM/OT
51. BirValidenin Hayır Duası. MM/OT
52. Bohemya Eşkiraları. GA/OT
53. Bohemya ömrü (Th.Barriere-H.Murger). GA/OT
54. Bombardonun Lokantası. GA/OT
55. Borsa (F.Ponsard). GA/OT
56. Bourgeois Gentilhomme (Molière). GA/OT
57. Börek Ana. MM/OT
58. Les Brigamds. GA/OT
59. Burnundan Müşteki. GA/OT
60. Bühtan. MM/OT
61. Cani Pederin Avukat oğlu. MM/OT
62. Catherine Howard (A.Duma Père). GA/OT
63. Cezar Borgia (Crisafullu-Devinaque). GA/OT
64. Ceneviz Fethi. GA/OT
65. Cenova Muharebesi (Ahmet Necip). GA/OT
66. Ceylan ile Azime (Ducange). GA/OT
67. Cinayetle Vikaye'yi Namus . GA/OT
68. Charlotte-Werter (Goethe). GA/OT
69. La Comtesse Sarah (George Ohnet). MM/OT
70. Çalma Kapıyı ÇalarlarKapını (Çingirak. Ali Bey?). GA/OT
71. Çemenzârin Bir Lâlesi. GA/OT
72. Çengi y Danış Çelebi (Ahmet Mithat, Haydar Bey,Muallim Naci).F/OT
73. Çerkes özdenleri ((Ahmet Mithat).F/OT
74. Çingirak (Ali Bey?). GA/OT
75. Çileli Kadın y Muhabbet-ı Mâder-âne Aşka Galebe Eder mi? MM/OT

76. Çilingirler (F.Pyat). MM/OT
77. Çinli Han. MM/OT
78. Çin Çiçeği (C.Lecocq-Chivot-Duru), Çuhaciyani/OOT
79. Çoban Kızı. B
80. Çoban Oğlu ve Çoban Kızı. GA/OT
81. Çocuklar. GA/OT
82. Çocukların Fendi. GA/OT
83. La dam o Camelias (A.Dumas fils). GA/OT/MM
84. Dalila (O.Feuillet). MM/OT
85. Dava Budalası. GA/OT
86. Değirmenci kızı (S.Manasyan). GA/OT
87. Delile /Kanlı Intikam/ (H.Bedrettin-M.Rıfat). GA/OT
88. Demirhane Müdürü (G.Ohnet). MM/OT
89. Denartle Muttasif Bir Karı y Çocuk Hırsız Bir Karı. MM/OT
90. Dilenci. MM/OT
91. Dilenci Fufine. MM/OT
92. Dilenci Karı (A.Bourgeois-Masson). MM/OT
93. Dimyata Pirince Giderken (Bidar Arabaciyani). GA/OT
94. Dingala. GA/OT
95. Direktorun Halı (Bidar Arabaciyani). GA/OT
96. Divaneler Hekimi. GA/OT
97. Dokuz Ayın Son Çarşambası. GA/OT
98. Dolandırıcının Neticesi. GA/OT
99. Don Cezar de Bazan (Dumanoir-Dennery). GA/OT
100. Don Gregorio (Giov.Giraud). GA/OT
101. Don Juan (Molière). GA/OT
102. Dört Yüz Frank (K.Rişduni). GA/OT
103. Ecel'i Kaza (Ebüzziya Tefik). GA/OT
104. Edgard ile Beslemesi (E. Labiche-M.Michel). GA/OT
105. Efendinin Intikamı. GA/OT
106. Ekmekçi Kadın (X.de Montépin). MM/OT
107. Eleman. GA/OT
108. Ersas (Ali Haydar). GA/OT
109. Eski Bina Alevlendi. MM/OT
110. Esrar-ı Paris (E.Sue). GA/OT
111. Eşkiya Zevcesi. GA/OT
112. Evlâtlık Kız. MM/OT
113. Evlâtlarımız. MM/OT
114. Eyvah! (Ahmet Mithat). GA/OT
115. Falcı Karı (X.de Montépin). MM/OT

116. Fakir Delikanlı. MM/OT
117. Fazilet Mağlup) Olur mu? (A.Bourgeois-Masson). GA/MM/OT
118. Fedakâr Gemici (N.Fournier-H.Meyer). MM/OT
119. Feth-ı Celil-I Konstantaniye. GA/OT
120. Feyz-i Aşk (şakir). GA/OT
121. Feyzi Paşa. GA/OT
122. Fırsat (A.Potevin). GA/OT
123. Fiyaka. MM/OT
124. Fortunoî'nun Şarkısı (J.Offenbach). GA/OT
125. Fransa-Prusya Muharebesi y Comt de Saint- Hélène. GA/OT
126. Frankfurt Piyangosu. GA/OT
127. Frou-Frou (H.Meilhac-L.Halévy). MM/OT
128. Fukaraya Sadaka var (J.de Prémary). GA/OT
129. Fukaranın Vasiyetnamesi (V.Ducange). GA/OT
130. Gavaut. Minard ve Şürekâsı (E. Gondinet, ç. Ali Bey). GA/OT
131. Gâve (şamsettin Sami). F/OT
132. Gemiciler. GA/OT
133. Gemicilerin Horası. GA/OT
134. Geveze Berber (Ali Bey). GA/OT
135. Giroflé-Giroflâ (C.Lecocq-ç.H.Bedrettin şakir). GA/OT
136. Görenek (Mehmet Rifat). GA/OT
137. Granpimpampoli (K.Rışduni). GA/OT
138. Giuditta (P.Giacometi?). GA/OT
139. Günahkâr Karı (A.de Prebois). MM/OT
140. Güruh-i İnsan Nakistir Her An (Lanbert Thiboust-ç.M.Hilmi). GA/OT
141. Güzel Amelia (N. Fournier). MM/OT
142. Güzel Elen. MM/OT
143. Güzellik Kışızadeleri. GA/OT
144. Hasan Onbaşı. GA/OT
145. Hayalî Hasta (Molière-A.Vefik Paşa). GA/OT
146. Haydutlar (Schiller). GA/OT
147. Haylaz Çocuk. GA/OT
148. Haylaz ile Mürai. GA/OT
149. Hırsız Simon. GA/OT
150. Hokkabaz. MM/OT
151. Horhorlu Bekri. GA/OT
152. Huda ve Aşk (Schiller- ç.H.Bedrettin şakir). GA/OT
153. Hürmüz. GA/OT
154. Hürmüz Beyin Boşboğazlığı. GA/OT
155. Hüsn-i Ahlâk. GA/OT

156. İbdar ve İkbal (Ahmet Necip). GA/OT
 157. İğreti Saç. GA/OT
 158. İhtiyar Onbaşı/Müsin Onbaşı ((Dumanoir-Dennery-ç. Şamsettin Sami).GA/OT
 159. İki Ahbab Çavuşlar(T.Baudoin d'Aubigny-Maillard, ç.Mehmet Hilmi). GA/OT
 160. İki Ahmak Yoldaşlar (E.de Richmond). GA/OT
 161. İki Donsuzlar (Siraudin-E.Moreau-Delacour). GA/OT
 162. İki Kardeşlerin Sergüzeşti (Ziya Bey). GA/OT
 163. İki Karpuz Bir Koltuğa Sığmaz (O.Hamdi). GA/OT
 164. İki Mülâzim (C.Roti). GA/OT
 165. İki Oksüz Kız (Dennery-Cormon). MM/OT
 166. İki Peder. MM/OT
 167. İki Sağırılar (A. Bourgeois-J.Moneaux). GA/OT
 168. İki Yümrücek (P. Decourcelles-ç.Mehmet Reşat). MM/OT
 169. İki Zügürt Açıkdozler. GA/OT
 170. İki Hemşireler. MM/OT
 171. İraklis. GA/OT
 172. İskonçes. GA/OT
 173. İsveçli Kız (V.Ducange). GA/OT
 174. İşret Belâsı. MM/OT
 175. İşte Alafranga (M.F.) GA/OT
 176. İtalya Koylülerei. GA/OT
 177. İtimat, Emel, Rikkat (J.B. Roisuer).MM/OT
 178. Jack Varley (L. Sazie-G.Grison).MM/OT
 179. Jean Gray (E.Nus- A.Brot). GA/OT
 180. Jean de Galais. GA/OT
 181. Jozef'in Mantosu (ç.Fahri Bey). F/OT
 182. Kader Böylemiş. GA/OT
 183. Kaliforniya'da Altın Arayıcıları y Glaneston Golü (u. Dennery). MM/OT
 184. Kalp Gözü. GA/OT
 185. Kampanacı y Müthis Bir Netice (J.Bouchardy). MM/OT
 186. Kanarya. GA/OT
 187. Kantocu Kız. (X.de Montépin). MM/OT
 188. Kantoni Kalesi. GA/OT
 189. Kapıcının Başndan İki el Saç Matlubu. GA/OT
 190. Kara Dağırmen Cinayeti y ÇinayetiYılan İzi (M.E.Braddon-ç.M. Refik).MM/OT
 191. Karı Adam Ne Yapar. GA/OT
 192. Karı İntikamı (M.J.Sedain-ç.M.Rıfat,E.Eşref). GA/OT
 193. Karnaval Aşıkları. GA/OT
 194. Karnaval Çapkınları. GA/OT /MM
 195. Karnaval Kokozları (M.Çarpasciyan). F/OT

196. Karnavalda Bir Gece. MM/OT
197. Kean (A.Dumas Père). GA/OT
198. Kel Kapıcı. GA/OT
199. Keyhüsref Sahin Adetleri. GA/OT
200. 48 Okkalık Baş Belâsı. MM/OT
201. Kırmızı Güzdan (N.Fournier-Meyer). MM/OT
202. Kırmızı Oda (Th. Anne). GA/OT
203. Kırmızı Pantalon. GA/OT
204. Kıskaç Karı. GA/OT
205. Kıskaçlık Belâsı. MM/OT
206. Kızıl Koprü çınayeti (E.Gaboriau-Hipp.Hostein-ç.Fuat Bey).MM/OT
207. Kızının Katili y Bir Nasihat Bin Müsibettin Yeğdir. MM/OT
208. Kızıl Düğün. GA/OT
209. Klamar. MM/OT
210. Kocaya Tuzak (Stapleaux). GA/OT
211. Kokona Yatıyor (E.Grangé-V.Bernard, u. Ali Bey). GA/OT
212. Kömrücü Kari. MM/OT
213. Kör y öz Evlât Aslina Çeker. (A.Bourgeois -Dennergy, ç.A.Münif).MM/OT
214. Körün Oglu. GA/OT
215. Köse Kâhya(b.D.Çuhacıyan-A.Alboretto, i. K.Riştuni). OOT
216. Köyün Uftadeleri y İki İhtiyar Aşıklar. GA/OT
217. Kral Çoban. GA/OT
218. Kumarbazın Encamı. GA/OT/MM
219. Küçük Gemiciler. GA/OT
220. Küçük Polonya (L. Thiboust-E.Blum). GA/OT
221. Leblebici Hor-Hor Ağa (b. D.Çuhacıyan, İ.T.Nalyan) OOT/ GA/OT
222. Lerouge Gavası. MM/OT
223. Leyla ile Mecnun (Mustafa Efendi). GA/OT
224. Londra Expressi. GA/OT
225. Londra Kulesi. GA/OT
226. Londra Pazarı. MM/OT
227. Lostracının Mirası. GA/OT
228. Lucie Gigier (L.Battu-Jaim Fils). GA/OT
229. Lucrece Borgia. GA/OT
230. Luisa Miller. GA/OT
231. Lyon Postası. GA/OT
232. Madam Angot'nun Kızı (Lecocq). GA/OT
233. Madam Saint Tropez ((A.Bourgeois -Dennergy). GA/OT MM/OT
234. Madam Sularda. GA/OT
235. Madam Uykuda. GA/OT MM/OT

236. Mağdur-ı Kalp y Fedakâr Valdenin Fedakâr Çocuğu (V.Sejour- J. Bresil,ç.Mehmet Fahri) MM/OT
237. Mahçubiyetin Mukafaatı. GA/OT MM/OT
238. Manon Lescaut (Th.Barriere-M.Fournier). . GA/OT
239. Marie-Jeanne(Dennery-Mallian). MM/OT
240. Maei Tudor (V.Hugo). GA/OT
241. Marianne y Kör Général (A.Bourgeois-M.Masson). GA/OT MM/OT
242. Martel Yavruları. GA/OT
243. Mathilde (F.Pyat-E.Sue). GA/OT
244. Matmazel Blede. MM/OT
245. Matmazel Irma (Moreau?). MM/OT
246. Matmazel Jani. MM/OT
247. Memiş Ağa (Molière-u. Ali Bey). GA/OT
248. Merduh Kız (ç. Mehmet Tahir). MM/OT
249. Metruk Yetimler. MM/OT
250. Meyhane Faciaları y İşaret Mazlumları. MM/OT
251. Miras Sandığı (K. Rıştuni). GA/OT
252. Misafiri Istiskal(Ali Bey). GA/OT
253. Monsieur Kızınız. GA/OT
254. Monte Cristo (A.Dumas Pére). GA/OT
255. Montoni. GA/OT
256. Mücez. GA/OT
257. Münasebet-I Gayrı Resmi. MM/OT
258. Mürai ve Lâubali. GA/OT
259. Müsin Onbaşı. GA/OT/MM
260. Müsahabet y Lyon Postası (E.Moreau-Siraudin-Delacroix), GA/OT MM/OT
261. Nedamet y Hırsız Evlât (Ahmet Necip). GA/OT
262. Nikotimos'un Kızı. GA/OT
263. Niks Niks (K. Rıştuni). GA/OT
264. Nitouche. OOT
265. Obur. MM/OT
266. Obur Müneccim. GA/OT
267. Odun Kılıç. GA/OT
268. Orphée (Offenbach). GA/OT
269. Osmanlı Marşı. GA/OT
270. Otuz Sene y Kumarbazın Encamı (V.Ducange-Dinaux). GA/OT
271. Pamela (b.l. S.Manasse). GA/OT
272. Papelci. GA/OT
273. Paris Çöpçüsü. GA/OT
274. Paris Dilencisi. GA/OT

275. Paris Faciaları (X.de Montépin). MM/OT
276. Paris Fukarası (Eug.Nus-Ed.Brisebarre). GA/OT/MM
277. Paris Kayıçlıları (H.Thiery-Ad.Duperty). GA/OT
278. Paris Paçavrası (F.Pyat). GA/OT/MM
279. Paris'te Bir Vak'a. MM/OT
280. Paris'te Misk Sokağı Vak'ası. MM/OT
281. Paul ve Virgine (B.de Saint-Pierre). GA/OT
282. Peçeli Kadın. E. Richebourg-ç.M.Tahir). MM/OT
283. Penbe Kız (b.Haydar Bey, l.O.Nuri-M.Muslihiddin). OOK Bengliyan
284. Pierre d' Artzo. GA/OT
285. Pinti Hamit (Molière-u. Teodor Kasab). GA/OT
286. Plevne. GA/OT
287. Polonya Balosu. GA/OT
288. Potar Mober. GA/OT
289. Monsieur de Pourceaugnac (Molière). GA/OT
290. Pulçinella (Minagyan?). GA/OT
291. Raife. GA/OT
292. Richelier'nün Sergüzeşti. GA/OT
293. Rigoletto (V.Hugo). GA/OT
294. Robert, Reis-ı Eşkiya (Schillerden Lamartelière). GA/OT
295. Roger Laroche (J.Marie-Moreau). MM/OT
296. Rocambole /Para Dolabı (A.Bourgeois-P.de Terrail-Blum).MM/OT
297. Roma Kırallı (C.Desnoyers-L.Beauvallet). GA/OT
298. Romeo ve Juliet. GA/OT
299. Rosamonde (Alfieri). GA/OT
300. Saatçının Şapkası (Mme. De Girardin). GA/OT
301. Sadik Bende. GA/OT
302. Sahte Tablot. MM/OT
303. Sarı Eldiven (Bayard). MM/OT
304. Sefahate Inhimak. MM/OT
305. Sefil Familya. MM/OT
306. Sefil Valide (A.Dumas Fils-X.de Montépin). MM/OT
307. Sefiller (V.Hugo). GA/OT
308. Senart Ormanı (G. de Monters). GA/OT
309. Serdar-ı Eşkiya Robert. GA/OT
310. Sergüzeşt-i Perviz (A.Haydar). GA/OT
311. Serseri Yahudi (E.Sue). GA/OT
312. Servetle Saadet Olmaz. MM/OT
313. Seydi Yahla (şamsettin Sami). F/OT
314. Simon ve Marie (X.de Montépin). MM/OT

315. Sofiça. GA/OT
 316. Sohum Mazafferiyeti (Nazim Paşa). GA/OT
 317. Sözde Çocuk Meraklıdır. GA/OT
 318. Sû-i Zann. MM/OT
 319. Suzanne Imbert (E. Brissebare-E.Nus). MM/OT
 320. Şaşkın Kopek. GA/OT
 321. şavel. GA/OT
 322. şeytan Çekici. GA/OT
 323. Şeytanın Yuvası. MM/OT
 324. şik Bey. GA/OT
 325. şiko şiko. GA/OT
 326. şöhet Budalası. GA/OT
 327. Tabib-i Aşk (Molière). GA/OT
 328. Tabib-i Mecazip. GA/OT
 329. Tahammul. GA/OT/MM
 330. Tahir ile Zulre (Bidar Ef.). GA/OT
 331. Tahta Kılıç. GA/OT
 332. Talih Ağacı. OOK
 333. Talihsız Kız. MM/OT
 334. Tayyazade y Binbirdirek. GA/OT
 335. Telemak. GA/OT
 336. Telemak Kupidon Heykelinde (b.A.Piccito, I.T.Nalyan). GA/OT
 337. Tenor Dambrak. MM/OT
 338. Tiynet y İki Hemşireler. MM/OT
 339. Tirolien. GA/OT
 340. Titizmeşreb ve Keremkâr (L.Bellotti). GA/OT
 341. Tiyatroya Gidelim (B.Turiyan). GA/OT
 342. Tosun Ağâ (Molière-u. Ali Bey). GA/OT
 343. Troltin. GA/OT
 344. Üvey Ana (H. de Balzag). GA/OT
 345. Vazife Aşka Galebe Eder mi? GA/OT
 346. Venedik Apukaryası. GA/OT
 347. Venedik Taciri (Shakesebeare). GA/OT
 348. Venedikli Kadın. GA/OT
 349. Very Likantasının Uşağı (Eug.Labiche). GA/OT
 350. Vikaye-i Namus. MM/OT
 351. Viyana'da Nemçece Bilmez İki Türkleri. GA/OT
 352. Yabancı Kız. GA/OT
 353. Yabancı y Kopek Karı. MM/OT
 354. Yanani Kız. MM/OT

- 355. Yadigâr Yüzük (Ihsan Bey). MM/OT
- 356. Yarabbı Şükür Sofra Kuruldu. GA/OT
- 357. Yeni Eleman. GA/OT
- 358. Yerodello. GA/OT
- 359. Yusuf-i Kenan. GA/OT
- 360. Zavallı Çocuk (Namık Kemal). GA/OT
- 361. Zaza. MM/OT
- 362. Zevc ve Zevce. MM/OT
- 363. Zevzekler Hülasası. GA/OT
- 364. Zeybekler (A.Mithat, b. Hristo). GA/OT
- 365. Zor ile Hekim (Molière-u. A.Vefik Paşa). GA/OT
- 366. Zor Nikâh (Molière-u. A.Vefik Paşa). GA/OT

Համառոտագրություններ

- B- Արշակ Պենկյանի օպերետային թատերախումբ
- F- Թովմաս Ֆասուլյան
- b- կոմպոզիտոր
- ջ- թարգմանիչ
- GA- Հակոբ Վարդովյան (Գյուլլի Հակոբ)
- l- լիբրետտոյի հեղինակ
- MM- Մարտիրոս Մնակյան
- OT- Օսմանյան Գրամատիկ
- OOT- Օսմանյան օպերային թատրոն
- ա- ադապտացիա

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

Ա

Աբգար Թոխաթեցի (Եվդոկացի) — 29, 115, 116
 Աբդուլ Չեքի խան — 108
 Աբդուլհակ Համիդ — 146, 148, 149, 169
 Աբդուլհամիդ Չիյաթթին (Չիյա փաշա) — 83, 149, 169
 Աբեդյան Մանուկ — 20
 Աբիկյան Սիիրան — 19, 119, 120
 Ադամյան Տիգրան — 153
 Ագարյան Արիստակես — 64
 Ագարյան Ստեփանոս — 64
 Ալի Հայդար — 146, 148, 149, 169
 Ալիշան Գևորգ — 20, 73, 77
 Ալիք Անտոն — 103, 104, 153, 155
 Ալպոյաճյան Արշակ — 52, 116, 124, 125
 Ահմեդ Ազիզ — 150, 169
 Ահմեդ Սիդիսա — 83, 96, 146, 148, 149, 150, 152, 159, 161, 169
 Ահմեդ Մուխթար — 119, 120
 Ահմեդ Նեջիբ — 149, 169
 Ահմեդ Ռասիմ — 35
 Ահմեդ Վեֆիկ փաշա — 149, 150, 158, 169
 Ահմեդ Ֆեհիմ — 21, 144, 158, 161, 162, 164
 Աճառյան Հրաչյա — 11, 13, 20, 23, 94
 Աճեմյան Թ. — 179
 Ամիրդովլաթ Ամասիացի — 41
 Այվազյան Աբրահամ — 51
 Այվատյան Մատթեոս — 19
 Անանուն Սեբաստացի — 9
 Անդրեասյան Հ. — 81, 113
 Անթիմոսյան Ա. — 142
 Անիեզեր Ռոբերտ — 10
 Աշուղ Ղազար (Թագվոր Խաչիկյան) — 180

Աշուղ Նադիր — 181
 Աշուղ Ջիվանի — 94
 Ապրո Սահակ — 83
 Առաքելյան Կարապետ Անկյուրացի եպսկ. — 63, 65
 Ասլանյան Թագվոր վարժապետ — 109
 Աստվածատրյան Հովհաննես — 30, 51
 Աստվածատուր Գպիր — 30, 109
 Ավգերյան Հարություն — 64, 118, 119
 Ավգերյան Սկրտիչ — 55
 Ավգերյան Պետրոս — 65
 Ավգերյան Ստեփան — 61, 63
 Ավգուստին տես՝ Օգոստինոս — 62, 63, 65
 Ավետիք Եվդոկացի — 50
 Ավետիքյան Գաբրիել — 55, 117
 Արամյանց Հմայակ — 174
 Արապաճյան Մ.Պիտար — 92, 93, 103, 153, 154
 Արապյան Պողոս Ապուլեխցի — 30
 Արիստոտել — 49
 Աքրֆ Բեյ — 148, 169

Բ

Բալզակ — 98
 Բալլըքճյան Հովհաննես — 153
 Բահա Գուրդեր — 21
 Բամպուքճյան Գ. — 20, 36, 42, 43, 51, 109, 111, 113, 121, 136, 138, 174,
 Բառտուա Էմմանուել Կառչիա — 129, 173
 Բարսեղ Կեսարացի — 55
 Բեդրեթթին Հասան — 146, 148, 149, 169
 Բեդրեթթին Շաքիր փաշա — 149, 169
 Բելլարմին Ռոբերտ — 55, 61, 62, 117
 Բելիչետ Աբդուլլահ — 93

Բեխչետ Մուստաֆա — 93
 Բեհիմ Էֆենդի — 165
 Բենեդիկտոս 15-րդ — 50
 Բժշկյան Մինաս — 90
 Բլո Ադուֆ — 100, 154, 155
 Բորտոլի Անտոնիո — 54, 117
 Բրասուն Արչիբալդ — 179
 Բրետտոն միսս — 155
 Բրուկս Կ. — 179
 Բուալո — 83
 Բուլաբեր Ժյուլ — 98, 100, 154
 Բուրիան Արվիադ — 21, 165

Գ

Գաբորիո Էմիլ — 98, 99, 154
 Գաթրճյան Հովսեփ — 20, 75
 Գալֆայան Խորեն Նար Պեյ — 91, 137
 Գանթարյան Ս. — 182
 Գասարճյան Գևորգ — 179
 Գասպար Գալիլ Սեբաստացի — 29, 52
 Գասպարյան Խաչիկ — 180
 Գարիբալդի — 79
 Գյոթե — 56, 155
 Գյուլլի Հակոբ՝ տե՛ս Վարդովյան Հակոբ
 Գյումուշյան Մանուկ — 83
 Գնդունի Հայկ (Համբարձում Թոփճյան)
 — 182
 Գոլդոնի — 89, 142, 144, 166
 Գորդլևսկի Վլադիմիր — 98
 Գրանդիսոն Ֆիննի Չարլզ — 129, 179
 Գրեոֆիլո Ջմինթեո — 59
 Գրիբոյեդով — 150, 165
 Գրիգոր Դարանաղցի — 9, 22, 31, 43, 44,
 46
 Գրիգոր Լուսավորիչ — 49, 52, 181
 Գրիգոր Կեսարացի — 9
 Գրիգոր Տաղասաց — 93
 Գրիգոր Մարզվանցի — 30

Գրիգոր Սարկավազ — 94
 Գրիգորիս Աղթամարցի — 37
 Գրիգորյան Հովհաննես — 130
 Գրիգորյան Շ. — 20
 Գրիգորյան Ռեբեկա — 179
 Գրին Ջոն Թ — 129
 Գրին Գ. — 173
 Գոնգալեզ Էմ. — 155
 Գոցի Կարլո — 155
 Գոլամիթ Օլիվյե — 57
 Գուդել Վիլյամ — 129
 Գևորգ Մխլայիմ — 31, 46, 50, 122

Դ

Դավիթ Արևելցի — 26
 Դելակուր Մ. — 155
 Դենի Ժան — 11
 Դենուայե Շ. — 155
 Դեվինյակ — 155
 Դեֆո Դանիել — 90, 149
 Դիդրո — 79, 147
 Դյուլորիե Էդուար — 75, 85
 Դյուկանժ Վ. — 155, 156
 Դյումա Ալեքսանդր — 83, 97, 100, 106,
 145, 154, 156, 159
 Դյումա Որդի — 149, 150, 156
 Դյումանուար Ֆ. — 155, 156
 Դուրյան Պետրոս — 73

Ե

Եղիազար Անկյուրացի — 65
 Եղոյան Ա.Ջ — 179
 Երեմյան Հովհաննես Ասպետ — 57, 59,
 65, 142
 Երեմյան Պետրոս — 65

Զ

Ջարուրի — 35

- Չարպիանայան Գ. — 20
 Չաքարիա Կադզվանցի — 20, 29, 30, 118
 Չարդարյան Պիմեն — 51
 Չարդարյան Վահան — 92
 Չաքարյան Սրբուհի — 173
 Չինկեր — 136
 Չոհրապյան Հովհաննես — 63
 Չորայան Նիկողոս — 72
- Է**
 Էբուզգիյա Թեֆիկ — 96, 146, 150, 169
 Էդվարդո Ջոնաթան — 129, 179
 Էմին Սկրտիչ — 20
 Էմինյան Սրապիոն — 64, 119
 Էմմանուելյան Պողոս — 57, 127
 դԷննեթ Ա. — 155, 156, 161
 Էպիկտետ — 58
 Էրթօղլու Մուսիսին — 21, 152, 164
- Թ**
 Թադեոս Սեբաստացի — 9
 Թադեոս Թոխաթեցի — 37
 Թալաթ Թեքին — 11
 Թալաստ Ադուլֆո — 21
 Թալեպի — 37
 Թահմիզյան Պ. — 173
 Թահմիզյան Վահան — 174, 179
 Թադիստյան Մ. — 20
 Թամպուրի Արուսին (Քյուչուկ Արուսին)
 — 57, 108
 Թաներ Թիմուր — 102
 Թերրայլ Բոնսոն (Պոնսոն) դը — 98, 99,
 101, 103, 154, 155
 Թեյլըր Հովարդ — 173
 Թեոդիկ (Թեոդորոս Լապչինյան) — 17,
 19, 30, 67, 129, 137, 173
 Թեոդոր Քասապ — 83, 150
 Թեոդոսրու (Թեոդոսյանց) Գեմետրիոս
 — 117
 Թիթզոն Թիմոթի — 173
 Թիրաքյան Գալուստ — 112
 Թիւնճարի — 35
 Թոթապյան Պասկալ — 112
 Թողորով Ն. — 27
 Թոթովյան Նիկողայոս — 138
 Թոլայան Երվանդ (Կավոռոջ) — 17, 137
 Թոլայան Հովհաննես — 93, 100, 103, 153,
 154, 155
 Թովմա Գեմբացի — 61, 63, 65
 Թովմա Մեծոփեցի — 65
 Թորգոմյան Վ. — 81, 113
 Թորոսյան Պողոս Տիրիկեցի (Տիվրիկեցի)
 — 118, 122
 Թորրի Ռուբեն Արչեր — 129, 179
 Թոփալյան Հռիփսիմե — 90
 Թրոպրիչ դոկտ. — 129
 Թումա Հալեպցի — 44
 Թույսուզ Գասապար — 83
 Լը Թուրնեթր — 59
 Թումա Հալեպցի — 44
 Թուրգութ Քութ — 20, 40, 92, 95, 153
- Ժ**
 Ժելտյակով Անատոլի — 20, 124
 Ժիլբեր — 83
- Ի**
 Իմանյան Սեմնուշ — 178, 179
 Իմբերտ Պոլ — 60
 Ինճիճյան Դուկաս — 25, 26, 46
 Իրֆան Ավետիս — 36, 113
 Իփեքյան Ն. — 19
 Իվֆեթին — 34
- Լ**
 Լամարթին — 83, 91, 92, 148

Լեոն 13-րդ — 57, 127
 Լը Սաժ — 86, 109, 149
 Լը Քոք — 156, 166
 Լիգուորի Ալֆոնսո-Մարիա դը — 55, 63
 Լիմնեփ Հենրի Վան — 129
 Լիտտման Էննո — 20, 35
 Լյուքֆի Հակոբ — 83
 Լոյոլա Իգնատիոս — 88
 Լուի 13-րդ — 155
 Լևոնյան Գ. — 20, 33, 34
 Լևոնյան Սարգիս — 131

Խ

Խաչատուր Տերզնցի — 80
 Խարալամպոս Պոստանճը օղլու — 129
 Խրիմյան Կաթողիկոս — 53
 Խրլոբյան Տիգրան — 131
 Խորենացի Մովսես — 46, 81, 82

Ծ

Ծերենց — 77, 87

Կ

Կալման Իմրե — 166
 Կալվին — 172
 Կասթին Ժյուլ դը — 98, 100, 154
 Կարապետյան Ջեքի Պետրոս — 75, 119, 120, 123
 Կարապետ Կեսարացի — 26
 Կարենյան Հակոբ — 142
 Կավոռո՝ տես Թուլայան Երվանդ
 Կենարիոս պատր. — 24
 Կեսարյան Մանուել Սրմաքեշ Կարճիկ — 122
 Կիլիկեցի Կ. — 180
 Կյուզելիմյան Ներսես — 173
 Կռեմոն Պոլ դը — 98

Կոլբեր Ժան Բատիստ — 124
 Կովալսկի Թադեոշ — 11
 Կոմոլեստաի Լ. — 155
 Կրիսաֆուլլու — 155
 Կրճիկյան Անդրանիկ փաշա — 107

Հ

Հադրոն Սպերջոն Չարլզ — 129, 179
 Հակոբ Ակնեցի — 31
 Հակոբ Դպիր Ճամճու որդի — 52
 Հակոբ Մեղապարտ — 115
 Համդի Բեյ — 149, 169
 Համլին Սայրուս — 90, 126
 Հասան Վահիդ — 148, 149, 169
 Հասունյան Անտոն (Անտոն-Պետրոս 9-րդ) — 55, 56, 77, 84, 85, 86
 Հարություն քին. Շիրազեցի — 175
 Հարություն արք. Պալատեցի — 52
 Հարությունյան Ս. Գ. — 173
 Հերակլ Երկրորդ — 30
 Հեքիմյան Մրապիոն — 143, 144, 167, 168
 Հինթզ Ֆ.Ֆ. — 65
 Հյուգո Վիկտոր — 83, 89, 91, 92, 98, 101, 102, 145, 149, 150, 153, 156, 159
 Հյուզ Պ. — 134
 Հյուրպներ Օտտո — 134
 Հոլլոեյ Թոմաս — 129, 173
 Հոպկինս Կալոդեթ Թոմաս — 129
 Հովհաննես Երզնկացի — 37
 Հովակիմ եպսկ. պատր. — 24
 Հովհաննես վրդ. Աղավմի (Հովհաննես Արք.-Հաննա) — 108
 Հովհաննես Թլկուրանցի — 37
 Հովհաննես Կեսարացի — 41, 42
 Հովհաննես Կոլոտ Բաղիշեցի — 9, 20, 26, 29, 30, 31, 41, 42, 46, 48, 49, 50, 52, 54, 109, 115, 116, 120, 121, 122

- Հովհաննես Խուլ — 26
 Հովհաննես Տերզնցի — 80
 Հովհան Պապ (Ճիզվիտ Հովհան) — 61, 62
 Հովնանյան Ղևոնդ — 118
 Հոմերոս — 49, 149
 Հուլիանոս Պիեմոնթեցի քին. — 63
- Ղ**
 Ղուկաս Խարբերողի վրդ (Գասպարյան-Աբրահամյան) — 29, 46, 52, 121
 Ղուկասյան Հովհաննես — 83
- Ճ**
 Ճամճյան Փիլիպոս — 64, 119
 Ճեզաիրյան Սկրտիչ — 28, 135
 Ճեզաիրյաններ — 28
 Ճիզմեճյան Դանիել — 179
 Ճիվելեկյաններ — 119
 Ճուլոյան Հակոբ՝ տես Սիրունի
- Մ**
 ՄազՆիլ Ջոն Սվիֆթ — 129, 173
 Մագսուտյան Մ. — 180
 Մաթոսյան Ջեսսի — 130
 Մալխասյանց Ստեփան — 20
 Մալո Հեկտոր — 98, 154
 Մալուֆ Նասիֆ — 112
 Մաձինի — 79
 Մարթին Ջոն — 173
 Մամուրյան Մատթեոս — 72
 Մանասթրըլը Մահմուդ — 169
 Մանաս Ռաֆայել — 31
 Մանաս Ռուբեն — 86
 Մավրոյանի փաշա — 102
 Մատթեոս Գալիլ — 109
 Մարի Սիշել-Անժ (Անժ-Մարի) — 63
 Մարի Ժյուլ — 98, 155
 Մարտին Ջեսսի — 129
 Մարուշյանց Պողոս Անկյուրացի — 61, 65
 Մաքիավելլի — 83
 Մաքսուտյան Լևոն — 179
 Մեզրուա Ռընե — 88, 98
 Մեթին Անդ — 19, 21, 141, 142, 144, 145, 150, 152, 161, 162, 170
 Մեհմեդ Ֆաթիհ Երկրորդ — 10, 23, 24, 34, 35, 41, 42, 70, 115
 Մեհմեդ Երրորդ — 22
 Մեհմեդ Էմին — 107, 175
 Մեհմեդ Սիդիսատ — 134
 Մեհմեդ Մուրադ — 150, 165, 169
 Մեհմեդ Ռ-ըֆաթ — 148, 149, 169
 Մելիք Օհանջանյան Կարապետ — 80, 81
 Մեջնուն — 35
 Մեսիհի Էրմենի — 35
 Մետաստազիո — 57, 58, 62, 142
 Մերթախանյանց Հ. — 178
 Մերասյան Աթանաս — 55, 61, 65, 117
 Մերիլ Ջոն Իզաբել — 129, 179
 Մերկեր Մելիք — 181
 ՄերԳրեգոր Ջոն — 173
 Մինասյան Սարգիս Չաուշ — 180
 Միրզա Խան — 35
 Միրիճանյաններ — 28
 Մխիթար Մեքաստացի — 30, 53, 54, 59, 61, 64, 117, 118, 121
 Սկրտիչյան Աս. — 182
 Սյուեհնտիսյան Հովհաննես — 78
 Սյունեջջիմ Բաշի — 108, 112
 Սյուսսե — 83
 Մնակյան Մարտիրոս — 143, 144, 152, 159, 160, 161, 162, 163, 164, 165, 166, 167, 168, 169, 196
 Մնացականյան Ս. — 20
 Մոնթեպեն Քսավի դը — 73, 83, 87, 100,

- 101, 102, 103, 127, 145, 150, 154, 155,
160, 161
- Մոնտեսպիե — 83
- Մոնֆորդ պաղլե — 53
- Մոլիեր — 83, 89, 142, 144, 149, 158
- Մոլլովա Մելքյուր — 10
- Մորմոն — 65, 66
- Մորսի Է. — 155
- Մսրյան Կարապետ-Մորուք — 182
- Մրմրյան Հարություն — 27, 75
- Մրմրյան Մ. — 88
- Մուճարելի Ալֆոնսո — 63, 181
- Մուստաֆա Էֆենդի — 148, 169
- Մուստաֆա Ռեշիդ Փաշա — 70, 102, 149
- Մուստաֆա Քեմալ — 168, 169
- Մուալլիմ Նաջի — 149
- Մունե Սյուլլի — 165
- Մուտի Թ. — 179
- Մուրադյան Անտոն — 65
- Յ**
- Յունգ Էդուարդ — 58, 59
- Յունգ Կարերտ — 66
- Յուսուֆ Քյամիլ փաշա — 149, 169
- Յուսուֆ Նաբի — 35
- Ն**
- Նագիմ Հիքմեթ — 152
- Նահիդ Թահսին — 164
- Նալբանդյան Միքայել — 74, 75, 77, 78,
79, 85, 87, 88
- Նալյան Թագվոր — 157
- Նալյան Հակոբ — 20, 29, 30, 31, 41, 46,
51, 52, 116, 118, 121, 122
- Նահապետ Քուչակ — 37
- Նաղաշ Հովնաթան — 37
- Նամրք Քեմալ — 83, 96, 107, 141, 146,
147, 148, 150, 152, 159, 169
- Նապոլեոն Բոնապարտ — 106, 109, 110,
111
- Նար Պեյ՝ տե՛ս Գալֆայան Խորեն
- Նարինյան Աբրահամ — 144
- Նեվ Ֆելիքս Ժան Բատիստ — 65
- Ներսես Մեծ — 49
- Ներսես Շնորհալի — 40, 57
- Նինուս Պիեռ — 155
- Նյուտոն — 49, 52
- Նշանյան Ներսես — 182
- Նուպարյան Մ. — 89
- Շ**
- Շավգի տես՝ Չարուրի
- Շահումվարյան Ա. — 20
- Շամսեդդին Սամի — 83, 146, 148, 149,
150, 152, 159, 169
- Շատոբրիան — 91, 149, 153
- Շեքսպիր — 149, 150, 159
- Շիլլեր — 149, 156
- Շինասի Իբրահիմ — 83, 148
- Շմիդտ Քրիստոֆեր — 92, 98
- Շնայդեր օր. — 127
- Շպիս Օտտո — 20, 35
- Շոայբերգեր — 173
- Շույց Է. — 11
- Ո**
- Ոսկանյան Ստեփան — 87
- Չ**
- Չազըճյան Եփրեմ — 64
- Չալյան Կ. — 174
- Չամչյան Միքայել — 57, 108, 112
- Չամոտճյան Հովհաննես տես՝ Տերոյենց
- Չափրաստյան Գ. — 143

Չերվաթի Ռաֆայել — 134
 Չիլինկիրյան Գրիգոր — 72, 89, 91
 Չոլաքիտի Դիմիտրի — 137
 Չոպանյան Արշակ — 17, 20, 164
 Չորպաջյան Ս. — 179
 Չուխաճյան Տիգրան — 21, 145, 148, 156,
 157, 165, 166

Պ

Պալասանյան Ստեփան — 20
 Պալաններ — 28, 31
 Պալեոզյան Նշան — 131
 Պահարյան Մ. — 174
 Պաղտասար Գալիբ — 29, 30, 31, 37, 43,
 46, 52, 118, 122, 181
 Պարոնյան Հակոբ — 19, 48, 87, 91, 106,
 Պասճաճյան Գրիգոր Պատրիարք — 25
 Պեզճյան Ալեքսան — 130
 Պեզճյան Զենոբ — 130
 Պեհսնիլյան Ե. — 174
 Պենկլյան Արշակ — 165, 196
 Պենկլյան Սերովբե — 156, 159, 165, 166,
 167, 168
 Պեշիկթաշլյան Սլրտիչ — 73, 77, 87, 143
 Պետևյան Արմենակ — 181
 Պետրոսյան Յուրի — 20, 124
 Պերպերյան Հայկ — 20
 Պիննեմենճյան Աղավնի և Էլիզ (Էլիզ
 Գովան) — 152, 167
 Պիպերյան Կարապետ — 93
 Պիտար - տես՝ Արապաճյան Պիտար
 Պիոս 9-րդ պապ — 126
 Պլպուլյան Հակոբ — 131
 Պոզաճյան Հակոբ(ոս) — 64, 119
 Պոզոբլյան Մինաս — 179
 Պոհճալյան Արշակ — 181
 Պողոս Ադրիանապոլսեցի արք.

(Գրիգորյան) — 52, 122

Պոյաճյան Օ. — 174
 Պոպ Ալեքսանդր — 59
 Պտղունի Հակոբ — 180
 Պրադել Ժորժ — 98
 Պրակտեր Մալրա — 127
 Պրեշիան արքա — 74, 79
 Պրիցակ Օ. — 11

Ջ

Ջախջախյան Մանուել — 118

Ռ

Ռաբորտս Ռ. — 179
 Ռասին — 83, 148, 149, 150
 Ռեֆիկ Ահմեդ — 21, 24, 144, 148, 152, 167
 Ռեջաիզադե Մահմուդ Էբրեմ — 148, 149,
 169
 Ռիկս Իլայես — 129
 Ռիշբուրգ Էմիլ — 83, 98, 154
 Ռիշելիե (կարդինալ) — 124
 Ռիվոլի Ֆրանչեսկա — 117, 124
 Ռոթա — 145, 156
 Ռուբեն — 152
 Ռուսիյան Նահապետ — 72
 Ռուստ Ժան Ժակ — 75, 79, 83, 147

Ս

Սաբբատինո պադրե — 129
 Սագի Ա.դը — 154
 Սադի Քոչաշ — 84
 Սահակ Պարթև — 49
 Սահակյան Հասմիկ — 20, 45
 Սամի Փաշազադե Սեզային — 150, 169
 Սանդ Ժորժ — 91, 104
 Սարգիս Զեքի (Նուռլյան) — 35
 Սարաֆյան Կարապետ — 139

- Մելիմ Նուգեթ Գերշեկ — 144
 Մեյ Պ. — 83
 Մեղբույան Հովհաննես Չելեպի — 48, 49
 Մենիերի Պատրո — 55, 63
 Մեն Պիեր Բերնարդեն դը — 155
 Մերդարյան Սարգիս — 179, 181
 Մերովբե Տերվիշ օղլու — 63
 Մերվանտես — 74, 75, 76
 Մեֆերյան Աբրահամ — 179
 Մթոլ Սիլվեյնս — 173
 Միմենոն Լեհացի — 9, 22
 Միմքեշյան Գևորգ — 87, 88
 Սիրողինի — 155
 Սիրունի Հակոբ (Ճուլոյան) — 23, 24, 26, 175
 Սկոթոս — 52, 121
 Սմիթ Ազարիա — 127
 Սմիթ Օ. — 179
 Սմմիկյան Հովհաննես — 131
 Սյու Է. — 73, 74, 86, 87, 88, 89, 91, 97, 99, 109, 156, 159
 Սվաճյան Հարություն — 19, 72
 Սվաճյան Քնար — 152
 Ստեփանյան Գառնիկ — 17, 28, 31, 62, 79, 84, 85, 86, 110, 112, 114, 141, 144, 152, 153, 160, 161, 170
 Ստոյանով Ջաքարիա — 112
 Ստոու Բիչեր — 155
 Սուլեյման Վեհալի — 83
 Սուլթան Աբդուլ Ազիզ — 112, 150
 Սուլթան Աբդուլ Համիդ — 31, 73, 96, 97, 102, 106, 152, 156, 160, 161
 Սուլթան Աբդուլ Մեջիդ — 34, 71, 144
 Սուլթան Մելիմ Առաջին — 9, 22
 Սուլթան Մահմուդ 2-րդ. — 111, 166
 Սուլթան Մեհմեդ Բ Ֆաթիհ — 10, 23, 24, 35, 41, 42, 70, 115
 Սուլթան Մուրադ 5-րդ — 106, 150
 Սոմայան Սուքիաս — 64, 108, 119
 Սոֆայան Սահակ — 55
- Վ**
- Վազալոպուլոս Նիկոլասո Դ. — 137
 Վասֆի Ռըզա Ջոբու — 21, 152
 Վարդան Բաղիշեցի — 49
 Վարդան — 35
 Վարդանյան Հովսեփ (Հովսեփ Փաշա) — 19, 77, 78, 82, 84, 85, 86, 87, 100, 105, 109, 110, 111, 136, 138, 153
 Վարդոյան Հակոբ (Գյուլի Հակոբ) — 89, 107, 144, 145, 146, 148, 149, 150, 151, 152, 156, 159, 160, 164, 165, 167, 168, 169, 196
 Վարժապետյան Ներսես — 20
 Վարժապետյան Հակոբ — 112, 174
 Վերդի Ջուզեպպե — 90
 Վեռն Ժյուլ — 73, 83, 87, 98, 100, 106, 154
 Վեսլի Ջոն — 129, 179
 Վիդոկ Էժեն Ֆրանսուա — 102
 Վոլտեր — 79, 82, 83, 147, 149, 153, 159
- Տ**
- Տաղավար (յան) Նազարեթ — 134
 Տավերնիե Ժան — 26
 Տատյաններ — 28
 Տատյան Սիիրան — 139
 Տելբի Ալբեր — 98
 Տեվեճի օղլու Մահտեսի Սիմոն Գաղատացի — 61
 Տեր Աբրահամյան Թագուհի Մանուկ — 181
 Տեր Թորոսյան Սարգիս — 135
 Տեր Ստեփանյան Արմեն — 31, 44, 50
 Տերոյենց Հովհաննես (Չամուռճյան

Պրուսացի) — 20, 74, 75, 77, 86, 181
 Տեր Պետրոսյան Լուսին — 179
 Տեր Պետրոսյան Ռեստեն Միքայել — 136
 Տիեց Անդրեաս — 11
 Տիկ Լյուդվիգ Ջոն — 92
 Տրայարսկի Էդուարդ — 11

ՌԻ

Ուբիչինի Ա. — 24
 Ուլի Հաբեթ(Հաբեթ Մսրյան) — 174
 Ութունյան Կարապետ — 87
 Ուլվի Իզգեթ — 35
 Ուրուպյան Հովհաննես — 63, 65
 Ուրֆայան Օգսեն — 136

Փ

Փանոսյան Կարապետ — 18, 74, 87, 88,
 99, 100, 106, 123, 132, 138, 139, 153
 Փափազյան Բարունակ — 174
 Փափազյան Իզնատիոս — 55
 Փափազյան Մանասես — 130, 173, 174
 Փափազյան Վահրամ — 166
 Փեշտիմալճյան Գրիգոր Դպիր — 142
 Փեչևի Իբրահիմ — 9
 Փոլադյան Անդրանիկ — 126

Ք

Քարաքլու Ահմեդ — 35
 Քերեվեթի Ջուզեպպե — 78
 Քերթոն Վալիս — 129
 Քեյիյան Բարսեղ — 136
 Քեշիշոյլի — 34, 35
 Քեշիշյան Կարապետ — 174
 Քեշիշյան Ս. — 179
 Քեպեպճյան Պետրոս — 65
 Քինգլի Ֆլորենս — 173
 Քյաթիպ Չելեպի — 42

Քյոնուրճյան Երեմիա Չելեպի — 30, 31,
 42, 45, 46, 63, 80, 81, 82, 91, 106, 108,
 113, 116
 Քյոփրուլու Ֆուադ — 20, 35, 94
 Քյուրքճյանօֆ Հովհաննես — 127
 Քյուփեյան Ամբրոսիոս — 64, 119
 Քոզ Սաբրի — 20
 Քոչաթուրք Վասֆի Մահիր — 35
 Քոլլիեր Ս. — 173

Օ

Օնն Ժորժ — 98, 100, 103, 104, 155
 Օշական Հակոբ — 28, 76
 օ'Օհարն Մուրադա — 26, 27, 31, 114
 օ'Օհարն Կոնստանդին — 114
 Օսման Նուրի — 97
 Օտյան Գրիգոր — 72, 73, 96
 Օֆենբախ — 156, 166

Ֆ

Ֆազլ Մուստաֆա փաշա — 112
 Ֆասուլաճյան Թովմաս — 158, 161, 167,
 168, 169, 196
 Ֆեբո Միշել լը — 23
 Ֆենելոն — 83, 123, 148, 149
 Ֆեոյե Օկտավ — 91, 160, 161
 Ֆեվալ Պոլ — 98, 99, 103, 154
 Ֆոնտենել — 83
 Ֆորթունե Բուակոպե դը — 73, 100, 154,
 155
 Ֆրանսիզի Հանրի — 98, 154

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՍՄԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՏԱՌ ԹՈՒՐԲԵՐԵՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

L'ACADÉMIE DES SCIENCES D'ARMÉNIE
INSTITUT D'ORIENTALISME

HASMIK STEPANIAN

LITTÉRATURE ARMÉNIENNE EN
LANGUE TURQUE ÉCRITES EN
CARACTÈRE ARMÉNIEN